

ԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԱՔՍԻՄ ՄԱՆԱՍՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆ- 2004

ՄԱՐԳԱՐՅԱՆ Ռ. Գ., ՄԱՆԱՍՅԱՆ Մ. Գ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ

ՄԱՍ 1

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2004

**ՀՀ կրթության և գիտության նախարարության
կողմից երաշխավորված է որպես ուսումնական
ձեռնարկ տնտեսագիտական բուհերի
ուսանողների համար**

Հեղինակներ

աշխ. գիտ. թեկն., դոցենտ Ռ. Գ. Մարգարյան
Գլուխ I, II, III, IV, V, VI, VII, IX, X
աշխ. գիտ. թեկն., դոցենտ Մ. Գ. Մանասյան
Գլուխ I, III, VI, VIII

Գրախոսներ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գ. Ե. Ավագյան**
Տնտեսագիտության թեկնածու **Ս. Ն. Թավադյան**

Մարգարյան Ռ. Գ., Մանասյան Մ. Գ.

Ս 350 Տնտեսական աշխարհագրություն: Ուսումնական
ձեռնարկ/ Եր., ԵՊՀ հրատ., 2004, 324 էջ:

Ուսումնական ձեռնարկում արտացոլված են աշխարհի բնակչության և
համաշխարհային տնտեսության աշխարհագրության հիմնական օրինաչա-
փությունները, ժամանակակից վիճակը, հիմնախնդիրներն ու զարգացման հե-
ռանկարները: Կազմված է 10 գլխից:

Պատրաստված է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի
տնտեսական աշխարհագրության դասընթացի հաստատված ծրագրին համա-
պատասխան:

Ձեռնարկը տնտեսագիտական մասնագիտություն ուսումնասիրող ուսա-
նողներին կօգնի բնակչության և տնտեսության տեղաբաշխման հարցերն
ավելի խորը ուսումնասիրելուն: Այն կարող են օգտագործել նաև աշխարհա-
գրական ու մանկավարժական մասնագիտությունների ուսանողները, աշխար-
հագրության ուսուցիչները, աշխարհագրությամբ հետաքրքրվողները:

1805060000
Մ _____ 2004 թ.
704(02)04

ԳՄԴ 65.04 Գ73

ISBN 5-8084-0580-7

© Մարգարյան Ռ., Մանասյան Մ. Գ., 2004 թ.

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Անցած դարի երկրորդ կեսի, առանձնապես վերջին տասնամյակի տնտեսա-
կան, սոցիալական և քաղաքական հսկայական փոփոխությունները մեծ չափով ազ-
դել են աշխարհի բնակչության ու համաշխարհային տնտեսության աշխարհագրու-
թյան վրա:

Այդ ժամանակահատվածում գիտատեխնիկական հեղափոխությունը, համ-
աշխարհային հանրության անցումը տեղեկատվական դարաշրջան, տնտեսության
միջազգայնացման ու գլոբալացման մեծ թափ ստացած գործընթացները, ժո-
ղովրդագրական նոր, երբեմն անսպասելի ու լուրջ փոփոխությունները զգալիորեն
բարդացրին հասարակական գիտությունները և, մասնավորապես, տնտեսական
աշխարհագրությունը:

XX դարի վերջին քառորդում տնտեսաշխարհագրական ուսումնասիրու-
թյունները փոխարինվեցին բովանդակային ու մեթոդաբանական առումներով ավելի
լայն ու ընդգրկուն սոցիալ-տնտեսական աշխարհագրական ուսումնասիրություննե-
րով: Բացի այդ, ուժեղացավ այդ ուսումնասիրությունների էկոլոգիական ու քաղա-
քական ուղղվածությունը: Այդ գործընթացների արդյունքում ձևավորվեց հասարա-
կական աշխարհագրությունը, որի ոգով պատրաստված սույն գիրքը կարող է այլ-
ընտրանքային ուսումնական ձեռնարկի դեր կատարել Ս. Մելքունյանի հեղինակած
դասագրքին զուգահեռ (Ս. Մելքունյան, Ընդհանուր տնտեսական աշխարհագրու-
թյուն, Երևան, 2004, 267 էջ):

Ձեռնարկը պատրաստել են Երևանի պետական տնտեսագիտական
ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի դոցենտներ տնտեսագիտական
մասնագիտություն ուսանողների դասընթացի ծրագրին համապատասխան:

Հեղինակը իրենց մանկավարժական աշխատանքի բազմամյա փորձի, հայրե-
նական ու արտասահմանյան աշխարհագրական ուսումնասիրությունների, համաշ-
խարհային (ՄԱԿ-ի) վիճակագրության տեղեկատվության վրա, սույն ձեռնարկի հե-
ղինակները լուսաբանել են աշխարհի բնակչության ու համաշխարհային տնտե-
սության սոցիալ-տնտեսական աշխարհագրության վիճակը և հիմնախնդիրները:

Ձեռնարկում ընթերցողին են ներկայացված բազմաթիվ աղյուսակներ ու
գրաֆիկական զծապատկերներ, որոնց մի մասն՝ առաջին անգամ:

Հեղինակները կարծում են, որ ձեռնարկի նյութերը տնտեսագետ-ուսանողնե-
րից բացի կարող են օգտագործել նաև աշխարհագրագետ-ուսանողները, ինչպես
նաև տնտեսագիտության, սոցիոլոգիայի, ժողովրդագրության բնագավառի հարա-
կից այլ մասնագետներ:

ԳԼՈՒԽ 1.

ՄՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԳՆԵՐԸ

Տնտեսական աշխարհագրությունը գիտության կարևոր բնագավառներից է, որը զարգացել է մարդկային հասարակության գործնական պահանջմունքների ազդեցությամբ: Արտադրողական ուժերի զարգացման և արտադրական հարաբերությունների կատարելագործման զուգընթաց ժամանակի ընթացքում փոփոխվում են նաև տնտեսական աշխարհագրության բովանդակությունը, խնդիրներն ու մեթոդները:

XIX դարում, երբ համաշխարհային տնտեսությունը դեռ թույլ էր զարգացած, տնտեսական աշխարհագրությունը ընդհանուր առմամբ ուներ սաղմնային, բնույթ: Գործնական նշանակության եզրակացություններն ու խորհուրդները, որոնք յուրաքանչյուր գիտության արժեքավոր մասն են, այն ժամանակվա տնտեսական աշխարհագրության մեջ կամ բացակայում էին կամ էլ, եթե գոյություն ունեին, ապա շատ պարզունակ ու հայեցողական էին: XX դարում՝ համաշխարհային տնտեսության զարգացման բարձր փուլերում, տնտեսական աշխարհագրության մեջ սկսվում է խորանալ տնտեսության կառավարման տարածական հարցերի ուսումնասիրությունը, որի նպատակը տնտեսության տարածական համաձայնությունների հաստատումն է: Երկրների և համաշխարհային տնտեսության տարածական կազմակերպումը վերջինիս շնորհիվ դառնում է ավելի հիմնավորված:

Ասվածից հետևում է, որ ժամանակի մեջ տնտեսական մեխանիզմի կատարելագործումն ուղեկցվում է տնտեսության տարածական կազմակերպման համապատասխան կատարելագործմամբ (ռազմաճակատային):

Տնտեսական աշխարհագրությունը որպես բարձրագույն տնտեսաաշխարհագրական կրթության դասընթաց հիմնականում ձևավորվել է XIX դարում: 1820 թ. Բեռլինի համալսարանում բացվեց աշխարհագրության առաջին ամբիոններից մեկը, որը ղեկավարում էր Կառլ Ռիտտերը: Նա սերտորեն համագործակցում էր Ալեքսանդր Հումբոլդտի հետ: Տնտեսական աշխարհագրությունը 1920-ական թվականներից մտցվել է Սանկտ-Պետերբուրգի և Մոսկվայի համալսարանների աշխարհագրական ֆակուլտետների, իսկ որոշ ժամանակ անց՝ նաև տնտեսագիտական մասնագիտության ֆակուլտետներում և բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնասիրվող առարկաների ցուցակում:

Տնտեսագիտական մասնագիտության ֆակուլտետներում ու տնտեսագիտական բուհերում տնտեսական աշխարհագրության ուսումնասիրությունն ունի ոչ միայն ընդհանուր գիտական, աշխարհայացքային, քաղաքական ու դաստիարակչական, այլ նաև, որ կարևորագույնն է, ապագա տնտեսագետների համակողմանի մասնագիտական որակավորման գիտագործնական մեծ դեր:

Տնտեսական աշխարհագրության դասընթացի *նպատակն է* ապագա տնտեսագետ մասնագետներին ցույց տալ հասարակական արտադրության արդյունավետության ապահովման և բարձրացման գործում տնտեսության ռազմաճակատները բաշխման կարևոր դերն ու նշանակությունը:

Տնտեսական աշխարհագրությունը միաժամանակ պատկանում է և տնտեսագիտական և աշխարհագրական գիտությունների իամակարգերին: Քանի որ նրա ուսումնասիրության առարկան հասարակական արտադրությունն է, որն ուսումնասիրվում է տարածական (աշխարհագրական) տեսանկյունից: Այսինքն բացահայտում է արտադրության տարածքային կազմակերպման օրինաչափություններն ու հիմնական ձևերը արտադրության զարգացման և կառուցվածքի տարածքային տարբերությունները:

Տնտեսական աշխարհագրությունը, հասարակական աշխարհագրության բաղկացուցիչ մասն է, նրա կարևորագույն և առաջատար ճյուղը: Դա բացատրվում է նախ և առաջ հասարակության մեջ և հասարակական տարբեր գործընթացներում տնտեսության առանձնահատուկ դերով:

Հասարակական աշխարհագրությունը պատկանում է տնտեսական գիտությունների համակարգին:

Սոցիալ-տնտեսական աշխարհագրության մեջ մտնող գիտական առարկաներն ուսումնասիրում են մարդկանց տարաբնակեցման և հասարակական արտադրության¹ տեղաբաշխման օրինաչափությունները, այլ կերպ ասած հասարակության տարածական կազմակերպումը և դրա դրսևորման առանձնահատկությունները ամբողջ աշխարհում առանձին երկրներում, ու տարածաշրջաններում:

Հասարակական աշխարհագրության հետազոտության ամենամեծ սահմանային օբյեկտը **օյկումենան**² է, աշխարհագրական թաղանթի բնակեցված, յուրացված կամ ինչ-որ կերպով հասարակության կյանքի ուղեծրի մեջ ներգրավված մասն իր տարածքային կառուցվածքներով ու հասարակության կյանքի կազմակերպման ձևերով: Վերջիններս ուսումնասիրվում են պատմական զարգացման, գործունեության, տարբեր սոցիալ-տնտեսական հասարակարգերի պայմաններում ու տարբեր մակարդակներով՝ **տեղական, տարածաշրջանային, ազգային, միջազգային և համամոլորակային:**

Վերը նշվածից կարելի է եզրահանգել, որ հասարակական աշխարհագրությանը զուգակցում է աշխարհագրության, տնտեսագիտության, քաղաքագիտության և սոցիոլոգիայի տարրեր:

Հասարակական աշխարհագրության ճյուղն է, որը մարդկանց կյանքի և հասարակական արտադրության տարածական պրոցեսներն ու կազմակերպման ձևերն ուսումնասիրում է ամենից առաջ բուն արտադրության, հասարակական աշխատանքի արդյունավետության տեսակետից: Տնտեսական աշխարհագրության հետազոտության օբյեկտը տնտեսության տարածքային կառուցվածքն է և դրա կարևորագույն տարրերը՝ **տնտեսական շրջան, տարածքային արտադ-**

րական համալիր, արդյունաբերական հանգույց, զարգացման բևեռ և արտադրության տեղաբաշխման այլ ձևեր, ինչպես նաև տարաբնակեցման ձևերը նկատի ունենալով վերջիններիս զարգացման, գործունեության և տեղաբաշխման տնտեսական ասպեկտները:

Տնտեսության առանձին ճյուղերի տեղաբաշխման օրինաչափություններն ու առանձնահատկությունները ուսումնասիրում են տնտեսական աշխարհագրության ճյուղային գիտությունները արդյունաբերության աշխարհագրությունը, տրանսպորտի աշխարհագրությունը, գյուղատնտեսության աշխարհագրությունը, սպասարկման ոլորտի աշխարհագրությունը և այլն: Տնտեսական աշխարհագրության հետազոտության ոլորտի մեջ են մտնում նաև բնական ռեսուրսների, աշխատանքային ռեսուրսների տեղաբաշխումն ու զնահատումը:

Դեռևս Ստրաբոնն իր «Աշխարհագրություն» աշխատությունում աշխարհագրության գործնական նշանակության մասին նշել է. «Աշխարհագրության մեծ մասը ծառայում է պետության շահերին, քանի որ պետության գործունեության ասպարեզը ցամաքն ու ծովը մարդու բնակեցման վայրեր են»:

Տնտեսաաշխարհագրական հետազոտությունների նպատակն է բացահայտել և զնահատել արտադրության զարգացման և արդյունավետության բարձրացման վրա տարածական գործոնների դերն ու նշանակությունը:

Այդպիսի գործոններից են արտադրության ճյուղերի ռացիոնալ (օպտիմալ) տեղաբաշխումը, տարածքային համակենտրոնացումը, երկրի շրջանների մասնագիտացումն ու համալիր զարգացումը, միջշրջանային և ներշրջանային տնտեսական կապերի կատարելագործումը, արտադրության տարածքային կազմակերպման և կառավարման կատարելագործումը:

Տնտեսության ռացիոնալ տեղաբաշխման էֆեկտը կարելի է համեմատել ռազմադաշտում (կամ շախմատում) կողմերից մեկի դիրքային առավելության հետ, երբ հավասար, կամ նույնիսկ սակավ, բայց ակտիվ դիրք գրաված ուժերով (կամ ֆիզուրներով) կարելի է հաղթել ավսոյանին:

Տնտեսական աշխարհագրության փիլիսոփայական և տնտեսագիտական կանոնները հիմքը աշխատանքի տարածքային (աշխարհագրական) բաժանման ուսմունքն է:

Տնտեսական աշխարհագրության կարևորագույն կատեգորիաներից են արտադրության տեղաբաշխման գործոնները, տարածաշրջանային զարգացման գործոնները, տնտեսական շրջանացումը, տնտեսաաշխարհագրական դիրքը (ՏԱԴ):

Ժամանակակից աշխարհագրությանը, այդ թվում նաև տնտեսական աշխարհագրության զարգացման բնորոշ միտումներն են՝ սոցիոլոգացումը, էկոլոգացումը և մաթեմատացումը:

Եթե նախկինում աշխարհագրական հետազոտությունների հիմնական ուշադրությունն ուղղված էր մարդու գործունեության ավանդական ձևերի (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ) և տարաբնակեցման (տեղաբաշխման, քաղաքների ու գյուղերի) ուսումնասիրության վրա, ապա վերջերս այն փոխադրվում է մարդու գործունեության ոչ ավանդական ձևերի վրա, որոնք

¹ Հասարակական արտադրության տերմինի տակ հասկացվում է արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միասնությունը:

² **Օյկումենա** - հունարեն նշանակում է ճանաչված, հայտնի աշխարհ: Ժամանակակից գիտության մեջ այս տերմինի հոմանիշն է **հասարակական ոլորտ** (սոցիոսֆերա):

գիտատեխնիկական հեղաշրջման ժամանակահատվածում ավելի ու ավելի մեծ դեր են կատարում հասարակության կյանքում (օրինակ գիտությունը, ռեկրեացիան, հանցագործությունները, սպասարկման ոլորտը, ինչպես նաև շրջակա միջավայրի որակը): XX դարի 70-ական թթ. ձևավորվեցին աշխարհագրության նոր բաժիններ ռեկրեացիոն աշխարհագրություն, ծառայությունների ոլորտի աշխարհագրություն, հանցագործությունների աշխարհագրություն:

Այնուհետև՝ 80-ական թվականներից սկսվեց աշխարհագրության «հումանիզացման» երկրորդ ալիքը, որի գլխավոր առանձնահատկությունը մարդու կյանքի ուսումնասիրությունն է անհատական մակարդակով: Արդյունքում ծագեց հետազոտության նոր ուղղություն՝ հումանիստական աշխարհագրությունը: Այն ուսումնասիրում է անհատի կողմից աշխարհագրական կոնկրետ տարածության ճանաչման ու յուրացման գործընթացը, քաղաքային միջավայրի ու գյուղական լանդշաֆտի ընկալման առանձնահատկությունները, բնակեցման համար այս կամ այն տեղի ընտրությունը՝ ելնելով դրա մասին անհատի ունեցած պատկերացումից:

Խորհրդային տնտեսական աշխարհագրությունը, որի մասն էր կազմում նաև հայկական տնտեսական աշխարհագրությունը, նույնպես զարգանում էր սոցիոլոգացման և էկոլոգացման ուղղությամբ, ինչը պայմանավորված էր երկրում ծառայած նոր հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Սկսած 70-ական թթ. ձևավորվեցին տնտեսական աշխարհագրության նոր այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են գիտության աշխարհագրությունը, ռեկրեացիոն աշխարհագրությունը, ռացիոնալ բնօգտագործման աշխարհագրությունը, սպասարկման ոլորտի աշխարհագրությունը:

Սկսած 70-ական թվականներից, հաշվի առնելով թեմատիկ ու առարկայական կառուցվածքի փոփոխությունները, ԽՍՀՄ-ում, այդ թվում Հայկական ԽՍՀ-ում տնտեսական աշխարհագրությունը սկսեց անվանվել սոցիալ-տնտեսական:

Աշխարհագետների (աշխարհագրական դպրոցների) միջև գոյություն ունեցող գիտական տարածայնությունների առարկան **հասարակական արտադրության տեղաբաշխումը որոշող ուժերի ու պատճառների ըմբռնման ու բացատրությունների տարբերություններն են:** Բանավեճ հարուցող գլխավոր հարցը կարելի է ձևակերպել մոտավորապես հետևյալ կերպ.

Գործնականում հասարակական, տնտեսական ու բնական օբյեկտիվ օրենքներից ո՞րն է վճռական դեր կատարում հասարակական արտադրության զարգացման ու տեղաբաշխման գործընթացում:

Տնտեսական աշխարհագրության որոշ մասնագետ-գիտնականներ ելնում են այն դրույթից, որ տարածքում հասարակական արտադրության տեղաբաշխումը, ինչպես նաև պատմական զարգացումը որոշվում է հասարակության նյութական բարիքների արտադրության եղանակով կամ, այլ կերպ ասած, հասարակության սոցիալ-տնտեսական օրենքներով:

Դրանով կարելի է բացատրել այն փաստը, որ տարբեր ժամանակաշրջաններում աշխարհի տնտեսապես առավել զարգացած ու հզոր երկրներ են հանդիսացել Չինաստանն ու Հնդկաստանը, Եգիպտոսը, Հունաստանն ու Հռոմը, Անգլիան ու

Ֆրանսիան, ԱՄՆ-ն ու ճապոնիան, այսինքն այն երկրները, որոնցում տիրապետել է տվյալ ժամանակաշրջանի առավել առաջավոր և արդյունավետ հասարակարգը:

Ի տարբերություն նշվածի, արտասահմանյան որոշ աշխարհագրագետներ երբեմն անտեսում, նվազեցնում կամ էլ նույնիսկ ժխտում են սոցիալական կարգի ու արտադրության եղանակի ազդեցությունը տնտեսության տեղաբաշխման վրա՝ գլխավոր և վճռական դերը վերագրելով բնական պայմաններին:

Արտադրության տեղաբաշխման բացատրության համար առաջադրվում էին այսպես կոչված «անփոփոխ շտանդորտները», որոնք ըստ այդ հեղինակների համոզման պիտանի են բոլոր երկրների ու ժամանակների համար: Առավել հայտնի տեսաբանն է եղել Իոհան Զեներիկ Ֆոն Թյունենը (1753-1850), որը գրել է «Մեկուսացված պետությունը գյուղատնտեսության և ազգային տնտեսության հետ հարաբերությունում» հայտնի աշխատությունը:

Թյունենը ուսումնասիրելով գյուղատնտեսական բազմաթիվ մթերքների ու տրանսպորտային ծառայությունների գները, հաշվարկեց, որ ընդարձակ, միապաղաղ, նավարկելի ջրանցքներից զուրկ և կենտրոնում միակ շուկայական քաղաք ունեցող ենթադրյալ պետությունում, մայրաքաղաքից որոշակի հեռավորության վրա, առաջանում են տնտեսական տարածքային գոտիներ: Այս գոտիներն անվանվում են Թյունենի օղակներ:

Դրա գիտական արժեքը փաստական առումով, բնականաբար, վաղուց հնացել է, քանի որ, մասնավորապես գյուղատնտեսական մթերքները քաղաքներ այլևս սայլերով չեն փոխադրում, անտառային գոտիները բնակչությանը այլևս փայտ չեն մատակարարում և դրանք կատարում են նոր հանգստի (ռեկրեացիոն) գործառույթ:

Ներկայումս Թյունենի օղակները զգալիորեն շեղվել և փոփոխվել են նաև ուրբանիզացման, ինդուստրացման և այլ գործընթացների հետևանքով: Սակայն դրանց տեսական նշանակությունը պահպանվել է նաև մեր օրերում:

Թյունենի տեսությունը արտադրական-տնտեսական և առևտրի բնագավառներում ավելի զարգացրեց Ալեքսանդր Լյոշը «Տնտեսության աշխարհագրական տեղաբաշխումը» աշխատությունում: Թյունենի տեսությունը յուրովի մեկնաբանեցին և ավելի զարգացրեցին Վ. Քրիսթալերը, Ա. Վեբերը, Վ. Բունզեն, Պ. Հագենը, Ռ. Այզադը:

Մեթոդոլոգիական առումով նման տեսության թերությունն այն է, որ նրանում հաշվի չեն առնվում արտադրողական ուժերի տեղաբաշխման վրա վճռական ազդեցություն ունեցող այնպիսի օբյեկտիվ գործոններ, ինչպիսիք են արտադրական հարաբերությունների բնույթը, առավելագույն շահույթ ապահովելու ծգտումը, համաշխարհային շուկայի ազդեցությունը, տեղաբաշխման կարգավորման ուղղությամբ պետության ձեռնարկած միջոցառումները, տեղաբաշխման պատմականությունը և այլն:

Այդ աշխատությունները պարունակում են արտադրողական ուժերի տեղաբաշխման և արտադրության տարածական կազմակերպման վերլուծության մի շարք արժեքավոր գործնական հաշվարկներ և մաթեմատիկական մեթոդներ, որոնք մեծ

հետաքրքրություն են ներկայացնում տնտեսագետների ու աշխարհագետների համար:

Արտասահմանյան գիտնականների մի մասն էլ արտադրողական ուժերի տեղաբաշխման վերլուծության հարցում կանգնած է այսպես կոչված **աշխարհագրական դետերմինիզմի** դիրքերում (լատ. *determino*-որոշում): Համաձայն աշխարհագրական դետերմինիզմի (որոշվածության) արտադրողական ուժերի տեղաբաշխման և ամբողջ մարդկային հասարակության զարգացման գործում վճռական դերը վերագրվում է աշխարհագրական միջավայրին: Գիտական այս ուղղությունը ԱՄՆ-ում ստացել է **ինվայրոնմենթալիզմ** անունը (անգլերեն *environment* – միջավայր):

Առավել մեծ ճանաչում են ստացել գերմանական աշխարհագետներ **Ֆ. Ռաոցելի** և **Ա. Յետների** աշխատությունները, որոնք հիմք են ծառայել հատուկ գիտության **գեոպոլիտիկայի** (աշխարհաքաղաքականության) ստեղծման համար:

Աշխարհաքաղաքականագետները հիմնավորում էին Գերմանիայի «կենսական տարածքների» ընդարձակման անհրաժեշտությունը, առանց որի իբր «գերմանական ռասսան» չի կարող ապրել և ծաղկել:

Աշխարհաքաղաքականության արմատների վրա աճեցին մարդատյաց ֆաշիզմը և ռասիստական տեսությունը:

Աշխարհագրական միջավայրն, անկասկած, հասարակության նյութական կյանքի ընդհանուր պայմանն է: Բնական պայմաններն իրոք մեծ ազդեցություն են թողնում արտադրության տեղաբաշխման վրա: Սակայն արտադրության զարգացման համար առաջին հերթին անհրաժեշտ է արտադրողական ուժերի առաջացումը և միայն դրանից հետո այս կամ այն նյութերն ու բնության ուժերը տնտեսապես արդյունավետ օգտագործելու նկատմամբ հասարակության ունեցած պահանջարկն ու հնարավորությունները:

Արտադրության զարգացման ու տեղաբաշխման վրա աշխարհագրական միջավայրն ազդում է միջնորդված ձևով՝ արտադրական հարաբերությունների, մարդկանց աշխատանքային գործունեության, տեխնիկայի զարգացման մակարդակի, հասարակության պահանջմունքների ու հնարավորությունների միջոցով:

Որպես վերը նշված թեզիսի հիմնավորում բերենք հետևյալ օրինակները.

ա) Աշխարհի առավել զարգացած երկրների մեծ մասը գտնվում է բարեխառն և մասամբ էլ մերձարկտիկական գոտիներում, որոնք բնութագրվում են աշխարհագրական միջավայրի սակավ բարենպաստությամբ, իսկ որոշ երկրներ (օրինակ Շվեդիա, Ֆինլանդիա, Կանադա) տարածքի որոշ մասերի նույնիսկ ծայրահեղ անբարենպաստությամբ,¹ մինչդեռ, մերձհասարակածային ու մերձարևադարձային գոտիների համեմատաբար բարենպաստ բնական պայմաններում գտնվող երկրներ

¹ Այսպես, օրինակ, Սկանդինավյան և Կոլա թերակղզում մոտ 1 մլն. քառ. կմ. են զբաղեցնում Լապլանդիայի տայգայի և տունդրայի բնական համալիրները: Կանադայի տարածքի 2/3-ը կազմում են մարդու բնակեցման համար անբարենպաստ բնական համալիրները

րի մեծ մասը տնտեսապես թույլ զարգացած, այդ թվում առավել նվազ զարգացած երկրներ են:

բ) Միևնույն աշխարհագրական միջավայրում գտնվող ճապոնիան մինչև XX դարի 30-ական թվականները հետամնաց ֆեոդալական երկիր էր, իսկ ներկայումս աշխարհի ամենազարգացած երկրներից մեկն է: Հայտնի է, որ ճապոնիայի բնական պայմաններն ու ռեսուրսներն այդ ժամանակահատվածում չեն փոփոխվել, հետևաբար ճապոնիայի տնտեսական կտրուկ վերելքի վճռորոշ գործոնը նրա սոցիալ-տնտեսական համակարգի փոփոխությունն է:

գ) Վերջին տասնամյակում ԽՍՀՄ փլուզումից հետո դրա կազմի մեջ մտնող երկրների համախառն ներքին արդյունքը խիստ կրճատվել է և այդ երկրների տնտեսական զարգացման մակարդակը զգալիորեն ցածրացել է, բայց ոչ թե բնական պայմանների, այլ արտադրական հարաբերությունների փոփոխության պատճառով:

Տնտեսական աշխարհագրության *խնդիրն է* իր տեսական ու գործնական մշակումների շնորհիվ հասնել երկրի արտադրողական ուժերի այնպիսի տեղաբաշխման, որն առավել չափով համապատասխանի տվյալ փուլում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, առավելագույն չափով նպաստի հասարակական արտադրության արդյունավետության բարձրացմանը, բնակչության լայն զանգվածների հարաճուն նյութական ու հոգևոր պահանջմունքների բավարարմանը:

Տնտեսական աշխարհագրությունը, որպես հասարակագիտական առարկա, օգտագործում է աշխարհագրական և տնտեսագիտական հետազոտությունների կիրառական մեթոդների աճող զինանոցը:

Ներկայումս մեծ նշանակություն են ձեռք բերում տնտեսամաթեմատիկական մոդելավորումը և համակարգչային ծրագրավորումը, բնական ռեսուրսների, ճյուղերի ու արտադրությունների տեղաբաշխման հիմնավորումների, կորեյացիոն կապերի, հաշվեկշռային հաշվարկների, մասնագիտացման գործակիցների և համալիր զարգացման և այլ քանակական հաշվարկային գնահատումները:

Օգտագործում են նաև ավանդական մեթոդները վիճակագրական, համեմատական, քարտեզագրական և այլն:

Վիճակագրական մեթոդի էությունն այն է, որ տնտեսական ու աշխարհագրական գործընթացների միտումները, ուղղությունները բացատրվում են ընթացիկ վիճակագրության տվյալները նախկինի հետ համադրելով ու վերլուծելով:

Համեմատական մեթոդի էությունն այն է, որ որևէ աշխարհագրական օբյեկտի ցուցանիշ (օրինակ՝ բնակչության խտության, սպասարկման ոլորտի տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքում) համեմատվում է այլ օբյեկտի համապատասխան ցուցանիշների հետ, և այդ համեմատության շնորհիվ հնարավոր է լինում ավելի համակողմանի և ճշգրիտ գնահատել ուսումնասիրվող գործընթացի ինտենսիվությունը կամ տեղաբաշխումը:

Քարտեզագրական մեթոդը աշխարհագրության առավել հզոր մեթոդն է: Ինչպես նշել է ականավոր աշխարհագետ Ն. Ն. Բարանսկին «Քարտեզը աշխարհագրության ալֆան և օմեգան», նկատի ունենալով այն իրականությունը, որ

քարտեզն աշխարհագրական ու տնտեսական երևույթների տեղաբաշխման վիճակը շատ ավելի ակնառու է, քան աշխարհագրական բնութագրի նույնիսկ հսկայածավալ տեքստը կամ բազմաթիվ աղյուսակները:

Տնտեսական աշխարհագրությունը սերտ կապերի մեջ է մի շարք գիտությունների հետ: Առաջին հերթին դա ժողովրդագրությունն ու տնտեսագիտությունն են ու վերջինիս առանձին բաժինները (տնտեսական տնտեսագիտություն, վիճակագրություն, աշխատանքի տնտեսագիտություն, տնտեսության կառավարում և այլն) և հասարակական աշխարհագրության տարբեր բաժինները (բնակչության աշխարհագրություն, բնական ռեսուրսների աշխարհագրություն և այլն) Այն կապված է նաև սոցիոլոգիայի, պատմության, ֆիզիկական աշխարհագրության, երկրաբանության և այլ առարկաների հետ, որոնց գիտական հետազոտությունների արդյունքներն օգտագործվում են տնտեսաաշխարհագրական հետազոտություններում:

Ներկա ժամանակաշրջանում հասարակական կյանքի բարդացումը և գլոբալացումը, գիտատեխնիկական առաջընթացը ազդում են տնտեսության տեղաբաշխման վրա, փոփոխության է ենթարկվում տնտեսության տարածական կառուցվածքը, ձևավորվում են տնտեսության տարածքային կազմակերպման նոր ձևեր.

Այս պայմաններում տնտեսական աշխարհագրության հետազոտման կարևոր խնդիրներն են դարձել.

1. Արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխման գիտական հիմունքների մշակումը
2. Տարածքի տնտեսական շրջանացման, առանձին շրջանների համալիր և համամասնական զարգացման, դրանց միջև ռացիոնալ տնտեսական-տարածական կապերի հաստատման հիմնահարցերի ուսումնասիրությունը:
3. Բնական ռեսուրսների խնայողաբար, նպատակային և համալիր օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության հիմնահարցերի ուսումնասիրությունը:
4. Միջազգային տնտեսական ինտեգրացման և գլոբալացման աշխարհագրական հիմնահարցերի ուսումնասիրությունը

Տնտեսաաշխարհագրական հետազոտություններն արդի ժամանակաշրջանում ավելի կարևոր և կիրառական նշանակություն են ստացել: Դրանք նպաստում են գիտականորեն հիմնավորված տարածաշրջանային տնտեսական քաղաքականության իրականացմանը:

Չարքեր ինքնաստուգման համար

1. Սահմանել հասարակական աշխարհագրության ուսումնասիրության առարկան և օբյեկտները:
2. Հիմնավորել տնտեսական աշխարհագրությունը որպես գիտության ճյուղ և տնտեսագիտության և աշխարհագրության միջև գտնվելու հանգամանքը:
3. Ինչպե՞ս է դրսևորվում «հումանիզացումը» աշխարհագրության մեջ:
4. Ո՞րն է աշխարհագրագետների (աշխարհագրական դպրոցների) միջև տարածայնություններ առաջացող առարկան (գլխավոր հարցը):
5. Բնութագրել՝ «աշխարհագրական դետերմինիզմի» էությունը և մեթոդաբանական առումով գնահատել դրա ճշմարտացիությունը:
6. Համառոտակի բնութագրել տնտեսական աշխարհագրության հետազոտության համագիտական և զուտ աշխարհագրական մեթոդները:
7. Նշել՝ տնտեսական աշխարհագրության հետ սերտորեն կապված գիտությունները:
8. Նշել՝ տնտեսական աշխարհագրության արդի խնդիրները:

1.2 ԱՐՏԱԳՐՈՎԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Տնտեսական աշխարհագրության ամենակարևոր ու հիմնական հասկացությունը **տեղաբաշխումն է**, որն արտահայտում է երևույթների ու աշխարհագրական օբյեկտների կոնկրետ բաշխումը որևէ տարածքում: Մարդկանց (բնակչության) բաշխումն արտահայտելու համար օգտագործվում է **տարաբնակեցում** (տարածական բնակեցում) տերմինը:

Տեղաբաշխման գրաֆիկական մոդելը աղյուսակն է, որի ուղղաձիգ սյունակներում արտահայտվում են աշխարհագրական օբյեկտները (քաղաքները, շրջանները, հանրապետությունները), իսկ հորիզոնական տողերում՝ աշխարհագրական դիտման միավորները (մարդ, տոննա, կվտ.ժամ):

Տեղաբաշխման աշխարհագրական մոդելը աշխարհագրական քարտեզն է:

Արտադրողական ուժերը արտադրության գործիքները, նրանցով զինված արտադրողն ու գիտությունն են, որոնց ազդեցությամբ աշխատանքի առարկաները հարմարեցվում են հասարակության կարիքների բավարարմանը:

Արտադրողական ուժերի տեղաբաշխումը որևէ տարածքում արտադրողական ուժերի բաշխումը բնութագրող դինամիկ վիճակն է: Ընդսմին, այդ բաշխումը համապատասխանում է տվյալ տարածքի բնական, սոցիալական և տնտեսական պայմաններին ու որոշվում է տվյալ սոցիալ-տնտեսական համակարգին բնորոշ աշխատանքի տարածական կազմակերպման առանձնահատկություններով:

Որպես արտադրողական ուժերի տեղաբաշխում տերմինի հոմանիշ ակադեմիական գիտության մեջ օգտագործվում են տնտեսության տեղաբաշխում, տնտեսության տարածական կառուցվածք և տնտեսության տարածական կազմակերպում տերմինները:

Առանձին օբյեկտի, տեղաբաշխման կետի կամ շրջանի սահմանման համար գործածվում են նաև տեղաբաշխման տեղ, տեղադրություն տերմինները որոնք կարելի է փոխարինել տեղադիրք ավելի կարճ տերմինով: Դրանք ցույց են տալիս օբյեկտի տեղաբաշխման տեղը, դրա աշխարհագրական հասցեն:

Նյութական ու հոգևոր առումներով մարդու տնտեսական գործունեությունն ըստ էության, բնության հարստությունների ակտիվ յուրացման ու զարգացման երկարատև գործընթաց է, որի ժամանակ վերարտադրվում են մարդկության գոյության պայմաններն ու ընթանում է նրա զարգացումը:

Տնտեսական գործունեության ընթացքում օգտագործվում են և նյութական, և սոբյեկտիվ տարրեր, որոնք կոչվում են արտադրողական ուժեր:

Նյութական տարրերն աշխատանքի միջոցներն են, իսկ սոբյեկտիվ տարրը մարդն է, որի ազդեցությամբ աշխատանքի առարկաները հարմարեցվում են հասարակության կարիքների բավարարման պահանջին:

Գիտության և տեխնիկայի արագ ու զգալի զարգացման, ինչպես նաև արտադրության մեջ դրանց նվաճումների լայնորեն ներդրման շնորհիվ գիտությունը ևս, ըստ էության դարձել է արտադրողական ուժ:

Սակայն, չնայած արտադրության մեքենայացմանը, էլեկտրիֆիկացմանը, ավտոմատացմանը, էլեկտրոնացմանը, որպես գլխավոր արտադրողական ուժ շարունակվում է մնալ մարդը:

Արտադրողական ուժերի տեղաբաշխումը որևէ տարածքում դրանց տարածական բաշխման գործընթացն է, այդ բաշխման անընդհատ փոփոխվող դինամիկ վիճակը:

Օրինաչափությունը, լայն իմաստով, սոբյեկտիվ նյութական աշխարհի զարգացումն ու գործունեությունը որոշող անհրաժեշտ, կայուն և էական հարաբերությունների (փոխադարձ կապերի) հատուկ խումբն է:

Օրինաչափություններն այնքան ընդհանրական ու բնութագրական են տվյալ երևույթին, որ դրանց երբեմն համարում են օրենքներ, այլ կերպ ասած, դրանք և օրենքները միևնույն մակարդակի կատեգորիաներ (հասկացություններ) են:

Վերը բացահայտված ելակետային տերմինների օգնությամբ բացահայտենք արտադրողական ուժերի տեղաբաշխման օրինաչափությունները հասկացությունը: Աշխարհի ավելի քան 200 պետությունների ազգային տնտեսությունների տեղաբաշխումը (տեղաբաշխման պատկերները) միմյանց հետ համարելով (համեմատելով) կարելի է նկատել մի շարք ընդհանրություններ՝ տեղաբաշխման օրինաչափություններ, ընդհանուր համանման գծեր չնայած այն հանգամանքին, որ յուրաքանչյուր երկրում արտադրողական ուժերի տեղաբաշխումը համապատասխանում է դրանց տարածքի բազմազան բնական, սոցիալական և տնտեսական պայմաններին:

Արտադրողական ուժերի տեղաբաշխման օրինաչափությունները տարածքի և հասարակական արտադրության միջև հաստատված առավել ընդհանրական օբյեկտիվ պատճառահետևանքային հարաբերություններն են, որոնք որոշում են հասարակական արտադրության զարգացումը տարածական ասպեկտով:

Այդ օրինաչափություններն արտացոլում են արտադրության առանձին տարրերի ձգողությունը դեպի հատուկ բնութագիր ունեցող տարածքները, արտադրության կազմակերպման առանձնահատկությունը (համակենտրոնացվածություն և ցրվածություն, մասնագիտացվածություն և կոմպլեքսայնություն, կոմբինացվածություն և կոոպերացվածություն), որոնք վերջին հաշվով, որոշում են տվյալ երկրում կամ նույնատեսակ երկրների խմբում արտադրողական ուժերի տեղաբաշխման ամբողջ գործընթացը:

Տեղաբաշխման օրինաչափությունները պայմանավորված են կոնկրետ արտադրությունների առանձնահատկություններով (համակենտրոնացման մակարդակով, ռեսուրսների պահանջարկով, բնապահպանական պայմաններով), տարբեր ճյուղերի միջև փոխգործողության բնույթով (փոխադարձ կապվածությամբ, համատեղելիությամբ, անհամատեղելիությամբ), կոնկրետ տարածքի և դրա վրա զուգակցված արտադրական ճյուղերի միազույնարային փոխներգործությամբ:

Տեղաբաշխման և տարաբնակեցման օրինաչափությունները ձևավորող վճռորոշ գործոնը տիրապետող արտադրական հարաբերություններն են:

Արտադրության յուրաքանչյուր եղանակին համապատասխանում են արտադրողական ուժերի տեղաբաշխման ուրույն օրինաչափություններ:

Կապիտալի (շուկայական) տնտեսության հիմնական տնտեսական օրենքի գլխավոր գիծը հավելյալ արժեքի՝ շահույթի կուտակումն է, որի համար ծավալվող գործունեությունը հանգեցնում է առանձին շրջանների աշխատանքային և բնական ռեսուրսների, հիմնական արտադրական ֆոնդերի չափազանց ինտենսիվ շահագործման, արտադրողական ուժերի անհամաչափ տեղաբաշխման՝ տնտեսության տարածական անհամամասնությունների: Որևէ տնտեսական շրջանի, երկրի կամ երկրների խմբի տնտեսության առաջանցիկ տեմպերով զարգանալը հանգեցնում է մյուսների տնտեսական զարգացման դանդաղեցմանը (լճացմանը): Այսպես, օրինակ, «յոթնյակի» երկրներում արտադրվում է համաշխարհային արդյունաբերական արտադրանքի գերակշիռ մասը, շատ ավելի, քան աշխարհում բնակչության և տարածքի առումով ունեցած:

Սոցիալիստական համակարգի երկրներում, ընդհակառակը, հետևողականորեն ձգտում էին ամեն, նույնիսկ տնտեսական վնասաբերության, զնով հաստատել արտադրողական ուժերի տեղաբաշխման հնարավոր հավասարաչափություն: Նման օրինաչափությունն անվանվում էր պլանային-համամասնական տեղաբաշխում:

Ընդհանրապես բոլոր երկրների կառավարություններն էլ ձգտում են հնարավորին չափ հավասար տեղաբաշխել տնտեսությունը, համահարթեցնել

երկրի շրջանների զարգացման մակարդակները, վերացնել դրանց միջև գոյություն ունեցող մեծ տարբերությունները:

Այսպիսի օրինաչափության հաստատումը տեսականորեն հնարավոր է միայն համայնական պետական սեփականության պայմաններում:

Սակայն երկու հասարակարգերի նյութատեխնիկական բազայի (հիմքի) ընդհանրությունը հնարավոր է դարձնում տեղաբաշխման որոշ ընդհանուր օրինաչափությունների ձևակերպումները:

Օրինակ ընդհանուր օրինաչափություն է բնական ռեսուրսների համալիր օգտագործման հիման վրա արտադրության արդյունավետության բարձրացումը:

Տարբեր գիտնականներ «նկատում են» տարբեր օրինաչափություններ: Հաճախ միևնույն օրինաչափությունը տարբեր ձևով է ձևակերպվում տարբեր գիտնականների կողմից: Այդուհանդերձ շատ կարևոր է իմանալ համընդհանուր ճանաչում ունեցող «արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխման օրինաչափությունը»:

Արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխում ասելով հասկանում ենք հնարավոր տարբերակներից բանականորեն ընտրված այն տեղաբաշխումը, որն առավելագույն չափով է համապատասխանում երկրի տնտեսական զարգացման պահանջներին: Իսկ արտադրողական ուժերի տեղաբաշխման ռացիոնալ տարբերակներից ընտրված լավագույնը կոչվում է **օպտիմալ**:

Արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխումն ապահովում է հասարակական ծախսերի խնայողություն մշակող արդյունաբերության ձեռնարկությունները հումքի և վառելիքի (էներգիայի) աղբյուրներին մոտեցնելու, հումքի մշակման հաջողական փուլերը իրականացնող ձեռնարկությունները տարածականորեն համատեղելու, արտադրության համակենտրոնացման, մշակող արդյունաբերության վերջնական պատրաստի ապրանքների արտադրությունը սպառման շրջաններին մոտեցնելու և տարածական-տեղաբաշխական այլ միջոցառումների շնորհիվ:

Արտադրության համակենտրոնացումը տնտեսագիտության տնտեսական-տեխնոլոգիական կարևոր հասկացություններից մեկն է, որն օգտագործվում է նաև տնտեսական աշխարհագրության մեջ արտադրության տարածական կազմակերպման վերլուծության համար: **Արտադրական համակենտրոնացումը** առանձին արտադրական ձեռնարկությունների չափերի խոշորացման ընդհանուր օբյեկտիվ միտումն է, որը խթանում է արտադրության արդյունավետության բարձրացումը:¹

Հասկանալի լինելու համար նշենք, որ, որքան խոշոր է ձեռնարկությունը, այնքան փոքր են միավոր արտադրանքի արտադրության վրա կատարվող տեսակարար ծախսերը (ցածր է ինքնարժեքը):

Սակայն խոշոր արտադրության առավելությունն այդքան էլ պարզունակ ու

միանշանակ չէ, ինչպես կարող է թվալ: Արտադրության անսահման համակենտրոնացման աճին խանգարում են մի շարք արգելակող գործոններ: Դրանց մի մասը զուտ տեխնիկական ու տեխնոլոգիական, իսկ մյուս մասը տնտեսական և տնտեսաաշխարհագրական բնույթի գործոններն են:

Աշխարհագրական գործոնները համակենտրոնացմանը ներկայացնում են հետևյալ բնույթի սահմանափակումները.

Մակրոտարածական սահմանափակումներ: Որոշ մակարդակի վրա համակենտրոնացման օգուտները չեզոքանում են փոխադրման ծախսերի մեծացման հետևանքով:

Մեզոտարածական սահմանափակումներ: Գյուղատնտեսության, անտառային տնտեսության համար որպես արտադրության համակենտրոնացման սահմանափակում կարող է ծառայել հողի՝ աշխատանքի առարկայի, կոնկրետ չափը:

Միկրոտարածական սահմանափակումներից է ձեռնարկության ընդարձակման համար անհրաժեշտ մակերեսի սահմանափակությունը:

Արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխումն, ինչպես արդեն նշվեց, ենթադրում է նաև հումքի հաջողական մշակման փուլերի տարածական համակենտրոնացումը: Արդյունաբերական և ագրոարդյունաբերական արտադրության կազմակերպման ժամանակակից, առավել առաջադեմ այս ձևը կոչվում է **կոմբինացում**:

Այս գործընթացում մեկ ձեռնարկության՝ կոմբինատի մեջ միավորվում են արդյունաբերության տարբեր ճյուղերի ձեռնարկություններ, որոնք իրագործում են հումքի մշակման հաջողական փուլերը կամ էլ միմյանց հանդեպ օժանդակ դեր են կատարում:

Պետք է նշել, որ կոմբինացման շնորհիվ ելանորոն նվազում են արտադրական հումքի և էներգիայի կորուստները, աճում է արտադրության արդյունավետությունը, ստեղծվում են անհոսք ու անթափոն (սակավաթափոն) արտադրությունների կազմակերպման համար ավելի նպաստավոր պայմաններ (կոմբինացման կոնկրետ օրինակներ բերված են «Արդյունաբերության աշխարհագրություն» բաժնում):

Մյուս կարևոր օրինաչափությունը **արտադրողական ուժերի ներդաշնակ տեղաբաշխումն է**, որը ենթադրում է երկրի առանձին տնտեսական շրջանների մասնագիտացված ու կոմպլեքսային զարգացումների զուգակցում:

Տնտեսական շրջանների և երկրների տնտեսության մեջ առաջատար դերը պատկանում է մասնագիտացման ճյուղերին:

Տնտեսական շրջանի մասնագիտացում հասկացությունը նշանակում է շրջանի տնտեսության կողմնորոշում նրա սահմաններից դուրս աշխատանքի տարածական բաժանման ընդհանուր համակարգի շրջանակներում սպառման համար նախատեսված ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման գծով: Ընդսմին, ենթադրվում է, որ շնորհիվ բնական, սոցիալական, տնտեսական, պատմական գործոնների (նախադրյալների) ու շրջանի տնտեսաաշխարհագրական դիրքի, մասնագիտացված ճյուղերի արտադրանքը ժողովրդատնտեսական տեսակետից թողարկվում է արդյունավետորեն՝ նյութական և

¹ Ձեռնարկությունների չափազանց խոշորացման որոշակի մակարդակից հետո սկսում է գործել հակառակ միտումը՝ նվազում է դրանց արդյունավետությունը: Այս տեսակետից գերադասելի են միջին չափի ձեռնարկությունները:

աշխատանքային փոքր ծախսումներով, որի շնորհիվ ստացվում է համեմատաբար մեծ արդյունք:

Շրջանի մասնագիտացումը չպետք է շփոթել տնտեսագիտության մեկ այլ հասկացության՝ **արտադրական մասնագիտացման** հետ:

Արտադրության մասնագիտացումը աշխատանքի հասարակական բաժանման գործընթացի մի կողմն է մեկ ապրանքի, կամ ապրանքի մասի (դետալի) մշակման կամ տեխնոլոգիական որևէ գործընթացի փուլը ինքնուրույն արտադրություն դարձնելու միտումը, որի շնորհիվ նվազում է արտադրանքի ինքնարժեքը և բարձրանում որակը:

Արտադրության մասնագիտացումից անբաժանելի է **կոոպերացումը**՝ մասնագիտացված ձեռնարկությունների կազմակերպված փոխադարձ կապը: Մասնագիտացումն ու կոոպերացումն, ըստ էության, աշխատանքի հասարակայնացման ընդհանուր գործընթացի երկու կողմերն են:

Արտադրության մասնագիտացումը հանգեցնում է մասնագիտացված ձեռնարկությունների կոոպերացման, այսինքն ընդհանուր բարդ պատրաստի արտադրանքի թողարկման գործընթացում դրանց միջև սերտ ու երկարատև համագործակցության: Կոոպերացման գծով կապերը պայմանավորվում են կոոպերացված ձեռնարկությունների միջև կնքված պայմանագրերով ու հատուկ փոխադարձ պարտավորություններով:

Արտադրողական ուժերի տեղաբաշխման մյուս օրինաչափությունը երկրների ու դրանց շրջանների համալիր զարգացումն է արտադրողական ուժերի ներդաշնակ զուգակցման շնորհիվ:

Երկրի կամ շրջանի համալիր զարգացումն արտահայտում է տնտեսության բաղադրիչների կառուցվածքը, բաղադրիչների միջև ձևավորված փոխադարձ կապերը:

Արտադրողական ուժերի ճիշտ՝ ռացիոնալ տեղաբաշխման շնորհիվ երկրի առանձին մասերը տնտեսական շրջանները զարգանում են ոչ թե միակողմանիորեն միայն մասնագիտացման ուղով, այլ տվյալ երկրում գոյություն ունեցող բոլոր ռեսուրսների համալիր օգտագործման հիման վրա համալիր զարգացման ուղով: Իսկ դա նշանակում է, որ կոնկրետ երկրում կամ շրջանում մասնագիտացման ճյուղերին զուգընթաց զարգանում են նաև տնտեսության **օժանդակող և սպասարկող** ճյուղերը: Օրինակ, Հայաստանի Հանրապետության կոնյակի, գինու կամ պահածոների արտադրության հաջող կազմակերպման համար ստեղծվել է տարայի (շշեր, բանկաներ) **օժանդակող արտադրությունը**:

Յուրաքանչյուր երկրում կամ դրա տնտեսական շրջանում մասնագիտացման ու օժանդակող ճյուղերից (արտադրություններից) բացի գործնականում ստեղծվում են նաև **սպասարկող ճյուղերը**՝ բնակչությանը առաջին անհրաժեշտության ամենաբազմազան ապրանքներով (օրինակ՝ հացով, հրուշակեղենով) ապահովող ճյուղերը:

Շրջանի կամ երկրի համալիր ուղով զարգանալու հետևանքով հասարակական արտադրության ճյուղային կառուցվածքի բարդացման գարծընթացը, այսինքն

արտադրանքի անվանացուցակի (բազմազանության) և առանձին մասնագիտացված ձեռնարկությունների ու ճյուղերի ավելացումը, կոչվում է **դիվերսիֆիկացիա (բազմազանեցում)**:

Դիվերսիֆիկացիան մի կողմից դժվարացնում է տնտեսության կառավարումը, մասնագիտացված զարգացման համեմատությամբ որոշ չափով բարձրացնում է արտադրանքի արտադրության վրա կատարվող տեսակարար ծախսերը, իսկ մյուս կողմից շրջանի (երկրի) տնտեսությունը դարձնում է ավելի կայուն՝ տնտեսական կոնյունկտուրայի տատանումների հանդեպ:

Օրինակ՝ մոնոկուլտուրայի¹ կամ հումքային կցորդ (համաշխարհային շուկային հիմնականում հումք մատակարարող) երկրների տնտեսությունը չափազանց զգայուն է համաշխարհային շուկայում դրանց ավանդական արտահանության ապրանքների գների տատանումների նկատմամբ, որի հետևանքով երբեմն հնարավոր է այդ երկրների արտարժույթային մուտքերի կտրուկ նվազում կամ երբեմն էլ ավելացում (օրինակ՝ նավթ արտահանող երկրների եկամուտների կտրուկ ավելացումը էներգետիկ ճգնաժամի տարիներին):

Դիվերսիֆիկացիայի հակադիր հասկացությունը **սիմպլիֆիկացիան** է, տնտեսության ճյուղային կառուցվածքի պարզեցումը:

Երկրի արտադրողական ուժերի տեղաբաշխման օրինաչափությունների ճանաչման հիման վրա և հասարակության զարգացման նպատակներին ու առկա ռեսուրսներին համապատասխան մշակվում են **արտադրողական ուժերի տեղաբաշխման սկզբունքներ**, կամ, ինչպես անվանում են, տարածաշրջանային քաղաքականության (տարածաշրջանային սոցիալ-տնտեսական քաղաքականության) սկզբունքներ: Դրանք արտահայտում են տարածական ասպեկտով ժողովրդական տնտեսության (և ընդհանրապես հասարակության կյանքի) զարգացման գլխավոր ուղղությունները տվյալ (կանխատեսվող) ժամանակահատվածում:

Արտադրողական ուժերի տեղաբաշխման սկզբունքներն անհրաժեշտորեն արտահայտում են հասարակության զարգացման հետևյալ օբյեկտիվ պահանջները, բխում են արտադրողական ուժերի տեղաբաշխման օրինաչափությունից, ծառայում որպես զարգացման ռազմավարական խնդրի լուծման միջոց:

Արտադրողական ուժերի տեղաբաշխման սկզբունքները գիտականորեն հիմնավորելիս հաշվի են առնում տարբեր արտադրությունների տեղաբաշխման բնական պատմական ու տեխնիկական գործոններ: Որպես տնտեսվարման ներգործություն, այդ սկզբունքները նպատակաուղղված են հասարակական արտադրության արդյունավետության բարձրացմանը:

Արտադրողական ուժերի տեղաբաշխման սկզբունքները շատ են, ուստի քննարկենք դրանցից մի քանի առավել կարևորներն ու գործնականում լայնորեն իրագործվողները (իսկ մյուսներին կծանոթանաք նյութական արտադրության կոնկրետ ճյուղերի տեղաբաշխման բաժիններում): **Մշակող արդյունաբերական ձեռնարկությունների մոտեցումը հումքի և վառելիքի աղբյուրներին** կամ **պատ-**

¹ Մոնո - մեկ, միակ, կուլտուրա-գյուղատնտեսական մշակաբույս

րաստի արտադրանքի սպառման շրջաններին չափազանց մեծ տնտեսական նշանակություն ունի հատկապես արտադրական հզոր ներուժ և հսկայական տարածք ունեցող երկրների համար (օրինակ Ռուսաստան, Չինաստան, ԱՄՆ):

Ավելի լավ պատկերացնելու համար նախ նշենք, որ Ռուսաստանում 1 տոննա բեռի փոխադրման միջին հեռավորությունն ավելի քան 700 կմ է (երկաթուղով՝ ավելի քան 1000 կմ, ծովային տրանսպորտով՝ ավելի քան 4000 կմ, խողովակաշարերով՝ շուրջ 3000 կմ): Նշենք նաև, որ հումքին և վառելիքին բաժին է ընկնում երկաթուղային, գետային, ծովային տրանսպորտի ընդհանուր փոխադրումների 75-95%-ը, իսկ խողովակաշարային տրանսպորտին՝ գրեթե 100%-ը:

Պատրաստի ապրանքների արտադրությունը սպառման գլխավոր շրջաններին մոտեցնելու սկզբունքը պայմանավորված է տրանսպորտային փոխադրումների ծախսերի կրճատման ձգտումով, ինչպես նաև որոշ ապրանքների տրանսպորտային անհարմարությամբ (օրինակ կահույքի, կոշիկի, ապակե տարայով խմիչքների, ծծմբական և այլ թթուների):

Առավել արդյունավետ բնական ռեսուրսների առաջնահերթ յուրացման սկզբունքը ենթադրում է, որ նախ պետք է օգտագործել սպառման ու մշակման շրջաններին ու երկրի մակերևույթին ավելի մոտ գտնվող, ինչպես նաև օգտակար բաղադրատարրերի ավելի մեծ պարունակություն ունեցող ռեսուրսները, իսկ դրանց սպառվելուց հետո միայն ձեռնարկել ավելի հեռու և խորը գտնվող ռեսուրսների օգտագործումը:

Բնական ռեսուրսների խնայողական օգտագործման սկզբունքը ենթադրում է արտադրական-տեխնոլոգիական միջոցառումների շնորհիվ նվազեցնել արտադրության գործընթացում առաջացող կորուստները և մեկ միավոր պատրաստի արտադրանքի վրա կատարվող հումքի տեսակարար ծախսումները:

Բնական ռեսուրսների համալիր օգտագործման սկզբունքը գործնականորեն նշանակում է հումքից կորզել դրա մեջ պարունակվող բոլոր օգտակար բաղադրատարրերը: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության պղնձի հանքաքարի մեջ պարունակվում են այլ օգտակար բաղադրատարրեր (ոսկի, հազվագյուտ մետաղներ), որոնց արժեքը նույնիսկ գերազանցում է պղնձին:

Բնության պահպանության, բնակչության կյանքի ու աշխատանքի համար անհրաժեշտ առողջ ու հիգիենիկ պայմանների ապահովման սկզբունքի էությունն այն է, որ մարդկանց կյանքին և բնությանը մեծ վտանգ սպառնացող արտադրությունները պետք է վերացնել կամ էլ տեղաբաշխել այլ գլխավորապես թույլ բնակեցված շրջաններում, իսկ հնարավորության դեպքում արտադրական ձեռնարկություններն էկոլոգիական սարքավորումներով համալրելու շնորհիվ (որը լավագույն տարբերակն է) նվազեցնել շրջակա միջավայր արտազատվող վնասակար նյութերի քանակը: Այս սկզբունքն անտեսելու հետևանքով երբեմն բնությանը, մարդկանց ու քաղաքային շինություններին վնասակար արտադրությունների պատճառած վնասը գերազանցում է այդ ձեռնարկությունների տված օգուտին, որի պատճառով որոշ ձեռնար-

կություններ, օրինակ, Ալավերդու լեռնանետաղածուլական կոմբինատը, փակվում են (ինչը ևս սխալ է):

Ինդուստրացման և ուրբանիզացման երկարատև ուղի անցած երկրներում աստիճանաբար արտադրողական ուժերի տեղաբաշխման կամ տարածաշրջանային սոցիալ-տնտեսական քաղաքականության կարևոր սկզբունք է դառնում **խոշորագույն քաղաքներում արդյունաբերության չափազանց կենտրոնացման սահմանափակումը, երկրով մեկ արդյունաբերության հնարավորին չափ հավասարաչափ տեղաբաշխումը**: Ջարգացման սկզբնական փուլերում տնտեսական պայմանները նպաստավոր են արդյունաբերությունը երկրների փոքրաթիվ, բայց խոշոր քաղաքներում կենտրոնացնելու համար: Այս երևույթը բացատրվում է նրանով, որ խոշոր քաղաքներն օժտված են արտադրական և սոցիալական ենթակառուցվածքի (ինֆրաստրուկտուրայի) տարրերով, (տրանսպորտային ուղիներ, կապի միջոցներ, էլեկտրամատակարարման ցանց, մատակարարման բազաներ, աշխատանքային ռեսուրսներ, առողջապահական, կրթական ու մշակութային հիմնարկների համակարգ), որոնք բարձրացնում են արտադրության արդյունավետությունը, հետևաբար արդեն խոշորացած քաղաքները դառնում են արդյունաբերության հետագա կենտրոնացման էլ ավելի հզոր «ձգողական կենտրոններ»:

Այսպիսով, խոշոր քաղաքներում շարունակվում է արտադրողական ուժերի հետագա կենտրոնացումը, մինչդեռ երկրի բազմաթիվ մանր քաղաքներ ու գյուղական բնակավայրեր գրեթե մնում են սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտից դուրս: Դրա հետևանքով երկրի մեծ մասում մի կողմից առաջանում են զարգացման մեկ կամ մի քանի բևեռներ, իսկ մյուս կողմից՝ թույլ զարգացած, գյուղատնտեսական ընդարձակ տարածքներ (դաշտեր): Հասկանալի է, որ նման վիճակը խոչընդոտում է երկրի համընդհանուր սոցիալ-տնտեսական զարգացմանը և պատճառ է հանդիսանում փոքր քաղաքների և գյուղերի բնակչության գործազրկության, ցածր կենսամակարդակի, իսկ դրա հետևանքով էլ՝ բնակչության դեպի տվյալ երկրի կամ արտերկրի խոշոր քաղաքներ ուղղված մեծ հոսքի (ներքին գաղթի և արտագաղթի):

Խոշոր քաղաքներում արտադրության չափազանց կենտրոնացման սահմանափակման սկզբունքը ենթադրում է նախ և առաջ խոշոր քաղաքներից դրանց հետ կապ չունեցող, մեծամասամբ գյուղատնտեսական հումք մշակող ձեռնարկությունները այլ փոքր բնակավայրեր տեղափոխելը: Օրինակ՝ երևանում տեղաբաշխված են համակցված կերերի, պահածոների և համանման այլ ձեռնարկություններ, որոնք ճիշտ կլինի տեղափոխել գյուղատնտեսական շրջանների փոքր բնակավայրեր, ինչը կնպաստի վերջիններիս և դրանց շրջապատի գյուղերի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Այդ սկզբունքը ենթադրում է նաև նոր կառուցվող ձեռնարկությունները, ինչպես նաև խոշոր ձեռնարկությունների մասնաճյուղերը գլխավորապես փոքր քաղաքներում տեղաբաշխելը:

Արդյունաբերության խմբային ներդաշնակ զարգացման սկզբունքը ենթադրում է որևէ տարածքում համատեղելի և միմյանց հետ արտադրական-տեխնոլոգիական կապերով միավորված արտադրական ձեռնար-

կությունների խմբի տեղաբաշխումը, օրինակ՝ ածխարդյունահանում, սև մետաղա-ծուլություն, քիմիական արդյունաբերություն, ծանր մեքենաշինություն, ցեմենտի արտադրություն:

Պաշտպանունակության ամրապնդման սկզբունքը ենթադրում է մեծ տարածք ունեցող երկրներում պաշտպանական (ռազմական) նշանակություն արդյունաբերական ձեռնարկությունները հնարավորին չափ երկրի տարածքով մեկ «սփռելը», ապակենտրոնացնելը: Երկրորդ աշխարհամարտում ԽՍՀՄ տնտեսությունը խիստ տուժեց մասամբ այն պատճառով, որ դրա հզորության 80-85% տարածականորեն կենտրոնացված էր եվրոպական մասի ոչ մեծ տարածքում (երկրի տարածքի շուրջ 15%-ի վրա): Պատերազմի տարիներին և դրանից հետո ընկած ժամանակահատվածում պաշտպանական նշանակության ձեռնարկությունները արդեն տեղաբաշխվում էին քննարկվող սկզբունքը հաշվի առնելով, անձայրածիր երկրի բազմազան շրջաններում (Սիբիր, Յեռավոր Արևելք, Միջին Ասիա, Անդրկովկաս):

Համաշխարհային տնտեսության զարգացման պահանջների հաշվառման սկզբունքը ենթադրում է ոչ միայն տնտեսության արտադրական, ճյուղային կառուցվածքային, այլ նաև տարածական տեղաբաշխման փոփոխություններ: Համաշխարհային շուկա արտահանելու համար նախատեսված ապրանքների արտադրությունը նպատակահարմար է տեղաբաշխել երկրի (հատկապես խոշոր տարածք ունեցող) համապատասխան մասերում (շրջաններում):


Արտադրողական ուժերի տեղաբաշխումը ուսումնասիրելու, վերլուծելու և կատարելագործելու (ռացիոնալացնելու) նպատակով բացի օրինաչափություններից և սկզբունքներից հարկավոր է ճանաչել և գնահատել տեղաբաշխման բազմաթիվ և բազմատեսակ գործոնները:

Տեղաբաշխման գործոնները անհավասարանշանակ այնպիսի ռեսուրսների ամբողջությունն է, որոնց օգտագործման ժամանակ դրսևորվում են տեղաբաշխման տվյալ օբյեկտի և տարածքի հարաբերությունները, իսկ դրանք էլ, վերջին հաշվով, որոշում են տեղաբաշխման ընտրված չափանիշների ու առաջադրված նպատակի տեսակետից օբյեկտի օպտիմալ (ռացիոնալ) տեղադիրքը:

Գոյություն չունի տեղաբաշխման այնպիսի օբյեկտ, որի տեղադիրքի ընտրությունը պայմանավորված լինի տեղաբաշխման միայն մեկ գործոնով: Տեղաբաշխման օբյեկտի տեղադիրքի ընտրության վրա ազդում է գործոնների մի ամբողջություն, և նման դեպքում յուրաքանչյուր գործոն կորցնում է իր միարժեքությունը:

Տեղաբաշխման գործոնների դասակարգումը կատարվում է «տնտեսություն-սոցիոլոգիա-էկոլոգիա» երրորդության տեսակետից և առանձնացնում են բնական, տեխնիկական, սոցիալ-ժողովրդագրական, տնտեսական և էկոլոգիական գործոնների խմբեր:

Արտադրողական ուժերի տեղաբաշխման օրինաչափություններ, սկզբունքներ, գործոններ և փաստարկներ հասկացությունների փոխհարաբերությունը (ըստ Է. Բ. Ալաևի)¹



¹ Алаев Э. Б. Социально-экономическая география. Понятийно-терминологический словарь. М., 1983.

Բնական գործոններից են բնական ռեսուրսների քանակական պաշարները և որակական կազմը, դրանց արդյունահանման և օգտագործման լեռնագրական, լեռնաերկրաբանական, կլիմայական, ջրաերկրաբանական և այլ պայմանները:

Սոցիալ-ժողովրդագրական գործոններից են տվյալ տարածաշրջանի ապահովվածությունը աշխատանքային ռեսուրսներով և սոցիալական ենթակառուցվածքի զարգացման վիճակը:

Տեխնիկական գործոններից են տեխնիկայի և տեխնոլոգիայի զարգացման ձեռք բերված (առկա), ինչպես նաև առաջիկա զարգացման հնարավոր մակարդակը:

Գիտատեխնիկական առաջադիմության շնորհիվ ստեղծվում են ավելի բարձր արտադրողական, սակավ հումքատար արտադրություններ, փոխվում են դրանց հատկանիշները, իսկ դրանց հետևանքով էլ նաև տեխնիկական բնույթի տեղաբաշխման գործոնները:

Տնտեսական գործոններից են տարածաշրջանի կամ տեղաբաշխման կոնկրետ կետի տնտեսաաշխարհագրական դիրքը, արտադրության արդյունավետությունը, արտադրանքի նշանակությունն ու որակը, տարածական-տնտեսական կապերը, կապիտալ ծախսերը, շինարարության ժամկետները:

Էկոլոգիական գործոններից են բնական ռեսուրսների խնայողական օգտագործման և բնակչության առողջության ապահովման համար պայմանները:

Պարզեր ինքնաստուգման համար

1. Սահմանել «տեղաբաշխում», «արտադրողական ուժեր» և «արտադրողական ուժերի տեղաբաշխում» հասկացությունները:
2. Ո՞րն է «արտադրողական ուժերի տեղաբաշխման օրինաչափություն» հասկացության էությունը:
3. Հիմնավորել արտադրության եղանակի և արտադրողական ուժերի տեղաբաշխման օրինաչափությունների համապատասխանությունը:
4. Բացահայտել՝ արտադրողական ուժերի տեղաբաշխման առավել ընդհանուր օրինաչափությունների էությունը:
5. Ո՞րն է «արտադրողական ուժերի տեղաբաշխման սկզբունք» հասկացության էությունը:
6. Որո՞նք են արտադրողական ուժերի տեղաբաշխման առավել կարևոր սկզբունքները:
7. Ո՞րն է արտադրողական ուժերի տեղաբաշխման գործոնի էությունը:
8. Բնութագրել արտադրողական ուժերի տեղաբաշխման գործոնները ըստ դասակարգման խմբերի:

1.3 ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ

Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորումը և ձևավորման փուլերը երկրների խմբավորումը

Աշխարհի քաղաքական քարտեզը աշխարհագրական գիտության հատուկ բաժնի Աշխարհի քաղաքական աշխարհագրության ուսումնասիրության առարկան է:

Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորումը երկարատև գործընթաց է, որն արտահայտում է միմյանց հետ տնտեսական, քաղաքական և պատմական փոխկապված օրենքների գործողությունը:

Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման ուսումնասիրությունը ենթադրում է ընդհանրապես աշխարհի պետությունների տնտեսական զարգացման ուսումնասիրությունը, քանի որ ինչպես հայտնի է, քաղաքական վերնաշենքը և դրա գլխավոր բաղադրիչը պետությունը որոշվում են արտադրության եղանակով:

Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորումն ընթանում է քանակական և որակական մշտական փոփոխություններով: Քանակական փոփոխությունները (պետությունների թվի, չափերի մեծությունները) ավելի ակնհայտ են ու հեշտ ընկալելի: Դրանք վերջին հաշվով աշխարհի պետությունների որակական փոփոխությունների դրսևորումն են: Աշխարհի քաղաքական քարտեզի որակական փոփոխություններից են մի տնտեսական հասարակարգի փոխարինումը մյուսով, նախկին գաղութային և կախյալ երկրների պետական անկախության նվաճումը, հեղաշրջումները (հետադիմական կամ առաջադիմական), նոր պետական կառուցվածքի կայացումը:

Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորումը բաժանվում է համաշխարհային պատմության մեջ ընդունված ժամանակաշրջանների. **հի ճ** (մինչև . V դ. կեսերը), **մի ջ ն ա դ ա թ յ ա ն** (V դ. կեսերից մինչև XV դ. վերջը), **ն ո թ** (XV-XVI դդ. սահմանից մինչև 1917 թ.) և **ն ո թ ա գ ու յ ն** (1917 թ. հետո):

Քաղաքական քարտեզի ձևավորման հին ժամանակաշրջանը սկսվում է աշխարհի ոչ մեծ տարածքի վրա առաջին պետությունների առաջացումով, զարգացումով, ինչպես նաև անկումով: Պետությունների միջև հարաբերություններում, տարածքների փոփոխության հասիսր հենց այդ ժամանակաշրջանում առաջին անգամ օգտագործվեցին ուժը, պատերազմները: Առաջին պետություններից առավել մեծ դեր են կատարել Հին Եգիպտոսը, Հին Հունաստանը, Կարթագենը, Հին Հռոմը:

Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման **մի ջ ն ա դ ա թ յ ա ն ժամանակաշրջանը** համընկնում էր ֆեոդալիզմի ժամանակաշրջանին: Ֆեոդալական հասարակարգի ընդերքում արդեն ձևավորվում էր առանձին ներքին շուկա, տնտեսական շահերի ընդհանրություն, հաղթահարվում առանձին շրջանների տնտեսական առանձնացվածությունը:

Այդ ժամանակաշրջանի համեմատաբար կայուն ազգային պետություններն էին Անգլիան, Ֆրանսիան, Իսպանիան, Պորտուգալիան, Ռուսական :

Բացի այդ դեռևս գոյատևում էին տնտեսական ու քաղաքական առումով ոչ կայուն, աստիճանաբար թուլացող Բյուզանդիան, Հռոմեական Կայսրությունը, Կիևյան Ռուսիան:

Այսպիսով միջնադարյան ժամանակաշրջանում պետական-տարածքային կազմակերպվածությունը՝ պետությունների համակարգը, ըստ էության, ձևավորվել էր միայն Եվրոպա աշխարհամասում: Քաղաքական քարտեզի ձևավորման մակարդակով նրանից մի փոքր ետ էր մնում Ասիան, իսկ շատ մեծ չափով մյուս աշխարհամասերը:

Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման նոր ժամանակաշրջանը համընկնում է կապիտալիզմի սաղմնավորման, ապա վերելքի, հաստատման և գերիշխանության դարաշրջանին: Այդ երկարատև ժամանակաշրջանում տեղի են ունեցել տարբեր իրադարձություններ, որոնք էապես ազդել են քաղաքական քարտեզի ձևավորման վրա, ավելի հաճախ, արագացրել են այն: Այդ իրադարձությունների ժամանակահատվածներն անվանվում են **աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման փուլեր**:

Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման նոր ժամանակաշրջանի առաջին փուլը սոցիալ-տնտեսական առումով ընդգրկում է կապիտալի նախնական կուտակման և դրան համապատասխան արտադրական հարաբերությունների ձևավորման նախապատմությունը: XV-XVII դդ. կապիտալիզմի զարգացմանը մեծ չափով խթանեցին աշխարհագրական մեծ հայտնագործությունները: Առաջին փուլում քաղաքական քարտեզի նշանակալի փոփոխություններից էին Եվրոպական պետությունների կողմից Ամերիկայի, Ասիայի, Աֆրիկայի հսկայական տարածքների գաղութացումը և այդ տարածքները քաղաքական-աշխարհագրական գործընթացների մեջ ներգրավելը, Եվրոպայում և Ասիայում պետական տարածքային փոփոխությունները: Օրինակ՝ ձևավորվեց Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը, տարաբաժանվեց Լեհական պետությունը (Ռեչ Պոսպոլիտան), փոքրացավ Շվեդական և, ընդհակառակը, ընդարձակվեց Ռուսական կայսրության տարածքը, ձևավորվեցին Օսմանյան, Մեծ Մոգոլների, Եթովպական, ճապոնական կայսրությունները: Ամենամեծ իրադարձությունը ԱՄՆ-ի ձևավորումն էր, որին վիճակված էր հետագայում աշխարհի առաջատար երկիրը դառնալու առաքելությունը:

Երկրորդ փուլը ընդգրկում է ֆրանսիական բուրժուական հեղափոխությունից ու արդյունաբերական հեղաշրջումից մինչև կապիտալիզմի բարձրագույն փուլի՝ իմպերիալիզմի ժամանակաշրջանը (XVIII դ. վերջից XIX դ. 70-ական թթ.): Կապիտալիզմը կայացավ որպես աշխարհի տիրապետող սոցիալ-տնտեսական համակարգ, ինչն այս փուլում աշխարհի քաղաքական քարտեզի ամենամեծ որակական փոփոխությունն է:

Աշխարհի քաղաքական քարտեզն իր ձևավորման նոր ժամանակաշրջանի երկրորդ փուլում առավել զգալի չափով փոփոխվեց:

Եվրոպայում, մասնավորապես, փոխվեցին Ռուսական, Ֆրանսիական, Պրուսական պետությունների սահմանները, Օսմանյան կայսրությունից անկախացավ Ղուկաստանը, Նիդերլանդներից՝ Բելգիան, կազմավորվեց Ավստրո-Ղուկաստանը:

Մեծ Բրիտանիան իր գաղութային տերությունն ընդարձակեց ի հաշիվ Զնդկաստանի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, Կանադայի և համեմատաբար փոքր այլ տարածքների: Իսպանիայից և Պորտուգալիայից անկախացան Լատինական Ամերիկայի երկրների մեծ մասը:

Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման նոր ժամանակաշրջանի երրորդ փուլը ընդգրկում է XIX դ. 70-ական թվականներից մինչև 1917 թ.՝ Զոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը: Այս փուլում կապիտալիզմը թևակոխեց իր զարգացման բարձր փուլը՝ իմպերիալիզմը: Քաղաքական քարտեզը հենց այս փուլում ստացավ համաշխարհային բնույթ. աշխարհի ամբողջ բնակելի ցամաքը և Զանաշխարհային օվկիանոսի մեծ մասը ենթարկվեց պետական տարածքային բաժանման: Իրագործվեց աշխարհի տարածքային բաժանումը իմպերիալիստական պետությունների միջև և դրա հետևանքով ձևավորվեցին մի շարք գաղութային տերություններ: Դրանցից խոշորագույններն էին Բրիտանական ու Ֆրանսիականը: Այս փուլում ավարտվեց Աֆրիկայի գրեթե ամբողջովին գաղութացումը (1900 թ. գաղութացված էր Աֆրիկայի տարածքի 90%): Աֆրիկայում ձևականորեն անկախ էր մնացել 2 երկիր (Եթովպիան ու Լիբերիան), իսկ Ասիայում՝ 6 երկիր՝ Աֆղանստանը, Պարսկաստանը, Չինաստանը, Նեջդը (Սաուդյան Արաբիայի տարածքում), Թաիլանդը և Թուրքիան: Այս փուլում ավարտվեց նաև Օվկիանիայի վերջնական բաժանումը գաղութատեր պետությունների միջև:

Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման տվյալ փուլի առանձնահատկությունն այն է, որ Եվրոպայից գաղթածներով բնակեցված ու արագորեն զարգացող երկրները ձեռք բերեցին որոշակի աստիճանի քաղաքական ինքնուրույնություն: Դրանք էին Ավստրալիան, Նոր Զելանդիան, Կանադան և Զարավաֆրիկյան Միությունը¹:

Տվյալ փուլի մյուս առանձնահատկությունն այն է, որ աշխարհի տարածքային բաժանումը մի քանի խոշոր գաղութատիրական պետությունների միջև առաջ բերեց հակամարտություն մի կողմից դրանց, իսկ մյուս կողմից կապիտալիստական զարգացման ուղին ավելի ուշ թևակոխած, բայց ավելի կարճ ժամանակահատվածում արագորեն հզորացած երկրների (Գերմանիա, Իտալիա և Ճապոնիա) միջև, որը հանգուցալուծվեց առաջին աշխարհամարտով:

Սակայն Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան ոչ միայն ձեռք չբերեցին նոր գաղութներ, այլ, ընդհակառակը, կորցրեցին ունեցածները: Անտանտայի պետությունների կազմում ֆրանսիայի ու Անգլիայի հետ միասին պատերազմող Ռուսաստանում 1917 թ. հոկտեմբեր ամսին տեղի ունեցած սոցիալիստական հեղափոխության արդյունքում ստեղծվեց աշխարհում առաջին նոր տիպի պետություն: Սա, հավանաբար աշխարհի քաղաքական քարտեզի որակական փոփոխության ամենացայտուն օրինակն է:

Այս իրադարձությունն էլ հենց այն սահմանագիծն է, որից հետո սկսվում է Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման **նորագույն ժամանակաշրջանը**:

Նորագույն ժամանակաշրջանի **առաջին փուլը** նշանավորվեց ԽՍՀՄ-ում, Սոնդոլիայում և Տուվայում² սոցիալիզմի հաղթանակով, ինչպես նաև Եվրոպայում

¹ Այժմյան անվանումն է Զարավաֆրիկյան Զանրապետություն կամ Զարավային Աֆրիկա:
² Դեռագույնում այն մտավ ԽՍՀՄ կազմի մեջ: Այժմ Ռուսաստանի 21 հանրապետություններից մեկն է:

տեղի ունեցած քաղաքական տարածքային մեծ տեղաշարժերով, հատկապես Լվկտոր-հունգարական կայսրության տրոհումով և այլ պետությունների սահմանային փոփոխություններով: 1945 թ. Ֆաշիստական Պերմանիայի ու ճապոնիայի վարտությամբ սկսվեց աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի **երկրորդ փուլը**, որի գլխավոր գիծը սոցիալիստական երկրների ճամբարի ձևավորումն է գերմանական զավթումից ազատագրված եվրոպական, իսկ քիչ ավելի ուշ նաև ասիական պետություններում: 1959 թ. դրանց միացավ նաև Նոր Աշխարհում միակ սոցիալիստական երկիրը Կուբան:

Երկրորդ փուլի մյուս կարևոր առանձնահատկությունը նախկին գաղութային երկրներում անկախացման համար ազգային ազատագրական շարժման վերելքն էր, որի ալիքը սկսվեց 1945թ. Զնդկաչին թերակղզում, 1947 թ. տարածվեց Զնդկաստանում, այնուհետև Արևմտյան Ասիայում, Զյուսիսային Աֆրիկայում, Կենտրոնական Աֆրիկայում և Հարավային Աֆրիկայում: Գաղութային համակարգի անկման ռետևանքով երիտասարդ ազգային պետությունների քանակը զգալիորեն ավելացավ, հասնելով շուրջ հարյուրի: Դրանք այլ կերպ անվանվում են **գարգացող երկրներ, նոր գարգացող երկրներ, նվազ գարգացած երկրներ, Հարավի երկրներ** կամ պարզապես **Հարավ**, կամ էլ երբեմն՝ **«երրորդ աշխարհի երկրներ»**:

Երկրորդ փուլի առանձնահատկություններից է սոցիալիստական և կապիտալիստական երկրների միջև՝ քաղաքական լարվածությունը՝ երկու խոշոր ռազմական միավորումների ՆԱՏՕ-ի ու Վարշավայի պայմանագրի երկրների (ՎՊԵ) կազմակերպության առձակատման վտանգի ու գաղափարական սուր պայքարի, այսպես կոչված «Սառը պատերազմի» պայմաններում:

Վերջապես Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանը XX դարի 80-ական, 90-ական թվականներից թևակոխել է իր վերջին **երրորդ փուլը** սոցիալիստական ճամբարի երկրների տնտեսական ու քաղաքական ճգնաժամի փուլը, որն ընթանում է այդ երկրների սոցիալ-տնտեսական համակարգի փոփոխումով: Այս գործընթացն ուղեկցվում է երկրների հասարակության կյանքի ժողովրդավարացումով, տնտեսության ազատականացումով, համայնական ունեցվածքի մասնավորեցումով և շուկայական հարաբերությունների ըստ նական ունեցվածքի մասնավորեցումով և շուկայական հարաբերությունների ըստ նանայնի գարգացմամբ: Սոցիալիստական ճամբարի ճգնաժամը հանգուցալուծվում էր նաև դրա երկրներում քաղաքական անկախության համար ծավալված պայքարով, որի արդյունքում առաջացան բազմաթիվ անկախ պետություններ:

ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնող 15 պետություններից 12-ը (բացի մերձբալթյան երեք պետություններից) կրկին միավորվեցին Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) մեջ:

ԱՊՀ կազմի մեջ մտնող երկրներին այլ կերպ անվանում են նաև **անցումային** (սոցիալիստական հասարակարգից շուկայականի) **տնտեսության երկրներ**:

Նորագույն ժամանակաշրջանի երրորդ փուլը առանձնահատուկ է նաև նրանով, որ զգալիորեն նվազել է լարվածությունն աշխարհի պետությունների միջև: Լուծարվել է ՎՊԵ կազմակերպությունը: «Սառը պատերազմի» վտանգը ևս զգալիորեն նվազել է: Միջազգային լարվածության թուլացման համար մեծ նշանակություն

ունեցավ գերմանական պետությունների վերամիավորումը: Միջազգային քաղաքական հիմնահարցերի լուծման հիմնական միջոցը դարձել է պետությունների միջև քաղաքական երկխոսությունը: Այնուամենայնիվ ժամանակակից աշխարհում դեռևս կան լուծման սպասող մի շարք հակամարտություններ (օրինակ՝ Չեչնիա, Լեռնային Ղարաբաղ, Աֆղանստան, Կոսովո, Կիպրոս) և այլն:

Դժվար է ասել թե ինչքան շուտ և ինչպես կլուծվեն այդ հակամարտությունները, սակայն անառարկելի է, որ աշխարհի քաղաքական ասպարեզում միշտ տեղի կունենան իրադարձություններ և քաղաքական քարտեզը միշտ էլ կենթարկվի փոփոխությունների (ինչպես մինչև հիմա):

Աշխարհի քաղաքական քարտեզը ենթադրում է ոչ միայն աշխարհի պետությունների տեղաբաշխումն ու սահմանները, այլ նաև հասարակական կյանքի քաղաքական ոլորտն իր ամբողջ բովանդակությամբ: Վերջինիս մասն են կազմում երկրների խմբավորումներն ըստ որոշակի հատկանիշների՝ դասակարգումն ու տիպաբանությունը:

Երկրների դասակարգումն ու տիպաբանությունը հենվում են միևնույն հիմքի երկրների հատկանիշների վրա, վերացականացնում և ընդհանրացնում են այդ հատկանիշների նմանությունները: Դրանով իսկ այդ հասկացությունները ունեն նմանություն, որը և դժվարացնում է դրանց տարբերակումը (տարանջատումը միմյանցից):

Այդ պատճառով էլ շատ դեպքերում դասակարգումն ու տիպաբանությունը նույնացվում և օգտագործվում են միմյանց փոխարեն՝ հենվելով ոչ թե դրանց իմացաբանական հիմքի, այլ մտածողության պատմական ավանդույթների վրա:

Նման սխալները կանխելու նպատակով է. Ալալը այդ երկու խմբավորումը սահմանազատում է երկրների հատկանիշների բնույթի հիման վրա:

Դասակարգումը աշխարհագրական օբյեկտների, տվյալ դեպքում երկրների խմբավորումն է քանակական, իսկ տիպաբանությունը՝ որակական հատկանիշների հիման վրա:

Այստեղից հետևում է, որ երկրների խմբավորումն, օրինակ, ըստ տարածքի մեծության կամ բնակչության թվաքանակի երկրների դասակարգում է, իսկ խմբավորումն ըստ պետական կարգի, կառավարման ձևի, սոցիալ-տնտեսական հասարակարգի և այլ որակական հատկանիշների՝ տիպաբանություն:

Երկրների դասակարգման և տիպաբանության շնորհիվ զգալիորեն փոքրացնում է ուսումնասիրվող օբյեկտների թիվը. ավելի քան 200 պետության փոխարեն ուսումնասիրողները գործ են ունենում ընդհանուր գծեր ունեցող մի քանի խմբերի հետ: Բացի այդ տիպաբանական խմբերի ֆոնի վրա երկրների անհատական գծերն ավելի ցայտուն են երևում: Երկրների տիպերի առանձնացման մյուս նշանակությունն այն է, որ տիպաբանական գծերի առկայությունը վկայում է տվյալ երկրի ընդհանուր օրինաչափությամբ զարգանալու մասին:

Երկրների խմբավորումը կատարվել է տարբեր նպատակներով և ամենաբազմազան հատկանիշների հիման վրա:

Սոցիալիստական երկրների ճամբարի ծաղկման ժամանակաշրջանում աշխարհի երկրների խմբավորման գլխավոր հատկանիշը դրանց հասարակարգի

բնույթն էր: Ներկայումս աշխարհի երկրների բաժանումը կապիտալիստական ու սոցիալիստական երկրների արդեն չունի նախկին նշանակությունը, քանի որ, ըստ էության տիպիկ սոցիալիստական հասարակարգ ունեցող երկրներ չկան: սոցիալիստական հասարակարգի տարրեր դեռևս պահպանվում են Կորեայի ժողովրդագրեմոկրատական Յանրապետությունում և մասամբ, Վիետնամի սոցիալիստական Յանրապետությունում, Կուբայի Յանրապետությունում և մասամբ Չինական ժողովրդական Յանրապետությունում:¹ Այդ պատճառով ՄԱԿ-ն այժմ արդեն աշխարհի երկրները խմբավորում է ըստ զարգացման մակարդակի երկու խոշոր խմբերի մեջ. արդյունաբերականացված (ինդուստրիալ) երկրներ և զարգացող երկրներ: Նախկին սոցիալիստական երկրներն իրենց հերթին տարաբաժանվում են այդ երկու խմբերի միջև: Սակայն առանձին խումբ են կազմում նախկին ԽՍՀՄ կազմից դուրս եկած երկրները, որոնք առանձնացվում են որպես անցումային տնտեսության երկրներ (այս մասին ավելի մանրամասնորեն նշված է «Համաշխարհային տնտեսության աշխարհագրություն» բաժնում):

Ըստ քաղաքական նշանակության երկրները բաժանվում են գլխավոր երկրների: Դրանց թիվն աստիճանաբար մեծանում է: ԱՄՆ-ին, ճապոնիային, Գերմանիային, Ֆրանսիային, Մեծ Բրիտանիային ավելացավ Կանադան, իսկ վերջին տարիներին՝ նաև Ռուսաստանը: Արդարև գլխավոր պետություն է համարվում նաև Չինաստանը իր տնտեսական ու ռազմական արագ աճի շնորհիվ:

Սյուս պետությունները դասվում են որպես նվազ խոշոր երկրներ: Սակայն երկրների ամփոփ զարգացումը բնութագրում են ոչ միայն տնտեսական աճը, այլ ընդհանուր առաջադիմությունը: Այս ըմբռնմամբ էլ այժմ աշխարհի պետությունների խմբավորման հիմքում դրվում է ոչ միայն տնտեսական, այլ հասարակական զարգացման հատկանիշը:

Մասնավորապես լայն գործածության մեջ է դրված *Սարդկային ներուժի զարգացման համաթիվ (ինդեքս)* սինթետիկ ցուցանիշը, որը հաշվարկվում է կյանքի տևողության, գրագիտության մակարդակի և ՀՆԱ-ի շնչաբաժնի ցուցանիշների հիման վրա:

Աշխարհի երկրները դասակարգվում են նաև ըստ տարածաշրջանների (աշխարհի երկրների խմբավորումները ներկայացված են հավելվածում):

Հարցեր ինքնաստուգման համար

1. Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորումը բնութագրել որպես պատմական գործընթաց:

2. Ո՞ր օրենքների գործողության արգասիք է աշխարհի ժամանակակից քաղաքական քարտեզը:

¹ Չինաստանի հողի մասնավորեցման մասին 2004թ. կառավարության որոշումն, ըստ էության, սոցիալիստական հասարակարգից շուկայականի անցման ավարտն է: 30

3. Աշխարհի քաղաքական քարտեզը բնութագրել որպես երկրների քանակական ու որակական փոփոխությունների միասնության արդյունք:

4. Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման գործընթացը ժամանակային ո՞ր միավորների է բաժանվում, և ինչով է հիմնավորվում այդ բաժանումը:

5. Ինչո՞վ է բացատրվում աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման գործընթացի արտակարգ ակտիվացումը դրա նորագույն ժամանակաշրջանի երրորդ փուլում:

6. Տրամաբանական ի՞նչ հիմքի վրա է կատարվում երկրների խմբավորումը:

7. Ի՞նչ նշանակություն ունի երկրների խմբավորումը:

8. Որո՞նք են երկրների խմբավորումների ձևերը և մեթոդական առումով դրանք ինչո՞վ են տարբերվում միմյանցից:

9. Գիտամեթոդական առումով ո՞րն է երկրների խմբավորման ժամանակակից մոտեցման տարբերությունը ավանդական՝ հին մոտեցումից:

1.4 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՐՔ «Աշխարհագրական դիրք» հասկացությունը և տեսակները

Յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացումն ու տարածքային կազմակերպումը գլխավորապես պայմանավորված են ներքին գործոններով՝ տիրապետող արտադրական հարաբերություններով, բնական պայմաններով ու ռեսուրսներով, ինչպես նաև աշխատանքային ռեսուրսներով: Սակայն երկրի տնտեսության զարգացման գործում որոշակի դրական կամ բացասական դեր են կատարում նաև արտաքին գործոնները՝ երկրից դուրս գտնվող այնպիսի օբյեկտները, ինչպիսիք են, օրինակ, հարևան պետությունները, հաղորդակցության կարևոր ուղիները, բնակչության կենտրոնացման արեալները, հանքային հարստությունների շրջանները:

Սակայն ոչ միայն արտաքին միջավայրն է ազդում տվյալ օբյեկտի վրա, այլ տվյալ օբյեկտն էլ իր հերթին է ազդում շրջակա միջավայրի վրա: Այսպիսով հետևում է, որ օբյեկտի և շրջապատող միջավայրի միջև հաստատված հարաբերությունն, ըստ էության, փոխազդեցություն է: Այդ հարաբերությունը պայմանավորված է երկրի երեսին տվյալ օբյեկտի դիրքով՝ աշխարհագրական դիրքով:

Այսպիսով, ինչպես նշել է պրոֆ. Լ. Վալեսյանը. «Աշխարհագրական դիրքը (ԱԴ) ընդհանրապես տվյալ աշխարհագրական օբյեկտի հարաբերությունն է դրանից դուրս գտնվող այլ օբյեկտների հետ: Ավելի ճիշտ՝ օբյեկտի դիրքն է երկրի մակերեսին և այնպիսի այլ օբյեկտների նկատմամբ, որոնց հետ նա գտնվում է փոխազդեցության մեջ»¹:

¹ Լ. Վալեսյան, Հասարակական (սոցիալ-տնտեսական) աշխարհագրության ներածություն, Ե., 1999թ., էջ 112

ԱԴ-ը սոցիալ-տնտեսական աշխարհագրության առավել խորը մշակված հասկացություններից է, աշխարհագրական օբյեկտի կարևոր բնութագրիչներից մեկը:

ԱԴ հասկացության հիմնական գաղափարը **տարածքային հարաբերություններն** են, որոնց բնույթից ելնելով պայմանականորեն առանձնացնում են **ֆիզիկաաշխարհագրական դիրք, տնտեսաաշխարհագրական դիրք (ՏԱԴ), տրանսպորտաաշխարհագրական դիրք, քաղաքաաշխարհագրական դիրք, էկոլոգաաշխարհագրական դիրք, սոցիալ-աշխարհագրական դիրք:**

Ֆիզիկաաշխարհագրական դիրքը օբյեկտի տարածքային հարաբերությունն է երկրագնդի աշխարհագրական կոորդինատներին, բնական զոնաներին, լեռնագրությամբ: **Քաղաքաաշխարհագրական դիրքը** օբյեկտի հարաբերությունն է միջազգային քաղաքական ուժերի «դաշտերին»: **Սոցիալ-աշխարհագրական դիրքը** տվյալ օբյեկտի դիրքն է սոցիալական նշանակության արտաքին օբյեկտների նկատմամբ: **էկոլոգաաշխարհագրական դիրքը** տվյալ օբյեկտի դիրքն է էկոլոգիական նշանակության արտաքին այն օբյեկտների նկատմամբ, որոնք կարող են ազդել ուսումնասիրվող օբյեկտի էկոլոգիական իրադրության վրա: Այդպիսի օբյեկտներ են, օրինակ, էկոլոգիապես «անմաքուր» արտադրությունների խիստ համակենտրոնացման շրջանները, Աէկ-ները: Մասնավորապես այս հանգամանքով է պայմանավորված այն անհանգստությունը, որ ցուցաբերում են ՀՀ հարևաններ Թուրքիան, Ադրբեջանը և Վրաստանը Հայկական Աէկ-ի շահագործումը շարունակելու առթիվ:

ԱԴ-ի ուսումնասիրությունն իր սկզբնական փուլում ունեցել է «կետային» ուղղվածություն, այսինքն այն վերաբերում էր քաղաքների ԱԴ-ին:

Ավելի նոր ուսումնասիրություններին բնորոշ է նաև տարածական ուղղվածությունը, այսինքն քաղաքներից բացի ուսումնասիրվում և գնահատվում է նաև երկրների ու տարածաշրջանների ԱԴ-ը: Դրա համար պահանջվում է վերլուծել ու համադրել տարածական աշխարհագրական օբյեկտի ու դրա շրջակա տարածքի միջև գոյություն ունեցող ավելի լայն դիապազոնի փոխադարձ կապեր:

ԱԴ-ի մասին ուսմունքի ձևավորման ու զարգացման գործում առանձնապես մեծ է Ն. Բարանսկու, Ի. Մաերգոյզի, Ն. Միրոնենկոյի գիտական ներդրումը: Նրանց գիտական գաղափարների ազդեցությունն զգացվում է ԱԴ-ին վերաբերող ցանկացած նշանավոր աշխատությունում:

ՏԱԴ-ը աշխարհագրական օբյեկտների (ձեռնարկությունների, բնակավայրերի, արեալների, շրջանների, առանձին երկրների ու երկրների խմբերի) և դրանց զարգացման համար տնտեսական նշանակություն ունեցող արտաքին օբյեկտների հարաբերությունների ամբողջությունն է:

ԱԴ-ի այս սահմանումը համարվում է առավել ամբողջական և սպառիչ, թեկուզ և այն գիտական անեն մի սահմանման նման ունի պայմանականության մեծ բաժին¹: Պայմանականությունն արտահայտվում է այն հանգամանքով, որ ՏԱԴ-ի առանձին հատկանիշներ որոշ առումով նաև քաղաքաաշխարհագրական ու

տրանսպորտաաշխարհագրական դիրքերի հատկանիշներ են¹: Ուստի այս հանգամանքով է բացատրվում ԱԴ-ի նշված երեք տարատեսակների շատ հաճախ միասնաբար հանդես գալը:

Աշխարհագրական օբյեկտի զարգացման վրա ՏԱԴ-ի ազդեցության արդյունքի գնահատումը մեթոդական առումով շատ դժվար լուծվող, իսկ երբեմն էլ նույնիսկ անլուծելի խնդիր է, քանի որ, ա) օբյեկտի զարգացումը ոչ միայն ՏԱԴ-ի, այլ ԱԴ-ի այլ տարատեսակների միագումարային արդյունք է, բ) ԱԴ-ը ընդամենը զարգացման նախադրյալ է և ոչ թե աշխարհագրական օբյեկտի ու նրա շրջակայսի միջև գոյություն ունեցող կապ:

Այդուհանդերձ աշխարհագրական դիրքի ծավալում և համալիր բնույթի բարդ հասկացությունը հաճախ օգտագործվում է առանց մասերի տարաբաժանելու, որի հետևանքով դժվարանում է դրա ինչպես տեսական, այնպես էլ գործնական նպատակներով օգտագործումը:

Ինչպես նշում է Միրոնենկոն. «Մինչև ԱԴ-ի մասնատելն ու խորը վերլուծելը հիմնավորված չի կարելի համարել այնպիսի ոչ հստակ բացատրություն ունեցող հասկացությունների օգտագործումը, ինչպիսիք են, օրինակ, «հարմար դիրք», «շահեկան դիրք», «նպաստավոր դիրք»»²:

ԱԴ-ը կարելի է մասնատել ըստ տարբեր բնույթի բաղադրիչների: Ամենազխափորը աշխարհագրական օբյեկտի և դրա շրջակայսի միջև հաստատված **տարածքային հարաբերությունների բնույթն է:** Ներկայումս դեռևս բավարար խորությամբ ուսումնասիրված են քաղաքների ու դրանց շրջակայսի միջև հաստատված տարածքային հարաբերությունները: Դրանք երեքն են. **առաջնային, ածանցյալ և ինտեգրալ:**

Առաջնային տարածքային հարաբերությունները քաղաքների ու արտադրական տարրերի և արեալների միջև գոյություն ունեցող հարաբերություններն են: Դրանցից են.

ա) արդյունաբերա- աշխարհագրական դիրքը օբյեկտի դիրքն է էներգիայի աղբյուրների, հիմնական հումքի և նյութերի (օրինակ, մետաղների, փայտանյութի) աղբյուրների և մշակող արդյունաբերության ձեռնարկությունների խոշոր կուտակումների նկատմամբ.

բ) գյուղատնտեսաաշխարհագրական դիրքը օբյեկտի դիրքն է պարենային և գյուղատնտեսական հումքի բազաների նկատմամբ.

գ) տրանսպորտաաշխարհագրական դիրքը օբյեկտի դիրքն է ծովային հիմնական ուղիների, տրանսպորտային այլ մայրուղիների և տրանսպորտային հանգույցների նկատմամբ.

դ) իրացման-աշխարհագրական դիրքը օբյեկտի դիրքն է արտադրական և սպառողական նշանակության ապրանքների վաճառահանման շուկաների նկատմամբ.

¹ **Լ. Վալեսյան**, Հասարակական (սոցիալ-տնտեսական) աշխարհագրության ներածություն. Ե., 1999թ.

¹ Մեջբերված ստեղծագործությունը:

² **Мироненко Н.** Страноведение. Теория и методы. М., 2001.

ե) ժողովրդագրաաշխարհագրական դիրքը օբյեկտի դիրքն է աշխատանքային ռեսուրսների ու գիտատեխնիկական կադրերի կուտակման շրջանների նկատմամբ:

ՏԱԴ-ի տեսակների մյուս խումբն առանձնանում է ըստ արեալների հետ ուսումնասիրվող օբյեկտի ունեցած հարաբերությունների: Դրանցից են **ներարեալային, կենտրոնական, արտակենտրոն (էքսցենտրիկ), ծայրամասային, խորքային և միջարեալային**: Օբյեկտի այսպիսի դիրքերը պետք է գնահատվեն ոչ միայն վերացականորեն՝ հաշվի առնելով արեալի երկրաչափական համամասնությունները, այլ նաև բովանդակային առումով՝ հաշվի առնելով ֆիզիկաաշխարհագրական և սոցիալական տարածքի եությունը:

Առավել խորը ուսումնասիրված է քաղաքների աշխարհագրական կենտրոնական դիրքը, այն համարելով որպես երկրի տնտեսական շրջանների մակարդակների համահարթեցման կարևոր միջոց (այս մասին նշված է «Ռուբանիզացիա» թեմայում):

Տարածքային ածանցյալ բնույթի հարաբերությունները հենվում են առաջնային հարաբերությունների վրա և իրականացնում են դրանք:

Տարածքային ածանցյալ հարաբերություններն արտահայտում են օբյեկտների դիրքը ժողովրդատնտեսական ամբողջ համալիրի մատակարարման բաշխման գծերի ու կիզակետերի նկատմամբ: Դրանցից են՝ օբյեկտի դիրքը՝

ա) բեռնահոսքերի նկատմամբ՝

բ) ուղևորահոսքերի նկատմամբ

գ) տրանսպորտային կիզակետերի՝ խոշոր տրանսպորտային հանգույցների նկատմամբ:

դ) միմյանց նկատմամբ (փոխադարձ դիրքը):

Տարածքային ինտեգրալային հարաբերություններն արտահայտում են քաղաքի հարաբերություն տարբեր մասշտաբի տարածքներին (հաշվի առնելով դրանց հետ կապերի ինտենսիվությունը): Սրանք, պատկերավոր ասած, հարաբերությունների հարաբերություններ են, քանի որ սինթեզում են ԱԴ բոլոր տեսակները:

Առանձնացնում են աշխարհագրական օբյեկտի միկրոդիրք, մեզոդիրք, մակրոդիրք և գերմակրոդիրք:

Քաղաքի միկրոդիրքը նրա դիրքն է անմիջականորեն իր հետ շփվող մեկուսի շրջապատի նկատմամբ: Քաղաքի մեզոդիրքը նրա դիրքն է համեմատաբար խոշոր շրջանի՝ երկրի, տարածաշրջանի նկատմամբ: Քաղաքի մակրոդիրքը նրա կենտրոնական դիրքն է շատ խոշոր տնտեսական տարածքի նկատմամբ: Քաղաքի գերմակրոդիրքը նրա դիրքն է տնտեսական տարածաշրջանների, պետությունների ու մայրցամաքների նկատմամբ:

Այսպիսով «աշխարհագրական դիրք» հասկացության մեթոդաբանական հիմքը տարբեր բնույթի «հարաբերություններ» հասկացությունն է:

Հարաբերությունների առկայությունն այն որոշիչն է, որը ցույց է տալիս, թե տվյալ օբյեկտի տեղաբաշխումը աշխարհագրական գիտության որ հասկացությանն է համապատասխանում:

Այսպես, օբյեկտի տեղաբաշխման տեղի, դրա աշխարհագրական հասցեի պարզ բնութագիրը կոչվում է «տեղադիրք (լոկացիա)», իսկ եթե այդ բնութագիրը լրացվում է շրջակա միջավայրի հետ օբյեկտի ունեցած հարաբերությունների ցուցումով, ապա այդ հասկացությունն արդեն «աշխարհագրական դիրք» է¹:

Տեղադիրքը ցույց է տալիս աշխարհագրական օբյեկտի տեղայնացումն ու պատկանելիությունը և հետևաբար պատասխանում է «որտե՞ղ է տեղաբաշխված օբյեկտը և ինչի՞ մաս է կազմում» հարցերին, իսկ աշխարհագրական դիրքը պատասխանում է «ինչի՞ նկատմամբ է տեղաբաշխված և դրա հետ ինչպիսի՞ հարաբերություններ ունի» հարցերին:

ԱԴ-ի երկրորդ հատկությունը **պոտենցիալությունն է**, որը շրջանի զարգացման, աշխատանքի տարածքային բաժանման, կապերի զարգացման գործոն է, նախադրյալ և, եթե հակադիր կողմից դիտվի, նաև հետևանք: Այս հատկությունները նկատի ունենալով՝ որոշ գիտնականներ պոտենցիալությունը դիտում են որպես տարածքի զարգացման յուրահատուկ ռեսուրս² կամ էլ հնարավորություն³: ՏԱԴ-ի օգուտների հնուտ օգտագործումը կարող է դառնալ երկրի կամ տարածաշրջանի տնտեսական զարգացման կարևոր գործոն: Այս առումով հիշենք Ճապոնիայի ու Սինգապուրի օրինակները, ընդ որում Սինգապուր քաղաք-պետության զարգացումը կարելի է դիտել և՛ որպես երկրի, և՛ որպես քաղաքի ՏԱԴ-ի պոտենցիալի օգտագործման օրինակներ:

Կան նաև այնպիսի օրինակներ, երբ համաաշխարհային տնտեսական կենտրոնների, զարգացման «առանցքների», կարևորագույն տրանսպորտային ուղիների տարածական փոփոխման հետևանքով փոփոխվել է տվյալ երկրի կամ քաղաքի ՏԱԴ-ը: Մասնավորապես ճենովա և Վենետիկ քաղաքների և Հնդկաստանի միջև հաստատված աշխույժ առևտրական ուղու վրա (որն անցնում էր նաև Պատմական Հայաստանի վրայով) Օսմանյան կայսրության կազմավորվելը արգելակի դեր կատարեց այդ առևտրի համար: Դրա հետևանքով վերոհիշյալ քաղաքները (ինչպես նաև այդ ուղու վրա գտնվող այլ քաղաքներ) իրենց նպաստավոր ՏԱԴ-ը զիջեցին նոր հայտնաբերված ծովային ուղիների նկատմամբ ավելի հարմար դիրքում՝ ավելի արևմուտքում գտնվող երկրների (Իսպանիա, Պորտուգալիա, Հոլանդիա և այլն) քաղաքներին:

Այսպիսով, ՏԱԴ-ը **պատմական**՝ անցողիկ հարաբերություն է:

ԱԴ-ի երրորդ հատկանիշը **հեռավորության** հատկանիշն է, աշխարհագրական գիտության կարևորագույն հատկանիշներից մեկը: Հեռավորությունն ուսումնասիրվում է տարբեր չափումներով՝ ուղիղ գծով, իրական և տնտեսական (հեռավորու-

¹ **Алаев Э.** Социально-экономическая география. Понятийно-терминологический словарь, М., 1983г.

² Կ. Կոսմաչով, **Մ. Բանդման**

³ **Լ. Վալեսյան**

Կարևորագույն բեռնահոսքերի և ուղևորահոսքերի բնութագիրը տրված է «Տրանսպորտ» թեմայում:

թյունը հաղթահարելու համար պահանջվող ժամանակով, էներգետիկ ծախսումներով կամ դրամական արժեքով):

Ամփոփելով կարելի է նկատել, որ ԱԴ-ի գնահատումը շատ բարդ խնդիր է, և նրա գնահատումը մի կողմից գիտական առումով չի կարելի համարել առանց նրա տարանջատման (բավարարվելով «նպաստավոր», «հարմար», «անհարմար» և այլ նման գնահատականներով): Մյուս կողմից, հարաբերությունների հատկությունների հիման վրա ԱԴ-ի տարանջատումը մի շարք տեսակների ու ենթատեսակների բարդացնում է դրանց սինթեզումը վերջնական գնահատականի որոշման համար: Դրա համար կան որոշ սնտեցումներ. արժեքային, տրամաբանական, պոտենցիալների. տոպոլոգիական:

Արժեքային գնահատման ելությունը վերարտադրության ամբողջ ծախսերի մեջ միայն ՏԱԴ-ի հետ կապված ծախսերի առանձնացումն է:

Տրամաբանական վերլուծությունը հենվում է ԱԴ-ի տեսակների ու ենթատեսակների համադրման (սինթեզավորման) վրա: Այս մոտեցմամբ, օրինակ, Ն. Բարանսկին խորհուրդ տվեց Վոլգոգրադը ընտրել որպես տրակտորաշինական նոր գործարանի կառուցման վայր: Նա վերը նշված քաղաքի ԱԴ-ը գնահատել է հետևյալ նկատառումների համադրումով. քաղաքը գտնվում է. ա) հացահատիկային գոտում, բ) հարթավայրային գոտում, գ) տափաստանային գոտում, դ) Վոլգա գետով նրա ավազանում գոյություն ունի մետաղի քարոյնի հավաքման ու ծուլման կազմակերպման հնարավորություն, ե) գոյություն ունի Վոլգա գետով այլ նյութերի բերման և տրակտորները սպառողներին հասցնելու հնարավորություն գ) Վոլգոգրադը Վոլգա գետի այն մասում է, որն ավելի մոտ է Դոնբասին՝ որակյալ պողպատ մատակարարող խոշոր շրջանին:

ԱԴ գնահատման համար պոտենցիալների մեթոդն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ կա երկու օբյեկտների միջև հարաբերությունների հավանականություն: Ընդ որում, որքան մեծ են այդ օբյեկտները, այնքան մեծ է դրանց փոխադեցությունը և ընդհակառակը, որքան հեռու են գտնվում այդ օբյեկտները, այնքան թուլանում է դրանց փոխադեցությունը:

Այսպիսով, ԱԴ -ի տեսակների բազմազանության, ինչպես նաև դրանց փոփոխականության պատճառներով ԱԴ-ի գնահատումը, հակառակ թվացող դյուրինությանը, բավականին բարդ խնդիր է:

Այդ բարդությունն ակնհայտորեն զգացվում է ՀՀ ԱԴ-ի նույնիսկ ակնարկային՝ ոչ խորը ուսումնասիրության շնորհիվ: Անտիկ և միջնադարյան ժամանակաշրջանում Հայաստանի աշխարհագրական դիրքն աշխարհում չափազանց կարևոր էր. քանի որ Հայաստանը կենտրոնական կամ միջանկյալ դիրքում էր Պարսկաստանի, Ասորեստանի, Հունաստանի և այլ երկրների միջև, ինչպես նաև նրա վրայով էին ձգվում այն ժամանակվա միջազգային աշխույժ առևտրական ուղիները, հատկապես «մետաքսի ճանապարհ»:

Ցարական Ռուսաստանի, իսկ հետագայում Խորհրդային Միության կազմում եղած ժամանակաշրջանում ՀՀ ԱԴ-ի կարգավիճակը ցածրացավ՝ դառնալով ծայրամասային: Ներկայումս անկախության պայմաններում ՀՀ ԱԴ-ը կրկին ծեռք է բերել

մեծ կարևորություն: Սահմանակից պետությունների՝ Թուրքիայի, Իրանի, Ադրբեջանի ու Վրաստանի նկատմամբ ՀՀ դիրքը կենտրոնական է: Հեռավորության առումով ՀՀ բավական մոտ է գտնվում աշխարհի նավթային խոշորագույն շրջաններին՝ ռազմական ու տնտեսական մեծ հետաքրքրության շրջանին: Չնայած որ քաղաքական ու տնտեսական զարգացման գործընթացների արդյունքում ՀՀ աշխարհագրական դիրքը վերջին 15 տարում զգալիորեն վատացել է, բայց այն պահպանում է հետագայում բարելավվելու իր մեծ պոտենցիալը: Վերջինս կապվում է համաաշխարհային զլոբալացման ենթատեքստում իրականացվող երկաթուղիների, նավթամուղերի ու գազամուղերի շինարարության մի շարք նախագծերի հետ:

ՀՀ ԱԴ-ի բարելավման մյուս նախադրյալը նրա գիտատեխնիկական մեծ ներուժն է, որի շնորհիվ ՀՀ կարող է դառնալ իր մերձակա տարածաշրջանի կենտրոնը:

Հարցեր ինքնքստուգման համար

1. Հիմնավորել «հարաբերություն» հասկացությունը որպես «աշխարհագրական դիրք» հասկացության մեթոդոլոգիական հիմք:
2. Որո՞նք են աշխարհագրական դիրքի տարատեսակները:
3. Բացատրել «աշխարհագրական դիրք» և «տեղադիրք» հասկացությունների տարբերությունը:
4. Բնութագրել աշխարհագրական դիրք հասկացության երեք անբաժանելի հատկությունները:
5. Քաղաքների օրինակով բնութագրեք աշխարհագրական դիրքի դասակարգման սկզբունքները:
6. Հիմնավորեք, որ տնտեսաաշխարհագրական դիրքը պատմական կատեգորիա է:

ԳԼՈՒԽ 2

ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

2.1 ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏ

Հայտնի է, որ բնությունը մարդկության կյանքի ու գործունեության մշտական ահրաժեշտ պայմանն է, բազմազան նյութերի գանձարանն ու բնակչության մշակութային, գեղագիտական ու հանգստի (ռեկրեացիոն) պահանջումներին բավարարման աղբյուրը: Բնությունը միաժամանակ նաև այն օբյեկտն է, որի վրա ներգործում է հասարակությունը: Հասարակության ու բնության փոխներգործունեության հետևանքով բնական միջավայրի փոփոխությունն, ըստ էության, մարդկային հասարակության զարգացման բովանդակությունն է:

Հասարակության զարգացման գործընթացը կառավարելու, ինչպես նաև տարածքային կազմակերպումը ռացիոնալացնելու նպատակով ներկայումս գործնական խիստ ահրաժեշտություն է առաջացել հետազոտել և վերլուծել հասարակական արտադրության զարգացման ու տեղաբաշխման վրա բնական գործոնների առանձնահատուկ ազդեցությունը, ընդսմին, ոչ միայն տնտեսական¹, այլ նաև սոցիալական ու էկոլոգիական տարածաշրջանային ասպեկտներով:

Ահրաժեշտ է հասարակության զարգացման այսօրվա պահանջների դիրքերից ավելի խորությամբ ուսումնասիրել նաև հասարակության ներգործության օբյեկտի բնական միջավայրի վիճակը և այդ ուսումնասիրության հիման վրա բացահայտել կոնկրետ տարածաշրջանի զարգացման վրա տվյալ փուլում ազդող գործոնների դերը, որոշել տվյալ ժամանակաշրջանում, (ինչպես նաև տեսանելի ապագայում) գլխավոր գործոնները: Վերջիններս, ինչպես հայտնի է, հասարակության տարածքային կազմակերպման գլխավոր լծակներն են:

Վերջին ժամանակներում բնապահպանական (էկոլոգիական) գործոնի դերի պատշաճ գնահատման արդյունքում էապես փոփոխվել է տնտեսաաշխարհագրական հետազոտության մոտեցումը: Նախկինում, տնտեսաաշխարհագրական հետազոտություններում գրեթե բացառապես ուսումնասիրվում էին բնության տարածքային տարբերությունների ազդեցությունը տնտեսության զարգացման, կառուցվածքի, մասնագիտացման, տեղաբաշխման տարածական ձևերի ու բնակչության կյանքի պայմանների վրա, այսինքն **բացահայտվում էր բնական գործոնի դերը հասարակության կյանքում ու տնտեսական գործունեության մեջ:**

Տնտեսաաշխարհագրական նորագույն հետազոտություններում, արդեն, տիրապետում է մեկ այլ, նոր ուղղություն. գլխավորապես ուսումնասիրվում է տնտեսական գործունեության տեղաբաշխման ու բնակչության տարաբնակեցման ազդեցությունը բնական միջավայրի ու ռեսուրսների վիճակի վրա, **բացահայտվում է տնտեսության զարգացման, ճյուղային ու տարածական կառուցվածքի,**

¹ Սինչև վերջին 3-4 տասնամյակները ուսումնասիրությունները կատարվել են հիմնականում տնտեսական ասպեկտով:

տարածքի յուրացման ու օգտագործման բնույթի դերը բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, շրջակա միջավայրի որակի պահպանման գործում:

Սիայն բնության և հասարակության փոխներգործության ուսումնասիրության վերը նշված երկու մոտեցումների (ուղղությունների) զուգակցման շնորհիվ է հնարավոր բնական պայմանների ու ռեսուրսների, բնության վրա տնտեսության ներգործության արդյունքների գնահատումը, մարդու և բնության փոխներգործության սպասվող հետևանքների կանխատեսումը և այդ փոխներգործության օպտիմալացման ուղիների որոշումը:

2.2 Բնական պայմանների ու բնական ռեսուրսների տնտեսական գնահատումը

Տնտեսության զարգացման կարևոր նախադրյալի՝ բնական պայմանների ու բնական ռեսուրսների ճանաչելը, առավել ևս գնահատելը, հույժ ահրաժեշտ պայման է նախագծումների, պլանավորման և, ընդհանուր առմամբ, տնտեսության կառավարման համար: Ընդսմին, այս նպատակների համար կարևոր են բնական պայմանների ու ռեսուրսների ոչ միայն քանակական ու որակական բնութագիրը, այլև տնտեսական գնահատումը (արժեքային արտահայտությունը): Տնտեսական գնահատումը մեթոդական առումով բարդ է այն պատճառով, որ բնական ռեսուրսներն ու բնական պայմաններն ի սկզբանե չունեն արժեք, դրանք բնության յուրատեսակ բնական պայմաններն ի սկզբանե չունեն արժեք, դրանք բնության յուրատեսակ «ընծաներն են», քանի դեռ դրանց վրա չի ներդրված աշխատանք: Բնական ռեսուրսների տնտեսական գնահատման խոշոր մասնագետ, ակադեմիկոս Ս. Ստրումիլինը նշել է, որ «հանածո հարստությունները ծրի են մնում մինչև այն պահը, քանի դեռ դրանց մասին մենք ոչինչ չգիտենք: Սակայն առաջին որոնողական հետախուզությունը... արդեն առաջին աշխատանքային ներդրումն է դրանց հասարակական արժեքի մեջ¹»:

Հանքային ռեսուրսների որոնման, հետախուզման և շահագործման նախապատրաստելու, հողերի բարելավման և կրկնամշակման (ռեկուլտիվացիայի), անտառապահպանման և նման այլ աշխատանքների ծախսերի մասշտաբները հիմք են ծառայում այս կամ այն ռեսուրսի արժեքը որոշելու համար:

Ռեսուրսների տնտեսական գնահատումը կատարվում է նաև այլ մեթոդով՝ ելնելով դրանց դիֆերենցիալ ռենտայի² մեծությունների տարբերություններից, որոնք առաջանում են ռեսուրսների տարբեր աղբյուրներ օգտագործելիս և արտահայտում են դրանց ծավալի, որակի և տեղադիրքի տարբերությունները: Դրանք հաշվի առնելով կարելի է որոշել, թե բնական ռեսուրսների որ աղբյուրների

¹ Струмилин С. Г. О цене "даровых благ" природы, Вопросы экономики, 1967, N 8, стр. 69.

² Տարբերակային ռենտան արտահայտվում է տվյալ ռեսուրսային աղբյուրից ստացած միավոր արտադրանքի վրա կատարված փաստացի ծախսերի ու հասարակայնորեն ահրաժեշտ ծախսերի տարբերությամբ:

օգտագործումն է ավելի արդյունավետ (երկրի տնտեսության տեսակետից) և, հետևաբար, որի օգտագործումը կարելի է համարել առաջնահերթ:

Բնական ռեսուրսների տնտեսական գնահատման մյուս մեթոդը ելնում է այդ ռեսուրսի աղբյուրի վատթարացման կամ սպառման դեպքում դրանց վերարտադրության կամ փոխհատուցման համար անհրաժեշտ ծախսերի մեծությունից:

Տնտեսական աշխարհագրության մեջ աստիճանաբար ճանաչում է ստանում բնական ռեսուրսների տնտեսական գնահատման այն մոտեցումը (մեթոդը), որի հիմքում ընկած է աշխատանքի արտադրողականության վրա ռեսուրսների և դրանց աղբյուրների հատկությունների աշխարհագրական տարբերությունների ազդեցության հաշվառումը: Այլ կերպ ասած վերջին մոտեցման չափանիշը ռեսուրսի (կամ ռեսուրսների զուգակցման) այս կամ այն աղբյուրի օգտագործման տնտեսական արդյունավետությունն է, որն արտահայտվում է կենդանի և նյութականացված ծախսերի մեծությամբ:

Բնական պայմանները բնության տարրեր և ուժեր են, որոնք արտադրողական ուժերի զարգացման տվյալ մակարդակում էական նշանակություն ունեն մարդկային հասարակության կյանքի ու տնտեսական գործունեության համար, սակայն, ի տարբերություն բնական ռեսուրսների, մարդու կողմից անմիջականորեն մասնակից չեն դարձվում նրա նյութական- արտադրական ու ոչ արտադրական գործունեությանը:

Բնական պայմանների սահմանումը և բնական ռեսուրսներից դրանց առանձնացումը բարդ է, որի պատճառով էլ որոշ գիտնականներ **բնական ռեսուրսներ** հասկացության մեջ ներառում են նաև **բնական պայմանները**:

Մասնավորապես, բնական ռեսուրսների ու պայմանների սահմանագատումը դժվար ու մեթոդաբանական առումով բավականին բարդ է այն պատճառով, որ բնական միջավայրի միևնույն բաղադրատարր (օրինակ՝ ջուրը, անտառը, արեգակնային էներգիան) մի դեպքում կարող է հանդիսանալ արտադրության մեջ կամ էլ ոչ արտադրական ոլորտում օգտագործվող **բնական ռեսուրս**, իսկ մեկ այլ պարագայում՝ որպես **բնական պայման**:

Օրինակ՝ ջուրը և անտառը (փայտանյութը) արդյունաբերության համար ծառայում են որպես բնական ռեսուրս, իսկ ջրային տրանսպորտի կամ հանգստի կազմակերպման համար դրանք բնական պայմաններ են, քանի որ այդ բնագավառներում դրանցից օգտվում են առանց բնությունից օտարելու (կորզելու):

Բնական պայմաններ հասկացությունը մշտապես կապված է մարդու տնտեսական այս կամ այն գործունեության (գյուղատնտեսության, տրանսպորտի, հանգստի կազմակերպման) հետ:

Տարբեր բնական պայմանների ազդեցությունը մարդու տնտեսական գործունեության կոնկրետ մյուզերի վրա և կոնկրետ իրադրություններում խիստ փոփոխական է:

Բնական պայմանները կարող են արագացնել կամ դանդաղեցնել տնտեսության զարգացման տեմպերը, նպաստել գործունեության այս կամ այն տեսակի ձևավորմանը կամ խոչընդոտել դրանց զարգացմանը:

Բնական պայմանների ազդեցությունը հատկապես մեծ է գյուղատնտեսության ու տրանսպորտի առանձին տեսակների վրա: Տարածքի գյուղատնտեսական արտադրության մասնագիտացումն ու արդյունավետությունը մեծ չափով որոշվում են ազրոկլիմայական պայմաններով (տես «Աշխարհի գյուղատնտեսությունը» թեման):

Կլիմայական պայմանները մեծ ազդեցություն են թողնում օդային ու ջրային տրանսպորտի վրա և, համեմատաբար փոքր ազդեցություն ավտոմոբիլային, իսկ ամենափոքր էլեկտրոնային և խողովակաշարային տրանսպորտի վրա: Այսպես, օրինակ, Յեռավորարևելյան և Արևելասիբիրական շրջաններում, հողի բազմամյա սառածության պայմաններում անհնարին է նավթամուղների շահագործումը, քանի որ շփման հետևանքով տաքացած խողովակաշարը հալեցնում է ստորադիր գրունտը և տեղ-տեղ խորանալով դրա մեջ կտրատվում է: Այդ բոլորը կանխելու համար անհրաժեշտ է նավթամուղը կառուցել բազմաթիվ բետոնյա հենակների վրա, որի հետևանքով նավթի փոխադրման ինքնարժեքը կգերազանցի երկաթուղային տրանսպորտով փոխադրմանը: Մեծ բացասական ազդեցություն ունեն նաև լեռնային ռելիեֆը, ճահիճները և այլն: Բնական պայմաններն ազդում են նաև արդյունաբերության, կոմունալ տնտեսության (ջրամատակարարման, ջեռուցման) վրա:

Բնական պայմաններից տնտեսական գործունեության վրա մեծ ազդեցություն ունի տարածքի երկրաբանական կառուցվածքը և դրա հետ անմիջականորեն կապված սեյսմիկությունը: Բավական է նշել, որ 8 բալանոց ուժգնության երկրաշարժին դիմացող շենքի դիմացկունությունը ևս 1 բալով բարձրացնելու համար անհրաժեշտ է երկաթբետոնի քանակն ավելացնել ոչ թե 1/8 -ով, այլ 1.5 անգամ:

Բնական պայմաններից կարևոր նշանակություն ունեն նաև տարածքի չափը (մեծությունը), ջրագրական ցանցը, ուղղաձիգ գոտիականությունը, աշխարհագրական դիրքը:

Տարբեր գիտնականներ, բնական ռեսուրսների ձևակերպման որոշ տարբերություններով հանդերձ, եզրահանգել են հետևյալ ընդհանրությանը, **բնական ռեսուրսները բնական մարմիններ, նյութեր և ուժեր (կամ դրանց համախմբությունը), ինչպես նաև էներգիայի տեսակներն են, որոնք արտադրողական ուժերի զարգացման կոնկրետ փուլում օգտագործվում են կամ տեխնիկապես կարող են օգտագործվել մարդկային հասարակության բազմազան պահանջներն արդյունավետ բավարարելու համար**:

Բնական ռեսուրսները մյուս նյութական ռեսուրսներից տարբերվում են մի շարք հատկանիշներով, որոնցից գլխավորներն են հետևյալները.

1. Բնական ռեսուրսների որոշ կարևոր տեսակներ հատկություն ունեն, հայտնի սահմաններում և որոշակի պայմաններում, ինքնավերարտադրելու (ինքնակարգավորելու) իրենց քանակը և որակական վիճակը (օրինակ՝ անտառը, կենդանիների գլխաքանակը):

2. Բնական էվոյուցիայի հետևանքով և մարդու ներգործության ազդեցության տակ բնական ռեսուրսները մեկ որակական վիճակից կարող են անցնել մեկ այլ վիճակի (օրինակ սավաննան Սահելի գոտում վերափոխվում է կիսաանապատի կամ անապատի):

3. Բնական ռեսուրսների կոնկրետ վիճակը և գնահատականը կապված են մարդու կենսագործունեության պայմանների հետ: Բնական ռեսուրսների կոնկրետ վիճակը կախված է մարդկանց արտադրական և ոչ արտադրական գործունեության տեխնոլոգիական եղանակից, բնույթից, ինտենսիվությունից:

2.3 Տարածքի բնական (բնառեսուրսային) պոտենցիալը

Բնական ռեսուրսների առանձին տեսակների գնահատումը մասնավոր գիտական առարկաների գործունեության բնագավառն է (ագրոհողագիտություն, ջրաբանություն, երկրաբանություն և տնտեսական երկրաբանություն, երկրածախաբանություն (գեոմորֆոլոգիա) և այլն) սակայն դրանցից ոչ մեկը չի կարող տալ բնական ռեսուրսների և պայմանների համալիր ամբողջական գնահատականը՝ առանց դուրս գալու իր կոմպլեքսային շրջանակներից: Այդպիսի գնահատականը կարող է տալ միայն համալիր բնույթ ունեցող կառուցողական աշխարհագրությունը՝ իր քանակական գնահատականների համակարգի օգնությամբ:

Այս կամ այն բնական ռեսուրսի յուրաքանչյուր քանակական գնահատականն ինչպես նշում է Յու. Դմիտրևսկին, ըստ էության, **բնական (բնառեսուրսային) պոտենցիալի** որոշման գործընթաց է¹:

Տարածքի բնական պոտենցիալը բնական ռեսուրսների (և դրանց հետևանքաբանելիորեն կապված բնական պայմանների) միագումարն է:

Տարածքի բնական պոտենցիալի մեծությունն այդ ռեսուրսների միագումարության քանակական արտահայտությունն է, ուստի այդ մեծության որոշելը պետք է սկսել այս կամ այն **բնական ռեսուրսի մասնավոր պոտենցիալների** օրինակ՝ հողի, ջրային, կլիմայական) որոշումից: Ընդ որում որքան մեծ թվով մասնավոր ռեսուրսային պոտենցիալներ են հաշվի առնվում բնական ընդհանուր ռեսուրսային պոտենցիալը որոշելիս, այնքան վերջինիս գնահատականով ավելի ճշգրիտ է արտահայտվում այդ տարածքի (շրջանի, ռեգիոնի, երկրի) հնարավորությունը կամ հարմարությունը տնտեսության այս կամ այն ճյուղի տարածքային կազմակերպման համար:

Քանի որ յուրաքանչյուր բնական ռեսուրսի մեծությունը չափվում է իրեն բնորոշ միավորով (տոննա, կիլոմատ, խոր. մետր, միլիմետր, աստիճան և այլն), ապա տարածքի բնական պոտենցիալը մաթեմատիկորեն որոշելու համար անհրաժեշտ է լինում դիմել գնահատման բալային համակարգին (5 բալային): Դրա շնորհիվ կարելի է կատարել **բնառեսուրսային շրջանացում**, այսինքն շրջանների առանձնացումը ըստ տնտեսության որոշակի ճյուղերի տերիտորիալ կազմակերպման համար նրանց առավելություն ունեցող նախադրյալների. գյուղա-

տնտեսական (իր ենթաճյուղերի), արդյունաբերական, ռեկրեացիոն, համալիրային:

Բնական պոտենցիալը քարացած չէ և մարդու գործունեության ազդեցության տակ այն կարող է փոքրանալ (օրինակ, հանքանյութի կորզման հետևանքով) կամ մեծանալ (օրինակ՝ ձկնային ռեսուրսների ավելացումը՝ ձկնանաբուծության շնորհիվ, նավարկելիության մեծացումը՝ շլյուզների կառուցման շնորհիվ, հողային ռեսուրսների մեծացումը՝ նոր հողերի յուրացման շնորհիվ):

Անկախ մեծությունից բնառեսուրսային պոտենցիալը տնտեսական գործունեության մեջ օգտագործվում է ոչ թե միանգամից ու ամբողջությամբ, այլ երկար ժամանակի ընթացքում, ինչ-որ չափով, աստիճանով: Օրինակ՝ գոյություն ունեն անտառահատման, ձկների և վայրի գազանների որսի, արտեզյան ջրերի օգտագործման նորմաներ:

Բնառեսուրսային պոտենցիալի օգտագործման աստիճանը տվյալ ժամանակում ռեսուրսների օգտագործվող մասի և բնական ռեսուրսային պոտենցիալի հարաբերությունն է պոտենցիալի օգտագործվող մասին: Այն կարելի է արտահայտել արժեքային միավորներով, բալերով կամ էլ տոկոսներով: Բնական ռեսուրսների օգտագործման աստիճանը կախված է երկրի սոցիալ-տնտեսական, տնտեսաաշխարհագրական տիպից և ընդհակառակը. (պոտենցիալի կառուցվածքի ու օգտագործման ձևերի և ուղղությունների հետ միասին)՝ այն պարզ պատկերացում է տալիս երկրի սոցիալ-տնտեսական և տնտեսաաշխարհագրական տիպի մասին:

Բնառեսուրսային պոտենցիալի օգտագործման աստիճանը, որպես կանոն, անհամեմատ բարձր է զարգացած երկրներում, և դրանց հույժքային մատակարար առանձին զարգացող-երկրներում (օրինակ՝ նավթարտահանող երկրներում):

2.4 Բնական ռեսուրսների դասակարգումը

Բնական ռեսուրսների գնահատումը, դրանց վերաբերյալ կոնկրետ պատկերացումն ու դասակարգումն ընկած են տվյալ ժամանակում այդ ռեսուրսների օգտագործման նկատմամբ հասարակության վերաբերմունքի ձևավորման, օգտագործման աստիճանի որոշման և գործնականորեն հասարակական արտադրության մեջ օգտագործման հիմքում: Բնական ռեսուրսների օգտագործման բնույթը և աստիճանը գլխավորապես որոշվում են երկրի հասարակական-տնտեսական կառուցվածքով, արտադրական հարաբերությունների բնույթով: Սակայն, բնական ռեսուրսների անխնա, իսկ երբեմն նույնիսկ գիշատչական օգտագործումը մասամբ դրանց զերագնահատման հետևանքն է:

Բնական ռեսուրսները կարելի է դասակարգել ինչպես ըստ դրանց **սպառման և վերականգնման հատկանիշի**, այնպես էլ մարդու գործունեության մեջ դրանց **օգտագործման հիմնական ուղղությունների**: Առաջին դասակարգումը կատարվում է էկոլոգիական պլանավորման և կանխատեսման նպատակով: Սովորաբար առանձնացնում են.

¹ ДмИтревский Ю. Д., Лавров С. Б. Экономико-экологические проблемы капиталистических и развивающихся стран, М., 1978 стр. 18.

ա) **գործնականորեն անսպառ** (անսահմանափակ) ռեսուրսներ, այսինքն դրսից անընդհատ համարվող և մարդու կողմից վերարտադրելու կարիք չզգացող ռեսուրսները (արեգակի, քամու, մակրոթացության, երկրի ջերմային էներգիան)

բ) **Սպառվող ռեսուրսներ**, որոնք լինում են վերականգնվող և չվերականգնվող: Վերականգնվող ռեսուրսները հիմնականում «կենսոլորտի ռեսուրսներն» են (հողը, բուսականությունը, կենդանական աշխարհը), որոնք պահպանման և վերարտադրության միջոցառումների կարիք են զգում, ինչպես նաև համածոներ (օրինակ՝ աղի որոշ տեսակներ): **Չվերականգնվող որոշ ռեսուրսները** սպառվելով այլևս չեն վերականգնվում (հանքահումքային ռեսուրսների մեծամասնությունը օրինակ՝ քարածուխը, նավթը) իսկ մյուսները թեկուզ և վերականգնվում են, բայց այնքան դանդաղ, որ գործնականորեն դրանք համարվում են չվերականգնվող ռեսուրսներ (օրինակ՝ տորֆը, աղը և այլ որոշ նստվածքային ապարներ): Որոշ գիտնականներ չվերականգնվող ռեսուրսների շարքին են դասում նաև բնության «ռեսուրս-երևույթները», ամհետացման փուլում գտնվող կենդանիների և վայրի բուսականության առանձին տեսակներ: Վերջիններս բնության այն ռեսուրսներն են, որոնք օժտված են գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներով և սպառման առումով չունեն փոխարինողներ և դրանց վերականգնումը տեխնիկապես անհնար է:

Ըստ մարդու գործունեության մեջ **օգտագործման հիմնական ուղղությունների**, բնական ռեսուրսները բաժանվում են հետևյալ երկու խմբի.

ա) ռեսուրսներ, որոնք մարդկանց գոյության ու վերարտադրության անմիջական աղբյուրներ են, այդ թվում կենսական՝ անհրաժեշտության ռեսուրսներ (օրինակ՝ ջուրը, օդը) ինչպես նաև ոչ արտադրական նշանակության ռեսուրսներ (ռեկրեացիոն, առողջարարական, գեղագիտական),

բ) ռեսուրսներ, որոնք նյութական արտադրության միջոցների աղբյուրներ են, արտադրության զարգացման կարևորագույն գործոններ:

Սրանց շարքում առանձնանում են ռեսուրսներ, որոնք անմիջապես սպառվում են նյութական արտադրության կողմից (հունք, էներգակիրներ և այլ նյութեր) և ռեսուրսներ, որոնք օգտագործվում են, բայց բնական միջավայրից չեն կորզվում (օրինակ՝ հիդրոէներգիա ստանալու և նավագնացության նպատակով օգտագործվող ջուրը):

Բնական ռեսուրսների դասակարգումը, գնահատումն անընդհատ փոփոխվում է դրանց վրա մարդկային հասարակության ազդեցության ուժեղացմանը զուգընթաց: Այդ ազդեցությունը մեծանում է, ոչ միայն իր մասշտաբներով, այլ նաև «որակական կազմով», կառուցվածքով:

2.5 Հասարակության և բնական միջավայրի փոխազդեցությունը բնության օգտագործման (բնօգտագործման) հիմնահարցերը և ուղղությունները

Բնական միջավայրը հանդիսանալով հասարակության զարգացման կարևորագույն գործոններից մեկը, բնակչության վերարտադրության անհրաժեշտ պայմանը, իր հերթին, հասարակական արտադրության մեջ նրա բաղադրիչների ներգրավմանը հանապատասխան, ենթարկվում է ավելի ինտենսիվ ներգործության, որով էլ պայմանավորված են նրանում տեղի ունեցող զգալի փոփոխությունները:

Մեր օրերում երկրագնդի, հատկապես, արդյունաբերական զարգացած երկրների բնակչությունը հայտնվել է այն տագնապալի փաստի առջև, որ ժամանակակից գիտության և տեխնիկայի նվաճումների վրա հենվող քաղաքակրթության հզոր առաջընթացը բացահայտորեն արդեն սկսել է տալ նաև անցանկալի պտուղներ: Սկսվելով այսպես կոչված տեղական (լոկալ) ու ռեգիոնալ բնույթի էկոլոգիական ճգնաժամերից, ինդուստրիալ զարգացման բացասական հետևանքներն աստիճանաբար ձեռք են բերում գլոբալ (համամոլարակային) նշանակություն (օրինակ՝ մթնոլորտի մարդածին աղտոտումը, ջերմային հաշվեկշռի փոփոխությունը, երկրաբանական շեղումները): Այս բոլորը արդյունք են երկրագնդի ռեսուրսների մեծ մասշտաբներով կորզման, որն իր հերթին պայմանավորված է այդ ռեսուրսների օգտագործման ցածր գործակցով:

Որպես կանոն աճում են մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների աղտոտման, օրգանական աշխարհի աղքատացման հետևանքով առաջացող ժողովրդատնտեսական վնասները: Առանձնապես մեծ է անենաթանկարժեք ատաղրողական ուժի մարդու առողջական վիճակի վատացման հետևանքով կրած վնասը:

XX դարում արդյունաբերական ամենահզոր երկրում՝ ԱՄՆ-ում օդային ավազան ներթափանցող վնասակար նյութերի քանակն ավելացել է շուրջ 100 անգամ: «Թթվային անձրևների» բացասական ազդեցության (բուսականության, մարդու առողջության, շինությունների քայքայում և այլն) արեալը արևմտյան գերիշխող օդային հոսանքները ընդլայնում, հասցնում են մինչև Կանադայի հարավ-արևելյան շրջանները, որի համար էլ ԱՄՆ-ը տարեկան մի քանի միլիարդ դոլլարով փոխհատուցում է առաջացած վնասը: ԱՄՆ-ի գլխավոր արդյունաբերական գոտիներում օդի մեջ թթվածնի պարունակությունը սովորականից ցածր է 40%-ով: Ընդհանուր առմամբ դեռևս 1981 թ. ԱՄՆ-ի 230 մլն բնակչից 140 մլն բնակվում էին այն տարածքներում, որտեղ օդի որակը ոչ լրիվ էր համապատասխանում պահանջներին: Իրադրությունը չի բարելավվել և, նույնիսկ, ավելի է վատթարացել մեր օրերում:

Շրջակա միջավայրի և առանձնապես օդային ավազանի աղտոտման աստիճանն էլ ավելի բարձր է Ճապոնիայում, որն իր արդյունաբերական արտադրանքի ծավալով ԱՄՆ-ին զիջում է 3.7 անգամ, բնակչության թվաքանակով՝ 2.2 անգամ, իսկ տարածքով՝ մոտ 25 անգամ: Նման «էկոլոգիական ճնշման» արդյունքը շատ դիպուկ ար-

տահայտում են հենց իրենք ճապոնացիները, իրենց երկիրն անվանելով «կեղտոտ կղզի», իսկ խաղաղօվկիանոսյան արդյունաբերական գոտին «մահվան գոտի»:

Բնական ռեսուրսների ռաջիոնալ, համալիր ու խնայողական օգտագործման, և, դրանով իսկ, շրջակա միջավայրը աղտոտումից պահպանելու լավագույն ուղին արտադրության մեջ էկոլոգիական սարքավորումների (օրինակ՝ գոլիների, փոշեկուլների, ջրի մաքրման սարքավորումների) տեղադրումն է, կամ ինչպես ասում են **արտադրության էկոլոգացումը**: Արտադրության մեջ էկոլոգիական տեխնոլոգիայի ներդրման գործընթացն ունի երկու կողմ: Առաջին «դժվար» կողմը այդ տեխնոլոգիաների դեռևս ոչ բավարար զարգացումն է և դրանց թանկությունը: Երկրորդ «դրական» կողմն այն է, որ այդ, թեկուզ և շատ թանկ, տեխնոլոգիայի ներդրման շնորհիվ որսվում են շրջակա միջավայրն աղտոտող վնասակար նյութեր, որոնք ոչ այլ ինչ են, քան ծեռնարկության արտադրանք (օրինակ ցեմենտ, ծծմբային գազեր): Չեռնարկից արտադրանք (եկամուտ), որը երկարատև ժամանակահատվածում ետ է վերադարձնում (փոխհատուցում է) իր վրա կատարված ծախսերը:

Աղյուսակ 4.1

Արդյունաբերության էկոլոգիայի առավել «անմաքուր» արտադրությունների միջին տարեկան աճի տեմպերը (%-ով)¹

Արդյունաբերական արտադրություն	Արդյունաբերական ցածր երկրներ		Զարգացող երկրներ	
	1980-1990	1990-1996	1980-1990	1990-1996
Հիմնական քիմիական ապրանքներ	3.3	2.2	6.0	5.5
Այլ քիմիական ապրանքներ	4.0	2.5	3.6	5.2
Պլաստմասսաներ	4.9	2.4	5.3	3.4
Նավթամշակման ապրանքներ	-0.7	1.0	3.6	4.0
Ռետինե իրերի արտադրություն	3.0	1.7	5.1	4.0
Նավթից և ածխից ստացված ապրանքներ	-0.8	-0.1	3.1	4.0
Թուղ և պողպատ	0.6	0.2	4.8	6.3

Բնական միջավայրի պահպանության համար անհրաժեշտ կապիտալ ներդրումները կատարելուց (իսկ դրանք չկատարելու դեպքում մեծ տուգանքներ վճարելուց) ազատվելու նպատակով մենատիրությունները վերջին տասնամյակում ավելի հաճախակի են դիմում էկոլոգիական տեսակետից վնասակար արտադրական ծեռնարկությունները իրենց երկրների ազգային սահմաններից դուրս զարգացող երկրների տարածքները փոխադրելու՝ պրակտիկային: Լրացուցիչ գերշահույթ ապահովելու հետ միաժամանակ մենատիրությունները այդ գործողությունների շնորհիվ ինդուստրաց-

ման բացասական հետևանքները տեղափոխում են դեռևս համեմատաբար բարվոք էկոլոգիական իրադրություն ունեցող զարգացող երկրներ: (Ավելի մանրամասնորեն այս հարցը քննված է «Տնտեսության միջազգայնացումը» բաժնում):

Նշված երևույթի մասին է վկայում էկոլոգիայի առավել «անմաքուր» արտադրությունների աճի միջին տեմպերի համեմատությունը արդյունաբերականացած և զարգացող երկրների խմբերում (աղյուսակ 4.1):

Բնապահպանական տեսակետից չհիմնավորված վիթխարի արդյունաբերական և գյուղատնտեսական նախագծերը մեծ վտանգ են ներկայացնում շրջակա միջավայրի համար, եթե դրանց անվտանգությանը գնահատական չեն տալիս համապատասխան մասնագետները և հասարակությունը:

Որպես ապացույց կարող է ծառայել այն ճակատագիրը, որ ունեցավ ԽՍՀՄ հյուսիսային գետերի հոսքի մի մասը դեպի Միջին Ասիա ու Ղազախստան փոխադրելու նախագիծը «դարի նախագիծը»:

Վերջինս կազմվել էր հեղինակավոր նախագծային ինստիտուտի կողմից, հաստատվել էր վերադաս օրգաններում, սակայն ինչպես ցույց տվեցին ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի աշխատակիցների հասարակական կարգով կատարած գիտատեխնիկական վերլուծությունը, դրա իրականացման հետևանքով առաջացող վնասները մի քանի անգամ ավելի մեծ կլինեին, քան ուղղակի օգուտները: Այդ հիմնավորումով էլ ԽՍՀՄ կառավարությունը որոշում կայացրեց «դարի նախագիծը» չիրագործելու մասին:

Չնայած, որ խոշոր տեխնիկական նախագծերի իրականացումը միշտ էլ հղի են որոշակի ռիսկով¹, մարդկության համար վտանգներով, այնուամենայնիվ դրանց իրագործումն անհրաժեշտ է: Սակայն այդ նախագծերն իրականացնելիս պետք է պարտադիր կարգով որոշվեն դրանց վտանգավոր հետևանքների գնահատման չափանիշները: Այդպիսի չափանիշ կարող է հանդիսանալ վտանգավոր հետևանքների հավանականությունը նվազագույնի հասցնելը՝ առաջադրված նպատակին հասնելու պարտադիր պայմանով:

Յուրաքանչյուր էկոլոգիական, տեխնոլոգիական նախագիծ ունի նվազագույն ռիսկի ընդհանուր ճանաչում ստացած մակարդակ (չեն), որը որոշելը չափազանց դժվար է: Եթե նախագծերի համակողմանի, մանրակրկիտ վերլուծությունից պարզվում է, որ այդ նախագծի նույնիսկ նվազագույն ռիսկը ավելի մեծ է այդ ռիսկի ընդունված մակարդակից (չենից), ուրեմն այդ նախագիծը պետք է համարել իրականացման համար աննպատակահարմար:

Գիտատեխնիկական առաջընթացը հնարավորություն է տալիս ստեղծելու մաքրման շինություններ, ներդնել փակ ցիկլի և այլ տեխնոլոգիաներ, միմիայն որոնք շնորհիվ կարելի է թուլացնել բնության վրա մարդու ազդեցությունը: Սակայն բնական միջավայրի վատթարացման վտանգն ամբողջությամբ վերացնելն անհնարին է, թեկուզ միայն այն պատճառով, որ արտադրությունը պարտադիր

¹ Industrial Commodity Statistics Yearbook UN, 1996

¹ Որոշակի ռիսկի հետ է կապված նաև օդանավերով եթևեկելը, ԱԷԿ-ների շահագործումը, սակայն մարդիկ գիտակցելով այս փաստը շարունակում են օգտվել դրանից:

կարգով կենսաբանական շրջապատույտից դուրս է հանում հսկայական ցամաքային և ջրային տարածքներ:

Մարդը կարող է իրեն ծառայեցնել բնությունը, սակայն ոչ մի դեպքում չպետք է հասնի դրա նկատմամբ տիրապետության: Ֆ. Էնգելսն այս առումով նշել է «Սակայն շատ էլ չհրապուրվենք բնության նկատմամբ մեր տարած հաղթանակներով: Յուրաքանչյուր այդպիսի հաղթանակի համար այն մեզնից վրեժխնդիր է լինում: Այդ հաղթանակներից յուրաքանչյուրը ծիշտ է, առաջին հերթին ունենում է այն հետևանքները, որ մենք նկատի էինք առել, բայց երկրորդ և երրորդ հերթին ունենում է միանգամայն այլ, չնախատեսված այնպիսի հետևանքներ, որոնք շատ հաճախ ոչնչացնում են առաջինների նշանակությունը»¹: Բերենք նշված միտքն ապացուցող մի օրինակ:

Ռոզզական ծավալուն շինարարության շնորհիվ Ամուդարյա և Սիրդարյա գետերի ավազաններում բամբակի համախառն բերքը հետպատերազմյան տարիներին ավելացել է շուրջ 4 անգամ ապահովելով այդ շրջանի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային մակարդակի բարձրացումը (սա առաջին հերթի ազդեցության հետևանք է): Միաժամանակ, ռոզզական համակարգի և ռոզզման տեխնոլոգիայի ցածր մակարդակի պատճառով առաջացել է հողերի աղակալում, իսկ երբեմն էլ ընդհակառակը՝ ճահճացում, ռոզզվող հողատարածությունների կրճատում, հողերի աղագերծման նպատակով կատարվող ծախսերի մեծացում (որոնք՝ երկրորդ հերթի ազդեցության հետևանքներ են): Ռոզզման ջրի օգտագործման չարդարացված բարձր նորմաների հետևանքով, ծանծաղած գետերի ջրի անբավարարության պատճառով Արալյան ծովի նախկին ջրային տարածքի 1/3-ը ցամաքել ու աղակալվել է:

Ուժեղ քամիները քշում տանում են այդ տարածքի աղը և նստեցնում ավելի հեռավոր շրջանների հողերում, իջեցնելով վերջիններիս պտղաբերությունը: Կրճատվել են Արալյան ծովի ձկնային ռեսուրսները: Բամբակենին կոմբայններով հավաքելուն նախապատրաստելու (տերևները չորացնելու) նպատակով բարձր թունավոր նյութերի (դեֆոլիանտների) օգտագործման հետևանքով զգալիորեն մեծացել են բնակչության մեջ «պրոֆեսիոնալ» հիվանդություններով տառապողների թիվը և, հետևաբար, դրանց սոցիալական ապահովության ու բուժման նպատակով հատկացվող ծախսերը (սրանք էլ չնախատեսված երրորդ հերթի հետևանքներն են): Ինչպես նկատում ենք չնախատեսված բացասական հետևանքները չեն զիջում, նույնիսկ գերազանցում են առաջնային, դրական հետևանքներին:

Ինքնին հասկանալի է, որ անհնար է արտահայտել շրջակա միջավայրի վատթարացման հետևանքով առաջացած այնպիսի վնասները, ինչպիսիք են, տրանսպորտի կորուստները՝ տեսանելիության վատացման հետևանքով, վառելիքի գերնորմատիվային ծախսերը, շենքերի պատերի լրացուցիչ մաքրման կամ ներկման ծախսերը, տարածքի լրացուցիչ մաքրման, լվացքի համար անհրաժեշտ լրացուցիչ նյութերի վրա կատարվող ծախսերը (տես գծապատկեր 4.1):

¹ Բնության դիալեկտիկա: Կ.Մարքս և Ֆ.Էնգելս, Աշխատանքի դերը կապիկ մարդացման պրոցեսում: Ե. 1969, էջ 178:

Չաշվարկման ենթակա չէ նաև ասենք օդային և ջրային ավազանի աղտոտման հետևանքով կանանց մինչև վերջերս անհայտ ու անբուժելի հիվանդությունների արդյունքում աճող չբերության վնասը:

Ուստի արտադրության տեղաբաշխման տարածքային-տնտեսական հաշվարկներում չի կարելի սահմանափակվել միայն տնտեսական գործոնների հաշվառումով, այլ պետք է ժողովրդատնտեսական արդյունավետության հաշվարկի մեջ պարտադիր մտցնել նաև արտադրական ձեռնարկության գործունեության հետևանքով շրջակա միջավայրին հասցվող վնասը:

Պրոֆեսոր Ի.Բլեխցինն ու Վ.Մինենն այս առումով արտադրության տեղաբաշխման արդյունավետության (բերված ծախսերի) բանաձևում մտցրել են նաև դրա գործունեության հետևանքով առաջացող վնասը (գծապատկեր տես էջ 44):

Եթե այդ վնասաբերությունն ավելի բարձր է քան ձեռնարկության տնտեսական արդյունավետությունն, ապա այդպիսի ձեռնարկության տեղաբաշխումը պետք է համարել անբույլատրելի:¹


Չասարակության խնդիրը, հետևաբար, ոչ թե բնությանը «հաղթելն» է, այլ տնտեսություն-էկոլոգիա համակարգի օպտիմալացումը: Ներկա ժամանակաշրջանում տնտեսական, բնական և այլ, որակապես տարբեր պրոցեսների փոխադարձ կապերի սերտացումը պայմանավորում է հասարակության և շրջակա բնական միջավայրի փոխգործունեությունը որպես միասնական էկոլոգա-տնտեսական համակարգ դիտելու անհրաժեշտությունը²: Տնտեսական բնագավառը բնական միջավայրի միասնական էկոլոգա-տնտեսական համակարգի շրջանակներում պետք է դիտել որպես ինքնուրույն ենթահամակարգ:

Էկոլոգա-տնտեսական համակարգի կառուցվածքը և գործառույթը առաջին հերթին որոշվում են նրա կազմի մեջ մտնող բոլոր բլոկների անվանացուցակով («բնություն», «մարդ», «հասարակություն», և «արտադրություն» կամ «հասարակական արտադրություն»): Այդ համակարգի շրջանակներում բնական միջավայրի վրա հասարակական արտադրության ներգործության, նյութերի շրջապատույտի հիմնական ձևը բնության օգտագործումն է:

Բնօգտագործում տերմինը, չնայած, որ գիտության մեջ արդեն լայն տարածում է ստացել, ամբողջովին ու պարզորեն չի արտահայտում այն բոլոր համալիր տնտեսական միջոցառումները, որոնք ներգործում են շրջակա միջավայրի վրա, ուղղված են դրա պահպանմանն ու բարելավմանը և կապված են արտադրական, ինչպես նաև ոչ արտադրական ոլորտների զարգացման հետ, այլ կերպ ասած բնության օգտագործումը համակողմանի չի արտահայտում հասարակության և բնական միջավայրի փոխազդեցությունը: Նույնիսկ թվում է թե այն արտահայտում է այդ փոխազդեցության միայն մեկ կողմը՝ մարդու կողմից բնության օգտագործումը:

¹ Блехцин И. Я., Минеев В. А. Производительные силы СССР и окружающая среда. М., 1981, стр. 45

² Лемешев М. Я., Чепурных Х. В., Юрина Н. П. Региональное природопользование: на пути к гармонии. М., 1976



Նման տպավորություն ստեղծվելու պատճառն ինչպես նշում է հայտնի աշխարհագրագետ Ա. Իսաչենկոն, բնության օգտագործում տերմինին բնորոշ ուսիլատար-սպառողական երանգն է: Ըստ էության այս առումով ավելի ճիշտ կլինի «մարդկային հասարակություն-բնական միջավայր» փոխհարաբերությունն արտահայտել «բնությունից օգտվել» տերմինով (ընդ որում ենթադրելով, որ պետք է օգտվել խնայողաբար, հոգատարությամբ և վերականգնելով բնության հավասարակշռությունը):¹

Սակայն իրականում բնօգտագործման տերմինի տակ պետք է հասկանալ բնական ռեսուրսների ռացիոնալ, համալիր օգտագործումը, բնական օբյեկտների վերականգնումն ու քանակի ավելացումը, ինչպես նաև օգտագործման ոլորտից բնական տարածքների առանձին տեղամասերի դուրս հանումը և, որ կարևորն է, բնության նպատակաուղղված, գիտականորեն հիմնավորված վերափոխումը դրա կենսաբանական համակարգերի արգասավորության բարձրացման նպատակով:

Բնօգտագործման կոնկրետ ուղղություններն են ռեսուրսների սպառումը, բնության կոնստրուկտիվ վերափոխումը, բնական ռեսուրսների վերարտադրությունը, բնակեցման միջավայրի և բնական ռեսուրսների պահպանությունը², կառավարումը և մոնիթորինգը³:

Ռեսուրսների սպառումն իր մեջ ներառում է հետևյալ տեսակները: 1. **Ռեսուրսների հանույթը** (այդ թվում դրա նախապատրաստական էտապները), ռեսուրսներից օգտվելը (առանց բնական միջավայրից անմիջապես հանելու)⁴ և բնության տարրերը որպես արտադրության ու սպառման թափոնների պահարան օգտագործելը (օրինակ՝ ածխի արդյունահանման թափոնները (տերիկոնները), պղնձահանքաքարի «պոչերը»):

2. **Բնության կոնստրուկտիվ վերափոխումը** ներառում է բնական միջավայրի վերափոխման համալիր ծրագրերի կազմումը, ռեսուրսների առանձին հատկությունների բարելավում (օրինակ՝ հողաբարելավում, հարստացում), պահպանություն տարերային աղետներից (օրինակ՝ ձնհալուսից, ջրհեղեղից), տնտեսական գործունեության բացասական հետևանքների կանխում:

3. **Բնական ռեսուրսների վերարտադրությունը** ներառում է վերականգնվող ռեսուրսների անմիջական վերարտադրությունը (արհեստական բիոցենոզների ստեղծում, ծովային ջրի աղազեծումը, վերականգնվող ռեսուրսների վերարտադրության համար պայմանների ստեղծումը (օրինակ՝ ջրապահպան անտառների ստեղծում) և բնական ռեսուրսների վերականգնումը (գետերի մաքրումը, լանդշաֆտների ռեկուլտիվացիան):

¹ Исаченко А. Г. Физикогеографические основы оптимизации природной среды - В сб. "Человек и окружающая среда", Л., 1977.

² Կոնսերվացում, արգելանոցների և ազգային պարկերի ստեղծում:

³ Երկրի համակարգերի մասին թարմ ինֆորմացիայի ստացումը: Շրջակա միջավայրի վիճակի դիտարկման, հսկողության և կառավարման համակարգ, որն իրագործվում է տարբեր մասշտաբներով, այդ թվում և գլոբալ:

⁴ Օր. գետերի ջրից տրանսպորտային կամ անտառներից ռեկրեացիոն նպատակով օգտվելը:

4. **Բնակեցված միջավայրի և բնական ռեսուրսների պահպանությունը** ներառում է արտադրության և սպառման բացասական հետևանքների կանխումը, լանդշաֆտների բուն պահպանությունը (կոնսերվացումը), կենսոլորտի ծագումնա-յին բազմազանության պահպանումը:

5. **Կառավարումը և մոնիթորինգը** ներառում են գույքագրումը, հաշվառումը և հսկողությունը (բուսական և կենդանական աշխարհի), ռեսուրսների և բնական միջավայրի վիճակի և բնության օգտագործման գործընթացների կարգավորումը:

2.6 Երկրորդային հումքային ռեսուրսների օգտագործումը որպես բնական ռեսուրսների խնայողության օգտագործման միջոցառում

Երկրագնդի բնակչության բարեկեցության ընդհանուր մակարդակի բարձրացման, մեկ շնչին ընկնող պարենամթերքի և արդյունաբերական արտադրանքի սպառման ավելացման հետևանքով կենցաղային աղբի ծավալը շուրջ 10 անգամ արագորեն է աճում, քան բնակչության թվաքանակը¹: Կենցաղային աղբի համաշխարհային զանգվածի մեծ մասն առաջանում է բարձր զարգացած կապիտալիստական երկրներում: Դրանց բնակչության մեկ շնչի հաշվով տարեկան ձևավորվում է 300-350 կգ աղբ:

Ստեղծված վիճակը սանիտարահամաճարակային, ռեսուրսախնայողական և, առանձնապես հողային ռեսուրսների² խնայողության տեսակետներից ստիպում է հավաքել և ոչնչացնել այդպիսի հսկայական քանակությամբ կենցաղային աղբը թեկուզ և մեծ ծախսումների գնով:

Ի՞նչ տնտեսական զնահատական կարելի է տալ նման ծախսերին: Դրա համար նախ պետք է պատասխանել մեկ այլ հարցի, ի՞նչ են թափոնները, աղբը կամ, ինչպես անվանում են, պինդ կենցաղային թափոնները:

Առանձնացնում են թափոնների 2 տեսակ արտադրության թափոններ և սպառման թափոններ:

Արտադրության թափոնները՝ արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման ժամանակ առաջացած և իրենց ելակետային սպառողական հատկանիշները մասամբ կամ ամբողջությամբ կորցրած հումքի, նյութերի և կիսապատրաստուկների մնացորդներն են:

Սպառման թափոնները ֆիզիկական և բարոյական մաշվածքի հետևանքով իրենց սպառողական հատկությունները կորցրած ապրանքներն ու նյութերն են:

¹ Երկրագնդի բնակչության միջին տարեկան աճը 1995-1999թթ. կազմել է 1.3%, իսկ 1999-2000 թթ. 1.2%: Արևմտաեվրոպական երկրներում բնակչության միջին տարեկան աճը կազմում է 0.3-1.3%, իսկ աղբի տարեկան ծավալի աճը 4-ից մինչև 5%:

² Տարեկան 1 մլն տ աղբը ոչնչացնելու համար պահանջվում է 20 հա, իսկ սանիտարահիգիենիկ պահանջները հաշվի առնելով 170 հա տարածք:

Երկրորդային նյութական ռեսուրսները ժողովրդական տնտեսությունում առաջացող արտադրության և սպառման թափոններ են, որոնք օգտագործման տեսակետից երկրորդային նյութական ռեսուրսները բաժանվում են 2 տեսակի երկրորդային հումք և չօգտագործվող թափոններ:

Երկրորդային հումքը օգտագործված նյութական այն ռեսուրսներն են, որոնք կարող են ներկա ժամանակում կրկին օգտագործվել ժողովրդական տնտեսությունում:

Չօգտագործվող թափոնները օգտագործված նյութական այն ռեսուրսներն են, որոնց կրկին օգտագործման համար ներկայումս պայմաններ (օրինակ համապատասխան տեխնոլոգիա) չկան:

Այսօրվա կարևոր տնտեսական խնդիրներից մեկը երկրորդային հումքի կոնկրետ ձևի, ծավալի քանակական արտահայտության որոշելն է:

Երկրորդային հումքի օգտագործմանը նախորդում է նրա **մթերումը**՝ մասնագիտացված կազմակերպությունների կամ դրանց հանձնարարությամբ այլ կազմակերպությունների, ձեռնարկությունների, առանձին քաղաքացիների կողմից հետագա օգտագործման նպատակով երկրորդային հումքի հավաքման, զննման, նախնական մշակման, ըստ որոշակի հատկանիշների տեսակավորման և կենտրոնացման գործունեությունը:

Երկրորդային հումքի **մշակումը** դրան հետագա օգտագործման համար նախապատրաստող տեխնոլոգիական գործողությունների համախմբությունն է:

Գիտնականների մոտավոր հաշվումներով կենցաղային աղբը կշռային արտահայտությամբ պարունակում է 20-40% մակուլատուրա, 3-5% սև և գունավոր մետաղներ, 4-6% տեքստիլ, 1-2% պլաստմասսաներ, 3-6% ապակու ջարդվածք, 1-2% ռետին, 25-40% սննդային թափոններ: Աղբի մեջ պարունակվում է 16% ածխածին, 0.8% ազոտ, 2.6% կիր, 0.3% ֆոսֆոր: Գիտնականները հաշվել են նաև, որ եթե ռացիոնալ օգտագործվի երկրորդային հումքի թեկուզ 1/10-ը, ապա հնարավոր կլինի արդյունահանող ճյուղերի կապիտալ ներդրումների ծավալը կրճատել 1/5-ով:

Հայտնի է, որ մետաղի ջարդոնից 1 տոննա թուջ ստանալու դեպքում տեսակարար կապիտալ ներդրումները և ընթացիկ ծախսերը 5 անգամ պակաս են երկաթի հանքաքարից նույն քանակի թուջ ձուլելու համեմատությամբ: Երկրորդային հումքից 1 տ բրոնզային-արույրային համաձուլվածք ձուլելու շնորհիվ էլեկտրաէներգիայի ծախսը կրճատվում է 5, վառելիքինը 3-4, ինքնարժեքը 2.5, իսկ տեսակարար կապիտալ ներդրումները 10 անգամ:

Նշենք նաև, որ մակուլատուրայից 1 տ թուղթ արտադրելիս խնայվում է 4 խոր. մ փայտանյութ, 200 խոր. մ. ջուր, 2 անգամ կրճատվում է էլեկտրաէներգիայի ծախսը և 2 մարդ-օրով՝ աշխատանքային ծախսերը: 1 տոննա ավտոդողային վերականգնվածքի (ռեզեներատի) ինքնարժեքը սինթետիկ կաուչուկի ինքնարժեքից ցածր է 4-ից 6 անգամ: Այսքան բերված տվյալներն էլ բավական են երկրորդային հումքի օգտագործման առավելությունը և **հույժ կարևորությունը** ցույց տալու համար:

Բնականաբար օգտագործման տեսակետից այսպիսի բարձր արժեք և տնտեսական արդյունավետ երկրորդային հումքի նկատմամբ մեծ է երկրագնդի զարգաց-

4. Բնութագրել տարածքի «բնակչության-ընտանիքային պոտենցիալ» հասկացությունը: Ի՞նչ մեթոդով և ի՞նչ նպատակով է գնահատվում բնական-ընտանիքային պոտենցիալը:

5. Բնական-ընտանիքային պոտենցիալի օգտագործման աստիճանն ինչո՞վ է պայմանավորված և ինչի՞ մասին է պատկերացում տալիս:

6. Ի՞նչ գիտական և գործնական նշանակություն ունի բնական ընտանիքների գնահատումը:

7. Ըստ սպառման և վերականգնման հատկանիշի ու մարդու գործունեության մեջ օգտագործման հիմնական ուղղության ինչպիսի խմբերի են դասակարգվում բնական ընտանիքները:

8. Ինչո՞վ է պայմանավորված արտադրության էկոլոգացման անհրաժեշտությունը: Տնտեսական տեսակետից գնահատե՞ք արտադրության էկոլոգացման «բարդ» և «դրական» օգտակար» կողմերը:

9. Ի՞նչ չափանիշով է գնահատվում էկոլոգիական նախագծի վտանգավորությունը:

10. Բացահայտել «բնության օգտագործման» հասկացության էությունը և բնութագրել բնության օգտագործման կոնկրետ ուղղությունները:

11. Հիմնավորե՞ք, որ երկրորդային հումքային ընտանիքների կրկնօգտագործումը նպաստում է բնական ընտանիքների խնայողական օգտագործմանը:

12. Տնտեսական տեսակետից գնահատե՞ք երկրորդային հումքային ընտանիքների կրկնօգտագործումը:

Գ Լ ՈՒ Խ 3.

ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Բնակչությունը և աշխարհագրությունը: Ընդհանուր մեթոդաբանական դրույթները:

Տնտեսական աշխարհագրության զարգացման գործընթացում դրանից առանձնացված ճյուղերից մեկը բնակչության աշխարհագրությունն է:

Բնակչության գլխավոր արտադրողական ուժի ուսումնասիրությունը, հասարակական զարգացման գործընթացում դրա տեղի ու դերի ճիշտ գնահատումը տնտեսական աշխարհագրության կարևոր ու միաժամանակ բարդ խնդիրներից է:

Ինչպես տնտեսական աշխարհագրության, այնպես էլ դրանից ճյուղավորված բնակչության աշխարհագրության զարգացման սկզբնական փուլում տիրապետել են բնակչության դերը ոչ համակողմանիորեն ու խորությամբ վերլուծող և, ըստ էության գիտական մոլորություն հանդիսացող ուղղություններ՝ անթրոպոաշխարհագրությունը (Բատցել), մարդու աշխարհագրությունը (Վիդալ դելա Բլաշ) և այլն:

XX դարի ընթացքում անընդհատ խորանում և հարստանում է հասարակական արտադրության զարգացման ու տեղաբաշխման մեջ բնակչության հատուկ դերի ըմբռնումը:

Ներկայումս աշխարհագրության մեջ բնակչությունը դիտվում է որպես գլխավոր արտադրողական ուժ, որպես արտադրության սուբյեկտ, արտադրական գործընթացի ակտիվ մասնակից: Միաժամանակ բնակչությունը դիտվում է որպես հասարակական արտադրության արդյունքների սպառողը: Այս առումով ականավոր աշխարհագրագետ Ն. Ն. Բարանսկին աշխարհագետներին խորհուրդ էր տալիս չմոռանալ այն հանգամանքը, որ բնակչությունը և՛ արտադրող է և՛ այդ արտադրանքի սպառողը ու այդպիսով «տնտեսությունը բնակչության հետ կապված է ամբողջությամբ սկզբից մինչև վերջ»:¹

Աշխարհագրության սոցիոլոգացման և հումանիզացման ընդհանուր գործընթացը առաջին հերթին և առավել ինտենսիվորեն է տեղի ունենում բնակչության աշխարհագրությունում: Բնակչության վերարտադրության, կազմի, միգրացիաների, աշխատանքային ընտանիքների, տարաբնակեցման և ուրբանիզացման հիմնահարցերը դարձան աշխարհագրական հետազոտության ինքնուրույն ու խիստ կարևոր օբյեկտները: Ներկայումս բնակչության աշխարհագրության կազմում առանձնացնում են հետևյալ երկու խոշոր բաժինները

1. Բնակչության աշխարհագրություն, որն ուսումնասիրում է բնակչությունը, նրա տարածական կազմակերպումը և ժողովրդագրաաշխարհագրական իրադրությունը:

2. Բնակավայրերի աշխարհագրություն, որն ուսումնասիրում է բնակավայրերը, նրանց տարածական խմբերը և համակարգերը:

Բնակչության աշխարհագրության ուրույն տեղը հասարակական աշխարհա-

¹ Баранский Н. Н. Методика преподавания экономической географии, М., 1960, стр. 145.

գրության համակարգում որոշվում է նրանով որ բնակչությունը և որպես արտադրողական ուժ, և որպես սպառող կապված է տնտեսության բոլոր ճյուղերի, հասարակական կյանքի բոլոր բնագավառների հետ, ուստի նրա ուսումնասիրությունը որոշ չափով սինթետիկ համատնտեսաաշխարհագրական նշանակություն ունի:

Այսպիսով՝ **բնակչության աշխարհագրությունը աշխարհագրության ծյուղ է (գիտություն), որն ուսումնասիրում է բնակչության ժամանակակից կազմի ու բնակավայրերի ձևավորման ու զարգացման օրինաչափություններն ու տարածքային առանձնահատկությունները տարբեր սոցիալական, տնտեսական, բնական ու պատմական պայմաններում:**

3.2 ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿՆ ՈՒ ԳՐԱ ՇԱՐՓԸ:

Բնակչության թիվը և դրա փոփոխությունը շատ մեծ նշանակություն ունեն տվյալ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Բնակչության թվով պայմանավորված է երկրագնդին կամ տվյալ պետությանն անհրաժեշտ բնական ռեսուրսների, պարենային և ոչ պարենային արտադրանքի, շինարարության և տարբեր ծառայությունների ծավալը:

Մարդկային պատմության ընթացքում երկրագնդի բնակչությունն աճել է շատ դանդաղ: Ինչպես երևում է ստորև բերվող գծապատկերից բնակչության աճի պայթյունաձև արագացում տեղի է ունեցել XX դարի կեսերից, երբ անկախություն ձեռք բերած նախկին գաղութային երկրներում առողջապահության արմատական բարելավման շնորհիվ կտրուկ նվազեց մահացությունը¹, ինչը ծնելիության մակարդակի գրեթե պահպանման պայմաններում հանգեցրեց բնական աճի բարձրացման: Դրա հետևանքով մինչև օրս կրճատվել է աշխարհի բնակչության թվաքանակը հերթական 1 մլրդով ավելանալու համար պահանջվող ժամանակահատվածը (տես թիվ 5.1 գծապատկերը):

Ինչպես երևում է գծապատկերից բնական աճի կրճատման հետևանքով XXI դարի առաջին կեսում այդ ժամանակահատվածը կրկին կմեծանա:


Բացարձակ արտահայտությամբ երկրագնդի բնակչության տարեկան հավելաճը ևս (1985-90 թթ.) անցել է իր «պիկը» և ինչպես երևում է թիվ 5.2 գծապատկերից XXI դարի առաջին կեսի ընթացքում այն ավելի փոքր կլինի, քան XX դարի կեսին:

Աշխարհի բնակչության տարեկան հավելաճի մեջ անընդհատ մեծանում է զարգացող երկրների բաժինը, որը 2025 թ., ըստ կանխատեսման, կարող է հասնել 98%-ի:

Ձարգացած երկրներում բնակչության աճը վաղուց արդեն չափազանց ցածր է: Ներկայումս աշխարհի 61 երկրում (որից մեծամասնությունը զարգացած

երկրներ են) բնական աճը կամ պարզ վերարտադրության¹ մակարդակի վրա է, կամ էլ դրանից ցածր: Ենթադրվում է, որ 2025 թ. այդպիսի երկրների թիվը կհասնի 87-ի, իսկ դրանց բնակչության բաժինն աշխարհի ընդհանուր բնակչության մեջ ներկա 4/5-ից կիջնի 2/3-ի:

Գծապատկեր 3.1
Աշխարհի բնակչության թվի աճը (մլրդ)



Սյուների հիմքի մոտ գրված թվերը ցույց են տալիս տարիների այն քանակը, որն անհրաժեշտ է բնակչության թիվը 1 մլրդ-ով ավելանալու համար: Մարդը, որպես կենդանական աշխարհի ներկայացուցիչ, բազմանում՝ ինքնավերարտադրվում է բնական (կենսաբանական) ուղիով: Ինչպես այս հանգամանքն էլ նկատի ունենալով բնակչության թվի փոփոխությունն անվանվել է **բնական վերարտադրություն**:

Սակայն բազմաթիվ ժողովրդագիրներ² «բնական վերարտադրություն» տերմինը ենթարկել են քննադատության, դրա արտասոցիալական բովանդակության համար:

Բնակչության վերարտադրությունը ոչ միայն բնակչության թվի, այլ նաև դրա կառուցվածքի անընդհատ փոփոխության ու սերունդների նորացման (հերթափոխման) գործընթաց է, որը տեղի է ունենում ծնունդների, մահերի, ամուսնությունների արդյունքում:

¹ Պարզ վերարտադրության դեպքում յուրաքանչյուր կնոջ հաշվով ծնված երեխաների թիվը կազմում է 2,1 (1000 կնոջը՝ 2100 երեխա):

² Օրինակ Ա. Կվաշան, Գ. Վալենտեյը, Ն. Վիշնևսկին, Վ. Բուտովը, Վ. Բորիսովը:

¹ 1950 թ. մահացությունը 20‰ (20 առ հազար կամ լատիներեն պրոմիլե) էր, իսկ 1990ական թվականների երկրորդ կեսին 10‰:

Անառարկելիորեն բուրդի կողմից ընդունված է այն դրույթը, որ վերարտադրությունը՝ ծնելիությունը, մահացությունը և բնական աճը կենսաբանական գործընթացներ են, սակայն միայն դրա ընդունելը մեթոդական առումով լիարժեք չէ, քանի որ զուգահեռաբար հաշվի չի առնված մարդու վերարտադրության գործընթացի վրա հենց իր՝ մարդու ազդեցությունը: Այս ազդեցությունը նկատել է դեռևս Ֆ. Էնգելը: Նա իր «Բնության դիալեկտիկա» գրքում արտահայտել է այն գաղափարը, որ մարդը որպես կենդանական աշխարհի միակ գիտակից ներկայացուցիչ, կարգավորում է իր վերարտադրությունն այնպես, ինչպես մինչ այդ նա արդեն կարգավորել է իրեն անհրաժեշտ նյութական բարիքների արտադրությունը:

Բնակչության վերարտադրության վրա ազդում են կենսաբանական, սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական բնույթի մի շարք գործոններ:

Սոցիալ-տնտեսական գործոններից են բնակչության բարեկեցության մակարդակը և դրա դրսևորում հանդիսացող կրթական ու մշակութային մակարդակները, առողջապահության զարգացումն ու մատչելիությունը, որոնց և ծնելիության մակարդակի միջև կապը հակադարձ համեմատական է: Որքան բարձր է բնակչության կենսամակարդակը, այնքան ցածր է ծնելիության մակարդակը և ընդհակառակը: Դեռևս ՅՒՆ Յոնոնում նկատել էին, որ հարուստներն ավելի քիչ երեխաներ են ունենում, քան չքավորները: Դասական տնտեսագետ ու փիլիսոփա Ա. Սմիթը XVIII դարում նշել է որ «աղքատությունը նպաստում է մարդկանց բազմացմանը»:

Ծնելիության մակարդակի վրա մեծ ազդեցություն ունեն նաև հասարակությունում կանանց հատկացված դերը, կրոնը, բնակչության սեռատարիքային կառուցվածքը, ազգային սովորույթները (ամուսնության տարիքը¹, ընտանիքում երեխաների թվի մասին մարդկանց պատկերացումը): Օրինակ, հայկական բանախյուսությունից հայտնի է, որ հին ժամանակներում ընտանիքում երեխաների իդեալական թիվը եղել է 7-ը, մինչև վերջերս՝ 4-ը, իսկ վերջին 10-15 տարվա ընթացքում այն իջել է 1-ի կամ 2-ի մակարդակի:

Եվ վերջապես անհրաժեշտ է հիշել ևս մի կարևոր դրույթ. բնակչության վերարտադրությունը, որպես բնակչության նորացման՝ սերունդների հերթափոխման գործընթաց, կապված է նաև միգրացիայի գործընթացի հետ: Միգրացիայի հետևանքով փոփոխվում է բնակչության սեռատարիքային կառուցվածքը: Որևէ տարածաշրջանի բնակչության մեջ վերարտադրողական (ռեպրոդուկտիվ) տարիքի մարդկանց բաժնի ավելացումը (նվազումը) առաջացնում է ծնելիության բարձրացում (նվազում): Եվրոպայի զարգացած երկրների բնակչության ընդհանուր աճի շուրջ 1/3-ը ապահովվում է արտերկրներից ներգաղթած երիտասարդ բնակչության շնորհիվ: Բնակչության վերարտադրության միգրացիոն պայմանավորվածության օրինակ է ՀՀ բնակչության թվի նվազումը՝ բնական թեկուզ և աննշան աճի պայմանում և բնակչության տարիքային կառուցվածքի փոփոխությունը («բնակչության ծե-

րացումը»): Ինքնին հասկանալի է, որ միգրացիան չի ազդում ամբողջությամբ վերցրած աշխարհի, ինչպես նաև միգրացիոն առումով «փակ» երկրների բնակչության թվաքանակի փոփոխության վրա:

Բնակչության վերարտադրության վրա ազդում է նաև ուրբանիզացիան: Վերջին հաշվով դրա ազդեցությամբ նվազում է ծնելիությունը:

Եվ վերջապես բնակչության վերարտադրության վրա ազդում են նաև բնական-կենսաբանական գործոնները. դրանցից են բնական միջավայրի պայմաններին կանացի և տղամարդկային օրգանիզմների հարմարվածության աստիճանը. կլիմայական պայմանների ազդեցությունը տարբեր բնական գոտիների մարդկանց սեռական հասունացման տարիքի վրա. բնական տարրերի հետ կապված հիվանդությունների (մալարիան ճահճային շրջաններում, քնախտը արևադարձային գոտում) ազդեցությունը:

Ըստ բնակչության վերարտադրության ինտենսիվության ժողովրդագրության մեջ առանձնացնում են բնակչության վերարտադրության **պարզ, նեղացված և ընդլայնված** վարքեր (ռեժիմներ): Բնակչության վերարտադրությունը անվանվում է **պարզ**, եթե սերունդների հերթափոխության գործընթացում բնակչության թվաքանակը չի փոփոխվում: Ներկայումս այդպիսի երկրներ են Ավստրիան և Շվեյցարիան:

Բնակչության վերարտադրությունն անվանվում է **նեղացված**, եթե բնական և մեխանիկական շարժերի արդյունքում բնակչության ընդհանուր թվաքանակը նվազում է: Այդպիսի երկրների թիվը 2003թ դրությամբ 19 էր: Դրանք հիմնականում եվրոպական երկրներն են, ինչպես նաև Հայաստանը, Վրաստանը և Ղազախստանը: Ժողովրդագրական ճգնաժամային այս գործընթացի՝ դեպոպուլյացիայի համաշխարհային «ռեկորդակիրներն» են Էստոնիան (-1,1%), Լատվիան և Վրաստանը (-0,9%), Ուկրաինան և Բուլղարիան (-0,8%): Հայաստանի Հանրապետության բնակչության թվաքանակի աճը -0,5 %-է:

Բնակչության վերարտադրության վարքն անվանվում է **ընդլայնված**, եթե հաջորդ սերնդի թվաքանակը մեծ է նախորդի թվաքանակից¹: Բնակչության թվի աճի տեմպերով «ժողովրդագրական պայթյունի» էպիկենտրոնը աֆրիկյան երկրներն են (Սամալի 42 %, Լիբերիա 4,0 %, Սիերա Լեոնե 3,8 %) և Աֆղանստանը՝ 3,9 %:

Ըստ բնակչության վերարտադրության գործընթացի առանձնահատկությունների ժողովրդագրության մեջ առանձնացնում են վերարտադրության **ավանդական, անցումային և ժամանակակից տիպեր**: Ավանդական (արխայան) տիպը բնութագրվում է բնակչության բարձր ծնելիությամբ, բարձր մահացությամբ և ցածր բնական աճով: Այսպիսի բնութագրերով երկրներ ներկայումս գրեթե չկան:

Վերարտադրության **անցումային տիպը** բնութագրվում է արագորեն նվազող մահացությամբ (մինչև 10 ‰), դանդաղորեն նվազող ծնելիությամբ և բարձր բնական աճով (մինչև 42 ‰):

¹ Օրինակ Հունաստանում, Իսպանիայում, Հարավային Ամերիկայի երկրների մեծ մասում աղջիկների ամուսնական նվազագույն տարիքը 12 տարեկանն է, Ադրբեջանում, Հայաստանում, Չինաստանում՝ 16 տարեկան

¹ Այս հարցին ավելի մանրամասնորեն կարելի է ծանոթանալ **В.И. Бумов, Демография, М., 2003**

Վերարտադրության **ժամանակակից տիպը** բնութագրվում է ցածր ծնելիությանը (մինչև 10 %) և ցածր մահացությանը (մոտ 10 %) և 0-ի շուրջը տատանվող բնական աճով:

Աշխարհի բնակչության մեծ մասի վերարտադրության տիպերի հերթափոխությունը կոչվում է «ժողովրդագրական անցում»:

Աշխարհագրական գրականության մեջ երբեմն աշխարհի երկրներն ըստ վերարտադրության խմբավորում են երկու տիպերի մեջ:¹ Բնակչության վերարտադրության առաջին տիպին են դասում (բնական աճը 5-10 %) Եվրոպական երկրները՝ ԱՄՆ-ը, Կանադա և տնտեսապես զարգացած այլ երկրները: Բնակչության վերարտադրության այս տիպին հատկանշական են ծնելիության, մահացության և բնական աճի ցածր ցուցանիշները: Որոշ երկրներում (Ռուսաստան, Ուկրաինա, Գերմանիա և այլն) մահացությունը նույնիսկ գերազանցում է ծնելիությանը, շատ երկրներում նույնիսկ չի ապահովվում բնակչության պարզ վերարտադրություն, որի հետևանքով բնակչության թիվը նվազում է: Այսինքն առաջանում է ժողովրդագրական ճգնաժամ դեպոպուլյացիա:

Բնակչության վերարտադրության երկրորդ տիպին բնորոշ են ծնելիության և բնական աճի շատ բարձր (20-30 %) և մահացության չափավոր ցուցանիշներ: Այն նախ և առաջ հատկանշական է Աֆրիկայի, Ասիայի և Լատինական Ամերիկայի տնտեսապես թույլ զարգացած երկրներին: Այս տիպի երկրներում է ապրում աշխարհի բնակչության մեծ մասը: Անկախություն նվաճելուց հետո լայնորեն օգտագործելով ժամանակակից առողջապահության և հիգիենայի նվաճումները այս երկրներում մահացությունը բավականին կրճատվեց: Բայց ծնելիությունը շարունակեց մնալ շատ բարձր մակարդակի վրա: Դրա հետևանքով 1950-ական թվականներից սկսած վերը նշված տարածաշրջաններում և երկրներում տեղի ունեցավ բնակչության կտրուկ աճ: Գրականության մեջ նշված երևույթը կոչվում է «ժողովրդագրական պայթյուն»:

Բնակչության աճի տարբերությունների մեծացումը ըստ երկրների և տարածաշրջանների նկատելի աշխարհագրական տեղաշարժեր առաջացրեց նաև նրա տեղաբաշխման մեջ:

Աշխարհի բնակչության մեջ հատկապես արագորեն աճում է Աֆրիկայի, իսկ ընդհակառակը, նվազում է Եվրոպայի բնակչության բաժինը:

3.3 Բնակչության արագ աճի հետևանքով առաջացած հիմնախնդիրները

Բնակչության արագ աճի հիմնախնդիրն արդեն 200 տարի է ինչ անհանգստացնում է գիտնականներին: Աստիճանաբար ընդլայնվում է բնակչության բարձր աճի հետևանքով առաջացող փոխադարձաբար միմյանց հետ կապված հիմ-

նախնդիրների ցանկը: Դրանցից են պարենային, կրթության, առողջապահության, զբաղվածության, գոյապահական հիմնախնդիրները:

Պարենային հիմնախնդիր. Գյուղատնտեսական արտադրության դանդաղ աճի և, միաժամանակ բնակչության արագ աճի հետևանքով երկրագնդի վրա միշտ էլ գոյություն է ունեցել պարենային հիմնախնդիր: Դեռևս սրանից 200 տարի առաջ գիտնականներին անհանգստացրել է հողի պտղաբերության նվազման մտայլ հեռանկարը: Դրա վրա անգլիացի տնտեսագետ Մալթուսը «կառուցեց» իր տեսությունը, որը մոտավորապես հետևյալն է. աշխարհի բնակչության թիվն աճում է երկրաչափական պրոգրեսիայով, իսկ գոյամիջոցներինը (այդ թվում և պարենային) թվաբանական պրոգրեսիայով: Մալթուսի ու նրա համախոհների կողմից որպես համաաշխարհային սովի կանխման «դրական միջոցառումներ» են համարվել այնպիսի չարիքներ, ինչպիսիք են վարակիչ հիվանդությունների համաճարակները, պատերազմները և այլն:

Մալթուսի տեսության մարդատյաց էությունն այն է, որ նա պարենային հիմնախնդրի լուծման ուղի էր համարում ոչ թե պարենի արտադրությունը պահանջվող ծավալի հասցնելը, այլ բնակչության թվաքանակի նվազեցնելը:

Նա նշում էր, որ աշխարհն իբր գերբնակեցված է, այսինքն նրա վրա ավելի շատ մարդ է բնակվում, քան երկրագունդը կարող է կերակրել:

Սակայն տեղին է հիշել, որ Մալթուսի աշխատության հրատարակման տարում երկրագնդի վրա բնակվում էր ընդամենը 1 մլրդ մարդ (տես 2.1 գծապատկերը): 2003 թ. հունվարի 1-ին երկրագնդի բնակչության թիվն արդեն հասել է 6.3 մլրդի, որից 5.4 մլրդը օգտագործում է բավարար քանակով և պահանջված բաղադրությամբ սնունդ: Ներկայումս արտադրվող պարենը մի քանի անգամ ավելի է, քան 1830 թվին: Հետևաբար կարելի է խոսել երկրագնդի ոչ թե **բացարձակ, այլ հարաբերական գերբնակեցվածության** մասին, որը տվյալ ժամանակում գյուղատնտեսական արտադրության անբավարար զարգացման արդյունք է:

Այնուամենայնիվ Մալթուսի հետևորդների մալթուսականների ու նեոմալթուսականների տեսության մեջ, անկասկած կա որոշ ռացիոնալ հատիկ: Բնակչության շարունակվող աճի հետևանքով երկրագնդի պարենային հնարավորությունները ինչ-որ ժամանակ, անկասկած կարող են անբավարար լինել բնակչության որոշակի քանակին բավարարելու համար:

Սակայն գլխավոր հարցը հետևյալն է. արդյո՞ք երկրագնդի վրա կստեղծվի այդպիսի իրադրություն: Այժմ արդեն հանդգնած ու միաժամեց կարելի է պատասխանել ոչ: Ասվածը հենվում է բնակչության վերարտադրության վերջին հատուկ ուսումնասիրությունների վրա:

ՄԱԿ-ը 1994 թ. Կահիրեում անցկացրած «Ազգաբնակչության և զարգացման միջազգային կոնֆերանսում», մանրակրկիտ ուսումնասիրվեցին աշխարհի բնակչության թվի աճի և դրական և բացասական միտումները: Դրական ցանկալի միտումն այն է, որ աշխարհի բնակչության պտղաբերության ցուցանիշը նվազում է համեմատաբար ավելի արագ տեմպերով, քան ենթադրվում էին նախկինում կազմված կանխատեսումներում:

¹ Օրինակ՝ Ա. Կվաշան, Դ. Վալենտեյը, Ն. Վիշնևսկին, Վ. Բուտովը, Վ. Բորիսովը:
62

Բացասական (մարդասիրական և ոչ թե Մաթուսական տեսակետից) միտումն այն է, որ մեծանում է բնակչության մահացության ցուցանիշը: Ինդուստրիալ (արդյունաբերականացած) երկրներում, որտեղ այդ միտումը թույլ է արտահայտված, այն բնակչության ընդհանուր ծերացման գործընթացի, իսկ Աֆրիկայի ու Հնդկական օվկիանոսի ավազանի տարածաշրջանների որոշ երկրներում ՁԻԱՀ-ի արագ տարածման արդյունք է: Սահագության ցուցանիշի աճի հետևանքով աշխարհի բնակչության թիվը 2050 թ. կկազմի ոչ թե 9,4 մլրդ (ըստ 1994թ. կանխագուշակման) այլ 8,9 մլրդ մարդ, այսինքն 0,5 մլրդ մարդով պակաս:

Կոնֆերանսում ընդգծվեց, որ ՁԻԱՀ-ը ներկայումս արդեն դարձել է աշխարհի բնակչության ժողովրդագրական իրադրությունը փոփոխող կարևոր գործոն: Դրա մասին է վկայում այն փաստը, որ յուրաքանչյուր ընդհանուր ՁԻԱՀ-ով հիվանդների թիվն ավելանում է 11 մարդով, որոնց կեսից ավելին մինչև 24 տարեկան երիտասարդներն են: Միայն 1998 թ. ընթացքում այդ հիվանդությամբ վարակվածների թիվն հասել է 40 մլն-ի:

Այդ հիվանդությունը հատկապես լայնորեն տարածվել է աշխարհի 34 երկրում, որից 29-ը գտնվում է Աֆրիկայում՝ Սահարայից հարավ: Այս տարածաշրջանում է բնակվում ՁԻԱՀ-ով հիվանդների ընդհանուր թվի 85%-ը և դրան է բաժին ընկնում մահերի 91%-ը:

Բնակչության թվաքանակի աճի հետևանքով սրվում է նաև **բնապահպանական հիմնախնդիրը**:

Գիտնականները վաղուց փորձում են պատասխանել հետևյալ հարցին. Գոյություն ունե՞ն բնակչության թվաքանակի աճի և մարդկանց կյանքի որակը որոշող էկոլոգիական սահմանագծեր: Բնակչության անսանձ աճի հետևանքով մոտ ապագայում կսպառվեն երկրագնդի մի շարք ռեսուրսների պաշարները, երկիր մոլորակը կաղտոտվի արտադրական և կենցաղային թափոններով, կնվազի մեկ շնչին ընկնող պարենի քանակը և կառաջանան անցանկալի այլ հետևանքներ: Ձեկույցներում կարծիք էր հայտնվում, որ անհրաժեշտ է համագործակցել թույլ զարգացած երկրների հետ, նրանց տնտեսությունը զարգացնելու և ոչ թե սոսկ մարդասիրական օգնություն ցուցաբերել նրանց:

Սակայն այդ հարցին որոշակիորեն պատասխանելը բավականին դժվար է, քանի որ մի կողմից անընդհատ փոխվում են բնական պայմանները, իսկ մյուս կողմից ապառման ու բաշխման մոդելները:

Գիտնականների հաշվարկներով երկրագնդի բնական ռեսուրսները հնարավորություն են տալիս 11-ից 16 մլրդ մարդու բնակեցման համար: Սակայն աշխարհի բնակչության աճի տեմպերի տրամաբանորեն սպասվող նվազումը, առավել ևս արդեն նկատվող կրճատման միտումները, հուսադրում են, որ երկրագնդի բնակչության թիվը երբեք չի հասնի այդ սահմանին:

Բնակչության թվաքանակի աճին զուգընթաց աճում են նաև բնական ռեսուրսների օգտագործման ծավալները, շրջակա միջավայր արտազատվող վնասակար նյութերի քանակը, այսինքն մեծանում է շրջակա միջավայրի վրա ներգործող այսպես կոչված «էկոլոգիական ճնշումը»: Մասնավորապես, ապագայում ավելի

կկրճատվի անտառների տարածքը, կանհետանան բույսերի ու կենդանիների շատ տեսակներ այսինքն կնվազի կենսաբազմազանությունը, կբարձրանա երկրագնդի ներքնոլորտի միջին ջերմաստիճանը: ՄԱԿ-ին կից Կլիմայի փոփոխության միջպետական խմբի գիտնականների կարծիքով «ջերմոցային էֆեկտ» առաջացնող գազի մթնոլորտ արտազատումը շարունակվելու դեպքում 2100 թ. երկրագնդի միջին ջերմաստիճանը կարող է բարձրանալ 1-ից 3,5°C-ով, որի հետևանքով համաշխարհային օվկիանոսի ջրի մակարդակը կբարձրանա, համապատասխանաբար 15 և 95 սմ-ով: Դրա արդյունքում ծավափնյա գոտու զգալի տարածքներ, այդ թվում ամենախոշոր 13 քաղաքների տարածքը կծածկվի ջրով և հարյուր միլիոնավոր մարդիկ ստիպված կլինեն փոխադրվել ցամաքի ներքին տարածքները: Բացի այդ օվկիանոսի աղի ջրով կաղտոտվեն առափնյա գոտու ստորերկրյա ջրերն ու հողահանդակները, լրացուցիչ հիմնախնդիրներ առաջադրելով մարդկությանը:

Բնակչության թվաքանակի աճին զուգահեռ աճում է մթնոլորտի աղտոտման աստիճանը: Մթնոլորտի աղտոտման հետևանքով առաջացող մահերը (տարեկան 2,7 մլն մահ) մարդկանց մահվան պատճառների շարքում գլխավորներից են:

Ջրային ու հողային ռեսուրսների օգտագործման միտումները: Ընդհանրապես երկրագնդի և հատկապես Աֆրիկայի Սահարայից հարավ գտնվող երկրների բնակչության արագ աճի հետևանքով սպառվում են ջրային ռեսուրսները, կրճատվում է բնակչության մեկ շնչին բաժին ընկնող գյուղատնտեսական մշակաբույսերի տակ դրված տարածքը: Հաշվված է, որ այն երկրները, որոնց բնակչության մեկ շնչին ընկնող մշակած ցուցանիշը 0,03 հա-ից պակաս է, ստիպված են հացահատիկի պակասող քանակը ներկրել այլ երկրներից (Հայաստանի Հանրապետությունում այդ ցուցանիշը 0,15 հա/մարդ է):

Պարենի և ջրային հիմնախնդիրներն էլ ավելի կսրվեն XXI դարում: Եթե ներկայումս ջրի սուր կարիք զգացող երկրներում բնակվում է 430 մլն մարդ (երկրագնդի բնակչության 8%-ը), ապա ըստ ՄԱԿ-ի փորձագետների կանխագուշակման, XXI դարի կեսին այդ թիվը կհասնի 2 մլրդի (երկրագնդի բնակչության 23%-ի): Այդ պայմաններում իրադրությունն էլ ավելի կսրվի ջուրը կոծումալ-կենցաղային և հատկապես, ոռոգման ու էլեկտրաէներգետիկ նպատակներով օգտագործելու համար: Չեն բացառվի երկրների միջև բախումները: Այդպիսի սուր մրցակցություն արդեն իսկ գոյություն ունի Եփրատ և Տիգրիս գետերի ջրերի օգտագործման հարցում Թուրքիայի, Սիրիայի ու Իրաքի միջև, Արաքս գետի ջրերի օգտագործման հարցում Հայաստանի, Թուրքիայի ու Ադրբեջանի միջև, Նեղոս գետի ջրերի օգտագործման հարցում Եգիպտոսի ու Սուդանի միջև:

Նման սուր հիմնախնդիր կառաջանա Աֆրիկայում՝ Սահարայից հարավ գտնվող երկրներում:

ՄԱԿ-ի ջրաբան գիտնականների կարծիքով ջրի հիմնախնդիր առաջանում է այն երկրներում, որտեղ 1 շնչի հաշվով նորացվող ջրի տարեկան քանակը փոքր է 1700 մ³-ից (ՀՀ-ում այդ ցուցանիշը 2236 մ³ է):

3.4 Բնակչության տարիքային կառուցվածքը Աշխատանքային ռեսուրսներ

Որպես գլխավոր արտադրողական ուժ կարևոր է բնակչության այն մասը, որը տվյալ ժամանակում զբաղված է տնտեսության որևէ ոլորտում կամ էլ պատրաստ է աշխատելու: Բնակչության այդ մասը **տնտեսապես ակտիվ բնակչությունն է**, որը աշխարհի երկրների մեծ մասում կազմում է աշխատունակ տարիքի (16-ից մինչև 59 տարեկան, կանանց և 16-ից 64 տարեկան տղամարդկանց) բնակչությունն մեծ մասը (տղամարդկանց շուրջ 95%-ը և կանանց շուրջ 50%-ը): Ներկայումս այդ տարիքը 16-ից 63-ն է և՛ տղամարդկանց և՛ կանանց համար:

Աշխատանքային ռեսուրսները բնակչություն աշխատանքային ներուժն են, բնակչություն այն մասը, որն ունի տնտեսության մեջ աշխատելու համար անհրաժեշտ կրթական մակարդակ, ֆիզիկական զարգացում և առողջական վիճակ:

Աշխատանքային ռեսուրսները ներառում են աշխատունակ տարիքի բնակչությունը, (առանց I և II կարգի հաշմանդամների, արտոնյալ կարգով թոշակ ստացողների ու կենսաթոշակ ստացող թոշակառուների), ինչպես նաև ոչ աշխատունակ տարիքի ավագ և երիտասարդ բնակչություն այն մասը, որը զբաղված է հասարակական արտադրության մեջ:

Աշխատանքային ռեսուրսների չափը կախված է հիմնականում բնակչության թվից, վերարտադրության վարքից (ռեժիմից) և ժողովրդագրական կառուցվածքից:

Որպես անցյալում (1950-60 թթ. հետո) աշխարհի բնակչության բարձր ծնելիության ցուցանիշի հետևանք, ներկայումս բոլոր աշխարհամասերում բնակվող մարդկանց, այդ թվում նաև երիտասարդ սերնդի մարդկանց, թվաքանակը ամենամեծն է:


Եվ զարգացած և զարգացող երկրներում բնակչության բուժսպասարկման էական բարելավման շնորհիվ երկարում է կյանքի տևողությունը և ավելանում է տարիքավոր մարդկանց թիվն ու բաժինը, այսինքն բնակչությունը «ծերանում է»: Հայաստանի Հանրապետությունում այդ գործընթացն ավելի ինտենսիվորեն է դրսևորվում, քանի որ այն ուժեղացնում է բնակչության բնական աճի կրճատման և երիտասարդ տարիքի մարդկանց մեծամասշտաբ արտագաղթի հետևանքով:

1950-ից մինչև 2000 թ. աշխարհի բնակչության տարիքային կազմում մինչև 14 տարեկան մարդկանց տեսակարար կշիռը 35%-ից իջել է մինչև 31%-ի, և դրա փոխարեն աճել է աշխատունակ տարիքի բնակչության բաժինը (գծապատկեր 3.2): Ձարգացող երկրներում զգալիորեն աճել է աշխատունակ տարիքի մարդկանց բաժինը և տեսանելի ապագայում այն էլ ավելի մեծ չափով կաճի: Իսկ զարգացած երկրներում աշխատունակ տարիքի բնակչության բաժինը գրեթե չի աճում, դեռ ավելին, ապագայում այն նույնիսկ կնվազի: Սակայն դրա փոխարեն բնակչության կառուցվածքում մեծ չափով ավելանում է ծերերի տեսակարար կշիռը: Այսպես, 2025 թ. զարգացած երկրների յուրաքանչյուր չորրորդ բնակիչը կլինի ավելի քան 60 տարեկան:

Աշխատունակ տարիքի բնակչության աճի հետևանքով զարգացող երկրներում առաջացել են, իսկ հետագայում էլ ավելի կարվեն, տարբեր բնույթի հիմնախնդիրներ: Ձարգացող երկրներում առավել սուր հիմնախնդիրը արագ աճող աշխատանքային ռեսուրսների լրիվ զբաղվածության ապահովելն է: Վերջին տասնամյակներում մշակող արդյունաբերության զարգացման տեմպերը թույլ զարգացած երկրներում բավականին բարձր են:

Գծապատկեր 3.2

Բնակչության տարիքային կառուցվածքի փոփոխությունը (1950-2025 թթ., %-ով)



Այսպես, 1980-90 թթ. մշակող արդյունաբերության աճի միջին տարեկան տեմպը կազմել է 5, իսկ 1990-96 թթ. 7%: Համեմատության համար ասենք, որ զարգացած երկրներում այդ ցուցանիշները կազմել են, համապատասխանաբար, 2.8 և 1.2%:

Ձարգացած երկրներում տնտեսության դանդաղ է աճը, սակայն բնակչության էլ ավելի դանդաղ աճի պայմաններում, հանգեցնում է աշխատանքային ռեսուրսների պակասի, որը լրացվում է զարգացող երկրներից ուղղված աշխատավորների հոսքով (տես բնակչության միգրացիայի վերաբերյալ բաժինը):

Բնակչության տարիքային կառուցվածքում աշխատունակ տարիքի մարդկանց հարաբերությունը մինչև հետաշխատանքային երիտասարդ և ավագ տարիքի մարդկանց, կարևոր ցուցանիշ է աշխատունակ բնակչության ուսերին ընկնող խնամքի ծանրությունը զնահատելու համար:

Աշխարհի բնակչության ռասայական կազմը

Ձարգացած երկրներում խնամարկյալ (խնամքի տակ գտնվող երտասարդ կամ ծեր մարդկանց) և աշխատունակ տարիքի բնակչության հարաբերությունը կազմում էր շուրջ 2.04, իսկ թույլ զարգացած երկրներում 1.3: Պա մշանակում է, որ զարգացած երկրներում մեկ խնամարկյալին սոցիալապես ապահովում է 2, իսկ զարգացող երկրներում 1.3 աշխատող¹:

Աշխատանքային ռեսուրսների ուսումնասիրության աշխարհագրական մյուս ասպեկտը դրանց զբաղվածության տարածաշրջանային տարբերություններն են, որոնք պայմանավորված են այդ տարածաշրջանների երկրների արտադրողական ուժերի զարգացման մակարդակով, տնտեսության ճյուղային կառուցվածքով, բնակչության ժողովրդագրական առանձնահատկություններով:

Ձարգացած երկրներում զբաղվածների մեծ մասը բաժին է ընկնում ծառայությունների ոլորտին: Գիտատեխնիկական առաջադիմության նվաճումների ներդրման շնորհիվ համալիր մեքենայացվում, ավտոմատացվում և էլեկտրոնացվում է արտադրությունը (և արդյունաբերական և գյուղատնտեսական) և դրանցից ազատված աշխատուժը կիրառություն է գտնում արագ աճող բազմազան ծառայություններում:

Թույլ զարգացած երկրներում, ընդհակառակը, զբաղվածների մեծ մասը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը հիմնականում ձեռքի աշխատանքի վրա հիմնված ճյուղերին: Այդ երկրներում ծառայությունների ոլորտն ըստ ամենայնի զարգացած չէ, որի պատճառով ցածր է դրա բաժինը ընդհանուր զբաղվածների թվում:

Աշխատանքային ռեսուրսների աշխարհագրության մյուս կարևոր ասպեկտը դրանց օգտագործման աստիճանի տարածաշրջանային տարբերություններն են:

Ընդհանուր առմամբ աշխարհի բոլոր երկրներում գոյություն ունի գործազրկություն, որի մասշտաբները որոշելը և տեսականորեն և գործնականորեն շատ բարդ է²:

Բարձր զարգացած երկրների աշխատանքի շուկայում իրադրությունը շատ բարդ է և փոփոխական: Այստեղ միաժամանակ գոյություն ունի և որակավորում չպահանջող աշխատուժի պակաս և որակավորում ունեցողների գործազրկություն:

Օտարերկրյա աշխատավորների մեծ հոսքի հետևանքով հաճախ իջնում է աշխատուժի արժեքը (վարձատրության չափը), ինչն առաջ է բերում զարգացած երկրների աշխատավորների դժգոհությունը: Նրանց պահանջով երկրում արգելվում է օտարերկրացիների պաշտոնական թույլատրված աշխատանքը:

¹ Եթե նկատի ունենանք նաև զարգացած երկրներում աշխատողի բարձր եկամուտը, կարելի է պատկերացնել թե ինչքան մեծ է տարբերությունը զարգացած և զարգացող երկրների սոցիալական ապահովության բնագավառում:

² Օրինակ ԱՄՆ-ում իր մասնագիտությամբ աշխատանք ստանալու նպատակով բորսայում որպես գործազուրկ հաշվառված մասնագետը երբեմն իրականում աշխատում է այլ մասնագիտությամբ: Գոյություն ունեն նաև «թաքնված» և մասնակի գործազրկություն:

Աշխարհի բնակչությունն ի թիվ մի շարք տարբերակիչ հատկանիշների բաշխվում է նաև ըստ ռասայական հատկանիշների: Աշխարհի մարդկանց առանձին խմբերի միջև էական տարբերություններ նախ և առաջ արտահայտվում են արտաքին տեսքով, որը մարդկանց յուրատեսակ ռեակցիան է շրջակա բնական միջավայրին: Այստեղից հետևում է, որ մարդկանց ռասայական շատ հատկանիշներ ունեն աշխարհագրական զոնայական տարածում և կապված են սոցիալ-տնտեսական պայմանների, այդ թվում նաև սննդի տարբերությունների հետ:

Կարևոր մի շարք հատկանիշների՝ մաշկի գույնի, գլխի ձևի, դիմագծերի, մազային ծածկույթի բնույթի և մարմնի համամասնությունների հիման վրա մարդկությունն ընդունված է բաժանել ռասաների:

Ռասաները ընդհանուր ծագմամբ, ժառանգաբար փոխանցվող արտաքին ֆիզիոլոգիական ու ձևաբանական, ինչպես նաև որոշ ներքին «թաքնված» հատկանիշներով, օրինակ՝ արյան խմբով իրար նման մարդկանց պատմականորեն ձևավորված խմբերն են:

Ներկայումս առանձնացվում են 4 հիմնական ռասաներ՝ եվրոպեոիդ, մոնղոլոիդ, նեգրոիդ և ավստրալոիդ: Ռասաները, նախ և առաջ, կենսաբանական կատեգորիա են և դրանով իսկ որակապես տարբերվում են բոլոր այլ սոցիալական ընդհանրություններից՝ ազգային, կրոնական, լեզվական և այլն: Մշակույթի, քաղաքակրթության զարգացման, ինչպես նաև տարբեր ժողովուրդների միջև կենսաբանական փոխազդեցության ուժեղացմանը զուգընթաց ռասայական արեալների սահմաններն աստիճանաբար վերանում են, առաջանում են ռասայական հատկանիշների նոր, տեղական զուգակցություններ: Աստիճանաբար մարում է նաև երկրների կառավարությունների, ինչպես նաև նույնիսկ գիտության հետաքրքրությունը մարդու ռասայական հատկանիշների նկատմամբ:

Աշխարհի բնակչության ազգային կազմը

Երկրագնդի վրա բնակվող մարդիկ կազմում են զարգացման տարբեր մակարդակների հասած էթնիկ ընդհանրություններ՝ **ցեղեր, ազգություններ և ազգեր**, որոնք պարզեցված ու ընդհանրացված ձևով անվանում են ժողովուրդներ:

Էթնիկ ընդհանրությունը (էթնոսը) մարդկանց սոցիալական խմբավորման պատմականորեն առաջացած ձև է, որին բնորոշ են տարածքի, մշակույթի (հիմնված ընդհանուր լեզվի վրա), կենցաղային-տնտեսական առանձնահատկությունների միասնականությունը, ինչպես նաև իր միասնականության և այլ նմանատիպ ձևավորումներից տարբեր լինելու գիտակցությունը, այսինքն՝ ինքնագիտակցությունը և ինքնակոչումը:

Պետք է նշել, որ թվարկված բաղադրիչներից ոչ մեկը պարտադիր և բավարար պայման չէ տվյալ ժողովուրդը մյուսից առանձնացնելու համար: Մի

դեպքում գլխավոր դերը պատկանում է լեզվին, մեկ այլ դեպքում՝ տարածքին, երրորդում՝ կրոնին և այլն:

«Աշխարհի ժողովուրդները» հիմնարար աշխատությունում նշված է, որ «երբեմն դժվար է որոշել այն հարցը, թե իրենից ինչ է ներկայացնում բնակչության այս կամ այն խումբը, այն ժողովուրդ (էթնոս) է, ժողովրդի մի մաս (ենթաէթնոս, ազգագրական խումբ) է, ժողովուրդների խումբ (մետաէթնիկական ընդհանրություն) է կամ էլ ինչ-որ այլ տիպի (քաղաքական, ռասայական, կրոնական և այլ) ընդհանրություն¹:

Աշխարհի ժողովուրդների թվի աճի պատճառներից մեկը դրանց սեպարացիան է (անջատումը) և նոր էթնիկ ընդհանրության ձևավորումը (օրինակ՝ ֆրանկոկլանադաքիներ, անգլոպատրալաքիներ):

Ներկայումս տարբեր գիտնականներ համարում են, որ երկրագնդի վրա կան 2 (որոշ տվյալներով 3-ից 4) հազար ժողովուրդ և գրեթե այդքան էլ լեզու: Դրանցից առավել տարածված 13 լեզվով (չինարեն, անգլերեն, հինդի, իսպաներեն և այլն) խոսում են աշխարհի բնակիչների շուրջ 2/3-ը:

Աշխարհի բնակչության կրոնական կազմը

Կրոնը միշտ էլ կարևոր դեր է կատարել մարդկանց անձնական և սոցիալական կյանքում ու միջազգային հարաբերություններում, էթնոսների ձևավորման, մշակույթի և պետականության կայացման գործում: Կրոնի դերը հատկապես մեծ է թույլ զարգացած երկրներում, ինչպես նաև զարգացած երկրների քաղաքական կուսակցությունների գործունեության մեջ: Իր բնույթով համաշխարհային կրոններից հատկապես մեծ դեր է խաղում իսլամը (մահմեդականությունը), իսկ քրիստոնեությունն ու բուդդայականությունը ներկայումս համեմատաբար «պասիվ» կրոններ են:

Աշխարհի քաղաքակրթությունները

20-րդ դարում սոցիալ-տնտեսական աշխարհագրության նշանակալի միտումներից մեկը բնակչության ռասայական, կրոնական, ազգային, լեզվական և սեռական բնութագրերի աստիճանական փոխարինումն է առավել ընդհանուր՝ քաղաքակրթական բնութագրով: Քաղաքակրթությունն առավել խոշոր տարածքային կազմավորում է, որի մեջ որպես ամբողջի մասեր մտնում են աշխարհի պետությունները:

Քաղաքակրթությունն ըստ Ն. Դանիլևսկու, մարդկանց խոշոր մշակութապատմական ընդհանրություն է, որը ձևավորվել է միայն տվյալ խմբի մարդ-

Կանց բնորոշ ընդհանուր արժեքների հիման վրա:

Ըստ Ֆ. Բրոդելի «քաղաքակրթությունը տարածք է, մշակութային գոտի, մշակութային բնութագրերի և երևույթների ամբողջություն»:¹ Ինչպես երևում է վերը նշված սահմաններում քաղաքակրթության առանձնացման գլխավոր չափանիշ է համարվում մշակույթը: Այսպիսի մոտեցումն ինքնին հասկանալի է, քանի որ էթնիկական խմբերը, ազգերը, կրոնական խմբերը, նույնիսկ առանձին գյուղերը միմյանցից տարբերվում են մշակութային բնութագրով: Հանթինգթոնն այս առումով նշել է, որ Հարավային Իտալիայի գյուղի մշակույթը տարբերվում է Հյուսիսիային Իտալիայի գյուղի մշակույթից, բայց դրանք երկուսն էլ պատկանում են իտալական մշակույթին, որը որպես ամբողջություն իր հերթին տարբերվում է գերմանական գյուղերի մշակույթից: Իսկ ավելի բարձր մակարդակով համեմատելիս ակնհայտ կրառնա, որ եվրոպական ընդհանրություններն իրենց հերթին միավորում են մշակութային այնպիսի բնութագրեր, որոնք այդ ընդհանրությունները սահմանազատում են չինական կամ հնդկական հանրությունների մշակութային բնութագրերից: Սակայն չինացիները, հինդուսները և Արևմուտքի մարդիկ չեն կազմում մեկ համընդհանուր մշակութային հանրություն², մեկ համընդհանուր քաղաքակրթության մասերը: Դրանք ներկայացնում են առանձին-առանձին քաղաքակրթություններ, որոնցից յուրաքանչյուրը որոշվում է օբյեկտիվ այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են կրոնը, լեզուն, պատմությունը, մարդկանց սովորությունները, հասարակական ինստիտուտները, ինչպես նաև անհատի սուբյեկտիվ ինքնորոշումը: Այս առթիվ պետք է նշել, որ գոյություն ունեն անհատի ինքնորոշման տարբեր մակարդակներ: Օրինակ՝ Հռոմի բնակիչը կարող է ինքնորոշվել որպես հռոմեացի, կաթոլիկ, քրիստոնյա, եվրոպացի, արևմտյան մարդ: Այսպիսով քաղաքակրթությունն ինքնորոշման առավել ընդգրկուն մակարդակն է, որի հետ մարդը կարող է ինքն իրեն նույնացնել:

Որոշ գիտնականներ էլ (Թոյնբի, վեբեր, Հանթինգթոն) քաղաքակրթություն ստեղծող համակարգի դերը վերագրել են կրոնին, որը դիտվում է որպես մարդկանց նորմատիվային արժեքներն ու հոգևոր աշխարհի յուրահատկությունը որոշող համակարգ: Այս առնչությամբ արժե հիշել, որ ինչպես նշել է Հանթինգթոնը՝ «սրբազան ստերեոտիպերն առավել պահպանողական ու ինտերցիոն են, այսինքն ավելի փոքր չափով են ենթակա փոփոխությունների, քան ասե՛նք քաղաքական նորմերը»: Նա նաև նշել է, որ «կարելի է լինել կիսաարաբ, երկու երկրի քաղաքացի, բայց անհնար է լինեն կիսակաթոլիկ, կիսամուսուլման»:² Համաձայն որոշ գիտնականների տեսության, քաղաքակրթությունը կենդանի օրգանիզմի նման ունի իր կենսաբանական ռիթմը, որը որոշում է նրա ներքին զարգացման հիմնական փուլերը. ծնունդ, աճ, ճաք, անկում և քայքայում:

Քաղաքակրթության ծննդին նպաստում են առավել դժվար պայմանները: Այսպես մեծ չինական քաղաքակրթությունն առաջացել է ոչ թե հարաբերականորեն

¹ Народы мира. Историко - этнографический справочник. М., «Советская Энциклопедия». 1988, с.5

¹ Braudel F. History of Civilization. New. York, 1994

² Хантингтон С. Столкновение цивилизаций 1994/Полис

հանգիստ Յանցզի, այլ անհնազանդ Յունիե գետի հովտում: Արևմտյան կիսագնդի քաղաքակրթությունն առաջացել է ժամանակակից Չիլիի ոչ թե չափավոր կլիմայական պայմաններում, այլ Կենտրոնական Անդերի այն շրջանում, որտեղ շատ սուր է ոռոգովի հողագործության կազմակերպման հիմնախնդիրը:

Ռուս աշխարհագետ Լ. Մեչնիկովը «Քաղաքակրթությունը և մեծ պատմական գետերը» (1995) գրքում աշխարհագրական չափանիշներով առանձնացրել է համաաշխարհային մարդկանց մշակույթի երեք ժամանակաշրջան. գետային, միջերկրածովային և օվկիանոսային:

Տարբեր գիտնականներ մարդկության 40 հազար տարվա պատմության ժամանակահատվածում առանձնացնում են տարբեր թվով (8-ից 33) քաղաքակրթություններ:

Առավել լայն ճանաչում է ստացել Կ. Մելկոյի 12 քաղաքակրթությունների ընդունումը¹, որոնցից 7-ը վերացած են, իսկ 5-ը շարունակում են գոյատևել: Վերացած քաղաքակրթություններն են Միջագետքի, Եգիպտական, կրետական, դասական, բյուզանդական, միջամերիկյան (մեսոամերիկյան) և Անդյան, իսկ գոյատևողներն են. չինական, ճապոնական, հինդուիստական, իսլամական և արևմտյան: Նրա կարծիքով կարելի է ավելացնել երկու պոտենցիալ քաղաքակրթություն՝ աֆրիկյան և լատինաամերիկյան:

Մի փոքր այլ դասակարգում են տվել Յու. Գլադկին և Ա. Զիստոբակը²: Նրանք առանձնացրել են 8 քաղաքակրթություններ, որոնցից 6-ը՝ ճապոնականը, չինականը, հինդուիստականը, լատինաամերիկյանը, իսլամականը, արևմտյանը (արևմտաեվրոպականը) համընկնում են Կ. Մելկոյի դասակարգմանը իսկ ավելացված են նեգրաաֆրիկյան և սլավոնական-ուղղափառ քաղաքակրթությունները:

Աշխարհագրական գիտության մեջ դեռևս հստակ չէ ոչ միայն քաղաքակրթությունների քանակի, այլ նաև դրանց տարածքային սահմանների հարցում: Քաղաքակրթությունների սահմանները երբեմն շատ թույլ են արտահայտվում այն պատճառով, որ ժողովուրդների մշակույթները փոխներթափանց և միախառնվում են: պատմության ընթացքում մարդիկ երբեմն փոխում են իրենց պատկանելիությունը այս կամ այն քաղաքակրթությանը: Այդուհանդերձ քաղաքակրթությունները հիմնականում մնում են իրենց սահմաններում (թեկուզ և թույլ արտահայտված): Քաղաքակրթությունների շփման գոտիներում (ըստ Լ. Ցիմբուրսկու և Ս. Խատունցևի) առաջանում են «Քաղաքակրթական միջնաշխարհներ» կամ «միջքաղաքակրթական գոտիներ»: օրինակ, Կովկասի մասին Լ. Ցիմբուրսկին գրել է «Նայենք Կովկասի մշակութաաշխարհագրական քարտեզին: Այս տարածաշրջանի համար մինչյանցից անկախ տարբերակիչ հատկանիշների հիման վրա ընդհանուր մատրիցայի կառուցումն անօգուտ գործ է, քանի որ մեր առջև են հստակ էթնոկրոնական տիպերի միջնաշերտեր (լիմիտրոֆներ), ադրբեջանցի-չիիթներ, հայ-մոնոֆիսիթներ, Յուսիսային Կովկասի լեռնցի-սունիթներ, քարթվել-ուղղափառներ: Այս խճանկարի

խայտաբղետությունն էլ ավելի խորացավ, երբ 17-րդ դարում Կենտրոնական Ասիայից Մերձկասպյան տափաստաններում վերաբնակվեցին լամաիստ-բուդդայականները՝ կալմիկները»¹

3.5 Բնակչության տարաբնակեցումը

Մինչև 20-րդ դարի վերջին տասնամյակները գիտական գրականության մեջ երկրագնդի մակերևութով բնակչության տարածական բաշխումն արտահայտում էին **տեղաբաշխում** տերմինով: Սակայն աշխարհագրության տեսության զարգացման ընթացքում տեղաբաշխում տերմինին զուգահեռ, կամ այդ տերմինի փոխարեն բնակչության տարածական բաշխումն սկսեցին արտահայտել նաև **տարաբնակեցում** (տարածական բնակեցում) տերմինով:

Բնակչության տարաբնակեցումը որևէ տարածքում բնակչության տարածական բաշխման և վերաբաշխման գործընթացն է և դրա արդյունք հանդիսացող բնակավայրերի ցանցը: Այսպիսով, ինչպես ակնհայտորեն երևում է, տարաբնակեցումն ավելի մեծ բովանդակություն ներկայացնող աշխարհագրական հասկացություն է, քան բնակչության տեղաբաշխումը, որն ընդգրկվում է սարաբնակեցում հասկացության մեջ:

Տարաբնակեցման տարրերն են՝ քաղաքային և գյուղական բնակավայրերը: Դրանց առանձնացման համար աշխարհի տարբեր երկրներում օգտագործում են տարբեր ցուցանիշներ, որոնցից առավել կարևորներն են՝ մարդաշատությունը, գործառույթները, կառուցապատման խտությունը, բարեկարգման աստիճանը, վարչական կարգավիճակը:

Տարաբնակեցման հիմնական ձևերն են՝ խմբային և ցրված(դիսպերս): Խմբային քաղաքային տարաբնակեցման ձևերից են քաղաքային ագլոմերացիաները:

Ցրված գյուղական տարաբնակեցման ձևերից է ֆերմերային տարաբնակեցումը, որը լայն տարածում է ստացել ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում և կապիտալիստական ազարարային հարաբերություններ ունեցող այլ երկրներում

Բնակչության տեղաբաշխումը որոշակի ժամանակահատվածում բնակչության աշխարհագրական տարածման ու բնակավայրերի ցանցի ձևավորման գործընթացի արդյունք է: Բնակչության տեղաբաշխման ցայտուն արտահայտման միջոցները բնակչության խտության քարտեզները, քարտեզադիագրամներն ու քարտեզագրամներն են (Տես հավելվածի քարտեզասխեման):

Երկրագնդի բնակչության ժամանակակից տեղաբաշխումը դրա տարածքի բնակեցման և տնտեսական յուրացման երկարատև գործընթացի արդյունք է: Երկրների և շրջանների բնակեցումը պայմանավորված է դրանց բնական, պատմական և տնտեսական պայմանների տարբերություններով և այդ պատճառով էլ մարդ-

¹ Мироненко Н., Страноведение, М., 2001., с.79

² Гладкий Ю. Н., Чистобаев А. И. Регионоведение. М., 2000.

¹ Цымбурский Б. Л. Россия-Земля за Великим Лимитрофом: цивилизация и ее геополитика. М., 2000, с. 69-70

կության պատմության տարբեր ժամանակաշրջաններում ընթացել է անհավասարաչափ կերպով:

Երկրագնդի բնակչության տեղաբաշխման վրա ազդում են բազմաթիվ գործոններ. Դրանք են՝

ա) տնտեսական (տնտեսության ճյուղային կառուցվածքը, տնտեսության զարգացման մակարդակը և մասնագիտացման բնույթը, արտադրության տեղաբաշխումը, տրանսպորտային ուղիները):

բ) բնական (ռելիեֆը, հողերը, օգտակար հանածոները, կլիման, ջրագրական ցանցը և այլն):

գ) ժողովրդագրական (բնակչության բնական աճը, միգրացիան):

դ) պատմական (բնակեցման պատմական առանձնահատկությունները)

Բնակչության տեղաբաշխման կարևոր գործոններից է աշխարհագրական դիրքը՝ մասնավորապես տեղանքի բացարձակ բարձրությունը և ծովից ունեցած հեռավորությունը:

Բնակչության տեղաբաշխման վրա բնական պայմանների ուղղակի (անմիջական) ազդեցությունն ակնհայտորեն դրսևորվում է միայն բնակավայրերի կամ բնակելի զանգվածների կառուցապատման համար հրապարակների ընտրության գործում: Այս առումով պետք է նշել, որ արտադրողական ուժերի զարգացման մակարդակի և տեխնիկայի հզորության աճի շնորհիվ այդ ազդեցությունը փոքրանում է և աստիճանաբար գերիշխող (դոմինանտ) են դառնում սոցիալ-տնտեսական գործոնները: Այս երևույթը դեռևս 20-րդ դարի սկզբին նկատել է ռուս ականավոր աշխարհագրագետ Ա. Ի. Վոյեյկովը: Նա նշել է, որ «Բնակչության բաշխման գործում վճռական գործոնը ոչ այնքան մարդու շրջակա բնությունն է, որքան հենց ինքը՝ մարդը»¹:

Երկայուն տնտեսության զարգացման մակարդակը, արտադրության տեղաբաշխման բնույթն ու մասնագիտացումը և այլ սոցիալ-տնտեսական գործոններ որոշիչ դեր են խաղում և զգալի չափով պայմանավորում են բնակչության տեղաբաշխման անհամաչափությունը երկրագնդում:

Տնտեսության առանձին ճյուղերի, օրինակ, մշակող արդյունաբերության և բրինձի մշակության զարգացումը պայմանավորում են տվյալ տարածքում բնակչության մեծ կենտրոնացում և բարձր խտություն, իսկ լեռնահանքային արդյունաբերության և էքստենսիվ գյուղատնտեսության զարգացման շրջաններն, ընդհակառակը, առանձնանում են բնակչության ապակենտրոնացմամբ և, որպես կանոն, բնակչության ցածր խտությամբ:

Աշխարհի բնակչության բաշխումն ըստ տարածաշրջանների 1960-2003 թթ.

	Բնակչության թվաքանակ (մլրդ)		Նույնը տոկոսային հարաբերությամբ	
	1960թ.	2003թ.	1960թ.	2003թ.
Աշխարհայր թվում	3.00	6.30	100	100
Թույլ զարգացած տարածաշրջաններայր թվում	2.10	5.10	70	80,4
Աֆրիկա	0.3	0.85	10	12.9
Ջարգացած տարածաշրջաններայր թվում	0.9	1.22	30	19.6
Եվրոպա	0.6	0.73	18	12.0

Բնակչության տարաբնակեցման վրա **ժողովրդագրական գործոնի** ազդեցությունն արտահայտվում է երկրագնդի առանձին տարածաշրջանների բնակչության բաժնի ավելացումով կամ նվազումով, որն, ինչպես հայտնի է, վերարտադրության հիմնական ցուցանիշների տարբերության արդյունք է: (Այն նաև բնակչության զաղթերի արդյունք է, որի մասին կխոսվի հաջորդ բաժնում):

20-րդ դարի վերջին 40 տարում աշխարհի բնակչության թվաքանակի կրկնակի աճի հետ միաժամանակ փոփոխվել է նաև բնակչության աշխարհագրական բաշխումը (աղյուսակ 3.2):

Բնակչության տարաբնակեցումը, զգալի չափով պայմանավորված լինելով արտադրության կառուցվածքով և տեղաբաշխումով, ներկայումս սկսում է ավելի ակտիվ դեր խաղալ, և զգալի ազդեցություն թողնել արտադրության տեղաբաշխման և զարգացման վրա: Այդ ազդեցությունն արտահայտվում է նրանում, որ բնակչության արդեն ձևավորված կուտակումները դեպի իրենց են ձգում որոշ արտադրություններ և, հետևաբար, ազդում են դրանց տեղաբաշխման վրա: Տարածաշրջանային մակարդակով այդ ազդեցության վառ օրինակ է Արևմտյան Եվրոպան, որի բնակչության խոշոր կուտակումը դեպի իրեն է ձգել շատ, այդ թվում նաև այնպիսի արտադրություններ, որոնք գրեթե զուրկ են հումքային բազայից (օրինակ՝ սև մետաղաձուլությունը, քիմիական ու նավթամշակման արդյունաբերությունները):

Տեղական մակարդակով այդ ազդեցության օրինակ կարող է ծառայել Երևան քաղաքը: Կենտրոնացնելով հանրապետության բնակչության շուրջ 1/3-ը, Երևանը դեպի իրեն է ձգել նույնիսկ այնպիսի արտադրություններ, որոնք ոչ միայն չունեն հումքային բազա, այլ Երևանի հետ որևէ առընչություն (օրինակ՝ ռետին-տեխնիկական իրերի ու համակցված կերերի գործարանները):

Բնակչության արդեն ձևավորված կուտակումներն ազդում են նաև գյուղատնտեսական որոշ, հատկապես աշխատատար, արտադրությունների տեղաբաշխ-

¹ Воейков А.И. "Распределение населения земли в зависимости от природных условий и деятельности человека". "Изв. ИРГО", 1909, вып. 2-3.
74

ման վրա: Դրանցից են, օրինակ, բրնձի, թեյի, բամբակենու, շաքարեղեգի մշակութիւնները:

Բնակչության տեղաբաշխման մասին պատկերացում տվող քանակական ցուցանիշը **բնակչության միջին խտությունն է**: Այն ցույց է տալիս մարդկանցով տվյալ տարածքի հագեցվածության (բնակեցվածության) աստիճանը և արտահայտում է բնակչության ընդհանուր թվաքանակի և տարածքի հարաբերությանը:

Աշխարհի բնակչության միջին խտությունը դեռևս մեծ չէ 47 մարդ/քառ.կմ. մրնչդեռ առանձին տարածաշրջաններում այն հասնում է ռեկորդային ցուցանիշի (օրինակ Ճավա կղզում տեղ-տեղ այն հասնում է 2500 մարդ/քառ.կմ-ի):

Ուստի հարց է առաջանում, թե որքա՞ն մեծ կարող է լինել բնակչության խտությունը: Այս հարցին պատասխանելու համար գիտական շրջանառության մեջ են մտցված տեսական երկու ցուցանիշներ **սահմանային խտություն և սահմանային թույլատրվող խտություն**:

Բնակչության **սահմանային խտությունը** տվյալ տարածքում նարդկանց հնարավոր առավելագույն խտությունն է, որը պայմանավորված է տվյալ տարածքի բնառեսուրսային պոտենցիալով, ինչպես նաև բնակչության կենսամակարդակով ու ապրելակերպով:

Բնակչության **սահմանային թույլատրվող խտությունը** այն մակարդակն է, որի գերազանցելն այս կամ այն տեսակետից (առումով) անթույլատրելի կամ անցանկալի է:

Բնակչության սահմանային խտությունը կախված է ոչ միայն և ոչ այնքան ընդհանուր տարածքի չափից, որքան այդ տարածքի հողի բերրիությունից և ագրոտեխնիկայի կիրառման աստիճանից: Այդպիսի կախումն արտահայտող նոդելների մշակմամբ զբաղվել են մի շարք գիտնականներ, մասնավորապես Ալանը, Գարունը, Դենշուլը, Բեգենը, Պուլյարկինը: Ալանը նախ գիտական շրջանառության մեջ մտցրեց **մշակության գործոն ցուցանիշը**, որը նա որոշում էր որպես մեկ շնչի հաշվով փաստացի մշակվող հողի մակերես, իսկ ավելի ուշ՝ **բնակչության պոտենցիալ խտություն** ցուցանիշը, որն արտահայտում է այն առավելագույն խտությունը, որը հնարավոր է Աֆրիկայում տարածված հարոսային (խամ) հողագործության տարբեր ձևերում: Բնակչության պոտենցիալ խտությունը նա արտահայտել է հետևյալ բանաձևով

$$I_{պ} = F_{մշ} \cdot S_g \cdot F_p, \text{ որտեղ}$$

$F_{մշ}$ -ն մշակվող հողի մակերեսի բաժինն է ընդհանուր հողատարաքում, S_g -ն ցանքաշրջանառության լրիվ տևողության տարիների թիվն է (մշակվող տարիների թվին զումարած հողի բերրիությունը բնական ճանապարհով վերականգնելու նպատակով այն հարոսի (խամի) տակ թողնելու տարիների թիվը), F_p -ն բնակչության թիվն է մեկ միավոր մշակվող հողատարածքի հաշվով:

Բեգենը առաջարկեց բանաձև, որով որոշվում է հողի արգասավորության պոտենցիալը՝ միավոր մակերեսից ստացվող ամենաբարձր բերքը (V), որը փոփոխվում է կախված հողի մշակման համակարգից և ֆիզիկաաշխարհագրական պայմաններից:

$$V = P/c + j, \text{ որտեղ}$$

P-ն համախառն տարեկան բերքի ծավալն է, c-ն՝ հողի մշակվող տարիների թիվն է, իսկ j-ն՝ հարոսի (խամի) տարիների թիվը:

Վեց մշակաբույսերից յուրաքանչյուրի արգասավորության պոտենցիալը համակշռելով (բազմապատկելով) մշակման տարածքով, Բեգենը հաշվարկեց, որ Չախրի (Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն) նահանգներից մեկում մեկ քառ. կմ. մշակվող հողը մեկ տարում կարող է տալ առավելությունը 41 տ. ընդհանուր բերք: Այս թիվը բաժանելով մեկ մարդու տարեկան սպառած գյուղատնտեսական մթերքի ծավալի վրա կարելի է ստանալ բնակչության պոտենցիալ խտությունը¹ (1քառ. կմ. տարածքի հաշվով):

Ասվածից երևում է, որ արևադարձային ու մերձարևադարձային գոտիների ոռոգելի միավոր հողատարածությունից ստացված գյուղատնտեսական արտադրանքը հնարավորություն է ընձեռում դրա վրա մի քանի անգամ ավելի շատ մարդ բնակվելու², քան, ասենք, մերձարկտիկական գոտում: Կամ մեկ այլ օրինակ, ԱՄՆ-ի բնակչության սահմանային խտությունն անհամեմատ ավելի ցածր է, քան Բանգլադեշինը, չնայած, որ բնակչության միջին խտությունն առաջին երկրում 30 մարդ/քառ.կմ է, իսկ երկրորդում 80 մարդ/քառ.կմ: Հասկանալի է, որ արտադրողական ուժերի զարգացման ու սպառման բարձր մակարդակի հետևանքով ԱՄՆ-ի 30 բնակչի հաշվով յուրաքանչյուր տարի ավելի մեծ քանակությամբ բնական ռեսուրսներ են օգտագործվում և, հետևաբար ավելի մեծ վնաս է հասցվում բնությանը, քան Բանգլադեշի 80 բնակչի հաշվով (տես 5.3 աղյուսակը):

Որոշ գիտնականներ գերազնահատում են բնակչության խտության ցուցանիշի տնտեսական նշանակությունը և փորձում են ուղղակի կապ տեսնել բնակչության խտության և տնտեսության զարգացման մակարդակի և մասնագիտացման միջև: Նրանք բնակչության թվի և համակենտրոնացման մեջ են տեսնում հասարակության զարգացման զլխավոր շարժիչ ուժը:

¹ Բնակչության պոտենցիալ խտության վերաբերյալ խորհուրդ է տրվում կարդալ. Allan W., The African Husbandman, London, 1965. Gourou P., Agriculture in the African Tropics; the Observations of a Geographer, Oxford, 1962. Женшолл Д., Модели сельскохозяйственного производства. В: Модели в географии. Сб. Статей под редакцией Ричарда Чорли и Питера Харгетта. Пуляркин В. Экономикогеографические процессы в сельском хозяйстве развивающихся стран. М., 1976

² Նկատի ունենք սեփական (տեղական) գյուղատնտեսական մթերքի հաշվին գոյատևելը:

Իրականում բնակչության խտության ընդհանուր ցուցանիշներն արտահայտում են բնական միջավայրի բարենպաստության աստիճանի տարածքային տարբերությունները մարդկանց բնակեցման և արտադրական գործունեության ծավալման համար: Բնակչության բարձր խտությունը և դրա հետ կապված աշխատուժի մեծ քվաքանակը սովորաբար նպաստում է տնտեսության զարգացմանը, խթանում են աշխատատար ճյուղերի և սպառման ապրանքների արտադրության զարգացմանը: Սակայն բնակչության խտության և տնտեսության տիպերի միջև ուղղակի կապ գոյություն չունի: Բնակչության բարձր խտությունը ամենից հաճախ կախված է արդյունաբերության և քաղաքների զարգացումից, սակայն խիտ բնակեցված երկրների թվում հանդիպում են ինչպես արդյունաբերական, բարձր ուրբանիզացված երկրներ (Ճապոնիա, Բելգիա, Գերմանիա և այլն), այնպես էլ ագրարային երկրներ, գյուղական բնակչության զգալի գերակշռությամբ (Հնդկաստան, Բանգլադեշ և այլն):

Նոր բնակեցված երկրների շարքում, մեծ թվով նոր զարգացող երկրների կողքին հանդիպում են նաև զարգացած երկրներ (Ավստրալիա, Նորվեգիա):

Աղյուսակ 3.2
Շրջակա միջավայրի վրա մարդու «էկոլոգիական ճնշման» մի քանի ցուցանիշներ (1992թ.)

Տարածաշրջան	Արդյունաբերական էներգիայի տարեկան սպառումը մեկ շնչի հաշվով (գիգաջոուլ) ¹	Տրանսպորտային ցանցի խտությունը (կմ/1000 քառ. կմ)		Ավտոմեքենաների քանակը (առ 1000 բնակչի)
		երկաթուղիներ	Ավտոխճուղիներ	
Աշխարհ	58			110.1
Աֆրիկա	12			
այդ թվում				
Եգիպտոս	21	8.6	32	25.5
Լիբիա	101		45	169.4
Մալի	1	105	12	3.8
Ասիա	18		1340	
այդ թվում				
Աֆղանստան	1		29	3.7
Բրունեյ	500		381	479.1
Դարուսալան				
Չինաստան	24	5.6	107	

¹ Մեկ գիգաջոուլը (G) հավասար է 10⁹ ջոուլի:

Քաթար	1159		136	314.6
Բանգլադեշ	2	19.1	90	0.9
Վիետնամ	4	8.9	261	
Հնդկաստան	10	18.9	599	7.8
Եվրոպա	153			
այդ թվում				
Ալբանիա	17	19.8		0.9
Բոլիզարիա	92	38.8	330	161.8
Բելգիա	201	116.5	4656	435.7
Գերմանիա	173	122.5	1759	508.5
Նիդերլանդներ	209	75.8	3163	410.0
Ամերիկա				
Բրազիլիա	24	3.5	38	30.6
Գվատեմալա	8	10.5	120	20.4
Հաիթի	1	1.5	133	5.5
Ուրուգվայ	24	16.9	54	140.8
ԱՄՆ	315	21.9	666	754.9
Ավստրալիա	216	4.6	111	570.6

Ընդհանուր առմամբ ըստ, հաշվումների աշխարհի բնակիչների առավել հարուստ 1/5 մասը տարեկան 66 անգամ շատ նյութեր և ռեսուրսներ է սպառում, քան առավել աղքատ 1/5 մասը:

Բնակչության խտությանը տրամագծորեն հակադիր հասկացություն է **ցրվածությունը**՝ մեկ մարդուն ընկնող տարածությունը:

Ցրվածությունը կարելի է արտահայտել նաև մեկ բնակավայրին ընկնող տարածքի միջին շառավղի մեծությամբ կամ բնակավայրերի միջև ընկած միջին հեռավորությամբ:

3.6 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳԱՂԹԵՐԸ (ՄԻԳՐԱՑԻԱՆԵՐԸ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ

Բնակչության գաղթը (միգրացիան)¹ մարդկանց ցանկացած տեղափոխությունն է, որը կապված է նրանց բնակության վայրի (գյուղ, քաղաք, մարզ, պետություն) կարճ կամ երկար ժամանակահատվածով, երբեմն էլ ընդմիջտ, փոփոխության հետ:

Սակայն, սխալ կլինի գաղթի վերաբերյալ պատկերացումը սահմանափակել սոսկ մարդկանց վերը նշված պարզ, մեխանիկական տեղափոխությամբ: Բնակչության գաղթերի նշանակությունը գործնականում անհամեմատ ավելի մեծ է ու բազմակողմանի: Ուստի գաղթերի մասին խոսելիս պետք է նկատի ունենալ սոցիալ-տնտեսական այն մեծ դերը, որը կատարում են դրանք երկրագնդի մասշտաբով և առանձին պետությունների հասարակական կյանքում:

Հասարակության զարգացման գործընթացը մասնավորապես կարելի է դիտել որպես գաղթերի դրական հետևանք: Հնագույն ժամանակներում ժողովուրդների մեծ գաղթերի, ավելի ուշ եվրոպացիների ու աֆրիկացիների գաղթերի արդյունք են նորանոր տարածքների յուրացումը, տնտեսության զարգացումը, ռասայական, ազգային ու մշակութային միաձուլումները:

Բնակչության գաղթերը մեծ մասամբ պայմանավորված են արտադրողական ուժերի տարածական կազմակերպման փոփոխություններով:

Գաղթերի հետևանքով էապես փոփոխվում են և՛ արտագաղթի (էմիգրացիայի) և ներգաղթի (իմիգրացիայի) երկրների կամ էլ միևնույն երկրի շրջանների բնակչության թվաքանակը, վերարտադրության վարքը (ռեժիմը), սեռատարիքային կազմը, աշխատանքային ռեսուրսների հաշվեկշիռը:

Այսպես, օրինակ, ՀՀ-ում չնայած ծնելիության մակարդակը մի փոքր գերազանցում է մահացությանը, այսինքն գոյություն ունի ցածր բնական աճ, սակայն արտագաղթի չափազանց մեծ հոսքի հետևանքով բնակչության ընդհանուր թվաքանակը նվազում է:

Կամ մեկ այլ օրինակ, Գերմանիայում, ընդհակառակը, յուրաքանչյուր տարի ավելի քիչ մարդ է ծնվում, քան մահանում է, այսինքն առկա է դեպոպուլյացիայի երևույթը, սակայն օտարերկրացիների ներգաղթի մեծ հոսքի շնորհիվ երկրի բնակչության ընդհանուր թվաքանակը նույնիսկ մի փոքր ավելանում է:

Բնակչության թվաքանակի աճի (նվազման) մեջ միգրանտների բաժինը կոչվում է «միգրացիոն մասնակցության գործակից»: Օրինակ՝ եթե երկրի բնակչության թվաքանակի ընդհանուր հավելածը կազմել է 1 մլն մարդ, որից 200 000-ը միգրանտների հաշվին, ապա միգրացիոն մասնակցության գործակիցը կլինի 20%:

Բնակչության վերարտադրության վրա գաղթերի ազդեցությունը, ժողովրդագրական տեսակետից կրկնակի է:

Բնակչության թվաքանակից բացի, ինչպես նշվեց, գաղթերը փոփոխում են նաև արտագաղթի և ներգաղթի վայրերի բնակչության սեռատարիքային կառուցվածքը և դրանով հանդերձ նաև տնտեսապես ակտիվ բնակչության կառուցվածքը և աշխատանքային ռեսուրսներով երկրի ապահովվածության աստիճանը:

Որպես կանոն գաղթում են երիտասարդները՝ բնակչության առավել պտղաբեր հասակի մարդիկ, որի հետևանքով արտագաղթի օջախներում բնակչությունը «ծերանում է»։ Իսկ ներգաղթի օջախներում ընդհակառակը՝ «երիտասարդանում»:

Միգրացիոն հոսքերի մասշտաբների, ուղղությունների ու բնույթի ուսումնասիրությունը խիստ անհրաժեշտ է ուրբանիզացման և ընդհանուր առմամբ բնակչության տեղաբաշխման փոփոխությունները համակողմանիորեն ու խորությամբ հասկանալու համար: Սակայն աշխարհագրության (ինչպես նաև ժողովրդագրության, տնտեսագիտության, սոցիոլոգիայի զարգացումն ընթացել է այնպիսի ուղով, որ ավելի մեծ ուշադրություն է դարձվել արտաքին միգրացիաներին, իսկ ներքին միգրացիաների ուսումնասիրությանը զարմանալիորեն հատկացվել է չափազանց փոքր ուշադրություն): Մինչդեռ, ինչպես ընդգծվեց ՄԱԿ-ի «Ազգաբնակչության և զարգացման միջազգային կոնֆերանսում (Կահիրե, 1994)», առանձին երկրներում ներքին միգրացիաների մասշտաբները զգալիորեն գերազանցում են արտաքին միգրացիաներին:

Ն եր ք ի ն մ ի գ ղ ա ց ի ա ն եր ի հոսքերի մասշտաբներն ու բնույթը բազմազան են ու մշտապես փոփոխվող: Դրանք ներառում են հետևյալ 4 ուղղությունները. գյուղից քաղաք, քաղաքից գյուղ, գյուղից գյուղ և քաղաքից քաղաք:

Նախորդ տարիներին միգրացիոն հոսքերի ուսումնասիրությունների հիման վրա ձևավորվել և շարունակում է տիրապետել այն ենթադրությունը, որ միգրացիոն հոսքերի գերակշռող ուղղությունն ուղղված է գյուղից քաղաք, սակայն գյուղից գյուղ ուղղված միգրացիոն հոսքը երբեմն իր մասշտաբներով գերազանցում է դրան: Մի քանի երկրներում էլ գերակշռող է քաղաքից քաղաք ուղղությունը: Գործնականում բոլոր, նույնիսկ ներկայումս արագ ուրբանիզացվող երկրներում, գոյություն ունի նաև քաղաքից գյուղ ուղղված միգրացիա, թեկուզ և այն իր մասշտաբով զիջում է հակառակ (գյուղից քաղաք ուղղված) միգրացիային: Մասամբ դրանով է պայմանավորված ԱՊՀ երկրներում (բացառությամբ Թուրքմենստանի) քաղաքային բնակչության բաժնի նվազումը և գյուղական աճը 1989-2003 թ:

Աշխարհի տարբեր տարածաշրջաններում, որոնց հավաքական անվանումով կոչում են «Հարավ» (ի տարբերություն զարգացած շրջանների, որոնց անվանում են «Հյուսիս») գոյություն ունեցող շուրջ 30 հազար քաղաքներից յուրաքանչյուրն ունի ներգաղթի և արտագաղթի ուրույն պատկերը, որը մշտապես փոփոխվում է համապատասխան կնիք թողնելով քաղաքների տնտեսական հիմքի, աշխատանքի շուկայի ու բնակչության տարիքային կազմի վրա: Այդ գաղթերն իրենց հերթին տարածաշրջանի կամ պետության սոցիալական, տնտեսական ու քաղաքական փոփոխությունների արդյունք են և կրում են սոցիալ-տնտեսական, ազգային-

¹ Թեկուզ գաղթ տերմինն լիովին արտահայտում է այդ գործընթացի էությունը, ընդունված է այդ տերմինը օգտագործել հոգնակի թվով:

կրոնական և ընտանեկան-կենցաղային և այլ գարծոնների ազդեցությունը:

Միգրացիաների վերլուծության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նշված գործոնների ամբողջությունը և միաժամանակ նկատի ունենալ, որ ժամանակի ընթացքում անընդհատ փոփոխվում է այդ գործոնների հարաբերական կարևորությունը: Այսպես, օրինակ, Հարավ-Արևելյան Ասիայի երկրների քաղաքներում, ի տարբերություն նախկին տարիների, ներկայումս ավելի մեծ է կանացի աշխատուժի պահանջարկը, որի հետևանքով յուրաքանչյուր տարի երիտասարդ կանանց մեծ հոսք է ուղղվում դեպի տարածաշրջանի, հատկապես Թայվանի, Թաիլանդի, Ֆիլիպինների, Կորեայի Հանրապետության և Մալայզիայի քաղաքները:

Նրանք զբաղվում են միջազգային մենատիրական (մոնոպոլիստական) միավորումներին պատկանող արտադրություններում, որակավորում չպահանջող կամ ոչ բարձր որակավորում պահանջող ծառայություններում (տնային ծառայություն, ոչ պաշտոնական (փողոցային) առևտուր, սեքս ծառայություն):

Կանացի միակողմանի զբաղվածության նման պահանջարկ գոյություն ունի նաև Արևմտաեվրոպական երկրների և ԱՄՆ-ի քաղաքներում:

Ներքին միգրացիաները մեծ մասշտաբների են հասել ինչպես «Հարավի», այնպես էլ «Հյուսիսի» երկրներում: Մինչև վերջին տարիները տարածված էր այն կարծիքը, իբր այդ գաղթների հոսքերը մեծ են զարգացող երկրներում՝ պայմանավորված ցածր կենսամակարդակով, գյուղական բնակչության հողազրկմամբ, զբաղվածության ցածր մակարդակով և այլ գործոններով: Սակայն նոր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «Հյուսիսի» երկրներում ևս վերջերս ակտիվացել են բնակչության ներքին միգրացիաները: Օրինակ՝ վերջին տարիներին ԱՄՆ-ի բնակչության մեջ ներքին գաղթողների բաժինն ավելի բարձր է, քան նույնիսկ «Հարավի» երկրներում: Ըստ գնահատման ԱՄՆ-ի յուրաքանչյուր հինգերորդ բնակիչը փոփոխում է իր բնակավայրը երկրի սահմաններում, սակայն քանի որ այդ հոսքի մեծ մասն ուղղված է քաղաքից քաղաք, ապա այդ գաղթը չի հանգեցնում ուրբանիզացման մակարդակի շոշափելի փոփոխության:¹

ԱՄՆ-ի միգրանտների մեծ մասը Հյուսիս-Արևելյան արդյունաբերական շրջանների քաղաքներից տեղափոխվում են խաղաղօվկիանոսյան ափի և Միջին Արևմուտքի, էկոլոգիական և աշխատուժի զբաղվածության տեսակետներից ավելի բարվոք, տարածաշրջանները:

Գաղթների մյուս հզոր հոսքը սկիզբ է առնում ԱՄՆ-ի հարավից, որտեղից նեգրերն իրենց հարյուրամյա բնակության վայրերից սկսել են տարածվել ԱՄՆ-ի ամբողջ տարածքով մեկ՝ ավելի հավասարաչափ դարձնելով իրենց տեղաբաշխումը երկրում:

Միջազգային (արտաքին) միգրացիաներ: XX դարի երկրորդ կեսին աշխարհի բնակչության բնութագրական գծերից մեկը միջազգային միգ-

րացիայի մասշտաբների մեծացումն է: Ըստ մոտավոր հաշվարկների¹ միջազգային միգրանտների ընդհանուր թիվը 1965 թ. 75 մլն-ից 1990 թ. հասել է 120 մլն-ի, այսինքն քառորդ դարի ընթացքում աճել է 1.6 անգամ:

Մասշտաբային պատկերացում կազմելու համար նշենք, որ միջազգային միգրանտների բաժինն աշխարհի բնակչության մեջ կազմում է մոտ 2%, ընդ որում «Հարավում»՝ 4.5, իսկ «Հյուսիսում»՝ 1.6%:

Միջազգային միգրացիա առաջացնող պատճառները բազմաթիվ են և բազմաբնույթ, սակայն դրանց շարքում գլխավորը արտադրության, կապիտալի հոսքի ու առևտրի գլոբալացումն (միջազգայնացումն) է, որը մեծ ազդեցություն է ունենում թույլ զարգացած երկրների անկայուն ազգային տնտեսությունների վրա: Այդ երկրներում տիրապետող բնակչության անկանոն զբաղվածությունն է, որն էլ համապատասխանաբար առաջ է բերում անկանոն արտագաղթ:

Միջազգային միգրացիան հաճախ քաղաքացիական բախումների, աղետների, պատերազմների, մարդկանց հետապնդումների արդյունք է: Դրանց օրինակները շատ են. Աֆղանստանում, Մոզամբիկում, Ռուանդայում, Կենտրոնաամերիկյան պետություններում:

Ըստ գնահատման երկրագնդում 2000 թ. կար շուրջ 27 մլն փախստական (1974 թ.՝ 2.5 մլն): Զգալի է նաև օտար երկրներում ապաստան որոնողների թիվը (ըստ գնահատման 7-10 մլն մարդ): Այս խմբի մարդկանց թվի կտրուկ աճը մասամբ պայմանավորված է սոցիալիստական ճամբարի փլուզումով, այդ երկրների ագատականացումով, այսպես կոչված բաց հասարակության ստեղծումով, ազգամիջյան բախումներով և այլն: Դրա օրինակներից է Հայաստանի Հանրապետությունը: Դարաբաղյան իրադարձությունների կապակցությամբ Ադրբեջանից Հայաստանի Հանրապետություն ենթադրեցին ավելի քան 360 հազար փախստականներ:

Միջազգային միգրացիոն հոսքերի մեծ մասը շարունակվում է պատմականորեն հաստատված ուղիներով: Միջազգային իմիգրացիայի գլխավոր օջախներն են Արևմտյան եվրոպան ու Հյուսիսային Ամերիկան (յուրաքանչյուրում 15-20-ական մլն իմիգրանտ) և Ասիայի որոշ հարուստ պետությունները (Ճապոնիան, Թայվանը, Սինգապուրը):

Ներկայումս միգրացիան այս կան այն չափով համակել է աշխարհի բոլոր երկրները, սակայն դրանցից յուրաքանչյուրում նկատվում է ներգաղթողների ու արտագաղթողների համամասնությունների յուրահատկություն: Ներգաղթողների և արտագաղթողների թվաքանակի տարբերությունն արտահայտում է միգրացիայի սալդոն, որը կարող է լինել և դրական, և բացասական: Միգրացիայի առավելագույն բացասական սալդոն նկատվել է Իռլանդիայում՝ XIX դարում, երբ դեպի ԱՄՆ ուղղված արտագաղթի հետևանքով այդ երկրի բնակչության թվաքանակը նվազեց 2/3-ով: ՀՀ բնակչության ընդհանուր թիվը, համաձայն 2001 թ. մարդահամարի

¹ An Urbanizing World. UN Center for Human Settlement (Habitat). Oxford University Press, 1996, p. 22

¹ Միգրանտների մշտական հաշվառման մեխանիզմը դեռևս կատարյալ չէ: Դրանց թվաքանակը հաշվառվում է միայն մարդահամարների ժամանակ, սակայն ոչ միշտ և ոչ բոլոր երկրներում:

տվյալների, շուրջ 10 տարում նվազել է 1/6-ով: Օրինաչափորեն միգրացիայի դրական սալդո է հաստատվում առավել բարձր կենսամակարդակ ունեցող արևմտաեվրոպական երկրներում, որի հետևանքով այդ երկրների բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ հետզհետե մեծանում է օտարերկրացիների բաժինը (տես աղյուսակ 3.3): Սակայն երկրի կենսամակարդակի և բնակչության մեջ օտարերկրացիների բաժնի միջև կապը կոշտ և ուղղակի չէ, այլ կորելյացիոն: Վճռորոշ դեր է կատարում նաև ներգաղթի երկրի իմիգրացիոն քաղաքականությունը: Օրինակ Նորվեգիայում կենսամակարդակն ավելի բարձր է, քան Դանիայում, Բելգիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեդիայում, իսկ օտարերկրացիների բաժինն, ավելի խիստ, «գապող» իմիգրացիոն քաղաքականության հետևանքով, որոշ չափով փոքր է, քան թվարկած երկրներում:

Աղյուսակ 3.3

Օտարերկրացիների թիվը և բաժինը Արևմտաեվրոպական որոշ երկրների բնակչության մեջ (հազարներով)

	Օտարերկրացիների թվաքանակը			Մեկ շնչին հասնող ՅԱ-ն (ԱՄՆ դոլար) 1994թ.	Օտարերկրացիների բաժինը երկրի բնակչության ընդհանուր թվաքանակում (1994թ., %-ով)
	1981թ.	1994թ.	Միջին տարեկան աճը 1981-1994թթ. (%-ով)		
Ավստրիա	163	582 ⁹³	10.3	24950	7
Բելգիա	879	921	0.2	22920	9
Դանիա	100	189	5.1	28110	4
Գերմանիա	4453 ⁸⁰	6496 ⁹³	2.7	25580	8
Նիդերլանդներ	521	779	3.2	21970	5
Նորվեգիա	83	154 ⁹³	4.9	26480	4
Իսպանիա	183	393 ⁹³	6.1	13280	1
Շվեդիա	240	508	6.0	23630	6
Շվեյցարիա	914	1244 ⁹³	2.4	37180	18
Մեծ Բրիտանիա	...	1900 ⁹⁰	...	18410	3
Ֆրանսիա	...	3600 ⁹⁰	...	23470	6

Կան իմիգրացիայի որոշ «ձգողական բևեռներ», որտեղ իմիգրանտների բաժինը երկրների ընդհանուր աշխատուժի մեջ հասնում է բացառիկ չափերի կազմում է կեսից ավելին: Դրանք մերձավորարևելյան նավթարդյունահանող այնպիսի երկրներն են, ինչպես, օրինակ, Քուվեյթը, Քաթարը, Բահրեյնը, Սաուդյան Արաբիան, Միացյալ Արաբական Ամիրայությունները:

Տնտեսական լրիվ այլ կառուցվածք ունեցող Սինգապուրում Գարավ Արևելյան Ասիայի ֆինանսական-առևտրական խոշորագույն կենտրոնում, զբաղ-

վածների ընդհանուր թվի 11%-ը հիմնականում Մալայզիայից, Ֆիլիպիններից, Թաիլանդից, Ինդոնեզիայից ժամանած աշխատավորներն են:

Ինչ վերաբերում է Աֆրիկային, ապա այդ երկրներում տեղի ունեցող միգրացիայի մասշտաբների մասին հավաստի տվյալներ չկան, ուստի պետք է հիմնվել փորձագետների գնահատումների վրա: Համաձայն որի, որոշ երկրներում, օրինակ, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում (Զաիրում) և Հարավաֆրիկյան Հանրապետությունում, ներգաղթածները կազմում են բնակչության ընդամենը 5 % -ից քիչ ավելին:

Երկրի բնակչության մեջ ներգաղթածների մեծ բաժնով (ավելի քան 10%) առանձնանում են նաև Եգիպտոսն ու Հորդանանը¹, Բուրիկինա Ֆասոն, իսկ վերջին տարիներին նաև Ռուսաստանն ու Կենտրոնական Ամերիկայի երկրները (բացառությամբ Մեքսիկայի):

Հաջորդ խումբը կազմում են այն երկրները, որոնք մինչև 1990 թ. արտագաղթի աղբյուրներ էին, սակայն քաղաքական ու սոցիալական արմատական բարեփոխումների շնորհիվ ներկայումս դարձել են ներգաղթի օջախներ: Դրանց շարքում են Հարավային և Կենտրոնական Եվրոպայի երկրները՝ Յունգարիան, Լեհաստանը, Չեխական Հանրապետությունը:

Կան նաև մի խումբ երկրներ (օրինակ Իսպանիան), որոնց բնորոշ է միաժամանակ և ներգաղթը և՛ արտագաղթը: Դրանցից, որպես կանոն, արտագաղթում են բարձր որակավորում ունեցող աշխատավորները, իսկ ներգաղթում են հա-մենատաբար ցածր կենսամակարդակ ունեցող երկրների որակավորում չունեցող աշխատավորները:

Միջազգային, ինչպես և ներքին միգրացիաների հոսքերում միգրանտները միմյանցից տարբերվում են մի շարք հատկանիշներով, հատկապես պրոֆեսիոնալ կազմով: Դրանց կազմում կան պայմանագրային կարգով աշխատողներ, ուսանողներ, բարձր որակյալ և պրոֆեսիոնալ աշխատողներ, իրենց ընտանիքի հետ վերամիավորվողներ, ապաստան որոնողներ փախստականներ:

Նախկինում արտագաղթողների մեջ բացարձակապես գերակշռող սևագործ բանվորներն էին: Դրանց հոսքը ստացել էր «կապույտ օծիքավորների» կամ էլ «մկանների» հոսք անվանումները: Հետզհետե մեծանում է բարձր որակավորում ունեցող մասնագետների ճարտարագետների, գիտնականների, բժիշկների, նույնիսկ մարզիկների բաժինը: Դրանց հոսքը ստացել է «ուղեղների» կամ «մտքերի» հոսք անվանումը:

Տնտեսական ասպեկտով այդ երևույթը (որը վերջերս բնութագրական է դարձել նաև Հայաստանի Հանրապետության համար), կարելի է դիտել որպես թույլ զարգացած էմիգրացիայի երկրների «ազգային ունեցվածքի հոսք» դեպի բարձր կենսամակարդակ (աշխատավարձ) ունեցող երկրները:

Պետք է նկատի ունենալ, որ բարձր որակավորում ունեցող մեկ մասնագետ պատրաստելու համար հասարակությունը կատարում է տասնյակ հազարավոր դո-

* 80,90 - այն վերջին տարիները, որի համար կա օտարերկրացիների վերաբերյալ տվյալներ:

... - տվյալները բացակայում են:

¹ Հիմնականում Իսրայելի կողմից զավթած տարածքների պաղեստինցի փախստականները:

լարների ծախսեր (ներառյալ առողջապահությունը, խնամքը, դպրոցական և բուհական կրթությունը)¹, որոնք այդ մասնագետը պետք է փոխհատուցեր տվյալ երկրում իր աշխատանքային գործունեության ընթացքում: Սակայն աշխատանքի մեկնելով բարձր զարգացած երկրներ, միգրանտն իր երկրի ուսերին է թողնում նրա վրա կատարված ծախսերի բեռը և օգուտ բերում այն երկրին, որը ոչ մի ծախս չի կատարել այդ մասնագետի պատրաստման գործում:

Տնտեսական մեկ այլ ասպեկտից գնահատելով կարելի է ասել, որ միջազգային միգրացիան կատարում է նաև դրական դեր: ՄԱԿ-ի մասնագետների կարծիքով 25-ից 30 մլն օտարերկրյա աշխատավորներ 1991 թ. իրենց երկրներ են առաքել 71 մլրդ դոլար դրամական փոխադրում, որը զգալի ներդրում է այդ երկրների տնտեսության զարգացման գործում: Այս երևույթը լավ ծանոթ է նաև մեր հանրապետության բնակչությանը՝ հատկապես կապված այն փաստի հետ, որ Ռուսաստանում տնտեսական իրադրության կտրուկ վատթարացման հետևանքով, մի քանի անգամ կրճատվեցին այդ երկրում աշխատող մեր հայրենակիցների կողմից Հայաստան ուղարկվող գումարները, որի արդյունքում խիստ վատթարացան նաև մեր հանրապետության տնտեսական զարգացման ցուցանիշները:

3.7 ՈՒՐԲԱՆԻՉԱՑԻԱ

Ուրբանիզացիայի գործընթացի էությունը:

Բնակչության տարաբնակեցումը, ինչպես նշվեց նախորդ բաժնիներից մեկում, բնակչության տեղաբաշխումն ու վերաբաշխումն է, ինչպես նաև բնակավայրերի համակարգը:

Մասնավորապես, տարածական ասպեկտով բնակչության վերաբաշխումը ենթադրում է ոչ միայն բնակչության գաղթերը, այլ նաև բնակչության վերաբաշխումն ըստ բնակավայրերի գլխավոր տեսակների՝ գյուղերի ու քաղաքների, այսինքն դրանց համամասնության փոփոխությունը:

Այդ վերաբաշխման հիմքում ընկած են համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցած և հին և նոր փոփոխությունները:

Քաղաքների ձևավորումն աշխատանքի հասարակական բաժանման արդյունք է: Նստակյաց հողագործության անցնելուց հետո, երկարատև ժամանակ, արտադրողական ուժերը տեղաբաշխված էին հիմնականում գյուղական վայրերում, որոնք մարդկությանը մատակարարում էին այն ժամանակվա անհրաժեշտ նյութերի մեծ մասը, իսկ նոր ձևավորվող քաղաքները վարչական իշխանության, մասնավորապես ռազմական ու ոստիկանական ուժերի, առևտրի և արհեստագործության կենտրոնացման վայրեր էին:

Աշխարհի հնագույն քաղաքները հիմնադրվել են Ինդոսի, Գանգեսի, Նեղոսի, Միջագետքի, Մեծ Հինական հարթավայրերի ոռոգովի հողագործության շրջաններ-

ում և, ըստ հնեաբանների, ունեցել են 7-ից 20 հազար բնակիչ:

Քաղաքական ստորակարգությունների (հիերարխիաների) առաջացման պայմաններում առանձին քաղաքներ հետզհետե իրենց էին ենթարկում հարևան, ավելի փոքր ու թույլ քաղաքներին ու, դրանցից գանձվող հարկերի հաշվին, ավելի արագ էին զարգանում և խոշորանում:

Օրինակ Ն. Բ. III հազարամյակում Բաբելոնի բնակչության թվաքանակն, ըստ գնահատման, հասել էր շուրջ 80 հազարի:

Քաղաքների զարգացմանը մեծ չափով խթանեց ծովային տրանսպորտի զարգացումը, որի շնորհիվ, օրինակ, հունական ու փյունիկյան շատ քաղաքներ հիմնադրվեցին Սև ու Միջերկրական ծովերի ափերին, որոնք առևտրից ստացվող եկամտի շնորհիվ դարձան այն ժամանակվա չափանիշներով բավական խոշոր քաղաքներ:

Հին աշխարհի երբեմնի խոշորագույն քաղաքներն էին Հռոմը (շուրջ 500 000 բնակիչ), Ալեքսանդրիան և Կարթագենը:

Կապիտալիստական հասարակարգում, խոշոր մեքենայական արտադրության, տրանսպորտի ու համաշխարհային շուկայի զարգացման շնորհիվ, մի կողմից արագացավ հին քաղաքների աճը, մյուս կողմից ձևավորվեցին բազմաթիվ նոր քաղաքներ, որոնք դարձան արտադրության կենտրոններ:

Քաղաքների աճն էլ ավելի արագացավ գիտատեխնիկական հեղափոխության ժամանակաշրջանում, երբ քաղաքներում կենտրոնացան ավելի մեծ թվով ու տարբեր տեսակի ոչ գյուղատնտեսական (ինդուստրիալ) գործունեություններ, իսկ գյուղատնտեսական արտադրության աճի հետևանքով նաև գյուղատնտեսության ոլորտից «դուրս մղված» միլիոնավոր մարդիկ:

Քաղաքների աճի գործընթացը *ուրբանիզացիան, քանակական առումով ամենից առաջ դրսևորվում է երկրագնդի կամ դրա առանձին տարածաշրջանների ընդհանուր բնակչության մեջ քաղաքային բնակչության բաժնի ավելացումով*:

Սակայն սխալ է ուրբանիզացիա հասկացությունը հանգեցնել միայն քաղաքային բնակչության բաժնի ավելացմանը: Անառարկելի է այն փաստը, որ քաղաքների աճի շնորհիվ աստիճանաբար մեծանում է երկրագնդի կամ առանձին երկրի կյանքում դրանց կատարած դերը:

Այժմ աշխարհում շատ քիչ տեղ է մնացել, որտեղ դեռ չի զգացվում քաղաքների դերը:

Քաղաքները (հատկապես խոշորները) հասարակական աշխատանքի տարածքային կազմակերպման կիզակետերն են, որոնք դեպի իրենց են ձգում ապրանքների հոսքերը, մշակում են արդյունաբերական հումքը և հանդիսանում են մարդու ստեղծած նյութական բարիքների սպառողները, ինչպես նաև հասարակության մշակութային, սոցիալական ու քաղաքական կյանքի կենտրոններն են: Մեծ է նաև քաղաքների տրանսպորտային դերը: Նկատի ունենալով վերը նշված դերերը, քաղաքները դասակարգվում են ըստ նրանց ժողովրդատնտեսական գործառույթի (ֆունկցիայի). արդյունաբերական, տրանսպորտային, ֆինանսական, առևտրային, վարչական, (օրինակ շրջանային, մարզային կենտրոն), քաղաքական (մայրաքա-

¹ Դրանք անվանվում են ժողովրդագրական ներդրումներ:

ղաքային), հանգստի (ռեկրեացիոն), առողջարանային և այլն: Ընդամին, որքան մեծ (մարդաշատ) է քաղաքը, այնքան շատ գործառույթներ է իրականացնում այն, այսինքն բազմագործառույթային (բազմաֆունկցիոնալ) է:

Ուրբանիզացիայի երրորդ բնութագրական կողմը դրա արդյունք հանդիսացող այսպես կոչված, **քաղաքային ապրելակերպի տարածումն է**:

Քաղաքային ապրելակերպը «ժամանակակից խոշոր քաղաքներին հատկանշական կենսական պայմանների, դրանց հետևանքների ու կյանքի ոճի գույակցումն է. որն ավելի ու ավելի լայնորեն է դառնում փոքր քաղաքների, բազմաթիվ գյուղական բնակավայրերի, ամբողջ շրջանների, ու նույնիսկ, պետությունների սեփականությունը»¹:

Այս առումով աշխարհի ուրբանիզացված բնակչությունն ընդգրկում է ոչ միայն բուն քաղաքների բնակիչներին, այլ նաև «տասնյակ միլիոններով այն «գյուղական բնակիչներին», որոնք բնակվելով մարդահամարների ժամանակ որպես «գյուղական» հաշվառվող բնակավայրերում, իրենց կենսամիջոցները ձեռք են բերում քաղաքային կամ էլ գյուղական բնակավայրերում տեղաբաշխված արդյունաբերական ձեռնարկություններում ու ծառայություններում աշխատելով²:

Տարաբնակեցման տնտեսաաշխարհագրական ուսումնասիրությունը պետք է կատարել համակարգային մոտեցմամբ, այսինքն տարաբնակեցումն ուսումնասիրել արտադրության տարածքային կազմակերպման կապերի մեջ:

Դրա համար անհրաժեշտ է բավական տեղեկացվածություն ինչպես «տարաբնակեցման ամբողջ դաշտի», այնպես էլ դրա տարրերի՝ բնակավայրերի վերաբերյալ³:

Դեռևս սրանից շուրջ 60 տարի առաջ Ն.Բարանսկին ընտրել էր քաղաքների, դասակարգման չափանիշներ, որոնք աննշան փոփոխություններով հանդերձ օգտագործվում են մեր օրերում: Դրանք են .

- 1) քաղաքի առաջացման (հիմնադրման) ժամանակը,
- 2) տնտեսաաշխարհագրական դիրքը,
- 3) գործառույթը կամ (ավելի հաճախ) գործառույթների գույակցումը,
- 4) մեծությունը (մարդաշատությունը և զբաղեցրած տարածքը),
- 5) քաղաքին ձգող տարածքը (հինթերլանդը):

Քաղաքի առաջացման ժամանակը ընդհանուր առմամբ նրա զարգացման գործում մեծ դեր է խաղացել: Աշխարհի խոշորագույն քաղաքների 2/3-ը կարևորագույն քաղաքներ էին դեռևս սրանից 200 տարի առաջ, իսկ 1/4-ը նույնիսկ սրանից 500 տարի առաջ: Սակայն պետք է ավելացնել, որ այդ քաղաքների աճը պայմանավորված է նաև վերջին տասնամյակներում դրանց զարգացման համար **հսկողական արգելիչ-տնօրոգիական պայմաններով**:

Քաղաքների զարգացման ու գործունեության արդյունավետության վրա **աշխարհագրական դիրքի** ունեցած ազդեցությունը ևս մեծ է ու բազմաբնույթ: Դրանք են բնական պայմանները (տես «բնակչության տարաբնակեցումը» բաժինը), կապվածությունը գետային, երկաթուղային, ծովային և այլ ուղիների հետ, տնտեսական նշանակության օբյեկտների (խոշորագույն հանքային ու արդյունաբերական շրջանների) նկատմամբ քաղաքի ունեցած դիրքը: Սակայն քաղաքի զարգացման վրա աշխարհագրական դիրքի ազդեցությունը ժամանակի ընթացքում փոփոխվում է: Օրինակ, Սուեզի ջրանցքի շահագործման (1869 թ.) հետևանքով այս գոտում ձևավորվեցին և հզորացան ժամանակակից եգիպտոսի խոշոր տնտեսական կենտրոններ Սուեզը, Պորտ Սաիդը, Իսմայիլիան, էլ Կանտարան և փոխարենը նվազեց Աֆրիկան հարավից շրջանցող ծովային ուղու վրա գտնվող Քեյփթաուն քաղաքի դերը:

Տարբեր գիտնականների կողմից քաղաքների գործառույթային դասակարգումը շատ բազմազան է, սակայն որպես առավել ընդհանուր և զխավոր գործառույթներ են ճանաչվում հետևյալները.

ա) մայրաքաղաքներ, բ) «համալիր» քաղաքներ, գ) քաղաքներ բազմակողմանի արդյունաբերական կենտրոններ, դ) քաղաքներ մեկ պրոֆիլային ճյուղի արդյունաբերական կենտրոններ (օրինակ՝ տեքստիլ արդյունաբերության), ե) ոչ արդյունաբերական գործառույթների գերակշիռ նշանակության քաղաքներ (օրինակ գիտական, առողջարանային քաղաքներ):

Արժե առանձնահատուկ կանգ առնել մայրաքաղաքային գործառույթի վրա: Մայրաքաղաքները, որպես այդպիսի գործառույթ իրականացնող քաղաքներ, երկրի մյուս քաղաքների համեմատությամբ ստանում են լրացուցիչ զարգացման իմպուլս և մեծ մասամբ դառնում են երկրի ամենախոշոր քաղաքը՝ դանդաղեցնելով մյուսների զարգացումը:

Այդ պատճառով էլ որոշ երկրներ ձգտում են մայրաքաղաք դարձնել մեկ այլ փոքր քաղաք: Մայրաքաղաքի կառուցման և գործունեության ծախսերի համեմատաբար մեծության պատճառով շատ երկրներ ի վիճակի չեն դրանք նոր քաղաքով փոխարինելու: Օրինակ Ֆիլիպիններում փորձեցին Մանիլայի փոխարեն մայրաքաղաք դարձնել Կեսոն Սիթին, Լաոսում Վիենտյանի փոխարեն Լուանգ Պրաբանգը:

Մայրաքաղաքի փոփոխման թանկ, բայց հաջող օրինակ է Բրազիլիա քաղաքը, որը նոր նախագծով կառուցվեց տնտեսական առումով թույլ յուրացված, բայց կենտրոնական աշխարհագրական դիրք ունեցող Բրազիլական սարահարթում փոխարինելով երկրի հին մայրաքաղաք Ռիո դե Ժանեյրոյին: Մայրաքաղաքները փոփոխել են նաև Նիգերիան (Աբուջա), Տանզանիան (Դոդոմա), Ղազախստանը (Աստանա): Նախապատրաստման գործընթացում է գտնվում Արգենտինայի ապագա մայրաքաղաքը Վիեդման:

Խոշորագույն չափերի հասած քաղաքների զգալի մյուս մասը երկրի ծովային զխավոր «դարպասն են»: Օրինակ Նյու Յորքը, Շանհայը, Մումբայը (Մախիկին Բոմբեյը), Կալկաթան, Ստամբուլը, Սան Պաուլուն:

¹ Хорев Б. С. Проблемы городов. М., 1971, стр. 9.

² An Urbanizing World. UN Center for Human Settlement (Habitat). Oxford University Press, 1996, p. 12

³ Покшишевский В. В. Население и география, М., 1978, стр. 120.

Աշխարհի տարածաշրջանների ուրբանիզացվածությունն ու ուրբանիզացման տեմպերը

Ըստ մշտական բնակչության թվաքանակի՝ մարդաշատության ընդունված է դասակարգել քաղաքների հետևյալ խմբերը *փոքր* քաղաքներ (մինչև 50 հազ. բնակիչ), *միջին* (50-100 հազ. բնակիչ), *մեծ* (100-250 հազ. բնակիչ), *խոշոր* (250-500 հազ. բնակիչ) և *խոշորագույն* (ավելի քան 500 հազ. բնակիչ):

Այն խոշորագույն քաղաքները, որոնց բնակիչների թիվն անցնում է միլիոնից, անվանվում են *միլիոնանոց քաղաքներ* .

Այսպիսով, *ուրբանիզացիան գիտատեխնիկական հեղափոխության դառաշրջանում քաղաքային բնակավայրերի աճի, քաղաքներում, հատկապես խոշոր քաղաքներում, բնակչության կենտրոնացման և բնակավայրերի ամբողջ ցանցում քաղաքային ապրելակերպի տարածման սոցիալ-տնտեսական գործընթացն է.*

Ուրբանիզացիան տնտեսության մեջ և սոցիալական կյանքում ժամանակակից փուլում տեղի ունեցող խորը կառուցվածքային շարժ է:

Քաղաքային բնակչության աճի հիմնական աղբյուրներն են. 1) բուն քաղաքների բնակչության բնական աճը, 2) խոշորացման հետևանքով գյուղերի վերափոխումը քաղաքների, 3) քաղաքների տարածման, ընդարձակման հետևանքով շրջապատի գյուղերի «կլանումը», այսինքն գյուղերի բնակչության դասակարգելը որպես քաղաքային¹, 4) գյուղական բնակչության հոսքը դեպի քաղաքներ:

3.8 Ուրբանիզացիայի միտումները:

Ուրբանիզացիայի գործընթացի միտումները բնութագրող գլխավոր քանակական ցուցանիշներն են քաղաքային բնակչության աճի տեմպերը և ուրբանիզացվածությունը (ուրբանիզացման մակարդակը):

Քաղաքների աճը և դրանցում կենտրոնացված բնակչության բաժինը տարբեր պատմական ժամանակահատվածներում փոփոխվել է տարբեր չափերով:

Աշխարհի ուրբանիզացվածության աստիճանի ճշգրիտ գնահատումն անհնարին է այն պատճառով, որ տարբեր երկրների խմբերում «քաղաքային բնակավայր» կարգավիճակը որոշում են ազգային չափանիշներով: Աշխարհի երկրների մեծ մասում այդ չափանիշը բնակավայրի բնակիչների թվաքանակն է կամ, ինչպես ասում են, մարդաշատությունը, որի ցենզը (նվազագույն թիվը) երկրից-երկիր շատ խիստ տարբերվում է (մի քանի տասնյակ բնակչից մինչև մի քանի տասնյակ հազար բնակիչ):

Տարածաշրջան	Քաղաքային բնակչության բաժինը %, (2001 թ.)	Քաղաքային բնակչության աճի միջին տարեկան տեմպերը, (1995-2001 թթ.)	Տարածաշրջան	Քաղաքային բնակչության բաժինը %, (2001 թ.)	Քաղաքային բնակչության աճի միջին տարեկան տեմպերը, (1995-2001 թթ.)
<i>Աշխարհ</i>	47	2.5	<i>Ասիա</i>	37	3.2
<i>Առավել զարգացած(*)</i>	76	0.7	Չինաստան	32	3.6
<i>Թույլ զարգացած(+)</i>	40	3.3	Կամբոջա	16	5.6
<i>Առավել թույլ զարգացած ըկրներ(++)</i>	26	5.2	Աֆղանստան	22	7.7
<i>Աֆրիկա</i>	34	4.3	Բանգլադեշ	25	5.2
Բուրունդի	9	6.4	Բուրան	7	6.3
Էրիտրեա	19	4.7	Իրան	62	3.0
Քենիա	33	5.6	Նեպալ	12	6.5
Մոզամբիկ	40	7.1	Իրաք	77	3.7
Ռուանդա	6	4.7	Իսրայել	91	1.6
Եգիպտոս	45	2.6	Քուվեյթ	98	3.4
Թունիս	66	2.6	Սինգապուր	100	0.8
Լիբիական Արաբական Զամահիրիա	88	3.9	<i>Լատինական Ամերիկա և Կարիբյան (ծովի) ավազան</i>	74	2.3
<i>Եվրոպա</i>	75	0.3	Կուբա	75	1.2
Ալբանիա	42	2.2	Հայիթի	36	4.1
Պորտուգալիա	64	1.4	Պանամա	56	2.4
Ավստրիա	65	0.7	Արգենտինա	90	1.5
Ֆրանսիա	76	0.5	Բրազիլիա	81	2.3
Գերմանիա	87	0.3	Կոլումբիա	74	1.6
Նիդերլանդներ	89	0.6	Ուրուգվայ	91	0.8
Բելգիա	97	0.3	Վենեսուելա	87	2.4
<i>Հյուսիսային Ամերիկա</i>			<i>ԱՊՀ երկրներ</i>		
Կանադա	77	1.2	Հայաստան	70	1.6
ԱՄՆ	77	1.2	Ադրբեջան	57	1.7
<i>Օվկիանիա</i>	70	1.2	Բելառուս	71	0.8
Ավստրալիա	85	1.2	Վրաստան	61	1.1
Նոր Զելանդիա	86	1.3	Ուզբեկստան	37	2.8
Վանուատու	20	3.9	Ռուսաստան	78	0.3
			Ուկրաինա	68	0.6

¹ Այս երևույթը կարելի է ակնառու ձևով դիտել Երևանի օրինակով, որը ժամանակին ներգրավել է Զարբախ, Նորագյուղ, Անաստասավան, Դավիթաշեն, Քանաքեռ և այլ նախկին գյուղերի բնակչությանը:

Աշխարհի ամբողջ, գյուղական ու քաղաքային բնակչության և խոշորագույն¹ քաղաքների բաշխումը (1999թ.)

	Ամբողջ միլիոններ ընդամենը	Տեսակարար կշիռը (%)				Միլիոնաց քաղաքների թիվը (1995թ.)	Մեգալոպո- լիսների թիվը (1995թ.)
		Ամբողջ միլիոններ, %	Պրովինցիա- լաց միլիոններ	Քաղաքային միլիոններ	Միլիոնաց քաղաքների թիվը		
Աշխարհի ընդամենը	5978	100	100	100	100	370	12
Աֆրիկա	767	12.8	15.4	9.5	9.4	35	0
Ասիա	3.634	60.0	72.1	47.1	48.3	153	7
Եվրոպա	729	12.2	5.9	20.1	14.7	79	0
Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազան	511	8.6	4.1	14.1	14.5	49	3
Հյուսիսային Ամերիկա	307	5.1	2.2	8.4	12.0	48	3
Օվկիանիա	30	0.5	0.3	0.8	1.1	6	0

- (*) Առավել զարգացած տարածաշրջանները ներառում են Հյուսիսային Ամերիկան, Ճապոնիան, Եվրոպան, Ավստրալիան ու Նոր Զելանդիան:
- (+) Թույլ զարգացած տարածաշրջանները ներառում են Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի և Կարիբյան ծովի ավազանի, Ասիայի (բացառությամբ Ճապոնիայի) բոլոր շրջանները, ինչպես նաև Մեկանեզիան, Միկրոնեզիան ու Պոլինեզիան:
- (++) Առավել թույլ զարգացած երկրները, համաձայն ՄԱԿ-ի ստանդարտային որոշման, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի ու Ասիայի շուրջ 49 երկրներն են (օրինակ Լիբերիա, Սոմալի, Ռուանդա, Բուրան, Հայթի):

Որոշ երկրներում որպես չափանիշ է ընդունված քաղաքի վարչական գործառնությունը (տարածաշրջանի կենտրոնական բնակավայր հանդիսանալը), մյուսներում զբաղվածության կառուցվածքը (հատկապես ոչ գյուղատնտեսական ինդուստրիալ ճյուղերում զբաղվածների բաժնի գերակշռության պարտադիր պայմանը), իսկ մի քանի երկրներում էլ հաշվի են առնում նաև քաղաքային համարվող բնակավայրի կառուցապատման պատկերը (հատկապես բնակչության նվազագույն միջին խտությունը):

ՄԱԿ-ի ժողովրդագրական դեպարտամենտը նման պայմաններում ուրբանիզացվածության համաշխարհային համեմատությունները հնարավոր դարձնելու նկատառումով, քաղաք է համարում ավելի քան 20 հազար բնակիչ ունեցող բնակավայրը, հիմք ընդունելով այն ենթադրությունը, որ այդպիսի բնակավայրերի ճնշող մեծամասնությունը, հավանաբար, կունենա քաղաքային բնակավայրին բնորոշ գծերի մեծ մասը:

Ըստ Վ. Պոկչիշևսկու հաշվարկի, ավելի քան 20 հազար բնակիչ ունեցող քաղաքներում 1800 թ. ապրում էր աշխարհի բնակչության ընդամենը 2,4%-ը: 1850 թ. այդ բաժինը հասավ 4,3%-ի, 1900թ.՝ 9,2%-ի, 1950թ.՝ 20%-ի: 2001 թ. գնահատմամբ աշխարհի քաղաքներում բնակվում է մոլորակի ընդհանուր բնակչության 48%-ը¹:

Սակայն այս ընդհանուր ցուցանիշի հետևում գոյություն ունեն ուրբանիզացվածության և ուրբանիզացիայի տեսանկյան տարածաշրջանային մեծ տարբերություններ:

Ուրբանիզացիայի գործընթացի կարևոր միտումներից է առավել խոշոր ավելի քան մեկ միլիոն բնակիչ ունեցող քաղաքների աճի արագացումը, իսկ դրանցում բնակվող բնակչության բաժինն ուրբանիզացվածությունն արտահայտող առավել կարևոր և բնութագրական ցուցանիշն է:

Աղյուսակի տվյալների վերլուծությունից երևում են այն զգալի անհամաչափությունները, որոնք դեռևս գոյություն ունեն առանձին տարածաշրջանների գյուղական ու քաղաքային բնակչության ու խոշորագույն քաղաքների բաժինների միջև: Այդ անհամաչափությունները հատկապես մեծ են Ասիայում և Աֆրիկայում: Այսպես, Ասիայում բնակվում է աշխարհի բնակչության 61%-ը, մինչդեռ դրա քաղաքներում բնակվում է աշխարհի քաղաքային բնակչության 47%-ը ու գտնվում է միլիոնանոց քաղաքների 48%-ը:

Եվրոպա և Ամերիկա աշխարհամասերում տիրապետող հակառակ իրադրությունն է: Օրինակ Ամերիկա աշխարհամասում ընդհանուր առմամբ բնակվում է աշխարհի ամբողջ բնակչության մոտ 14%-ը, քաղաքների բնակչության ավելի քան 22%-ը և այդ աշխարհամասում են գտնվում աշխարհի միլիոնանոց քաղաքների բնակչության ավելի քան 26%-ը: Այստեղ են գտնվում նաև աշխարհի մեգալոպոլիսների 50%-ը (աղյուսակ 3.5):


Այսպիսի անհամաչափություններն աշխարհի տարածաշրջանների երկրների քաղաքական, սոցիալ-տնտեսական ու պատմական զարգացման արդյունք են: Այդ անհամաչափությունները որոշ չափով նվազել են և առաջիկայում, ըստ կանխագուշակումների, էլ ավելի կնվազեն:

Խոշորագույն քաղաքների բնակչության բաժնի աճի միտումն ուղեկցվում է դրանց միջին մարդաշատության աճի միտումով: Այսպես, 1800 թ. աշխարհի առավել խոշոր 100 քաղաքների միջին մարդաշատությունը կազմում էր 200 հազար մարդ, 1950 թ. այն հասավ 2 100 000, իսկ 1990 թ.՝ 5 000 000 մարդու, այսինքն շուրջ 200 տարվա ընթացքում այդ ցուցանիշը աճել է 25 անգամ (տես 3.3 գծապատկերը):

¹ Народонаселение мира 2003 г., UNFPA, Фонд ООН в области народонаселения, Нью Йорк, 2003, стр. 86.

¹ Հաշվի չեն առնված այն միլիոնանոց քաղաքային ագլոմերացիաները, որոնց կենտրոնական քաղաքի բնակչության թվաքանակը փոքր է 1 միլիոնից: Կազմված է ըստ Народонаселение мира 1999 г., UNFPA, Фонд ООН в области народонаселения, Нью Йорк, 1999:

Աշխարհի առավել խոշոր 100 քաղաքների միջին մարդաշատությունը



Երբեմն ձևավորվում են մեգալոպոլիսներ՝ մի քանի խոշոր քաղաքային ագլոմերացիաների սերտաճումից (միավորումից) առաջացած ուրբանիզացված տարածքներ, որոնք ներառում են նաև քաղաքների միջև ընկած տարածքները:

Մեգալոպոլիսների թիվն ու բնակչությունն ավելի դանդաղ են աճում, քան ենթադրվում էր մինչև վերջերս:

Ուրբանիզացիայի գործընթացի ժամանակակից փուլի առավել բնութագրական գիծը **քաղաքների տարածական ընդարձակման ու շրջակա բնակավայրերի հետ արտադրական, մշակութային ու կենցաղային կապերի բարդացումն է**:

Ուրբանիզացիան պայմանավորված է հիմնականում երկրների ինդուստրացումով և արտահայտում է դրա պատմական ընթացքը: Հին ինդուստրացված երկրներում ուրբանիզացիայի գործընթացը հասել է իր բարձրագույն փուլին, մինչդեռ նոր զարգացող (ինդուստրացվող) երկրներում այն դեռևս գտնվում է ցածր փուլում:

Երկարատև ժամանակահատվածում քաղաքները եղել են տնտեսական ու սոցիալական կյանքի կիզակետեր, որոնք սահմանափակվել են քաղաքային պարիսպների մեջ: Փակ բնատնտեսությանը փոխարինած կապիտալիստական հարաբերությունների պայմաններում քաղաքների զարգացումն արագացավ և դրանք այլևս չէին տեղավորվում պարիսպների մեջ ու ընդարձակվում էին շրջակա գյուղատնտեսական տարածքների հաշվին:

Կապիտալիզմի զարգացման բարձր փուլերում, հատկապես սկսած XX դարի կեսերից, խոշորագույն քաղաքները ծեռք բերելով տնտեսական ու սոցիալական անհամեմատ մեծ պոտենցիալ, հետզհետե իրենց զարգացման ոլորտի մեջ ներգրավում են շրջապատի ավելի ու ավելի հեռավոր բնակավայրերը (և գյուղական, և՛ քաղաքային): Այս գործընթացն արտահայտում են **ագլոմերացում** տերմինով: **Ագլոմերացումը երկրի առանձին արեալներում՝ քաղաքային ագլոմերացիաներում քաղաքային բնակչության կենտրոնացման գործընթացն է,**

որն ուղեկցվում է այդ կենտրոնացման միջուկի տարածական ընդարձակումով (ու դրա միաժամանակյա բարդացումով) և հանգեցնում է քաղաքային ագլոմերացիաների առաջացման:

Այսպիսով, **ագլոմերացումը** քաղաքների աճի գործընթաց է, իսկ **քաղաքային ագլոմերացիան**՝ այդ գործընթացի արդյունքը: Քաղաքային ագլոմերացիան տարաբնակեցման ներկա փուլի առավել բնութագրական համակարգն է:

Ագլոմերացման սկզբնական փուլում քաղաքային տարածքային համակարգեր ձևավորվում էին մեծ մասամբ երկրի մայրաքաղաքի շուրջը: Այս գործընթացը ստացել է մետրոպոլիզացիա անվանումը, իսկ հետագայում այն հաճախաբար սկսվեց օգտագործվում է ցանկացած խոշոր քաղաքի շուրջը ագլոմերացիաների ձևավորումն արտահայտելու համար¹:

Մետրոպոլիսի շուրջը ստեղծված տարածքներն անվանվում են **մետրոպոլիտենային արեալներ**: Սակայն դեռևս չի հաջողվել մշակել չափանիշների մի այնպիսի համակարգ, որի օգնությամբ որոշվի այդ արեալի սահմանը:

Մետրոպոլիտենային արեալն իր բնույթով շարունակական կոնտինուալ դաշտ է, որի կենտրոնից դեպի ծայրամասերը քաղաքային բնակչության և քաղաքների խտությունը, որպես կանոն նվազում է:

Սովորաբար մետրոպոլիտենային արեալի բնակչության մեջ գլխավոր քաղաքից բացի ներառնվում են նաև այն ինքնուրույն բնակավայրերը, որոնց տնտեսությունը և մշտական բնակիչները գլխավոր քաղաքի հետ մտել են բարդ հարաբերությունների (կապերի) մեջ:

ԱՄՆ-ում ստանդարտ մետրոպոլիտենային արեալները (SMA) սահմանվում են որպես ֆունկցիոնալ տարածաշրջաններ, որոնք ներառում են նաև քաղաքային միջուկի (գլխավոր քաղաքի կամ քաղաքների) արվարձաններն ու դրանց կառուցապատված տարածքից դուրս գտնվող այն բնակավայրերը, որոնցից աշխատելու նպատակով քաղաքի միջուկ եկող մշտական բնակիչների բաժինը գերազանցում է ընդունված որոշակի մակարդակը և միաժամանակ դրանք ունեն «մետրոպոլիտենային բնութագիր» (օրինակ՝ բնակչության որոշակի խտություն)²:

Եվրոպական երկրներում, մետրոպոլիտենային արեալների առանձնացման հարցում գիտնականներն ավելի հակված են այն տեսակետին, որ դրանց մեջ պետք է ընդգրկել մետրոպոլիսի անմիջական շրջապատի համատարած կառուցապատված տարածքները՝ առանց մեծ ու փոքր քաղաքային, գյուղական բնակավայրերի, եթե նույնիսկ դրանց ու մետրոպոլիտենային կենտրոնի բնակարանային պայմաններն ու աշխատանքի շուկան միավորված (ինտեգրացված) են միմյանց:

¹ Անգլերեն լեզվում metropolis բառն օգտագործվում է երկու իմաստով՝ մայրաքաղաք և խոշոր քաղաք:

² An Urbanizing World. UN Center for Human Settlement (Habitat). Oxford University Press, 1996.

1990 թ. դրությամբ մեզաքաղաքներում (որոնց բնակիչների թիվը ավելի քան 10 մլն է) կենտրոնացված էր աշխարհի բնակչության 3%-ը (իսկ եթե բնակիչների թվաքանակի շեմը իջեցվի 8 մլնի, ապա այդ բաժինը կհասնի 5%-ի):

Վերոգրյալ հետազոտությունը ցույց տվեց, որ նոր զարգացող երկրների մի շարք մեզաքաղաքների, հատկապես Մեխիկոյի, Կալկաթայի, Սան Պաուլուի բնակչության թիվը մի քանի միլիոնով պակաս է նախկինում կանխագուշակվածից: Վերջինիս համաձայն, օրինակ Կալկաթայում և Մեխիկոյում 2000 թ. հավանաբար պետք է բնակվեին 30-40 ական մլն բնակիչ, այնինչ 1995 թ. Կալկաթայում բնակվում էր ընդամենը 13 մլն, իսկ Մեխիկոյում շուրջ 18 մլն բնակիչ:

Խոշոր մեզաքաղաքների բնակչության թվաքանակը կանխագուշակվածից ավելի ցածր էր նաև Գյուսիսի երկրներում: Այս երևույթը բացատրվում է խոշորագույն քաղաքներից բնակչության մի մասի տեղափոխությամբ դեպի դրանց արվարձաններն ու շրջակա գյուղական վայրերը: Այս երևույթները համապատասխանաբար անվանվում են սուբուրբանիզացիա (suburb- արվարձան) և ռուրբանիզացիա (rural- գյուղական, urbanization - ուրբանիզացիա):

1999 թ. աշխարհում կային 15 մեզաքաղաքներ, որից 13-ը գտնվում էին զարգացող երկրներում:

Կանխագուշակվում է, որ 2015 թ. դրանց քանակը կհասնի 26-ի, որից 22-ը կլինեն զարգացող երկրներում (ընդ որում՝ 18-ը Ասիայում): Այդ ժամանակ դրանցում կբնակվի աշխարհի բնակչության 10%-ը (1950 թ.՝ 1,7%):

3.9 Ուրբանիզացիան, գիտատեխնիկական առաջադիմությունը և քաղաքների էկոլոգիայի հարցերը

Ժամանակագրական առումով «ուրբանիզացիոն պայթյունը» գիտատեխնիկական հեղափոխության հետ է հանընկնում այն պարզ պատճառով, որ դրանք փոխադարձաբար կապված են միմյանց հետ:

Տրանսպորտային ու հեռուստահաղորդումների համակարգերի զարգացումը նպաստեց տարաբնակեցման համակարգերի ձևավորմանը որպես արտադրական ամբողջություն: Մյուս կողմից խոշոր քաղաքներն ու քաղաքային ագլոմերացիաներն իրենց հերթին ծագում են շատ գիտահետազոտական ու նախագծային-կոնստրուկտորական հիմնարկներ ու գիտատար արտադրություններ, բազմազան ոչ արտադրական գործունեություններ:

Բնության վրա առավել մեծ մասշտաբի բացասական ազդեցություն է ունենում արդյունաբերական ձեռնարկությունների տարերային կենտրոնացումը հատկապես խոշոր քաղաքներում և քաղաքային ագլոմերացիաներում:

Այդ ազդեցության մասշտաբի մասին կարելի է պատկերացում կազմել նույնիսկ միայն այն փաստից, որ աշխարհի ցամաքի տարածքի ընդամենը 2%-ը կազմող քաղաքներում է կենտրոնացված գրեթե ամբողջ մշակող արդյունաբերությունը (այդ թվում նաև այնպիսի «անմաքուր» արտադրություններ, ինչպիսիք են

ջերմաէներգետիկականը, քիմիականը, մետաղաձուլականը), աշխարհի բնակչության գրեթե կեսը, ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցների գերակշիռ մասը:

Քաղաքային տրանսպորտն իր դրական դերի հետ միաժամանակ մեծ բացասական ազդեցություն է գործում քաղաքների օդային ավազանի մաքրության, աղմկային ֆոնի բարձրացման և մարդկանց հոգեկան վիճակի վրա:

Մասնավորապես, ավտոճանապարհները զբաղեցնում են քաղաքների տարածքի շուրջ 1/3 մասը, որի հետևանքով «ավտոտրանսպորտը, որը թվում է թե կոչված է հաղթահարել (փոքրացնել) հեռավորությունները, իրականում ընդհակառակը ինքն է մեծացնում այդ հեռավորությունները, կարծես միմյանցից հեռացնելով քաղաքի կառուցապատված թաղամասերը»¹: Դրա հետևանքով աճում է աշխատավորների ազատ ժամանակի ոչ ռացիոնալ ծախսումը, ինչը հանգեցում է նրան, որ մարդիկ տառապում են «տրանսպորտային հոգնածությամբ»:

Ավտոտրանսպորտը բարձր ավտոմոբիլացված երկրների քաղաքների օդային ավազանի ամենամեծ աղտոտողն է: Օրինակ Լոս Անջելեսի մի քանի միլիոն ավտոմեքենաների «մասնակցությունը» քաղաքի մթնոլորտի աղտոտմանը կազմում է 60% (նախկին ԽՍՀՄ քաղաքներում այդ ցուցանիշը միջին հաշվով 17% էր):

Քաղաքների բնակիչների առողջության վրա ավտոտրանսպորտի չափազանց մեծ բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով իրագործվում են բազմաբնույթ միջոցառումներ: Մասնավորապես արգելվում է քաղաքի փողոցներով տարանցիկ ավտոտրանսպորտի երթևեկությունը, ուստի այդ նպատակով կառուցվում են քաղաքները շրջանցող ավտոճանապարհներ (օրինակ Մոսկվայի շուրջը կառուցված է շուրջ 120 կմ երկարությամբ օդակաձև ավտոճանապարհ):

Եվրոպական որոշ երկրների քաղաքներում արգելվում է ածխաթթու գազը չեզոքացնող սարքավորումներով չհագեցած մթնոլորտը խիստ աղտոտող հին արտադրության ավտոմեքենաների մուտքը: Մեծ աշխատանք է կատարվում տնտեսապես շահավետ, զանգվածային էլեկտրոմոբիլի ստեղծման ուղղությամբ:

Քաղաքների բնակիչների կյանքի ու աշխատանքային գործունեության համար հիգիենիկ պայմաններ ստեղծելու նպատակով իրականացվում են նաև ճարտարապետաշինարարական բնույթի մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, նոր թաղամասերի կառուցապատման նախագծերում առավելագույնս հաշվի են առնվում «քամիների վարդի» բնույթը և փողոցները նախագծում են քամիների ավելի մեծ հաճախության ուղղությամբ (երկայնությամբ), որպեսզի ավելի արդյունավետորեն օդափոխվեն ծխով լեցուն «տուփ-փողոցները»:

Այդ նպատակով փորձում են նաև սահմանափակել² երկնաքեր շենքերի հարկայնությունը, այն նվազեցնելով մինչև 40 հարկի:

Մարդու առողջությունը քայքայող աղմկային ֆոնը իջեցնելու նպատակով

¹ Покшишевский В. В. География населения зарубежных стран. М., 1971, стр. 135.

² Առանձին բացառություններով:

բնակելի շենքերը կառուցում են փողոցի բանուկ մասից հեռու¹, մայթերերին տնկում են թփեր, իսկ երկրորդ շարքում՝ ծառեր, լուսամուտների շուրջը տեղադրվում են ձայնի ալիքները մեղմացնող («կոտրող») բետոնե սալիկներ, տեղադրում են պլաստմասսայից պատրաստված հերմետիկ լուսամուտներ և այլն:

Արդյունաբերության և ավտոտրանսպորտի խիստ կենտրոնացման հետևանքով քաղաքների օդային և ջրային ավազանների աղտոտվածությունը բազմաթիվ անգամ գերազանցում է դրա թույլատրելի սահմանը:

Աղտոտվածության աստիճանի նվազեցման առավել արդյունավետ միջոցառումը տեղաբաշխական է քաղաքի պայմաններում անհամատեղելի, առավել «աղտոտող» արտադրական ձեռնարկությունները խոշոր քաղաքների վարչական սահմաններից դուրս հանելը: Այս գործընթացը տրամազօրոն հակադիր է ազլոմե-րացմանը և անվանվում է **դեգլոմերացիա**:

Մոսկվա քաղաքից 1960-1980 թթ. դուրս է բերվել «էկոլոգիապես անմաքուր» արտադրությունների շուրջ 100 մեծ ու փոքր ձեռնարկություն:

Ապակենտրոնացման գործընթացը բնորոշ է ոչ միայն արդյունաբերական ձեռնարկություններին, այլ նաև խոշոր քաղաքների բնակչությանը: Խոշոր քաղաքային ազլոմերացիաների միջուկ-քաղաքի բնակչության ապակենտրոնացումը դեպի շրջապատի փոքր քաղաքային, ինչպես նաև գյուղական «ննջարան-բնակավայրերը» անվանվում է **բնակչության դիֆուզիա**: Խոշոր քաղաքներից (Օրինակ, Նյու-Յորք քաղաքի մետրոպոլիսի բնակիչների թիվը 1970-1994 թթ. ընթացքում 7.9 մլն-ից նվազել է 7.3 մլն, մինչդեռ Նյու Յորքի մետրոպոլիտենային արեալի բնակչության թիվը 16.1 մլն-ից հասել է 19.8 մլնի): Մարդկանց «փախուստի» կարևոր պատճառներ են (բացի արդեն նշվածները) նաև բնակչության բարձր խտության պատճառով համաճարակային հիվանդությունների տարածման բարձր աստիճանը, քաղաքների անհրապույր ու միապաղաղ տեսքը, մայր բնությունից մարդու կտրվածությունը:

Մարդիկ առավել հաճախ լքում են խոշոր քաղաքների կենտրոնները, որի հետևանքով այդտեղ կան բազմաթիվ լքված շենքեր: Քաղաքների կենտրոններում ապօրինի կարգով բնակություն են հաստատում չունևորներն ու այլ երկրներից ներգաղթած անտուն ինժեներները: Օրինակ՝ Նյու Յորքի կենտրոնական թաղանասերի (Բրուքլին, Մանհեթեն) բնակչության 94-98%-ը կազմում են նեգրերը, պուերտոռիկացիները և Արևելյան ու Հարավային Ասիայից եկած ընչազուրկ ինժեներները²:

Խոշոր քաղաքի կենտրոնի բնակիչներն իրենց նոր բնակության վայր են ընտրում արվարձաններն ու արագընթաց ճանապարհներին կից մերձքաղաքային (մինչև 30-40 րոպե ճանապարհածամանակ պահանջող հեռավորության) գյուղական բնակավայրերն ու ազատ տարածքները, որտեղ անհամեմատ ցածր է շինա-

րարական հրապարակի տեսակարար գինը, մաքուր է օդային ավազանը, ցածր է աղմկային ֆոնը, բարձր է կանաչապատվածության աստիճանը: Ընդամենը, որքան հարուստ է քաղաքի կենտրոնի բնակիչը, այնքան ավելի մեծ հեռավորության վրա է ընտրում իր նոր բնակավայրը: Դրա հետևանքով ընթանում է մետրոպոլիտենային արեալների բնակչության սոցիալական-տարածքային յուրատեսակ շերտավորում:

Սակայն վերջին 15-20 տարում սկիզբ է առել նաև հակառակ ուղղությամբ խոշոր քաղաքների կենտրոնների նախկին բնակիչների երիտասարդ սերնդի մի մասի հետադարձ հոսք դեպի խոշոր քաղաքների կենտրոնների վերանորոգված, մոդեռնացված թաղամասերն ու բնակարանները: Այս երևույթն ստացել է **ռեուրբանիզացիա** անվանումը¹:

Հարցեր ինքնատուգման համար

1. Բնութագրել բնակչության աշխարհագրության առանձնահատուկ տեղը բնակչությունն ուսումնասիրող գիտությունների շարքում:

2. Բնակչության աճի արագացման հետևանքով արդյո՞ք գերբնակեցված է երկրագունդը:

3. Բնակչության աճի պրագագաման հետևանքով ի՞նչ համաճարակային հիմնախնդիրներ են առաջացել, և դրանք ի՞նչ ուղիներով կարելի է հաղթահարել:

4. Աշխատանքային ռեսուրսների վերարտադրության և ռացիոնալ օգտագործման ինչպիսի՞ տարբերություններ կան զարգացած և նոր զարգացող երկրների խմբերի միջև:

5. Բացահայտել տարաբնակեցման տերմինի էությունը, ինչպես նաև դրա ու շրջակա միջավայրի միջև գոյություն ունեցող փոխադարձ կապը:

6. Տնտեսական, ժողովրդագրական, մշակութային և այլ տեսակետներից գնահատել բնակչության զարթերի դերը:

7. Բնութագրել զարթերի հին և նոր միտումները:

8. Բացահայտել ուրբանիզացիա հասկացության էությունը, դրա պատճառներն ու քաղաքային բնակչության աճի աղբյուրները:

9. Բացահայտել քաղաքների ու շրջակա միջավայրի միջև կապերը:

10. Ուրբանիզացիայի գործընթացի և տարածական ձևերի ինչպիսի՞ տարբերություններ կան զարգացած և նոր զարգացող երկրների խմբերի միջև:

11. Բնութագրել ուրբանիզացիայի գործընթացի նոր միտումները և աշխարհի ուրբանիզացվածության պատկերը առաջիկա տասնամյակներում:

12. Բնութագրել գտի ազդեցությամբ քաղաքներում սրված էկոլոգիական խնդիրները և դրանց լուծման ուղիները:

¹ Օրինակելի այդպիսի մի փողոց կառուցված է նաև Երևանում (Հարավ-Արևմտյան քաղամասում):

² Михайлов Е. А. США, Проблема больших городов. М., 1973, стр. 94

¹ Романова Н. Б. Реурбанизация в Западной Европе и США, Изв. ВГО, т. 117, вып. 2, 1985, стр. 150-155.

Գ Լ ՈՒ Խ 4

Հ Ա Մ Ա Շ Խ Ա Ր Հ Ա Յ Ի Ն Տ Ն Տ Ե Ս ՈՒ Թ Յ Ա Ն

Ա Շ Խ Ա Ր Հ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

4.1 Համաշխարհային տնտեսություն, ձևավորումն ու զարգացման միտումները

Հայտնի է, որ բոլոր երկրների տարածքներում պատմականորեն ձևավորվում է հասարակական արտադրության համակարգ՝ ազգային (ժողովրդական) տնտեսություն:

Այն տվյալ երկրի արտադրողական ուժերի ամբողջությունն է, որը զարգանում է, որպես տնտեսական երկակի համակարգ. ա) որպես ինքնիշխան պետության ինքնուրույն տնտեսական օրգանիզմ, բ) որպես համաշխարհային տնտեսական ընդհանուր համակարգի բաղկացուցիչ օղակ:

Աշխարհի բոլոր երկրների ազգային տնտեսությունների, դրանց արտադրական ու տնտեսական փոխադարձ կապերի ու հարաբերությունների միագումարն անվանվում է համաշխարհային տնտեսություն:

Համաշխարհային տնտեսությունն իր ձևավորման սկզբից մինչ օրս շատ մեծ փոփոխություններ է կրել: Այն սկզբնապես ձևավորվել է որպես **համաշխարհային կապիտալիստական տնտեսություն**՝ շնորհիվ կապիտալիստական հասարակարգի պայմաններում ստեղծված մախադրյալների՝ խոշոր մեքենայական արտադրության, զարգացած տրանսպորտի ու համաշխարհային շուկայի:

XX դարի երկրորդ կեսում սոցիալիստական ճամբարի ձևավորման հետևանքով համաշխարհային տնտեսական համակարգը տրոհվեց երկու ենթահամակարգերի՝ **համաշխարհային կապիտալիստական տնտեսության** և **համաշխարհային սոցիալիստական տնտեսության**: Բնական ու աշխատանքային ռեսուրսների իմտենսիվ շահագործման շնորհիվ, համաշխարհային սոցիալիստական տնտեսության հաջողվեց ժամանակավորապես զգալիորեն հզորանալ: Աշխարհի արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ կապիտալիստական և սոցիալիստական երկրների մասնաբաժինները, մինչև 1990 թ., համապատասխանաբար, կազմում էին 58 և 42 %, սակայն դրանք գոյատևում էին գրեթե ինքնապարփակ համակարգերով:

Օրինակ սոցիալիստական երկրներն իրենց ընդհանուր առևտրի 84%-ը կատարում էին միմյանց հետ և ընդամենը 16%-ը կապիտալիստական երկրների հետ:

Վերջին տարիներին տնտեսական ու քաղաքական ճգնաժամի հետևանքով սոցիալիստական երկրների բանակն ու համաշխարհային արդյունաբերական արտադրության մեջ ունեցած բաժինը, ինչպես հայտնի է, շատ մեծ չափով նվազել է:

Համաշխարհային տնտեսության մեջ յուրաքանչյուր երկիր իր տեղը պահպանում է բազմաթիվ այլ երկրների հետ սուր տնտեսական մրցակցության պայմաններում:

Տնտեսական քաղաքականության մեջ նույնիսկ փոքր սխալի, գիտատեխնիկական առաջադիմության նվաճումների ներդրման դանդաղեցման, ընդհանուր

առմամբ համաշխարհային տնտեսությանը համաքայլ չգործելու դեպքում տվյալ երկիրը կարող է կորցնել դժվարին ու երկարատև պայքարի շնորհիվ համաշխարհային արտադրության մեջ իր նվաճած դիրքերը (տեսակարար կշիռը): Համաշխարհային տնտեսությունը հիշեցնում է մետրոպոլիտենի շարժասանդուղքներ, որոնց վրա կան և վերելք և վայրէջք կատարողներ: Որպես ասվածի հիմնավորում կարող է ծառայել ստորև բերվող աղյուսակը, որն արտահայտում է տնտեսության առավել կարևոր ճյուղի՝ մշակող արդյունաբերական արտադրանքի մակրոտնտեսական և մակրոաշխարհագրական փոփոխությունները 1980-1997 թթ. ժամանակահատվածում:

Աղյուսակ 4.1

Աշխարհի մշակող արդյունաբերության բաշխումն ըստ երկրների խմբերի 1980-1997թթ. (1990թ. հաստատուն գներով)¹

	Արդյունաբերականացված երկրներ							Ձաղագող երկրներ									
	Արևելյան Եվրոպա և Եվրոյի խմբեր	Արևմտյան Եվրոպա		Ճապոնիա	Հյուսիսային Ամերիկա	Այլ	Ընդամենը	Տարածաշրջանային խմբեր			Խմբերն ըստ զարգացման						
		Եվրոմիություն	Այլ					Տակուրիա	Աֆրիկա	Լատինական Ամերիկա	Հարավային և արևելյան Ասիա	Արևմտյան Ասիա և Եվրոպա	ՆԱԵ ²	Երկրորդ սերնդի ՆԱԵ ³	Առավել թույլ զարգացած երկրներ	Չինաստան	Այլ
1980	9.3	34.8	1.7	13.9	23.8	2.1	85.6	0.9	6.8	5.0	1.7	8.4	1.6	0.3	1.4	2.7	14.4
1985	9.6	32.2	1.5	15.7	23.8	1.9	84.7	0.9	6.0	6.5	1.9	8.4	1.8	0.3	2.0	2.8	15.3
1990	8.4	31.4	1.4	17.1	23.1	1.8	83.2	0.9	5.4	8.6	1.9	8.8	2.4	0.3	2.6	2.7	16.8
1993	4.8	31.3	1.4	17.2	23.5	1.9	80.1	0.9	5.8	11.4	1.8	9.4	3.0	0.3	4.2	3.0	19.9
1994	3.8	31.3	1.4	16.4	24.5	1.9	79.3	0.9	5.8	12.3	1.7	9.6	3.0	0.3	4.8	3.0	20.7
1995	3.6	30.5	1.4	16.3	25.3	1.8	78.9	0.9	5.5	13.0	1.7	9.5	3.2	0.3	5.2	2.9	21.1
1996	3.4	29.4	1.3	16.0	26.4	1.8	78.3	0.9	5.5	13.6	1.7	9.6	3.3	0.3	5.6	2.9	21.3
1997	3.2	29.0	1.3	15.8	27.0	1.8	78.1	0.9	5.3	14.0	1.7	9.7	3.3	0.3	5.9	2.7	21.9

Համաշխարհային մշակող արդյունաբերության արտադրության մեջ վերջին տասնամյակում իրենց տեսակարար կշիռն առավել մեծ չափով կորցնողները ամենամեծ «վայրէջք կատարող» Արևելյան Եվրոպայի երկրներն են և Նախկին

¹ Source: 1997 Industrial Commodity Statistical Yearbook. UN, 1998, p. 32.
² ՆԱԵ - Նոր արդյունաբերականացված երկրներ (Արգենտինա, Բրազիլիա, Մեքսիկա, Թայվան, Հնդկաստան, Կորեայի Հանրապետություն: Սինգապուր):
³ Երկրորդ սերնդի ՆԱԵ (Կուլումբիա, Թուրքիա, Ինդոնեզիա, Մալայզիա, Ֆիլիպիններ, Թաիլանդ):

ԽՍՀՄ-ը: 1985 թ. նրանց ունեցած առավել մեծ տեսակարար կշիռը մինչև 1997 թ. հայտնի պատճառներով կրճատվել է 3 անգամ (9.6%-ից 3.2%): Արդյունաբերական արտադրանքի այդպիսի անկումից հաջողությամբ օգտվել են նոր արդյունաբերական և երկրորդ սերնդի նոր արդյունաբերական երկրներն ու Չինաստանը, որոնք մինչև այդ էլ տնտեսական բարեփոխումների շնորհիվ սկսել էին արդյունաբերական «բումը» թռչեցածն վերելքը:

Աղյուսակի տվյալներից պարզորոշ երևում է նաև մեկ այլ խոշոր տնտեսական միտում: Աշխարհում աստիճանաբար աճում է զարգացող երկրների մշակող արդյունաբերության, ինչպես նաև տնտեսության այլ ճյուղերի տեսակարար կշիռը: Ուսումնասիրվող ժամանակահատվածում այն աճել է 1.5 անգամ (14.4-ից 21.9%), որը նախկինում կատարած բոլոր կանխագուշակումներից (նույնիսկ ցանկություններից) շատ մեծ աճ է: Զարգացող երկրների մշակող արդյունաբերության միջին տարեկան աճի տեմպերը 2-ից 5 անգամ բարձր են, քան արդյունաբերական երկրներինը (տես թիվ 4.2 աղյուսակը):

Աղյուսակ 4.2

Մշակող արդյունաբերության արտադրանքի աճի տեմպերն աշխարհում և որոշ տարածաշրջաններում (%-ով)

	Մշակող արդյունաբերական ընդհանուր արտադրանքը		Մշակող արդյունաբերական արտադրանքը մեկ շնչի հաշվով	
	1980-90	1990-1996	1980-1990	1990-1996
Արդյունաբերական երկրներ, այդ թվում	2.8	1.2	2.0	0.7
Արևելյան Եվրոպա և նախկին ԽՍՀՄ	2.6	-7.9	1.8	-8.1
Եվրամիություն	1.9	0.5	1.6	0.1
Զարգացող երկրներ, այդ թվում	5.1	6.9	2.9	5.1
Զարգացող երկրներն առանց Չինաստանի	4.3	1.5	1.9	2.5
Աշխարհը, ընդամենը	3.1	2.3	1.4	0.8
ՆԱԵ	4.1	4.1	2.0	2.4
Երկրորդ սերնդի ՆԱԵ	7.1	7.8	5.0	6.1
Հարավային և Արևելյան Ասիա	9.1	10.6	7.1	8.9
ԱՍԵԱՆ	7.5	9.8	5.4	8.0

Աղյուսակից երևում է նաև, որ բնակչության մեկ շնչին հասնող մշակող արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերն ուղիղ համեմատական չեն արտադրության աճի տեմպերին, այլ գտնվում են կորելյացիոն կապի մեջ: Մեկ շնչին ընկնող մշակող արդյունաբերական արտադրանքի համեմատաբար փոքր աճի պատճառը զարգացող երկրների բնակչության անհամեմատ բարձր աճն է:

Մշակող արդյունաբերության արտադրանքի բնագավառի մյուս ուշագրավ երևույթը Հարավային և Արևելյան Ասիայի երկրների «ռեկորդային»¹ աճի տեմպերն են, որոնք, միտում ունեն էլ ավելի արագանալու:

ՆԱԵ-ների ու երկրորդ սերնդի ՆԱԵ-ների տնտեսական արագ աճի պատճառները մի քանիսն են: Դրանք ունեն աշխատանքային ու բնական մեծ ռեսուրսներ, հարմար ՏԱԴ (համեմատական մոտիկությունը ճապոնիային), վարում են տնտեսական բարեփոխումների, տնտեսական ինտեգրացման կուրս:

Շնորհիվ ՄԱԱ-ի վերը նշված բարձր տեմպերի, զարգացող երկրների ընդհանուր բաժնի մեջ ՆԱԵ-ների մասնաբաժինն արդեն գրեթե 1.5 անգամ գերազանցում է դրանց բնակչության մասնաբաժնին, մինչդեռ ամենաթույլ զարգացած երկրներում այն, ընդհակառակը, 7-9 անգամ փոքր է բնակչության մասնաբաժնից:

Չինաստանում այդ մասնաբաժինները ներկայումս գրեթե հավասարվել են (1980 թ. արդյունաբերական արտադրանքի մասնաբաժինը բնակչության մասնաբաժնին զիջում էր շուրջ 3 անգամ) (տես թիվ 4.3 աղյուսակը):

Աղյուսակ 4.3

Մշակող արդյունաբերության և բնակչության բաշխումը զարգացող երկրների որոշ խմբերի միջև² (%-ով)

	Մշակող արդյունաբերության արտադրանքը 1990թ. հաստատուն գներով				Բնակչությունը			
	1980	1985	1990	1996 ³	1980	1985	1990	1996 ³
Թույլ զարգացած երկրներ	2.2	2.2	1.8	1.4	11.5	11.8	12.1	12.7
ՆԱԵ-ները	58.4	54.5	52.1	44.2	31.0	31.0	30.8	30.6
Երկրորդ սերնդի ՆԱԵ-ները	10.8	11.8	14.2	15.2	11.2	11.2	11.2	11.1
Չինաստան	9.9	13.1	15.6	25.8	30.7	29.7	28.9	27.8

¹ Ավելի վաղ XX դարի կեսերին ԽՍՀՄ-ում, ճապոնիայում առանձին ժամանակահատվածներում գրանցվել են աճի նույնիսկ ավելի բարձր տեմպեր:
² Source: 1996 International Yearbook of Industrial Statistics, 1998, p. 32.
³ Նախնական տվյալներ

Այլ զարգացող երկրներ	18.7	18.4	16.3	13.4	15.6	16.3	17.0	17.8
Զարգացող երկրներ, ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Աֆրիկա	5.9	6.4	5.7	4.3	13.6	14.1	14.7	15.6
Լատինական Ամերիկա	47.4	38.9	32.0	25.2	11.3	11.2	11.1	11.1
Հարավային և Արևելյան Ասիա	34.7	42.1	51.2	62.7	71.5	70.9	70.3	69.4
Արևմտյան Ասիա և Եվրոպա	12.0	12.6	11.1	7.8	3.6	3.8	3.9	3.9
Զարգացող երկրներ ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

4.2 Համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքը:

Յուրաքանչյուր երկրում՝ պայմանավորված դրանց բնական պայմաններով ու ռեսուրսների առկայությամբ, ժողովրդագրական առանձնահատկություններով, ինչպես նաև համաշխարհային տնտեսության մշտական ազդեցությամբ, ձևավորվում է տնտեսության ճյուղերի որոշակի համամասնությամբ կառուցվածք կամ **ճյուղային կառուցվածք**:

Տնտեսության ճյուղային կառուցվածքն արտահայտում է տվյալ երկրի սոցիալ-տնտեսական տիպը:

Տնտեսական զարգացման ցածր ազդարային փուլում առավել մեծ է գյուղատնտեսության տեսակարար կշիռը, միջին՝ արդյունաբերական փուլում՝ արդյունաբերության, իսկ բարձրագույն հետարդյունաբերական փուլում՝ սպասարկման ոլորտի ճյուղերի բաժինը: Այսպես, օրինակ, ՀՆԱ-ի մեջ գյուղատնտեսության բաժինն Աֆրիկայի առավել թույլ զարգացած երկրներում տատանվում է 40-60%-ի միջև, իսկ բարձր զարգացած հետարդյունաբերական երկրներում այն տատանվում է 1-3%-ի սահմաններում: Սպասարկման ոլորտի ճյուղերի բաժինը, ընդհակառակը, մեծ է հետարդյունաբերական երկրներում (40-50%-ի սահմաններում):

Հետարդյունաբերական երկրների ՀՆԱ-ում տրանսպորտի բաժինը տատանվում է 5-7%-ի, իսկ արդյունաբերության բաժինը՝ 18-25 %-ի սահմաններում:

Փոփոխություն տեղի է ունենում նաև առանձին ճյուղերի, հատկապես մշակող արդյունաբերության, կառուցվածքում: Արդյունաբերական երկրների մշակող արդյունաբերության կառուցվածքում 1980-1996 թթ. նվազել է թեթև ու սննդի ար-

դյունաբերությունների, ինչպես նաև մետաղաձուլության բաժինները, և փոխարենը մեծացել է մետաղամշակման, մեքենաշինության և քիմիական արդյունաբերության բաժինը (տես թիվ 4.4 աղյուսակը):

Զարգացող երկրներում ևս նվազում է թեթև ու սննդի արդյունաբերության կշիռը, իսկ փոխարենը աճում է ծանր արդյունաբերության հատկապես քիմիական արդյունաբերության և մետաղաձուլության բաժինը:

Աղյուսակ 4.4

Արդյունաբերական և զարգացող երկրների մշակող արդյունաբերության ճյուղային կառուցվածքի փոփոխությունը՝ 1980-1996թթ. (%-ով)

Արդյունաբերական ճյուղ, արտադրություն	Արդյունաբերական երկրներ		Զարգացող երկրներ	
	1980	1996	1980	1996
Սննդի ու թեթև արդյունաբերություն	21.8	16.7	33.5	27.5
Սննդարդյունաբերություն	13.5	11.9	18.4	17.5
Թեթև արդյունաբերություն	8.3	4.8	15.1	10.0
Ծանր արդյունաբերություն	78.2	83.3	66.5	72.5
Քիմիական ու նավթամշակման արդյունաբերություն	16.3	17.5	21.4	23.5
Մետաղաձուլություն	6.7	5.4	7.0	7.7
Մետաղամշակում և մեքենաշինություն	37.4	44.3	24.2	28.1
Անտառային, փայտամշակման, թղթի ու ստվարաթղթի արտադրություն	6.7	6.3	5.1	4.2
Այլ ճյուղեր	11.1	9.8	8.8	9.0
Ընդամենը՝ մշակող արդյունաբերություն	100.0	100.0	100.0	100.0

4.3 ՉՏՀ ազդեցությունը համաշխարհային տնտեսության աճի տեմպերի ու ճյուղային կառուցվածքի վրա:

Ինչպես արդեն ասվեց, համաշխարհային տնտեսության զարգացման տեմպերի ու ճյուղային կառուցվածքի վրա մեծ չափով ազդում է նաև գիտատեխնիկական առաջադիմությունը, որն իր առավել բուռն զարգացման ժամանակահատվածում անվանվեց գիտատեխնիկական հեղափոխություն (գտհ):

Աշխարհի արագ աճող բնակչության նյութական պահանջմունքները բավարարելու խնդրի լուծման ռեալ ուղին արտադրական տեխնիկայի ու տեխնոլոգիաների կատարելագործումն է ու դրա շնորհիվ աշխատանքի արտադրողականության բարձրացումը: Այս հարցում XX դարի կեսերից հետո ընկած ժամանակահատվածում գլխավոր դերը պատկանում է գիտությանը, որի համար էլ «գիտություն-տեխնիկա-արտադրություն» եռակի համակարգում այն դարձել է առաջատար օղակը:

Գտհ-ն արտադրողական ուժերի զարգացման, արտադրության աճի տեմպերի արագացման բնագավառում արմատական հեղաշրջում է առաջացրել շնորհիվ այն բանի, որ գիտական ու տեխնիկական հեղափոխությունները միաձուլվել են միմյանց հետ և գիտությունն, ըստ էության, արդեն վերածվել է հասարակության անմիջական արտադրողական ուժի:

Գտհ-ի շնորհիվ արդյունաբերության առանձին ճյուղերի արտադրանքի ծավալը վերջին տասնամյակների ընթացքում աճել է տասնյակ, նույնիսկ հարյուրավոր անգամ:

Գտհ-ի ազդեցությամբ նաև փոփոխվել է համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքը: Առաջացել են նոր և նորագույն ճյուղեր ու արտադրություններ, որի հետևանքով բարդացել է համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքը, փոփոխվել են ճյուղերի համամասնությունները:

Սակայն սխալ կլինի համաշխարհային տնտեսության վրա ՉՏՀ-ի ազդեցությունը վերագրել միայն արտադրական տեխնոլոգիաների բնագավառին:

Գտհ-ի ներգործությամբ զարգացել են տեղեկատվությունն ու հաղորդակցության միջոցները, փոխվել է մարդկանց հոգեբանությունը, աշխատանքի բնույթն ու զբաղվածության կառուցվածքը:

Սակայն տնտեսական աշխարհագրության տեսակետից նշվածներից առավել կարևոր է գտհ-ի ներգործությունը համաշխարհային տնտեսության տարածքային կազմակերպման վրա (այս հարցը կուսումնասիրվի հաջորդ բաժիններում):

Հարցեր ինքնաստուգման համար

1. Սահմանել համաշխարհային տնտեսության հասկացությունը: Ո՞ր նախադրյալների հիման վրա և երբ է ակտիվացել համաշխարհային տնտեսության ձևավորումը:

2. Համաշխարհային տնտեսությունը ինչու՞, երբ՞ և ո՞ր ենթահամակարգերի է բաժանվել:

3. Բնութագրել համաշխարհային տնտեսության առավել կարևոր ճյուղի՝ մշակող արդյունաբերության մեջ երկրների խմբերի առաջատար դիրքերի փոփոխությունները: Բացահայտել դրանց պատճառները:

4. Զարգացած և զարգացող երկրների տնտեսության մեջ կառուցվածքային ինչպիսի՞ փոփոխություններ են տեղի ունենում վերջին տարիներին:

5. Բնութագրել համաշխարհային տնտեսության արտադրանքի ծավալի աճի տեմպերի ու ճյուղային կառուցվածքի վրա գտհ ազդեցությունը:

6. Համաշխարհային տնտեսության համակարգում երկրների ո՞ր տիպային ու տարածաշրջանային խմբերի տեսակարար կշիռներն են փոփոխվել և ինչու՞:

ԳԼՈՒԽ 5.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ:

5.1 Աշխատանքի աշխարհագրական բաժանումը և դրա ռացիոնալացումը

Համաշխարհային տնտեսության տարածքային կազմակերպման, երկրների միջև հաստատվող սոցիալ-տնտեսական հարաբերությունները բնութագրող ամենակարևոր հասկացությունը աշխատանքի տարածքային¹ բաժանումն (ատբ) է:

Ատբ-ը տնտեսագիտության հիմնական կատեգորիայի՝ **աշխատանքի հասարակական բաժանման (աիբ)** տարածական դրսևորումն է, աշխատանքի արտադրողականության բարձրացման գործոններից մեկը:

Ատբ-ն, ըստ էության, **տնտեսական շրջանների, երկրների արտադրական մասնագիտացման, միջշրջանային կոոպերացիայի ուժեղացման, մասնագիտացված ճյուղերի արդյունքի՝ արտադրանքի և ծառայությունների փոխանակման գործընթացն է:**

Ատբ-ն պայմանավորված է տարբեր տարածքների տնտեսական, սոցիալական, բնական, ազգային, պատմական առանձնահատկություններով ու տնտեսաաշխարհագրական դիրքով:

Ն. Բարանսկին ատբ տերմինի փոխարեն օգտագործված է **աշխատանքի աշխարհագրական բաժանում (աաբ)** տերմինը: Վերջինս ատբ-ի համեմատությամբ տնտեսապես միմյանց հետ կապված տարածքային ձևավորումների ցանկացած մակարդակի արտադրական մասնագիտացում արտահայտող առավել ընդհանուր փիլիսոփայական կատեգորիա է: Ամենաբարձր մակարդակով ազգային և միջազգային շուկաների շրջանակներում երկրների մասնագիտացումը նշելու համար օգտագործվում է **աշխատանքի միջազգային բաժանում (աաբ)** տերմինը: Ն. Բարանսկին նշել է, որ «աաբ-ը միաժամանակ աաբ է, բայց ոչ հակառակը, քանի որ աաբ կարող է լինել և փաստացիորեն գոյություն ունի նաև մեկ երկրի ներսում, դրա տարբեր շրջանների միջև²»:

Այն դեպքերում, երբ շրջանների մասնագիտացումն ու դրանց միջև իրականացվող փոխանակությունը վերլուծվում է առանձին ազգային տնտեսությունների մակարդակով, ապա դա **աշխատանքի միջշրջանային բաժանումն է (Ամշբ)** է:

Աշխատանքի բաժանումն ավելի ցածր ներշրջանային մակարդակով արտահայտելու համար օգտագործվում է **աշխատանքի ներշրջանային**

¹ տվյալ դեպքում հասկացվում է երկիր


² Баранский Н. Н. Методика преподавания экономической географии. М., 1960, стр. 55.

բաժանում (ԱճԶ) և աշխատանքի ներշնչանային տարածքային բաժանում (ԱճԶԹ) տերմինները:

Դրանցից առաջինը ԱճԶ-ը ենթադրում է տնտեսական շրջանների սահմաններում առանձին արտադրությունների մասնագիտացումը, իսկ երկրորդը ԱճԶԹ-ը ենթադրում է տվյալ շրջանի առանձին ենթաշրջանների մասնագիտացումն ու փոխադարձ կապերը: («Աշխատանքի տարածքային բաժանում» հասկացության տրամաբանական համակարգն արտահայտված է 5.1 գծապատկերում):

Գծապատկեր 5.1

Աշխատանքի տարածքային բաժանման (ատթ) համակարգը



ժողովրդագրական փոփոխությունների, առանձին տարածաշրջանների բնական ռեսուրսների պաշարների սպառման կամ նոր պաշարների հայտնագործման ու արդյունաբերական յուրացման, գիտատեխնիկական առաջադիմության, համաշխարհային տնտեսական կոնյունկտուրայի փոփոխության և նման այլ պատճառներով ամբ-ը մշտապես փոփոխվում է:

Հասարակության զարգացման որոշակի փուլերում որևէ երկրի կամ ամբողջությամբ համաշխարհային տնտեսության տեղաբաշխումը (դրա վիճակը, պատկերը) կամ համապատասխանում է կամ էլ չի համապատասխանում դրանց սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրներին:

Նշված համապատասխանության աստիճանը որոշելն ունի կարևոր նշանակություն տնտեսության տարածքային կազմակերպման ռացիոնալացման համար:

Վերջինիս իրականացման համար անհրաժեշտ է հենվել տեղաբաշխման

որոշակի սկզբունքների ու գործոնների¹ վրա և միաժամանակ օգտվել արտադրության տեղաբաշխման այնպիսի տեխնիկատնտեսական կարևոր ցուցանիշներից, ինչպիսիք են, օրինակ, արտադրության *նյութատարությունը, էներգատարությունը, աշխատատարությունը, գիտատարությունը, կապիտալատարությունը* և այլն²:

Առանձին դեպքերում հաշվի են առնում նաև տեղաբաշխման համար մեծ կարևորություն ներկայացնող *սպառողական գործոնը*, որն արտահայտվում է արտադրանքի փոխադրելիությամբ (փոխադրելու նպատակահարմարությամբ):

Տնտեսության առանձին ճյուղերի տեղաբաշխման վրա ազդում է նաև էկոլոգիական գործոնը: Օրինակ ճապոնական խոշոր կղզիներում օդային ավազանի աղտոտվածության բարձր մակարդակի հետևանքով չափազանց դժվար է, իսկ երբեմն էլ նույնիսկ անհնար ապահովել գունավոր հեռուստացույցների կինեսկոպների արտադրության համար օդի պահանջվող բարձր մաքրություն, որի պատճառով էլ այդպիսի արտադրությունները մասամբ կազմակերպվում են խաղաղօվկիանոսյան ավազանի հեռավոր կղզիներում:

Արտադրության տեղաբաշխման վրա մեծ ազդեցություն ունի նաև աշխատուժի արժեքը, կանացի կամ տղամարդկային աշխատուժի անհրաժեշտությունը, արտադրական և սոցիալական ենթակառուցվածքները (ինֆրաստրուկտուրաները):

5.2 Երկրների տնտեսական մասնագիտացումը:

Համաշխարհային տնտեսության շրջանակներում աշխարհի տարբեր երկրների միջև իրականացվում են տնտեսական բազմազան կապեր, որոնց արդյունքում երկրները մասնագիտանում³ են որոշակի ծառայությունների և արտադրությունների մեջ:

Հետագայում երկրներն իրենց մասնագիտացված արտադրությունների արդյունքը՝ ապրանքները համաշխարհային շուկայում փոխանակում են այլ երկրների ապրանքների հետ:

Տվյալ արտադրատեսակի գծով երկրի մասնագիտացման աստիճանն արտահայտող առավել ընդհանրական ցուցանիշը (U_i) համաշխարհային արտադրանքի մեջ տվյալ երկրի բաժնի հարաբերությունն է աշխարհի բնակչության մեջ տվյալ երկրի բաժնին:

$$U_i = \frac{\text{Արտադրանքի բաժինը աշխարհում/Բնակչության բաժինը աշխարհում}}{\text{Օրինակ Իտալիան 1998 թ. արտադրել է աշխարհի կաշվե կոշիկների ավելի}}$$

¹ Ընդհանուր գծերով այդ սկզբունքներին ծանոթ եք «Արտադրողական ուժերի տեղաբաշխման օրինաչափությունները, սկզբունքները և գործոնները» թեմայից:

² Այս հարցերը մանրամասնորեն կքննարկվեն «Աշխարհի արդյունաբերությունը» և «Աշխարհի գյուղատնտեսությունը» թեմաներում:

³ Երկրի մասնագիտացումը պետք է տարբերել արտադրության մասնագիտացումից (տես 2-րդ բաժինը):

քան 8%-ը, միջոց նրա բնակչության բաժինն աշխարհի բնակչության մեջ կազմում է մոտ 1%:

Մասնագիտացված արտադրությունների ապրանքների զգալի մասն արտահանվում է տվյալ երկրի սահմաններից:

Չետևաբար մասնագիտացումն արտահայտում է տվյալ երկրի արտահանության ուղղվածությունն ու հանդիսանում է դրա «այցեքարտը» համաաշխարհային տնտեսությունում:

Մասնագիտացված արտադրությունները և ծառայությունները երկրի միջազգային արժուքային մուտքի գլխավոր աղբյուրն են:

Այս առումով երկրի մասնագիտացման աստիճանի մասին պատկերացում են կազմում նաև տվյալ ապրանքի արտահանման և երկրի ընդհանուր արտադրանքի տոկոսային հարաբերությամբ:

$$U_6 = \frac{\text{Արտահանում}}{\text{Ընդհանուր արտադրանքը}} \times 100\%$$

Երկրները մասնագիտանում են կոնկրետ այն արտադրատեսակների ու ծառայությունների բնագավառում, որոնց գործունեության համար այդ երկրներում կան բարենպաստ բնակլիմայական պայմաններ (հատկապես գյուղատնտեսական ապրանքների արտադրության համար¹), բնական ռեսուրսներ (հումք, վառելիք, անտառներ), հարմար տնտեսաաշխարհագրական դիրք, ձևավորված արտադրական ապարատ (օրինակ գործարանային սարքավորումներ), բնակչության աշխատանքային հմտություններ, քաղաքական և տնտեսական կայունություն (օրինակ Շվեյցարիայի մասնագիտացումը միջազգային բանկային սպասարկման գծով):

Երկրների մասնագիտացման ցուցանիշը հատկապես բարձր է այն արտադրատեսակների գծով, որոնց հումքի պաշարները մեծ մասամբ գտնվում են այդ երկրներում:

Այդպիսի երկրները հաճախ համաաշխարհային շուկայում հանդես են գալիս որպես տվյալ արտադրատեսակի բնական մենատերեր: Օրինակ՝ տանտալ մետաղի համաաշխարհային արտադրանքի ավելի քան 50%-ը բաժին է ընկնում Ավստրալիային, միոբիումի 84%-ը՝ Բրազիլիային, պալադիումի² 92%-ը՝ Ռուսաստանին:

Նույն կերպ բնական մետաքսե գործվածքների համաաշխարհային արտադրանքի 93%-ը բաժին է ընկնում մետաքսագործության մեջ հմտացած երկրին (մետաքսագործության հայրենիքին)՝ Չինաստանին:

Ինչ վերաբերում է սակավ հումքատար, պարզ և աշխատատար արտադրատեսակների արտադրության բնագավառին, ապա հաճախ դրանում մասնագիտացված երկրներն իրենց տեղը զիջում են տնտեսական վերելք ապրող այնպիսի նոր

երկրներին, որոնք ունեն այդ արտադրատեսակների արտադրության համար անհրաժեշտ առավել նպաստավոր պայմաններ:

Օրինակ՝ Չինաստանը շատ կարճ ժամանակահատվածում դարձավ լուսանկարչական խցիկներ և ձեռքի ժամացույցներ արտադրող առաջատար երկիրը աշխարհում:

5.3 Արտադրական սոցիալական ենթակառուցվածքի դերը տնտեսության տեղաբաշխման գործում:

Ենթակառուցվածք ասելով հասկանում ենք նյութական բարիքների արտադրությանը ուղղակիորեն չպատկանող, բայց արտադրության բուն գործընթացի համար անհրաժեշտ շինությունների, շենքերի, ցանցերի, համակարգերի զուգակցում:

Տրանսպորտը, կապը, էներգամատակարարման, ջրամատակարարման և այլ ցանցերը կազմում են **արտադրական ենթակառուցվածքը**, իսկ բնակչության առօրյա սպասարկման ապահովման համար անհրաժեշտ առողջապահության, կրթության, մշակույթի, կենցաղային սպասարկման հիմնարկների զուգակցումը կազմում է **սոցիալական ենթակառուցվածքը**:

Ենթակառուցվածքի բարձր զարգացման նակարդակը հանդիսանում է լրացուցիչ գործոն, որը տվյալ տարածաշրջան է «ծգում» բնակչության գաղթի հոսքերը և նոր արտադրական օբյեկտների տեղաբաշխումը:

Այդ պատճառով էլ զարգացած ենթակառուցվածք ունեցող տարածքներն արդյունաբերության ձեռնարկությունների տեղաբաշխման համար շատ ավելի գրավիչ են չյուրացված տարածքների համեմատությամբ:

Հասարակական արտադրության տարածքային կազմակերպման և կառուցվածքի վրա ավելի ու ավելի մեծ ազդեցություն են թողնում տեղեկատվության (ինֆորմացիայի) քանակն ու որակը:

Տեղեկատվական ենթակառուցվածքը մեծ դեր է կատարում գիտատեխնիկական նորամուծությունների ծավալի ու տարածման գործում: Սակայն տեղեկատվական ենթակառուցվածքը, չնայած ձեռք բերված մեծ նվաճումներին, բոլոր երկրներում հավասարաչափ չէ զարգացած:

Արդյունաբերական նշանակություն ունեցող հայտնագործությունների տարածման հավանականությունը, որպես կանոն, նվազում է հայտնագործության օջախի ներդրման վայրի միջև եղած հեռավորության մեծացմանը համապատասխան: Հայտնագործությունների տարածման (դիֆուզիայի) մեթոդները աշխարհագրական գրականության մեջ անվանվում են Մոնտե Կարլոյի մեթոդ կամ էլ Մարկովի շղթաներ: Համաձայն դրանց, հայտնագործությունները տարածվում են բոլոր ուղղություններով, ջրի մեջ նետված քարի առաջացրած համակենտրոն շրջանաձև ալիքների նման: Սակայն երբեմն էլ օրինաչափությունը խախտվում է ամենաբազմազան արգելքների պատճառով (ինչպես ջրի ալիքներն են խախտվում քարի կամ ծառի բնի պատճառով): Այդպիսի խանգարող պատճառներն են երկու երկրների

¹ Տես «Աշխարհի գյուղատնտեսությունը» թեման:

² Տանտալը և միոբիումը հիմնականում օգտագործվում են կոտրված ոսկորները միմյանց ամրացնելու համար, իսկ պալադիումը ավտոմեքենաների արտադատած ածխաթթու (CO₂) գազը չեզոքացնող սարքերում:

լեզվական, նշակութային, տնտեսական-օրենսդրական, քաղաքական, արտոնագրային իրավունքների տարբերությունները: Որպես ապացույց կարելի է բերել այն փաստը, որ Ռուստոի հայտնագործած շոգենեքենան հեռավոր ԱՄՆ-ում ավելի շուտ և ավելի հեշտությամբ ներդրվեց, քան Անգլիային անհամեմատ մոտիկ գտնվող Ավստրո-Յունգարիայում ու Բալկանյան թերակղզու երկրներում:

Այսպիսով, որպես ամփոփում, կարելի է նշել, որ մարդկային սերունդների գործունեության շնորհիվ ձևավորված ենթակառուցվածքի ճյուղերի միագումարը տնտեսության տեղաբաշխման վրա ունենում է մեծ ազդեցություն: Այլովակ աշխարհագետ Կ. Իվանիչկան այդ ազդեցությունը նմանեցնում է գյուղատնտեսության մեջ հողերի որակի տարբերությունների հետ, նշելով, որ «տարբերությունը միայն այն է, որ դիֆերենցիալ հողային ռեսուրս II-ը արդյունք է բնական պայմանների տարբերությունների, երբ միևնույն աշխատանքը տալիս է տնտեսական տարբեր արդյունք, իսկ ենթակառուցվածքը մարդու աշխատանքի արդյունք է, շրջանի «կապիտալը», դրա «արյունային համակարգը»¹:

5.4 ԳՏՀ ազդեցությունը համաշխարհային տնտեսության տեղաբաշխման վրա:

Տեղաբաշխման գործոնները մեկընդմիջտ տրված անփոփոխ ազդակներ չեն: Գիտատեխնիկական առաջադիմության շնորհիվ անընդհատ փոփոխվում է դրանց ազդեցության աստիճանը: Օրինակ էներգահիմնարկային առաջավոր տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ փոքրանում է էներգատար ճյուղերի կախումը էներգիայի աղբյուրներից, որի շնորհիվ դրանք տարածքային առումով դառնում են հարաբերականորեն անկախ: Օրինակ նախկինում, երբ 1 տ ալյումին ծուլելու համար պահանջվում էր շուրջ 25 հազար կվտ.ժամ էլեկտրաէներգիա, ալյումինի ծուլման ձեռնարկությունները կենտրոնանում էին միայն էժան էլեկտրաէներգիայի արտադրության շրջաններում ջրէկների մոտ (ինչպես, օրինակ, Քանաքեռի ալյումինի գործարանը Քանաքեռի ջրէկի մոտ): Ներկայումս, առաջավոր արտադրական տեխնոլոգիայի ներդրման շնորհիվ, ալյումինի ծուլման համար անհրաժեշտ էներգիայի տեսակարար ծախսումը կրճատվել է 2-ից 2.5 անգամ, որի շնորհիվ ալյումինի ծուլման գործարանները տեղաբաշխվում են նաև ջրէկներից հեռու շրջաններում: Օրինակ Բահրեյն կղզում կառուցված ալյումինի գործարանում ջերմային էլեկտրակայանների արտադրած էլեկտրաէներգիայով տարեկան ծուլում են մոտ 0,5 մլն տ ալյումին:

Իսկ աշխատատարության նվազման հետևանքով թեթև արդյունաբերությունն է հարաբերականորեն անկախ դառնում աշխատանքային ռեսուրսների կենտրոնացման շրջաններից: Այսպես, օրինակ, 70-ական թվականներին կոնստրուկտորները ստեղծեցին անմաքոք ջուլիակային հաստոցներ, որոնց արտա-

դրողականությունը 30 անգամ բարձր էր նախկին տեխնոլոգիաներից (հետևաբար 30 անգամ պակաս է աշխատատարությունը), որի շնորհիվ միևնույն արտադրական կարողություն ունեցող ֆաբրիկաներին անհրաժեշտ է այնքան փոքրաթիվ աշխատուժ, որը գոյություն ունի նույնիսկ խոշոր գյուղերում: Այսպիսով, գտն-ն հեղաշրջում է առաջացրել ոչ միայն արտադրության աճի տեմպերի ու ճյուղային կառուցվածքի, այլ նաև արտադրության տեղաբաշխման բնագավառներում:

(Առանձին ճյուղերի տեղաբաշխման բնագավառներում ԳՏՀ ազդեցության օրինակներին կժանոթանաք համապատասխան բաժիններում):

5.5 Տեղաբաշխման «Կենտրոն-ծայրամաս» մոդելը

Համաշխարհային տնտեսության զարգացման ներկա փուլին բնութագրական են, մեկը մյուսից կարևոր այնպիսի գործընթացներ, ինչպիսիք են, օրինակ, կապիտալի շարժունության աճը, խոշոր ու մանր բիզնեսների փոխգործունեության ուժեղացումը, արտադրական գործընթացի առանձին փուլերի տարանջատումը միմյանցից: Վերջինս, մասնավորապես, նշանակում է, որ արտադրական նախկին միասնական գործընթացի փոխարեն այժմ ավելի հաճախ առանձնանում են գլխամասային արտադրությունների և մասնաճյուղերի համալիրներ:

Այս բոլորն առաջացնում են աշխատանքի աշխարհագրական բաժանման հետագա խորացում և սոցիալ-տնտեսական տարբեր կարգի տարածքների շերտավորում: Այս գործընթացի էությունը դրսևորվում է հետևյալում.

1) առավել առաջադեմ, այսպես կոչված «էլիտար», գտա ապահովող գործունեություններն ամրագրվում են տնտեսական առաջատար «կենտրոններին» (շրջաններին, երկրներին կամ երկրների խմբերին): Այդպիսի գործունեություններից են, օրինակ, բարձր տեխնոլոգիաների (նոու հաու) արտադրությունը, որը պահանջում է մեծ մասշտաբի գիտահետազոտական աշխատանքի ներդրում:

2) երկրորդ կարգի կարևորության (բարձր աշխատատար, բայց որակավորում չպահանջող) արդյունաբերական գործառույթները հանձնվում են «կենտրոնների» համեմատությամբ «կիսաժայրամասային» օջախներին սակավ զարգացած այն երկրներին ու շրջաններին, որոնք ունեն տնտեսական արագ աճի որոշակի նախադրյալներ: Դրանք, որպես կանոն, այն երկրներն ու շրջաններն են, որոնք կապիտալ ներդրումների (դոնորների) կողմից առավել հեռանկարային են դիտվում ներքին շուկայի աճի, աշխատանքային ռեսուրսներով, հումքով և էներգիայով ապահովվածության տեսակետներից և դրանցում հաստատված է համեմատաբար բարենպաստ քաղաքական ու ներդրումային միջավայր: Ինչպես արդեն նշվել է, դրանք հիմնականում ՆԱԵ -ներն են ու երկրորդ սերնդի ՆԱԵ-ներն են:

3) աշխատանքի աշխարհագրական բաժանման շրջանակներում թուլանում են համաշխարհային տնտեսության ամենաթույլ զարգացած օղակների դիրքերն ու

¹ К. Иваничка. Социально-экономическая география. М., 1987, стр. 132.

մասնակցությունը, որի հետևանքով ավելի է ուժեղանում այդ օղակների ազդարար-
յին-հունքային ուղղվածության մասնագիտացումը:

Նշված գործընթացները դրսևորվում են երկու **համամոլորակային և տեղական (ներպետական կամ միջշրջանային)** մակարդակներով:

Համամոլորակային մակարդակով «էլիտար» գործառույթները շարունակում է իր ձեռքում պահել առավել զարգացած երկրների խումբը: Դրանցում է արտադրվում նորագույն գիտատար արդյունաբերական ճյուղերի արտադրանքը, իրագործվում է հետազոտությունների համամոլորակային զանգվածի հիմնական մասը և գտնվում են ԱՄԿ-երի գերակշռող մասն ու դրանց ամենաառաջավոր ձեռնարկությունները:

«Կենտրոնի» համեմատությամբ «կիսածայրամասային» են համարվում զարգացման միջին մակարդակի երկրները (օրինակ Իսպանիան, Հունաստանը, Իռլանդիան), ՆԱԵ-ներն ու երկրորդ սերնդի ՆԱԵ-ները:

«Ծայրամասային» են համարվում առավել նվազ զարգացած ու թույլ արդյունաբերականացված երկրները, որոնք զուրկ են զարգացման բնական ու տնտեսական բավարար նախադրյալներից:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Բացահայտեք «աշխատանքի տարածական բաժանում» հասկացության էությունը:
2. Միմյանց հետ բացահայտել աշխատանքի տարածական բաժանման և շրջանների մասնագիտացման տարբեր մակարդակներով կապերն արտահայտող հասկացությունները:
3. Բացահայտել շրջանների կամ երկրների մասնագիտացում հասկացության էությունը, մասնագիտացումը որոշող գործոնները և մասնագիտացման աստիճանն արտահայտող ցուցանիշները:
4. Բացահայտեք աշխատանքի տարածքային բաժանման ռազմավարական հասկացության էությունը:
5. Բացահայտեք արտադրական և ոչ արտադրական ենթակառուցվածքների դերը տնտեսության տեղաբաշխման գործում:
6. գտե՛ք ինչպե՞ս է ազդում համաշխարհային տնտեսության տեղաբաշխման վրա:

Բացահայտել համաշխարհային տնտեսության տեղաբաշխման «կենտրոն-ծայրամաս» մոդելի էությունը, բերել օրինակներ:

ԳԼՈՒԽ 6. ԱՇԽԱՐՀԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ 6.1 Արդյունաբերության և ենթաճյուղերի դերն ու զարգացման միտումները

Արդյունաբերությունը երկրների մեծ մասի և, ամբողջությամբ վերցրած, աշխարհի տնտեսության առաջատար ճյուղն է, որին բաժին է ընկնում համաշխարհային տնտեսության հիմնական ֆոնդերի մեծ մասը և, բացի այդ, դրանում է զբաղված աշխարհի տնտեսապես ակտիվ բնակչության շուրջ 1/5 մասը:

Արդյունաբերության զարգացումն արագացավ արդյունաբերական առաջին հեղափոխությունից (XVII-XIX դդ.) հետո՝ գիտատեխնիկական մեծ առաջադիմության շնորհիվ:

Ներկայումս, որպես կանոն, տնտեսապես առավել զարգացած են այն երկրները, որոնցում արդյունաբերական հեղափոխությունն ավարտվել էր դեռևս XIX դ. վերջին: Այդ երկրները համաշխարհային արդյունաբերության բնագավառում ձեռք բերած բացառիկ գերազանցությունը պահպանեցին մինչև ԽՍՀՄ ինդուստրացումը: Համաշխարհային արդյունաբերական արտադրանքի մեջ կապիտալիստական զարգացած երկրների բաժինն էլ ավելի նվազեց երկրորդ աշխարհամարտից մինչև XX դ. 90-ական թվականների սկիզբը ժամանակահատվածում, երբ ձևավորվել ու հզորացել էր համաշխարհային սոցիալիստական ճամբարը: Վերջինիս բաժինը համաշխարհային արդյունաբերական համախառն արտադրանքի մեջ հասել էր 42%-ի:

Նյութական արտադրության ճյուղերի շարքում արդյունաբերությունն առանձնանում է ոչ միայն զարգացման ամենաբարձր տեմպերով, այլ նաև ճյուղային կառուցվածքի մեծ փոփոխություններով: Դրանցից ամենախոշորը արդյունահանող և մշակող արդյունաբերությունների համամասնության փոփոխությունն է: Աճի համեմատաբար բարձր տեմպերի շնորհիվ արդյունաբերության ընդհանուր ծավալում մշակող արդյունաբերական ճյուղերի բաժինը մեծանում է ի հաշիվ ավելի դանդաղ աճող արդյունահանող ճյուղերի: Առավել արագորեն են աճում գիտատեխնիկական առաջադիմությունն ապահովող ճյուղերը, հատկապես մեքենաշինությունն ու քիմիական արդյունաբերությունը: Համեմատաբար ցածր տեմպերով են աճում բազային ճյուղերը՝ էներգետիկական ու մետաղածուլական արդյունաբերությունը:

Որպես կանոն, առավել դանդաղ տեմպերով զարգանում են թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը:

Ներկայումս տնտեսապես զարգացած երկրներում մշակող արդյունաբերության ճյուղերը տալիս են արդյունաբերության արտադրանքի 84%-ը, որի մեծ մասը (57%) բաժին է ընկնում ծանր արդյունաբերությանը (մեքենաշինություն, մետաղածուլություն, քիմիական արդյունաբերություն): Տնտեսապես զարգացած երկրներում արդյունաբերության արտադրանքի 35-40%-ը տալիս է մեքենաշինությունը: Միանգամայն այլ է Աֆրիկայի, Ասիայի և Լատինական Ամերիկայի տնտեսապես թույլ զարգացած երկրների արդյունաբերության ճյուղային կառուցվածքը: Այս երկրներում, որպես կանոն, արդյունաբերության զարգացման ցածր մակարդակի պայման-

ներում, առաջատար դեր են խաղում արդյունահանող ճյուղերը և մշակող արդյունաբերության ավանդական ճյուղերը: Գիտատեխնիկական առաջընթաց պայմանավորող մեքենաշինության, քիմիական արդյունաբերության և էլեկտրատեխնիկայի առավել արդիական ճյուղերը (հաշվողական տեխնիկա, ռադիոէլեկտրոնիկա, պոլիմերային քիմիա, ատոմային էներգետիկա և այլն) առանձին երկրներում միայն առաջին քայլերն են կատարում:

Արդյունաբերության տարբեր ճյուղերի անհամաչափ զարգացումը ոչ միայն հանգեցնում է առաջատար ճյուղերի մեկը մյուսով փոխարինմանը, այլև դրանց տարբեր զուգակցումների ձևավորմանը աշխարհի տարբեր երկրներում և տարածաշրջաններում:

6.2 Արդյունաբերության տեղաբաշխման մոդելները

Տեղաբաշխում հասկացությունն ինքնին ներառում է օբյեկտների տարածական հարաբերակցությունները, փոխադարձ կապերն ու բաշխումը, ուստի և հանդիսանում է աշխարհագրության կարևորագույն կատեգորիան: Արտադրության տեղաբաշխման ուսումնասիրությունները պարտադիր կարգով պետք է կատարել տնտեսագիտական տեսության հետ առնչված:

Արդյունաբերության տեղաբաշխման առաջին պարզունակ երկրաչափական մոդելը մշակել է Լաունհարդը (1882 թ.): Այդ մոդելը ներկայացված էր կանոնավոր եռանկյան տեսքով, որի երկու գագաթները ենթադրում էին հումքի աղբյուրները, իսկ երրորդ գագաթը՝ սպառման կետը: Արդյունաբերական ձեռնարկության օպտիմալ տեղադիրքը, ըստ Լաունհարդի, եռանկյան ներսում, դրա երեք գագաթներից հավասարաչափ հեռավորության գտնվող կետն էր: Լաունհարդը, զգալով այդ մոդելի չափազանց պարզունակությունը, երեք տարի անց (1885 թ.), առաջարկեց համեմատաբար բարդ լուծում՝ այսպես կոչված «բևեռի սկզբունքով» կազմված կանոնավոր վեցանկյուն, որն ավելի մոտ է արդյունաբերության տեղաբաշխման իրականում գոյություն ունեցող անկանոն բազմանկյուններին:

Երկրաչափական նշված անկատար մոդելները XX դ. սկզբին լայն տարածում ստացան, սակայն դրանք միաժամանակ սկսեցին քննադատվել ու աստիճանաբար իրենց տեղը զիջեցին «իզոդապաններին»՝ արտադրական հավասար ծախսեր արտահայտող գծերին:

Գերմանացի տնտեսագետ Ա. Վեբերի « Արդյունաբերության տեղաբաշխման տեսությունը » (1909 թ.) դասական աշխատանքի շնորհիվ գիտական շրջանառության մեջ մտավ «տեղաբաշխման գործոններ» («շտանդորտային գործոններ») հասկացությունը: Ընդ որում Ա. Վեբերի «շտանդորտը» բնութագրում է արտադրության ոչ թե իրական, այլ ենթադրվող օպտիմալ տեղաբաշխումը: Նա առանձնացրել է երեք հիմնական «շտանդորտային գործոններ»՝ հումք և էներգառեսուրսներ, տրանսպորտ և բանվորական ուժ: Արտադրության ծախսերի վրա դրանց ազդեցու-

թյան հաշվարկման ճանապարհով տվել է դրանց քանակական գնահատականը: Ա. Վեբերի ուսումնասիրության օբյեկտը եղել է այլ տարածքների հետ որևէ կապ չունեցող, այսինքն տնտեսականորեն մեկուսացած տարածական մարզը: Բնական է, որ նման պայմաններում հաշվի չեն առնվում արտադրության տեղաբաշխման տնտեսական, սոցիալական ու այլ բնույթի տարածաշրջանային գործոններ:

«Իզոդապանների», ինչպես նաև գրաֆիկական մեթոդները արդյունաբերության տեղաբաշխման վերլուծության բնագավառում գիտնականների պահանջները բավարարում էին միայն այն դեպքերում, երբ նրանք գործ ունեին ֆիքսված կետերի ընդամենը մի քանի փոփոխականների հետ:

Սակայն, արդյունաբերության զարգացմանը զուգընթաց, անհրաժեշտություն առաջացավ ստեղծել այնպիսի նոր մոդել, որը հնարավորություն տա «զուլփ հանել» արդյունաբերական ձեռնարկության տեղադրությունը որոշող բազմաթիվ փոփոխականներից, մանավանդ այն դեպքերում, երբ պահանջարկն ու առաջարկը չեն գտնվում միևնույն կետում և երբ արդյունաբերական ֆիրմաներն տնօրինում են ոչ թե մեկ, այլ մի շարք ձեռնարկություններ:

Այդ պահանջին գիտնականներից առաջինն արձագանքեց Հիչկոկը (1941)¹, առաջարկելով շուկայական տարբեր գոտիներում տեղաբաշխված մի շարք գործարանների արտադրանքի բաշխման ժամանակ տրանսպորտային ծախսերի նվազեցման հանրահաշվական հետևյալ բանաձևը.

$$Y = \sum a_{ij} x_{ij}$$

որտեղ $i = 1, 2, 3, \dots, m$

$j = 1, 2, 3, \dots, n$

Y-ը արտադրական միագումարային ծախսերն են

a_{ij} - i ձեռնարկությունից j շուկան միավոր (1տ) արտադրանքի

փոխադրման տրանսպորտային ծախսերն են

x_{ij} - i անհրաժեշտ փոխադրումների ծավալն է:

Գծային ծրագրավորման այս մեթոդը արդյունաբերական ձեռնարկությունների տեղաբաշխման խնդիրների լուծմանը լավագույն ձևով է համապատասխանում այն դեպքերում, երբ օպտիմալ (մաքսիմալ կամ մինիմալ) լուծումը կարելի է արտահայտել հանրահաշվական գծային հավասարման ձևով: Սակայն ուսումնասիրվող փոփոխականների թվի ավելացմանը զուգընթաց տեղաբաշխական տարբերակների թիվը ևս ավելանում է, և խնդիրը դառնում է հսկայածավալ: Այսպես, օրինակ, արդյունաբերական 5 ձեռնարկությունները 5 կետերում տեղաբաշխման հնարավոր տարբերակների թիվը հասնում է 120-ի: Այս պատճառով էլ, անհրաժեշտա-

¹ Hitchcock F. L. 1941. The Distribution of a Product from several sources to Numerous Localities. Journal of Mathematics and Physics. 20, 224-230

բար, սկսեցին մշակել տեղաբաշխման խնդիրների ալգորիթմներ, որոնք ավելի կատարյալ են արդեն նշված երկրաչափական սխեմաներից, իզոգծերից և ֆիզիկական անալոզներից: Դրանք կարող են լուծվել միայն համակարգիչների օգնությամբ: Սակայն արդյունաբերության տեղաբաշխման մոդելավորման բնագավառում մի շարք պատճառներով մոտեցումը հանդեպ տեղաբաշխման խնդիրների լուծմանը աստիճանաբար դառնում է սակավ դետերմինիստական: Օրինակ, գիտատեխնիկական առաջադիմության շնորհիվ, ինչպես նաև վառելիքահումքային հին բազաների սպառման հետևանքով մետաղածուլության տեղաբաշխումն այսօր դարձել է նախկինի համեմատությամբ բազաներից «հարաբերականորեն անկախ»:

Արդյունաբերական արտադրության տեղաբաշխման վերլուծության ժամանակ հաշվի է առնվում նաև այն հանգամանքը, որ արդյունաբերական օբյեկտների տեղաբաշխման սեկտորները համընկնում են բնակչության ու քաղաքների առավելագույն կենտրոնացման սեկտորներին, ուստի այդ պայմաններում արդյունաբերական ձեռնարկությունների միջև ևս ընթանում է ազլումերացման գործընթաց, ինչպես որ քաղաքների միջև:

Գրինհատը նկատել է, որ երբ ֆիրմաներն իրենց ձեռնարկությունների համար որոնում են «մինիմաքսային» (նվազագույն ծախսեր - առավելագույն շահույթ) դիրք, խնդրի փոփոխականների թիվն աճում է և շուկայական գոտու կասկածելի մարզը ընդլայնվում է, քանի որ «անորոշությունը կապիտալիստական համակարգի անբաժանելի մասն է»¹:

Լյոշը նույնիսկ պնդում էր, որ «նվազագույն ծախսեր ապահովող տեղն այնպիսի անհեթեթություն է, ինչպես ձեռնարկության հիմնադրման համար *ամենահարմար* համարվող այն տեղը, որն ապահովում է առավելագույն իրացում»²:

«Մինիմաքսային տեղադիրքի» որոնման դժվարությունը ապացուցվեց Ֆլորիդայում Դանի կատարած հետազոտություններով³: Նրա որոշած «մինիմաքսային» կետերը սակավ օպտիմալ կամ հազիվ բավարար էին առաջադրված պահանջի տեսանկյունից: Այս եզրահանգմանը եկան նաև շատ այլ գիտնականներ:

Ուստի արդյունաբերության տեղաբաշխման մոդելները կարող են ավելի իրատեսական լինել, եթե դրանք լրացվեն ստոխաստիկ (պատահական, հավանական) այնպիսի մոդելներով, որոնք հենվում են խաղերի տեսության, «Սոնթե Կառլոյի» («Մարկովի շղթաների», «պատահական թափառումների» վերլուծության վրա:

6.3 Արդյունաբերության տեղաբաշխման գործոնները

Տնտեսական աշխարհագրության առավել կարևոր խնդիրներ են արդյունաբերության տեղաբաշխման օրինաչափությունների բացահայտումը և տարածքային կազմակերպման ձևերի վերլուծությունը:

Արդյունաբերական արտադրության տեղաբաշխումը և նրա տարբեր գույնագործությունների ձևավորումը տեղի է ունենում արտադրության տեղաբաշխման գործոնների ազդեցությամբ:

Ժամանակակից արդյունաբերության տեղաբաշխման գործոնները բազմաթիվ են, ուստի դրանց ազդեցության վերլուծության ժամանակ կարելի է խմբավորել ըստ իրենց կարևորության: Քանի որ տեղաբաշխման բոլոր գործոնները գործում են միաժամանակ և ամբողջական ձևով, ապա մեկ առանձին գործոնի դերի նվազումը հանգեցնում է մյուս գործոնների դերի հարաբերական մեծացմանը:

Սկզբունքային նշանակություն ունի տեղաբաշխման գործոնների բաժանումը՝ *բնական* և *հասարակական* խմբերի: *Բնական պայմանների և ռեսուրսների* (հանքային հումքի, ջրային ռեսուրսների, կլիմայական պայմանների և այլն) ազդեցությունը արտադրության տեղաբաշխման և զարգացման վրա հաճախ ոչ թե ուղղակի է, այլ միջնորդավորված է հասարակական հարաբերություններով: Արդյունաբերության վրա բնական գործոնների ազդեցության աստիճանը կախված է արտադրողական ուժերի զարգացման մակարդակից: *Ջարգացմանը զուգընթաց տեղաբաշխման բնական գործոնների ազդեցությունը թուլանում է, սակայն ամբողջությամբ չի վերանում*: Գիտատեխնիկական առաջընթացի հաջողությունները հնարավորություն են ստեղծում հաղթահարելու ոչ բարենպաստ բնական գործոնները, սակայն պահանջում են լրացուցիչ ծախսեր, որոնք կարող են էականորեն ազդել ձեռնարկության մրցունակության և շահութաբերության վրա և այն դարձնել նույնիսկ տնտեսապես ոչ հեռանկարային:

Առանձին ճյուղերի և արտադրությունների տեղաբաշխման վրա բնական գործոններն ազդում են տարբեր կերպ: Արդյունահանող ճյուղերի տեղաբաշխման գործում որոշիչ է բնական գործոնների ազդեցությունը: Հումքի մշակման աստիճանի մեծացմանը զուգընթաց բնական գործոնների դերը փոքրանում է, դրան համապատասխան աճում է հասարակական գործոնների հարաբերական կշիռն ու դերը: Միաժամանակ ավելանում են այսպես կոչված «ազատ տեղաբաշխման» ճյուղերն ու արտադրությունները, որոնց տեղաբաշխումը զգալի չափով պայմանավորված է սուբյեկտիվ դրդապատճառներով: Գիտատար բարդ արտադրությունների ստեղծումը, որոնք բարձր պահանջներ են ներկայացնում արտաքին պայմաններին, կարող է մեծացնել բնական և էկոլոգիական գործոնների դերը:

Արդյունաբերության տեղաբաշխման վրա ազդող *հասարակական* գործոններն են՝ աշխատանքային ռեսուրսները, տրանսպորտը, բնակավայրերի ցանցը, արտադրական ենթակառուցվածքը, սպառման շուկան, արտադրության կազմակերպման ձևերը (համակենտրոնացում, կոմբինացում, մասնագիտացում, կոոպերա-

¹ Greenhut M., 1957. Games, Capitalism and General Economic Theory, "The Manchester School of Economic and Social Studies", 25, 61-68

² Леш А. Географическое размещение хозяйства (пер. с англ.), ИЛ, М., 1959

³ Dunn E. S., 1956. The Market Potential Concept and the Manufacturing Activity: The Non-Metropolitan US in 1950, "Regional Science Association, Papers and Proceedings", 2, 183-194

ցում, արտադրության տեխնիկան և տեխնոլոգիան): Արդյունաբերության տեղաբաշխման վրա ներկայումս էականորեն մեծանում է էժան աշխատուժի, գիտատեխնիկական մշակումների և տեղեկատվական ռեսուրսների դերն ու ազդեցությունը: Դա զգալի տեղաշարժեր է առաջացնում արդյունաբերության աշխարհագրությունում: Արդյունաբերության ժամանակակից ճյուղերը (ռադիոէլեկտրոնիկա, պոլիմերային քիմիա և այլն), ավելի ու ավելի են տեղաբաշխվում կրթական բարձր մակարդակ և էժան աշխատուժ ունեցող զարգացած երկրներում:

Ներկայումս կարևոր դեր են խաղում տնտեսության զարգացման և տեղաբաշխման պետական կարգավորումը, ինտեգրացման գործընթացները, միջպետական միավորումների և հատկապես անդրազգային կորպորացիաների գործունեությունը: Անդրազգային կորպորացիաները դեռևս 80-ական թվականներին տալիս էին շուկայական տնտեսություն ունեցող երկրների արդյունաբերական արտադրանքի 2/3-ը: Նրանք հիմնական դեր են խաղում տեխնիկական և տեխնոլոգիական նորանվածությունների տարածման գործում, քանի որ գիտատեխնիկական մշակումների ավելի քան 9/10-ը պայմանավորված է նրանց պատվերով: Նորանվածությունները, կատարելագործելով արտադրության կազմակերպումը և հանդիսանալով գիտատեխնիկական առաջընթացի կարևոր տարրերը, դառնում են արտադրության տեղաբաշխման կարևոր գործոն:

Գիտատեխնիկական առաջընթացի տարբեր ուղղությունների ու մշակումների ծավալով աշխարհի ընդգծված առաջատար երեք երկրներն են ԱՄՆ-ը, Ճապոնիան և Գերմանիան: Դրանց զգալիորեն զիջում են Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և Իտալիան: Աճող մրցակցությանը դիմակայելու համար նրանք հաճախ մտնում են միջպետական և միջֆիրմային կոոպերացման մեջ: Գիտատեխնիկական առաջընթացի առանձին ներ ուղղություններում առաջատար դիրքեր են զբաղեցնում նաև զարգացած, բայց ոչ մեծ երկրները (Շվեդիա, Նիդերլանդներ, Շվեյցարիա, Կորեայի Հանրապետություն, Ավստրիա և այլն), ինչպես նաև նոր զարգացող առանձին երկրներ, օրինակ, Հնդկաստանը: Գիտատեխնիկական առաջընթացում նախկին սոցիալիստական երկրների բաժինը և ներդրումը մեծ չի եղել, որի հետևանքով զգալիորեն դժվարացել է նրանց մուտքը բարձր մոնոպոլիզացված համաշխարհային շուկա: Այդ մուտքը բարդացել է նաև մաքսային և ոչ մաքսային արգելքների պատճառով:

Գիտատեխնիկական գործոնները ոչ միայն պայմանավորում են արդյունաբերության ժամանակակից ճյուղերի աշխարհագրությունը, այլև զգալի ազդեցություն են թողնում արդյունաբերության հին և ավանդական ճյուղերի կառուցվածքի և տեղաբաշխման բնույթի վրա:

Արդյունաբերության տարածքային կազմակերպումն իրականացվում է տարբեր ձևերով: Ամենապարզագույն ձևը արդյունաբերական կետերն են, երբ բնակավայրերում գործում են մեկական արդյունաբերական ձեռնարկություն: Եթե այս կամ այն քաղաքում (բնակավայրում) գործում են արդյունաբերական մի քանի ձեռնարկություններ, ապա, սովորաբար, այդ քաղաքներին անվանում են արդյունաբերական կենտրոն:

Արդյունաբերական տարբեր կետերի և կենտրոնների միջև հաստատվում են տնտեսական-արտադրական կապեր: Փոքր կետերն ու կենտրոնները որոշակի օրինաչափությամբ խմբավորվում են ավելի հզոր կենտրոնների շուրջը: Ձևավորվում են արդյունաբերական հանգույցներ: Սովորաբար իրարից ոչ մեծ հեռավորության վրա տեղաբաշխված ձեռնարկություններն ունենում են տրանսպորտային, էներգետիկական, ջրամատակարարման առնչություններ և սերտորեն կապված են լինում տեխնոլոգիական, արտադրական, աշխատանքային և այլ կապերով: Արդյունաբերական հանգույցների ձևավորման շնորհիվ կրճատվում են տրանսպորտային ծախսերը, համալիրային և արդյունավետ կերպով են օգտագործվում տեղական բնական և աշխատանքային ռեսուրսները, ստեղծվում է միասնական արտադրական ենթակառուցվածք:

Միմյանցից համեմատաբար հեռու տեղաբաշխված արդյունաբերական կենտրոնների և հանգույցների կուտակումը մեկ ընդարձակ տարածքում անվանում ենք արդյունաբերական շրջան: Արդյունաբերական հանգույցներն ու շրջանները արդյունաբերության տարածքային կազմակերպման ավելի հասուն, առաջադիմական ձև են, քան առանձին «ցրված» կենտրոններն ու կետերը: Դրանք հատկապես մեծ տարածում ունեն տնտեսապես զարգացած երկրներում, մեզալոպոլիսներում և խոշոր քաղաքային ագլոմերացիաներում:

Արդյունաբերության տեղաբաշխումը որոշող գործոնների բազմաթիվության ու բազմաբնույթության պայմաններում անհեթեթություն պետք է համարել միայն մեկ, առանձին գործոնի ազդեցությամբ որևէ ձեռնարկության, արտադրության, արդյունաբերական ճյուղի կամ, նույնիսկ, ամբողջ արդյունաբերության տեղաբաշխման հիմնավորումն ու բացատրությունը:

Արդյունաբերական ձեռնարկության տեղաբաշխումը պետք է բացատրել դրա վրա բոլոր գործոնների միագումարային ազդեցությամբ, միաժամանակ չանտեսելով այն փաստը, որ ազդեցության առումով այդ գործոնները համարժեք չեն:

Արդյունաբերության որոշ ճյուղերի ու արտադրությունների տեղաբաշխման վրա առանձին գործոնների ազդեցության աստիճանների էքսպերտային գնահատում կատարել է Ա. Խրուչչևը:

Գործնականում արդյունաբերական ձեռնարկության կոնկրետ տեղադիրքն ընտրելու համար նման ընդհանուր, հիմնադրությային մակարդակի գործոնների իմանալը դեռևս խիստ անբավարար է, քանի որ, ինչպես երևում է աղյուսակից, նույնիսկ միևնույն (օրինակ ծծմբաթթվի) արտադրության տեղաբաշխումն իրականացվում է երկու տարբեր գործոններով պայմանավորված օգտագործվող հումքի տեսակով: Նման կարգով, մսի հին կոմբինատները տեղաբաշխված են սպառման, իսկ նոր կոմբինատները՝ հումքային ռեսուրսի մատուցման անասնապահության շրջաններում: Ուստի անհրաժեշտ է լինում լրացուցիչ կարգով հաշվի առնել նաև տարաբնույթ ու բազմաթիվ փոխկապակցված գործոններ, ինչպես նաև կատարել տարբեր բնույթի հաշվարկներ ու գնահատումներ:

Արդյունաբերական ձեռնարկության տեղի ընտրության վրա ազդող գործոնների փոխգործունեության սխեմատիկ մոդելն, ըստ Յան Գամիլթոնի, ունի հետևյալ տեսքը:

Աղյուսակ 6.1


Արդյունաբերության որոշ ճյուղերի տեղաբաշխման վրա հումքային, վառելիքաէներգետիկական և աշխատանքային ռեսուրսների և պատրաստի արտադրանքի սպառման շրջանների ազդեցության աստիճանը (ըստ Ա. Խրուշչևի)¹

Արդյունաբերության ճյուղեր	Հումքային ռեսուրսներ	Վառելիքա-էներգետիկական ռեսուրսներ	Աշխատանքային ռեսուրսներ	Պատրաստի արտադրանքի սպառման վերջնական
Քիմիական արդյունաբերություն	++	++	++	++
այդ թվում արտադրություններ				
քիմիական թելերի	++	++	++	++
սինթետիկ կաուչուկի	++	++	-	++
ազոտային պարարտանյութերի	+	-	-	+++
ծծմբաթթվի (բնական հումքից)	-	-	-	+++
ծծմբաթթվի (արտազատվող գազերից)	+++	-	-	-
սոդայի	+++	++	-	-
Մեքենաշինություն	++	-	++	++
այդ թվում արտադրություններ				
ծանր մեքենաշինություն	+++	-	+	+
ավտոմեքենաշինություն	-	-	+++	+
հաստոցաշինություն	+	-	++	++
սարքաշինություն	-	-	+++	-
գյուղատնտեսական մեքենաշինություն	-	-	+	+++
Սննդարդյունաբերություն	++	-	-	++
այդ թվում արտադրություններ				
մսի	++	-	-	++
չաբարի	+++	-	-	-
հացաթխման	-	-	-	+++

Պայմանական նշումներ
 +++ վճռական ազդեցություն ++ ուժեղ ազդեցություն
 + թույլ ազդեցություն, - ազդեցության բացակայություն

Գծապատկեր 6.1

Արդյունաբերական ձեռնարկության տեղադիրքի ընտրության վրա ազդող գործոնների փոխգործողության հիմնական մոդել (ըստ Յան Համիլթոնի)¹



¹ Хрущев А. Т. География промышленности СССР, М., 1976, с. 126-127

¹ Ян Гамильтон. Модели размещения промышленности. В: Модели в географии, М., 1971, с. 92

Համիլթոնի մոդելը տրամաբանորեն կառուցված է այն հիմնադրույթի վրա, որ ցանկացած արդյունաբերական ձեռնարկության ստեղծման ու տեղաբաշխման գործում վճռական դեր են կատարում երեք տիպի ձեռնարկատերեր: Տեղաբաշխման պրակտիկայում այդ երեք ձեռնարկատերերի մոտեցումները տարբեր են, ընդ որում դրանց նշանակությունը տարածքում և ժամանակում փոփոխվում է:

Մասնավոր առանձին ձեռնարկատիրոջ ազդեցությունը արդյունաբերական ձեռնարկության տեղադիրքի ընտրության վրա մեծ է եղել արդյունաբերական հեղաշրջման ու ինդուստրացման վաղ ժամանակաշրջանում, երբ չկար սուր մրցակցություն, և բացի այդ, մեծ չէին պահանջվող կապիտալ ներդրումների ծավալները: XX դ. սկսեցին ավելի մեծ դեր խաղալ բաժնետիրական ընկերություններն ու կորպորացիաները: Երկայունս խառը (բազմակացուքային) տնտեսության երկրներում մեծացել է պետության կարգավորող դերը արդյունաբերության տեղաբաշխման բնագավառում:

Առանձին մասնավոր սեփականատիրոջ ձեռնարկության տեղաբաշխման վայրի ընտրության հարցում մեծ դեր են կատարում անհատ ձեռնարկատիրոջ գաղափարները, տնտեսական ու սոցիալ-հոգեբանական նախասիրությունները: Տարբեր ձեռնարկատերերի պատկերացումները (իդեալները) արտադրական ձեռնարկության «առավելագույն» և «նվազագույն» շահույթների չափերի մասին հաճախ խիստ տարբերվում են միմյանցից: Երկու տարբեր գործարար երբեք միևնույն զնահատակսն չեն տալիս միևնույն արտադրական կամ առևտրական օբյեկտի տեղաբաշխման առանձին տարբերակների առավելագույն շահույթին¹:

Երբ անհատական ձեռնարկությունը դառնում է կորպորացիա, ապա անձնական նկատառումները մղվում են երկրորդ պլան ենթարկվելով բաժնետերերի ընդհանուր շահերին ու սուր մրցակցության պայմաններում ձեռնարկության արտադրողականության բարձրացման ձգտմանը:

Խառը տնտեսության պայմաններում մասնավոր սեկտորի արդյունաբերական ձեռնարկությունների տեղաբաշխման վերաբերյալ կայացրած որոշումների վրա պետության վարած սոցիալ-տնտեսական քաղաքականության ազդեցությունն արտահայտվում է նրա արգելող կամ խրախուսող հսկողությամբ: Չնայած, որ պետությունը տեսականորեն չպետք է թույլ տա, որ տեղաբաշխման քաղաքականության վրա ազդեն անձնական շահերը, սակայն երբեմն որոշ ազդեցիկ անձինք կամ մարդկանց խմբեր գործնականորեն կարողանում են հասնել ձեռնարկության տեղաբաշխմանը իրենց ցանկացած շրջանում: Սա «տնտեսական» լոբբիզմի դրսևորման յուրահատուկ ձևերից է: Սակայն պետությունը, որպես կանոն, պաշտպանում է համապետական մասշտաբներով «սոցիալական օգույթները» կամ «ազգային շահերը» ղեկավարվելով հետևյալ ձգտումներով.

ա) գերակայություն տալ երկրի սեփական հումքով աշխատող արդյունաբերական ձեռնարկություններին, հումքի և կիսապատրաստուկների մեծամասշտաբներկրումը կրճատելու նպատակով,

բ) ընդլայնել արտադրության միջոցների արտադրությունը, դրանց ներկրումից երկրի կախումը թուլացնելու նպատակով,

գ) ապակենտրոնացնել ռազմավարական նշանակության նորակառույցները երկրի հնարավորին չափ բազմաթիվ, հատկապես հեռավոր շրջաններում,

դ) արդյունաբերական ձեռնարկությունների տեղաբաշխումը կազմակերպել այնպես, որպեսզի այն նպաստի երկրի համեմատաբար թույլ զարգացած շրջանների զարգացմանը:

Մոդելում արտահայտված բնակչության թիվը, բաշխումը և զբաղվածությունը տեղաբաշխման պատկերում էական փոփոխություններ առաջ չեն բերում, բայց կանխորոշում են արտադրության մասշտաբները, տեխնիկան ու համակենտրոնացումը:

Արդյունաբերական ձեռնարկության կազմակերպման և տեղաբաշխման վրա էական ազդեցությունը ունեն հումքի աղբյուրները, մասերը, հանգույցներն ու գործիքները, էներգիան, աշխատուժի քանակն ու որակավորումը և այլ գործոններ: Օրինակ կենդանական և բուսական ծագման, հատկապես շուտ փչացող հումքով աշխատող ձեռնարկությունները և՛ տարածքային, և՛ ժամանակային առումներով «կապված են» դրանց աղբյուրներին, իսկ հանքային հումքով աշխատող ձեռնարկությունները մեծ մասամբ հումքը կարող են մշակել արդյունահանումից որոշ ժամանակ հետո, ինչպես նաև արդյունահանման շրջանից որոշ հեռավորության վրա կառուցված ձեռնարկություններում:

Այս բլոկները սերտորեն կապված են իրացման շուկայի հետ: Տեղադրման վերջնական տարբերակի ընտրությունը հիմնականում որոշվում է տեղաբաշխման բոլոր տարբերակների տնտեսական ծախսերի համադրմամբ, սակայն այդ փուլում ևս կարող են ազդել ձեռնարկատերերի կամ դրա գործադիր տնօրենների անձնական հակումները, ինչպես նաև պետության հատուկ պահանջները:

Իրականում արդյունաբերական ձեռնարկության տեղաբաշխման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև մոդելում չընդգրկված այնպիսի գործոններ, ինչպիսիք են, օրինակ, արտադրամասերի համար պահանջվող տարածքները, պահեստները և մերձատար ուղիները (հաշվի առնելով դրանց հետագա ընդարձակման հնարավորությունը), արտադրության պահանջը բավարարող ջրամատակարարումը, տրանսպորտի անհրաժեշտ տեսակների բավարար զարգացած ցանցը, բնական ռեսուրսների պահպանության մասին այնպիսի օրենսդրությունը, որը հաշվի է առնում տարբեր հողօգտագործողների¹ միջև եղած կապերը: Ընդսմին, հաշվի են առնվում օդային ավազանի աղտոտման ու աղմուկի դեմ պայքարի կազմակերպման անհրաժեշտությունը, ինչպես նաև անվտանգության ու ռազմավարության նկատառումները:

¹ Greenhut M. L., Colberg M. R. 1962. Factors in the Location of Florida Industry, Tallahassee 124

¹ Օրինակ արդյունաբերական ձեռնարկություններ, գյուղատնտեսական արտադրական ձեռնարկություններ, անտառներ, լեռնահանքային արդյունաբերության օբյեկտներ, բնակարանային ֆոնդ, հանգստի գոտիներ

Արդյունաբերական ձեռնարկության տեղադիրքի ընտրության գործում տնտեսական գործոնների (մատակարարման, արդյունահանության ու վաճառահանման) կարևորագույն և, նույնիսկ, վճարող նշանակությունն անվերապահորեն ընդունել, ամենևին հիմք չի տալիս հետևությունն անել միայն տնտեսական գործոնների կարևորության մասին ու մեխանիկորեն բացատրել տեղաբաշխման մեխանիզմը:

Արդյունաբերության տեղաբաշխման սխեմաների վրա, ըստ Մամֆորդի, ազդեցություն ունեն մալ «պատահականությունները, սովորույթները ... և բնությունն իրեն ենթարկելու մարդու ձգտումը, որոնք իրենց պատահական մղումները դեպի կանոնավորված գործունեության հունը ուղղորդելով, առաջացնում են ոչ այլ ինչ, քան քառսի թագավորություն»¹: Մամֆորդի այս հետևությունը հիմնված է Ռուսաստանում XX դ. 20-ական թվականներին շուկայական տնտեսությունից սոցիալիստական տնտեսության անցման հետևանքով առաջացած տնտեսական անկման վերլուծության վրա: Ռուսաստանում և ԽՍՀՄ-ի մյուս հանրապետություններում նույնատիպ տնտեսական անկում և քառս է առաջացել մալ XX դ. 90-ական թվականներին հակառակ՝ սոցիալիստականից շուկայական տնտեսության անցման հետևանքով:

Տնտեսագիտական, տնտեսաաշխարհագրական գիտելիքների սահմանափակության և սրված անհատականության պայմաններում մեկը մյուսին կրկնօրինակելու ու կրկնելու սովորությունը հանգեցնում է միևնույն վայրում ապրող մարդկանց միատեսակ մասնագիտացման, իսկ արագ զարգացող տնտեսության պայմաններում մասնագիտացված բնակավայրերի ու դրանց ազդմեթացիաների ձևավորման:

Արդյունաբերական ձեռնարկությունների տեղաբաշխման խնդիրների հանդեպ մարդու մոտեցումը ձևավորվում է մալ մի շարք այլ գործոնների «ճնշման ներքո»:

Դրանցից են փորձառությունը, նախապաշարմունքները, ավանդույթները, կրոնը, սովորույթները, օրենքներն ու սոցիալ-տնտեսական համակարգերը: Ազգայնամոլությունը, ինպերիալիզմը և այլ քաղաքական համակարգերը կազմում են այն իրական միջուկը, որի վրա հենվում են տնտեսության բոլոր ճյուղերի զարգացումն ու տեղաբաշխումը: Քաղաքական համակարգով է պայմանավորվում գործունեության այս կամ այն ձևի խրախուսումը, աջակցությունը, սահմանափակումը կամ արգելումը: Օրինակ ի տարբերություն չեզք երկրների (Ավստրիա, Շվեյցարիա և այլն) որոշ երկրների վարչակարգեր (օրինակ՝ Կորեայի ժողովրդադեմոկրատական Հանրապետություն, Պակիստան) մեծ ջանքեր են ներդնում ռազմարդյունաբերական համալիրի ճյուղերի, այդ թվում միջուկային զենքի արտադրության զարգացման ուղղությամբ:

Տեղական իշխանությունների և բնակչության վերաբերմունքը կարող է նպաստել ընդհանրապես տնտեսության և, մասնավորապես, արդյունաբերության առանձին ճյուղերի ներգրավմանը, վանմանը և ընտրությանը՝ ինչպես շրջանային, այնպես էլ տեղական մակարդակով:

Տեղաբաշխման բնութագրական գծերից «շեղված» արդյունաբերական ճյուղեր կամ կետեր կարող են առաջանալ բնակչության էթնիկական խմբերի տարաբնակեցման առանձնահատկություններին համապատասխան: Օրինակ ԱՄՆ-ում սննդամթերքի որոշ տեսակների (մածուց, լավաշ) արտադրությունը համընկնում է հայ բնակչության տարաբնակեցման արեալին:

Արդյունաբերության որոշ ճյուղերի ու արտադրությունների (օրինակ՝ խոզի մսից պատրաստված մսամթերքների, գինու, օղու) տեղաբաշխումը երբեմն որոշվում է մալ երկրի գլխավոր կրոնի վերաբերմունքով: Այսպես, ֆրանսիական գաղութատիրության ժամանակաշրջանում գինեգործական արդյունաբերության արտադրանքի ծավալով Ալժիրն աշխարհի առաջատար երկրներից մեկն էր: Սակայն անկախացումից հետո, երկրում մահմեդական արմատականների դիրքերի ուժեղացման հետևանքով, գինու արտադրության ծավալը անընդմեջ նվազում է (1970-ական թվականներին 4 մլն հեկտոլիտր, իսկ այժմ՝ գրեթե չի արտադրվում):

Որևէ վայրում արդյունաբերական գործունեության ծավալումը սկզբնական փուլում ուներ որոշ առավելություններ: Հիմնական մասնագիտացման ճյուղին զուգահեռ սաղմնավորվում ու զարգանում էին օժանդակ ճյուղեր, բնակչությանը սպասարկող ձեռնարկություններ, ինչպես մալ քաղաքային ենթակառուցվածք: Այլ կերպ ասած, տեղի է ունենում «մուլտիպլիկացիայի երևույթ», որը արդյունաբերության հետագա զարգացմանը մեծ թափ է հաղորդում:

Արդյունաբերության տեղաբաշխման «շեղում» երբեմն առաջանում է այն դեպքում, երբ երկրի կառավարության խնամակալական նպատակ հետապնդող քաղաքականության արդյունքում, դժվարանում է մրցակիցների մուտքը այդ երկրի շուկա, և դրա տարածքում կարող են մնալ արդյունաբերության համար նույնիսկ ավելի նպաստավոր, բայց չյուրացված տարածքներ «կղզիներ»:

Տրանսպորտային ծախսերի տեսակետից մրցակիցների համեմատությամբ պակաս նպաստավոր պայմաններում տեղաբաշխված արդյունաբերական ձեռնարկությունների համար արտադրանքի վաճառահանման մեծացման լրացուցիչ առավելություն կարող է ապահովել գովազդը:

Այսպիսով, *տեղաբաշխման սխեմաները թեկուզ պայմանավորված են տրանսպորտային ծախսերով, բայց միշտ չէ, որ դրանց միջև կարելի է բացահայտել ուղղակի կախում: Հատուկ սակագների սահմանման ու գների կարգավորման քաղաքականությունն իրականում հաճախ առաջացնում է արդյունաբերության տեղաբաշխման ընդհանուր սխեմայի աղավաղում («շեղում»):*

Հետևաբար, քանակական պարամետրերի միջոցով արդյունաբերության տեղաբաշխման մոդելների բնութագիրը թեկուզ հրապուրիչ է տնտեսագիտական մեկնաբանության նրբագեղությամբ ու պարզությամբ, բայց թերի է քանակական գնահատման չենթարկվող գործոնների անտեսման առումով:

¹ Mumford L., 1934, Technics and Civilization. London. Pp. 194-195

6.4 Արդյունաբերության ճյուղային կառուցվածքի փոփոխությունները


Արդյունաբերության մեջ առավել դինամիկորեն աճում են մշակող ճյուղերը, քանի որ վերջին հաշվով հիմնականում դրանք են բավարարում աշխարհի աճող բնակչության նյութական բարիքների պահանջարկը:

Արդյունաբերության և ընդհանրապես ՀՆԱ մեջ մշակող ճյուղերի բաժնի մեծությունը և հատկապես այդ բաժնի հարաբերությունը արդյունահանող ճյուղերի բաժնին երկրի տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող կարևոր ցուցանիշներից է: Այս հարաբերությունը, որպես կանոն, մեծ է զարգացած երկրներում և հատկապես մեծ է հանքային ռեսուրսներով ոչ հարուստ զարգացած երկրներում: Արդյունաբերականացված երկրների ՀՆԱ-ում մշակող արդյունաբերության բաժինը արդյունահանող արդյունաբերության բաժնին գերազանցում է միջին հաշվով 10:1, իսկ Ֆրանսիայում ու Գերմանիայում համապատասխանաբար 50:1 և 60:1 հարաբերությամբ: Այս հարաբերությունը միջինից համեմատաբար ցածր է արդյունաբերականացված այն երկրներում, որոնք տնօրինում են հանքային բացառիկ մեծ հարստություններ: Այսպես, օրինակ, Ավստրալիայում և Կանադայում այդ հարաբերությունը կազմում է ընդամենը 4:1: Եվագ զարգացած, հատկապես նավթարդյունահանող երկրներում այդ հարաբերությունն էլ ավելի ցածր է: Օրինակ Իրանում այն հավասար 1:1-ի:

Ինչպես հայտնի է, մշակող արդյունաբերության պատրաստի արտադրանքը մի քանի անգամ քանակ է նրա պատրաստման համար օգտագործվող հումքի արժեքից, այսինքն մշակող արդյունաբերության արդյունավետությունն անհամեմատ բարձր է: Այս նկատառումով էլ անկախություն ձեռք բերած զարգացող երկրները ձգտում են զարգացնել սեփական մշակող արդյունաբերական ճյուղերը:

Գծապատկեր 6.2

Աշխարհի մշակող արդյունաբերության արտադրանքի բաշխումը զարգացած և նոր զարգացող երկրների միջև, 1980 և 1998թթ. (%)¹



¹ Source: International Yearbook of Industrial Statistics, 2000, Vienna, 2000.

Աղյուսակ 6.2

Մշակող արդյունաբերության արտադրանքի աճի տեմպերը 1980-1998թթ.

Երկրների խումբ	Մշակող արդյունաբերության արտադրանքի աճի տեմպերը (%)				Մշակող արդյունաբերության արտադրանքի աճի տեմպերը (1990=100)				Մշակող արդյունաբերության արտադրանքի աճի տեմպերը (1990=100)				Մոմենտը (1998-1990)			
	1990-1998		1998-1990		1995-1998		1998-1995		1996-1998		1997-1998		1998-1990		1998-1990	
	Մեծ	Փոքր	Մեծ	Փոքր	Մեծ	Փոքր	Մեծ	Փոքր	Մեծ	Փոքր	Մեծ	Փոքր	Մեծ	Փոքր	Մեծ	Փոքր
Արդյունաբերականացված երկրներ այդ թվում	2.8	1.6	103	111	109	111	2.0	1.1	100	102	106	107	3542	4719	1998	1998
Եվրամիություն	1.8	1.1	102	110	106	110	1.5	0.8	100	100	103	107	655	655	1998	1998
Արևելյան Եվրոպա և նախկին ԽՍՀՄ	2.6	-5.1	62	65	65	65	1.8	-5.1	62	63	64	65	292	292	1998	1998
Նոր զարգացող երկրներ առանց Չինաստանի	5.1	6.7	137	160	157	160	2.9	4.9	125	132	139	140	289	289	1998	1998
Չինաստան	4.3	4.5	122	136	137	136	1.9	2.5	110	115	119	117	301	301	1998	1998
Աֆրիկա	4.3	2.0	102	119	113	119	1.3	-0.6	90	92	94	97	80	80	1998	1998
Լատինական Ամերիկա	1.3	3.2	111	126	123	126	-0.6	1.4	102	105	109	110	646	646	1998	1998
Հարավային և Արևելյան Ասիա	9.0	9.5	165	195	192	195	6.9	7.9	152	164	173	173	267	267	1998	1998
Արևմտյան Ասիա և Եվրոպա	4.0	2.4	96	114	111	114	1.2	0.3	87	90	96	97	575	575	1998	1998
ՆԱԵ-ներ	4.0	4.3	118	133	132	133	2.0	2.6	108	113	118	116	406	406	1998	1998
Երկրորդ սերնդի ՆԱԵ-ներ	7.1	6.7	144	156	166	156	5.0	4.9	132	142	148	136	362	362	1998	1998
Աշխարհը, ընդամենը	3.1	2.6	108	119	117	119	1.4	1.1	101	103	106	107	1011	1011	1998	1998


Source: International Yearbook of Industrial Statistics 2000, Vienna, 2000.

Մշակող արդյունաբերության զարգացման բնագավառում նոր զարգացող երկրները զգալի հաջողության են հասել XX դ. վերջին երկու տասնամյակում (տես Աղյուսակ 6.2): Մշակող արդյունաբերության արտադրանքի աճի միջին տարեկան տեմպերը նոր զարգացող երկրներում 1980-1990 թթ. ժամանակահատվածում 1.8, իսկ 1990-1998 թթ. ժամանակահատվածում 4:2 անգամ բարձր էին, քան արդյունաբերականացված երկրներում (աղյուսակ 6.2):

Մշակող արդյունաբերության արտադրանքի աճի առավել արագ տեմպերով առանձնանում են Չինաստանը¹, երկրորդ սերնդի ՆԱԵ-ները, որոնց տեսակարար կշիռը զարգացող երկրների մշակող արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ ունի մեծացման միտում (գծապատկեր 6.3):

Գծապատկեր 6.3


Մշխարհի մշակող արդյունաբերության արտադրանքի բաշխումը նոր զարգացող երկրների խմբերի միջև, 1980 և 1998թթ. (%)



Քանի որ Չինաստանը և երկրորդ սերնդի ՆԱԵ-ների մի մասը Հարավային և Արևելյան Ասիայի երկրներ են, ապա բնականաբար աճել է այս տարածաշրջանի բաժինը նոր զարգացող երկրների մշակող արդյունաբերության ընդհանուր արտադրանքի ծավալում (գծապատկեր 6.4):

¹ Չինաստանը սոցիալիստական տնտեսական համակարգի երկիր է, բայց նկատի ունենալով այդ երկրում շուկայական տնտեսության բուռն զարգացումը, ՄԱԿ-ի փաստաթղթերում այն դասվում է նոր զարգացող երկրների թվին

Գծապատկեր 6.4
Մշխարհի մշակող արդյունաբերության արտադրանքի բաշխումը նոր զարգացող երկրների տարածաշրջանային խմբերի միջև, 1980 և 1998թթ. (%)



Իսկ արդյունաբերական երկրների շարքում առավել դինամիկ զարգանում է ճապոնիայի, ԱՄՆ-ի ու Կանադայի մշակող արդյունաբերությունը, որի արդյունքում այդ երկրների բաժինը 1980-1998 թթ. նույնիսկ որոշ չափով մեծացել է (աղյուսակ 6.3):

6.5 Վառելիքաէներգետիկ արդյունաբերություն

Վառելիքաէներգետիկական ռեսուրսներ արդյունահանող, մշակող, էլեկտրաէներգիա արտադրող և սպառողին հասցնող ձեռնարկությունների համալիրը՝ վառելիքաէներգետիկական արդյունաբերությունը արդյունաբերության և ամբողջ տնտեսության ճյուղերի զարգացման կարևորագույն նախադրյալն է: Նրա դերը կարևոր է նաև աշխատանքի աշխարհագրական բաժանման մեջ:

Վառելիքաէներգետիկ արդյունաբերությունը, թեկուզ ոչ բոլոր ենթաճյուղերով, բայց յուրաքանչյուր տնտեսության պարտադիր ճյուղն է:

Մշխարհի տարածաշրջանների կամ երկրների էներգետիկ արդյունաբերության զարգացման բնութագրման համար օգտագործվում են համակարգ կազմող ցուցանիշներ, որոնք մեթոդական առումով ժամանակի ընթացքում փոփոխվում են: Նախկինում տնտեսաաշխարհագրական ու տնտեսագիտական ուսումնասիրություններում երկրների էներգետիկական արդյունաբերության զարգացումը բնութագրում էին այդ ճյուղի արտադրանքի ընդհանուր ծավալով, վառելիքի կամ էլեկտրաէներգիայի արտահանման (ներկրման) բաժնով, մեկ շնչին հասնող վառելիքի կամ էլեկտրաէներգիայի քանակով: Սակայն նշված ցուցանիշները հնարավորություն են տալիս ճյուղի զարգացման մասին կազմել սոսկ ընդհանուր ու կողմնորոշիչ պատկերացում: Առավել համակողմանի ու լրիվ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև այնպիսի հավելյալ ցուցանիշներ, ինչպիսիք են,

օրինակ, աշխատանքի եներգազմվածությունը, 1 կգ նավթի համարժեք եներգիայով արտադրված ՅՆԱ-ի արժեքը (ԱՄՆ դոլարներով), ընդհանուր եներգասպառման մեջ վառելիքի ավանդական տեսակների բաժինը, առևտրական եներգասպառման ընդհանուր և մեկ շնչին հասնող չափը (քարածխի կամ նավթի համարժեքով):

Աղյուսակ 6.4

**Առևտրային եներգասպառումը
(1980-1997 թթ., նավթային համարժեքով)**

Աշխարհը, տարածաշրջանները, երկրների խմբերը	Ընդամենը (մլն տ)		Մեկ շնչի հաշվով (կգ)		1 կգ նավթին համարժեք եներգիայով արտադրված ՅՆԱ-ի արժեքը	
	1980	1997	1980	1997	1980	1997
Ամբողջ աշխարհի այդ բոլորը	6891	9354	1623	1684
Արաբական երկրներ	138	338	882	1314	2.6	1.5
Արևելյան Ասիա	645	1304	630	1017	0.6	1.2
Արևելյան Ասիա (առանց Չինաստանի)	47	190	1083	3627	4.3	3.7
Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազան	377	575	1063	1180
Հարավային Ասիա	330	665	357	508	0.8	0.9
Հարավային Ասիա (առանց Հնդկաստանի)	88	204	370	583	1.1	1.0
Արևելյան Եվրոպա և ԱՊՀ	1318	1174	3630	2963	...	0.7
Զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրներ	4067	5104	4468	5003	4.0	5.0
Զարգացման միջին մակարդակ ունեցող երկրներ	2685	4036
Զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրներ	139	214

... տվյալներ չկան

Առավել զարգացած երկրների բնակչության մեկ շնչի հաշվով եներգասպառման չափը 1.5, նույնիսկ 10 անգամ գերազանցում է նոր զարգացող երկրների տարբեր խմբերի համապատասխան ցուցանիշը (Հավելվածի 1 աղյուսակը):

Առաջնային եներգառեսուրսների կառուցվածքում վառելիքի նոր տեսակների բաժնի մեծությունը երկրի տնտեսական զարգացման մակարդակ բնութագրող ընդհանրական ցուցանիշներից է:

Նվազ զարգացած, հատկապես հանքային վառելիքի ու ջրաէներգետիկ ռեսուրսներով աղքատ երկրներում դեռևս շատ բարձր է վառելիքի ավանդական տեսակների (օրինակ՝ վառելափայտի, գյուղատնտեսական արտադրության մնացորդների) բաժինը եներգասպառման ընդհանուր հաշվեկշռում: Օրինակ՝ Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում ընդհանուր եներգասպառման մեջ վառելիքի ավանդական տեսակների բաժինը մեծ է 90%-ից, Ինդոնեզիայում, Ֆիջիում, Պարագվայում, Շրի Լանկայում կազմում է շուրջ 50%, իսկ նավթարդյունահանող երկրներում մինչև 1-2%:

Բարձր զարգացած երկրներում այդ ցուցանիշն, ընդհանուր առմամբ, շատ ցածր է: Բացառություն են կազմում Հյուսիսային Եվրոպայի երկրները, որոնց տարածքի նույն բնակեցված ընդարձակ շրջանների բնակչությունը, չնայած երկրի եներգասպառման ընդհանուր մեծ ծավալին, բնակարանների և սաունաների ջեռուցման համար շարունակում է ավանդաբար օգտագործել վառելափայտը: Օրինակ՝ Նորվեգիայում, չնայած, որ մեկ շնչի հաշվով արտադրվում է տարեկան 26 հազար կվտ.ժ էլեկտրաէներգիա, և արդյունահանվում է 34 տ նավթ, ընդհանուր եներգասպառման կառուցվածքում վառելափայտի բաժինը կազմում է 10%, իսկ հարևան Շվեդիայում նույնիսկ 16%:

Աղյուսակ 6.5

Եներգիայի աղբյուրների սպառման տարածքային պատկերը, (1991թ., %)

Եներգիայի աղբյուրը	Ամբողջ աշխարհը	Հյուսիսային Ամերիկա	Արևմտյան Եվրոպա	Ճապոնիա	Լատինական Ամերիկա	Աֆրիկա	Ավստրալիա	Չինաստան	Հնդկաստան	ԱՊՀ երկրներ
Նավթ	40.2	38.4	45.6	56.4	62.6	44.7	35.0	17.2	31.5	32.1
Ածուխ	28.0	23.3	21.8	18.0	6.1	36.0	44.9	79.3	57.7	19.4
Բնական գազ	22.7	26.2	17.7	11.3	20.9	15.1	18.6	2.0	7.0	42.8
Միջուկային էներգիա	6.6	8.7	12.4	12.3	0.9	1.1	-	-	0.7	4.2
Հիդրոէներգիա	2.5	2.4	2.5	2.0	9.5	3.1	1.5	1.5	3.1	1.5
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Ինչպես երևում է աղյուսակից, աշխարհի տարածաշրջանների մեծ մասում եներգիայի գլխավոր աղբյուրը նավթն է: Հյուսիսային Ամերիկայում, Արևմտյան Եվրոպայում, Ճապոնիայում, Լատինական Ամերիկայում, Աֆրիկայում, Չինաստանում, Հնդկաստանում և Ավստրալիայում այն երկրորդն է (առաջինը ածուխն է), ԱՊՀ երկրներում նույնպես նավթը երկրորդն է բնական գազից հետո:

Եներգետիկական արդյունաբերության զարգացման իրական պատկերը ներկայացնում է ոչ թե արդյունահանման ու արտադրության ընդհանուր ֆիզիկական, այլ երկրում եներգիայի փաստացի սպառման ծավալն արտահայտող ցուցանիշը՝ **առևտրային եներգասպառումը**: Վերջինս ներառում է եներգիայի տեղական արտադրանքը, գումարած ներկրածը ու տարեվերջի դրությամբ չօգտագործված պաշարները (ռեզերվները), հանած արտահանածը: Այս ցուցանիշը կարևորվում է այն հանգամանքով, որ երկրների մեծամասնությունը եներգիայի արտահանողներ կամ ներկրողներ են, ուստի եներգիայի արտադրությունն ու սպառման ծավալները

միմյանցից տարբերվում են: Առանձին երկրներում այդ տարբերությունը հասնում է մեծ չափերի: Օրինակ՝ Գաբոնում և Կոնգոյում սեփական կարիքների համար օգտագործում են այդ երկրների էներգիայի ընդամենը 1/12-ը, Նորվեգիայում՝ 1/9-ը, Օմանում և Քուվեյթում՝ 1/7-ը, Միացյալ Արաբական Ամիրայություններում՝ 1/5-ը: Այս հարաբերությունն էլ ավելի մեծ էր 10-20 տարի առաջ, երբ երկրներում (բացառությամբ Նորվեգիայի) դեռևս համեմատաբար փոքր էր էներգիայի ներքին սպառումը: Կա նաև առևտրային էներգասպառման վերոգրյալին հակառակ իրավիճակ, երբ երկիրը լրացուցիչ էներգիա է ներկրում: Օրինակ՝ ԱՄՆ-ը աշխարհի ամենաշատ էներգիա արտադրող երկիրը, իր առևտրային էներգասպառումը 1/5-ով իրականացնում է ներկրման հաշվին:

Էներգետիկական արդյունաբերության զարգացման, էներգիայի օգտագործման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշներից է աշխատանքի **էներգազինվածության գործակիցը**¹՝ արտադրության մեջ օգտագործված էներգիայի (կվտ.ժ-ով) հարաբերությունը աշխատած մարդ-ժամերի թվին: Այս ցուցանիշը շատ բարձր է առավել զարգացած երկրներում: Ներկայումս միջազգային հարաբերություններում էներգասպառման արդյունավետությունն արտահայտելու համար օգտագործվում է **1 կգ նավթին համարժեք էներգիայի շնորհիվ արտադրված համախառն ներքին արդյունքը** (ԱՄՆ դոլարներով): Այս ցուցանիշը ևս, բնականաբար, բարձր է առավել զարգացած երկրներում, իսկ հատկապես բարձր՝ մեծ մասշտաբներով էներգիա ներկրող երկրներում: Օրինակ՝ ճապոնիայում, Շվեյցարիայում, Գոնկոնգոյում, Դանիայում էներգախնայողական տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ այդ ցուցանիշը կազմում է շուրջ 10, Միացյալ Արաբական ամիրայություններում ու Ավստրալիայում՝ 1.6, Բահրեյնում՝ 0.7, Նիգերիայում ու Ադրբեյջանում՝ 0.3 ԱՄՆ դոլար (1 կգ նավթի էներգիայի հաշվով): Այս ցուցանիշը ցածր է նաև առավել նվազ զարգացած երկրներում:

Համեմատության համար նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում այդ ցուցանիշը մոտ 2 ԱՄՆ դոլար է:

Վառելիքաէներգետիկական արդյունաբերության զարգացումն ու տեղաբաշխումը ճիշտ պատկերացնելու համար անհրաժեշտ է առաջին հերթին բացահայտել այն բոլոր փոփոխություններն ու միտումները, որոնք բնորոշ են վառելիքաէներգետիկ արդյունաբերության զարգացմանը, հատկապես վերջին հարյուրամյակում:

Էներգետիկ արդյունաբերության առաջին միտումը էներգիայի արտադրության ծավալի աննախադեպ մեծ աճն է: XX դարում այդ ծավալն աճել է 13 անգամ և ներկայումս էլ շարունակում է աճել:

Էներգառեսուրսների սպառման վերը նշված մեծ աճը պայմանավորված է աշխարհի բնակչության թվի բարձր աճով, մարդկանց կյանքի որակի, մասնավորապես մեկ շնչի հաշվով էներգասպառման զգալի մեծացումով:

Համաշխարհային էներգետիկական արդյունաբերության մյուս միտումը գիտատեխնիկական առաջադիմության շնորհիվ առաջնային էներգառեսուրսների օգտագործման ինտենսիվացումն է, էներգետիկ սարքավորումների կատարելագործումը: Գիտատեխնիկական առաջադիմության արդյունքում ստեղծվում են բարձր արդ-

յունավետ ու հզոր էներգետիկական սարքավորումներ, որոնք էներգիայի միավոր քանակի արտադրության վրա ծախսում են նախկինի համեմատությամբ զգալիորեն պակաս վառելիք¹: Վառելիքի տեսակարար ծախսերը մի քանի անգամ պակասել են նաև սև մետաղաձուլությունում և ավտոմոբիլային տրանսպորտում: Նշված առաջադիմության արդյունքում բարձրացել է առաջնային էներգետիկ ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, իսկ դա նշանակում է, որ ընդհանուր տնտեսական աճի (համախառն ներքին արդյունքի աճի) տեմպն ավելի բարձր է, քան սույլ առաջնային էներգառեսուրսների արդյունահանման ծավալի ֆիզիկական աճը:

Առաջնային էներգառեսուրսների օգտագործման կառուցվածքի փոփոխությունները:

Համաշխարհային էներգետիկ արդյունաբերության արագ զարգացումը քանակական փոփոխությունն ուղեկցվում է դրա որակական կառուցվածքային փոփոխությամբ: Առաջին հերթին դա դրսևորվում է վառելիքաէներգետիկ հաշվեկշռում (էներգիայի բոլոր տեսակների ստացման, փոխակերպման և օգտագործման (սպառման) հաշվեկշռում) նավթի և գազի տեսակարար կշիռների մեծացմամբ: Նավթագազային վառելիքների սպառման կտրուկ աճի շնորհիվ դրանց միագումարային բաժինն առաջնային էներգառեսուրսների ընդհանուր ծավալում հասել է գրեթե 2/3-ի: Միաժամանակ խիստ նվազել է XX դ. սկզբի հիմնական վառելիքատեսակի՝ ածխի տեսակարար կշիռը (95%-ից իջել է 27%-ի):

Այս ընդհանուր միտումները որոշ չափով խախտվեցին աշխարհը համակած էներգետիկ ճգնաժամի հետևանքով:

Աղյուսակ 6.6

Առաջնային էներգառեսուրսների հաշվեկշռի փոփոխությունները 1973-1990թթ.

Էներգառեսուրս	1973	1979	1990
Նավթ	47.0	45.0	38.6
Գազ	18.5	18.4	21.7
Ածուխ	28.0	28.5	27.3
Ջրաէներգետիկ ռեսուրսներ	6.0	5.9	6.7
Ատոմային վառելիք	0.5	2.2	5.7

¹ Այսպես, օրինակ, եթե առաջին շոգեմեքենան 1 կվտ.ժ համարժեք էներգիա արտադրելու համար ծախսում էր 10 կգ ածուխ, Ուատտի շոգեմեքենան՝ 4 կգ, ապա երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին էլեկտրակայաններում 1 կվտ.ժ էլեկտրաէներգիա ստանալու համար օգտագործվում էր 1.4 կգ, իսկ ներկայումս՝ շուրջ 0.3 կգ ածուխ (պայմանական վառելիք):

Նավթի գների չափազանց մեծ աճի հետևանքով դանդաղեց այդ էներգակրի արդյունահանման ու սպառման աճի տեմպը, ու, բնականաբար, 1973-1990 թթ. ժամանակահատվածում 8%-ով նվազեց դրա տեսակարար կշիռը, որը փոխհատուցվեց այլ էներգառեսուրսների տեսակարար կշիռների մեծացմամբ:

Այսպիսով, առաջնային էներգառեսուրսների կառուցվածքային գլխավոր փոփոխությունը անցումն է պինդ վառելիքներից գազահեղուկային վառելիքների օգտագործման:

Առանձին երկրների էներգասպառման կառուցվածքը պայմանավորված է էներգակիրներով դրանց ապահովվածությամբ և էներգակիրների համաշխարհային շուկայի ընդհանուր վիճակով:

Ըստ առաջնային էներգառեսուրսների սպառման կառուցվածքի բնույթի առանձնանում են պինդ-հեղուկ-գազային վառելիքի գերակշիռ օգտագործման ուղղվածության երկրներ (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունը), էլեկտրաէներգիայի գերակշիռ օգտագործման ուղղվածության երկրներ (օրինակ՝ Նորվեգիան), գազային վառելիքի գերակշիռ օգտագործման ուղղվածության երկրներ (օրինակ՝ Նիդերլանդները), պինդ վառելիքի գերակշիռ օգտագործման ուղղվածության երկրներ (օրինակ՝ Չինաստանը), հեղուկ վառելիքի գերակշիռ օգտագործման ուղղվածության երկրներ (օրինակ՝ Ինդոնեզիան):

6.6 Վառելիք էներգետիկական արդյունաբերության տեղաբաշխման փոփոխությունները:

Վառելիք էներգետիկական արդյունաբերության տեղաբաշխական բնույթի այս միտումն, ըստ էության, ճյուղի քանակական և որակական փոփոխությունների արդյունք է: Տեղաբաշխման փոփոխությունների պատճառները բազմաբնույթ են: Առանձնապես մեծ ազդեցություն ունի ԳՏՀ շնորհիվ նաև, այնպիսի էներգառեսուրսների օգտագործումը, ինչպիսիք են ուրանը, թորիումը, պլուտոնիումը, դեյթերիումը, արեգակնային, ալեբախության, մակընթացության և երկրաջերմային էներգիաները:

Մասնավորապես, միջուկային վառելիքի օգտագործումը էլեկտրաէներգետիկական դարձնում է վառելիքի շրջաններից հարաբերականորեն անկախ, և այդ ենթաճյուղի տեղաբաշխումը կողմնորոշվում է դեպի սպառման գլխավոր շրջանները: Մյուս էներգակիրների օգտագործումն, ընդհակառակը, էլեկտրաէներգետիկայի տեղաբաշխումը կողմնորոշում է դեպի դրանց աղբյուրները:

Տեղաբաշխման փոփոխության մյուս պատճառները պինդ վառելիքի հին աղբյուրների սպառվելն է կամ վառելիքի արդյունահանման արդյունավետության նվազումը: Դրանով է պայմանավորված պինդ վառելիքի արդյունահանման նոր շրջանների շահագործումն ու դրանցում էլեկտրաէներգետիկական այնպիսի հզոր բազաների ստեղծումը, ինչպիսիք են, օրինակ, Կանսկ-Աչինսկի (ՌԴ) և էքիբասթուլգի (Ղազախստան) վառելիք էներգետիկ համալիրները:

Վառելիք էներգետիկական արդյունաբերության տեղաբաշխման գլխավոր միտումը էներգառեսուրսների տեղաբաշխման ու սպառման միջև տարածքային կտրվածության պահպանումն է:

Էներգառեսուրսների պաշարների տեղաբաշխման, հանույթի ու սպառման շրջանների միմյանցից կտրվածությունը դեռևս չի վերացել, չնայած որ էներգիայի ընդհանուր համաշխարհային հավելածի 60%-ը բաժին է ընկնում նվազ զարգացած երկրներին:

Ջարգացած երկրների սպառած էներգիայի ծավալը զգալիորեն գերազանցում է սեփական էներգառեսուրսների, արտադրած էներգիայի և բնակչության մասնաբաժիններին: Ջարգացած երկրներն ավելի շատ էներգիա են սպառում նոր զարգացող երկրներից էներգառեսուրսների մեծ չափերով ներկրման հաշվին:

Համաշխարհային էներգառեսուրսների 86%-ը սպառվում է հյուսիսային լայնության 30° և 60° միջև տարածված գոտու գլխավորապես զարգացած երկրներում, որոնց բնակչության բաժինն աշխարհի ընդհանուր բնակչության մեջ կազմում է ընդամենը 28%: Հակառակ դրան, նոր զարգացող երկրներում օգտագործվում է աշխարհի առևտրական էներգառեսուրսների շուրջ 14%-ը, այն դեպքում, երբ դրանցում բնակվում է աշխարհի բնակչության շուրջ 80%-ը:

6.7 Էներգետիկական արդյունաբերության զարգացման հեռանկարը

Էներգետիկան ներկայումս կանգնած է իր բազայի հեղափոխության շեմին: Այդ հեղափոխությունն անխուսափելիորեն առաջ կբերի էներգետիկական արդյունաբերության տեղաբաշխման պատկերի հեղափոխություն: Վերջին երկու-երեք տասնամյակում էներգետիկայի բնութագրական գիծը էներգիայի այլընտրանքային տեսակների աղբյուրների հանդեպ հետաքրքրության կտրուկ մեծացումն է հետևյալ պատճառներով.

ա) ինչպես ակնհայտ դարձավ 1970-ականներին, հանքային վառելիքի, հատկապես նավթի և բնական գազի սահմանափակության պայմաններում անխուսափելի են էներգետիկ ճգնաժամի «պոռթկումները» էներգակիրների գների անսանձ թռիչքները,

բ) ատոմային էլեկտրակայանների վթարների տպավորության տակ մարդկությունը որոշ չափով հիասթափվել է դրանցից,

գ) ծծմբով և աէկ-ների ռադիոակտիվ թափոնները անհրաժեշտ հուսալիությամբ թաղելու գործի կազմակերպումը,

դ) նույնիսկ խիստ հսկողության պայմաններում երբեմն կատարվում է հարստացված ուրանի անօրինական առևտուր (աէկներում օգտագործված հարստացված ուրանը հետագայում մշակվում է հատուկ գործարաններում ու օգտագործվում ատոմային ռումբի արտադրության համար):

Մարդկության ապագա բարեկեցությունը կախված է էներգիայի ներկա տեսակներից անսպառ ու վերականգնվող նոր տեսակների օգտագործմանը վճռականորեն անցնելու հաջողությունից:

Էներգետիկայի բնագավառի հռչակագրային միավորումները հանգել են այն եզրակացությանը, որ առավել հեռասպարային է հիմնականում ջրային էլեկտրակայաններից ու արեգակնային էներգետիկ սարքավորումներից ստացվող էներգիան: «Շելլ» նավթային կոնցեռնի գնահատմամբ արդեն 2050 թ. ջրէկներից ու արեգակնային էներգետիկ սարքավորումներից ստացվող էներգիայի քանակը համարժեք կլինի 20 մլրդ տ (պայմանական վառելիքի) քարածխի էներգիային: Համեմատելի դարձնելու նպատակով նշենք, որ, նախ, այդ քանակն ավելի մեծ է, քան ներկայումս աշխարհում սպառվող ամբողջ էներգիան, և, երկրորդ, այդ էներգիան կկազմի ապագա էներգասպառման ծավալի կեսը: Իսկ գերմանական գիտնականների կարծիքով XXI դ. կեսերին արեգակի, քամու, ջրաէլեկտրակայանների և կենսազանգվածի տարալուծման գործընթացում ստացվող միագումարային էներգիան կծածկի մարդկության էներգիայի այդ ժամանակվա պահանջարկի շուրջ 70%-ը¹:

Առաձնապես հեռանկարային է համարվում արեգակնային էներգիան՝ նկատի ունենալով հետևյալ հանգամանքները.

ա) էներգիայի այլ տեսակների (նավթ, քարածուխ, բնական գազ և այլն) համեմատությամբ արեգակնային էներգիայի օգտագործումն ավելի դյուրին ու անմիջական է,

բ) արեգակնային էներգիան առանձնապես է իր այնպիսի ծավալով, որն ամբողջությամբ մարդկությունը նույնիսկ երբևիցե չի կարողանա օգտագործել: Պատկերացնելու նպատակով նշենք, որ երկրագնդի ստացած արեգակնային էներգիան 15000 անգամ մեծ է էներգիայի այն քանակից, որն անհրաժեշտ է մարդկությանն այսօր,

գ) էկոլոգիական տեսակետից այն մյուսներից գերադասելի է:

Պետք է նշել, որ վերականգնվող ռեսուրսների օգտագործման բնագավառում գիտաֆունդատաստիկ մշակումների փուլից մարդկությունն արդեն անցում է կատարել դրանց գործնական իրականացման փուլին: Այսպես, օրինակ, Գերմանիայում Գելզենկիրխեն քաղաքում կառուցվում է արեգակնային մարտկոցների արտադրության աշխարհում ամենախոշոր գործարանը: Հանրահայտ «Սիմենս» կորպորացիան միավորվել է «Արկո Սոլար» ֆիրմայի հետ և թողարկում է արեգակնային էներգիան փոխակերպող «Սիմենս Սոլար» մակնիշի սարքավորում: «Սոլարբքս» ֆիրման ԱՄՆ-ի հայտնի Մահվան Հովտում (Նևադա նահանգ) սկսել է 100 Մվտ հզորությամբ արեգակնային էլեկտրակայանի շինարարությունը:

Նյու Յորքի Մանհեթեն թաղամասի երկնաքեր շենքերից մեկի 13 ամենաբարձր հարկերը երեսպատված են այնպիսի սալերով, որոնք արեգակնային էներգիան փոխակերպում են էլեկտրականի, որն էլ օգտագործվում է շենքի տաքացման,

կոնդիցիոներների, վենտիլատորների և լուսավորման նպատակներով:

Արեգակնային էներգիայի հսկայական ռեսուրսները լայնորեն օգտագործելուն խոչընդոտող հանգամանքը արեգակնային էներգիան փոխակերպող սարքավորումների դեռևս բարձր ինքնարժեքն է: Մեկ ընտանիքին լուսավորությամբ, ռադիոյի և հեռուստացույցի համար անհրաժեշտ հոսանքով ապահովելու համար բավարար է 0.5 քառ. մակերեսով արեգակնային մոդուլ ֆոտոէլեկտրական փոխարկիչ: Այդպիսի մոդուլները առավելապես տեղադրվում են սահելյան գոտու երկրներում, որտեղ երկար է արեգակնային ճառագայթման տարեկան տևողությունը, և թույլ է զարգացած էլեկտրաէներգետիկան: Դրանք հիմնականում սահելյան գոտու երկրներն են:

Մեր հանրապետության բնակչիմայական պայմաններում արեգակնային էներգիայի կեսը քաղաքներում կլանվում է շենքերի պատերի կողմից ավելի տաքացնելով շենքերի ներսը: Հետևաբար, եթե շենքերի պատերը և լուսամուտների ապակիները զուգակցվեն արեգակնային էներգիան կլանող և էլեկտրաէներգիայի փոխակերպող նյութերով¹, ապա կստացվի երկակի էֆեկտ. նախ կստացվի շենքին անհրաժեշտ էլեկտրական հոսանքի մի մասը, երկրորդ կկրճատվի շենքի ներսը հովացնելու համար օգտագործվող էլեկտրաէներգիայի ծախսը:

Ջերմաէներգետիկայից արեգակնային էներգետիկայի անցման ամենամեծամասշտաբ ծրագիրն իրականացվում է ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի կենտրոն Սաքրամենթո քաղաքում: Քաղաքի կոմունալ ծառայությունների դեպարտամենտը, որպես ծրագրի առաջին քայլ 1989 թ. փակեց ատոմային էլեկտրակայանը, և ավելի քան 1 մլն մարդ ներկայումս օգտագործում է էներգիայի նոր աղբյուրներ (երկրաջերմային, ջրէկի, հողմային ոչ մեծ կայանքի): Երկրորդ քայլով քաղաքում լայնորեն օգտագործվում են միայն էներգախնայողական էլեկտրական սպառիչներ: Երրորդ քայլով քաղաքի շրջակայքում տնկվել է շուրջ 0.5 մլն ծառ, որոնց ստվերը զովացնում է քաղաքի օդի ջերմությունը և, բնականաբար, որոշակիորեն նվազեցնում է բազմահազար կոնդիցիոներների աշխատանքի համար սպառվող էլեկտրաէներգիայի ծախսը:

Որպես ջերմաէներգետիկայի համեմատությամբ այլընտրանքային էներգետիկայի առավելությունների ապացույց կարող է ծառայել այն փաստը, որ վերոգրյալ ծրագրի իրականացման արդյունքում քաղաքի էլեկտրաէներգիայի ընդհանուր ծախսը նույնիսկ կրճատվել է 1/3-ով (առանց էներգասպառման որակը իջեցնելու):

Արեգակնային էներգիայի կիրառության բնագավառներից է տրանսպորտը: Կալիֆորնիայի նահանգի վարչակազմը որոշել է, որ սկսած 2003 թվականից ներկրվող ավտոմեքենաների թվում 10%-ը պետք է լինեն էլեկտրոմոբիլները:

Նշված ծրագիրը կարելի է և ավելի անհրաժեշտ է իրականացնել մեր հանրապետությունում, քանի որ այն տնօրինում է արեգակնային հսկայական ռեսուրսներ և միաժամանակ չունի վառելիքային ռեսուրսներ:

Համաշխարհային էներգետիկայի զարգացումը պետք է ուղեկցվի դրանում

¹ Ханне Тюгель. Гиганты солнечного электричества, GEO, N11, сс. 125-134.

¹ Քվարցային ավազից ստացվող սիլիկատի, մոմային գնդիկների ու գլաուբերյան աղի խառնուրդ:

խնայողական տեխնոլոգիաների ներդրմամբ: ճարտարապետաշինարարական բնագավառում էներգիայի մեծ խնայողություն կստացվի ներկայումս «պատ» կամ «բերթիկ» ուրվագծով կառուցված երկնաքեր շենքերի փոխարեն ավելի ցածր, զնդաձև կամ խորանարդաձև շենքեր կառուցելու դեպքում: Դրա շնորհիվ, ըստ գիտնականների գնահատման, կարելի է շենքերի ջեռուցման համար կատարվող ծախսերը կրճատել 30-40%-ով:

Բացի այդ, ավելի շահեկան է, որ յուրաքանչյուր տուն ունենա իր ինքնուրույն ջեռուցման համակարգը՝ բարձր տեխնոլոգիական սարքավորումներով: Դրա շնորհիվ կփոքրանա ջերմության կորուստը քաղաքային խողովակաշարերի լաբիրինթոսում, որում կորչում է քաղաքներում ջեռուցման և ջրատաքացման վրա ծախսվող էներգիայի 1/3-ը: Իգուր չէ դառն հեզմանքով ասվում, որ «ներկայիս ջեկերն աշխատում են երկրագնդի տաքացման համար»:

Ամփոփելով նշենք, որ էներգախնայողության փաթեթի բոլոր միջոցառումների իրագործման շնորհիվ բնակարանների վրա կատարվող էներգիայի ծախսումը կարելի է կրճատել միջին հաշվով 65%-ով: Այդ փաթեթը ներառում է ավելի բարձր ջերմամեկուսիչ հատկությամբ նյութերի օգտագործումը, հողմալեկտրագեներատորը, հերմետիկ ու ավելի հաստ լուսամուտները, բնակարաններից դուրս եկող տաք օդի էներգիայով բնակարան մուտք գործող սառը օդի տաքացումը, լուսավորման խնայողական լամպերի օգտագործումը, ջերմոցների կառուցումը և այլն:

Չնայած էներգիայի ոչ ավանդական աղբյուրների կարևորության մասին գիտակցության աճին ու դրանց յուրացման ուղղությամբ ձեռնարկված եռանդուն գործունեությանը, ոչ ավանդական աղբյուրների բաժինը համաշխարհային էլեկտրաէներգետիկ հաշվեկշռում դեռևս շատ փոքր է՝ 1 %:

Երկրաջերմային էլեկտրակայաններ գործում են միայն Իսլանդիայում, Ռուսաստանում, Ֆիլիպիններում և Կենտրոնական Ամերիկայի որոշ երկրներում: Մակընթացային էլեկտրակայաններ են կառուցված Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Ռուսաստանում, ՅՈւԵԱ-ում, Չինաստանում, Կանադայում:

Արեգակնային ոչ մեծ էլեկտրակայաններ են գործում մի քանի տասնյակ երկրներում: Հողմալեկտրակայաններ են գործում Արևմտյան Եվրոպայի երկրներում՝ հատկապես Դանիայում, Նիդերլանդներում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, ԱՄՆ-ում (Կալիֆոռնիայում), Չինաստանում և Հնդկաստանում:

6.8 ՎԱՌԵԼԻՔԱԵՆԵՐԳԵՏԻԿ ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԾՅՈՒՂԵՐԻ ՉԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

ա) Նավթարդյունաբերություն

Նավթի համաշխարհային հետախուզված պաշարները կազմում են մոտ 150 մլրդ տ: Հետախուզված պաշարների մոտ 86%-ը բաժին է ընկնում նոր զարգացող երկրներին, այդ թվում 66%-ը՝ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներին, որտեղ 140

գտնվում են նավթի խոշորագույն պաշարներ ունեցող (10 մլրդ տ-ից ավելի) աշխարհի հինգ առաջատար երկրները՝ Սաուդյան Արաբիան, Իրանը, ՄԱԷ, Իրաքը և Քուվեյթը: Երկրագնդի նավթի պաշարների մոտ 12%-ը գտնվում է Լատինական Ամերիկայում, հիմնականում Վենեսուելայում և Մեքսիկայում:

Նախկին ԽՍՀՄ տարածքում նավթի պաշարները գնահատվում են մոտ 10 մլրդ տ, որից ավելի քան 85%-ը բաժին է ընկնում Ռուսաստանին, մնացյալ մասը՝ Կասպից ծովի հարակից երկրներին՝ Ղազախստանին, Թուրքմենստանին, Ադրբեջանին:

XX դարի սկզբներին նավթ արդյունահանվում էր 20 երկրում, հիմնականում՝ ԱՄՆ-ում, Վենեսուելայում և Ռուսաստանում: 1970 թ. նավթ արդյունահանող երկրների թիվը հասավ 60-ի, իսկ 1998 թ.՝ 86-ի¹: 1950-60-ական թվականներին նավթ արդյունահանող երկրների ցուցակը համալրեցին Չինաստանը, Հնդկաստանը, Նիգերիան, Ալժիրը, Լիբիան, Եգիպտոսը, իսկ 70-ական թվականներին՝ Մեծ Բրիտանիան և Նորվեգիան: Տնտեսապես զարգացած երկրներից նավթի պաշարներով և արդյունահանմամբ առանձնանում են ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Նորվեգիան և Կանադան, սակայն դրանց բաժինը ներկայումս մեծ չէ և նույնիսկ ունի նվազման միտում:

2001 թ. նավթի համաշխարհային հանույթը հասել է 3.4 մլրդ տ-ի: Նավթարդյունահանման աշխարհագրությունը, պատկերավոր ասած, գլխավորապես որոշված է բնության կողմից, այսինքն նավթի արդյունահանման շրջանները նավթային հետախուզված պաշարների խոշոր շրջաններն են: Սակայն նավթարդյունահանման տեղաբաշխումը միաժամանակ պայմանավորված է բնական մեկ այլ գործոնով՝ նավթային պաշարների լեռնաերկրաբանական պայմաններով, որոնք էլ իրենց հերթին որոշում են նավթարդյունահանման տեսակարար ծախսերը ու դրանով էլ արդյունահանման նպատակահարմարությունը: Այսպես, օրինակ, ԱՄՆ-ի նավթային պաշարները տեղաբաշխված են հարյուր հազարավոր փոքր ու ոչ արդյունավետ հանքավայրերում, իսկ Իրանի պաշարները ընդամենը 500 խոշոր հանքավայրերում (դրանցից մի քանիսը, օրինակ, Աղաջարին, դասվում է աշխարհի խոշորագույնների շարքին): Այս պատճառով էլ 1 տ նավթի արդյունահանման տեսակարար ծախսերը ԱՄՆ-ում կազմում են շուրջ 10 դոլար, իսկ Իրանում՝ 0.5 դոլար (այսինքն 20 անգամ ցածր):

ԱՄՆ-ի նավթի արդյունահանման տեսակարար ծախսերը չափազանց մեծ են Ալյասկայում ծայրահեղ անպաստ բնակլիմայական պայմաններով նահանգում: Նավթն ավելի ու ավելի մեծ խորություններից արդյունահանելու հետևանքով անընդհատ աճում է դրա ինքնարժեքը՝ երբեմն հասնելով այնպիսի կրիտիկական մակարդակի, երբ այդ արդյունահանումը դառնում է աննպատակահարմար: Այդ պայմաններում ավելի շահեկան է դառնում նավթն ավելի ցածր գներով ձեռք բերել համաշխարհային շուկայից, քան շարունակել դրա վնասաբեր արդյունահանումը:

¹ Նավթ արդյունահանող երկրների թվի աճը բացատրվում է ոչ միայն նավթի նոր պաշարների հայտնաբերմամբ, այլ նաև նավթ արդյունահանող որոշ երկրների (օրինակ՝ ԽՍՀՄ) տրոհմամբ ավելի մեծ թվով երկրների:

Մասամբ այս հանգամանքով կարելի է բացատրել ԱՄՆ-ի նավթի արդյունահանության ծավալի կրճատումը: Այսպես, 1970-ական թվականներին այն հասել էր նեկրոդային ծավալի՝ տարեկան շուրջ 500 մլն տ, իսկ 2000թ. կազմել է շուրջ 288 մլն տ:

Արդյունահանման ծավալի կրճատումը մասամբ պայմանավորված է նաև սեփական նավթային ռեսուրսները հետագա սերունդների համար պահպանելու ռազմավարությամբ: Հիշենք, որ զարգացած երկրներում նավթային պաշարներով ապահովվածությունը 12-15 տարի է՝ շատ ավելի փոքր, քան զարգացող երկրներում՝ մոտ 100 տարի և Պարսից ծոցի երկրներում 120-180 տարի:

Նավթի արդյունահանման աշխարհագրության պատկերն ընդհանուր գծերով պահպանվում է փոփոխվելով միայն այն դեպքերում, երբ նոր նավթային ռեսուրսների արդյունահանում է կազմակերպվում ՆԱԵԿ-ի (OPEC) անդամ չհանդիսացող երկրներում: Այդպիսի օրինակ է Հյուսիսային ծովի ծանծաղուտի նավթի հանույթի կազմակերպումը Մեծ Բրիտանիայի ու Նորվեգիայի կողմից: Այդ երկրները միասին ներկայումս արդյունահանում են նավթի համաշխարհային հանույթի 8.5%-ը: Իսկ ինչ վերաբերում է ՆԱԵԿ անդամ երկրներին, ապա դրանց նավթի հանույթի ծավալը հիմնականում կայունացված է այդ կազմակերպության որոշմամբ յուրաքանչյուր երկրին թույլատրված քվոտայի (նորմայի) սահմաններում:

Նավթի արդյունահանման աշխարհագրությունը ժամանակավորապես փոփոխվում է նաև տեղական կամ տարածաշրջանային մասշտաբի պատերազմների հետևանքով: Օրինակ, 1970-ական թվականներին իրանա-իրաքյան պատերազմի նախօրյակին Իրանի նավթի հանույթը հասել էր գրեթե 300 մլն տոննայի, իսկ պատերազմական գործողությունների ժամանակ խոշոր նավթահանքերի վնասվելու հետևանքով արդյունահանման ծավալը շուրջ 4 անգամ նվազեց ու դանդաղ վերականգնվելով, ներկայումս հասել է շուրջ 183 մլն տոննայի:

2000 թ. նավթարդյունահանող խոշորագույն երկրներն են Սաուդյան Արաբիան (411 մլն տ), Ռուսաստանը (322 մլն տ): ԱՄՆ (մոտ 320 մլն տ) ներկայումս զգալի քանակությամբ նավթ արդյունահանում են Պարսից ծոցի, Մեքսիկական ծոցի, Հյուսիսային ծովի և Կասպից ծովի հատակից և հարակից շրջաններից: Ջրային ավազաններից հեռանկարային են համարվում նաև Ռուսաստանում Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսի, Հինաստանում Դեղին ծովի, ինչպես նաև Ինդոնեզիայից մինչև Վիետնամ ընկած ծանծաղուտների նավթի պաշարները:


Նավթի խոշորագույն արտահանողները Պարսից ծոցի ավազանի երկրներն են՝ Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Իրանը, ՍԱԱ, որտեղ արդյունահանած նավթի ավելի քան 85%-ն արտահանվում է: Արդյունահանման հիմնական շրջաններից նավթը էժան տրանսպորտային միջոցներով խոշոր լցանավերով կամ նավթամուղներով փոխադրվում է ԱՄՆ, Եվրոպա և Ճապոնիա: Հզոր նավթամուղներ կառուցվել են Հյուսիսային Ամերիկայում, Պարսից ծոցի ափերից մինչև Միջերկրական ծովի ափ, Ռուսաստանից դեպի Եվրոպական երկրներ («Գրուժբա» նավթամուղը):

Նավթամշակման արդյունաբերության տեղաբաշխումը զգալիորեն տարբերվում է նավթարդյունահանման տեղաբաշխումից. նավթամշակման գործարանների մեծ մասը կառուցված է սպառման շրջաններում: Դա պայմանավորված է այն

հանգամանքով, որ հում նավթի փոխադրումն ավելի հարմար ու էժան է, քան առանձին նավթամթերքների փոխադրումը:

Գծապատկեր 6.6

Նավթամշակման համաշխարհային արտադրանքի մեջ երկրների խմբերի բաժինների փոփոխությունը 1980-1998թթ. (%)



Վերջին տասնամյակներին մեծանում է նավթի օգտագործումը ոչ միայն որպես էժան և արժեքավոր վառելիք, այլ նախ և առաջ որպես քիմիական տարրեր արտադրությունների համար արժեքավոր հումք:

բ) Գազարդյունաբերություն

Համաշխարհային էներգետիկ հաշվեկշռում բնական գազը երրորդն է նավթից և ածխից հետո: Այն վառելիքային արդյունաբերության ամենաերիտասարդ և արագ զարգացող ճյուղն է: Տնտեսական և էկոլոգիական առումով այլ վառելիքների համեմատությամբ ավելի արդյունավետ լինելուց բացի, այն նաև արժեքավոր հումք է քիմիական տարրեր արտադրությունների համար:

Բնական գազի հետախուզված պաշարները 1998 թ. գնահատվում էին 164 տրլն մ³, իսկ տարեկան հանույթը կազմել է մոտ 2.3 տրլն մ³: Բնական գազի պաշարներով առաջատար երկրներն են Ռուսաստանը (48 տրլն մ³) և Իրանը (23 տրլն մ³): Ընդհանուր առմամբ բնական գազի պաշարները կենտրոնացված են բոլոր այն տարածաշրջաններում, որոնք հայտնի են նավթի պաշարներով: Զգալի են պաշարները ծովային ծանծաղուտներում՝ Պարսից ծոց, Մեքսիկական ծոց, Հյուսիս-

սային ծով, Հարավ-Չինական ծով: Աշխարհի բնական գազի մոտ 1/5-ը արդյունահանվում է ծովի հատակից: Որոշ երկրներում (Նորվեգիա, Մեծ Բրիտանիա, Մալայզիա) այդ բաժինը հասնում է 80-100%-ի: Ռուսաստանում գազի և նավթի հիմնական պաշարները և արդյունահանման վայրերը գտնվում են Արևմտյան Սիբիրում Օբ գետի միջին և ստորին հոսանքների ավազանում:

Աշխարհում բնական գազի արդյունահանմամբ Ռուսաստանը և ԱՄՆ-ը զգալիորեն առաջ են մյուս երկրներից և արդյունահանում են տարեկան 500-600 մլրդ մ³ գազ կամ համաշխարհային արդյունահանման մոտ կեսը:

ԱՊՀ երկրներից բնական գազի պաշարներով, արդյունահանմամբ և արտահանմամբ աչքի են ընկնում նաև Թուրքմենստանը, Ղազախստանը, Ուզբեկստանը: Բնական գազի մեծ մասը որպես վառելիք օգտագործվում է էներգետիկ տնտեսության մեջ և կենցաղում, իսկ մյուս մասը՝ որպես հումք քիմիական արդյունաբերության մեջ:

Բնական գազ ներմուծող հիմնական տարածաշրջաններն ու երկրներն են՝ Եվրոպական երկրները, որոնք գազ ստանում են Ռուսաստանից, Ալժիրից, Նորվեգիայից, Նիդերլանդներից, Ճապոնիան՝ Ասիայի երկրներից, ԱՄՆ-ը՝ Կանադայից: Հեռանկարում գազի արտահանողներ են դառնալու Մերձավոր Արևելքի երկրները և Թուրքմենստանը, որտեղից նախատեսվում են կառուցել հզոր գազամուղներ դեպի Եվրոպական և ասիական հիմնական սպառողները:

գ) Ածխարդյունաբերություն

Ածխի արդյունաբերության աշխարհագրությունը նկատելիորեն տարբերվում է նավթի և գազի արդյունաբերությունից: 2001թ. ածխի համաշխարհային հանույթը կազմում է մոտ 4.4 մլրդ տ., որից 3.6 մլրդ տ քարածուխն է, իսկ 0.8 մլրդ տ.՝ գորշ ածուխը: Ածխի համաշխարհային պաշարները կազմում են 13 տրլն տ: Ածխի պաշարներով առաջատար երկրներն են՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Չինաստանը, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Ավստրալիան և ՀԱՀ-ը: Եթե նախկինում ածխի համաշխարհային արտադրության մեջ առաջատար դեր էին կատարում Ռուրի ավազանը (Գերմանիա), Դոնբասը (Ուկրաինա և Ռուսաստան), Կուզբասը (Ռուսաստան), Ապալաչյան ավազանը (ԱՄՆ), ապա ներկայումս համաշխարհային ածխարդյունաբերության մեջ առաջատար դիրքեր են գրավում Ավստրալիայի, ՀԱՀ-ի, Չինաստանի, ԱՄՆ-ի և որոշ այլ երկրների նոր ավազանները, որտեղ ածխի ինքնարժեքը ցածր է նրա բաց եղանակով արդյունահանման և էժան աշխատուժի շնորհիվ:

2000 թ. ածխի արդյունահանմամբ առաջինը Չինաստանն է (1. մլրդ տ), որին հաջորդում են ԱՄՆ (977 մլն տ), Ավստրալիան (289 մլն տ), ՀԱՀ (224 մլն տ), Ռուսաստանը (240 մլն տ): Ածխի համաշխարհային արտադրության մեջ իրենց որոշակի դերն են պահպանում Լեհաստանը, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, ԱՊՀ երկրներից՝ Ուկրաինան և Ղազախստանը, իսկ նոր զարգացող երկրներից՝ Հնդկաստանը, Ինդոնեզիան, Կոլումբիան:

Մինչև վերջերս ածխի արտահանման գծով առաջատարը ԱՄՆ-ն էր, այժմ նրան զգալիորեն գերազանցել է Ավստրալիան: Զգալի քանակությամբ ածուխ են արտահանում նաև ՀԱՀ-ը, Կանադան և Ինդոնեզիան: Հիմնական ներմուծողները Ճապոնիան և Եվրոպական երկրներն են:

Ածխի հզոր պաշարների արդյունահանման հեռանկարային շրջաններ են Ռուսաստանի արևելյան մասի խոշոր ածխային ավազանները՝ Տունգուսկայի ու Լենայի ավազանները:

Այժմ քարածուխն աստիճանաբար դառնում է ավելի հեռանկարային էներգետիկ ռեսուրս: Ամբողջ աշխարհում դանդաղ տեմպերով ընթանում է նավթի և գազի աստիճանական փոխարինումը քարածխով: Դա պայմանավորված է նրանով, որ նավթը և գազը ոչ միայն տրանսպորտային վառելիք, այլ նաև արժեքավոր քիմիական հումք են, որոնց պաշարներով երկրագունդն ավելի վատ է ապահովված:

Մյուս կարևոր պատճառը 1970-ական թվականներին սկսված «էներգետիկ ճգնաժամն» է, որի արդյունքում կտրուկ բարձրացավ հում նավթի համաշխարհային գինը: Գների բարձրացում և իջեցում պարբերաբար կրկնվում են նաև հետագա տարիներին:

դ) Էլեկտրաէներգետիկ արդյունաբերություն

Վառելիքաէներգետիկական արդյունաբերության առավել կարևոր ճյուղը էլեկտրաէներգետիկական է տարբեր տիպի էլեկտրակայաններում էլեկտրաէներգիայի արտադրությունը, փոխակերպումը, հաղորդումը և բաշխումը սպառողներին:

Ճյուղի կարևորության վկայությունն է այն փաստը, որ վառելիքի համաշխարհային հանույթի զգալի մասը ծառայում է էլեկտրաէներգիա արտադրելու նպատակին: Արևմտյան Եվրոպայի երկրներում այդ բաժինը հասել է 40%-ի, իսկ Ճապոնիայում նույնիսկ 50%-ի, մինչդեռ նվազ զարգացած երկրներում այդ բաժինը կազմում է շուրջ 25%:

Ընդհանուր առմամբ էլեկտրաէներգիայի արտադրության համար օգտագործվող էներգետիկ ռեսուրսների բաժնի աճը ժամանակակից էներգետիկայի զարգացման կարևոր միտումներից է:

Էլեկտրաէներգետիկայի զարգացումը սերտորեն կապված է արտադրական գործունեության ու կենցաղի էլեկտրիֆիկացման հետ: Այս բնագավառների մասշտաբների մեծացումն էլ իր հերթին պայմանավորված է աշխարհի բնակչության թվի աճով: Մասնավորապես, 1980-1998 թթ. ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի համաշխարհային սպառման ծավալը կրկնապատկվել է:

Չնայած, որ էլեկտրաէներգիայի համաշխարհային արտադրանքի ծավալը 2001 թ հասել է աստղաբաշխական թվի 16.4 տրլն կվտ.ժ-ի, սակայն դրա զարգացման մակարդակը դեռևս ցածր է: Աշխարհի բնակչության մեկ շնչի հաշվով սպառվող էլեկտրաէներգիայի տարեկան քանակը կազմել է մոտ 2500 կվտ.ժ: Այս ցուցանիշը խիստ տատանվում է տարբեր տիպի երկրների խմբերում: Բարձր զարգացած երկրներում այդ ցուցանիշը կազմում է ավելի քան 8000 կվտ.ժ, իսկ նվազ զարգա-

ցած երկրներում՝ մոտ 900 կվտ.ժ: Ամենամվազ զարգացած երկրներում այդ ցուցանիշը չափազանց փոքր է կազմելով ընդամենը 100 կվտ.ժ:

ՄԱԿ-ի տվյալներով ներկայումս աշխարհի բնակչության շուրջ 1/3-ը գրեթե չի օգտվում էլեկտրաէներգիայից, այսինքն ապրում է առանց ստացիոնար էլեկտրականության:

Աշխարհում էլեկտրակայանների հզորությունը կազմել է 3 մլն Մվտ: Դրա մոտ 63%-ը բաժին է ընկնում հանքային վառելիքի (նավթ, գազ, ածուխ) բազայի վրա աշխատող ջէկ-երին: Աէկ-երի բաժինը մինչև 90-ական թվականների սկիզբն աճում էր, սակայն 90-ականների կեսերից կայունացել է 17-18%-ի սահմաններում: Էլեկտրաէներգիայի արտադրության մեջ ջրէկների բաժինը կազմում է մոտ 20%:

Ջէկ-երում օգտագործվող հիմնական վառելիքը ածուխն է: Նրա դերը հատկապես մեծ է ՉԱՀ-ում (100%), Ավստրալիայում (75%), ԱՄՆ-ում և Գերմանիայում (50%): Ածխով, ինչպես նաև բոլոր պինդ վառելիքներով աշխատող ջէկ-երը մեծամասամբ տեղաբաշխվում են ածխի արդյունահանման վայրերում: Ներկայումս ջերմաէներգետիկայի զարգացման գլխավոր միտումներից է այնպիսի ջէկ-երի կառուցումը, որոնք ածխի հետ մեկտեղ օգտագործում են վառելիքի այլ տեսակներ: Դրա շնորհիվ մեծանում է էլեկտրամատակարարման հուսալիությունը:

Խողովակաշարային տրանսպորտի զարգացման շնորհիվ բնական գազ և նավթ օգտագործող ջէկ-երի զգալի մասը կառուցվել են էլեկտրաէներգիայի սպառման շրջաններում: Ջէկ-երի մի մասն էլ տեղաբաշխված է նավթանշակման ու դոմային արտադրությունների շրջաններում, քանի որ այդ էլեկտրակայաններում որպես վառելիք օգտագործվում են նշված արտադրությունների թափոնները (մագլթն ու կոքսագազը):

Ջերմաէլեկտրակայաններն ըստ իրենց արտադրանքի բնույթի լինում են երկու տեսակի խտացումային (կոնդենսացիոն) ջերմաէլեկտրակայաններ և ջերմաէլեկտրակենտրոններ: Ջերմաէլեկտրակենտրոններն ավելի քիչ են տարածված, և, որպես կանոն, կառուցվում են էլեկտրաէներգիայի սպառման վայրերում, քաղաքներից ոչ մեծ հեռավորության վրա, քանի որ դրանք էլեկտրաէներգիայի արտադրությունից բացի կարևոր դեր են խաղում քաղաքային տնտեսություններին և ձեռնարկություններին տաք ջուր ու գոլորշի մատակարարելու բնագավառում: Կոնդենսացիոն էլեկտրակայանները, կախված կոնկրետ պայմաններից՝ օգտագործվող վառելիքի տեսակից, վառելիքի կամ էլեկտրաէներգիայի տեղափոխման հեռավորությունից, կառուցվող էլեկտրակայանի հզորությունից, կարող են տեղաբաշխվել վառելիքային բազաներին մոտ գտնվող սպառման շրջաններում՝ հաշվի առնելով տրանսպորտային, էկոլոգիական և այլ պայմանները:

Ջէկ-երի բաժինն էլեկտրաէներգիայի ընդհանուր արտադրանքի մեջ բարձր է առանձնապես ԱՊՀ երկրներում (75%), Եվրոպայի զարգացած և խոշոր մի քանի երկրներում (Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Իտալիա, Նիդերլանդներ և այլն), ԱՄՆ-ում (73%), Ասիայի խոշոր երկրներում՝ Չինաստան (80%), Հնդկաստան (72%) և Ավստրալիայում (79%): Վերոհիշյալ երկրներից շատերն ապահովված են սեփական վառելիքային ռեսուրսներով:

Աշխարհում զգալի թիվ են կազմում նաև այն երկրները, որտեղ էլեկտրաէներգիայի հիմնական մասը տալիս են ջրէկ-ները: Նորվեգիայի, Բրազիլիայի և մի շարք այլ ոչ մեծ՝ ճոր զարգացող երկրների էլեկտրաէներգիայի 90%-ից ավելին տալիս են ջրէկ-ները: Կանադայի, Շվեդիայի, Թուրքիայի, Շվեյցարիայի, Պորտուգալիայի և տասնյակ այլ երկրների էլեկտրաէներգիայի կեսից ավելին նույնպես արտադրվում է ջրէկ-ներում: Հիդրոէներգետիկան զարգացած է հատկապես Լատինական Ամերիկայում, որտեղ այն տալիս է էլեկտրաէներգիայի արտադանքի 75%-ը: Այստեղ (Բրազիլիա, Պարագվայ, Վենեսուելա) կառուցված է աշխարհի խոշորագույն ջրէկ-ների մի մասը, այդ թվում խոշորագույն ջրէկ-ը՝ Իտայպուն՝ Պարանա գետի վտակ Իգուասուի վրա՝ 12.6 մլն. կվտ հզորությամբ: Խոշոր ջրէկ-ներով աչքի է ընկնում նաև Ռուսաստանը, որոնք կառուցվել են Ենիսեյ գետի և Նրա վտակ Անգարայի վրա:

Աշխարհի տարբեր տարածաշրջաններում ջրաէներգետիկ ռեսուրսների յուրացման աստիճանը տարբեր է: Միջին հաշվով յուրացված է երկրագնդի տեխնիկապես հնարավոր և տնտեսապես նպատակահարմար ջրաէներգետիկ ռեսուրսների մոտ 15%-ը: Յուրացման աստիճանը բարձր է զարգացած երկրներում՝ ճապոնիայում՝ 2/3-ը, ԱՄՆ-ում և Կանադայում՝ 3/5-ը, Եվրոպայում՝ 55%-ը: Յուրացման աստիճանը խիստ ցածր է Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի և Ասիայի երկրներում: Լատինական Ամերիկայում յուրացված է ընդամենը 10%, իսկ Աֆրիկայի երկրներում՝ 5%-ը: Դա պայմանավորված է ջրէկ-ների բարձր կապիտալատարությամբ (բարձր արժեքով), ինչպես նաև նվազ զարգացած երկրների տեխնիկական ու ֆինանսական անբավարար հնարավորություններով:

Ներկայումս ամբողջ աշխարհում մեծ թափով ընթանում է փոքր ջրէկ-ների կառուցումը: Դրանք հատկապես շատ են Չինաստանում, որտեղ արտադրված էլեկտրաէներգիան օգտագործվում է ոռոգման կառույցներին սպասարկելու համար: Ջարգացած երկրներում լայն տարածում է ստանում ջրակուտակիչ էլեկտրակայանները, որոնց էլեկտրաէներգիան օգտագործվում է էներգահամակարգի առավելազույն ծանրաբեռնվածության ժամանակ:

Ատոմային էներգետիկան առավել զարգացում է ստացել տնտեսապես զարգացած այն երկրներում, որոնք չունեն վառելիքային և ջրաէներգետիկ բավարար քանակությամբ ռեսուրսներ: Նրա բաժինը հատկապես մեծ է Ֆրանսիայում (72%), Բելգիայում (61%), Կորեայի Հանրապետությունում (54%), ինչպես նաև ճապոնիայում, Հայաստանի Հանրապետությունում, Լիտվայում, Շվեդիայում և Եվրոպական մի քանի այլ երկրներում: ճապոնիայի Հոնյու կղզու արևելյան ափին կառուցված է աշխարհի խոշորագույն Ֆուկուսիմա ատէկ-ը (8 մլն կվտ):

Մինչև 80-ական թվականների վերջը ատոմային էներգետիկան ուներ աճի ամենաբարձր տեմպերը: Ուկրաինայի Չերնոբիլյան ատէկ-ի աղետի, հասարակական կարծիքի փոփոխման, էկոլոգիական և այլ գործոնների հետևանքով շատ երկրներ փոփոխություններ մտցրեցին իրենց էներգետիկական քաղաքականության մեջ և այժմ հրաժարվում են կառուցել նոր ատէկ-ներ: Ներկայումս աշխարհի մոտ 36 երկրում հաշվվում է շուրջ 400 ատէկ, որից 111-ը ԱՄՆ-ում, 66-ը՝ ճապոնիայում, 56-ը՝ Ֆրանսիայում:

Այնպիսով ատոմային էներգետիկայի վառելիքի՝ ուրանի հիմնական արտադրողներն են Կանադան (մոտ 1/4-ը), ԱՄՆ-ն, Ավստրալիան, ՅԱՅ-ը, Նամիբիան, Ֆրանսիան, իսկ ուրանի խտանյութի հիմնական սպառողներն են ԱՄՆ-ը (1/3-ը), Ֆրանսիան և Ճապոնիան:

Ներկայումս էներգիայի ոչ ավանդական տեսակների՝ արեգակնային, քամու, երկրաջերմային (գեոթերմիկ), մակընթացությունների էներգիայի մեծամասշտաբ յուրացումը դեռևս նոր է սկսվում, որի հետևանքով դեռևս աննշան է (1%) դրանց բաժինը համաշխարհային էներգետիկայում: Երկրաջերմային էներգիայի ռեսուրսներով հարուստ են ԱՄՆ-ը, Ճապոնիան, ՌԴ, Նոր Զելանդիան, Իսլանդիան, Ֆիլիպինները, որտեղ էլ կառուցված են երկրաջերմային էլեկտրակայաններ: Երկրաջերմային էլեկտրակայանների միագումարային հզորությունը 90-ական թվականների սկզբներին ընդամենը 6 մլն կվտ էր, քանի որ էլեկտրակայաններինը՝ 2 մլն կվտ: Այդպիսի կառուցված են Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Նիդերլանդներում, ԱՄՆ-ում (Կալիֆորնիայում), Չինաստանում, Հնդկաստանում: Մակընթացային էլեկտրակայաններ կան Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Ռուսաստանում, Կանադայում, Չինաստանում, Հնդկաստանում:

Տնտեսապես զարգացած երկրների մեծ մասում ստեղծվել են միասնական էներգետիկական համակարգեր: Սակայն ԱՄՆ-ում և Կանադայում, ինչպես նաև Չինաստանում ու Բրազիլիայում համապետական էներգահամակարգեր չկան: Հյուսիսային Ամերիկայում (ԱՄՆ, Կանադա, Մեքսիկա), Եվրոպայում, ԱՊՀ-ում և երկրագնդի մի շարք այլ տարածաշրջաններում ստեղծվել են մի շարք միջպետական էներգահամակարգեր:

Էներգետիկայի, մասնավորապես էլեկտրաէներգետիկայի զարգացումը, միասնական էներգետիկական համակարգի ստեղծումը հավասարեցնում է էներգամատակարարման պայմանները երկրի կենտրոնական և ծայրամասային շրջաններում, նպաստում է արդյունաբերության տարբեր ճյուղերի ապակենտրոնացմանը: Միաժամանակ միավոր արտադրանքի հաշվով էներգա- և էլեկտրատարության աստիճանական նվազումը և էլեկտրախնայողության ռեժիմի հաստատումը փոքրացնում են արտադրության տեղաբաշխման գործում էներգետիկական գործոնի հարաբերական նշանակությունը, և դրան համապատասխան մեծանում է այլ գործոնների դերը:

ե) ԳՏՀ և էլեկտրաէներգետիկան

Արդյունաբերության մյուս ճյուղերի նման, էլեկտրաէներգետիկայի զարգացման ու տեղաբաշխման վրա մեծ ազդեցություն ունի գիտատեխնիկական հեղափոխությունը:

Էլեկտրաէներգետիկայի հին ենթաճյուղերի ջերմաէներգետիկայի ու ջրաէներգետիկայի (հիդրոէներգետիկայի) տեխնիկական առաջադիմությունն արտահայտվում է էներգետիկ ագրեգատների հզորության աճի և դրանց շահագործման արդյունավետության բարձրացման մեջ: Էլեկտրաէներգետիկ ագրեգատների հզորությունը հասցվել է նույնիսկ 1 մլն կվտ: Եթե նախկինում ջէկ-երի օգտակար գործո-

ղության գործակիցը (օգգ) 19% էր, ապա ներկայումս այն մոտեցել է 40%-ի: XX դարի երկրորդ կեսին 1 կվտ.ժ էլեկտրաէներգիայի արտադրության համար օգտագործվող պայմանական վառելիքի քանակը նվազել է 3 անգամ:

Էլեկտրաէներգետիկ արտադրության արդյունավետության բարձրացման վրա ԳՏՀ ազդեցությունը դրսևորվում է նաև էլեկտրաէներգիայի հաղորդման (փոխադրման) ժամանակ անխուսափելի կորուստների կրճատումով: Եթե XX դարի սկզբին ցամցերում էլեկտրաէներգիայի կորուստները կազմում էին 25%, ապա ներկայումս միջին հաշվով 9-ից 7%: Նման խնայողությանը հնարավոր եղավ հասնել բարձրավոլտ տրանսֆորմատորների ու էլեկտրահաղորդման գծերի կառուցման շնորհիվ:

Դեռևս 1980-ական թվականներին ԽՍՀՄ-ում մշակվել էին 1 մլն վ լարման փոփոխական հոսանքի և 1.5 մլն վ հաստատուն հոսանքի հաղորդման գծերի կառուցման համարձակ նախագծեր: Դրանք հնարավորություն կտային արևելյան շրջանների վառելիքային բազաներում արտադրված էլեկտրաէներգիան նվազագույն կորուստներով հասցնել արևմտյան շրջանների սպառողներին:

Էլեկտրաէներգետիկայում գիտատեխնիկական առաջադիմության հիմնական ուղղությունը ատոմային էլեկտրաէներգետիկայի զարգացումն է: Ատոմային տեխնիկայի կատարելագործման շնորհիվ ակն-ներում արտադրվող էլեկտրաէներգիայի ինքնարժեքը 1960-1980 թթ. ժամանակահատվածում զգալիորեն կրճատվեց¹ և գրեթե հավասարվեց ջէկերի արտադրած էլեկտրաէներգիայի ինքնարժեքին:

զ) էներգետիկան և շրջակա միջավայրի պահպանությունը

Էներգետիկան տրանսպորտի, քիմիական արդյունաբերության ու մետաղաձուլության հետ միասին շրջակա միջավայրին առավել մեծ վնաս հասցնող ճյուղերից է:

Շրջակա միջավայրի վրա էներգետիկայի ունեցած իրական (կամ հավանական) վնասի չափը պայմանավորված է վառելիքաէներգետիկ արդյունաբերության արտադրանքի վառելիքի ու էլեկտրաէներգիայի ծավալների կտրուկ մեծացմամբ:

Շրջակա միջավայրին վառելիքային արդյունաբերության պատճառած վնասը գլխավորապես արտահայտվում է վառելիքի արդյունահանման հանքավայրերի տարածքները արդյունահանման գործընթացում անխուսափելիորեն առաջացող ոչ օգտակար սին ապարներով զբաղեցնելու, ինչպես նաև վառելիքի տեղափոխման գործընթացում անխուսափելիորեն առաջացող վառելիքի կորուստներով շրջակա միջավայրի աղտոտմամբ:

¹ Օրինակ՝ ջրաջրային տիպի ատոմային ռեակտորների համեմատությամբ արագ նեյտրոններով աշխատող ակն-ներում միջուկային վառելիքի օգգ-ն բարձր է շուրջ 30 անգամ:

Ջերմաէլեկտրակայանների էկոլոգիական վնասն արտահայտվում է վառելիքի այրման արդյունք հանդիսացող բուսավոր գազային միացությունների արտազատմամբ ու դրա հետևանքով շրջակա միջավայրի քիմիական ու ջերմային աղտոտմամբ:

Ջերմային էլեկտրակայաններին հարող շրջակա տարածքում, հատկապես դրա գերիշխող քամիների շարժման ուղղությամբ ձգվող շերտերում բժշկաաշխարհագրական իրադրությունը բացառիկ աննպաստ է: Այդ գոտիներում բուսականությունն ու կենդանիները առանձնահատուկ խիստ են տուժում:

Շրջակա միջավայրի վրա հատկապես մեծ բացասական ազդեցություն ունեն ատոմային էլեկտրակայանները: Նորմալ աշխատելու պայմաններում ակների էկոլոգիական բացասական ազդեցությունը նույնիսկ փոքր է ջէկ-երի վնասի համեմատությամբ: Սակայն ակ-ները չափազանց մեծ վնաս կարող են տալ անսարքության և հատկապես վթարի դեպքում: Օրինակ Չերնոբիլյան ակ-ի 4 բլոկներից նույնիսկ միայն 1-ի վթարի հետևանքով ռադիոակտիվ վարակման ծավալն, ըստ գիտնական-փորձագետների գնահատման, շուրջ 500 անգամ մեծ է, քան Հիրոսիմա և Նագասակի քաղաքներին ամերիկյան ատոմային երկու ռումբերի հասցրած միազուսարային ազդեցությունը:

Շրջակա միջավայրին ակ-ների պատճառած վնասներից է նաև ջերմային աղտոտումը՝ շրջակա օդային ու ջրային ավազանների ջերմության բարձրացումը, որի հետևանքով խախտվում է կենսաբանական գործընթացների հավասարակշռությունը, ուժեղանում է օրգանիզմների քայքայումը:

Աէկ-ների գործունեության հետ է կապված նաև ռադիոակտիվ թափոնների թաղման սուր հիմնախնդիրը: Նկատի ունենալով, որ աշխարհի ներկայումս գործող ատոմային ռեակտորների մեծամասնությունը գործարկվել է 70-ական և 80-ական թվականներին և, որ դրանց շահագործման երաշխիքային ժամանակը 25-ից 30 տարի է, կարելի է պնդել, որ առաջիկայում դրանց ռադիոակտիվ թափոնների թաղման հիմնախնդիրը էլ ավելի կսրվի:

Ներկայումս ակ-ների ռադիոակտիվ թափոնների թաղման համար համեմատաբար հուսալի վայրեր են համարվում երկրակեղևի կայուն տեղամասերը՝ պլատֆորմները: Այդպիսի տեղամասեր՝ «ռադիոակտիվ նյութերի գերեզմաններ» կան տարածքով աշխարհի ամենամեծ երկրում՝ Ռուսաստանում (Նոր Երկիր կղզում, Կալմիկիայում, Կրասնոյարսկի երկրամասում): Համապատասխան վճարի պայմաններում այդ «գերեզմաններում» կարելի է թաղել նաև եվրոպական համեմատաբար փոքր տարածք ունեցող և խիտ բնակեցված երկրների ակ-ների թափոնները:

Հայկական ակ-ի ինչպես ուրանով մատակարարելու, այնպես էլ ռադիոակտիվ թափոնները հեռացնելու ամբողջ գործունեությունն իրականացնում է «Ռուսատոմ» կազմակերպությունը:

Աէկ-ների ռադիոակտիվ թափոնները որոշ նշակունից հետո օգտագործվում են որպես ատոմային ռումբի նյութ: Դրանով է բացատրվում աշխարհի որոշ, նույնիսկ նավթային ու բնական գազային ռեսուրսներով լավ ապահովված երկրների (օրինակ՝ Իրանի ու Իրաքի) ակ կառուցելու ձգտումը: Ներկայումս տարբեր պատ-

ճառներով արդեն փակվել են Սաքրամենթոյի (ԱՄՆ, Կալիֆորնիա նահանգ), Չերնոբիլյան ակ-ները: Փակվել, այնուհետև իր կիսով չափի հզորությամբ վերաբացվել է Հայկական ակ-ը:

6.8 Մետաղածուլություն

Մետաղածուլության տարբեր տեսակի սև և գունավոր մետաղների հանքաքարի արդյունահանումը, տեխնոլոգիական նշակումը և պատրաստի մետաղների ստացումն իրականացնող ձեռնարկությունների ամբողջությունն է:

Ճանր արդյունաբերության այս հին ճյուղը երկրի տնտեսական զարգացման ու ռազմական հզորության հիմքն է: Մետաղածուլության արտադրանքը՝ սև և գունավոր մետաղները, մեծ մասամբ օգտագործվում են մեքենաշինության և շինարարության մեջ, իսկ արտադրական թափոնները՝ քիմիական և շինանյութերի արդյունաբերության մեջ:

Այս առանձնահատկությամբ է պայմանավորված մետալուրգիական ձեռնարկություններին կից այլ ճյուղերի՝ մեքենաշինական, քիմիական, շինանյութերի (ցեմենտի) ձեռնարկությունների կառուցումը, որի շնորհիվ ձևավորվում են արտադրական կոմբինատներ: Օրինակ, Ալավերդու պղնձածուլական գործարանին կից կառուցվել էր ծուլման գործընթացում արտազատվող ծծմբային գազերի հիման վրա պղնձարջասպ, ծծմբաթթու, իսկ որոշ ժամանակ նաև ֆոսֆորային պարարտանյութ արտադրող քիմիական գործարան: Պղնձածուլական և քիմիական գործարանները կոմբինացվել էին, ստեղծելով մեկ կոմբինատ:

Մետաղածուլության գործարաններում զբաղվում են մեծ թվով աշխատողներ, որի շնորհիվ դրանց շուրջը ստեղծվում են քաղաքներ (օրինակ՝ Սագնիտո-գորսկը, Ամուրի Կոնսոնոլսկը, Նորիլսկը, Քաջարանը): Մետալուրգիական արտադրությունն առանձնանում է ձեռնարկությունների շատ բարձր արժեքով՝ կապիտալատարությամբ, իսկ գունավոր մետալուրգիական ձեռնարկությունները՝ դրա հետ միասին նաև էներգատարությամբ: Մետալուրգիական արտադրության ընդհանուր պարտադիր նախադրյալն է նաև հումքային բազան:

Մետալուրգիայի մյուս առանձնահատկությունն այն է, որ նա շրջակա միջավայրը ուժեղ աղտոտող, էկոլոգիական բազմաթիվ սուր հիմնախնդիրներ առաջացնող արտադրություն է: Այս պատճառով էլ մետաղածուլության որոշ ձեռնարկություններ փակվում են իսկ նոր ձեռնարկությունները կառուցվում են էկոլոգիական առումով ավելի բարվոք տարածաշրջաններում (այդպիսիք են զարգացող երկրները):

ա)Սև մետաղածուլություն

Սև մետալուրգիան արդյունաբերության հին և բազային ճյուղերից է, յուրաքանչյուր երկրի արդյունաբերական ու ռազմական հզորության հիմքը: Նրա

արտադրանքի առավել խոշոր սպառողները մեքենաշինությունն ու շինարարությունն են: Այն սերտորեն կապված է նաև էներգետիկայի, քիմիական արդյունաբերության, տրանսպորտի և այլ ճյուղերի հետ: Սև մետալուրգիան արդյունաբերության այն ճյուղերից է, որոնք կարևոր դեր են խաղում արդյունաբերական կենտրոնների, հանգույցների ու շրջանների ձևավորման գործում. քանի որ սովորաբար սև մետալուրգիական ձեռնարկությունների մոտ կամ նրանցից ոչ մեծ հեռավորության վրա տեղաբաշխվում են մետաղատար մեքենաշինության, քիմիական արդյունաբերության, էներգետիկայի և շինանյութերի (ցեմենտի) արտադրության գործարաններ:

Վերջին տասնամյակներին զգալի փոփոխություններ տեղի ունեցան սև մետալուրգիայի տեխնիկա-տեխնոլոգիական, կազմակերպչական և տարածական կառուցվածքներում: Ճյուղում գիտատեխնիկական առաջընթացի կարևորագույն միտումը արտադրական գործընթացի անընդհատականության մեծացումն է, որն ապահովում է էներգիայի խնայում, կորուստների կրճատում և աշխատանքի արտադրողականության աճ: Սև մետալուրգիայի արտադրության կառուցվածքում արագորեն աճում է լեգիրող մետաղների (մոլիբդեն, վոլֆրամ, մանգան) և էլեկտրապողպատների բաժինը, որը հասել է գրեթե 2/3-ի:

Մետաղածուխության արտադրության ավանդական սխեման բավական պարզ է. քարածխի և երկաթի հանքաքարի վրա հենվում է դոմնային արտադրությունը, որն արտադրում է թուջ: Մարտենյան վառարաններում թուջից վերածուխում են պողպատ, որից էլ գլանման արտադրամասերում ստանում են գլանվածքի տարբեր տեսակներ: Մետաղի ջարդոնի կուտակմանը զուգընթաց ձեռնտու է պողպատը միանգամից ծուլել դրանից՝ շրջանցելով դոմնային փուլը: Ներկայումս ԱՄՆ-ում պողպատի գրեթե կեսն արտադրվում է մետաղական ջարդոնից: Նույն պատկերն է նաև աշխարհի զարգացած այլ երկրներում, որոնք զգալի չափով օգտագործում են ներմուծված մետաղի ջարդոնը:

Ներկայումս ձևավորվել է երկրների երկու խումբ՝ բարձր զարգացած երկրներ, որտեղ պողպատի արտադրությունը կրճատվում է մի շարք պատճառներով (միջավայրի պահպանություն, աշխատանքի վրա մեծ ծախսումներ), և նոր զարգացող երկրներ, որտեղ պողպատի արտադրությունը շարունակում է աճել: Ընդհանուր առմամբ պողպատի համաշխարհային արտադրանքը վերջին տարիներին պահպանվում է 700-750 մլն տ մակարդակի վրա:

Սև մետաղածուխության ձեռնարկությունները տեղաբաշխվում են մի քանի սկզբունքներով՝

1. հումքի (երկաթի հանքավայրի) բազաներում,
2. վառելիքային (քարածխային) բազաներում,
3. հումքի և վառելիքային բազաների միջև:

Տեղաբաշխման ժամանակ հաշվի է առնվում քաղցրահամ քրի և սպառողների առկայությունը: Հումք և վառելիք ներմուծող երկրներում (Ճապոնիա, Կորեայի Հանրապետություն, Արևմտյան Եվրոպայի երկրներ) խոշոր մետալուրգիական կոմբինատները կառուցվում են նավահանգստային քաղաքներում (օրինակ՝ Տարանտո և Կորնիլիանո նավահանգստային քաղաքները Իտալիայում): 70-ական


թվականներից սկսած նկատվում են տեղաբաշխման նոր միտումներ: Սև մետալուրգիական ոչ մեծ ձեռնարկությունները (տարեկան մինչև մի քանի հարյուր հազ. տ արտադրողականությամբ), որոնք աշխատում են մետաղի ջարդոնի բազայի վրա, ձգտում են մեքենաշինության և մետաղամշակման կենտրոնները:

1990-2000-ական թվականներին տարեկան արդյունահանվում է 560-ից 650 մլն. տ. երկաթի հանքաքար: Խոշորագույն արդյունահանողներն են Չինաստանը, Բրազիլիան, Ավստրալիան, Հնդկաստանը, ՌԴ-ը, Ռուսիան, ԱՄՆ, Կանադան, իսկ արտահանողները՝ Բրազիլիան և Ավստրալիան իսկ խոշոր ներմուծողներն են Ճապոնիան (տարեկան մոտ 150 մլն տ), Կորեայի Հանրապետությունը, ԱՄՆ-ը, Գերմանիան (ՏԵՍ հավելվածի քարտեզախիտման):

1990-ական թվականներին պողպատի համաշխարհային արտադրանքը տարեկան կազմում է 690-ից 734 մլն տ, իսկ 2001թ՝ 751 մլն.տ. որի կեսից ավելին տալիս են զարգացած երկրները (Ճապոնիա, ԱՄՆ, Արևմտյան Եվրոպայի երկրներ, Կորեայի Հանրապետություն) (Հավելվածի 7 աղյուսակը): Վերջին տասնամյակում որոշակի տեղաշարժեր են կատարվում սև մետալուրգիայի տեղաբաշխման մեջ: Մեծանում է Չինաստանի, Բրազիլիայի և հումքային ռեսուրսներով հարուստ նոր գաղութացող այլ երկրների բաժինը (գծապատկեր 6.7):

Գծապատկեր 6.7

Թուջի և պողպատի համաշխարհային արտադրանքի մեջ երկրների բաժինների փոփոխությունները 1980-2000թթ. (%)



Պողպատի (գլխավորապես գլանվածքի և խողովակների տեսքով) հիմնական արտահանողներն են Ճապոնիան, Գերմանիան, Բենիլյուքսի երկրները, Ֆրանսիան, Իտալիան, Բրազիլիան և Կորեայի Հանրապետությունը: Ընդ որում նշված երկրները միաժամանակ նաև պողպատի խոշոր ներմուծողներ են, որը վկայում է տվյալ ճյուղում աշխատանքի միջազգային ներմուծողային խորը բաժանման առկայության մասին:

բ) Գունավոր մետալուրգիա.

Հունքի բազմազանությամբ, ճյուղային կառուցվածքով, արտադրության տեխնոլոգիական բարդությամբ և տեղաբաշխման բնույթով մետալուրգիայի այս ենթաճյուղը զգալիորեն տարբերվում է սև մետալուրգիայից:

Եթե մինչև XX դ. 50-ական թվականները առաջատարը ծանր գունավոր մետաղների (պղինձ, կապար, ցինկ, անագ) ծուլումն էր, ապա 60-70-ական թվականներին առաջատար դարձավ թեթև գունավոր մետաղների, մասնավորապես ալյումինի ծուլումը: Միաժամանակ ընդլայնվեց «XX դարի մետաղների»՝ կոբալտի, տիտանի, լիթիումի, բերիլիումի արտադրությունը: Բնական է, որ գունավոր մետալուրգիայի կառուցվածքի տեղաշարժերն ազդել են ճյուղի տեղաբաշխման բնույթի վրա: Զգալիորեն ավելացել է գունավոր մետալուրգիական գործարաններ ունեցող երկրների թիվը, սակայն միայն քիչ թվով երկրներում (ԱՄՆ, Կանադա, Ճապոնիա, Ռուսաստան, Գերմանիա, Ֆրանսիա, Ավստրալիա) են արտադրում գրեթե բոլոր գունավոր մետաղները. մնացյալներն ունեն նեղ մասնագիտացում, այսինքն արտադրում են մեկ կամ մի քանի գունավոր մետաղներ:

Միանգամայն տարբեր են ծանր և թեթև գունավոր մետաղների ծուլման գործարանների տեղաբաշխման սկզբունքները: Ծանր գունավոր մետաղների հանքաքարին բնորոշ է հիմնական օգտակար տարրի ցածր կամ խիստ ցածր պարունակությունը: Այսպես, աշխարհում արդյունահանած պղնձի հանքաքարի մեծ մասում պղնձի պարունակությունը 0.5-1.0% է, իսկ խտանյութում՝ 8-35%: Էլ ավելի ցածր է անագի հանքաքարում անագի պարունակությունը: Դա կանխորոշում է դրանց հարստացման և ծուլման արտադրության կազմակերպումը հունքային շրջաններում: Պղնձի խոշորագույն արտադրողներն են ԱՄՆ-ը, Չինիան, Ճապոնիան, Կանադան, Լեհաստանը, Պերուն, Զամբիան, Գերմանիան, Իսպանիան և ԱՊՀ որոշ երկրները (Ռուսաստան, Ղազախստան, Հայաստան, Ուզբեկստան): Նշված երկրներից Ճապոնիան և Գերմանիան լիարժեք կերպով ապահովված չեն հումքային ռեսուրսներով, և նրանց կշիռը զգալի է գտված (ռաֆինացված) պղնձի արտադրության մեջ:

Ի տարբերություն պղնձի, ցինկի և կապարի խտանյութում մետաղի բարձր պարունակությունը (մինչև 60-70%) ապահովում է դրանց հարաբերական բարձր տրանսպորտահարմարությունը և նպաստում է խտանյութի արտադրության ու դրանց մետալուրգիական մշակման վայրերի միջև հեռավորությունների մեծացմանը: Ցինկի ծուլման բնագավառում աշխարհում առաջատար երկրներն են Չինաստանը,

տանը, Կանադան, Ճապոնիան, ԱՄՆ-ը, Իսպանիան, Գերմանիան, Ավստրալիան, իսկ կապարի ծուլման բնագավառում ԱՄՆ-ը, Չինաստանը, Մեծ Բրիտանիան, Կանադան, Ֆրանսիան, Ճապոնիան, Ավստրալիան:

Միանգամայն այլ են ալյումինի արտադրության տեղաբաշխման սկզբունքները: Ալյումինի ծուլումը շատ էներգատար է, ուստի գործարանները տեղաբաշխվում են հիմնականում խոշոր ջրաէլեկտրակայանների և երբեմն էլ էժան վառելիքով աշխատող ջէլ-երի մոտ (օրինակ Բահրեյնում) (Տես հավելվածի քարտեզասխեման):

Ի տարբերություն ծանր գունավոր մետաղների, ալյումինի արտադրությունը վերջին տասնամյակներին զգալիորեն ավելացել է և ներկայումս կազմում է տարեկան 30-31 մլն տ, որից 24 մլն տ առաջնային ալյումին: Ներկայումս այն դարձել է շատ բնագավառներում պողպատի լուրջ մրցակից: Ալյումինի գլխավոր հումքատեսակի՝ բոքսիտի հիմնական արդյունահանողներն են՝ Ավստրալիան (1/3-ը), Գվինեան, Ճամայկան, Բրազիլիան: Միաժամանակ անշան է եվրոպական երկրների բաժինը հումքի արդյունահանման մեջ: Ալյումինի խտանյութի՝ կավահողի արտադրությունը հիմնականում զարգանում է հումքի արդյունահանման երկրներում և շրջաններում (Ավստրալիա, Ճամայկա, Սուրինամ, Հնդկաստան, Վենեսուելա), ինչպես նաև ԱՄՆ-ում, Կանադայում, Գերմանիայում:

Ի տարբերություն ծանր գունավոր մետաղների, ալյումինի արտադրության վերջնական փուլերը տեղաբաշխվում են տնտեսապես զարգացած երկրներում, առանձնապես այն երկրներում, որոնք արտադրում են էժան էլեկտրաէներգիա և ունեն հարմար տրանսպորտաաշխարհագրական ծովային դիրք՝ ԱՄՆ, Ճապոնիա, Գերմանիա, Իտալիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Կանադա, Նորվեգիա, իսկ հումք արդյունահանող երկրներից՝ Ավստրալիա, Բրազիլիա, Հնդկաստան, Ռուսաստան (Հավելվածի 8 աղյուսակը):

Արտադրության և սպառման շրջանների տարածական աճող խզումը հանգեցնում է ալյումինի արտահանման ծավալի աճին: Ներկայումս աշխարհում արտադրած ալյումինի 45%-ն արտահանվում է: Խոշորագույն արտահանողներն են՝ Կանադան, Ավստրալիան, Նորվեգիան, Բրազիլիան, Ռուսաստանը, ներմուծողները՝ Ճապոնիան, ԱՄՆ-ը, Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան:

6.9 Մեքենաշինություն

Աշխարհի բնակչության և արդյունաբերական արտադրության ծավալի արագ աճին զուգընթաց շարունակում է նաև մեքենաշինության հին ենթաճյուղերից մեկի՝ էլեկտրատեխնիկական արդյունաբերության արտադրանքի ծավալը: Սակայն այլ ենթաճյուղերի էլ ավելի արագ աճի հետևանքով մեքենաշինության կառուցվածքում էլեկտրատեխնիկական արդյունաբերության բաժինը կրճատվում է:

Էլեկտրատեխնիկական արդյունաբերության արտադրատեսակները խիստ բազմազան են: Դրանք ըստ արտադրության տեխնիկական բարդության աստիճանի կարելի է բաժանել 2 խմբի, որոնցից յուրաքանչյուրին համապատասխանում են ար-

տաղրական ձեռնարկությունների տեղաբաշխման ուրույն սկզբունքներ: Բարձր ճշգրիտ ու թանկարժեք արտադրանքը էլեկտրածնիչներ (գեներատորներ), էլեկտրաէներգիայի փոխակերպիչներ (տրանսֆորմատորներ), էլեկտրաշարժիչներ, մալուխի (կաբելի) և համանման այլ արտադրատեսակներ արտադրող ձեռնարկությունները ձգտում են գունավոր մետաղների, ինժեներատեխնիկական կադրերի կենտրոնացման շրջանները: Այս ճյուղը գլխավորապես տեղաբաշխվում է բարձր զարգացած և հզոր մեքենաշինություն ունեցող երկրներում: Հանրահայտ են առանձնապես գերմանական «Սիմենսը», ամերիկյան «Ջեներալ էլեկտրիկը»:

Բարձր ճշգրիտ էլեկտրատեխնիկական արտադրանքի արտադրությունը զարգացած է նաև Հայաստանի Հանրապետությունում: «Հայէլեկտրամեքենա», «էլեկտրաշարժիչ», «էլեկտրատեխնիկական», «Վերելակների», մալուխի արտադրության գծով Հայաստանի Հանրապետությունը հսՅՄ-ի առաջատար շրջաններից էր:

Սակավ ճշգրիտ արտադրատեսակները կենցաղային էլեկտրասարքավորումներն են՝ սառնարաններ, լվացքի մեքենաներ, փոշեկուլներ, կոնդիցիոներներ, մաղաղցներ, վիճակի տոկոսներ և այլն: Դրանց արտադրությունը խիստ աշխատատարության պատճառով աստիճանաբար զարգացած երկրներից փոխադրվում է զարգացող երկրներ, որտեղ աշխատուժը մինչև մի քանի տասնյակ անգամ էժան է. քան զարգացած երկրներում:

Շնչհանուր մեքենաշինություն: Դրա կազմում տնտեսության տարբեր ճյուղերի համար մեքենաներ և սարքավորումներ արտադրող ձեռնարկությունները: Դրանցից են գյուղատնտեսական մեքենաները, մետաղահատ մեքենաներն ու դարբնոցամանվակային սարքավորումները: Դրանց մի մասը արտադրվում է պատվերով՝ փոքր քանակով, իսկ մյուս մասը՝ սերիական արտադրությամբ:

Գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը մեքենաշինության հնագույն ճյուղերից է: Այդ մեքենաներն առանձնանում են իրենց մեծ չափերով, որը դժվարություններ է ստեղծում փոխադրման հարցում, ուստի ոչ տրանսպորտահարմարության պատճառով կոմբայնների, շարքացանների և այլ մեքենաների արտադրությունը ձգտում է դեպի սպառման՝ զարգացած հողագործության շրջանները:

Աստիճանաբար սերնդափոխվում՝ խոշոր ու ավելի բարձր արտադրողական են դառնում գյուղատնտեսական մեքենաներն ու սարքավորումները, որի շնորհիվ հնարավոր է դառնում փոքրաթիվ մեքենաներով կատարել ավելի մեծ աշխատանք: Օրինակ, կոմբայնների համաշխարհային արտադրության ծավալը միայն 1987-1997 թթ. նվազել է 1.6 անգամ: Եթե այդ ժամանակահատվածի սկզբում կոմբայնների շուրջ 2/3-ն արտադրում էին ճապոնիան ու հսՅՄ-ը, ապա ներկայումս՝ ճապոնիան ու Չինաստանը:

Մի փոքր նվազել է նաև տրակտորների արտադրությունը: Այդուհանդերձ, դրանց ավելի քան կեսն արտադրվում է ԱՄՆ-ում: Նրան հետևում են ճապոնիան, Չինաստանը, Բելգիան, Ֆրանսիան, Իտալիան, Ռուսաստանը:

Մեքենաշինության հնագույն ճյուղերից մեկով՝ հաստոցների ու դարբնոցամանլիչային սարքավորումների արտադրությամբ մասնագիտացած երկրներն են

ճապոնիան, Գերմանիան ու ԱՄՆ-ը, որոնք արտադրում են այս արտադրատեսակների համաշխարհային արտադրանքի շուրջ 3/5-ը:

Արտադրվող հաստոցների քանակը որոշ չափով կրճատվում է, սակայն այդ փոքրաթիվ հաստոցները տեխնիկական կատարելագործման շնորհիվ ունեն նախկինի համեմատությամբ ավելի մեծ ծավալով աշխատանք կատարելու կարողություն:

Չեռքով կառավարվող նախկին հաստոցների փոխարեն այժմ գրեթե բացառապես արտադրում են թվային-ծրագրային կառավարման, ավտոմատացված, բարձր արտադրողական հաստոցներ:

Մեքենաշինությունն արդյունաբերության գլխավոր ճյուղն է: Նրան բաժին է ընկնում զարգացած երկրների արդյունաբերության արտադրանքի 35-38%-ը և զբաղվածների՝ 34-36%-ը: Նոր զարգացող երկրներում սովորաբար այդ ցուցանիշը կազմում է մինչև 20%: Արդյունաբերության այս ճյուղը հնարավորություն է տալիս տեխնիկսպես վերագինել տնտեսության բոլոր ճյուղերը, մեքենայացնել և ավտոմատացնել արտադրության գործընթացները: Չկա մարդու գործունեության մի բնագավառ, որտեղ չկիրառվի մեքենաշինության այս կամ այն ենթաճյուղի թողարկած արտադրանքը:

Մեքենաշինության զարգացումը զգալի ազդեցություն է թողնում ամբողջ արդյունաբերության ճյուղային և տարածքային կառուցվածքների վրա: ԳՏՀ ժամանակաշրջանում մեքենաշինությունը սկսեց զարգանալ աշխարհի տասնյակ երկրներում: Ծանր արդյունաբերության այլ ճյուղերից այն առանձնանում է ամբողջ աշխարհում լայն տարածվածությամբ: Սակայն դեռևս զգալի են մեքենաշինության զարգացման մակարդակի տարբերությունները տարածաշրջանների և երկրների միջև: Մեքենաշինության տեղաբաշխման վրա ազդում են բազմաթիվ գործոններ՝ աշխատանքային ռեսուրսները, տրանսպորտը, գիտական հիմնարկները, մետալուրգիական բազան, սպառման շուկան և այլն:

Համաշխարհային մեքենաշինության մեջ արտադրանքի արժեքով առաջին երեք տեղերը հաջորդաբար զբաղեցնում են ԱՄՆ-ը, ճապոնիան և Գերմանիան, որտեղ ներկայացված է մեքենաշինական արտադրությունների ամբողջ համալիրը: Տասնյակում տեղ են զբաղեցնում նաև Չինաստանը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Կանադան, Բրազիլիան և Իսպանիան:

Մեքենաշինական արտադրությունների բազմազանությամբ և ծավալով աչքի է ընկնում նաև Ռուսաստանը, հատկապես ռազմական և տիեզերական տեխնիկայի արտադրությամբ և արտահանմամբ: Ռուսաստանը և Չինաստանը դեռևս ունեն մեքենաշինական արտադրանքի արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռ, մինչդեռ ճապոնիան և Արևմտյան Եվրոպայի երկրների մեծ մասը ունեն դրական հաշվեկշիռ: Այդ երկրների մեքենաշինության բաժինն արտահանության մեջ, որպես կանոն, կազմում է 1/3-ից 1/2-ը, իսկ ճապոնիայում՝ նույնիսկ 65%: Քանի որ այս ճյուղում բարձր է արտադրության մասնագիտացման և կոոպերացման

մակարդակը, ապա զարգացած երկրները ոչ միայն արտահանողներ, այլ նաև խոշոր ներմուծողներ են:

Արևմտյան Եվրոպայի ոչ մեծ երկրները ներմուծում են ամենաբազմազան մեքենաներ ու սարքավորումներ, միաժամանակ մասնագիտանում մեքենաշինության առանձին ճյուղերով ու արտադրություններով, թողարկում և զգալի չափով արտահանում են մեքենաշինական բարձրորակ ապրանքներ: Այսպես, Շվեյցարիան բարձրորակ հաստոցների, ժամացույցների, գործիքների, տեքստիլ սարքավորումների խոշորագույն արտահանողներից է: Նույնը կարելի է ասել Շվեդիայի, Նիդերլանդների և Եվրոպայի զարգացած այլ երկրների մասին: Հարավ-Արևելյան Ասիայի «նոր վագրերը» մեքենաշինության որոշ արտադրատեսակների խոշոր արտահանողներ են: Դրանք համաշխարհային շուկա, այդ թվում նաև զարգացած երկրներ են արտահանում մասսայական և աշխատատար արտադրանք՝ կենցաղային էլեկտրատեխնիկական սարքեր, ավտոմեքենաներ և այլն: Դրանք, ի տարբերություն Եվրոպական բարձր տեխնոլոգիայի և որակի վրա հենված արտադրանքի, մրցունակ են դառնում աշխատուժի էժանության հաշվին:

Չինաստանի, Բրազիլիայի, Հնդկաստանի բազմաճյուղ մեքենաշինությունը հիմնականում հենվում է ներքին շուկայի մեծ տարողունակության վրա, ուստի թողարկված արտադրանքի չնչին մասն է արտահանվում: Լատինական Ամերիկայի, Ասիայի, Աֆրիկայի երկրների մեծ մասը մեքենաշինական արտադրանքի պահանջարկն ամբողջությամբ բավարարում է ներմուծման հաշվին:

Մեքենաշինությունը կարևոր դեր է խաղում յուրաքանչյուր շրջանի համալիրային զարգացման, արդյունաբերական հանգույցների ձևավորման գործում: Նրա տեղաբաշխման վրա զգալի ազդեցություն են թողնում արտադրության մասնագիտացումը և կոոպերացումը: Նրան բնորոշ է միմյանց հետ կոոպերացման մեջ գտնվող ձեռնարկությունների խմբային տեղաբաշխումը, երբ բարդ և վերջնական արտադրանք թողարկող ձեռնարկությունները լրացվում են հարակից գործարաններով, որոնք պատկանում են տվյալ կամ էլ նրա հետ սերտ համագործակցության մեջ գտնվող ընկերությանը: Դա ապահովում է հավաքման արտադրամասի ռիթմիկ և անխափան աշխատանքը և ազատում է խոշոր պահեստային տնտեսություն ստեղծելու անհրաժեշտությունից: Միաժամանակ մասնագիտացումը և նրա հետ կապված աշխատանքի տարածքային բաժանումը երբեմն հանգեցնում է նեղ մասնագիտացված արդյունաբերական կենտրոնների և շրջանների ձևավորմանը, որոնք զգալի չափով կախված են մեկ ճյուղի իրավիճակից:

Վերջին տասնամյակներին մեքենաշինության մեջ նկատվում և արտահայտվում է արտադրության միջազգայնացումը անդրազգային ընկերությունների շրջանակներում՝ միջֆիրմային և միջպետական համաձայնագրերի հիման վրա:

Մեքենաշինությունն արդյունաբերության առավել գիտատար ճյուղերից է: Նրան բաժին է ընկնում զարգացած երկրներում մշակող արդյունաբերության մեջ կատարած գիտահետազոտական և կոնստրուկտորական աշխատանքների մոտ 70%-ը: Մեքենաշինության գիտատար ենթաճյուղերի զարգացման բարձր տեմպը, որը հենվում է գիտատեխնիկական առաջընթացի վրա, արտադրության գիտատա-

րության աճը, տեխնիկայի բարդացումը, նրա արագ սերնդափոխումը նպաստում են նորագույն և առավել գիտատար ճյուղերի կենտրոնացմանը այն երկրներում և շրջաններում, որոնք ունեն համապատասխան գիտական և ինժեներա-կոնստրուկտորական հիմնարկներ և կադրեր, տեղեկատվական և տրանսպորտային ենթակառուցվածք:

Էիմ-ների, արդյունաբերական ռոբոտների, թվային ծրագրային կառավարմամբ հաստոցների օգտագործումը զգալի փոփոխություններ է մտցնում արտադրության կազմակերպման մեջ: Այն միավոր արտադրանքի հաշվով ապահովում է կենդանի աշխատանքի և արտադրական մակերեսի զգալի խնայողություն, որն էլ էապես ազդում է տեղաբաշխման կարևոր գործոնների վրա:

Երկրի տնտեսական զարգացման գործում մեքենաշինության դերի մեծացումն արտահայտվում է նրանում, որ աշխարհի խոշորագույն ընկերությունների թվում մեծանում է մեքենաշինական ֆիրմաների բաժինը: 1990-ական թվականների տվյալներով աշխարհի խոշորագույն 50 արդյունաբերական ֆիրմաների կեսը մեքենաշինական էին, առավել խոշոր 10-ից 7-ը նույնպես:

Կարելի է առանձնացնել աշխարհի մեքենաշինական երեք գլխավոր տարածաշրջան:

Դրանցից առաջինը ձևավորվել է Հյուսիսային Ամերիկայում՝ (ԱՄՆ, Կանադա, Մեքսիկա), որին բաժին է ընկնում համաշխարհային արտադրանքի 30%-ը: Հիմնական արտադրատեսակներն են էիմ-ները, ինքնաթիռները, ավտոմոբիլները, ատոմային, տիեզերական և հրթիռային տեխնիկան: ԱՄՆ-ի մեքենաշինության արտադրանքի մոտ կեսն արտահանվում է:

Երկրորդ տարածաշրջանը Եվրոպան է, որի արտադրանքի ժավալը գրեթե նույնն է, սակայն տարբեր է ճյուղային կառուցվածքը: Տարածաշրջանը նախ և առաջ մասնագիտանում է հաստոցաշինությամբ, ավտոմոբիլաշինությամբ և մասսայական արտադրության այլ արտադրատեսակներով: Արտադրության և արտահանման ժավալներով աշխարհի ակնհայտ առաջատարը Գերմանիան է, իսկ մեկ շնչի հաշվով մեքենաշինական արտադրանքի արտահանմամբ՝ Շվեյցարիան:

Երրորդ տարածաշրջանն ընդգրկում է Արևելյան և Հարավ-Արևելյան Ասիան, որին բաժին է ընկնում մեքենաշինության համաշխարհային արտադրանքի 1/5-ը: Այստեղ առաջատարը ճապոնիան է, որի մեքենաշինության արտադրանքի մոտ 65%-ն արտահանվում է (սա ամենաբարձր բաժինն է աշխարհում): Տարածաշրջանը բացի ճապոնիայից, ընդգրկում է Կորեայի Հանրապետությունը, Սինգապուրը, ինչպես նաև Չինաստանը: Հիմնական արտադրատեսակներն են՝ ծովային նավերը, ավտոմոբիլները, թվային ծրագրային կառավարման հաստոցները, կենցաղային ու ռադիոէլեկտրոնիկական սարքերը, արդյունաբերական ռոբոտները:

Բացի այս երեք խոշոր տարածաշրջաններից չորրորդ մեքենաշինական տարածաշրջան են կազմում ԱՊՀ երկրները, հատկապես Ռուսաստանը, որը մասնագիտանում է մետաղատար և ոչ շատ գիտատար արտադրություններով (ծանր մեքենաշինություն, էներգետիկ մեքենաշինություն, տրակտորաշինություն, հաստոցաշինություն, գյուղատնտեսական մեքենաշինություն):

Նոր զարգացող երկրների մեքենաշինության բաժինն աննշան է և ներկայացված է ավանդական և ոչ գիտատար ճյուղերով: Այստեղ զգալի թիվ են կազմում մեքենաների զուտ հավաքման գործարանները, որոնք օգտագործելով էժան աշխատուժը և զարգացած երկրներից ստանալով մեքենաների անհրաժեշտ դետալներն ու հանգույցները (օրինակ, շարժիչները, փոխանցման տուփերը) տալիս են մրցունակ արտադրանք: Դրանց մեծ մասը պատկանում է օտարերկրյա կապիտալին:

Արդյունաբերական խոշոր երկրների մեքենաշինության և ընդհանրապես արդյունաբերության մեջ նշանակալից դեր է խաղում **ավտոմեքենաշինությունը**: Այսպես, Գերմանիայում ավտոմոբիլաշինությանը բաժին է ընկնում մշակող արդյունաբերության մեջ զբաղվածների 12%-ը, արտադրանքի 13%-ը և արտահանման 18%-ը, ճապոնիայում՝ մշակող արդյունաբերության արտադրանքի 1/10-ը և ամբողջ արտահանման 1/5-ը:

Ավտոմեքենաշինությունը կապեր է հաստատել արդյունաբերության մյուս ճյուղերի հետ: Այն հաստոցաշինության, էլեկտրատեխնիկայի, էլեկտրոնիկայի, գլանվածքի, ռետինատեխնիկական իրերի, ապակու խոշորագույն սպառողներից մեկն է: Ավտոմեքենաների համաշխարհային արտադրությունը 2001թ կազմել է մոտ 53 մլն. որի 3/4-ը մարդատար և կոմբինացված ավտոմեքենաներն են, իսկ 1/4-ը՝ բեռնատար մեքենաներն ու ավտոբուսները: Մարդատար ավտոմեքենաների 1/4-ն արտադրվում է ճապոնիայում, 1/4-ը՝ Յուսիասային Ամերիկայում և մոտ 2/5-ը՝ Եվրոպայում (որից Գերմանիայում՝ 13%, Ֆրանսիայում՝ 9%): Բեռնատարների արտադրությամբ նույնպես առաջատարը ԱՄՆ-ը և ճապոնիան են (Հավելվածի 10 աղյուսակը և քարտեզասխեման):

Վերջին տարիներին ավտոմեքենաշինությունը զգալի զարգացում է ստացել նաև Կորեայի Հանրապետությունում, Բրազիլիայում, Մեքսիկայում, Արգենտինայում և Թուրքիայում, որտեղ անդրազգային հզոր միավորումները ստեղծել են իրենց ձեռնարկությունները, իսկ որոշ երկրներում (Կորեայի Հանրապետությունում) ձևավորվել են ավտոմեքենաշինական հայրենական ֆիրմաներ:

Զարգացող երկրների մեծ մասում ավտոմեքենաշինությունը ներկայացված է առավելապես ավտոհավաքման և ավտովերանո-րոգման արտադրություններով:

Աշխարհի ավտոմեքենաներ արտադրող առավել հանրահայտ միավորումներն են «Ֆորդը» և «Ջեներալ Մոթորսը» ԱՄՆ-ում, «Նիսսանը», «Տոյոտան» և «Հոնդան» ճապոնիայում, «Ղայմլեր-Քրայսլերը»¹, «ԲՄՎ-ն» և «Ֆոլկսվագենը» Գերմանիայում, «Ռեճոն» և «Պեժոն» Ֆրանսիայում, «Ֆիատը» Իտալիայում:

Ավտոմեքենաշինական գործարանները հիմնականում տեղաբաշխված են մայրաքաղաքային և զարգացած մեքենաշինական շրջաններում (Մերձձային շրջանը՝ ԱՄՆ-ում, Հոնոլուլու կղզու հարավը՝ ճապոնիայում, Փարիզյան շրջանը՝ Ֆրանսիայում, Բավարիան՝ Գերմանիայում, Հարավ-Արևելյան Անգլիան և այլն): Սակայն վերջին տասնամյակներին նկատելի տեղաշարժեր են կատարվում Եվրոպայում և ԱՄՆ-ում: Բնակչության տարաբնակեցման տեղաշարժերի հետ կապ-

ված ԱՄՆ-ում նոր ավտոմեքենաշինական ձեռնարկություններ են կառուցվել երկրի Հարավում և Արևմուտքում, իսկ Եվրոպայի երկրներում՝ ծայրամասային և հին արդյունաբերական շրջաններում: Վերջին տարիներին խոշոր միավորումները ավտոմեքենաշինական նոր ձեռնարկություններ են ստեղծում նախկին սոցիալիստական երկրներում՝ օգտագործելով նրանց էժան աշխատուժը:

Մեքենաշինության ժամանակակից ճյուղերից է **ավիահրթիռատեղեղրական արդյունաբերությունը**, որը զարգանում է հզոր գիտատեխնիկական և ռազմական ներուժ ունեցող երկրներում՝ ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա: Դրանք սեղաբաշխվում են գիտատեխնիկական և որակյալ բանվորական կադրեր ունեցող շրջաններում և կենտրոններում: Այսպես, ԱՄՆ-ում ինքնաթիռների խոշոր արտադրությունը տեղաբաշխված է Լոս-Անջելեսի շրջանում և Սիեթլում («Բոինգ»), Ֆրանսիայում՝ Թուլուզ քաղաքում («Կոնկորդ»):

Ներկայումս **նավաշինության** զարգացման և տեղաբաշխման վրա զգալի ազդեցություն է թողնում ոչ այնքան աշխատուժի որակավորումը, որքան էժանությունը: Այդ պատճառով դասական նավաշինական որոշ երկրները՝ ԱՄՆ-ը, Նիդերլանդները, Գերմանիան, դադարել են էական դեր խաղալ համաշխարհային նավաշինության մեջ: Ճիշտ է, ճապոնիան շարունակում է պահպանել իր առաջատար դերն աշխարհում, սակայն նրան ընդհուպ մոտեցել է Կորեայի Հանրապետությունը: Այս ճյուղը զգալի զարգացում է ստացել Թայվանում և Բրազիլիայում (Հավելվածի 11 աղյուսակը):

Կարևորագույն արտադրություններից է **էլեկտրոնային մեքենաշինությունն** ու սարքաշինությունը, որոնք մեքենաշինության աշխատատար, գիտատար և արագ զարգացող ենթաճյուղերից են: Էլեկտրոնային մեքենաշինության խոշոր միավորումների գլխամասային գործարանները տեղաբաշխվում են գիտական հետազոտությունների կենտրոնների մոտ: Օրինակ, Կալիֆոռնիայի հռչակավոր Սիլիկոնյան հովտում գիտաարտադրական ֆիրմաները ստեղծվել են հայտնի Ստենֆորդի համալսարանի շուրջը: Նման գիտական կենտրոններ են ստեղծվել Եվրոպայում և ճապոնիայում:

Ռազմաարդյունաբերական էլեկտրոնիկայի արտադրության գծով առաջատարներն են ԱՄՆ-ը և Ռուսաստանը, իսկ կենցաղային էլեկտրոնիկայի գծով՝ ճապոնիան և Արևելյան ու Հարավ-Արևելյան Ասիայի նոր ինդուստրիալ երկրները՝ Կորեայի Հանրապետությունը, Հոնկոնգը, Թայվանը, Մալայզիան, Սինգապուրը: ԱՄՆ-ը ճապոնիայից և նոր ինդուստրիալ երկրներից տարեկան ներմուծում է 15-20 մլրդ դոլ. արժողությամբ արտադրանք: Այս երկրներում անդրազգային ընկերությունների ձեռնարկությունների կողքին սկսել են գործել նաև ազգային ընկերությունները: Արևմտաեվրոպական էլեկտրոնային արդյունաբերությունը դժվարությամբ է դիմանում նոր ինդուստրիալ երկրների մրցակցությանը, և նրա բաժինը համաշխարհային շուկայում անընդհատ նվազում է:

¹ Սինչև վերջին տարիներս այս միավորման անվանումն էր «Ղայմլեր Բենց»

6.10 Քիմիական արդյունաբերություն

Որպես ՉՏԱ առաջատար ճյուղերից մեկը, քիմիական արդյունաբերությունը շատ զօժերով նման է մեքենաշինությանը: Նույնը կարելի է ասել նաև նրա տեղաբաշխման մասին, ինչը թույլ է տալիս առանձնացնել չորս նմանատիպ խոշոր տարածաշրջան:

Դրանցից ամենախոշորը Արևմտյան Եվրոպայի տարածաշրջանն է, որը թողարկում է այդ ճյուղի ամբողջ արտադրանքի մոտ 2/5-ը: Մինչև առաջին համաշխարհային պատերազմն աշխարհի գլխավոր քիմիական տերությունը Գերմանիան էր: Երկու աշխարհամարտերի միջև եղած ժամանակահատվածում քիմիական արդյունաբերությունը սկսեց արագ զարգանալ նաև այլ երկրներում, մասնավորապես, որ առաջին պլան դուրս եկավ նավթաքիմիական արդյունաբերությունը, որը կողմնորոշվում էր հիմնականում դեպի ներմուծվող հումքը: Արդյունքում նավթաքիմիան, ինչպես նաև նավթավերամշակումը, տեղաբաշխվեց ծովային նավահանգիստներում (Ռոտերդամ, Մարսել և այլն) կամ նավթամուղային մայրուղիների վրա:

Արևմտյան Եվրոպային հետևում է Գյուսիսային Ամերիկայի տարածաշրջանը, որտեղ առաջատարը ԱՄՆ-ն է: Այստեղ 40-ական թվականներին ստեղծվեցին առաջին նավթաքիմիական ձեռնարկությունները՝ հիմք դնելով համաշխարհային քիմիական արդյունաբերության զարգացման նոր փուլին: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, որը Եվրոպայում մեծ վնաս էր հասցրել այդ ճյուղին, ԱՄՆ-ը տալիս էր աշխարհի քիմիական արդյունաբերության արտադրանքի գրեթե կեսը: ԱՄՆ-ի քիմիական արդյունաբերությունը բնորոշվում էր բավական մեծ բազմազանությամբ: Դրա տեղաբաշխման վրա մեծապես ազդել է հումքային գործոնը, որը հաճախ հանգեցնում էր քիմիական արտադրությունների տարածական խիստ կենտրոնացման: Այսպես, Մեքսիկական ծոցի առափնյա հատվածում ձևավորվեց աշխարհում ամենախոշոր նավթաքիմիական շրջանը, որը տարածքով համընկնում էր համանուն նավթագազային ավազանի հետ: Այստեղ է ձևավորվել նավթաքիմիական արտադրության աշխարհում ամենախոշոր կենտրոնը՝ Գյուսթոնը (Փորթ Արթուրի և Նոր Օրլեանի հետ միասին):


Համաշխարհային նշանակության երրորդ տարածաշրջանը Արևելյան և Հարավ-Արևելյան Ասիան է: Նրա միջուկը Ճապոնիան է, որտեղ հզոր նավթաքիմիան զարգացած է ծովային նավահանգիստներում՝ ներմուծվող նավթի հիման վրա: Այս տարածաշրջանում ձևավորվել է այս արտադրության զծով աշխարհի երկրորդ խոշոր կենտրոնը՝ Սինգապուրը: Այլ տարածաշրջաններից են Չինաստանը, որտեղ գերակշռում է հիմնական քիմիայի արտադրությունը, և նոր արդյունաբերականացած երկրները, որոնք գլխավորապես մասնագիտացել են սինթետիկ արտադրանքի և կիսարտադրանքի արտադրությամբ:

Վերջապես, չորրորդ տարածաշրջանը ԱՊՀ երկրներն են, որտեղ քիմիական արդյունաբերությունն աչքի է ընկնում մեծ բազմատեսակությամբ: Դրա տեղաբաշխման վրա մեծապես զգացվում է ինչպես հումքային, այնպես էլ էներգետիկ և

սպառման գործոնների ազդեցությունը: Սակայն այս երկրների բաժինը խիստ կրճատվել է:

70-ական թթ. էներգետիկ և հումքային ճգնաժամերը խիստ մեծ ազդեցություն գործեցին նաև համաշխարհային քիմիական արդյունաբերության վրա: Դրանք նպաստեցին նրա հետագա արտադրական կենտրոնացմանը՝ հանգեցնելով մանր արտադրությունների փակմանը և խոշորների հզորության ավելացմանը: Ձևավորվեցին նոր համալիրներ առաջին հերթին նավթով և գազով հարուստ զարգացող երկրներում: Ասվածը վերաբերում է Պարսից ծոցի երկրներին, որտեղ ձևավորվեց համաշխարհային նշանակության նոր նավթաքիմիական շրջան: Սաուդյան Արաբիայում, Բուվեյթում, Քաթարում կառուցվեցին օրգանական սինթեզի և ազոտական պարարտանյութերի համար կիսաֆաբրիկատներ արտադրող կոմբինատներ, Իրաքում և Իրանում՝ պլաստմասսաներ արտադրող կոմբինատներ: Նմանատիպ համալիրներ ստեղծվեցին Լիբիայում, Ալժիրում, Բրազիլիայում, Վենեսուելայում, Մեքսիկայում: Նշված գործընթացի արդյունքում՝ 80-ական թթ. ԱՄՆ-ի, Արևմտյան Եվրոպայի, Ճապոնիայի, ԱՊՀ-ի միագումարային բաժինը համաշխարհային քիմիական արդյունաբերության մեջ սկսեց աստիճանաբար կրճատվել, իսկ նոր զարգացող երկրների բաժինը՝ մեծանալ:

Քիմիական ապրանքների համաշխարհային արտադրանքի մեջ երկրների բաժինների փոփոխությունները 1980-1998թթ. (%)



Սակայն շարունակվում է Արևմուտքի երկրների մեծաշնորհը մնալ մշակման բարձր

աստիճանի գիտատար արտադրանքի արտադրությունը (նորագույն դեղագործական արտադրանք, էլեկտրոնային և արդյունաբերության այլ նորագույն ճյուղերի համար հատուկ նշանակության քիմիկատներ, բարձրորակ կառուցվածքային պլաստմասսաներ): Պետք է նաև հաշվի առնել, որ զարգացող նավթարդյունահանող երկրներում ստեղծված շատ նավթաքիմիական «կեղտոտ» արտադրությունների արտադրանքը զգալի չափով նախատեսված է Արևմուտքի երկրներ արտահանելու համար:

Այս կայուն միտումներն իրենց արտացոլումն են գտնում քիմիական արտադրանքի առանձին տեսակների արտադրության մեջ: Դիտարկենք դրանք ծծմբաթթվի և հանքային պարարտանյութերի օրինակով: **Ծծմբաթթվի** արտադրության գծով երկրների «առաջին տասնյակի» մեջ մտնում են տնտեսապես զարգացած 8 երկիր, ինչպես նաև Չինաստանն ու Բրազիլիան: Այս երկրներում օգտագործվող ծծումբը ստացվում է երկու եղանակով: Դրա գրեթե կեսը կազմում է բնածին ծծումբը, որի արդյունահանմամբ առանձնապես աչքի են ընկնում ԱՄՆ-ը, Մեքսիկան, Լեհաստանը, Իրաքը, Թուրքմենստանը: Սակայն բնածին ծծմբի տեսակարար կշիռը զնալով կրճատվում է, սինչդեռ մեծանում է նավթից ստացվող (ԱՄՆ, ճապոնիա), և հատկապես բնական գազից ստացվող (Կանադա, Ֆրանսիա) ծծմբի նշանակությունը: Ռուսաստանում գազային ծագման ծծմբի արտադրությունը կազմակերպվում է, օրինակ, Օրենբուրգի գազավերամշակման գործարանում: Ծծմբի օգտահանությունը (γμολλαζαααα), ինչպես նաև նավթի և բնական գազի վերամշակմանն ուղեկցող գործընթացը, ոչ միայն ավելի խնայողական է, այլև տեխնոլոգիապես պարզ: Այն նաև ուղղակիորեն կարելի է դիտել որպես շրջակա միջավայրի պահպանման միջոցառումներից մեկը:

Հանքային պարարտանյութերի արտադրության գծով նույնպես երկրների «առաջին տասնյակի» մեջ հիմնականում մտնում են տնտեսապես զարգացած երկրները: Այս արտադրությունը մեծ մասշտաբների է հասել նաև Չինաստանում և Հնդկաստանում: Աշխարհում արտադրվող բոլոր պարարտանյութերի 1/2-ը բաժին է ընկնում ազոտական, 1/4-ից ավելին՝ ֆոսֆորական և մոտ 1/5-ը՝ կալիումական պարարտանյութերին: Ազոտային պարարտանյութերի արտադրությամբ աշխարհում առաջատար են Չինաստանը, ԱՄՆ-ը, ԱՊՀ երկրները, բայց վերջին ժամանակներս խոշոր արտադրողների թվին են դասվել նաև Հնդկաստանը, Մեքսիկան, Պարսից ծոցի երկրները: Ֆոսֆատային հումքի պաշարներ և հանույթ ունեն ավելի քան 30 երկրներ, բայց դրանց թվում հատկապես առանձնանում են Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Մարոկկոն, Հորդանանը, Թունիսը, Իսրայելը, Ղազախստանը: Ֆոսֆորային պարարտանյութեր արտադրող հիմնական երկրներն են Հնդկաստանը և Ռուսաստանը, ԱՄՆ-ը և Չինաստանը: Կալիումական աղեր արդյունահանում են 14 երկրում: Սինչև վերջին ժամանակներս դրա առաջատարներն էին Ռուսաստանը, ԳՖՀ-ն, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, Բելառուսը: Այնուհետև նրանց միացավ Կանադան, որտեղ հայտնաբերվեց աշխարհում ամենախոշոր Սասկաչևանի կալիումական աղի ավազանը: Դրա շահագործման շնորհիվ Կանադան դարձավ նաև կալիումական հումքի խոշորագույն արտահանող:

Պլաստմասսաների համաշխարհային արտադրությունը 1950 թ. 1.5 մլն տոննայից աճել է մինչև շուրջ 100 մլն տոննայի: Ըստ տարածաշրջանների այն տեղաբաշխվում է հետևյալ կերպ

Եվրոպա	40 մլն տ
Հյուսիսային Ամերիկա	30 մլն տ
Ասիա	18 մլն տ
ԱՊՀ երկրներ	4.5 մլն տ
Լատինական Ամերիկա	4 մլն տ
Աֆրիկա և Մերձավոր Արևելք	2 մլն տ
Ավստրալիա	1 մլն տ


Պլաստմասսա արտադրող երկրների «առաջին տասնյակում» միայն տնտեսապես զարգացած երկրներն են, ինչպես նաև Չինաստանը և Կորեայի Հանրապետությունը:

Քիմիական մանրաթելերի համաշխարհային արտադրանքը 1950 թ. 2 մլն տ-ից 1990-ական թվականներին հասել է շուրջ 20 մլն տ-ի: Այստեղ «առաջին տասնյակի» մեջ են մտնում և տնտեսապես զարգացած երկրները, և նոր զարգացող երկրները՝ առաջին հերթին Արևելյան և Հարավ-Արևելյան Ասիայի ՆԱԵ-ները, որտեղ քիմիական մանրաթելերի արտադրությունը դարձել է միջազգային մասնագիտացման կարևոր ճյուղերից մեկը: Աշխարհում քնակչության մեկ շնչին միջին հաշվով հասնում է մոտ 4 կգ մանրաթել, իսկ Արևմուտքի տնտեսապես զարգացած երկրներում՝ 10-15 կգ, ԱՊՀ երկրներում՝ 4 կգ, Չինաստանում՝ 1.6 կգ:

Քիմիական մանրաթելերը բաժանվում են արհեստականի (ցելյուլոզային), որոնք ստացվում են բնական պոլիմերներից, և սինթետիկի, որոնց համար հումք են ծառայում ածխաջրածինները: Մինչև 60-ական թթ. վերջը արհեստական մանրաթելերի արտադրությունը գերազանցել է սինթետիկ մանրաթելերի արտադրությանը, բայց մեր օրերում դրանց միջև հարաբերակցությունը 18:82 է: Տնտեսապես զարգացած բոլոր երկրներում, Չինաստանում, արտասահմանյան Ասիայի ՆԱԵ-ներում սինթետիկ մանրաթելերին է բաժին ընկնում մանրաթելերի ամբողջ արտադրության ավելի քան 4/5-ը: Բայց ԱՊՀ երկրներում արհեստական մանրաթելերի բաժինը դեռևս բավական բարձր է:

Սինթետիկ կաուչուկի արտադրությունն աշխարհում առաջին անգամ սկսվեց 30-ական թթ. ԽՍՀՄ-ում՝ բուսական ծագման սպիրտի վերամշակման հիման վրա: Այժմ այն հիմնվում է ածխաջրածնային հումքի վրա: Սինթետիկ կաուչուկի արտադրությունն (շուրջ 10 մլն տ) այժմ երկու անգամ գերազանցում է բնական կաուչուկի արտադրությանը: «Առաջին տասնյակի» մեջ են մտնում տնտեսապես զարգացած երկրները, Բրազիլիան (ինչը նաև կապված է այս երկրում ավտոմոբիլային արդյունաբերության զարգացման հետ) և Չինաստանը:

Կաուչուկի համաշխարհային արտադրանքի մեջ երկրների բաժինների փոփոխությունները 1980-1998թթ. (%)



6.11 Անտառային և փայտամշակման արդյունաբերություն

Վերջին 10-15 տարիներին աշխարհի անտառային արդյունաբերության աշխարհագրության մեջ ևս սկսեցին կատարվել զգալի փոփոխություններ՝ կապված նախ և առաջ հյուսիսային և հարավային անտառային գոտիների հարաբերակցության հետ:

Փայտանյութի համաշխարհային մթերումը 1965 թ. 2 մլրդ մ³-ից աճել է մինչև 1995 թ. 3.5 մլրդ մ³-ի: «Առաջին տասնյակի կազմում» մթերումների չափերով առջևում են հյուսիսային գոտու երկրները, բայց հարավային գոտու երկրների և նրանց միջև խզվածությունը կրճատվում է: Ավելացնենք, որ փայտամթերող երկրների «երկրորդ տասնյակի» մեջ նույնպես մտնում են ինչպես հյուսիսային գոտու երկրները (Ֆրանսիա, Ֆինլանդիա, Գերմանիա, Լեհաստան, Ռումինիա, Իսպանիա, Ճապոնիա), այնպես էլ հարավային գոտու երկրները (Թաիլանդ, Ֆիլիպիններ, Քենիա): Ավելացնենք նաև, որ մթերվող ամբողջ փայտանյութից շինափայտին բաժին է ընկնում՝ հյուսիսային գոտու երկրներում՝ 80-100% (ԱՄՆ-ում և Ռուսաստանում՝ 80%, Շվեդիայում և Կանադայում՝ 90%), իսկ հարավային գոտու երկրներում այդ ցուցանիշը սովորաբար 10-25% է (Հնդկաստանում՝ 10%, Բրազիլիայում՝ 25%):

Փայտանյութի մեխանիկական մշակումը ներկայանում է նախ և առաջ սղոցանյութերի արտադրությամբ: Նշված արտադրության գծով առաջատար 10-ից 8-ը հյուսիսային անտառային գոտու երկրներն են, որոնց տեսակարար կշիռն այս բնագավառում ավելի մեծ է, քան փայտանյութի մթերումների մեջ:

Փայտանյութի քիմիական մշակումն աղյուսակում ներկայացվում է ցելյուլոզի արտադրությամբ: Այստեղ հարավային գոտու երկրներից առանձնանում է միայն Բրազիլիան, որի բաժինը համաշխարհային արտադրանքի մեջ կազմում է 4%, ԱՄՆ-ի բաժինն այդ արտադրանքի մեջ հասնում է 1/3-ի, իսկ ԱՄՆ-ի և Կանադայի բաժինը միասին վերցրած՝ 1/2-ի: Ռուսաստանը, որն այդ ցուցակում 4-րդ տեղում է, ԱՄՆ-ին զիջում է ավելի քան 7 անգամ:

Թղթի՝ «մշակույթի հացի» համաշխարհային արտադրությունը 1970 թ. 80 մլն տ-ից 2000 թ. հասել է 331 մլն տ: Այս կարևորագույն ցուցանիշներով աշխարհում առաջատար են ԱՄՆ-ը, Ճապոնիան և Կանադան, բարձր ցուցանիշներ ունեն նաև Չինաստանը, ԳՖՀ-ն, Ֆինլանդիան, մինչդեռ Ռուսաստանը զբաղեցնում է միայն 9-10-րդ տեղերը: Ամբողջ արտադրվող թուղթը բաժանվում է լրագրայինի (ընդհանուր արտադրության ավելի քան 1/4-ը), տպագրականի և մաքուրի (նույնպես 1/4-ից ավելին), փաթեթավորման (15%) և այլ տեսակների: **Լրագրային թղթի** համախառն արտադրանքի թողարկմամբ առաջին անմրցակից տեղում է Կանադան (1/3), որին հետևում են ԱՄՆ-ը, Ճապոնիան, Շվեդիան, Ֆինլանդիան, Ռուսաստանը, ԳՖՀ-ն, Նորվեգիան, Մեծ Բրիտանիան, Չինաստանը:

Իսկ մեկ շնչի հաշվով թղթի արտադրության ծավալի տարբերությունները մեծ են հատկապես տնտեսապես զարգացած երկրների և զարգացող երկրների միջև: Աշխարհում 1 շնչի հաշվով միջինն արտադրվում է 45 կգ թուղթ: Այդ ցուցանիշով ռեկորդը պատկանում է Ֆինլանդիային (1400 կգ), որին հետևում են Շվեդիան (670 կգ), Կանադան (530 կգ), Նորվեգիան (400 կգ): ԱՄՆ-ում ճապոնիայում, Արևմտյան Եվրոպայի երկրների մեծ մասում այդ ցուցանիշը կազմում է 100-150 կգ, Արևելյան Եվրոպայի երկրներում՝ 30-60 կգ: Ռուսաստանում այն ցածր է աշխարհի միջինից՝ 35 կգ, իսկ Չինաստանում և Հնդկաստանում հավասար է համապատասխանաբար 12 և մոտ 2 կգ-ի:

Փայտամշակման և թղթի արտադրանքի գլխավոր ներմուծողներն ու արտահանողները եղել և մնում են տնտեսապես զարգացած երկրները: Արտահանողների թվում են Կանադան, ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Սկանդինավյան երկրները, ներմուծողների թվում՝ Եվրոպայի երկրները, Ճապոնիան, մասամբ ԱՄՆ-ը:

Վերջին ժամանակներս համաշխարհային շուկա են մտել արևադարձային սաղարթավոր անտառների փայտանյութի գնալով մեծացող ծավալներ՝ անտառանյութի, սղոցանյութերի, նրբատախտակի տեսքով, որոնք արտահանում են այնպիսի նոր զարգացող երկրներ, ինչպիսիք են Մալայզիան, Բրազիլիան, Ինդոնեզիան, Ֆիլիպինները, Պապուա Նոր Գվինեան, Կոտդիվուարը, Գաբոնը, Կամերունը:

6.12 Թեթև արդյունաբերություն

Թեթև արդյունաբերությունը արդյունաբերության հնագույն ճյուղերից է: Արդյունաբերական առաջին ձեռնարկությունների մեծ մասը հիմնականում արտադրել է թեթև արդյունաբերական ապրանքներ:

Երկրի տնտեսության մեջ թեթև արդյունաբերության դերը ոչ միայն մեծ է եղել պատմական անցյալում, այլ մեծ է նաև մեր օրերում: Դրա, ինչպես նաև սննդի արդյունաբերության շնորհիվ կուտակվեց կապիտալ, որը որպես ֆինանսական անհրաժեշտ նախադրյալ ծառայեց հետագայում ծանր արդյունաբերության ճյուղերի զարգացման համար:

Թեթև արդյունաբերությունը ներկայումս բնակչությանն ապահովում է անձնական սպառման բազմազան արտադրատեսակներով. հագուստով, կոշիկներով, կաշվե ապրանքներով, գորգերով և այլն: Այն որոշ չափով արտադրանք է մատակարարում նաև արդյունաբերության այլ ճյուղերին: Օրինակ, գործվածքներ է մատակարարում ավտոմոբիլաշինության և ինքնաթիռաշինության ձեռնարկություններին:

Չնայած մեքենայացմանն ու ավտոմատացմանը, թեթև արդյունաբերության արտադրությունները դեռևս շարունակում են պահպանել բարձր աշխատատարությունը: Այդ պատճառով էլ թեթև արդյունաբերությունը զբաղվածության խոշոր բնագավառ է բազմամիլիոնանոց աշխատանքային բանակի, հատկապես կանանց համար:

Թեթև արդյունաբերությունը թեկուզ հին, բայց միաժամանակ դինամիկ փոփոխվող ճյուղ է: Գիտատեխնիկական առաջադիմության ազդեցությամբ անընդհատ փոփոխվում և նորացվում և կատարելագործվում է թեթև արդյունաբերության հումքային բազան, ներդրվում է նոր, ավելի առաջավոր տեխնիկա և տեխնոլոգիա: Մասնավորապես արագ է աճում տեքստիլ արդյունաբերության մեջ օգտագործվող թելերի ընդհանուր ծավալի կազմում քիմիական մանրաթելերի բաժինը (ավելի քան 2/5-ը):

Գիտատեխնիկական առաջադիմությունը փոփոխություն է առաջացրել ոչ միայն թեթև արդյունաբերության արտադրանքի կառուցվածքում, այլ նաև ճյուղի տեղաբաշխման մեջ:

Մասնավորապես, սինթետիկ կաուչուկի արտադրության ծավալի մեծ աճի շնորհիվ Ասիայի երկրներն աստիճանաբար դարձան նաև այդ կաուչուկից պատրաստվող կոշիկների արտադրության աշխարհում երրորդ առաջատար շրջանը, իսկ բրդի խուզի ծավալի մեծացման շնորհիվ՝ բրդաթելի արտադրության նույնիսկ երկրորդ առաջատար շրջանը:

Լինելով ոչ կապիտալատար, տեխնիկական առումով մատչելի և լայն հումքային բազա ունեցող բարձր աշխատատար ճյուղ՝ թեթև արդյունաբերությունն ունի տեղաբաշխման լայն աշխարհագրություն: Այդ պատճառով էլ թեթև արդյունաբերությունը գունավոր մետաղաձուլության հետ միասին այն ճյուղն է, որի համաշխարհային արտադրանքի մեջ համեմատաբար մեծ է զարգացող երկրների բաժինը:

ԱՄՍՔՍՏԻԼ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Չնայած այն բանին, որ տեքստիլ արդյունաբերությունը տիպիկ հին ճյուղ է, ԳՏԱ դարաշրջանում տեքստիլ ապրանքների, հատկապես մանրաթելերի համաշխարհային արտադրությունը մշտական աճի միտում ունի: Սակայն մանրաթելերի ընդհանուր արտադրության կառուցվածքի արմատական տեղաշարժն արտահայտվում է բնական մանրաթելերի բաժնի փոքրացմամբ և քիմիական մանրաթելերի բաժնի ավելացմամբ: 90-ական թվականների սկզբներին դրանց տեսակարար կշիռները միագումարային արտադրության մեջ գրեթե հավասարվեցին: Բայց նկատվում էր նաև դեպի բնական մանրաթելից պատրաստված գործվածքները և կարի արտադրանքը «վերադառնալու» միտում: Բոլոր տեսակի գործվածքների համաշխարհային արտադրությունը 2001թ. հասել է շուրջ 100 մլրդ մ²: 1950 թ. գործվածք արտադրող երկրների «առաջին տասնյակի» մեջ մտնում էին ԱՄՆ-ը, ՅՆԴ-ը, ՅՊՆ-ը, ԳՖՅ-ը, Իտալիան և Լեհաստանը: Ներկայումս «առաջին հնգյակի» կազմը ընդհանուր առմամբ չի փոխվել, սակայն «երկրորդ հնգյակի» են մտել Կորեայի Հանրապետությունը և Բրազիլիան: Դա խոսում է այն մասին, որ մեծանում է նոր զարգացող երկրների բաժինը, որտեղ էժան աշխատուժի շնորհիվ տվյալ ճյուղն ունի բարձր մրցունակություն, որի շնորհիվ էլ աճում է առավել արագ տեմպերով: ՅՆԴԿաստանում, Պակիստանում, Բանգլադեշում, Սիրիայում, Թուրքիայում, Իրանում, Եգիպտոսում, Մարոկկոյում, Մեքսիկայում, Կոլումբիայում, Բրազիլիայում, Արգենտինայում այդ ճյուղը ձևավորվել էր դեռևս մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը և, հետևաբար, համարվում է ավանդական ճյուղերից մեկը: «Նոր արդյունաբերականացված երկրներում» ընդհակառակը, այն ծագել է վերջերս, սակայն նոր տեխնիկական հիմքի վրա:


Գործվածքի առանձին տեսակների արտադրության մեջ առաջին տեղը գրավել և գրավում են բամբակյա գործվածքները, որոնց թողարկումն աշխարհում աճել է 1950 թ. 35 մլրդ մ²-ից մինչև 2001թ. 73 մլրդ մ²: Առաջին տասնյակի մեջ մտնում են և զարգացած, և նոր զարգացող երկրները, բայց արտադրության մասշտաբներով նոր զարգացող երկրները խիստ առջևում են: Երկրորդ տեղը պատկանում է քիմիական մանրաթելերից պատրաստված գործվածքներին: Այստեղ ընդհանուր «գերակշռությունը» տնտեսապես զարգացած երկրների կողմն է, թեպետ Ասիայի նոր զարգացող երկրների դերը զգալիորեն աճել է և շարունակում է աճել: Երրորդ տեղում մետաքսյա, իսկ չորրորդ տեղում բրդյա գործվածքների արտադրությունն է, ընդ որում երկու դեպքում էլ առաջատար են տնտեսապես զարգացած երկրները:

Տեքստիլ արտադրանքի համաշխարհային շուկայում համամասնությունները մի քիչ այլ են: Արտահանման համար նախատեսված արտադրանքի (գործվածքների, կարի արտադրանքի) բաժինը նոր զարգացող երկրներում զգալիորեն բարձր է և հասնում է գրեթե 2/3-ի և նույնիսկ 3/4-ի: Ուստի բամբակյա գործվածքների արտահանման մեջ ՅՆԿԿ-ը, Պակիստանը, ՅՆԴԿաստանը, Չինաստանը, Եգիպտոսը, Թայվանը, Կորեայի հանրապետությունը, Բրազիլիան արդեն ստիպում են նահանջել Գերմանիային, Ֆրանսիային, Բելգիային, Ճապոնիային, իսկ քիմիական

մանրաթելերից պատրաստված գործվածքների արտահանման մեջ Կորեայի Հանրապետությունը, Թայվանը, Հոնկոնգը «նեղում» են ճապոնիային, Իտալիային, Չինաստանին, Ֆրանսիային, Նիդերլանդներին, ԱՄՆ-ին: Տեքստիլ արտադրանքի շուկայում սկսված այդ սուր մրցակցությունն ստացել է «տեքստիլ պատերազմ» անվանումը: 1980-1998 թթ. զարգացող երկրների ընդհանուր բաժինը մոտ 23%-ից հասել է 32%-ի (զծապատկեր 6, 10):

Չճապատկեր 6.10

Տեքստիլ ապրանքների համաշխարհային արտադրանքի մեջ երկրների բաժինների փոփոխությունները 1980-1998թթ. (%)



Բայց զարգացող երկրներում ինչպես ծանր և թեթև արդյունաբերության շատ ճյուղերում, տվյալ ճյուղում ևս ստեղծվում են խոշորագույն ընկերությունների մասնաճյուղեր: Պատճառը նույնն է՝ աշխատուժի ավելցուկը և էժանությունը:

Կարի արդյունաբերությունը տեղաբաշխված է համատարած՝ և՛ զարգացած և՛ նոր զարգացող երկրներում: Երկու խումբ երկրներում էլ այն ունի և՛ սպառման և արտահանման ուղղություններ: Նրանց արտադրանքի ծավալները քանակական առումով գրեթե հավասար են միմյանց, սակայն տարբերվում են որակով և ինքնարժեքով: Նոր զարգացող երկրների կարի զանգվածային արտադրանքը ոչ մոդայիկ է, բայց էժան՝ հումքի և աշխատուժի ցածր արժեքի պատճառով: Զարգացած երկրների կարի արդյունաբերության մեջ ձևավորվել են «նորաձևության օրենսդիրներ»՝ Նյու Յորքը, Փարիզը, Լոնդոնը, Հոնոլուլուի և մի շարք այլ կենտրոններ: Նույն վիճակում է

նաև տրիկոտաժի արդյունաբերությունը, որը արտադրանքի սպառման շուկայում մրցակից է կարի արդյունաբերությանը:

Կոշիկի արդյունաբերության հումքային բազան շատ բազմազան է (բնական կաշի, կաշվի արհեստական փոխարինիչ, տեքստիլ նյութեր, ռետին, պլաստմասա): Բազմազան է նաև կոշիկի նշանակությունը (ամենօրյա, տնային, մարզական և այլն): Առավել շքեղ և արժեքավոր են կաշվե կոշիկները, որոնց արտադրանքը 2001թ կազմել է 660 մլն գույգ, որը կազմում է կոշիկների համաշխարհային ընդհանուր արտադրանքի 13%: Կոշիկների բոլոր տեսակների համաշխարհային արտադրանքը 2001թ կազմել է մոտ 5 մլրդ. գույգ, որից 1.2 մլրդ. գույգը ռետինե կոշիկներն են:

Կոշիկների արտադրանքով աշխարհի առաջատար երկրներն են Չինաստանը, Իտալիան, Հոնկոնգը, Բրազիլիան:

6.13 ԱՆՆՈՒ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆՆՈՒ արդյունաբերությունն արտադրանքի ծավալով և զբաղվածների թվով արդյունաբերության առաջատար ճյուղերից է: Այն ընդգրկում է մեծ թվով ենթաճյուղեր և արտադրություններ, որոնք միմյանցից խիստ տարբերվում են տեղաբաշխման սկզբունքներով: Ըստ տեղաբաշխման առանձնահատկությունների առանձնացնում են հետևյալ խմբերը.

1. Ճյուղեր և արտադրություններ, որոնք մշակում են սակավ տրանսպորտահարմար և շուտ փչացող հումքը և թողարկում տրանսպորտահարմար, երկարատև պահպանման համար պիտանի արտադրանք (օրինակ՝ շաքար, պահածոներ, պանիր, գինի, կենդանական յուղ): Դրանք տեղաբաշխվում են հումքի արտադրության շրջաններում ու երկրներում. օրինակ՝ *շաքարի* արտադրությունը՝ Բրազիլիայում, Կուբայում, Ավստրալիայում, Ֆրանսիայում, ՀԱՀ-ում, Գերմանիայում, *գինու* արտադրությունը՝ Իտալիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում, Գերմանիայում, ԱՄՆ-ում, Արգենտինայում:

2. Ճյուղեր և արտադրություններ, որոնք տրանսպորտահարմար հումքից թողարկում են շուտ փչացող արտադրանք (օրինակ՝ հացի, հրուշակեղենի որոշ տեսակի արտադրությունը): Դրանք սովորաբար ձգտում են սպառման շրջանները:

3. Ճյուղեր, որոնք ձգտում են նավահանգստային քաղաքները և ներմուծովի հումքի բազայի վրա թողարկում են տրանսպորտահարմար արտադրանք (օրինակ՝ ալյուրի, մարգարինի, ձկնամթերքի արտադրությունը): Ներկայումս լայն տարածում ստացող կիսապատրաստուկների արտադրությունը հիմնականում կենտրոնացել է դրանց սպառման վայրերում:

Այսպիսով *հումքային բազան և շուկան հանդես են գալիս որպես սննդարդյունաբերության տեղաբաշխման հիմնական արտաքին պայմաններն են*: Այս ճյուղերը թեև գիտատար և բարդ արտադրություններ չեն, սակայն խոշոր ընկերությունները արտադրության ավտոմատացման և արտադրողականության

բարձրացման նպատակով լայնորեն օգտագործում են էլեկտրոնիկայի, կենսատեխնոլոգիայի և այլ գիտատար ճյուղերի նվաճումները:

Չանգվածային արտադրանք քողարկող խոշոր ձեռնարկությունների համար կարևորվում է հուճքի անխափան, ռիթմիկ մատակարարումը, ուստի դրանք ձևավորում են ագրոարդյունաբերական համալիրներ՝ արդյունաբերական ֆիրմաներում ստեղծելով մասնագիտացված գյուղատնտեսական ձեռնարկություններ:

Սննդի արդյունաբերության զարգացման վրա էական ազդեցություն է թողնում հասարակական սննդի համակարգի զարգացումը, որի միջոցով որոշ երկրներում (օրինակ ԱՄՆ-ում) իրացվում է պարենային ապրանքների 1/3-ը:

Սառնարանային նոր տեխնիկայի, սառցարան-մավերի, վագոնների և ավտոմեքենաների լայն օգտագործումը էապես բարձրացրեց մսի, ձկան և շուտ փչացող այլ մթերքների տրանսպորտահարմարությունը: **Դա** նվազեցրեց սպառման շրջաններում և կենտրոններում դրանց տեղաբաշխման նշանակությունը և ընդլայնեց մշակման վայրերի ընտրության հնարավորությունները:

Եական տեղաշարժեր եղան նաև ոչ ալկոհոլային խմիչքների տեղաբաշխման մեջ: Սննդային (մրգային) խտանյութերի (փոշի, օշարակ) արտադրությունը սովորաբար կազմակերպվում է հիմնականում հումքային բազաներում, իսկ բուն խմիչքների արտադրությունը և շաղցումը՝ սպառման վայրերում:

Ընդհանուր առմամբ սննդի արդյունաբերության զարգացման միտումները բույլ զարգացած երկրներում կրկնում են զարգացած երկրների բնորոշ գծերը, թեև այսօր. ի տարբերություն նվազ զարգացած երկրների, զարգացած երկրներում սննդի արդյունաբերության կառուցվածքում առաջատար դիրքեր է գրավում տարբեր տեսակի կիսաֆաբրիկատների արտադրությունը:

6.14 Արդյունաբերությունը և շրջակա միջավայրը

Արդյունաբերությունը շրջակա միջավայրի գլխավոր աղտոտողն է, որը ներգործում է աշխարհագրական թաղանթի բոլոր ոլորտների վրա: Առաջին հերթին դա վերաբերում է այնպիսի «կեղտոտ» արտադրություններին, ինչպիսիք են էներգետիկան, արդյունահանող, մետալուրգիական, քիմիական, թղթի-ցելյուլոզի արդյունաբերությունը:

Կոնդենսացիոն ջերմային էլեկտրակայանները, որոնք աշխարհի երկրների և տարածաշրջանների մեծ մասում հանդիսանում են էլեկտրաէներգետիկայի հիմքը, ամենաբացասական ազդեցություն են թողնում մթնոլորտի վրա՝ արտանետելով այնպիսի վնասակար նյութեր, ինչպիսիք են ծծմբային գազը, ազոտի օքսիդը, ածխածնի օքսիդը և բենզոպիրենը: Առաջին հերթին դա վերաբերում է ածուխ օգտագործող ջեկ-երին, որոնք երկու անգամ ավելի շատ ծծմբային գազ են արտանետում, քան նավթով աշխատող ջեկ-երը, և հարյուր անգամ ավելի շատ, քան գազով աշխատող ջեկ-երը: Բացի այդ, ածխով աշխատող ջեկ-երը գոյացնում են աերոզոլի մեծ քանակություն, փոշու մանր մասնիկներ: Բոլոր այդ արտանետում-

ները հանգեցնում են սրտի հիվանդությունների, էմֆիզեմայի (թոքերի հիվանդություն), խրոնիկական բրոնխիտի: Հատկապես շատ վնասակար է բենզոպիրենը, որը կարող է հարուցել բաղկեղային հիվանդություններ: Նախկին ԽՍՀՄ-ում ջեկ-երը տարեկան մթնոլորտ էին արտանետում ավելի քան 100 մլն տ գազանման թունավոր նյութեր և մի քանի տասնյակ մլն տ կարծր մասնիկներ: Դրանք հանգեցնում են այն ջրամբարների և ջրահոսքերի ջերմային խիստ աղտոտման, որոնց մեջ թափվում են ազրեգատները հովացնելու համար օգտագործված տաքացած ջրերը:

Ատոմային էլեկտրակայանների բացասական ազդեցությունը նույնպես առաջին հերթին անդրադառնում է մթնոլորտի վրա: Ճիշտ է, ակտիվորումալ աշխատանքի պայմաններում, վթարի հետևանքով շրջակա միջավայրի ռադիոակտիվ աղտոտման հավանականությունը մեծ չէ: Ամերիկյան մասնագետների կողմից 70-ական թթ.-ին այն գնահատվել է որպես՝ միլիոն տարին մեկ անգամ: Սակայն նման կանխատեսումը հազիվ թե կարելի է իրական համարել և հավատալ, որ հաջորդ Չեռնոբիլը կլինի միլիոն տարի անց: Բացի այդ, տարեցտարի ավելի ճգնաժամային և թանկարժեք է դառնում ռադիոակտիվ թափոնների թաղման խնդիրը: Ավելի հաճախ այդ նպատակի համար օգտագործվում են աղային գետնանցքները, որտեղ գրունտային ջրեր չկան: Իսկ օվկիանոսային իջվածքներում դրանց թաղումը բնապահպանական տեսանկյունից, թերևս, ավելի մեծ վտանգ է ներկայացնում, որովհետև ռադիոակտիվ թափոնների լրիվ քայքայումը տևում է շատ դարեր:

Ինչ վերաբերում է ջրեկ-ներին, ապա մինչև վերջերս դրանց բնապահպանական գնահատման ժամանակ շեշտը դեռևս դրվում էր միայն շրջակա միջավայրի համար «մաքրության» և «անվտանգության» վրա: Քիչ ուշադրություն էր դարձվում հարթավայրային գետերի վրա խոշոր հիդրոհանույցների կառուցման մի շարք բացասական հետևանքների վրա: Դրա ամենավառ օրինակը նախկին ԽՍՀՄ-ում խոշոր ջրատեխնիկական կառույցների ստեղծումն է: Սովորաբար հպարտորեն գրվում էր այն մասին, որ երկրում ստեղծված է ավելի քան 4 հազար ջրամբար, և դրանց թվում խոշորները 234-ն են՝ յուրաքանչյուրը ավելի քան 100 մլն մ³ տարողությամբ, սակայն չէր նշվում, որ դրանց կառուցման համար ոչնչացվել են միլիոնավոր հեկտարներ գյուղատնտեսական հողահանդակներ, անտառներ և այլ հողատարածքներ, վերացել, տեղափոխվել են տասնյակ քաղաքներ, հազարավոր գյուղեր ու ավաններ, վերաբնակեցվել է մոտ 1.1 մլն բնակիչ:

Երկրակեղևի վրա առավել բացասական ազդեցություն է գործում լեռնահանքային արդյունաբերությունը: Նախկին ԽՍՀՄ-ում 80-ական թթ. լեռնարդյունահանող ձեռնարկությունների հանքերը զբաղեցնում էին 25 հազար կմ², իսկ ԱՄՆ-ում՝ էլ ավելի մեծ տարածք: Միայն նախկին ԽՍՀՄ ածխի արդյունաբերության մեջ հանքերի հողաշեղջերում և հանքահորերում կուտակվել են 20 մլրդ մ³-ից ավել ապարներ: Դրա հետ մեկտեղ, լեռնահանքային արդյունաբերության ճյուղերն աղտոտում են ջրոլորտը և մթնոլորտը: Հանքահորային ջրերը, նավթահորերի հորատման լուծույթները, ինչպես նաև վթարային արտանետումները, թափանցում են ինչպես ստորերկրյա, այնպես էլ մակերևութային ջրերի մեջ: Դատարկ ապարների տեղափոխումները նույնպես հանույթի շրջաններում խախտում են բնական ջրաբանական

ռեժիմը: Արդեն խոսվել է այն մասին, որ համաշխարհային օվկիանոսի համար փոքր վտանգ չեն ներկայացնում ծովային հորատման տախտակամածների վթարները:

Չարդեր ինքնաստուգման համար

1. Արդյունաբերության ճյուղերը դասակարգել ըստ զարգացման տեմպերի, ճյուղային կառուցվածքի տարբերությունները:

2. Բնութագրել արդյունաբերության տեղաբաշխման մոդելների էությունը: Արդյունաբերության ճյուղերը խմբավորել ըստ արդյունաբերության տեղաբաշխման գործոնների:

3. Միմյանց հետ համեմատելով տնտեսական առումով գնահատել արդյունաբերության տարածքային կազմակերպման ձևերը:

4. Բացահայտել արդյունաբերության կառուցվածքում մշակող և արդյունահանող ճյուղերի հարաբերակցությունը, տարբերությունները, պատճառները:

5. Ինչպիսի՞ փոփոխություններ են տեղի ունենում աշխարհի մշակող արդյունաբերության արտադրանքի կառուցվածքում արդյունաբերականացված և նոր զարգացող երկրների տիպաբանական և տարածաշրջանային խմբերի բաժինների միջև և բացահայտել դրանց պատճառները:

6. Ո՞ր ցուցանիշներն են առավել համակողմանի ու լրիվ պատկերացում ձևավորում վառելիքատներգետիկ արդյունաբերության զարգացման վերաբերյալ:

7. Վառելիքատներգետիկ արդյունաբերության ինչպիսի՞ փոփոխություններ է առաջ բերել գտի-ն:

8. Բնութագրել վառելիքատներգետիկ արդյունաբերության տեղաբաշխման փոփոխությունները ու բացահայտել դրանց պատճառները:

9. Բնութագրել էներգետիկական արդյունաբերության հեռանկարային զարգացման ուրվագիծը:

10. Ինչո՞վ է պայմանավորված նավթարդյունաբերության արագ զարգացումն աշխարհում:

11. Նավթարդյունաբերության և նավթավերամշակման արդյունաբերության տեղաբաշխման ինչպիսի՞ փոփոխություններ են եղել, որո՞նք են դրանց պատճառները:

12. Ածխահանույթի զարգացման և տեղաբաշխման ինչպիսի՞ փոփոխություններ են տեղի ունենում և ի՞նչ պատճառով:

13. Բացահայտե՞ք տնտեսության մեջ էլեկտրատներգետիկայի առանձնահատուկ դերը, նշե՞ք դրա կառուցվածքային փոփոխություններն ու դրանց պատճառները:

14. Ինչպե՞ս է դրսևորվում էլեկտրատներգետիկայի վրա գտի ազդեցությունը:

15. Բնութագրել էներգետիկայի և շրջակա միջավայրի միջև առաջացող էկոլոգիական խնդիրները:

16. Որո՞նք են սև և գունավոր մետաղածուլության տեղաբաշխման փոփոխությունները, և որո՞նք են դրանց պատճառները:

17. Որո՞նք են մեքենաշինության կառուցվածքի և ենթաճյուղերի ու արտադրությունների տեղաբաշխման փոփոխությունների պատճառները:

18. Բացահայտել գտի ազդեցությամբ քիմիական արդյունաբերության կառուցվածքային և տարածական փոփոխությունները՝ նշելով դրանց պատճառները:

19. Որո՞նք են թեթև արդյունաբերության հումքային կառուցվածքում և տեղաբաշխման մեջ տեղի ունեցած փոփոխությունները:

20. Բացահայտել սննդի արդյունաբերության առանձին ենթաճյուղերի ու արտադրությունների տեղաբաշխման սկզբունքներն ու տեղաբաշխման գործոնները և բնութագրել դրանց փոփոխությունները:

21. Բացահայտել շրջակա միջավայրի վրա արդյունաբերության առանձին ճյուղերի բացասական ազդեցությունը և նշել դրա վերացման ուղիները:

**ԳԼՈՒԽ 7.
ԱՇԽԱՐՀԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
7.1 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԾԵՐԸ**

Գյուղատնտեսության զարգացումն ու պարենային հիմնախնդիրը

Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ուսումնասիրության օբյեկտներից մեկի գյուղատնտեսության կարևորությունը պայմանավորված է այն մեծ դերով, որ կատարում է այդ ճյուղն ընդհանրապես համաաշխարհային տնտեսության և, մասնավորապես՝ տարբեր տիպի առանձին երկրների ազգային տնտեսության մեջ:

Հայտնի է, որ ընդհանուր առմամբ գյուղատնտեսությունն աշխարհի բնակչությանը մատակարարում է անհրաժեշտ պարենի մեծ մասը¹, ինչպես նաև թեթև արդյունաբերության մեջ օգտագործվող հումքի զգալի մասը²: Սակայն գյուղատնտեսության նշված դերի նշանակությունը ժամանակի ընթացքում փոփոխվում է: Նրա պարենի մատակարարի գործառույթը դեռևս հիմնականում պահպանում է իր բացառիկ կարևորությունը, իսկ երկրորդ գործառույթի նշանակությունը մասամբ նվազել է քիմիական արդյունաբերության արագ զարգացման շնորհիվ:

Ժամանակի ընթացքում փոփոխվում է նաև առանձին երկրների ազգային տնտեսության մեջ գյուղատնտեսության ունեցած դերը: Սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրների ազգային տնտեսության մեջ գյուղատնտեսությունը կատարում է տարբեր դեր:

Բարձր զարգացած (ինդուստրիալ և հետինդուստրիալ) երկրների համախառն ներքին արդյունքում (հնա) գյուղատնտեսության բաժինը ցածր է, ոչ արտադրական ոլորտի ճյուղերի ու արդյունաբերության համեմատաբար բարձր զարգացման հետևանքով:

Ինդուստրիալ և հետինդուստրիալ երկրների հնա-ում գյուղատնտեսության ցածր տեսակարար կշիռն ամենևին չի ենթադրում այս բնագավառի թույլ զարգացումը: Նկատի ունենալով այն փաստը, որ զարգացած երկրներում հնա-ն չափազանց մեծ է, կարելի է պատկերացնել, թե որքան մեծ են գյուղատնտեսական արտադրության ծավալները³:

Նոր զարգացող երկրներում տնտեսության գլխավոր ճյուղի գյուղատնտեսության բաժինը հնա-ում, ինչպես նաև արտահանության կառուցվածքում ընդհակառակը, համեմատաբար մեծ է:

¹ Պարենի մյուս փոքր մասը ստացվում է համաաշխարհային օվկիանոսից:

² Թեթև արդյունաբերությանը անհրաժեշտ հումքի մյուս մասը մատակարարում է քիմիական արդյունաբերությունը:

³ Օրինակ ԱՄՆ-ի հնա-ն կազմում է շուրջ 7 տրիլիոն դոլար, որի 1,7%-ը բացարձակ թվով կազմում է 120 մլրդ դոլար:

Աղյուսակ 7.1
Գյուղատնտեսության բաժինը մի քանի երկրների համախառն ներքին արդյունքում (1999թ. %-ով)

Ինդուստրիալ երկրներ	%	Անցումային տնտեսության երկրներ	%	Թույլ զարգացած երկրներ	%
Նիդերլանդներ	3.4	Ռուսաստան	9.2	Սոմալի	62.5
Ճապոնիա	2.1	Ուկրաինա	14.6	Տանզանիա	52.0
Ֆրանսիա	2.4	Բելառուս	13.7	Բուրունդի	51.2
ԱՄՆ	1.7	Ադրբեջան	33.7	Ուզանդա	48.6
Մեծ Բրիտանիա	1.7	Ուզբեկստան	27.9	Բուրկինա ֆասո	46.9
Գերմանիա	1.0	Հայաստան	28.3	Եթովպիա	46.7

Գյուղատնտեսությունն ըստ էության, այս տիպի երկրների մեծ մասի այն բազան է, որի վրա է հենվում երկրի ինդուստրացումը: Այս նկատառումով էլ նոր զարգացող երկրների մեծ մասն առաջնահերթ ու ռազմավարական նշանակություն է տալիս գյուղատնտեսության զարգացմանը:

Սակայն, չնայած վերջին տասնամյակներում նոր զարգացող երկրներում գյուղատնտեսության արտադրանքի աճի համեմատաբար բարձր տեմպերին, աշխարհի գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը դեռևս բաժին է ընկնում զարգացած երկրներին: Այսպես, օրինակ, 1980 թ. վերջիններին բաժին էր ընկնում աշխարհի պարենի արտադրանքի 85.5, իսկ 1996 թ.՝ 81.1%-ը:

Աղյուսակ 7.2
Գյուղատնտեսական արտադրության աճի գործակիցը 1992-1996թթ. (1989-1991թթ = 100)

Նոր զարգացող երկրներ	Պարենի արտադրություն		Անցումային տնտեսության երկրներ	Պարենի արտադրություն		Զարգացած երկրներ	Պարենի արտադրություն	
	Գ/տնտ. ընդ. արտադր.	Պարենի արտադրություն		Գ/տնտ. ընդ. արտադր.	Պարենի արտադրություն		Գ/տնտ. ընդ. արտադր.	Պարենի արտադրություն
Նիդերլանդական Անտիլյան կղզիներ	201	201	Հայաստան	86	87	ԱՄՆ	103	103
Ալժիր	129	131	Ադրբեջան	59	56	Կանադա	114	114
Մնգուլ	133	134	Վրաստան	60	67	Ֆրանսիա	104	104
Գանա	149	146	Ռուսաստան	63	64	Գերմանիա	92	92
Նիգերիա	135	136	Ուկրաինա	73	73	Մեծ Բրիտանիա	103	103
Իրան	138	138	Ուզբեկստան	76	81	Ճապոնիա	94	94

Այդուհանդերձ աշխարհի ժամանակակից գյուղատնտեսական արտադրությունն ի վիճակի չէ լիովին բավարարել մոլորակի բնակչության պարենի պահանջարկը, որի հետևանքով մարդկանց մի մասը¹ դեռևս թերսնվում է, իսկ մյուս մասն էլ ժամանակ առ ժամանակ հայտնվում է նույնիսկ սովահարության վիճակում: Դրա բազմաթիվ պատճառներից գլխավորները հետևյալ երկուսն են: Արդյունաբերական բազմաթիվ պատճառներից գլխավորները հետևյալ երկուսն են: Արդյունաբերական արտադրության համեմատությամբ գյուղատնտեսականի դանդաղ աճը, որը պայմանավորված է վերջինիս բնական հիմքի հողային ֆոնդի սահմանափակությամբ: Երկրորդ պատճառն աշխարհի բնակչության աճի կտրուկ արագացումն է: «Ժողովրդաբերկրորդ աշխարհամարտից հետո ընկած ժամանակահատվածում: «Ժողովրդաբերկրան պայթյունը» կլանում է գյուղատնտեսական արտադրության աճը, որի հետևանքով աշխարհի առավել նվազ զարգացած երկրներում բնակչության մեկ շնչին ընկնող օրական կալորիաների թիվը նույնիսկ նվազում է, իսկ մյուս զարգացող երկրներում թեև աճում է, սակայն չափազանց դանդաղորեն²:

Պարենային համաճորակային հիմնախնդրի լուծման ուղիների որոշման ու գործնական քայլերով զբաղվում է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (FAO): Այն հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է գլխավոր պարենային կուլտուրաների հացահատիկի արտադրության ավելացման վրա: Այս ուղղությամբ զարգացող երկրներում իրականացվող ագրոտեխնիկական ու սոցիալ-տնտեսական միջոցառումների ամբողջությունն անվանում է «կանաչ հեղափոխություն»: Ձուգահեռաբար ՄԱԿ-ի Քարտուղարության Տնտեսական ու սոցիալական Հարցերի Դեպարտամենտն իր ուշադրությունը կենտրոնացնում է բնակչության աճի դանդաղեցման նպատակի վրա: Նորագույն ճշտված տվյալների համաձայն երկրագնդի բնակչության աճը XX դարի վերջին ավելի դանդաղ է՝ դրա վերաբերյալ տարիներ առաջ կատարված կանխագուշակածի համեմատությամբ³:

Ինքնին հասկանալի է, որ նման իրավիճակում համեմատաբար մեծանում է պարենային հիմնախնդրի լուծման հավանականությունը:

¹ Քրոնիկական սովյալների ու թերսնվողների քանակը գնահատվում է շուրջ 800 մլն: Յուրաքանչյուր տարի սովի պատճառով մահանում է մինչև 5 տարեկան հասակի 1.3 մլն երեխա: (Dimensions of Need. An Atlas of Food and Agriculture. FAO, Rome, 1995.)

² ՄԱԿ-ի փորձագետները հաշվարկել են, որ բնակչության պարենային իրավիճակը բարելավելու համար անհրաժեշտ է բնակչության թվի 1% աճի դիմաց պարենի արտադրությունը ավելացնել մոտ 2.4%-ով:

³ Տես Народонаселение мира 2000 г. UNFPA фонд ООН в области народонаселения, Нью-Йорк, 2000 г.

7.2 Գյուղատնտեսական արտադրության զարգացման ուղղությունները

Գյուղատնտեսական արտադրությունն արդյունաբերականի նման նույնպես զարգանում է փուլերով: Գիտության ու տեխնիկայի նվաճումների շնորհիվ, տարածական ընդարձակման, սահմանափակության պատճառով և աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով գյուղատնտեսական արտադրությունը հետզհետե դառնում է ավելի լարված աշխատանքային բնագավառ: Աշխարհում, ընդհանուր առմամբ, ինչպես նաև որոշ երկրներում զուգակցվում են գյուղատնտեսական արտադրության երկու ուղղություններ՝ **էքստենսիվ և ինտենսիվ**:

էքստենսիվ ուղղությունն ավելի հին է և ներկայումս բնորոշ է գլխավորապես նոր զարգացող, հատկապես Աֆրիկյան երկրներին: Խիտ բնակեցված երկրներում ցանքերի համար պիտանի ազատ հողերի սակավության¹ հետևանքով գյուղատնտեսական արտադրանքի էքստենսիվ աճի հնարավորությունները ներկայումս արդեն խիստ սահմանափակ են: Ազատ հողատարածություններ դեռևս գոյություն ունեն Արևադարձային Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի որոշ երկրներում: Սակայն վերջիններս կապիտալ ներդրումների սահմանափակ հնարավորությունների պատճառով ձեռնամուխ չեն լինում այդ հողերի յուրացմանը, քանի որ դա, խոսքի հողերի հերկումից բացի ներառում է նաև հողերի բարելավման², տրանսպորտի, մարդկանց բնակեցման, ջրամատակարարման հետ կապված և այլ ծախսերը:

Գյուղատնտեսական արտադրության առավել արդյունավետ, փորձված ու հեռանկարային ուղղությունը **ինտենսիվ** է: Այն ներառում է ագրոտեխնիկայի, բույսերի պաշտպանության քիմիական միջոցների (թունաքիմիկատների) և հողի պարարտացման միջոցների լայն ներդրում և այլ, այնպիսի միջոցառումներ, որոնց շնորհիվ բարձրանում է բույսերի բերքատվությունը (1 հեկտար հողից ստացվող բերքի տարեկան քանակը) և գյուղատնտեսական անասունների մթերատվությունը (մեկ անասունի հաշվով ստացվող մթերքի, օրինակ մսի, ձվի, բրդի, կաթի տարեկան քանակը):

Գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացմանն էապես նպաստում է նաև նրա ինտեգրացումն արդյունաբերության ու գիտության հետ: Դրա շնորհիվ գյուղատնտեսական արտադրությունն աստիճանաբար դառնում է արդյունաբերական արտադրության մի տարատեսակ: Նվազում է միավոր արտադրանքի վրա ծախսվող աշխատաժամանակը (աշխատատարությունը)³:

¹ Աշխարհում չօգտագործվող վարելահողերի բաժինը գնահատվում է շուրջ 5%:

² Հողաբարելավումը ենթադրում է հողերի չորացումը, ոռոգումը, քարազերծումը, կրայնացումը և այլն:

³ Այսպես, օրինակ, Գերմանիայում 1950 թ. մեկ կիլոգրամ շաքարի արտադրության համար միջին հաշվով ծախսվում էր 56 ռուպե, իսկ 1990թ. ընդամենը 6 ռուպե, մեկ կիլոգրամ մսի արտադրության համար, համապատասխանաբար, 2 ժամ 40 ռուպե և մոտ 1 ժամ աշխատաժամանակ:

Արևմտյան Եվրոպայի երկրներում արդեն սովորական երևույթ են դարձել անասնապահական ապրանքային խոշոր տնտեսությունների հայտարարությունները համակարգչային տեխնիկայի մասնագետների պահանջի վերաբերյալ:

Գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման գործում մեծ է գեներտիկա գիտության օրենքների վրա հենված արհեստական սելեկցիայի¹ (ընտրության) դերը:

Սելեկցիայի շնորհիվ արտադրության մեջ ներդրվում են օգտակար ժառանգական հատկանիշներով օժտված մշակաբույսերի ու անասունների տեսակներ: Հատուկ ուշադրություն է դարձվում մշակաբույսերի ցրտադիմացկունության, չորադիմացկունության, անասունների բարձր մթերատվության ու հիվանդությունների նկատմամբ կայունության հատկանիշներին:

Աշխարհի որոշ երկրներում ձևավորվել են մասնագիտացված սելեկցիոն տնտեսություններ, որոնք ստեղծել են մշակաբույսերի ու գյուղատնտեսական անասունների նոր տեղական տեսակներ:

Օրինակ Մեքսիկայում ստեղծել են կարճացողուն ցորենի² բարձրարժեք տեսակ, որի սերմերն արտահանվում են աշխարհի շատ երկրներ: Ցորենի այս տեսակի ներդրման շնորհիվ հնարավոր եղավ լուծել Հնդկաստանի բնակչությանը ցորենով բավարարելու խնդիրը:

Գյուղատնտեսության, արդյունաբերության ու տրանսպորտի ինտեգրացման արդյունքում զարգանում է գյուղատնտեսական արտադրությանը անհրաժեշտ նյութերի մատակարարման ու արտադրանքի իրացման հետ առնչվող գործունեության բնագավառը այսպես կոչված **ագրոբիզնեսը**:

Միաժամանակ այս գործընթացն առաջ է բերում մանր ու միջին մեծության ագարակների սնանկացում, դրանց թվի կրճատում և ապրանքային տնտեսությունների խոշորացում, այսինքն գյուղատնտեսական արտադրության համակենտրոնացում: Օրինակ, XX դ. սկզբին ԱՄՆ-ում կար 6 մլն ագարակ, իսկ ներկայումս նրանց թիվը կրճատվել է 3 անգամ: Յուրաքանչյուր ագարակի միջին հաշվով բաժին է ընկնում 200 հա հող, իսկ իրացված արտադրանքի տարեկան ծավալը կազմում է գրեթե 70 հազ. դոլար:

Սակայն գործնականում ԱՄՆ-ի գյուղատնտեսական արտադրանքի կեսը բաժին է ընկնում շուրջ 108 հազար խոշոր ագարակների (ընդհանուր թվի մոտ 5 %): Դրանց շարքում առանձնանում են գերխոշոր տնտեսությունները (ընդհանուր թվի 1.3%-ը), որոնցից յուրաքանչյուրին բաժին է ընկնում միջին հաշվով ավելի քան 1400 հա, իսկ տարեկան իրացվող արտադրանքի ծավալն անցնում է 500 հազար դոլարից³:

¹ Հազարամյակների ընթացքում գյուղատնտեսության մեջ իրագործվել է բնական սելեկցիա:

² Կարճացողուն ցորենի հասկերը ավելի մեծ են, բարձր բերքատու: Կարճ ցողունի շնորհիվ բույսերը գրեթե չեն տուժում քամուց և անձրևից:

³ Современные США, М., 1983.

Սակայն զարգացած երկրներում գյուղատնտեսական արտադրության համակենտրոնացումը տարածական (աշխարհագրական) առումով ոչ համաչափ է ընթանում: Այս գործընթացն ավելի արագ է ընթանում համեմատաբար երիտասարդ և միաժամանակ հողային ռեսուրսներով լավ ապահովված այնպիսի երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Կանադան, Ավստրալիան: Գյուղատնտեսական արտադրության զարգացման այսպիսի ուղին տնտեսագիտական գրականությունում անվանվում է «ամերիկյան»:

Գյուղատնտեսական արտադրության համակենտրոնացման գործընթացը հին երկրներում (օրինակ Ֆրանսիայում, Գերմանիայում, Ճապոնիայում), որոնցում արտադրության խիստ համակենտրոնացման հնարավորությունները փոքր են, ընթանում է դանդաղորեն և բարդություններով: Սակավաժողության պատճառով այստեղ արտադրությունը հիմնականում կենտրոնացված է միջին և մանր չափի տնտեսություններում: Գյուղատնտեսական արտադրության զարգացման այս ուղին կոչվում է «պրուսական»¹:

Գյուղատնտեսական արտադրության բնութագիրն այլ է նոր զարգացող երկրներում, որոնք շնայած ընդհանուր անվանմանը, աչքի են ընկնում ոչ միատեսակությամբ: Ի տարբերություն զարգացած երկրների, որոնց գյուղատնտեսական արտադրությունում մենատեր են կապիտատալիստական արտադրական հարաբերությունները, նոր զարգացող երկրների գյուղատնտեսությանը բնորոշ է արտադրական հարաբերությունների մեծ բազմազանությունը **բազմակացութաձևությունը**: Նոր զարգացող երկրներում տնտեսվարման սաղմնային մակարդակի շուկայական հարաբերությունների հետ մեկտեղ գոյություն ունեն արխայիկ, նույնիսկ բնամթերային ագրարային հարաբերություններ, որոնք խանգարում են գյուղատնտեսական արտադրության աճին, դրա արդյունավետության բարձրացմանը:

Բացասական դեր է խաղում նաև սակավաժողությունը, որը պահպանվում է, նույնիսկ, խորանում է բնակչության բնական բարձր աճի հետևանքով: Օրինակ Սոմալիում 1996 թ. մեկ քառ. կմ ցանքատարածությանը միջին հաշվով ընկնում էր մոտ 900 մարդ, Բուրանում մոտ 1300 մարդ, իսկ եգիպտոսում ավելի քան 2200 մարդ:

Զարգացող որոշ երկրների տարածքում զաղութատեր պետությունների տնտեսության թելադրանքով ժամանակին ձևավորվել են խոշոր ապրանքային, արտահանման ուղղվածության տնտեսություններ: Այդ երկրների մեծ մասում ձևավորվել է մենամշակաբուսային (մոնոկուլտուրային) գյուղատնտեսություն, որը հաճախ է տուժում բնության աղետներից (օրինակ՝ երաշտից), ինչպես նաև համաշխարհային շուկայի իրավիճակից:

Դրա վառ օրինակն է Կուբան աշխարհի շաքարեղեգի երբեմնի խոշորագույն մշակողն ու շաքար արտադրողը: 1959 թ. սոցիալիստական հեղափոխությունից հետո ԱՄՆ-ը կուբայական արտադրության շաքարի գլխավոր ներկրողը, իրաժարվեց (տնտեսական բոյկոտ հայտարարեց) շաքար գնելուց և Կուբան, որպես մոնո-

¹ Պրուսիան Գերմանական պետության, իսկ հետագայում երկրամասի անվանումն էր (մինչև 1945թ.):

կուլտուրային երկիր, հայտնվեց ծանրագույն վիճակում միլիոնավոր տոննաներով չվաճառված շաքարի առնչությամբ:

Համանման վիճակներից խուսափելով նոր զարգացող երկրները ձգտում են իրենց գյուղատնտեսությունը դարձնել բազմաճյուղ, այսինքն բարդացնել դրա ճյուղային կառուցվածքը:¹

Նոր զարգացող երկրների գյուղատնտեսական արտադրության ցածր արդյունավետությունը պայմանավորված է նաև դրա մեքենայացման ցածր աստիճանով: Աշխարհի գյուղատնտեսության մեջ օգտագործվող մեքենաների ավելի քան 2/3-ը բաժին է ընկնում զարգացած երկրներին: Իսկ նոր զարգացող երկրներում տեղի է ունենում հսկայանասշտաբ գյուղատնտեսության ոչ թե համատարած (ինչպես զարգացած երկրներում), այլ «ընտրովի մեքենայացում»: Մեքենայացվում են գյուղատնտեսական արտադրության միայն այն գործողությունները, որոնք անհնար է կատարել պահանջվող ժամանակահատվածում ու առանց մեքենաների կիրառության, կամ էլ այն գործողությունները, որոնց մեքենայացման շնորհիվ մի կողմից կարելի է ստանալ ավելի շատ արտադրանք, մյուս կողմից էլ չի կրճատվի աշխատատեղերի թիվը:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ինչպես նաև նոր զարգացող երկրների գյուղատնտեսական աշխատուժի չափազանց էժանությունը, զարգացող երկրների մեծ մասի կառավարությունները ձեռքի աշխատանքի կիրառման վրա հիմնված ցածր արդյունավետ արտադրությունը գերադասում են մեքենայացված, բարձր արդյունավետ արտադրությունից:

Մեքենայացմանը խանգարող հանգամանք են նաև սակավահող երկրներում հողակտորների չնչին չափերը, ինչպես նաև գյուղացիների անվճարունակությունը:

Նոր զարգացող երկրների գյուղատնտեսական արտադրության արդյունավետության ցածրության կարևոր պատճառներից է քիմիական պարարտանյութերի անբավարար օգտագործումը: Օրինակ՝ սակավահող և ինտենսիվ գյուղատնտեսական արտադրության այնպիսի երկրներում, ինչպիսին է ճապոնիան, մեկ հա-ի հաշվով տարեկան օգտագործվում է 300-ից 500 կգ, հողային ռեսուրսներով ապահովված երկրներում՝ 100 կգ, մինչդեռ էքստենսիվ, հետամնաց ագրարային երկրներում ընդամենը 1 կգ քիմիական պարարտանյութ:

Վերջին տասնամյակներում, պարենի մեջ վնասակար նյութերի թույլատրելի սահմանը չգերազանցելու նպատակով, բարձր զարգացած երկրներում կրճատվում է քիմիական պարարտանյութերի օգտագործումը: Բույսերի պաշտպանության քիմիական միջոցներին աստիճանաբար փոխարինում են կենսատեխնոլոգիական միջոցները: Օրինակ՝ գյուղատնտեսական վնասատու միջատներին այժմ ոչնչացնում են ոչ թե թունաքիմիկատների, այլ միջատների² օգնությամբ, որոնք խժռում են վնասակար միջատների ձվերը:

7.3 Գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխումը

Գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխումը, հակառակ տարածված կարծիքի, իրականում չափազանց բարդ է այն պատճառով, որ այդ տեղաբաշխման վրա ազդում են բազմաբնույթ գործոններ: Դրանք պայմանականորեն կարելի է դասակարգել 2 խմբում. **բնական և սոցիալ-տնտեսական գործոններ:**

Գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման վերլուծության հիմքում պետք է դնել մեթոդական տեսակետից որոշիչ հետևյալ հարցը. տվյալ տարածաշրջանի (երկիր, տարածություն, աշխարհ) գյուղատնտեսության կամ դրա որևէ ենթաճյուղի տեղաբաշխումը ի՞նչ գործոններով է պայմանավորված:

Գիտնականները գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման ուսումնասիրությունը կատարում են երկու մոտեցմամբ: Առաջին մոտեցմամբ վերլուծվում են բնական պայմանների այն առանձնահատկությունները, որոնք կամ նպաստում կամ էլ խոչընդոտում են գյուղատնտեսական արտադրության զարգացմանն ու տեղաբաշխմանը, իսկ երկրորդ մոտեցմամբ՝ գյուղատնտեսական արտադրության զարգացման միտումների ու հեռանկարների լուսաբանման ժամանակ հիմնական ուշադրությունը կենտրոնացնում են սոցիալական, տնտեսական, իսկ երբեմն (անհրաժեշտության դեպքում) նաև հոգեբանական ու քաղաքական գործոնների վրա:

7.4 Գյուղատնտեսական արտադրության զարգացման ու տեղաբաշխման բնական պայմանների ու ռեսուրսների գնահատումը

Գյուղատնտեսական արտադրության հիմնական տարբերությունը արդյունաբերականից այն է, որ գյուղատնտեսության մեջ *հողը ոչ միայն աշխատանքի առարկա*, այլ նաև *արտադրության հիմնական միջոց է*: Քանի որ հողը բնական պայմանների երկարատև ազդեցության արդյունք է, ապա այստեղից բխում է, որ գյուղատնտեսական արտադրության զարգացման ու տեղաբաշխման գործում հատուկ դեր են կատարում բնական պայմանները:

Հասարակության զարգացման, տեխնիկայի կատարելագործման ընթացքում բնական պայմանների դերը ամենևին չի փոքրանում, այլ բարդանում են հասարակության և բնության կապերը:

Նախկինում՝ արտադրողական ուժերի, հատկապես ագրոտեխնիկայի ու տրանսպորտի անբավարար զարգացման հետևանքով գյուղատնտեսությունը մեծ կախման մեջ էր բնական պայմաններից: Արտադրողը ստիպված էր սահմանափակվել միայն խիստ անհրաժեշտ որոշակի մթերքների արտադրությամբ, նույնիսկ եթե աշխատանքի արտադրողականությունը շատ ցածր էր¹: Միաժամանակ նա ստիպ-

¹ Այս գործընթացը, ինչպես արդեն գիտեք, անվանվում է դիվերսիֆիկացիա:

² Այս միջատները բազմացվում են լաբորատորիաներում հատուկ այդ նպատակով: Դրանք բույսերին մեծ վնաս չեն պատճառում:

¹ М. Вольф, Ю. Дмитриевский. География мирового сельского хозяйства. М., 1981, с. 13.

ված էր արտադրության տեղաբաշխման արեալը սահմանափակել միայն այն տեղանասերով, որոնց բնական պայմանները համապատասխանում էին տվյալ արտադրության համար անհրաժեշտ պայմաններին¹:

Գյուղատնտեսական արտադրության զարգացման ու տեղաբաշխման վրա տարբեր չափերով ազդում են բնության բոլոր տարրերը՝ և՛ առանձին-առանձին, և՛ իրենց միասնությամբ:

Թվում է, թե գյուղատնտեսական արտադրության հետ արտաքինից համեմատաբար թույլ է կապված **տարածքի երկրաբանական կառուցվածքը**: Սակայն այդ կապն այնքան էլ թույլ չէ, եթե հիշենք, որ տարբեր շրջաններում գտնվում են հանքային հումքի պաշարներ (օրինակ ապատիտներ, ֆոսֆորիտներ, կալիումական ու կերակրի աղեր, ցեոլիտներ) որոնք օգտագործվում են գյուղատնտեսության մեջ: Երկրակեղևի ապարների բա-դադրությամբ պայմանավորված են հողերի տեսակները (հիմնային, թթվային) և դրանով պայմանավորված հողաբարելավման (օրինակ կրայնացման, հողալվացման) անհրաժեշտությունը:

Ի վերջո, չպետք է մոռանալ նաև այն փաստը, որ երկրաբանական կառուցվածքի արդյունք է **մակերևույթը (ռելիեֆը)**, որը գյուղատնտեսական արտադրության զարգացման ու տեղաբաշխման վրա ազդում է և ուղղակիորեն, և անուղղակիորեն: Այդ ազդեցությունն արտահայտվում է կլիմայով, բուսականության մեջ և հողային ծածկով, ներքին ջրերով և բնության այլ բաղադրատարրերով, որոնք էլ իրենց հերթին ազդում են գյուղատնտեսական արտադրության վրա: Գյուղատնտեսական արտադրության վրա ռելիեֆի ունեցած ազդեցությունը ցայտուն ձևով արտահայտված է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ճյուղերի տեղաբաշխման ու արտադրության արդյունավետության բնագավառներում:

Ռելիեֆի առանձնահատկության քանակական ցուցանիշը **տարածքի բացարձակ բարձրությունն է**, որով էլ պայմանավորված են ագրոկլիմայական ցուցանիշներն ու դրանց տատանումները: Ըստ ուղղածիզ բարձրության նվազում է ջերմությունը, ավելանում է տեղումների քանակը և արդյունքում ստեղծվում են գյուղատնտեսական գոտիականության նախապայմաններ:

Գյուղատնտեսական արտադրության արդյունավետության վրա մեծ ազդեցություն ունի **ռելիեֆի մասնատվածության աստիճանը**, որից էլ հաճախ կախված են գյուղատնտեսական մեխանիզացիայի ներդրման հնարավորությունը, գյուղատնտեսական հանդակների ուրվագծերն ու չափերը:

Մեծ է նաև **լանջերի թեքության** դերը հողը մշակող տեխնիկայի հնարավորության ու արդյունավետության, էրոզիոն պրոցեսների զարգացման ու հողաբարելավման միջոցառումների կազմակերպման տեսակետներից: Որպես կանոն լանջերի թեքության մեծացումը հանգեցնում է տարածքի գյուղատնտեսական յուրացման բարդացման, հողի մշակման նկատելի դժվարացման: Մեծ թեքությունների դեպքում հողագործության համար պիտանի մակերեսները յուրացնելիս ստիպված են լինում դի-

մել դարավանդավորման (հարթակների ստեղծմանը): Դարավանդավորումը լայնորեն կիրառվում է ճապոնիայում, Ֆիլիպիններում, Հնդկաստանում, Շրի Լանկայում, Թուրքիայում, Հայաստանի Հանրապետությունում, Անդյան երկրներում և այլուր:

Մեծ է նաև **լանջերի դիրքադրության դերը**: Հորիզոնի հյուսիսային և հարավային կողմնադրության լանջերին օդի երկրամերձ շերտի ջերմության տարբերությունը երբեմն հասնում է 6-7⁰С-ի, իսկ հողի մեջ (1 սմ խորության վրա) 5-7⁰С-ի:

Մի քանի տոկոսով միմյանցից տարբերվում են նաև հողի խոնավության պաշարները: Հյուսիսային կիսագնդում լեռների հյուսիսահայաց լանջերի հողն ավելի մեծ խոնավության պաշար ունի, քան հարավային լանջերինը, որի շնորհիվ համապատասխանաբար քիչ ջուր է անհրաժեշտ ոռոգման համար (հարավային կիսագնդում խոնավությունը մեծ է լեռան հարավահայաց լանջին):

Գյուղատնտեսական արտադրության, հատկապես բաց գրունտի վրա բուսաբուծության կազմակերպման համար բացառիկ մեծ է **կլիմայի դերը**: Ագրոկլիմայական գնահատման գլխավոր ցուցանիշներից մեկը գյուղատնտեսական մշակաբույսերի **ջերմաապահովվածությունն է**, որն իր հերթին, պայմանավորված է տվյալ տարածքի ջերմային ռեժիմով: Կարևորագույն ագրոկլիմայական ցուցանիշը միջին օրական ջերմությունների գումարն է տարվա ոչ ցուրտ ժամանակահատվածում (սովորաբար +10⁰С-ից բարձր), որի պայմաններում ակտիվանում (ժլարձակում) է բույսի սերմը: Այն կոչվում է ակտիվ ջերմաստիճանների տարեկան գումար:

Բույսերի ջերմաապահովվածության տեսակետից երկրագնդի ցամաքի տարածքը բաժանված է 4 գոտիների¹.

- 1) ցուրտ (ակտիվ ջերմաստիճանների տարեկան գումարը 1200⁰С-ից պակաս)
- 2) բարեխառն (1200-4000⁰С)
- 3) տաք (4000-8000⁰С)
- 4) շոգ (ակտիվ ջերմաստիճանների տարեկան գումարը 8000⁰С-ից ավելի):

Տաք և շոգ գոտիներում բուսաբուծությունը ևս անասնապահության մնան անընդհատ արտադրական գործընթաց է: Այս գոտիներում հողը գրեթե չուրջ տարին մշակվում է: Ժամանակ առ ժամանակ առանձին մշակաբույսերի վեգետացիայի ժամանակահատվածները փոփոխվում են այն նպատակով, որպեսզի հողում մշտապես վերականգնվի բույսերի աճի համար անհրաժեշտ հանքային աղերի քանակը: Բույսերի մշակման այսպիսի հաջորդականությամբ ցիկլը անվանվում է **ցանքաշրջանառություն**:

Ավելի բարձր աշխարհագրական լայնություններում ցուրտ և բարեխառն գոտիներում, որտեղ բույսերի վեգետացիոն սեզոնը կարճատև է, բուսաբուծության գործընթացը տարվա ընթացքում որոշ ժամանակով ընդհատվում է (ինչպես, օրինակ, Հայաստանի Հանրապետությունում):

Գյուղատնտեսական որոշ մշակաբույսերի վաղահաս և ուշահաս տեսակներ

¹ М. Вольф, Ю. Дмитриевский. География мирового сельского хозяйства. М., 1981, с. 13.

¹ А. Шашко. Агроклиматическое районирование СССР. М., 1967.

բնութագրվում են կենսաբանական ջերմաստիճանների հետևյալ գումարով. գարնանացան ցորեն՝ 1300-1700°C, աշնանացան ցորեն՝ 1450°C, գարի՝ 1200-1400°C, երկարաթել վուշ 950-1300°C, արևածաղիկ՝ 1600-2300°C, բամբակենի՝ 2900-4000°C, խաղող՝ մոտ 2500°C, ցիտրուսայիններ՝ մոտ 3500°C, փյունիկյան արմավենի՝ մոտ 5000°C:

Տարածքի ագրոկլիմայական գնահատման համար ջերմային պայմաններից բացի առաջնակարգ նշանակություն ունեն **տեղումների քանակն ու սեփմը**: Տարածքի խոնավապահովվածության գնահատման համար գոյություն ունեն մի շարք ուղղակի և անուղղակի ցուցանիշներ, որոնցից են տեղումների տարեկան քանակը, դրանց բաշխումը ըստ տարվա ամիսների և եղանակների, հողաբուսական ծածկույթի բնույթը: Սակայն տեղումների տարեկան քանակը ոչ ամբողջությամբ է ներկայացնում տարածքի խոնավապահովվածությունը:

Այդ նպատակի համար օգտագործվում են կամ **խոնավացման գործակիցը** կամ էլ **խոնավացման հաշվեկշիռը**:¹ Դրանցից առաջինը տեղումների տարեկան քանակի և գոլորշուղևակության հարաբերությունն է, իսկ երկրորդը դրանց տարբերությունը (պակասը կամ ավելցուկը):

Կլիմայի ազդեցությունը բույսերի արդյունավետության վրա բեկված է **հողերի** միջոցով:

Հողերի տիպերի գյուղատնտեսական գնահատումը դժվար է այն պատճառով, որ տարբեր երկրներում գոյություն ունեն հողերի տարբեր դասակարգումներ և անվանացուցակներ (նույն հողի տեսակը տարբեր երկրներում կոչվում է տարբեր անունով):

Ըստ Ս. Մ. Ռյաբչիկովի¹ երկրագնդի հողային մակերեսը (ներառյալ գյուղերն ու ագարակները) կազմում է դրա տարածքի 13%-ը, խոտաթփուտային արոտավայրերը և բնական մարգագետինները՝ 19%: Այսպիսով դաշտավարության և անասնապահության մեջ ներգրավված է ցամաքի մակերեսի 32%-ը (մոտ 1/3-ը): Սակայն այդ բաժինը խիստ տարբեր է առանձին աշխարհամասերում ու մայրցամաքներում: Հողագործական մակերեսը Եվրոպայում կազմում է 32%, իսկ արոտավայրերի և մարգագետինների մակերեսը՝ 19%, Ասիայում՝ համապատասխանաբար 21 և 15%, Աֆրիկայում՝ 11 և 23%, Հյուսիսային Ամերիկայում՝ 12 և 18%, Հարավային Ամերիկայում՝ 8 և 19%, Օվկիանիայում՝ 5 և 15%: Այս ցուցանիշները շատ տարբեր են ըստ աշխարհագրական գոտիների. հասարակածային գոտում՝ 8 և 12%, մերձհասարակածային գոտում՝ 18 և 25%, արևադարձային գոտում՝ 9 և 32%, մերձարևադարձային գոտում՝ 17 և 27%, բարեխառն գոտում՝ 26 և 13%, մերձարևիկական և անտարկտիկական գոտիներում՝ 0 և 2%: Այս ցուցանիշն էլ ավելի մեծ չափով է տարբերվում ըստ առանձին երկրների, օրինակ, Չինաստանում՝ 12 և 27%, ԱՄՆ-ում՝ 18 և 23%, Ավստրալիայում՝ 5 և 54%, Հնդկաստանում՝ 51 և 7%, Կանադայում՝ 5 և 12%:

Մեծ է նաև **բնական բուսականության դերը**: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ժամանակակից բուսական ասոցիացիաների մեծամասնությունը երկրորդային է, այսինքն բնական բուսածածկի վրա հասարակության ազդեցության արդյունք է:

Գյուղատնտեսության մեջ բնական բուսածածկի դերը չի սահմանափակվում միայն անասնապահության կողմից (առաջին հերթին արոտային) օգտագործելով: Բնական ծառային բուսածածկը հաճախ ծառայում է որպես վարագույր, որը ծածկում է արևադարձերում աճող մշակաբույսերը: Անտառներում դրանք կազմում են առաջին հարկը (կոկոսյան արմավենի, կակաո, հեռա): Իրականում դժվար է միարժեքորեն պատասխանել այն հարցին, թե այս բույսերի բերքահավաքը հավաքչություն է, թե՞ արտադրություն:

Խոսելով գյուղատնտեսության մեջ բնական բուսականության ներկա դերի մասին, չպետք է մոռանալ նաև դրա «առաջնային» դերի մասին, հատկապես այն, որ բուսականությունը մարդկությանը տվել է շատ մշակաբույսեր: Ռուս ականավոր ծագումնաբան Ն. Վավիլովը հաշվում էր կուլտուրական բույսերի 1500-1600 տեսակներ (չհաշված գեղազարդային բույսերը) և գտնում էր, որ դրանց մեծամասնությունը կապված է առաջացման յոթ հիմնական աշխարհագրական կենտրոնների (արեալների հետ):

Գյուղատնտեսական արտադրության զարգացման ու տեղաբաշխման վրա ազդում է նաև **վայրի ֆառունան** (կենդանական աշխարհը):

Ենթադրվում է, որ ընտանի խոզերի նախահայրերը եվրոպական, հնդկական, միջերկրածովյան վարագներն են, իսկ ոչխարներիցը Եվրոպայի (Կորսիկա, Սարդինիա) Առաջավոր Միջին և Կենտրոնական Ասիայի վայրի ոչխարները, այծերինը բեզոարյան և պոտոտակաեղջերավոր այծերը:

Վայրի կենդանիները մեծ դեր են կատարում հողի ձևավորման և բարելավման, գյուղատնտեսական մշակաբույսերի փոշոտման գործում: Միաժամանակ մեծ է գյուղատնտեսական բույսերի վնասատու միջատների ազդեցությունը, որոնք ՖՍՕ-ի տվյալներով. ոչնչացնում են պարենային մշակաբույսերի համաշխարհային պոտենցիալ բերքի 20-25%-ը (առանց տեխնիկական մշակաբույսերի): Օրինակ, Մադագասկար կղզի բերած կաշմիր անվանմամբ բզեզներն այնքան էին բազմացել, որ իսպառ ոչնչացրել էին կղզու հարավ-արևելյան մասի բուսականությունը: Խաղողի վազին մեծ վնաս են հասցնում որդնավիճները:

Մեծ է նաև գիշատիչ և հիվանդություններ տարածող կենդանիների ազդեցությունը (օրինակ Աֆրիկայի հասարակածային ու մերձհասարակածային գոտիներում ցեցե ճանճի տարածման արեալում, «նագանա» հիվանդությունից ոչնչանում են ընտանի խոշոր եղջերավոր անասունները): Աֆրիկայում բերքի վրա երբեմն կործանիչ ազդեցություն են ունենում մորեխները, կապիկները, փղերը:

Այսպիսով՝ **գյուղատնտեսական արտադրության վրա ազդում են բնության բոլոր բաղադրիչները, որոնք գտնվում են միասնության և մշտական փոխներգործության ու փոխազդեցության մեջ**:

¹ Рябчиков А. М. Структура и динамика геосферы, ее естественное развитие и изменение человеком. М., 1972.

Տարածքի բնական համալիրը գնահատվում է գյուղատնտեսական արտադրության պայմանների տեսակետից: Այն կազմում է **տարածքի բնական ագրոպոտենցիալը (ագրոներուժը)**, որն էլ ստեղծում է գյուղատնտեսության զարգացման բնական նախադրյալներ:

Բնական ագրոպոտենցիալը կազմվում է բնական համալիրի գործնականորեն բոլոր բաղադրիչներից, որոնք այս կամ այն կերպ գնահատվում են գյուղատնտեսական արտադրության բարենպաստության տեսակետից:

Բնական ագրոպոտենցիալը պատմական-տնտեսական զարգացման ընթացքում կարող է փոփոխվել հասարակության ներգործությամբ պայմանավորված հողային ֆոնդի փոփոխությունների հետևանքով: Այդ փոփոխությունները կարող են լինել և բացասական, և դրական: Դրա վառ ապացույցներից է «կանաչ հեղափոխության» շնորհիվ հողի պտղաբերության բարձրացումը զարգացող երկրներում:

7.5 Տնտեսական ու սոցիալական գործոնների ազդեցությունը գյուղատնտեսական արտադրության զարգացման ու տեղաբաշխման վրա:

Նախորդ բաժնի վերլուծությունից եզրակացվեց, որ բնական գործոնների ազդեցությունը գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման վրա չափազանց մեծ է: Ընդ որում այդ ազդեցությունն առավել մեծ է թույլ զարգացած տնտեսություն ունեցող երկրներում:

Սակայն գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի ու տեղաբաշխման ավելի ամբողջական և ճիշտ բացահայտումը հնարավոր է միայն **տնտեսական ու սոցիալական գործոնների վերլուծության** հիման վրա: Վերջիններիս ազդեցությունն ավելի ցայտուն է երևում, երբ գյուղատնտեսական արտադրության զարգացման և տեղաբաշխման վերլուծության ժամանակ առաջին պլան են մղում տեղաբաշխման տնտեսական գործոնները, որոնք որոշվում են այս կամ այն խումբ երկրների սոցիալական կառուցվածքով: Որպես ասվածի հիմնավորում կարող են ծառայել, օրինակ, Իսրայելը, ճապոնիան, Հարավաֆրիկյան Հանրապետությունը, որոնց գյուղատնտեսական արտադրությունն իր զարգացման մակարդակով, մասնագիտացմամբ և արդյունավետությամբ էապես տարբերվում է միատեսակ բնակլիմայական պայմաններ ունեցող հարևան նոր զարգացող երկրներից:

Գյուղատնտեսական արտադրության զարգացման ու տեղաբաշխման վրա տնտեսական ու սոցիալական գործոնների վճռորոշ դերի վկայություն է նաև այն փաստը, որ միևնույն բնակլիմայական պայմաններում ժամանակի ընթացքում փոփոխվում է գյուղատնտեսական արտադրության մասնագիտացումը: Այսպես, օրինակ, XX դարի սկզբին Հայաստանի Հանրապետության ցանքատարածության շուրջ 90% բաժին էր ընկնում հացահատիկային մշակաբույսերին, 80-ական թթ. այդ բաժինը հասել էր 1/3-ի, իսկ 90-ական թթ. սոցիալական ու տնտեսական պայմաններ

րի վատացման հետևանքով, այդ բաժինը կրկին մեծացել է: Ընդ որում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունն ավելանում է ի հաշիվ այգիների տարածքի: Մինչև 1965 թ. ՀՀ-ում Արարատյան դաշտում մշակում էին բամբակենի, իսկ դրանից առաջ նաև բրինձ:

Յուրաքանչյուր, առանձին վերցրած, երկրի գյուղատնտեսական արտադրության ծավալի ու կառուցվածքի վրա մեծ ազդեցություն ունի **համաշխարհային շուկան**՝ իր անընդհատ փոփոխվող պահանջարկով: «Ոչխարները կերան մարդկանց» հանրահայտ արտահայտությունը դրսևորում է այն վիճակի, երբ բրդյա գործվածքների համաշխարհային պահանջը բավարարելու ձգտումով Անգլիայի հողահանդակների մեծ մասը օգտագործվում էր որպես արտաավայր բրդատու ոչխարաբուծության համար:

Համաշխարհային շուկայի պահանջարկի թելադրանքով շատ երկրներում ծևավորում է մասնագիտացված գյուղատնտեսական արտադրություն, որն ունի իր և դրական, և բացասական կողմերը: Մասնագիտացումը հնարավորություն է տալիս բարձրացնել տվյալ արտադրության արդյունավետությունը՝ ապահովելով լրացուցիչ շահույթ:

Մյուս կողմից մասնագիտացման հետևանքով երկիրը ստիպված է լինում մեծ մասշտաբներով ներկրել գյուղատնտեսական այնպիսի մթերքներ, որոնք հաջողությամբ կարելի էր մշակել տեղում: Դրա հետևանքով մեծանում է տարբեր գյուղատնտեսական արտադրանքի հանդիպական փոխադրումների ծավալը:

Նման իրավիճակ էր ստեղծվել ԽՍՀՄ-ի միջինասիական որոշ հանրապետություններում, որոնց ցանքատարածությունների ճնշող մեծամասնության վրա մշակվում էր բամբակենի՝ ամբողջ ԽՍՀՄ-ի և Եվրոպայի սոցիալիստական երկրների պահանջները բավարարելու համար:

Միջինասիական հանրապետություններից երկաթուղով արտահանում էին մի քանի միլիոն տոնա բամբակ, իսկ հանդիպակած ուղղությամբ ներկրում էին պարենի այնպիսի տեսակներ (օրինակ կարտոֆիլ կամ կաղամբ) որոնք կարելի էր մշակել տեղում:

Գյուղատնտեսական արտադրության զարգացման ու տեղաբաշխման շատ կարևոր գործոն է զարգացած **տրանսպորտը**: Դրա շնորհիվ մեծանում է գյուղատնտեսական հումքի փոխադրման ծավալը, կրճատվում են փոխադրման ժամանակը և կորուստները, ընդարձակվում է գյուղատնտեսական արտադրության արեալը: Տրանսպորտի բարձր զարգացումը հնարավորություն է ընձեռում գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման և առավել բարենպաստ շրջաններում արտադրության տարածքային համակենտրոնացման համար, որի շնորհիվ ապահովվում է աշխատանքի բարձրագույն արտադրողականություն: Տրանսպորտը նպաստում է աշխատանքի տարածքային բաժանման խորացմանը. դրա շնորհիվ գյուղատնտեսական մթերքները լայնորեն փոխանակվում են միևնույն երկրի շրջանների և առանձին երկրների միջև:

Ավելի ցածր տեղական մակարդակով տրանսպորտի ազդեցությունը գյուղատնտեսական արտադրական ձեռնարկությունների վրա դրսևորվում է վերջին-

ներիս չափերի խոշորացմամբ¹:

Գյուղատնտեսական արտադրության զարգացման ու տեղաբաշխման վրա զարգացած տրանսպորտի ազդեցության բնութագրական դրսևորում է Շրի Լանկայի օրինակը:

Կղզում արտահանման նպատակով սուրճը սայլերով Կանդիի տնկատափերից Կոլոմբո նավահանգիստ հասցնելու համար XIX դարի կեսերին պահանջվում էր շուրջ մեկ շաբաթ, իսկ երբ փոխադրման ծավալների աճի պատճառով սայլերի թիվն անչափ մեծացավ (հասավ շուրջ 40 հազարի) ճանապարհների խցանումների հետևանքով փոխադրման ժամանակն ավելացավ 3-4 անգամ: Իրադրությունն էապես փոխվեց երկաթուղու կառուցման շնորհիվ. ոչ միայն մեծացավ փոխադրումների ծավալը, այլև կրճատվեց փոխադրման ժամանակը և նվազեց փոխադրման ինքնարժեքը:

Գյուղատնտեսական արտադրության վրա երկաթուղու ունեցած մյուս ազդեցությունն էլ այն էր, որ սուրճի տնկատափային տնտեսության օպտիմալ չափը 200 հա-ից հասավ մինչև 320 հա-ի²:

Տրանսպորտի ազդեցության մեկ այլ օրինակ է սառցարան-նավերի կառուցումը, որի շնորհիվ հնարավոր եղավ Ավստրալիայից տավարի միսը փոխադրել Մեծ Բրիտանիա: Մրա շնորհիվ Ավստրալիայում խթանվեց նաև մատուռ՝ արտահանման ուղղվածության անասնապահությունը և մինչև օրս էլ Ավստրալիան մսի խոշոր արտահանող երկրներից մեկն է:

Գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման վրա ազդում է նույնիսկ այնպիսի հոգևոր գործոն, ինչպիսին է **կրոնը**: Բավական է դիտել աշխարհի խոզաբուծության տեղաբաշխման քարտեզը և հեշտությամբ կնկատվի, որ անասնապահության այս ճյուղը հիմնականում իսլամ դավանող ժողովուրդներով բնակեցված երկրներում կամ իսպառ բացակայում է կամ էլ տեղաբաշխված է այդ երկրների միայն առանձին, այլ կրոն դավանող ժողովուրդներով բնակեցված օջախներում: Օրինակ՝ մինչև 1991 թ. Ադրբեջանի խոզաբուծությունը տեղաբաշխված էր հիմնականում Լեռնային Ղարաբաղում:

Մինչև 1960-ական թվականները՝ Ֆրանսիայից անկախանալը, Ալժիրը խաղողից պատրաստված գինու խոշորագույն արտադրողներից մեկն էր աշխարհում, իսկ ներկայումս գինեգործությունը մահմեդական ֆունդամենտալիզմի այդ երկրում վերացել է:

Գյուղատնտեսական արտադրության որոշ ճյուղերի տեղաբաշխման վճռորոշ գործոն է **բնակչության կենտրոնացումը**, հատկապես տեղաբաշխման խոշոր արեալները: Օրինակ կաթնատու անասնապահությունը, թռչնաբուծությունը, բանջարաբուծությունը մեծ մասամբ տեղաբաշխվում են բնակչության խոշոր կուտակումների՝ հատկապես քաղաքային ագլոմերացիաների շրջակա տա-

րածքում, քանի որ դրանց արտադրանքը շուտ փչացող է, այսինքն ոչ տրանսպորտահարմար:

Գյուղատնտեսությունն էլ իր հերթին հետադարձ միջնյուղային կապերով ազդում է արդյունաբերության որոշ ճյուղերի տեղաբաշխման վրա: Այսպես, գյուղատնտեսական արտադրության առանձին ճյուղերի զարգացած շրջաններում են տեղաբաշխվում դրանց հետ միջնյուղային կապեր ունեցող արդյունաբերական ձեռնարկությունները, որոնք կամ տարբեր տեսակի արդյունաբերական արտադրանք (ֆոսֆորային պարարտանյութ, գյուղատնտեսական մեքենաներ ու տրակտորներ) են մատակարարում գյուղատնտեսության ճյուղերին, կամ էլ արդյունաբերական մշակման են ենթարկում գյուղատնտեսական արտադրանքը (մսակոմբինատներ, պահածոների, գինու, շաքարի գործարաններ):

Այսպիսով վերոգրյալ ճյուղերի տեղաբաշխման սկզբունքների վերլուծությամբ կարելի է եզրակացնել, որ **չկա գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման միակ՝ համընդհանուր սկզբունք**: Գյուղատնտեսական արտադրության յուրաքանչյուր ճյուղ ունի իրեն հատուկ տեղաբաշխման կոնկրետ սկզբունք: Դրանք շատ բազմաթիվ են և բազմաբնույթ, որի հետևանքով հաճախ գիտնականները դժվարության են հանդիպում գյուղատնտեսական որևէ կոնկրետ արտադրության տեղաբաշխման վերլուծության հարցում:

Առաջին անգամ գյուղատնտեսական արտադրության վրա ազդող գործոնների համակարգման հարցով զբաղվել է Յոհան Դենրիխ Ֆոն Թյունենը (1753-1850 թթ.) (տես 1 թեման):

Թյունենը Գերմանիայի Մեքլենբուրգ¹ երկրամասի սեփական Թելլով կալվածքի օրինակով ուսումնասիրելով գյուղատնտեսական բազմաթիվ մթերքների ու դրանց փոխադրման տրանսպորտային ծառայությունների գները, հաշվարկեց, որ ընդարձակ, միապաղաղ մակերևութով, նավարկելի ջրանցքներից գուրկ և կենտրոնում շուկայական մեկ քաղաք ունեցող ենթադրյալ պետությունում, մայրաքաղաքից որոշակի հեռավորությունների վրա, առաջանում են տնտեսական գոտիներ: Դրանցից յուրաքանչյուրը մասնագիտանում է որոշակի արտադրությամբ: Առաջին գոտում պետք է ծաղկի կաթնատու անասնապահությունը, երկրորդում՝ անտառային տնտեսությունը, երրորդ, չորրորդ և հինգերորդ գոտիներում՝ բուսաբուծության և անասնապահության տարբեր ձևերը, վեցերորդում՝ արոտային անասնապահությունը, յոթերորդում՝ որսորդությունը և այլ, ոչ գյուղատնտեսական գործունեությունը:

Սակայն Թյունենի ստեղծած մոդելը մասնակի հավասարակշռություն արտահայտող էր, որում հաշվի չէին առնվում արտատնտեսական գործոնները, ինչպես նաև անտեսվում էր կենտրոնական քաղաքի մարդաշատության տարբերությունները:

Սակայն գործնականում մարդիկ որոշումներ կայացնելիս առաջնորդվում են ոչ միայն տնտեսական նկատառումներով, այլև հաշվի են առնում սոցիալական և հոգեբանական գործոնները: Այս նկատառումով էլ ստեղծվեցին այսպես կոչված **դիֆու-**

¹ Пуляркин В. А. Экономико-географические процессы в сельском хозяйстве развивающихся стран. М., 1976.

² Там же.

¹ Ներկայումս այն Գերմանիայի 16 երկրամասերից մեկն է Մեքլենբուրգ-Արևմտյան Պոմերանիա անվանմամբ:

գիայի և խաղերի տեսությունների վրա հիմնված մոդելներ:

Դիֆուզիայի մոդելները ելնում են այն իրողությունից, որ գործնականում գյուղատնտեսական որևէ մթերք արտադրելու նպատակահարմարության (շահավետության) վերաբերյալ տեղեկությունները ազարակատերերի միջև տարածվում են փոխանցվելով անհատական շփումների միջոցով:

Խաղերի տեսության մոդելները ելնում են այն իրողությունից, որ գործնականում գյուղատնտեսական որևէ արտադրություն ենթակա է ֆիզիկական (օրինակ երաշտ, կարկուտ, ջրհեղեղ) և տնտեսական (շուկայական իրավիճակի) ազդեցությանը և դրանով հանդերձ, ենթակա են որոշակի ռիսկի: Օրինակ եվրոմիության շրջանակներում կաթի պահանջարկի կրճատման կամ գերարտադրության հետևանքով երբեմն չիրացված կաթը տալիս են հորթերին որպես կեր: Երբեմն հեղեղներ, որ բրնձի ավելցուկով կերակրել են անասուններին: Մեծ Բրիտանիայում 1999 թ. բռնկված սիբիրախտի համաճարակի հետևանքով կրճատվեց տավարի մսի արտահանությունը:

Խաղերի տեսության մոդելներն ունեն մատրիցայի տեսք, որը ցույց է տալիս հավանական եղանակների պայմաններում հողի օգտագործման յուրաքանչյուր (Ա,Բ,Գ) համակարգի համար պոտենցիալ եկամուտները (1,2,3,4):

	1	2	3	4
Ա	500	550	450	600
Բ	600	700	300	600
Գ	0	2000	0	1000

Մատրիցայից պարզ երևում է, որ հավանականությամբ առավել նպատակահարմար է Գ տարբերակը, քանի որ նույնիսկ բերքի 2 անգամվա կորստի պայմաններում էլ ապահովում է առավել բարձր եկամուտ 3000 միավոր փող (Ա-ն 2100, Բ-ն 2200 միավոր):

Գործնականում ազարատերերին անհրաժեշտ տեղեկություն հասցնելու և դրա շնորհիվ երկրի գյուղատնտեսական մթերքի արտահանությունը հնարավորին չափ մեծացնելու նպատակով ԱՄՆ-ի գյուղատնտեսության նախարարությունը ստանձնել է համակարգողի գործառույթ: Այն նախնական պայմանավորվածություն է ձեռք բերում առանձին ազարակատերերի հետ գյուղատնտեսական տվյալ մթերքի ծավալի և մթերման երաշխավորված գների վերաբերյալ:

7.6 Գյուղատնտեսության ճյուղերի աշխարհագրություն

Գյուղատնտեսության երկու խոշոր ճյուղերն են **հողագործությունը (բուսաբուծությունը) և անասնապահությունը:** Բուսաբուծությունն իր հերթին ստորաբաժանվում է դաշտավարության, այ-

գեգործության: Դաշտավարության ենթաճյուղերն են հացահատիկային տնտեսությունը (հացահատիկային մշակաբույսերի աճեցումը) բանջարաբուծությունը, այգեգործությունը (պտղաբուծությունը և խաղողագործությունը), տեխնիկական կուլտուրաների, կերային կուլտուրաների աճեցումը: Անասնապահության զլխավոր ճյուղերն են խոշոր եղջերավոր անասնապահությունը, մանր եղջերավոր անասնապահությունը, խոզաբուծությունը, շերամապահությունը, մեղվաբուծությունը, թռչնաբուծությունը:

ՄԱԿ-ի դասակարգմամբ գյուղատնտեսության հետ հարակից բնագավառներ են համարվում որսորդությունը, ձկնորսությունը և անտառային տնտեսությունը:

ա) Հացահատիկային մշակաբույսերի աշխարհագրություն:

Հացահատիկային բույսեր մշակում են աշխարհի ցամաքատարածության կեսի վրա և տարեկան ստանում են ավելի քան 2 մլրդ տոննա համախառն բերք: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր բնակչի հաշվով արտադրվում է շուրջ 3.4 g հացահատիկ, որը մի փոքր է ավել նախապատերազմյան ցուցանիշից (3.0 g):

Հացահատիկի համաշխարհային շնչաբաժինը գրեթե չի ավելացել, քանի որ 60 տարվա ընթացքում հացահատիկի համախառն բերքի շուրջ 3 անգամ աճը ուղեկցվել է աշխարհի բնակչության նույնչափ աճով:

Սակայն հացահատիկի արտադրության աճը տեղի է ունենում ոչ հավասարաչափ: Վերջին տարիներին, շնորհիվ «կանաչ հեղափոխության», հացահատիկի արտադրության ծավալը համեմատաբար արագ է աճում զարգացող երկրներում, որոնք ձգտում են ամենակարճ ժամանակում հասնել հացահատիկի պահանջարկի ինքնաապահովման:

Աղյուսակ 7.3

Հացահատիկի համախառն բերքի աճը 1987-2000թթ.

	Համախառն բերքը (հազար տ.)		Աճը 1987-2000թթ. (%-ով)
	1987թ.	2000թ.	
Աշխարհ	1.770.986	2.049.415	115.7
Աֆրիկա	83.216	112.405	135.1
Հս. Ամերիկա	361.134	430.378	119.2
Հվ. Ամերիկա	82.614	103.416	125.2
Ասիա	763.083	987.498	129.4
Եվրոպա	274.990	384.222	139.7
Օվկիանիա	20.928	31.496	150.5

Եթե հացահատիկային տնտեսության զարգացման մակարդակը գնահատենք ըստ բնակչության մեկ շնչի հաշվով արտադրվող տարեկան քանակի, ապա առաջին տեղում կլինի Օվկիանիա աշխարհամասը¹ մոտ 1200 կգ, երկրորդում Հյուսիսային Ամերիկան մոտ 900 կգ, երրորդում Եվրոպան մոտ 400 կգ, չորրորդում

¹ Օվկիանիայի կազմում Ավստրալիայի ցուցանիշը 1850կգ է:

Ասիան 260 կգ, հինգերորդում Աֆրիկան մոտ 170 կգ և վեցերորդում Հարավային Ամերիկան 140 կգ:

• Երկրների կտրվածքով հացահատիկի արտադրությունը վերջին 10 տարում առավել մեծ չափով աճել է Եգիպտոսում, Եթովպիայում, Վիետնամում (ավելի քան 170%-ով), Իրանում, Հնդկաստանում, Ինդոնեզիայում, Նիգերիայում, Պակիստանում, Մյանմայում (130-150%-ով):

Զարգացած երկրներից բարձր աճ է նկատվում միայն Ավստրալիայում հացահատիկային տնտեսության զարգացման համար շատ մեծ հողային ռեզերվներ ունեցող երկրում (174%): Մյուս զարգացած երկրներում հացահատիկի արտադրանքի ծավալը մնացել է գրեթե անփոփոխ, իսկ մի քանիսում (օրինակ ճապոնիայում)՝ նույնիսկ կրճատվել է:

Հացահատիկի որոշ տեսակներ (ցորեն, բրինձ, եգիպտացորեն) օգտագործվում են որպես պարեն, մյուսները (գարի, վարսակ, եգիպտացորեն) որպես անասնակեր (ֆուրաժ): Սակայն այս բաժանումը բավականին պայմանական է, քանի որ միևնույն հացահատիկը, օրինակ, գարին օգտագործվում է և որպես պարեն, և որպես անասնակեր և որպես հումք՝ սննդի (գարեջրի) արտադրության համար: Ընդ որում հացահատիկի տեսակների օգտագործման ուղղությունները տարբեր սոցիալ-տնտեսական համակարգի երկրներում տարբերվում է միմյանցից: Օրինակ զարգացած երկրներում որպես պարեն օգտագործվում է եգիպտացորենի 7, գարու 3%¹-ը, մինչդեռ զարգացող երկրներում՝ 61 և 42%-ը, համապատասխանաբար: Իսկ ցորենն ու բրինձը բոլոր երկրներում օգտագործվում են որպես պարեն:

Ցորենն առաջավոր Ասիայում, Անդրկովկասում (այդ թվում Հայաստանում), Հարավային Եվրոպայում և Չինաստանում հայտնի է եղել դեռևս Ք.ա. VII-III հազարամյակում: Ներկայումս նոր, ցրտադիմացկուն տեսակների ներդրման շնորհիվ այն մշակում են աշխարհի ավելի շատ երկրներում, որոնք գտնվում են տափաստանային, անտառատափաստանային գոտիներում ու Ավստրալիայի սավանններում:


Բոլոր բնակեցված մայրցամաքներում, տարբեր աշխարհագրական լայնություններում, ինչպես նաև որպես և՛ զարնանացան² և՛ աշնանացան մշակաբույս մշակելու շնորհիվ տարվա բոլոր ամիսներին աշխարհի մի որևէ շրջանում հավաքվում է ցորենի բերք:

Բարձր զարգացած երկրներում, որպես կանոն, ցորենի արտադրությունն ինտենսիվ է շատ բարձր բերքատվությամբ: Արևմտաեվրոպական երկրներում այն ավելի քան 50 գ/հա է, մինչդեռ աշխարհի մասշտաբով՝ 14-15 գ/հա: Բացառություն են կազմում հողային մեծ ռեսուրսներ ունեցող և բազմազան բնակլիմայական պայմաններում գտնվող խոշոր երկրները (օրինակ, ԱՄՆ-ը, Ավստրալիան) որտեղ առանձին անջրդի տարածքների վրա ցորենի արտադրությունն էքստենսիվ է:

¹ Զարգացած երկրներում եգիպտացորենն ու գարին օգտագործվում են հիմնականում որպես անասնակեր:

² Գարնանացան ցորենը մշակում են համեմատաբար ցուրտ վայրերում, իսկ աշնանացանը ցանում են աշնանը, այն վայրերում, որտեղ ձմեռը մեղմ է:

ՆԱԵՂՈՒՄԵՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՄՇԱԿԱՐԻ ԹԵՄԻՆԱԼԱԿԱՆ ԶՈՐԵՆԻ ՄԱՍՏՆԵՐԻ ԿՏՐՎԱԾՔՈՎ



Բրիճձն աշխարհի բնակչության ավելի քան կեսի պարենային հատիկն է: Այն իր հայրենիքից Չինաստանից տարածվել է Զնդկաստան, Զյուսիսային Աֆրիկա, Եվրոպա, Ամերիկա, Միջին Ասիա: Բրիճձն մշակում են արևադարձային և մերձարևադարձային գոտիներում՝ գերազանցապես արհեստական ոռոգման շնորհիվ: Նշվածներից բացի բրիճձն մշակում են նաև մուսսոնային կլիմայի մարզերում, որտեղ տարեկան տեղումների քանակը առնվազն 2000 մմ է: Տարվա չոր ժամանակահատվածում արհեստական ոռոգման շնորհիվ ստանում են բրնձի նաև երկրորդ բերքը: Սրանով է բացատրվում, որ չնայած ցանքատարածությունների փոքրությամբ բրնձի համախառն բերքը գրեթե հավասարվում է ցորենին:

Բրիճձը պարունակում է պրոտեիններ, որոնք մոտ են կենդանականին: Այս հանգամանքը չափազանց կարևոր է բրնձամշակման արեալների բնակչության համար, քանի որ դրանցում անասնապահությունը գրեթե զարգացած չէ: Սակայն բրիճձն ունի մի թերի կողմ՝ դրա մեջ փոքր է վիտամինների պարունակությունը, որի հետևանքով բնակչությունը տառապում է ավիտամինոզով, մասնավորապես տեսողության վատացումով: Բրիճձի ծղոտից արտադրում են բարձրորակ թուղթ¹:

Եգիպտացորենի հայրենիքը Լատինական Ամերիկան է, որտեղից XV դարում բերվել է Եվրոպա: ԱՄՆ-ում, Արգենտինայում և Արևմտաեվրոպական երկրներում եգիպտացորենը գլխավորապես օգտագործվում է որպես անասնակեր, իսկ զարգացող երկրների մեծ մասում՝ որպես պարենային մշակաբույս: Եգիպտացորենը նաև տեխնիկական մշակաբույս է, որից արտադրում են յուղ, օսլա, թուղթ, վիսկոզ, դեղորայք: Բացի այդ, որպես բարձր բերքատու մշակաբույս եգիպտացորենն աճեցնում են նաև համեմատաբար զով կլիմայական գոտիներում, սակայն ոչ թե հատիկի, այլ կանաչ գանգվածի համար: Եգիպտացորենը հասունացման կաթնային վիճակում օգտագործվում է որպես անասնակեր:

Եգիպտացորենը նշված բազմակողմանի արժանիքների համար դարձել է ԱՄՆ-ի գլխավոր հացահատիկային մշակաբույսը՝ մշակվում է Մեծ Լճերից դեպի արևմուտք ձգվող մի հսկա տարածքի վրա, որն անվանվում է «Եգիպտացորենի գոտի»:

Գարին շատ հին, հողակլիմայական պայմանների նկատմամբ սակավ պահանջկոտ և միաժամանակ վաղահաս մշակաբույս է: Այս պատճառով էլ գարին մշակում են ցորենի, եգիպտացորենի և բրնձի ցանքի գոտիներից ավելի հյուսիս, ինչպես նաև ծովի մակարդակից ավելի մեծ բարձրությունների վրա գտնվող գոտիներում: Զարգացած երկրներում գարու համախառն բերքի ավելի քան 2/3-ն օգտագործվում է որպես անասնակեր, իսկ մոտ 1/3-ը՝ որպես գարեջրի արտադրության հումք²:

Տարեկանը (աշորան) գարուց էլ սակավ պահանջկոտ մշակաբույս է, որի շնորհիվ այն մշակվում է բոլոր հացահատիկային բույսերից առավել հյուսիս: Տարեկանը հնում եղել է ցորենի և գարու ցանքերի ուղեկից մոլախոտ, սակայն հետագայում դարձել է պարենային հատիկաբույս: Տարեկան մշակում են Եվրոպայի հյուսիսային մարզերում (Ռուսաստան, Լեհաստան, Չեխիա, Սլովակիա, Գերմանիա):

Տարեկանի սննդարարությունը գարուց ավելի բարձր է, որի պատճառով այն փոքր չափերով օգտագործվում է դիետիկ հացի արտադրության մեջ:

Համաշխարհային շուկայում հացահատիկի գլխավոր մատակարարները զարգացած երկրներն են, որոնց բաժինն արտահանության ընդհանուր ծավալի մեջ անցնում է 4/5-ից: Առաջատար երկրներն են ԱՄՆ-ը, Կանադան, Ֆրանսիան, Ավստրալիան: Նոր զարգացող երկրներից առանձնանում է Արգենտինան:


բ) Արմատապալարապտղային և պտղային մշակաբույսեր

Արմատապալարապտուղները հարաբերականորեն էժան մշակաբույսեր են, որոնք օգտագործվում են որպես պարեն, անասնակեր, ինչպես նաև արդյունաբերական այլ նյութեր (օրինակ օսլա) արտադրելու հումք: Ջրի մեծ պարունակության պատճառով արմատապալարապտուղների տրանսպորտային փոխադրումը տնտեսապես ձեռնտու չէ: Բավական է նշել, որ արմատապալարապտուղների համաշխարհային համախառն բերքի ընդամենը 1%-ն է փոխադրվում այլ երկրներ:

Արմատապալարապտուղները մշակում են երկրագնդի 2 հիմնական գոտիներում՝ ա) բարեխառն, բ) արևադարձային ու մերձարևադարձային:

¹ Հայտնի է, որ Չինաստանը թղթի գյուտի հայրենիքն է:

² 1998թ. աշխարհում արտադրվել է 1153 մլն հեկտոլիտր գարեջուր, որից ԱՄՆ-ում մոտ 240 մլն, Չինաստանում՝ 163 մլն, Գերմանիայում՝ 107 մլն, Մեծ Բրիտանիայում՝ 61 մլն, Իսպանիայում՝ 24 մլն, Նիդերլանդներում՝ 23 մլն, Լեհաստանում՝ 21 մլն, Ավստրիայում և Դանիայում՝ 9-ական մլն հեկտոլիտր (հեկտոլիտրը հավասար է 100 լիտրի):



Բարեխառն գոտու համեմատաբար զով ու խոնավ կլիմայի պայմաններում լավագույն ձևով աճում է կարտոֆիլը, որի հայրենիքը Հարավային Ամերիկան է: Եվրոպայում այն սկսել են մշակել XVI դարից, իսկ Ռուսաստանում՝ (Պետրոս Մեծի անձնական նախաձեռնությամբ) XVIII դարից: Ռուսաստանից էլ այս մշակաբույսը տարածվել է նախկին ԽՍՀՄ հանրապետություններ, այդ թվում և Հայաստան:

Կարտոֆիլի համախառն բերքով աշխարհի առաջատար երկրներն են Չինաստանը, Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Լեհաստանը, Չեխոսլովակիան, Ֆրանսիան:

Արևադարձային գլխավոր արմատապալարապտուղները տարածված են զարգացող երկրներում, հատկապես Չինաստանում: Դրանց բաժին է ընկնում առանձին երկրների բնակչության սննդաբաժնի գլխավոր մասը:

Բատատը կարտոֆիլից ավելի սննդարար է ու միաժամանակ քաղցր, որի շնորհիվ այն օգտագործում են նաև շաքար և սպիրտ ստանալու նպատակով: Բատատի հայրենիքը Կենտրոնական Ամերիկան ու Մեքսիկան են, սակայն ներկայումս այդ կուլտուրայի մշակման խոշորագույն շրջանը Արևելյան և Հարավային Ասիան է (որտեղ ընդհանուր առմամբ բնակվում է երկրագնդի բնակչության շուրջ կեսը) և Արևելյան Աֆրիկան: Դրա մշակման ավելի փոքր շրջանը Հարավային Ամերիկան է (Բրազիլիա, Արգենտինա):

Համախառն բերքի ծավալով մյուս արևադարձային արմատապալարապտուղը մանիոկն է¹, որի պլուրից պատրաստում են հրուշակեղեն: Մանիոկի հայրենիքը Բրազիլիան է, սակայն այն այժմ մշակում են գրեթե նույն արեալներում, ինչ-որ բատատը:

գ) Պտղաբուծությունը: Սրգերը մարդու սննդաբաժնում վիտամիններ, դյուրամարս ածխաջրեր և այլ նյութեր համալրող կարևոր աղբյուր են: Սրգերի արտադրությունը որոշ երկրների մասնագիտացումն է: Առանձին դեպքերում մասնագիտացման աստիճանն այնքան բարձր է, որ նույնիսկ հասնում է մոնոկուլտուրայի մակարդակի: Օրինակ՝ Էկվադոր, Պանամա, Հոնդուրաս երկրների մրգերի արտահանության կառուցվածքում բանանի բաժինը 90-98% է, իսկ գյուղատնտեսական մթերքների արտահանության մեջ՝ 40-80%:

Սրգերը շատ բազմազան են և բաժանվում են արևադարձային, ցիտրուսային, բարեխառն գոտու մրգերի խմբերի:

Վերջին տասնամյակներում մրգերի համաշխարհային արտադրությունը բավականին արագ է աճում: Դրանց շարքում առավել արագ աճում է ցիտրուսայինների համախառն բերքը, որը վերջին 40 տարվա ընթացքում գրեթե կրկնապատկվել է:

Ցիտրուսայինների հայրենիքը Հարավ-արևելյան Ասիայի խոնավ արևադարձային անտառներն են, որտեղից այն փոխադրվել և արմատավորվել է միջերկրածովյան տարածաշրջանի երկրներում, իսկ ավելի ուշ՝ Լատինական Ամերիկայում ու ԱՄՆ-ում:

Թվարկած չորս շրջանից յուրաքանչյուրին այժմ բաժին է ընկնում ցիտրուսայինների համաշխարհային բերքի շուրջ 1/4-ը:

¹ Աֆրիկայում այն անվանվում է կասավա:


Նարնջի համաշխարհային արտահանության 2/3-ը բաժին է ընկնում Իսպանիային, Մարոկոյին, Ալժիրին, Կիպրոսին, Լիբանանին և Իսրայելին, իսկ **կիտրոնի** խոշոր արտահանողներ են Իտալիան, ԱՄՆ-ը, ու Իսպանիան:

Բանան արևադարձային միրգ է, որի հայրենիքը Մալայան է, որտեղից այն տարածվել է Աֆրիկա ու Լատինական Ամերիկա:

Բանանն իր բարձր կալորիականության շնորհիվ մասամբ փոխարինում է հացին և արձատապալարապտուղներին: Բացի այդ կան նաև բանանի դեսերտային (սեղանի) և կերային տեսակներ:

Դեսերտային տեսակների բանանների մշակման տնկատափերն ու արտահանությունը գրեթե ամբողջությամբ կենտրոնացվում է ամերիկյան «Յունայթեդ ֆրուիթ» մենատիրության ձեռքում:

ՅԻՏՈՒՄԱՅԻՆ ՊՏՈՒՂՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՅՑՄԱՆ ՇՐՋԱՆԵՐԱ



Խաղողագործություն: Խաղողը շատ հին մշակաբույս է: Ներկայումս մշակում են խաղողի բազմաթիվ տեսակներ:


Ըստ խաղողի օգտագործման ուղղության առանձնանում են խաղողագործության 4 ուղղություններ. սեղանի (ուտելու), զինեգործության, ոչ ալկոհոլային ըմպելիքների արտադրության և խաղողի չորացման (չամիչի և քիչմիչի) համար տեսակների մշակում:

Խաղողի համաշխարհային արտադրանքի շուրջ 85%-ն օգտագործվում է զինու արտադրության մեջ:

Ներկայումս խաղող մշակում են երկրագնդի հյուսիսային լայնության 30° և 52° -ի միջև ընկած գոտում, որտեղ էլ գտնվում է Հայաստանը՝ խաղողագործության հայրենիք-օջախներից մեկը: Հյուսիսային գոտում արտադրվում է խաղողի համաշխարհային համախառն բերքի 85%-ը: Գլխավոր արտադրողներն են Եվրոպայի երկրները (Իտալիա, Ֆրանսիա, Իսպանիա, Հունաստան, Բուլղարիա, Սլովակա): Խաղողագործությունը զարգացել է նաև ԱՄՆ-ում (մեր հայրենակիցների ջանքերով): Խաղողի համախառն բերքի մնացած 15%-ն արտադրվում է հարավային կիսագնդի 23° և 40° -ի միջև ընկած գոտում, հատկապես Արգենտինայում: Աֆրիկայում խաղողագործությունը համեմատաբար զարգացած է Մադրիբի¹ երկրներում՝ հատկապես Ալժիրում, ինչպես նաև Եգիպտոսում: Ասիայում խաղողի մշակությունը թույլ է զարգացած: Համեմատաբար զարգացած երկիրը Թուրքիան է:

Խաղողի առավել բարձր համային հատկանիշներ ունեցող տեսակներով և դրանից պատրաստված զինիների ու կոնյակի որակով առանձնանում է Հայաստանը: Ոչ տրանսպորտահարմարության պատճառով խաղողի համաշխարհային բերքի ընդամենը 2%-ն է արտահանվում (գլխավորապես Եվրոպայի երկրներ, Կանադա, Ռուսաստան):

ՄԱՐԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԳՆԱԿԱՆՆԵՐ



¹ Մադրիբի - արաբերեն արևմուտք: Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրները
202

դ) **ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆԱԿԱՔՈՒՅԵՐ** Տեխնիկական մշակաբույսերի արեալը հացահատիկների համեմատությամբ զգալիորեն նեղ է: Դա բացատրվում է բնական պայմանների նկատմամբ այդ մշակաբույսերի առանձնահատուկ պահանջվողությամբ, ինչպես նաև բարձր ապրանքային նշանակությամբ¹: Այս առումով տեխնիկական մշակաբույսեր մշակում են միայն առավել բարենպաստ պայմաններով օժտված այն տարածքներում, որոնք ապահովում են բարձր մրցակցություն տվյալ արտադրանքի միջազգային շուկայում:

Տեխնիկական որոշ մշակաբույսերի մշակությունը շատ աշխատատար է, որի պատճառով դրանց մշակման արեալները համընկնում են բնակչության բարձր խտության արեալներին: Նույնիսկ ավելին, երբեմն տեխնիկական մշակաբույսերի (չաքարեղեգի, սուրճի) բերքահավաքի ժամանակ այլ շրջաններից ներգրավում են լրացուցիչ աշխատուժ՝ վարձու բանվորներ: Տեխնիկական մշակաբույսերի կենտրոնացումն առանձին արեալներում պայմանավորված է նաև դրանց տրանսպորտահարմարությամբ: Տեխնիկական մշակաբույսերը տալիս են.

ա) տրանսպորտահարմար հումք (օրինակ՝ գետնանուշ),

բ) տրանսպորտահարմար կիսամթերք, որի արտադրությունը կարելի է կազմակերպել տվյալ տեխնիկական մշակաբույսի մշակության շրջանում (օրինակ բամբակազտման արտադրությունը՝ բամբակամշակման շրջաններում),

գ) տրանսպորտահարմար պատրաստի արտադրանք (օրինակ՝ շաքար):


Այս բոլորի պատճառով երկրների մեծ մասը մասնագիտանում է մեկ, երկու կամ հազվադեպ, երեք տեխնիկական մշակաբույսերի մշակության գծով:

Թելատու մշակաբույսերի բերքը հիմնականում օգտագործվում են թեթև արդյունաբերության մեջ որպես հումք:

Բամբակենին հնուց մշակվել է Ասիայի, Ամերիկայի, Աֆրիկայի մերձարևադարձային ու արևադարձային գոտիների երկրներում (Յնդկաստան, Չինաստան, Իրան, Սեքսիկա, Պերու):

Բամբակենին քերմասեր բույս է: Այն առավելագույն բարձր բերք է տալիս համապատասխան ոռոգման դեպքում: Մեքենայացման դժվարության պատճառով շատ աշխատատար է: Առավել արժեքավոր են բամբակենու երկարաթել և նրբաթել տեսակները:

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՄՇԱԿԵՆՈՒ ՇՐՋԱՆՆԵՐ



¹ Օրինակ կաուչուկի տնկատափերում ապրանքայնությունը հասնում է 100%-ի: 204

Բամբակագործությունը ներկայումս տեղաբաշխված է աշխարհի տարբեր տիպի 80 երկրներում: Բամբակի համաշխարհային համախառն բերքի շուրջ 30%-ը տալիս են Արևելյան և Հարավային Ասիայի երկրները, 25%-ը՝ ԱՄՆ-ը և Մեքսիկան, շուրջ 20%-ը՝ Միջին Ասիայի երկրները, իսկ մնացածը՝ Հարավային Ամերիկան, Աֆրիկան, Արևմտասիական երկրները:

Բամբակենի մշակվում է զարգացած ընդամենը 6 երկրում, ընդ որում համախառն բերքի 90%-ն արտադրվում է ԱՄՆ-ում, իսկ մնացածը՝ Հունաստանում, Իսպանիայում, Իսրայելում, Հարավաֆրիկյան Հանրապետությունում և Ավստրալիայում, միասին վերցրած:

Բամբակի գլխավոր արտահանողներն են Միջինասիական երկրները, Հնդկաստանը, իսկ գլխավոր ներկրողները՝ Եվրոպայի երկրներն ու Ճապոնիան:

Նոր զարգացող երկրների բամբակի համախառն բերքը մի կողմից անընդհատ ավելանում է, իսկ մյուս կողմից կրճատվում է արտահանությունը զարգացող ազգային տեքստիլ արդյունաբերության մեջ օգտագործելու հետևանքով:

Վուշը միամյա բույս է, որի տարբեր տեսակները մշակում են թել և յուղ ստանալու նպատակով:

երկարաթել վուշից ստանում են նուրբ վուշաթել, որից պատրաստում են սպիտակեղենի գործվածք, սեղանի սփռոցներ, սրբիչներ, հագուստ և կոպիտ վուշաթել, որից պատրաստում են բրեզենտ և տեխնիկական այլ գործվածքներ:

Երկարաթել վուշի մշակման աշխարհագրությունն, ի տարբերություն բամբակենու, շատ նեղ է: Որա 95-97%-ը կենտրոնացված է Եվրոպայի հյուսիսային գոլ ու խոնավ կլիմա ունեցող գոտու երկրներում (Ռուսաստան, Բելառուս, Ուկրաինա, Ֆրանսիա, Բելգիա, Նիդերլանդներ):

Արևադարձային կոպիտ թելատու կուլտուրաներն են **ջուտը** և **ջուտագգիները** (կենսաֆ), **ազավազգիները** (սիսալ, հենեկեն և ուրիշներ): Այս կուլտուրաներից ստացվող կոպիտ թելից պատրաստում են ճոպաններ ու կոպիտ տեխնիկական գործվածքներ, ինչպես նաև թուղթ:

Ջուտ մշակող և արտահանող գլխավոր երկրներն են Չինաստանը, Հնդկաստանն ու Բանգլադեշը, իսկ **սիսալ** մշակող և արտահանող գլխավոր երկրները գտնվում են Լատինական Ամերիկայում ու Արևելյան Աֆրիկայում:

Յուղատու մշակաբույսերը պարենի ու սննդի արդյունաբերության մեջ չափազանց մեծ դեր են կատարում: Յուղատու մի շարք մշակաբույսերի մշակությունը նպաստում է նաև անասնապահության զարգացմանը: Յուղը կորզելուց հետո այդ կուլտուրաների քուսպը անասունների համար բարձր սննդարար կեր է:

Յուղատու կուլտուրաների դերն առավել մեծ է **նոր զարգացող** այն երկրների բնակչության սննդաբաժնում, որտեղ անասնապահության թույլ զարգացման հետևանքով աննշան է մսի օգտագործման բաժինը:

Բուսական յուղ ստանալու նպատակով հիմնականում մշակում են միամյա բույսեր (օրինակ՝ գետնանուշ, արևածաղիկ), իսկ փոքր չափով՝ նաև բազմամյա բույսեր (օրինակ՝ ձիթենի, կոկոսյան և յուղատու արմավենի):

Սոյայի հայրենիքն Արևելյան Ասիան է, որտեղից այն տարածվել է աշխարհի այլ շրջաններում: Ներկայումս սոյա մշակող առաջատար երկրներն են ԱՄՆ-ը, Չինաստանը և Բրազիլիան:

Սոյայի հատիկներն օգտագործվում են յուղ ստանալու համար, հրուշակեղենի արտադրության, իսկ քուսպը՝ անասնապահության մեջ:

Գետնանուշը մշակում են արևադարձային, մերձարևադարձային ու բարեխառն գոտիներում: Գլխավոր արտադրողներն են Հնդկաստանը, Չինաստանը, Արևմտյան ու Կենտրոնական Աֆրիկայի երկրները, ԱՄՆ-ը, Արգենտինան, Բրազիլիան: Գետնանուշի յուղն օգտագործվում է ձկան պահածոների և հրուշակեղենի արտադրության մեջ:

Արևածաղիկը հյուսիսամերիկյան մշակաբույս է, որը XVII դարում բերվել է Եվրոպա: Արևածաղիկի համախառն բերքով աշխարհի առաջատար երկրներն են ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Ուկրաինան, Հարավային Եվրոպայի երկրները, Թուրքիան, Արգենտինան:

Յուղատու վուշ (կտավատ) մշակում են Ռուսաստանում, Ղազախստանում, Կանադայում, ԱՄՆ-ում, Արգենտինայում, Հնդկաստանում:

Ռապս մշակում են գլխավորապես Հնդկաստանում, Չինաստանում, Արևմտաեվրոպական երկրներում, Կանադայում:

Չիթենու մշակման գլխավոր շրջանը Միջերկրական ծովի ափերի երկրներն են, հատկապես Իսպանիան, Իտալիան, Հունաստանը, Թուրքիան, Թունիսը, Մարոկոն:

Արմավի յուղի արտադրությամբ առաջատար երկիրը Մալայզիան է:

Քանի որ յուղատու կուլտուրաների մշակության գլխավոր նպատակը յուղ ստանալն է, իսկ դրա պարունակությունը տարբեր բույսերի սերմերի մեջ տարբեր է, ուստի համեմատելի դարձնելու համար նպատակահարմար է օգտագործել ոչ թե բույսերի բերքի ընդհանուր ֆիզիկական քաշը, այլ դրանում յուղի պարունակությունը (Աղյուսակ 9.4):

Շաքարատու կուլտուրաներ: Շաքար պարունակում են շատ բույսեր, սակայն արդյունաբերական եղանակով շաքար ստանալու համար օգտագործվում են շաքարեղեգը և շաքարի ճակնդեղը:

Աղյուսակ 7.4
Յուղի արտադրությունը 2000 թ.

Տարածաշրջաններ	Յուղի արտադրանքը (հազար տոննա)	Երկրներ	Յուղի արտադրանքը (հազար տոննա)
Աշխարհ, այդ թվում.	109669	ԱՄՆ	16126
Ասիա	52633	Չինաստան	15334
Հս. Ամերիկա	20562	Մալայզիա	12387
Հվ. Ամերիկա	14902	Ինդոնեզիա	10337

Եվրոպա	12931	Հնդկաստան	8606
Աֆրիկա	7068	Բրազիլիա	6645
Օվկիանիա (ներառյալ Ավստրալիան)	1573	Արգենտինա	6267

Շաքարեղեգը շատ ջերմապահանջ բույս է: Դրա աճի համար անհրաժեշտ է տարեկան 5000-6000°C ակտիվ ջերմաստիճանների գումար, ընդ որում ոչ պակաս +15°C նվազագույն ջերմաստիճան:

Շաքարեղեգն աճում է մերձարևադարձային և արևադարձային գոտու շատ երկրներում, սակայն առավել նպաստավոր պայմաններ կան Ինդոնեզիայում և Ֆիլիպիններում: Շաքարեղեգը բազմամյա բույս է (15-25 տարի), սակայն տարիքին գուզընթաց նվազում է բերքատվությունը:

Շաքարեղեգի առանձնահատկությունն այն է, որ հումքը պետք է մշակել անմիջապես բերքահավաքից հետո, քանի որ շաքարի պարունակությունը հետզհետե նվազում է (առաջին երկու օրվա ընթացքում շաքարայնությունը նվազում է 8, իսկ չորս օրից հետո 30%-ով): Շաքարեղեգի բերքահավաքը պահանջում է մարդկային ռեսուրսների մեծ մոբիլիզացում կամ էլ բերքահավաքի մեքենայացում: Շաքարեղեգի համախառն բերքը (1.2 մլրդ տ) զգալիորեն գերազանցում է մյուս բոլոր մշակաբույսերից յուրաքանչյուրի համախառն բերքին:

Շաքարի ճակնդեղը սակավ ջերմապահանջ բույս է, ուստի մշակվում է բարեխառն գոտում: Շաքարեղեգի համեմատությամբ շաքարի ճակնդեղի հումքը մինչև արդյունաբերական մշակումը, կարելի է պահել ավելի երկար (թայց ոչ ավելի քան կես տարի):

Շաքարի ճակնդեղը շաքարեղեգի համեմատությամբ երիտասարդ մշակաբույս է: Այն սկսել են մշակել XVIII դարից և այդ ժամանակահատվածում ճակնդեղի շաքարայնությունն անընդհատ բարձրացվել է, հասնելով 17-18, իսկ առանձին դեպքերում 23%-ի:

Շաքարի համաշխարհային արտադրանքի աճը գերազանցում է բնակչության թվաքանակի աճին: Նախապատերազմյան ժամանակաշրջանից մինչև 1998 թ. աշխարհի բնակչության թիվն աճել է 3 անգամ, իսկ շաքարի արտադրանքը 4 անգամ:

Աշխարհի յուրաքանչյուր բնակչին տարեկան միջին հաշվով ընկնում է մոտ 20 կգ շաքար, սակայն իրական սպառման չափերը խիստ տարբերվում են առանձին երկրներում¹:

¹ Ռուսնդայում 1, Բանգլադեշում և Եթովպիայում 2, Ավստրալիայում 51, Կուբայում 53, Իսլանդիայում 59, Ֆիջիում 70 կգ/տարեկան: Հայաստանի Հանրապետությունում այդ ցուցանիշը նվազել է և ներկայումս կրկին ավելանալով կազմում է շուրջ 18 կգ/տարեկան: 208

ե) Տոնուսավորող կուլտուրաներ (թեյ, սուրճ, կակաո)

Տոնուսավորող մշակաբույսերի օգտագործման շնորհիվ բարձրանում է մարդու տոնուսը կենսագործունեության լարվածությունը, վերանում է հոգնածությունը և կարգավորվում է ներքին օրգանների, օրինակ, սրտամկանի աշխատանքը: Բացի այդ կակաոն լայնորեն օգտագործվում է հրուշակեղենի արտադրության մեջ: Այս կուլտուրաները վաղուց մտել են աշխարհի ժողովուրդների սննդաբաժնի մեջ:

Թեյի հայրենիքը Չինաստանն է, որտեղ այն օգտագործել են դեռևս 2800 տարի մ.թ.ա.: Թեյը արևադարձային ու մերձարևադարձային խոնավ կլիմայական գոտիներում աճող մշակաբույս է:

Լավագույն են համարվում Հիմալայան լեռնալանջերին, ծովի մակարդակից շուրջ 2000 մ բարձրության վրա, մշակվող Դարջիլինգ, Շրի Լանկայի և Ասամի (Հնդկաստան) տեսակի թեյերը:

Սուրճի ծառն արևադարձային բույս է, որի հայրենիքը, ենթադրվում է, որ Եթովպիան է: Սուրճը եվրոպայում տարածել են արաբները, իսկ ավելի ուշ՝ եվրոպացիները տարածել են Լատինական Ամերիկայում:

Կանաչ սուրճի համաշխարհային բերքի մեծ մասը տալիս են Լատինական Ամերիկայի և Աֆրիկայի երկրները (Բրազիլիա, Կոլումբիա, Եթովպիա, Անգոլա, Մադագասկար, Կոտդիվուար):

Կակաոյի ծառը խոնավ արևադարձային կլիմայական պայմաններում և ծովի մակերևույթից ոչ մեծ բարձրությունների վրա աճող բույս է: Համընկնում է սուրճի մշակության շրջաններին: Կակաոյի պտուղներից ստանում են փոշի և յուղ, որոնք երկուսն էլ օգտագործվում են հրուշակեղենի (շոկոլադի) արտադրության մեջ:

Կակաոն լատինաամերիկյան մշակաբույս է, սակայն ներկայումս ավելի լայնորեն արմատավորվել է Աֆրիկայում (Գանա, Կոտդիվուար, Նիգերիա և Կամերուն):

Ծխախոտը հարավամերիկյան (Պերու) կուլտուրա է, որը տարածված է աշխարհի շատ երկրներում: Այն ջերմապահանջ և միաժամանակ բավականին խոնավապահանջ բույս է, որի պատճառով ավելի լավ է հարմարվում բարեխառն գոտու սևահողերին ու շագանակագույն հողերին: Լավագույն պայմաններ կան ծովափնյա գոտիներում, որտեղ էլ աճում են այդ «թույնի լավագույն տեսակները»:

Ծխախոտի մշակությունը բարձր աշխատատար է: Ջարգացած երկրներից ծխախոտի խոշոր արտադրողներ են ԱՄՆ-ը, Կանադան, Հունաստանը, Իտալիան, Ֆրանսիան, զարգացող երկրներից՝ Հնդկաստանը, Թուրքիան, Բրազիլիան, Արգենտինան, Բուլղարիան, Լեհաստանը:

Կաուչուկատու բույսերից կարևոր արդյունաբերական նշանակություն ունի հետյան, որի հայրենիքը Բրազիլիան է: Այն ներկայումս մշակվում է Հարավարևելյան Ասիայի երկրների Մալայզիայի և Ինդոնեզիայի տնկատափերում, որտեղ այդ բույսի բերքատվությունը զգալիորեն բարձր է քան Բրազիլիայում: Վերջինում այդ բույսն աճում է վայրի բնության մեջ:

Հետևյալի բնի վրա կատարված կտրվածքներից հավաքված կաթնանման հեղուկը լատեքսը մշակվում է տեղում կամ էլ դրանից ստանում են կիսապատրաստուկ:

Բնական կաուչուկի արտահանության 2/3-ը բաժին է ընկնում Սալյազիային և Ինդոնեզիային, իսկ մնացածը Թաիլանդին, Շրի Լանկային, Հնդկաստանին, Նիգերիային և մի քանի այլ երկրներին:

7.7 Անասնապահություն

Անասնապահությունը գյուղատնտեսության կարևորագույն ճյուղը, ծագել է շատ հին ժամանակներում՝ վայրի կենդանիների ընտելացմամբ: Հետագայում մարդը սկսել է զբաղվել նաև գյուղատնտեսական կենդանիների բուծմամբ, այն դնելով գիտական հիմքերի վրա: Այլ կերպ ասած ներկայումս տնտեսությունների շրջանակներում անասնապահությունը զուգակցվում է անասնաբուծության հետ:

Անասնապահությունն աշխարհի արագ աճող ճյուղերից է, բնակչությանը մատակարարում է կաթնային, մսային և այլ սնունդ, թեթև արդյունաբերությանը՝ բնական հումքի որոշ տեսակներ (օրինակ՝ կաշի, բուրդ, մորթի, մետաքս, թել), բուսաբուծությանը՝ օրգանական պարարտանյութեր (գոմաղբ, թռչնաղբ), տրանսպորտին՝ քաշող անասուններ և նույնիսկ ինքն իրեն սնունդ (օրինակ՝ սերքաշ կաթ մատղաշի հումար):

Անասնապահության արտադրանքի մեծացմանն ու ինտենսիվացմանը զուգընթաց մեծանում է այս ճյուղի կախումը բուսաբուծությունից՝ անասնակեր մատակարարող ճյուղից¹:

Անասնապահության գլխավոր ենթաճյուղերն են **խոշոր եղջերավոր, մանր եղջերավոր անասնապահությունը, խոզաբուծությունը, ծիաբուծությունը, թռչնաբուծությունը, մեղվաբուծությունը, շերամապահությունը և այլ կենդանիների բուծումը:**

Անասնապահության տեղաբաշխումը որոշվում է բնական գործոնների (օրինակ՝ բնական արոտավայրերի առկայություն) ու սոցիալ-տնտեսական գործոնների զուգակցված ազդեցությամբ:


Անասնապահությունն առանձին տարածաշրջաններում զարգանում է որոշակի մասնագիտացման ուղղությամբ, որը որոշվում է նրան ներկայացվող մթերքների արտադրության պահանջարկով կամ էլ որևէ մթերքի արտադրության համար առավել նպաստավոր բնական պայմաններով: Անասնապահության զարգացման միտումը ևս ինտենսիվացումն է (բուսաբուծության նման):

¹ Ներկայումս անասնապահության ընդհանուր ծավալում բուսաբուծությունից կտրված արոտային անասնապահությանը (օրինակ՝ հյուսիսային եղջերավաբուծության) բաժինն աննշան է:

Աշխարհի **խոշոր եղջերավոր անասունները** (2000 թ.՝ 1.5 մլրդ գլուխ) այլ անասունների համեմատությամբ ավելի հավասարաչափ են տեղաբաշխված:

Խոշոր եղջերավոր անասնապահության ժողովրդատնտեսական առաջնային նշանակությունը բնակչությանը կաթ մատակարարելն է. բացի այդ, այն մատակարարում է նաև միս, կաշի և այլն: Եթե անասնապահության ընդհանուր արտադրանքի կառուցվածքում (դրամական արտահայտությամբ) բացահայտորեն գերակշռում է կաթի բաժինը, ապա անասնապահության մասնագիտացման ուղղությունն անվանվում է **կաթնատու (կաթնային)**, եթե կաթի բաժինը մսի բաժնին գերազանցում է աննշան չափով, ապա մասնագիտացումն անվանվում է **կաթնամսատու (կաթնամսային)**¹, իսկ եթե բացահայտորեն գերազանցում է մսի բաժինը՝ ապա այդպիսի մասնագիտացումն անվանվում է **մսատու (մսային)**:

¹ Հակառակ դեպքում՝ մսակաթնատու (մսակաթնային):



Կաթնատու անասնապահությունը զարգանում է կամ խոշոր քաղաքների թարմ կաթնամթերքի սպառման շուկայի շրջակայքում, կամ էլ այն շրջաններում, որտեղ դրա համար կա անհրաժեշտ բնական նախադրյալ թարմ, հյութալի խոտի ռեսուրս: Երկրորդ դեպքում կաթից պատրաստվում են պանիր, յուղ, կաթնային պահածոներ, որոնք փոխադրվում են սպառման խոշոր շրջաններ:

Կաթնային ուղղության ինտենսիվ ապրանքային անասնապահությունը գլխավորապես զարգացած է Արևմտյան Եվրոպայի երկրներում: Այս երկրներում կովերի միջին տարեկան կաթնատվությունը 4000-6000 կգ է, իսկ առանձին տնտեսություններում հասնում է նույնիսկ 10000 կգ-ի (համեմատության համար նշենք, որ մեր հանրապետությունում այդ ցուցանիշները, համապատասխանաբար, կազմում են 1500 կգ և 4000 կգ):

Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի մեծությամբ աշխարհում առաջին երկիրը Չեռնոստանն է: Սակայն խոշոր եղջերավոր անասնապահությունն այդ երկրում լիարժեք ապրանքային արտադրություն չէ այն պատճառով, որ համաձայն հինդուիստական կրոնի, չի կարելի մորթել կովին սուրբ կենդանուն: Երկրում ստեղծվել է մի անհեթեթ վիճակ, երբ մի կողմից միլիոնավոր կովեր թափառում են իրենց համար հատուկ ստեղծված արգելավայրերում, իսկ մյուս կողմից, երկրի բնակչության մեծ մասը չի օգտագործում բավարար քանակությամբ միս: Բնակչության մեծ մասն օգտագործում է միայն կովի կաթը¹:

Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով առաջատարը Ասիան է, որին հետևում են Չարավային Ամերիկան, Աֆրիկան, Գյուսիսային Ամերիկան, Եվրոպան և Օվկիանիան:

Սակայն անասնապահության զարգացման մակարդակը որոշվում է ոչ թե անասունների գլխաքանակով, այլ հարաբերական ցուցանիշներով. կամ **100 բնակչին ընկնող անասունների գլխաքանակով**, կամ **100 հա հողատարածության ընկնող անասունների գլխաքանակով** կամ էլ **մեկ կովի կաթնատվությամբ**:

Աշխարհում 100 բնակչին միջին հաշվով ընկնում է 25 խոշոր եղջերավոր անասուն, սակայն Օվկիանիայում այդ ցուցանիշը մեծ է 6 անգամ, Չարավային Ամերիկայում 4.5 անգամ, Գյուսիսային Ամերիկայում 2.5 անգամ: Աֆրիկայում այդ ցուցանիշը մի փոքր է գերազանցում համաշխարհայինին, իսկ Ասիայում և Եվրոպայում կազմում է կեսից մի փոքր ավելին:

¹ Կովերին որպես քարշող ուժ օգտագործելու հետևանքով դրանց կաթնատվությունը շատ ցածր է:



Աշխարհի մանր եղջերավոր անասունների գլխաքանակը 2000 թ. 1778 մլն էր, ինչը 30 մլն-ով ավելի է, քան 1993 թ.: Զնայած այս ընդհանուր գլխաքանակի աճին, որոշ չափով նվազել է ոչխարների գլխաքանակը: Նշված կրճատումը տեղի է ունեցել Ավստրալիայում, Նոր Զելանդիայում, Հարավային Ամերիկայում և Եվրոպայում:

Ոչխարաբուծության եկամտի մեջ առանձին մթերքների բաժնին համապատասխան առանձնացվում են *բրդատու, մսաճարպատու, մորթատու* այդ թվում *կարակուլային և դրանք զուգակցող մասնագիտացման ուղղություններ*:

Ոչխարաբուծության *բրդատու* ուղղության շրջանակում առանձնացվում են ավելի նեղ մասնագիտացումներ. նրբագեղմ, կիսանրբագեղմ, կոպտաբուրդ:

Նրբագեղմ ոչխարաբուծության խոշորագույն արեալը Ավստրալիայի սավանաներն են: Վերջին տարիներին անընդմեջ կրկնվող երաշտների հետևանքով նվազել է յուրաքանչյուր տարի հավաքվող խոտի քանակը և դրա պատճառով էլ ոչխարների գլխաքանակը (1990 թ. 170 մլն, 2000 թ. 116 մլն գլուխ): Զինաստանում, ընդհակառակը, ոչխարաբուծությունն արագորեն զարգանում է (1990 թ. 111 մլն, 2000 թ. շուրջ 140 մլն գլուխ): Առաջատար ոչխարաբուծական երկրներ են նաև Իրանը, Հարավաֆրիկյան Հանրապետությունը, Սուդանը, Հնդկաստանը, Թուրքիան:


Այծերի թիվը 2.5-3 անգամ գիջում է ոչխարների թվին: Առանձնապես արժեքավոր բուրդ են տալիս մոհայր ցեղի այծերը, որոնց բուծման հին շրջանը սահմանափակվում էր Իրանի ու Թուրքիայի տարածքով, սակայն նոր շրջան է ձևավորվել Հարավային Աֆրիկայում:

Հարավային Ամերիկայում, հատկապես Անդյան լեռներում բուծում են լամաներ (ուղտայծեր):

Աշխարհի ոչխարների և այծերի ընդհանուր գլխաքանակից 280 միլիոնը Զինաստանում է, 181 միլիոնը Հնդկաստանում, 116 միլիոնը Ավստրալիայում, 81 միլիոնը Իրանում:

Խոզաբուծությունը մսատու անասնապահության կարևորագույն ճյուղն է, որի բաժինը մի համաշխարհային արտադրության մեջ անընդհատ աճում է խոզերի գլխաքանակի արագ աճի շնորհիվ (1957 թ. 674 մլն, 2000 թ. 908 մլն գլուխ):

Խոզաբուծության արագ աճը պայմանավորված է խոզերի բարձր արտադրողական հատկություններով, շատ արագ հասունացման, ամենակերության, տարբեր կլիմայական պայմաններին հարմարվելու հատկություններով:



խոզերի գլխաքանակի մեծ մասը 59%-ը կենտրոնացված է Ասիայում. այդ թվում 48%-ը Չինաստանում: Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներում է կենտրոնացված խոզերի համաշխարհային գլխաքանակի 33%-ը:

Խոզաբուծությունը զարգանում է մասային, ճարպային և բեկոնային (խոզապխտային) ուղղություններով: Վերջինս առավելապես զարգացած է Դանիայում, Հունգարիայում, Լեհաստանում, Հարավսլավիայում:

Որպես անասնապահության զարգացման մակարդակ արտահայտող առավել բնութագրական ցուցանիշ ընդունելով բնակչության մեկ շնչի հաշվով արտադրվող մսի տարեկան քանակը¹, աշխարհի տարածաշրջաններն ու երկրները կարելի է դասակարգել խմբերի:

Մեկ շնչին ընկնող մսի արտադրությունը աշխարհում և առանձին տարածաշրջաններում ու երկրներում (կգ/տարեկան), 1998թ. Աղյուսակ 7.5

Տարածաշրջաններ	Մեկ շնչին ընկնող մսի արտադրանքը	Երկրներ	Մեկ շնչին ընկնող մսի արտադրանքը
Աշխարհ, այդ թվում	24		
Աֆրիկա	7	Նիգերիա	6
Հյուսիսային Ամերիկա	55	Հնդկաստան	2
Հարավային Ամերիկա	37	ԱՄՆ	73
Ասիա	16	Արգենտինա	76
Եվրոպա	44	Ճապոնիա	15
Օվկիանիա	131	Գերմանիա	64
		Ավստրալիա	136
		Նոր Զելանդիա	336

7.8 Ձկնորսություն, ձկնաբուծություն և այլ գործունեություններ Ձկնորսությունն ու ձկնաբուծությունը միասին աշխարհի ավելի քան 20 մլն մարդու զբաղվածության, ինչպես նաև 100 մլն մարդու կենսամիջոց ապահովող բնագավառն է: Ձկնորսությունը նաև բնակչությանը սպիտակուցներով և վիտամիններով հարուստ ձկան միս մատակարարող բնագավառ է: Ներկայումս այն ապահովում է մարդկության օգտագործած կենդանական ծագման պրոտեինի 30%-ը: Ձկնորսության դերն անընդհատ մեծանում է կապված աշխարհի բնակչության արագ աճի և անասնապահության ոչ համապա-

¹ ՄԱԿ-ի տեղեկատվության մեջ մսի ընդհանուր արտադրանքի մեջ ենթադրվում է տավարի, խոզի և գառի միսը. իսկ թռչնի միսը «սպիտակ միս» անվանմամբ հաշվարկվում է առանձին:

տասխան տեմպերով զարգացման հետ: Այս պատճառով էլ արագորեն մեծանում է ձկան համաշխարհային որսը: Միայն 1986-1998 թթ. ընթացքում ձկան համաշխարհային որսն ավելացել է մոտ 27%-ով (92-ից 117 մլն տ)¹: Ձկան որսի նշված աճին զուգահեռ տեղի է ունենում նաև դրա աշխարհագրական տեղաբաշխման փոփոխություն: Դրա գլխավոր միտումը զարգացած երկրների դերի փոքրացումն է և նոր զարգացող երկրների դերի մեծացումը: Եթե մինչև 1980 թ. ձկան համաշխարհային որսի մեջ մեծ էր զարգացած երկրների բաժինը, ապա այժմ առաջատարի դերը կատարում են նոր զարգացող երկրները:

Այս երևույթը բացատրվում է նրանով, որ զարգացած երկրներում տնտեսական զարգացման ուղորտներից նախապատվությունն աստիճանաբար անցնում է «էլիտար» բնագավառներին (էլեկտրոնային, ավիահրթիռաշինական, ռոբոտաշինական, միկրոկենսաբանական և այլ ճյուղերին): Սակայն դա չի նշանակում թե զարգացած երկրներում նվազում է ձկան սպառումը: Պարզապես այդ երկրները սկսում են մեծացող չափերով սառեցրած ձուկ և ձկնամթերքներ ներկրել նոր զարգացող երկրներից:


Մյուս կարևոր պատճառն էլ համաշխարհային օվկիանոսի առափնյա ջրերում երկրների տարածքային գոտու ընդարձակումն է մի շարք զարգացած երկրների նախաձեռնությամբ:

Եթե նախկինում երկրների տարածքային ջրերն ընդգրկում էին ծովափին զուգահեռ 12 մղոնանոց, ապա այժմ տնտեսական գոտին ընդգրկում է 200 մղոնանոց ավիաներձ շերտը, որում այլ երկրների ձկնորսական նավերին չի թույլատրվում ձուկ որսալ:

Խոսելով ձկնորսության զարգացման հեռանկարների մասին պետք է հիշել, որ համաշխարհային օվկիանոսի ռեսուրսների ինքնավերականգնումը չխախտելու համար կարելի է որսալ տարեկան ոչ ավելի քան 150 մլն տ ձուկ և ծովային կենդանիներ:

¹ Ձկան համաշխարհային որսի ընդհանուր քանակի 30%-ը ձկան այլուրի տեսքով օգտագործվում է որպես սննդարար անասնակեր, այսինքն վերջին հաշվով մարդկանց կողմից օգտագործվում է ոչ անմիջականորեն

ԱՐԴՅՈՒՄԳՈՐԾՄԿԱՆ ՁԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ



Ներկայումս աշխարհի ձկնային պաշարների մոտ 70%-ը տազնապալի վիճակում է: Դրանք լրիվ կամ շատ ինտենսիվորեն շահագործվող ջրային տարածքներն են (44%), գերշահագործվող տարածքները (16%), սպառված տարածքները (6%) և գերորսից շատ դանդաղորեն վերականգնվող տարածքները (3%): Դրանք շարքում են Սև, Արևելա-Չինական, Դեղին, Սիջերկրական, Յուաի-սային ծովերը, Սիամի ծոցը և Ատլանտյան օվկիանոսի հյուսիսային մասը:


Այդ պատճառով էլ ջրային օրգանիզմների (ձկների, կակղամորթների, խեցգետնակերպերի), ինչպես նաև ջրային բույսերի համաշխարհային աճող պահանջարկը բավարարելու հուսալի աղբյուր է դարձել **աքվակուլտուրան**: Այն մարդկանց հայտնի է եղել դեռևս 3 հազարամյակ առաջ, սակայն արագորեն զարգանում է միայն վերջին տասնամյակներում: 1990-ական թվականների կեսին աքվակուլտուրայի արտադրանքի (բերքի) ծավալը հասել էր շուրջ 25 մլն տ: Այն մեծ մասամբ տեղաբաշխված է Ասիայում (87%), այդ թվում հատկապես Չինաստանում (63%): Չինաստանին զգալիորեն զիջում են Ղրղզստանը, Ճապոնիան, Ինդոնեզիան, ԱՄՆ-ը, Թաիլանդը և այլք: Չնայած գյուղատնտեսական արտադրանքի մեծ աճին, մարդկանց պարենով ապահովելու գործում դեռևս շարունակում են զգալի դեր կատարել անտառների բարիքների հավաքչությունը և որսորդությունը:


Աշխարհի անտառների շուրջ 3400 մլն հա ընդհանուր տարածքը ինտենսիվ օգտագործման հետևանքով յուրաքանչյուր տարի կրճատվում է մոտ 300 000 հա-ով: Դրանք առավելապես արևադարձային ու մերձհասարակածային գոտիների փոփոխական խոնավ անտառներն են:

Անտառների շուրջ 6000 բուսատեսակներ օգտագործվում են դեղորայքի արտադրության մեջ, որի արժեքը 1990-ական թվականներին գնահատվում է տարեկան 100 մլրդ ԱՄՆ դոլար: Ծառերի տերևները, կեղևը, սերմերը, անտառային սնկերը կազմում են անտառային գոտու բնակիչների սննդաբաժնի կարևոր մասը:

Բրազիլական Ամազոնիայի ավելի քան 1.5 մլն մարդու եկամտի զխավոր աղբյուրը հեյա ծառից ստացվող լատեքսի և անտառային այլ նյութերի հավաքչությունն է: Սագո արմավը Օվկիանիայի կղզիների հարյուր հազարավոր բնակիչների զխավոր սնունդն է: Անտառներից հավաքում են նաև վայրի մեղր: Օրինակ՝ Ղրղզստանում յուրաքանչյուր տարի հավաքվում է շուրջ 40 հազ.տ վայրի մեղր:

ՄԱՐԴ ԼՈՒՅՅԵ ՂՄՔՓԱՇԽՈՒՄ





Մեծ է նաև անտառների ու այլ տարածքների կենդանական սննդամթերքի նշանակությունը, հատկապես հեռավոր գյուղերի բնակչության համար: Օրինակ՝ Պերուական Ամազոնիայի բնակչությունն իր սննդաբաժնի կենդանական ծագման պրոտեինների 85%-ը համալրում է ի հաշիվ վայրի կենդանիների որսի: Ընդհանուր հաշվով աշխարհի 62 նոր զարգացող երկրի բնակչության սննդաբաժնում կենդանական ծագման պրոտեինների ընդհանուր քանակի առնվազն 1/5-ը համալրվում է վայրի կենդանիների որսի շնորհիվ:

Որսորդությունն ու հավաքչությունը դեռևս զգալի մասշտաբներով պահպանվում են նաև որոշ զարգացած երկրներում (Ավստրալիա, Կանադա, Շվեդիա) ու Ռուսաստանում: Օրինակ՝ Ավստրալիայում տարեկան որսում են միջին հաշվով 5 մլն ագելազ, իսկ դրանց գլխաքանակի մեծացման պատճառով 2002 թ. որսվել է նույնիսկ 7 մլն գլուխ ագելազ:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Բնութագրել համաշխարհային տնտեսության, ինչպես նաև զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրների ազգային տնտեսության մեջ գյուղատնտեսության դերի փոփոխությունները, նշել դրանց պատճառները:
2. Բնութագրել և գնահատել համաշխարհային գյուղատնտեսական արտադրության զարգացումը աշխարհի բնակչության պահանջումների բավարարման տեսակետից:
3. Բնութագրել գյուղատնտեսական արտադրության զարգացման ուղղությունները տարբեր տիպի երկրների խմբերում:
4. Բնութագրել և գնահատել գյուղատնտեսական արտադրության զարգացման ու տեղաբաշխման բնական ու սոցիալ-տնտեսական պայմաններն ու ռեսուրսները:
5. Բնութագրել բուսաբուծության գլխավոր ենթաճյուղերի՝ հացահատիկային և տեխնիկական մշակաբույսերի ու պտղաբուծության տեղաբաշխման առանձնահատկություններն ու գլխավոր արեալները:
6. Բնութագրել անասնապահության գլխավոր ենթաճյուղերի՝ խոշոր եղջերավոր, մանր եղջերավոր անասնապահության և խոզաբուծության տեղաբաշխման առանձնահատկություններն ու գլխավոր արեալները:
7. Բնութագրել ծնորսության, որսորդության և անտառային նյութերի հավաքչության նշանակությունը մարդկանց պարենամթերքով և այլ նյութերով բավարարելու գործում և նշել դրանց տարածման գլխավոր արեալները:

ՔԼՈՒԽ 8 ՏՐԱՆՍՊՈՐՏ

8.1 Տրանսպորտի դերը, զարգացման միտումները: Տրանսպորտային ցանցի խտությունը

Ի տարբերություն արդյունաբերական ու գյուղատնտեսական արտադրության, որոնք անվերապահորեն նյութական արտադրության ճյուղեր են, տրանսպորտը նյութական արտադրության ճյուղ է համարվում որոշ վերապահումով:

Տրանսպորտն, ինչպես հայտնի է, կատարում է երկու տարբեր գործառնությունների ու ուղևորների փոխադրում: Բեռների փոխադրումը ցանկացած արտադրական գործընթացի պարտադիր մասն է կամ դրա շարունակությունը շրջանառության ոլորտում: Հասկանալի է, որ տրանսպորտի շնորհիվ է հունքը հասցվում արտադրական ձեռնարկություններին, ինչպես նաև դրանցում արտադրված ապրանքները սպառողներին:

Չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ տրանսպորտը բուն արտադրական որոշ գործընթացներում ունի ակտիվ մասնակցություն, առանց որի անհնար է այդ գործընթացների իրականացումը: Օրինակ սև մետաղածուլական կոմբինատում հալած մետաղը ծուլման արտադրամասից կադալարման կամ գլանման արտադրամասեր է փոխադրվում հատուկ տրանսպորտային միջոցներով: Ընդհանուր առմամբ միջարտադրամասային տրանսպորտ ունեն բոլոր հսկա ձեռնարկությունները:

Ինչ վերաբերում է ուղևորատար, հատկապես անձնական օգտագործման տրանսպորտին, ապա շատ գիտնականների կարծիքով այն պետք է դասել ոչ արտադրական ոլորտի ճյուղերի շարքին: Այսպիսով, տրանսպորտում, ընդհանուր առմամբ, նյութական բարիք չի ստեղծվում (ինչպես արդյունաբերական ու գյուղատնտեսական արտադրություններում), սակայն նյութական արտադրության գործընթացին բեռնատար տրանսպորտի անմիջական մասնակցության ընթացքում կատարած ներդրումների (տրանսպորտային ծախսերի) հետևանքով բարձրանում է նյութական բարիքի ապրանքի ինքնարժեքը, այսինքն ստեղծվում է նյութական արժեք: Հենց այս հանգամանքը նկատի ունենալով էլ **տրանսպորտը, վերջին հաշվով դիտվում է որպես նյութական արտադրության կարևոր ճյուղ:**

Տրանսպորտը, ինչպես յուրաքանչյուր երկրի ազգային տնտեսության, այնպես էլ, ամբողջությամբ, համաշխարհային տնտեսության զարգացման կարևորագույն նախադրյալներից է: Այն յուրահատուկ դեր ունի երկրների ու շրջանների մասնագիտացման գործում («Աշխարհի գյուղատնտեսությունը» բաժնում բերված է Շրի Լանկայի Կանդիի շրջանում սուրճի մասնագիտացված տնտեսության ձևավորման գործում երկաթուղու կատարած մեծ դերի օրինակը):

Տրանսպորտի դերի կարևորության մասին շատ պատկերավոր կարծիք է արտահայտել ռուս աշխարհագետ Ն. Բարանսկին: Տրանսպորտային ցանցը քաղաքային տարաբնակեցման համակարգի հետ միասին նա համարում էր այն հիմքը,

որի վրա հենված են տնտեսության մյուս բոլոր օղակները¹: Նա հատուկ ընդգծել է նաև տրանսպորտի առանձնահատուկ մեծ դերը աշխատանքի տարածքային բաժանման ու երկրի տարբեր շրջանները մեկ միասնական ժողովրդատնտեսական համալիրի մեջ միավորելու գործում²:

Սակայն, մյուս կողմից, տրանսպորտի ու կապի ժողովրդական տնտեսության ինքնուրույն ճյուղի վրա ազդում են տնտեսական, բնական, սոցիալական ու այլ պայմանները, ինչպես նաև տեխնիկայի զարգացման մակարդակը: Տրանսպորտի ու կապի վրա տնտեսական պայմանների ազդեցությունը հիմնականում արտահայտվում է միջազգային տնտեսական իրադրությամբ, փոխադրվող ապրանքների ու հումքի ծավալով, վառելիքի ու տրանսպորտային միջոցների գներով:

Համաշխարհային տնտեսությունը, ելնելով իր զարգացման միտումներից, քանակական ու որակական պահանջներ է ներկայացնում տրանսպորտին ու կապին: Դրանք իրականացվում են գիտատեխնիկական առաջադիմության շնորհիվ: Գտա ազդեցությամբ տրանսպորտն ու կապը հագեցվում են թանկարժեք, այդ թվում էլ էկտրոնային սարքավորումներ, որի շնորհիվ բարձրանում է տրանսպորտային համակարգի տնտեսական արդյունավետությունը և գործունեության հուսալիությունը, տրանսպորտային միջոցները էկոլոգիական առումով շրջակա միջավայրի համար դառնում են ավելի ու ավելի սակավ վնասակար: Գտա-ն նպաստում է ոչ միայն տրանսպորտի հին տեսակների կատարելագործմանը, այլ նաև նոր տեսակների ձևավորմանը: Նման իրադրությունում մրցակցություն է առաջացել տրանսպորտի հին (երկաթուղային, ծովային) ու նոր (ավտոմոբիլային, խողովակաշարային, օդային) տեսակների միջև: Այդ մրցակցությունն էլ ավելի է սրվում բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի համատարած կառուցման արդյունքում: Այդ գծերով որոշակի պայմաններում էլեկտրական էներգիայի փոխադրումը տնտեսապես ավելի ծեռնուտ է տրանսպորտի այլ տեսակներով վառելիքի փոխադրման համեմատությամբ:

Գտա ազդեցությամբ տրանսպորտի ու կապի զարգացումը ժամանակակից փուլում բնութագրվում է մի շարք միտումներով, որոնցից առավել նշանավորները հետևյալներն են.

1. **Տրանսպորտային ուղիների ընդհանուր երկարության աճը**, որը հասել է շուրջ 35 մլն կմ-ի (առանց ծովային ուղիների):

2. **Տրանսպորտի կատարած աշխատանքի ծավալի՝ բեռնաշրջանառության և ուղևորաշրջանառության արագ աճը**: Փոխադրվող բեռների քանակը կազմում է շուրջ 110 մլրդ տ, բեռնաշրջանառությունը ավելի քան 55 տրլն տ.կմ, իսկ ուղևորաշրջանառությունը՝ շուրջ 20 տրլն ուղևոր.կմ:

3. **Տրանսպորտային միջոցների շարժման արագության աճը**: Եթե XX դարի սկզբին ամենաարագընթաց տրանսպորտային միջոցի երկաթուղային գնացքի արագությունը ընդամենը մի քանի տասնյակ կմ/ժ էր, ապա դրա ժամանակակից անալոգների արագությունը հասնում է 300-500 կմ/ժ-ի: Իսկ ինքնաթիռների արագությունը նույնիսկ 1.5-2 անգամ գերազանցում է ծայնի արագությանը:

¹ Н. Н. Баранский, Об экономико-географическом изучении городов. "Вопросы географии", М., 1946, N2.

² Там же

4. **Չանգվածային բեռների փոխադրման ծավալի և տրանսպորտային միջոցների փոխադրական հնարավորության մեծացումը:** Եթե XX դարի սկզբին երկաթուղային վագոնի բեռնատարողությունը մինչև 20 տ էր, ապա ներկայումս այն դրանից գրեթե 4 անգամ մեծ է, եթե երկաթուղային գնացքների ընդհանուր տարողությունը մի քանի հարյուր տոննա էր, ապա ներկայումս հասնում է մի քանի հազար տոննայի, իսկ խոշորագույն նավերի բեռնամբարձությունն անցել է 500 հազ. տոննայից: Մեծ հեռավորությունների վրա հունքի և ապրանքների փոխադրման կազմակերպումը խորացնում է աշխատանքի աշխարհագրական բաժանումը, նպաստում է երկրների ու տարածաշրջանների տնտեսական մասնագիտացմանը: Տրանսպորտային ծախսերը և հունքի ու ապրանքների տրանսպորտահարմարությունը դեռևս XIX դարի վերջից դարձել են արդյունաբերության տեղաբաշխման ու տնտեսական շրջանների ձևավորման կարևոր գործոն:

5. **Տրանսպորտային միջոցների, ուղիների և սարքավորումների միասնականացումը (ուճիֆիկացիան):** Տրանսպորտի զարգացման ժամանակակից այս նոր միտման ամենանշանավոր դրսևորումը «խառը» և «համակցված» («կոմբինացված») փոխադրումներն են: Դրանք ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի որոշմամբ վերջերս փոխարինվեցին «ինթերմոդալ փոխադրումներ» տերմինով: «Ինթերմոդալ» են կոչվում հաջորդաբար օգտագործվող տրանսպորտային տեսակները մեկը մյուսով փոխարինելու միջոցով կատարվող բեռնափոխադրումները, որոնց ժամանակ բեռները, այսպես ասած «չեն մշակվում»¹, այսինքն փոխադրվում են բեռնային միևնույն միավորով և միևնույն փոխադրական միջոցով (օրինակ՝ ավտոմեքենայով, բեռնարկղով (կոնտեյներով), կիսա-կցասայլակով, ավտոմեքենայի անջատվող թափքով):

Ինթերմոդալ փոխադրումների առավել տարածված ձևը բեռնարկղերով փոխադրումներն են: Բեռնարկղերը չոր ու թանկարժեք, հարյուրավոր միլիոն միավորներով հաշվվող ապրանքների (ռադիոհեռուստատեսիակա, համակարգիչներ, էլեկտրատեխնիկական սարքեր, ավտոմեքենաներ, հագուստեղեն, կոշիկեղեն և այլք) փոխադրման համար պատրաստված հատուկ ամուր արկղեր են, որոնք հնարավորություն են տալիս համեմատաբար էժան, ինչպես նաև ապահով փոխադրել բեռները: Բացի այդ, դրանք հարմար են միմյանց վրա դարսելու, հորիզոնական և ուղղաձիգ ուղղություններով փոխադրման համար: Լինում են ստանդարտ չափերի 20 ոտնաչափ², 40 ոտնաչափ և գերխոշոր (սուպերկոնտեյներ), ինչպես նաև ավիացիոն և հատուկ նշանակության բեռնարկղեր:

ԳՏԳ դարաշրջանում համաշխարհային տրանսպորտի վրա հսկայական ազդեցություն ունեցավ կոնտեյներացումը, որի ներդրման հետ է կապված «կոնտեյներային հեղափոխություն» հասկացությունը: Կոնտեյներների օգտագործումն ընդհանուր բեռների փոխադրման համար կրճատում է դրանց բեռնման և բեռնաթափման, հետևաբար նաև տեղ հասցնելու ժամանակը, կրճատում է կենդանի աշխատուժի ծախսումները, բաժրացնում է բեռների պահպանվածությունը: Փոխադրման հին

միջոցների համեմատ կոնտեյներացումը մի քանի անգամ բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը: Ուստի այն կիրառություն է գտել երկաթուղային, ավտոմոբիլային, ներքին ջրային տրանսպորտում: Բայց այն առանձնապես «պայթյունային» աճի բնույթ ընդունեց ծովային տրանսպորտում: Եթե նախկինում ծովային տրանսպորտը նախատեսված է առաջին հերթին լցնովի և խառնալից զանգվածային բեռների փոխադրման համար, ապա կոնտեյներացման սկզբից այն սկսեց ավելի ու ավելի շատ ընդհանուր բեռներ ներգրավել:

Ծովային կոնտեյներային փոխադրումների առաջին փորձը կատարվեց 1956 թ. ԱՄՆ-ում: 60-ական թթ. կեսերին Դյուսիսային Ատլանտիկայի ծովային ուղիներում երևան եկավ կոնտեյներատար նավերի առաջին տորմիդը: Իսկ 80-ական թթ. վերջին աշխարհում գործածվում էին արդեն ավելի քան 1 հազ. այդպիսի նավեր, որոնք կրում էին 5-6 մլն կոնտեյներներ: Կոնտեյներատարների ամենամեծ տորմիդներն ունեին ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, ԳՖԳ-ն: Կոնտեյներային տերմինալներ կառուցվեցին աշխարհի գրեթե 200 նավահանգիստներում: Դեռ վերջերս դրանց թվում առաջին տեղը զբաղեցնում էր Ռոտտերդամը, սակայն նրան գերազանցեցին Սինգապուրը (տարեկան շուրջ 4 մլն կոնտեյներ) և Զոնկոնգը: Այս «մեծ եռյակին» նվազման կարգով հաջորդում են Կոբե, Փոլսան, Գաոսյուն, Լոս-Անջելես, Նյու-Յորք, Զամբուրգ, Անտվերպեն, Յոկոհամա, Տոկիո նավահանգիստները: Դժվար չէ նկատել, որ ծովային տրանսպորտի կոնտեյներացումը, չնայած խիստ մեծ կապիտալատարությանը, առանձնապես մեծ թափ է ստացել Ասիայի «նոր արդյունաբերականացված երկրներում», որոնք կողմնորոշված են դեպի մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանումը:

Համապատասխանաբար աճում է նաև ծովային կոնտեյներային գծերի ցանցը:

Աշխարհում դեռևս անհրաժեշտ մակարդակի չի հասել ինթերմոդալ փոխադրումների հաշվառումը, սակայն առանձին երկրներում այդ հաշվառումն այնուամենայնիվ կատարվում է: Դատելով միայն այդպիսի երկրների վիճակագրության տվյալներով, կոնտեյներային փոխադրումների տարեկան ծավալով 2000 թ. աշխարհի առաջին երկիրը Գերմանիան էր (մոտ 6 մլն կոնտեյներ), երկրորդը՝ Նիդերլանդները (մոտ 4 մլն), երրորդը՝ Կանադան (մոտ 2 մլն), այնուհետև Բելգիան (1.4 մլն), Ֆրանսիան (1.2 մլն), Շվեդիան (մոտ 1 մլն):

6. **Բեռնահոսքերի կենտրոնացումը, տրանսպորտային «միջանցքների» («կամուրջների» կամ «բազմամայրուղիների») ձևավորումը:** Քաղաքների և արդյունաբերության ագլոմերացումը առաջացնում է տնտեսական կյանքի ու բնակչության կենտրոնացում որոշակի մետրոպոլիտենային տարածքներում: Աշխարհի խոշոր մեգալոպոլիսների տարածքներում ագլոմերացիոն էֆեկտի՝ ագլոմերացիայի տված օգուտների շնորհիվ նպաստավոր պայմաններ են ստեղծվում ոչ միայն արդյունաբերության, բնակչության, այլ նաև արտադրական ենթակառուցվածքի, այդ թվում տրանսպորտային ցանցի զարգացման համար: Տրանսպորտային առավել

¹ Տնտեսագետների հաշվումներով բեռնափոխադրման ինքնարժեքի կառուցվածքում բեռնաբարձման ու բեռնաթափման ծախսերի բաժինը, միջին հաշվով հասնում է 2/3-ի:

² Մեկ ոտնաչափը հավասար է 30.48 սմ-ի:

¹ Բազմամայրուղի- պոլիմագիստրալ:

մատչելի շրջաններում դրանց միջուկ (խոշորագույն) քաղաքների միջև, տրանսպորտային ավելի էժան փոխադրումների գծերի ուղղությամբ ստեղծվում են բեռնալարված մայրուղիներ տրանսպորտային կամուրջներ («միջանցքներ» կամ «բազմամայրուղիներ»):

Դրանք հաճախ անվանվում են նաև «ցամաքային կամուրջներ»: Դրանք շահագործելիս կոնտեյներատար նավերի և նավ-բալկերների կիրառումը զուգորդվում է արագընթաց երկաթուղային շարժակազմերի և ավտոգնացքների կիրառման հետ: Ներկայումս առավել լայն ճանաչում են գտել երկու այդպիսի «կամուրջներ». Արևմտյան Եվրոպայի և Ճապոնիայի միջև և Ճապոնիայի ու ԱՄՆ-ի արևելյան ափի միջև:

«Սիբիրյան տրանսպորտային կամուրջը» սկսեց գործել դեռևս 1970 թ.: Դրա ծայրակետերը սովորաբար համարվում են Ռոստերդամը և Յոկոհաման, որոնց միջև հեռավորությունը (Ուկրաինայի և Ռուսաստանի երկաթուղիների օգտագործման դեպքում) կազմում է 13770 կմ:

«Սիբիրյան տրանսպորտային կամրջի» օգտագործումը 20%-ով ավելի էժան է նստում, քան բեռների փոխադրումը նույն ուղղությամբ միայն նավով, քանի որ Սուեզի ջրանցքով դրանց փոխադրման հեռավորությունն աճում է 20.1 հազ. կմ-ով, իսկ ԱՖրիկայի շրջանցումով՝ 26.3 հազ. կմ-ով: Արդեն 80-ական թթ. սկզբին այդ «տրանսպորտային կամրջով» ամեն տարի անցնում է ավելի քան 100 հազ. կոնտեյներ:

Բարենպաստ տնտեսաաշխարհագրական դիրքի շնորհիվ տրանսպորտային «միջանցքների» երկայնքով ստեղծվում են նոր տնտեսական օբյեկտներ, բնակավայրեր, ավելի են զարգանում քաղաքները: Տրանսպորտային միջանցքները մեծ նշանակություն ունեն առանձին երկրների տնտեսության զարգացման համար: Գիտնականներն ու տնտեսական գործիչներն այդ «միջանցքները» դիտում են որպես տնտեսական զարգացման առանցքներ: Որոշ «բազմամայրուղիներ» աստիճանաբար մասնագիտանում են որոշակի բեռնափոխադրումների բնագավառում:

7. Տրանսպորտի և կապի գործառնության շրջանակի ընդլայնումը և բարդացումը՝ կոմունիկացիայի զարգացումը: Կոմունիկացիա (լատիներեն communicatio-communico- դարձնել ընդհանուր, կապել, հաղորդակցվել բառից) ներկայումս օգտագործվում է 4 իմաստով. 1) հաղորդակցություն, 2) հաղորդակցման ուղի, 3) հաղորդակցում, 4) փոխադարձ կապ: Լայն իմաստով կոմունիկացիա տերմինն օգտագործվում է տեղեկատվության փոխանակում, տեղեկատվության հաղորդում (և ընդունում) ու շփումներ իմաստներով:

Կոմունիկացիա բառն օգտագործվում է նաև հոգնակի թվով «կոմունիկացիաներ» ձևով, բայց արդեն որպես կապ, կապի (օրինակ հեռախոսային) համակարգ բառերի հոմանիշ:

Չանրահայտ կիբերնետիկ Ն. Վինները շատ բարձր է գնահատել կոմունիկացիայի դերը հասարակության զարգացման ժամանակակից փուլում, որը նա համարել է կոմունիկացիայի դար:

Սակայն էսթրոնիայի Միության տնտեսական աշխարհագրության, ինչպես նաև

հայաստանյան ժամանակակից սոցիալ-տնտեսական աշխարհագրության մեջ կոմունիկացիա տերմինը գործնականում հանիրավի չի օգտագործվում, մինչդեռ Արևմտյան Եվրոպայի երկրներում այն օգտագործվում է վաղուց և բավականին լայնորեն: Արևմտաեվրոպական երկրների աշխարհագետները «կոմունիկացիա» տերմինով հասկանում են ինչ-որ բանի՝ մարդկանց, նյութերի, արտադրանքի փոխադրում, հաղորդումների կամ ֆինանսական միջոցների հաղորդումը մի վայրից մյուսը:

Կոմունիկացիայի իրականացման ձևերն են կոնվեկցիան, կոնդուկցիան և ռադիացիան:

Կոնվեկցիան մարդկանց ու բեռների ֆիզիկական փոխադրումն է, ինչը մեր պատկերացմամբ համապատասխանում է ավանդական «տրանսպորտ» տերմինին: **Կոնդուկցիան** ներառում է հաղորդումն ու փոխադրումը, սակայն առանց օբյեկտի ֆիզիկական տեղաշարժման (օրինակ դրամական գումարների փոխադրումները մի երկրի բանկից մեկ այլ երկրի բանկ): **Ռադիացիան** ենթադրում է հաղորդումների, տեղեկատվության և նորանուծությունների ճառագայթաձև տարածում որևէ կենտրոնից (Մոնտե Կառլոյի մեթոդի, «Մարկովի շրթաների» մասին նշվել է սույն գրքում):

Այսպիսով «կոմունիկացիա» հասկացությունը ներառում է տրանսպորտն ու կապը, սակայն չի սպառվում սոսկ դրանցով:

Ինչ վերաբերում է տրանսպորտին ու կապին, ապա դրանց բաժանումը տրանսպորտի ու կապի այժմ պետք է համարել խիստ պայմանական, քանի որ դրանք շատ սերտորեն են փոխկապված ու միահյուսված: Օրինակ փոստային առաքումներն այժմ իրականացվում են և՛ փոստով¹, և՛ կապի միջոցներով:

Կոմունիկացիաների զարգացումը հնարավորություն է տալիս մասնակի կրճատել տրանսպորտի տարբեր տեսակներով կատարվող փոստային փոխադրումները, ինչպես նաև ուղևորափոխադրումները: Բանն այն է, որ այժմ, ի տարբերություն նախկին ժամանակների, գործարար բնույթի շատ հարցեր կարելի է լուծել հեռահաղորդման համակարգերով՝ առանց գործարար մարդկանց պարտադիր tet a tet հանդիպումների ու շփումների:

Տրանսպորտային ցանցի խտություն: Տրանսպորտային ցանցի խտությունն առանձին երկրների կամ տարածաշրջանների հագեցվածությունն է հաղորդակցության ուղիներով: Ընդ որում, ինչպես դժվար չէ կռահել, այն կարելի է որոշել երկու առումով. տարածքի և բնակչության:

Տրանսպորտային ցանցի խտությունը տարածքի հաշվով հաղորդակցության ուղիների երկարության հարաբերությունն է տարածքին (1000քառ. կմ)²:

¹ Գեղարվեստական գրականությունից ու կինոնկարներից մեր հիշողության մեջ մնացել են XX դարի փոստային զնացքներն ու վագոնները, ընդամենը մեկ կարևորագույն հաղորդումը երկրից երկիր հասցնող դիվանագիտական կուրիերները:
² Քանի որ միավոր տարածքի (1 քառ. կմ) հաշվով այդ ցուցանիշը ստացվում է շատ փոքր թիվ, ապա 0-ներից խույս տալով այդ ցուցանիշը հաշվում են 1000, երբեմն 100 քառ. կմ-ի հաշվով:

$$D = \frac{L}{S} \cdot 1000$$

որտեղ D-ն տրանսպորտային ցանցի խտությունն է,
L-ը տրանսպորտային ուղիների երկարությունը,
S-ը երկրի տարածքը (քառ.կմ):

Տրանսպորտային ցանցի խտությունը բնակչության հաշվով հաղորդակցության ուղիների երկարության հարաբերությունն է բնակչությանը (10 000 բնակչի հաշվով):

$$D = \frac{L}{P} \cdot 10000$$

որտեղ P-ն բնակչության թիվն է:

Զպետք է մոռանալ նաև, որ ճանապարհները ունեն տարբեր թողունակություն: Երկրների տրանսպորտային որևէ տեսակի ուղիների խտության ցուցանիշների համեմատությունից բացի հարկավոր է համեմատել նաև տրանսպորտային ընդհանուր ցանցի խտության ցուցանիշները, նկատի ունենալով, որ տրանսպորտի տարբեր տեսակները որոշակիորեն փոխարինում են միմյանց: Տարբեր են նաև հաղորդակցության տարբեր տեսակի ուղիների թողունակությունը (օրինակ ավտոճանապարհի և խողովակաշարի կամ երկաթուղու): Այս հանգամանքը հաշվի առնելով երբեմն հաղորդակցության բոլոր ուղիների երկարությունը հատուկ մեթոդով հաշվարկում են տրանսպորտային մի որևէ տեսակի (ավելի հաճախ երկաթուղու) համարժեքով:

Քանի որ աշխարհի երկրների տարածքներն ու բնակչության թվերը միմյանցից տարբերվում են զգալիորեն, և բացի այդ, տարածքի ոչ բոլոր մասերը և ոչ միատեսակ են յուրացված, ապա տրանսպորտային ցանցի խտության ցուցանիշները (և՛ տարածքի, և՛ բնակչության հաշվով) տրանսպորտային ուղիներով ապահովվածության պատկերը ներկայացնում են աղավաղված ձևով:

Չետևաբար հաղորդակցության ուղիներով երկրի ապահովվածության իրականին համեմատաբար մոտ պատկերը կարող են արտահայտել սինթետիկ (համալիրային) ցուցանիշները:

Դրանցից են էնգելի (Յուժուրո Կատոյի) գործակիցը, որը տրանսպորտային ցանցի խտության վերը նշված երկու պարզ ցուցանիշների միջին համրահաշվականն է:

$$D = \sqrt{\frac{L}{S} \cdot \frac{L}{P}} = \frac{L}{\sqrt{S \cdot P}}$$

Սակայն հասկանալի է, որ էնգելի ցուցանիշը ևս կատարյալ չէ. քանի որ հաղորդակցության ուղիների երկարությունը պայմանավորված է տվյալ երկրի ոչ միայն տարածքով ու բնակչության թվով, այլ նաև տնտեսական հզորությամբ,

առաջին հերթին արտադրանքի զանգվածի մեծությամբ: Այս հանգամանքն առաջինը հաշվի է առել ռուս գիտնական Ուսպենսկին: Այդ գործակիցը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով (Լ. Ի. Վասիլևսկու որոշ փոփոխումով).

$$D = \sqrt[3]{\frac{L}{S} \cdot \frac{L}{P} \cdot \frac{L}{Q}} = \sqrt[3]{\frac{L}{SPQ}}$$

որտեղ Q-ն արդյունաբերության և գյուղատնտեսության բոլոր ճյուղերի միագումարային արտադրանքի զանգվածն է (տ):

8.2 Երկաթուղային տրանսպորտ

Չնայած վերջին տասնամյակներում կրած մեծ փոփոխություններին, երկաթուղային տրանսպորտը շարունակում է մնալ որպես համաշխարհային տրանսպորտային համակարգի զանգվածային բեռների ու ուղևորների ներցամաքային խոշոր փոխադրումներ իրականացնող կարևորագույն օղակը: Երկաթուղային տրանսպորտը որոշ չափով կորցրել է իր ունիվերսալ բնույթը: Երկրորդ աշխարհամարտի տարիներից սկսած ուղևորների փոխադրման բնագավառում այն իր դիրքերը զիջում է ավտոմոբիլային ու օդային, իսկ բեռների փոխադրման բնագավառում խողովակաշարային և ավտոմոբիլային տրանսպորտին:

Երկաթուղային տրանսպորտի զարգացման բնութագրական ցուցանիշներից մեկը՝ երկաթուղիների ընդհանուր երկարությունն է: Այն առավելագույնի է հասել 1937 թվականին, իսկ դրանից հետո սկսել է զգալիորեն նվազել: Երկաթուղիների երկարության նվազման այդ միտումը ոմանց մոտ առաջացրել է երկաթուղային տրանսպորտի վերացման մասին կարծիք: Սակայն վերջին տասնամյակներում նորացման ու արդիականացման շնորհիվ երկաթուղիների համաշխարհային ցանցը որոշ չափով կայունացել է և կարծես թե յուրատեսակ «վերածնունդ» է ապրում: Երկաթուղային գլխավոր միջանցքներում, քաղաքային ագլոմերացիաների սահմաններում ու խոշոր քաղաքների մերձակայքում և այնպիսի այլ մայրուղային տեղամասերում, որտեղ մեծ են երկաթուղային հոսքերը, բեռների ու ուղևորների փոխադրության ծավալը, մեծացվում է երկաթուղային գնացքների արագությունը, էլեկտրիֆիկացվում են գծերը, ներդրվում են երթևեկության անվտանգությունն ապահովող նոր ու հուսալի տեխնիկական համակարգեր: Դրան հակառակ, տեղական երկաթուղիների որոշ տեղամասերում, տրանսպորտի ավելի էժան ու հարմար տեսակների առաջանցիկ տեսակերով զարգացման հետևանքով երկաթուղիներով կատարվող փոխադրումների ծավալը դարձել է աննշան: Այդ պատճառով էլ փոխադրումներից ստացվող շահույթը նույնիսկ չի ծածկում շահագործման համար անհրաժեշտ ծախսերը, պետության կողմից դոտացիա չհատկացնելու պայմանում այդ գծերը ապասերը,

մոնտաժվում են: Դրանք հիմնականում տեղական նշանակության և մերձատար¹ գծերն են:

Արդյունաբերականացված խոշոր երկրներում միաժամանակ կան երկաթուղիների «վերացման» և «վերածննդի» տեղամասեր, սակայն ընդհանուր հաշվով, որպես կանոն, երկաթուղիների ցանցը փոքրանում է, իսկ նվազ զարգացած երկրներում կան մնում է անփոփոխ կամ էլ նույնիսկ ընդլայնվում է:

Զարգացած երկրներում երկաթուղիների ապամոնտաժման, դրանցում կառավարման ավտոմատ համակարգերի ներդրման արդյունքում նվազում է երկաթուղային տրանսպորտում զբաղվածների քանակը²: երկաթուղային տրանսպորտի ծառայությունից օգտվող ուղևորների թիվը զարգացած երկրների մի մասում մնում է գրեթե նույնը, իսկ առանձին այնպիսի երկրներում, ինչպիսիք են, օրինակ, Ավստրիան, Գերմանիան, Իսրայելը, Նորվեգիան, Մեծ Բրիտանիան նույնիսկ աճում է: ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրներում երկաթուղային տրանսպորտի ծառայությունից օգտվող ուղևորների թիվը նվազում է:

Ինչ վերաբերում է բեռնաշրջանառությանը, ապա դրա ծավալը նույնիսկ ավելանում է: Սակայն, վերջին հաշվով, տրանսպորտի ընդհանուր բեռնաշրջանառությունում երկաթուղիների տեսակարար կշիռը նվազել է (1950թ. 30.4%, 1999 թ. 12%):

Բեռնաշրջանառության ծավալով ներկայումս աշխարհի առաջատար երկիրը ԱՄՆ-ը, իր հաջորդներին՝ Չինաստանին ու Ռուսաստանին գերազանցում է 1.8-1.9 անգամ, իսկ ուղևորաշրջանառությամբ առաջատարը Հնդկաստանն է, որն իր հաջորդներին ճապոնիային ու Չինաստանին գերազանցում է աննշան չափով:

Երկաթուղային տրանսպորտի զարգացմանը խոչընդոտում է այն հանգամանքը, որ երկաթուղային տրանսպորտի ձևավորման փուլում պաշտպանական նպատակով տարբեր երկրներում ու երկրների խմբերում ընտրվել են տարբեր լայնության (աղուրի³) գծեր (նեղ, նորմալ ու լայն): Օրինակ՝ Արևմտյան Եվրոպայի երկաթուղային համակարգից դուրս են մնում Իսպանիան, Պորտուգալիան և Ֆինլանդիան: Ավելի լայն աղուրի երկաթուղիներ են ձևավորվել նախկին ԽՍՀՄ տարածքում:

¹ Փակուղիներում տեղաբաշխված արդյունաբերական ու գյուղատնտեսական ձեռնարկությունները մայրուղիներին միացնող գծերը:

² Բացառությամբ Գերմանիայի, Շվեյցարիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Բելգիայի, Դանիայի:

³ Նորմալ աղուրի երկաթուղիների ռելսերի միջև եղած լայնությունը 1436 մմ է, լայն գծերինը՝ 1524 մմ (Ֆինլանդիա, Սլովակիա), 1600 մմ (Իռլանդիա, Հյուսիսային Իռլանդիա), 1688 մմ (Իսպանիա, Պորտուգալիա), իսկ նեղ գծերինը՝ 600, 700, 750, 760, 780, 900 և 1000 մմ:

8.3 Համաշխարհային ծովային տրանսպորտը

Ծովային տրանսպորտը համաշխարհային տրանսպորտային համակարգի կարևոր մասն է, որն իրականացրել է և այժմ էլ իրականացնում է հիմնականում իրեն յուրահատուկ գործառույթներ: Առաջին հերթին դա աշխարհի տարածաշրջանների ու առանձին երկրների տնտեսական կյանքի միջազգայնացման (գլոբալացման) գործընթացում տրանսպորտի բոլոր տեսակների շարքում ծովային տրանսպորտի կատարած ամենամեծ ու հասուկ դերն է:

Ծովային տրանսպորտի շնորհիվ է իրականացվում զանգվածային բեռների միջտարածաշրջանային, հատկապես միջմայրցամաքային փոխադրումը, ինչը մեծ դեր է կատարում արտադրության կոոպերացման գործում: Ծովային տրանսպորտի շնորհիվ են բեռնահոսքերը համակենտրոնանում առանձին խոշորագույն նավահանգիստներում, որոնցում էլ ձևավորվում են արդյունաբերական արտադրությունների (օրինակ նավթամշակման) խոշոր համալիրներ:

Ծովային տրանսպորտը նախկինում կատարել է նաև ուղևորների մեծածավալ փոխադրում, որը ներկայումս տրանսպորտի արագընթաց տեսակների զարգացման պայմաններում զգալիորեն կրճատվել է: Ներկայումս այն հիմնականում կատարում է զբոսաշրջիկների փոխադրում: Ուղևորաշրջանառության կառուցվածքում ծովային տրանսպորտի բաժինը համեմատաբար մեծ է կղզեխմբերում գտնվող նոր զարգացող երկրներում (օրինակի՝ Ինդոնեզիայում, Ֆիլիպիններում, Օվկիանիայի պետություններում):

Ծովային տրանսպորտի կարևորագույն առանձնահատկությունը բեռների փոխադրման էժանությունն է: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ բնական ծովային ուղիներն, ի տարբերություն ցամաքային տրանսպորտի տեսակների պահպանման, մեծ ծախսեր չեն պահանջում¹, բացի այդ, ծովային տրանսպորտային միջոցներն առանձնանում են արտակարգ մեծ բեռնամբարձությամբ ու անձնակազմի հարաբերական փոքրությամբ:

Խոսելով համաշխարհային տնտեսության զարգացման ու տարածքային կազմակերպման գործընթացում ծովային տրանսպորտի դերի մասին, պետք է հիշել նաև այն փաստը, որ համաշխարհային տնտեսությունն էլ իր հերթին է ազդում ծովային տրանսպորտի վրա, որոշում դրա տեմպերն ու ուղղությունները:

Ծովային տրանսպորտային միջոցները գտի ազդեցությամբ անընդհատ կատարելագործվում են, մասնավորապես աճում է նավերի արագությունը: Այժմ կան համեմատաբար արագընթաց այնպիսի նավեր, որոնք Եվրոպայի արևմտյան ափից ԱՄՆ-ի արևելյան ափ են հասնում ընդամենը 3.5 օրում (ինչը անհամեմատ

¹ Փարոսների, նավամատույցների կառուցման, նավարկության ուղենշման աշխատանքները գրեթե բոլոր նավահանգիստներում արդեն ավարտված են: Հիմնականում շարունակվում է նավահանգիստների ջրային տարածքի խորացման աշխատանքը (ավելի մեծ նավեր ընդունելու նպատակով):

փոքր ժամանակահատված է նախապատերազմյան ժամանակաշրջանի համեմատությամբ):

Ձուգահեռաբար մեծանում է նաև նավերի բեռնամբարձությունը, անվտանգությունը, կատարելագործվում են բեռնաբարձման ու բեռնաթափման մեթոդները: Մասնավորապես բեռները նորագույն (Ռո-Ռո¹ դասի) նավերի ամբարներ են հասցվում ոչ թե նավի տախտակամածի ամբարձիչ կռունկների միջոցով, այլ հորիզոնական ուղղությամբ կողքի կամ դիմացի բացվող դարպասներով: Նավի իրան մուտք գործած ավտոմեքենաների բեռները բեռնաթափվում են անմիջապես նավամբարում կամ էլ ընդհակառակը բեռնաբարձվում:

Տեխնիկական նմանատիպ նորանուծությունները հնարավորություն են տալիս նավերի ընդհանուր բեռնամբարձության (տոննամփ) համեմատաբար փոքր աճի (6.4 անգամ) պայմաններում զգալիորեն մեծացնել ծովային տրանսպորտի փոխադրած բեռների զանգվածն ու բեռնաշրջանառությունը (9.5 և 10.9 անգամ) (աղյուսակ 8.1):

Աղյուսակ 8.1

Համաշխարհային ծովային տրանսպորտի զարգացման ընդհանուր ցուցանիշները 1950-1999թթ.²

Ցուցանիշներ	1950	1990	1999	Աճը 1999/1950թթ. (անգամ)
Նավերի ընդհանուր ջրատարողությունը (մլն բր. հաշվ. տ) ³	85	425	543	6.4
Բեռնամբարձությունը (մլն տ, դեղվեյթ) ⁴	125	667	800	6.4
Բեռների զանգվածը (մլրդ տ)	0.55	3.70	5.23	9.5
Բեռնաշրջանառությունը (տրլն տ.կմ)	3.57	28.40	39.00	10.9

Ծովային առևտրական նավատորմի զարգացումը (տրանսպորտի այլ ճյուղերի հետ միասին) ոչ միայն համաշխարհային տնտեսության զարգացման ու տարածքային կազմակերպման կարևոր նախադրյալ է, այլ ինքն իր հերթին կրում է համաշխարհային տնտեսության ազդեցությունը, զարգանում դրա նախանշած ուղղություններով:

¹ Անգլերեն roll-on roll-off ship բառից:

² Annual Bulletin of Transport Statistics for Europe and North America. UN, New York and Geneva, 2001.

³ Բրուտո հաշվարկային տոննա grt-gross registered tons-նավերի տարողության ծավալային միավոր, որը հավասար է 100 խորանարդ ոտնաչափի, այսինքն 2.83 մ³-ի:

⁴ Դեղվեյթ deadweight tons-նավի ընդհանուր բեռնաբարձությունը տոննաներով, ներառյալ նավի բեռը, վառելիքի ու ջրի պաշարները, անձնակազմը և այլն:

Ծովային տրանսպորտի վրա վճռորոշ ազդեցություն ունեն ծովափնյա, առանձնապես միջմայրցամաքային առևտրի ծավալն ու ապրանքային կառուցվածքը:

Վերջին երեք տասնամյակում ծովափնյա առևտրի գլխավոր միտումը դրա ծավալի արագ աճն է (շուրջ երկու անգամ): 1999 թ. ծովափնյա առևտուրը հասել է ռեկորդային ծավալի՝ ավելի քան 5 մլրդ տ-ի, իսկ բեռնաշրջանառությունը՝ 21 մլրդ տ.մղոնի կամ մոտ 39 մլրդ տ.կմ-ի:

Կարևոր մյուս միտումը նավթի և նավթամթերքների համեմատությամբ չոր բեռների ծավալի առաջանցիկ տեմպերով աճն է: 1970-2000 թթ. եթե նավթի առաքման ծավալն աճել է 1.5, նավթամթերքներինը՝ 1.7, ապա չոր բեռների ծավալն աճել է 2.7 անգամ: Փոխադրվող բոլոր բեռների մեջ չոր բեռների բաժինը 1970 թ. հավասար էր հուն նավթի բաժնին, իսկ 2000 թ. վերջինին գերազանցում էր 1.8 անգամ (համապատասխանաբար 31.6 և 57.7%)¹:

Չենց այս հանգամանքն էլ համապատասխան փոփոխություն է առաջացրել համաշխարհային ծովային առևտրական նավատորմի կառուցվածքում: Բնականաբար մեծացել է աշխարհի չոր բեռնատար նավերի՝ բալկերների (անգլերեն bulk-չփաթեթավորված, առանց տարայի, բառից) բաժինը:

Մինչև համաշխարհային էներգետիկ ճգնաժամը՝ էժան նավթի արդյունահանման ու փոխադրման եռուզեռի ժամանակաշրջանում համաշխարհային առևտրական նավատորմի կառուցվածքում բացարձակ գերակշռող էր հեղուկատար նավերի բաժինը 55%: Ճգնաժամից հետո այդ բաժինը սկսեց նվազել՝ 2000 թ. հասնելով 35%-ի: Միաժամանակ ընթացել է նավթատար լցանավերի տանկերների (անգլերեն tank-ջրավազան, ռեզերվուար) խոշորացում: Այդ տարիներին են կառուցվել աշխարհի խոշորագույն նավթային տանկերները, որոնցից 4-ի բեռնամբարձությունը գերազանցում է 500 հազ. տ, իսկ 6-ինը տատանվում է 450 հազ. և 500 հազ. տ-ի միջև: Ամենախոշոր տանկերները (սուպերտանկերները) բնութագրվում են և դրական, և բացասական կողմերով: Դրական բնութագիրն այն է, որ տնտեսական տեսակետից դրանք առավել արդյունավետ են, այսինքն այդ նավերով նավթի փոխադրման ինքնարժեքն ամենացածրն է: Իսկ բացասական կողմերից են այդ նավերի վթարի դեպքում օվկիանոսի աղտոտման հնարավոր մեծ մասշտաբը, ինչպես նաև որոշ, ոչ խոր նեղուցներով ու ջրանցքներով նավարկելու անհնարինությունը: Այս պատճառով գերխոշոր նավթատար նավերը նավթը նշանակման նավահանգիստ են հասցնում՝ երբեմն շրջանցելով նույնիսկ մայրցամաքներ: Նավթի փոխադրման հեռավորության հարկադրական մեծացման հետևանքով որոշ չափով նվազում է այդ նավերի բարձր արդյունավետությունը: Համաշխարհային ծովային նավատորմի զարգացման մյուս տեսակի նավերն են ընդհանուր բեռնատարները (general cargo), բեռնարկղատար (container carrying) և այլ² նավերը:

¹ Review of Maritime Transport 2000. UN, New York and Geneva, 2000

² Այլ նավերի մեջ են մտնում քիմիական նյութեր, նավթանյութեր- քիմիական նյութեր, հեղուկ գազ, ձկնորսական նավերը, հեղուկատար բարժաները (շարժիչ չունեցող) և այլ փոխադրամիջոցները:

Համաշխարհային ծովային նավատորմը առ 1 հունվարի 2000 թ. հաշվվում է 30 344 նավ (յուրաքանչյուրն ավելի քան 1000 տ դեղվեյք բեռնամբարձությամբ) մոտ 800 մլն տ (դեղվեյք) ընդհանուր բեռնամբարձությամբ: Յուրաքանչյուր տարի այդ նավատորմից համարվում է շուրջ 40 մլն տ դեղվեյք միագումարային բեռնամբարձությամբ նոր ջրարկվող նավերով և միաժամանակ փոքրանում է 15-ից 30 մլն տ դեղվեյք ընդհանուր բեռնամբարձությամբ շահագործումից հանվող նավերով:

Ի տարբերություն տրանսպորտի մյուս տեսակների, առանձին երկրների ծովային նավերի քանակն ու միագումարային բեռնամբարձությունը միարժեքորեն գնահատելն անհնար է, իսկ մեթոդական առումով նույնիսկ սխալ, քանի որ ոչ բոլոր երկրների ոչ բոլոր նավերն են գրանցված դրանց նավահանգիստներում սեփական դրոշի ներքո: Ջարգացած երկրների նավատերերն իրենց երկրների բարձր հարկերից խուսափելով նավերը ձևականորեն գրանցում են նոր զարգացող երկրների նավահանգիստներում, որտեղ անհամեմատ ցածր են նավերից գանձվող հարկերը և այդ երկրների քաղաքացիներից նավի վրա ծառայության վերցրած անձնակազմի անդամներին տրվող աշխատավարձը:

Օտարերկրյա «էժան ու հարմար» դրոշի ներքո են նավարկում զարգացած որոշ երկրների նավերի մեծ մասը (օրինակ Բելգիայի նավերի 98.5%-ը, իսկ Մոնակոյի նույնիսկ բոլոր նավերը) (Հավելվածի 27 աղյուսակը): Ընդհանուր առմամբ 2000 թ. օտար դրոշի ներքո էին նավարկում աշխարհի բոլոր նավերի 46.1%-ը, որոնց միագումարային տոննաժը կազմում էր աշխարհի առևտրական նավատորմի ամբողջ բեռնամբարձության 61.6%-ը: Այդ բաժինների համեմատությունից ակնհայտորեն հետևում է, որ օտար դրոշի ներքո են լողում համեմատաբար խոշոր նավերը:

Իրենց դրոշի տակ լողալու համար թույլտվության դիմաց զարգացած երկրների նավերից գանձած հարկերը նոր զարգացող որոշ երկրների համար զգալի եկամտի աղբյուր են: Առանձնապես մեծ եկամուտ են ստանում այսպես կոչված «բաց գրանցման գլխավոր երկրները» Բահամները, Բերմուդան, Կիպրոսը, Լիբերիան, Մալթան, Պանաման և Վանուատուն:

Եթե աշխարհի ծովային առևտրական նավատորմից ուսումնասիրվի ըստ երկրներում գրանցված նավատորմիների, ապա կստացվի իրականից էապես տարբերվող վիճակ (պատկեր): Այսպիսի մոտեցման դեպքում աշխարհի առաջատար երկրներ են համարվում Պանաման, Լիբերիան, Մալթան, Բահամները, Հունաստանը, Կիպրոսը, Նորվեգիան, Սինգապուրը, ԱՄՆ-ը:

Ընդհանուր հաշվով «բաց գրանցման երկրների» դրոշի ներքո լողում են աշխարհի ծովային տրանսպորտի բեռնամբարձության մոտ կեսը (48.1%-ը) կազմող նավերը:

Ծովային նավատորմի փոփոխության գլխավոր միտումը դրանում նոր զարգացող երկրների տեսակարար կշռի մեծացումն է տարեկան միջին հաշվով 0.1%-ով, ընդ որում «բաց գրանցման երկրների» բաժինը մեծանում է 0.3%-ով: Բնականաբար այդ մեծացումն ընթանում է զարգացած երկրների բաժնի նվազման հաշվին (տարեկան միջին հաշվով 0.3%-ով):

Աշխարհագրական տեսանկյունից ծովային փոխադրումների ուսումնասիրման առավել կարևոր մասն են համաշխարհային ծովային ուղեգծերը: Լ. Վասիլևսկին ժամանակին իրավացիորեն գրել է այն մասին, որ ծովային ուղեգծը պայմանական է: Ի տարբերություն վերգետնյա տրանսպորտի, ծովային տրանսպորտի աշխարհագրությունը որոշվում է ոչ թե հաղորդակցության ուղիների ցանցով, այլ նավահանգիստների, ծովային ջրանցքների և նեղուցների, ծովային նավերի համար մատչելի էստուարներով և խոշոր գետերի հոսանքների ցանցով: Աշխատանքի աշխարհագրական բաժանումը հանգեցրել է այն բանին, որ ծովային ուղեգծերի մեծամասնությունը պահպանում է իր կայունությունը շատ տասնամյակների ընթացքում: Սակայն վերջին երկու տասնամյակում համաշխարհային ծովային փոխադրումների միջին հեռավորությունը 9 հազ. կմ-ից նվազել է մինչև 7 հազ. կմ:

Ժամանակակից ծովային նավագնացության մեջ գոյություն ունի փոխադրումների երկու ձև՝ **թրամվային** և **գծային**: **Թրամվային** (անգլերեն tramp – քափառաշրջիկ բառից) նավագնացության դեպքում նավերն աշխատում են տարբեր ուղղություններով՝ կապված բեռների առկայության հետ: Փոխադրման գինն այս դեպքում հանդես է գալիս նավավարձության (ֆրեյթային) դրույքի ձևով: **Գծային** նավագնացության դեպքում նավերն աշխատում են ժամանումների և մեկնումների չվացուցակով բեռնման-բեռնաթափման նավահանգիստների միջև, խիստ որոշակի կանոնավոր ուղեգծերով: Այս դեպքում փոխադրման վարձը որոշվում է սակագնով: Տրամվային նավերով փոխադրվում են գլխավորապես զանգվածային, իսկ չվերթային նավերով՝ ընդհանուր բեռներ: Ուստի փոխադրման ծավալով տրամվային նավագնացությունը զգալիորեն գերազանցում է գծայինին:

Աշխարհագրական մեծ հայտնագործությունների ժամանակներից սկսած, համաշխարհային գծային և տրամվային նավագնացության մեջ առաջին տեղը (2/3) զբաղեցնում է Ատլանտյան օվկիանոսը, ինչը բացատրվում է բնական, պատմական, տնտեսական շատ պատճառներով: Դրանց շարքում կարելի է նշել ծովափերի ձևաբանությունը, դրանց կտրտվածությունը՝ հատկապես Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայի հյուսիս-արևելքում: Կարելի է նշել ծովափնյա շրջանների մեծ մասի բնակեցման և ուրբանիզացման բարձր աստիճանը, ինչը խոսում է տասնյակ երկրների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի մասին: Վերջապես, Ատլանտյան օվկիանոսի ջրերով են ձգվում Հին և Նոր Աշխարհները միմյանց հետ կապող ամենակարճ ծովային ուղիները: Ջարմանալի չէ, որ հատկապես այդ օվկիանոսի ափերին են ձևավորվել աշխարհի ծովային նավահանգիստների շուրջ 2/3-ը:

Ատլանտյան օվկիանոսում ձևավորվել են ծովային նավագնացության մի քանի ուղղություններ: Դրանցից գլխավորը հյուսիսատլանտյանն է, որը Եվրոպան միացնում է Հյուսիսային Ամերիկայի հետ և անցնում է հյուսիսային լայնության 40 և 50°-ի միջև: Այստեղ գերիշխում է գծային նավագնացությունը:

Մյուս կարևոր ուղղությունը հարավատլանտյանն է (Եվրոպա-Հարավային Ամերիկա), արևմտատլանտյանը (Աֆրիկա-Եվրոպա): Ատլանտիկայով են անցնում նաև Ասիայից Եվրոպա և ԱՄՆ նավթի և մի շարք այլ զանգվածային բեռների

բեռնահոսքերը: Սակայն, ամբողջությամբ վերցրած, Ատլանտյան օվկիանոսի դերը համաշխարհային ծովագնացության մեջ վերջերս նվազել է:

Խաղաղ օվկիանոսը, երկրորդ տեղը գրավելով ծովային փոխադրումների ծավալով (1/4), առայժմ խիստ հետ է մնում Ատլանտյանից: Սակայն այդ օվկիանոսի պոտենցիալը շատ մեծ է, քանի որ նրա ափերին են գտնվում 30 պետություններ՝ ավելի քան 2.5 մլրդ մարդ բնակչությամբ: Այստեղ են գտնվում աշխարհի խոշորագույն շատ նավահանգիստներ, ձևավորվում են զանգվածային, վերջերս՝ նաև ընդհանուր շատ բեռնահոսքեր: Դրանք անցնում են Ասիայի և Ամերիկայի ափերի երկայնքով: Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի շատ երկրների, հատկապես «նոր արդյունաբերականացած երկրների» արագ աճը, նրանց ինտեգրացումը համաշխարհային առևտրի մեջ հանգեցնում են մի շարք կարևորագույն բեռնահոսքերի աստիճանական փոխադրման Ատլանտյան օվկիանոսից դեպի Խաղաղ օվկիանոս:

Ծովային փոխադրումների ծավալով 3-րդ տեղը (ավելի քան 1/10) պատկանում է Հնդկական օվկիանոսին, որի ափերին են գտնվում 30 պետություններ ավելի քան 1.5 մլրդ բնակչությամբ: Առավել հզոր բեռնահոսքերը այդ օվկիանոսում ձևավորվում են Պարսից ծոցի շրջանում:

ա) Աշխարհի նավահանգիստները

Առավել խոշոր նավահանգիստները, որոնք մասնակցում են ոչ միայն տեղական առափնյա նավագնացությանը, այլև միջազգային փոխադրումներին, աշխարհում մոտավորապես 2.2 հազար են: Դրանցից 900-ը Եվրոպայում է, ավելի քան 500-ը՝ Ամերիկայում, մոտ 400-ը՝ Ասիայում, մնացյալը՝ աշխարհի մյուս մասերում:

Ծովային նավահանգստի աշխատանքի գլխավոր ցուցանիշը նրա բեռնաշրջանառությունն է¹: Տարեկան 1 մլն տ-ից ավելի բեռնաշրջանառություն ունեցող նավահանգիստների թիվն աշխարհում մի քանի հարյուր է: Սակայն համաշխարհային ծովային տրանսպորտում «եղանակ» ստեղծում են այն նավահանգիստները, որոնք ունեն տարեկան ավելի քան 10, 20, 30 և հատկապես ավելի քան 50 և 100 մլն տ բեռնաշրջանառություն: Վերջին երկու կատեգորիաների նավահանգիստները կոչվում են «համաշխարհային նավահանգիստներ», որը բնորոշում է նրանց դերը համաշխարհային տնտեսության մեջ: Այդպիսի նավահանգիստներն աշխարհում ընդամենը մոտ 30 են: Բոլոր ծովային նավահանգիստները ստորաբաժանվում են երկու հիմնական տիպի:

¹ Տրանսպորտային հանգույցի, տվյալ դեպքում նավահանգստի բեռնաշրջանառությունը միավոր ժամանակում (սովորաբար 1 տարում) այդ հանգույցի ընդունած և առաքած բեռների քանակն է (տ)

Առաջին տիպին դասվում են ունիվերսալ նավահանգիստները, այսինքն նրանք, որոնք ընդունում և մշակում են ամենատարբեր տեսակի բեռներ՝ ընդհանուր, լցնովի, սորուն, խառնալից:

Ունիվերսալ նավահանգիստների «առաջին տասնյակի» կազմում, որին բաժին է ընկնում բոլոր ծովային նավահանգիստների բեռնաշրջանառության 1/2-ը, այժմ կան 6 ասիական նավահանգիստներ, 3 Եվրոպական և 1 ամերիկյան, ինչն ինքնին ցույց է տալիս Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի աճող դերը: Կան, օրինակ, առանձին երկրներից ամենամեծ թվով համաշխարհային նավահանգիստներ ունի Ճապոնիան (8), նրան հետևում են ԱՄՆ-ը (7) և Ֆրանսիան (2), այն դեպքում, երբ բոլոր մնացած երկրներն ունեն միայն մեկական այդպիսի նավահանգիստ:

Երկրորդ տիպին դասվում են մասնագիտացված նավահանգիստները: Ի տարբերություն ունիվերսալ նավահանգիստների, սրանք կողմնորոշված են, որպես կանոն, դեպի որևէ մի տեսակի զանգվածային ապրանքի բեռնումը, որը հանդիսանում է տվյալ երկրի արտահանման առարկան: Մասնագիտացված նավահանգիստները հատկապես բնորոշ են զարգացող երկրներին: Դրանցից խոշորագույնները երևան են եկել նավթի արտահանման հետ կապված և գտնվում են Պարսից ծոցում: Դրանք են՝ Ռաս Տանուրան Սաուդյան Արաբիայում, Մինա էլ Ահմադին Քուվեյթում, Խաբը կղզին Իրանում: Դրանք ընդունում են ամենախոշոր սուպերտանկերները, իսկ նրանց բեռնաշրջանառությունը նավթի առավելագույն հանույթի ժամանակաշրջանում գերազանցում էր Ռոտտերդամի բեռնաշրջանառությանը:

Մասնագիտացված նավահանգիստներ կան նաև Արևմուտքի զարգացած երկրներում, որոնք արտաքին շուկա են արտահանում լեռնահանքային արդյունաբերության արտադրանքը: Դրանց մեծ մասը գտնվում է Կանադայում, Ավստրալիայում, ՀԱՅ-ում և ԱՄՆ-ում: Դրանք ածուխ արտահանող խոշորագույն նավահանգիստներն են՝ Հենկոքն Ռոուդզը (ԱՄՆ), Ռիչարդ Բեյը (ՀԱՅ), Նյուքասլը (Ավստրալիա), երկաթի հանքաքար արտահանող խոշորագույն նավահանգիստներն են Պորտ Հեդլենդը (Ավստրալիա), փայտանյութ արտահանող խոշորագույն նավահանգիստ է Արխանգելսկը (ՌԴ):

Ծովային նավահանգիստները դասակարգվում են նաև ըստ իրենց տրանսպորտաաշխարհագրական դիրքի առանձնահատկությունների:

Նկատի ունենալով միկրոդիրքը, որը նախ և առաջ հաշվի է առնում ափերի ձևաբանությունը, նավահանգիստներն ընդունված է ստորաբաժանել հետևյալ տիպերի.

1. նավահանգիստներ, որոնք տեղադրված են բնական խորը ծովախորշերում և բաց ծովից պաշտպանված են հրվանդաններով, որոնք կատարում են բնական ալեհատների դեր (Յոկոհամա),

2. նավահանգիստներ, որոնք տեղադրված են ոչ խորը ծովածոցերում կամ ափային հարթավայրերում, և բաց ծովից պաշտպանությունն իրականացվում է արհեստական ալեհատների օգնությամբ (Կասաբլանկա),

3. գետաբերանից հեռու՝ նավարկային գետերի էստուարներում տեղադրված նավահանգիստներ (Համբուրգ):

Բացի այս, կան նաև նավահանգիստներ, որոնք սարքավորված են մակընթացությունների ժամանակ նավահանգստային ավազաններում ջուրը պահող ջրարգելակներով (Լոնդոն), և այլ ենթատեսակներ:

Օովային նավահանգիստների մասին խոսելիս նախ և առաջ նկատի են ունենում դրանց հինթերլանդը այն ցամաքային տարածքը, որը տնտեսական առումով «ծգտուն» է դեպի նավահանգիստը: Օրինակ, Ռոտտերդամի համար որպես հինթերլանդ են ծառայում ոչ միայն ամբողջ Նիդերլանդները, այլև ԳՖՅ-ի, Բելգիայի և Ֆրանսիայի զգալի մասը:

Վերջապես, նավահանգստի մակրոդիրքը որոշվում է տարածաշրջանային և համաշխարհային նշանակության ծովային ուղիների նկատմամբ նրա ունեցած դիրքով: Այդպիսի դիրքից քաղած օգուտների մասին կարելի է դատել աշխարհի երկրորդ խոշոր նավահանգստի Սինգապուրի օրինակով:

բ) Միջազգային ծովային ջրանցքները և նեղուցները

Համաշխարհային ծովային տրանսպորտի աշխարհագրության վրա մեծ ազդեցություն ունեն միջազգային ջրանցքները, հատկապես Սուեզի և Պանամայի:

XX դարի սկզբին Սուեզի ջրանցքով անցնում էին տարեկան 4 հազ. նավ, իսկ փոխադրվող բեռների ծավալը կազմում էր 20-ից 30 մլն տ:

Սա վկայում է այն մասին, որ հատկապես Սուեզի ջրանցքն էր դարձել էր եվրոպան Ասիայի երկրների հետ միացնող գլխավոր ծովային ուղին: Պարսից ծոցի շրջանից եվրոպա փոխադրվող գլխավոր բեռը նավթն էր, ահա թե ինչու հարավից հյուսիս ուղղությամբ ջրանցքով անցնող բեռնահոսքը 4 անգամ գերազանցում էր հակառակ ուղղության բեռնահոսքին:

Սակայն 50-70-ական թթ. Սուեզի ջրանցքով բեռնափոխադրումները երկու անգամ ընդհատվեցին. առաջին անգամ 1956-1957 թթ., երբ Եգիպտոսն ազգայնացրեց Ֆրանսիային և Մեծ Բրիտանիային պատկանող «Սուեզի ջրանցքի ընկերությունը», որին հաջորդեց վերջիններիս կողմից ագրեսիան, երկրորդ անգամ՝ 1967-75 թթ., արաբա-իսրայելական պատերազմի պատճառով: 1975 թ. ջրանցքի վերաբացումից հետո նավաշրջանառությունը և բեռնաշրջանառությունը նորից սկսեցին բուռն կերպով աճել և 90-ական թթ. սկզբներին հասան 20 հազ. նավի և շուրջ 360 մլն տ-ի: Դրան նպաստեց ջրանցքի վերակառուցումը, որի շնորհիվ այն լայնացավ և խորացավ մինչև 20 մ և մատչելի դարձավ ավելի խոշոր նավերի համար: Եվ այնուամենայնիվ, ներկայումս մեծավորարևելյան նավթը փոխադրող սուպերտանկերները եվրոպա են հասնում ոչ թե Սուեզի ջրանցքով, այլ շրջանցելով Աֆրիկան: Այդ պատճառով ջրանցքով փոխադրումների մեջ նավթի բաժինը զգալիորեն իջել է, իսկ դեպի հյուսիս և հարավ ուղղություններով բեռնահոսքերն իրենց ծավալներով հավասարվել են: Ամբողջությամբ վերցրած, Սուեզի ջրանցքը մեր օրերում մնում է համաշխարհային ծո-

վային նավազնացության թերևս ամենակարևոր տեղամասը. չէ՞ որ 360 մլն տոննան կազմում է ծովային տրանսպորտով փոխադրվող բեռների 14%-ը:

Պանամայի ջրանցքը Սուեզի ջրանցքից տարբերվում է նավաշրջանառության և բեռնաշրջանառության համեմատաբար փոքր չափերով, ինչպես նաև փոխադրվող բեռների կազմով: Բեռների կազմում չկա կոնկրետ գերակշռող մեկ տեսակի բեռ: Բեռների կազմում առաջին տեղը պատկանում է նավթին, հետո հանքանյութերին, ածխին, ֆոսֆորիտին և այլ զանգվածային բեռներին:

Պանամայի ջրանցքը, լինելով միջազգային, առավել մեծ տրանսպորտային նշանակություն ունի ԱՄՆ-ի համար: Պանամայի ջրանցքը կրճատում է հեռավորությունն այդ երկրի արևելյան և արևմտյան ափերի միջև, ԱՄՆ-ի արևելյան ափի և Լատինական Ամերիկայի խաղաղօվկիանոսյան ափի միջև, ինչպես նաև ԱՄՆ-ից մինչև Ասիայի և Ավստրալիայի նավահանգիստներն ընկած հեռավորությունը: Զարմանալի չէ, որ Պանամայի ջրանցքը կառուցող ԱՄՆ-ը հանդիսանում է նաև դրա գլխավոր օգտագործողը: Ատլանտյան օվկիանոսից խաղաղ օվկիանոս փոխադրվող բոլոր բեռների 70%-ը պատկանում է ԱՄՆ-ին:

Միջազգային երրորդ ջրանցքը Քիլի ջրանցքն է Գերմանիայում, որը միացնում է Բալթիկ ծովի Քիլի ծովախորշը Էլբայի ստորին ավազանին, և առաջին հերթին Քիլ և Համբուրգ նավահանգիստները: Կառուցված լինելով XIX դարի վերջին՝ այն մեծ նշանակություն ունի եվրոպական շատ, առանձնապես բալթյան երկրների համար: Բալթիկ ծովից դեպի Յուսիսային ծով բեռնահոսքերի հիմնական մասն անցնում է այս ջրանցքով, այլ ոչ թե Յուլանդիա թերակղզին շրջանցող Սկագերակ և Կատեգատ նեղուցներով:

8.4 Ներքին ջրային տրանսպորտը

Ջրային տրանսպորտի մյուս տեսակը ներքին ջրային տրանսպորտն է, որը ծովային տրանսպորտից տարբերվում է իր բեռնա-ուղևորաշրջանառության համեմատաբար փոքր ծավալով, ինչպես նաև նրա վրա բնական պայմանների, առաջին հերթին գետային ցանցի ազդեցության ավելի բարձր աստիճանով: Իսկ ծովային տրանսպորտի հետ դրա նմանությունն այն է, որ դա նույնպես տրանսպորտի բավականին ձեռնտու տեսակ է:

ՄԱԿ-ի կողմից հաստատված չափանիշներով «*ներքին ջրային ուղի* է համարվում ծովի մաս չհանդիսացող ջրային այն տարածքը, որով կարող են նավարկել նորմալ բեռնաբարձված, ոչ պակաս քան 50 տ բեռնամբարձությամբ նավերը: Այս տերմինը կիրառվում է ինչպես նավարկելի գետերի ու լճերի, այնպես էլ նավարկելի ջրանցքների առնչությամբ»¹:

¹ Annual Bulletin of Transport Statistics for Europe and North America. Un, New York and Geneva. 2001.

Սակայն ներքին ջրային տրանսպորտի զարգացումն առաջին հերթին պայմանավորված է գետերի նավարկելիության համար պիտանիությամբ: Դրանցով կարող են նավարկել համեմատաբար փոքր, ոչ խորամիստ նավեր: Սակայն որոշ գետերով կարող են լողալ նույնիսկ շատ մեծ նավեր: Օրինակ Ամազոն գետով, որի խորությունը տեղ-տեղ հասնում է 100 մ-ի, օվկիանոսային նավերը թափանցում են ցամաքի խորքը մինչև Մանաուս քաղաքը, որն օվկիանոսի ափից 1600 կմ հեռու է: Յանցզի գետով ծովային նավերը կարող են թափանցել մինչև Ուհան քաղաք: Ներքին ջրային տրանսպորտի զարգացումը պայմանավորված է նաև նավարկության պահանջարկով, երկրի հնարավորություններով, տրանսպորտի այլ տեսակների զարգացման մակարդակով:

Ներքին ջրային տրանսպորտը, որպես կանոն, ավելի զարգացած է այն երկրներում ու շրջաններում, որոնք տնտեսապես զարգացած են և խիտ բնակեցված, ինչպես նաև այն տարածքներում, որտեղ ներքին ջրային ուղիները միակն են կամ գրեթե միակը: Օրինակ, Ամազոնը (իր վտակներով) մինչև Ամազոնյան ավտոմայրուղու կառուցումը Ամազոնիայի գրեթե միակ տրանսպորտային ուղին էր:

Ներքին ջրային ուղիների երկարությամբ աշխարհում առաջատար երկրներն են Չինաստանը (ավելի քան 100 հազ. կմ), Ռուսաստանը (մոտ 85 հազ. կմ), ԱՄՆ-ը (մոտ 42 հազ. կմ), Բրազիլիան (ավելի քան 30 հազ. կմ):

Ներքին ջրային տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալով 2000 թ. առաջին տեղում էր ԱՄՆ-ը (431 մլրդ տ.կմ): Գլխավոր նավարկելի ուղիներն են Միսիսիպի, Օհայոն, Մեծ Լճերը և մի շարք նավարկելի ջրանցքներ, որոնք միմյանց են միացնում գետերն ու լճերը (օրինակ Առափնյա ջրային ուղին, Մեծ Լճեր-Սուրբ Լավրենտիոս, Միսիսիպի Միջիգան լիճ):

Ներքին ջրային տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալով երկրորդ տեղում է Ֆինլանդիան մոտ 174 մլրդ տ.կմ (1999 թ.): Բեռնաշրջանառության այդպիսի մեծ ծավալը պայմանավորված է Սայմենյան ջրանցքով նախկինում ԽՍՀՄ-ի, իսկ այժմ Ռուսաստանի բեռների միջազգային փոխադրումով¹ (171 մլրդ տ.կմ), իսկ ազգային փոխադրումների² բեռնաշրջանառությունը ընդամենը 3 մլրդ տ.կմ է:

Ներքին ջրային տրանսպորտի բեռնաշրջանառությամբ առաջատար երկրների շարքում է Ռուսաստանը (մոտ 68 մլրդ տ.կմ): Ներքին ջրային կարևոր ուղիներն են Վոլգան (Օկա և Կամա վտակներով), Ենիսեյը, Օբը (Իրտիշի հետ միասին), Ամուրը, Կասպից ծովը և Լադոգա լիճը, ինչպես նաև մի շարք ջրանցքներ (Վոլգա-դոնյան, Վոլգա-Բալթյան և այլն): Ներքին ջրային տրանսպորտի բեռնաշրջանառությամբ առանձնանում են նաև Չինաստանը (հատկապես Յանցզի գետով և Չինական Մեծ ջրանցքով), Բրազիլիան, Ֆրանսիան, Ավստրիան, Ուկրաինան:

¹ Միջազգային փոխադրումներն իրականացվում են ներքին ջրային ուղիներով տարբեր երկրներում գտնվող բեռնաբարձման և բեռնաթափման կետերի (նավահանգիստների) միջև:

² Ազգային փոխադրումներն իրականացվում են միևնույն երկրի բեռնաբարձման և բեռնաթափման կետերի (նավահանգիստների) միջև:

Եվրոպայում կա միջազգային խոշոր նշանակության երկու գետ՝ Յեննոսն ու Դանուբը: Յեննոսը ներքին ջրային փոխադրումներով սպասարկում է մի հսկայական տարածք, որն ընդգրկում է նրա ջրհավաք ավազանը Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Գերմանիայի, Լիխտենշտեյնի ու Նիդերլանդների տարածքը, այլ ջրանցքների համակարգի միջոցով նաև միացած է Վեզեր և Էլբա գետերին:

Շատ մեծ դեր ունի նաև Դանուբ գետը, որը բեռների փոխադրումներ է իրականացնում Ավստրիայի, Բուլղարիայի, Գերմանիայի, Յարավալավիայի, Խորվաթիայի, Յունգարիայի, Ռումինիայի, Սլովակիայի, Ուկրաինայի և Սև ծովի ավազանի միջև: Այս գետով փոխադրվող բեռների ընդհանուր ծավալը 1980 թ. գերազանցել է 90 մլն տ, սակայն գետի ավազանի սոցիալիստական երկրների տնտեսության և մասնավորապես արտաքին առևտրի անկման հետևանքով այն 2000 թ. դրությամբ նվազել է շուրջ 4 անգամ:

8.5 Ավտոմոբիլային տրանսպորտ

Համաշխարհային տրանսպորտի առավել դինամիկ զարգացող ճյուղերից է ավտոմոբիլային տրանսպորտը: Զրային և երկաթուղային տրանսպորտի համեմատությամբ նրա առավելություններն են ավելի բարձր շարժունությունը և ավտոճանապարհների ավելի լայն ցանցը: Վերջինս հնարավորություն է տալիս ամենատարբեր քանակներով բեռներ փոխադրել առաքողների և սպառողների միջև, ինչպես ասում են «դռնից դուռ»:

Ավտոմոբիլային տրանսպորտի զարգացումը բնութագրող ցուցանիշներից են ավտոմոբիլային պարկի մեծությունը, ավտոճանապարհների երկարությունը, փոխադրվող բեռների քանակը և բեռնաշրջանառությունը: Այդ բոլոր ցուցանիշները որոշվում են տվյալ երկրի ավտոմոբիլային ճանապարհների վիճակով և ավտոմոբիլային տրանսպորտի հնարավորությունով: Ավտոճանապարհների ցանցն ու որակը շոշափելի չափով ազդում են տնտեսության զարգացման ու արդյունավետության վրա: Ավտոմոբիլային ճանապարհների անբավարար ցանցի և ցածր որակի հետևանքով երկրի ազգային եկամուտը երբեմն կարող է նվազել 5-10%-ով¹: Այս նկատառումով էլ աշխարհի երկրների մեծ մասը ձգտում է ընդարձակել և բարելավել ավտոճանապարհային ցանցը: Դրա արդյունքում ներկայումս աշխարհի ավտոմոբիլային ցանցի երկարությունը հասել է 24 մլն կմ-ի, որը շատ ավելի մեծ է, քան տրանսպորտի մյուս տեսակների համապատասխան ցուցանիշը:

Աշխարհի ավտոճանապարհների մեծ մասն ունի պինդ ծածկույթ (ասֆալտապատ կամ բետոնապատ): Դեռևս փոքր է կատարելագործված բարձր կարգի ավտոճանապարհների բաժինը (աղյուսակ 8.2):

¹ Դրա պատճառներն են բեռների փոխադրման ժամանակի կորուստները, բեռների կորուստները, ապրանքների փչանալը, ավտոմեքենաների գերնորմատիվային նորոգման ծախսերը և այլն:

Աշխարհի մի քանի երկրների ավտոմոբիլային ճանապարհների ընդհանուր, մայրուղիների և բարձրակարգ ("Ե" կարգի) ճանապարհները (առ 31.12.1999 թ.)¹

Երկրներ	Ավտոճանապարհների երկարությունը (կմ)			Բարձրակարգ "Ե" կարգի ավտոճանապարհների ավտոմոբիլային ճանապարհների մեջ (%)
	Ընդհանուր	Ավտոմայրուղիներ	Բարձրակարգ "Ե" կարգի ավտոճանապարհներ	
Նորվեգիա	91469	589	6284	6.9
Շվեդիա	139056	1484	4901	3.5
Մեծ Բրիտանիա*	396081	3421	3753	0.9
Ֆարավսլավիա	44870	374	2602	5.8
Գերմանիա	649158	11515	10417	1.6
Ռուսաստան	525210	29300	16690	3.2
Ֆայաստան	7527	-	151	2.0
Բելգիա	147121	1702	1818	1.2

* -1998 թ.

Ավտոճանապարհային ցանցի զարգացումը սովորաբար արտահայտում են հարաբերական ցուցանիշով՝ ավտոճանապարհների երկարության և տարածքի հարաբերությամբ (1000 քառ. կմ հաշվով): Այս ցուցանիշը, որպես կանոն, մեծ է զարգացած երկրներում և ընդհակառակը՝ փոքր է զարգացած երկրներում: Առավել զարգացած և ամենաթույլ զարգացած երկրների ավտոճանապարհային ցանցի խտության ցուցանիշները միմյանցից տարբերվում են տասնյակ, իսկ առանձին դեպքերում նույնիսկ հարյուրավոր անգամ: Օրինակ՝ Սուդանում այդ ցուցանիշը 1000 քառ. կմ-ի հաշվով հավասար է 4, Մավրիտանիայում՝ 7, Նիգերում՝ 8 կմ-ի, իսկ Շվեյցարիայում՝ 1720, Բելգիայում՝ 4656 կմ-ի:

Սակայն ավտոճանապարհային ցանցի խտությունը ևս որպես բնութագրական ցուցանիշ պետք է դիտել որոշ վերապահումով, նկատի ունենալով, որ տեղական, տարածաշրջանային և բարձրակարգ բազմաշարք ավտոճանապարհների թողունակությունները խիստ տարբեր են:

Աշխարհի ավտոմոբիլային տրանսպորտը բնութագրող մյուս ցուցանիշը

ավտոմոբիլների քանակն է, որն աճում է շատ արագորեն: Մարդատար ավտոմեքենաների թիվը մոտեցել է 500 մլն-ի, իսկ բեռնատարներինը՝ մոտ 200 մլն-ի: Սակայն ավտոմոբիլային պարկը տեղաբաշխված է խիստ անհավասարաչափորեն: Ավտոմոբիլային պարկը համեմատաբար մեծ է առավել զարգացած երկրներում: Աշխարհի ավտոմոբիլների 2/3-ը կենտրոնացած է Գյուսիսային Ամերիկայում և Արևմտյան Եվրոպայում, իսկ 1/5-ը Ասիայում:

Աշխարհի ավտոմոբիլային պարկի զարգացման ու տեղաբաշխման իրականին ավելի մոտ պատկերը ստանալու համար պետք է համեմատել տարածաշրջանների ու երկրների հարաբերական ցուցանիշները ավտոմոբիլների թիվը 1000 մարդու հաշվով: Այս ցուցանիշի տարածաշրջանային տարբերությունները ևս շատ մեծ են:

Հազար բնակչի հաշվով մարդատար ավտոմեքենաների քանակը պայմանավորված է առաջին հերթին տվյալ երկրի կենսամակարդակով, ինչպես նաև բնակչության ապրելակերպով, ավտոմեքենայի հանդեպ ունեցած վերաբերմունքով:

Ուղևորաշրջանառության առումով ավտոմոբիլային տրանսպորտը տրանսպորտի բացարձակ առաջատար տեսակն է: Համաշխարհային արտաքաղաքային ուղևորաշրջանառության մեջ ավտոտրանսպորտի բաժինը մոտ 80% է:

Ուղևորաշրջանառության ծավալը պայմանավորված է առաջին հերթին երկրի բնակչության թվով, անձնական օգտագործման ավտոմեքենաների ու ավտոբուսների պարկի մեծությամբ, ինչպես նաև երկրում տրանսպորտի այլ տեսակների զարգացման մակարդակով:

Ուղևորների փոխադրման մեծ մասն իրականացվում է առանձին երկրների սահմաններում: Սակայն, օդային տրանսպորտով ուղևորների փոխադրման բարձր արժեքի, մանավանդ դրա բարձրացման միտումի պայմաններում աստիճանաբար աճում է նաև ավտոտրանսպորտով ուղևորների միջազգային փոխադրման ծավալը: Այս երևույթը ցայտուն կերպով արտահայտվում է մեր հանրապետությունում: Ավտոբուսային հաղորդակցություն է հաստատվել ԳԳ և նրանից հազարավոր կմ հեռավորության քաղաքների միջև:

Ավտոտրանսպորտի բաժինը համաշխարհային բեռնաշրջանառության մեջ դեռևս փոքր է, սակայն ունի աճման միտում: Բեռնաշրջանառության ծավալը որոշվում է երկրի նյութական արտադրության ծավալով, տարածքի, հետևաբար, բեռների փոխադրման հեռավորության մեծությամբ, տրանսպորտի այլ, մրցունակ տեսակների (խողովակաշարային, երկաթուղային, ջրային) զարգացման մակարդակով: Վերջին տասնամյակում բեռնաշրջանառության ծավալի մեծացումը պայմանավորված է նաև բեռնատար ավտոմեքենաների բեռնամբարձության և կոնտեյներային պարկի աճով: Խոշոր բեռնատարներով, կիսասայլակներով, լրիվ կցասայլակներով ու ավտոգնացքներով միաժամանակ կարող է փոխադրվել մի քանի տասնյակ տոննա բեռ, ինչի շնորհիվ նվազում է փոխադրման ինքնարժեքը, ու դրա շնորհիվ տնտեսական առումով նպատակահարմար դառնում բեռների փոխադրումը մեծ հեռավորության վրա:

¹ Annual Bulletin of Transport Statistics for Europe and North America. Un, New York and Geneva. 2001.

Համաշխարհային մշակող արդյունաբերության տեղաբաշխումը 1980-1999թթ. (բաժինը աշխարհի մշակող արդյունաբերության ընդհանուր արտադրանքի մեջ %-ով)¹

Վերջին տարի	Արդյունաբերական երկրներ		Նոր զարգացող երկրներ													
	Արևմտյան եվրոպա		Տարածաշրջանային խմբեր			Զարգացման խմբեր										
	Մեծ երկրներ	Երկրներ	Մեջբոսնից	Թիվ 1	Թիվ 2	Թիվ 3	Վերջին	Միջին								
1980	35.1	1.7	13.9	23.6	2.0	85.6	0.9	6.7	5.1	1.7	14.4	8.3	1.6	0.4	1.4	2.7
1985	32.4	1.5	15.7	23.6	1.8	84.6	1.0	5.9	6.6	1.9	15.4	8.3	1.8	0.4	2.0	2.9
1990	31.5	1.4	17.1	23.1	1.7	83.2	1.0	5.3	8.7	1.8	16.8	8.7	2.4	0.3	5.2	3.0
1995	30.8	1.4	16.5	24.8	1.8	78.9	0.9	5.4	13.2	1.6	20.9	9.4	3.2	0.3	5.2	3.0
1996	29.8	1.4	17.0	24.6	1.7	78.0	0.9	5.5	13.9	1.7	22.0	9.6	3.4	0.4	5.6	3.0
1997	29.6	1.4	16.8	24.7	1.7	77.6	0.9	5.5	14.2	1.8	22.4	9.7	3.4	0.4	5.9	3.0
1998	30.1	1.4	15.4	25.4	1.7	77.4	1.0	5.6	14.2	1.8	22.6	9.7	3.1	0.4	6.4	3.0
1999	29.2	1.3	15.4	25.8	1.6	76.7	1.0	5.5	15.1	1.7	23.3	10.0	3.2	0.4	6.7	3.0

Source: International Yearbook of Industrial Statistics 2000. Vienna, 2000

¹ 1990թ. հաստատուն գներով

8.6 Համաշխարհային խողովակաշարային տրանսպորտը (ԽՏ)

ԽՏ-ի, ինչպես և նավթային արդյունաբերության պատմությունը սկսվում է XIX դարի կեսերից: 1990-ական թթ. սկզբին աշխարհում նավթամուղների և գազամուղների ընդհանուր երկարությունը գերազանցում էր 1.5 մլն կմ-ը: Դրանք ձգվում են մի քանի երկրների տարածքով, սակայն դրանցից քչերն են կազմում խողովակաշարերի խոշոր ցանցեր:

Նավթամուղների և գազամուղների երկարությամբ Հյուսիսային Ամերիկան գրեթե 2 անգամ գերազանցում է մնացած բոլոր երկրներին և տարածաշրջաններին: Խոշոր նավթամուղային ցանցեր են ձևավորվել Մախ և առաջ այն երկրներում, որոնք ունեն նավթի շատ մեծ հանույթ և սպառում, իսկ երբեմն էլ՝ դրա արտահանում (ԱՄՆ, ԱՊՀ երկրներ, Կանադա, Չինաստան, Հնդկաստան, Մեծ Բրիտանիա): Նավթամուղների ցանցեր են կառուցվել նաև այն երկրներում, որոնք ունեն վառ արտահայտված արտահանումային (Սաուդյան Արաբիա, Մեքսիկա, Իրան, Ալժիր, Լիբիա, Իրաք, Վենեսուելա) և սպառողական (Ֆրանսիա) կողմնորոշում: Ամենաերկար մայրուղային նավթամուղները կառուցված են ԱՊՀ երկրներում, ԱՄՆ-ում, Կանադայում և Սաուդյան Արաբիայում:

Խոշոր գազամուղներ կառուցում են հիմնականում տնտեսապես զարգացած երկրները: Դրա պատճառն այն է, որ նոր զարգացող երկրները գրեթե չեն օգտագործում իրենց բնական գազը, այլ արտահանում են այն: Իրենց հերթին, զարգացած երկրներից ԱՄՆ-ը, Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, Լեհաստանը, Չեխիան ունեն վառ արտահայտված սպառողական- ներմուծումային կողմնորոշում, իսկ ԱՊՀ երկրները, Կանադան և Նիդերլանդները՝ սպառողական-արտահանումային: Ամենաերկար գազամուղները գործում են ԱՊՀ երկրներում, Կանադայում և ԱՄՆ-ում:

Այլ պատկեր է ստացվում համաշխարհային ԽՏ բեռնաշրջանառությունը բնութագրելիս: Այդ բեռնաշրջանառության (մոտ 4 մլրդ տ.կմ) գրեթե 3 մլրդ տ.կմ-ը բաժին է ընկնում ԱՊՀ երկրներին, որտեղ կառուցվել են աշխարհում ամենահզորների թվին պատկանող «Դրուժբա», «Պրոգրես», «Սիյանիե Սևերա», «Սոյուզ» նավթամուղները և գազամուղները: Դրանք շատ մեծ թողունակությունն ապահովում է շնորհիվ խողովակների տրամագծի և բարձր ճնշման: Այսպես, «Սոյուզ» գազամուղը հաշվարկված է 75 մթն. ճնշման և 1420 մմ խողովակի տրամագծի համար:

ԽՏ-ն ունի զարգացման բարենպաստ հեռանկարներ: Միայն Արևմուտքի տնտեսապես զարգացած երկրներում մոտ ժամանակներս նախատեսվում է կառուցել 63 հազ. կմ նոր խողովակաշարեր: Ռուսաստանի, Բուլղարիայի և Հունաստանի միջև համաձայնություն է ձեռք բերվել կառուցել Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս նավթամուղը, 35-40 մլն տ ռուսական նավթը Բոսֆորի նեղուց արտահանելու համար: Միջազգային կոնսորցիումի կողմից սկսված է աղբյուրական ծովային նավթահանքերից դեպի Միջերկրական ծով ձգվող Բաբու-Ջեհյան նավթամուղի կառուցումը, որը կավարտվի 2005 թ.:

8.7 Օդային տրանսպորտը

Տրանսպորտի առավել երիտասարդ տեսակը օդայինն է, որը շնորհիվ իր մեծ առավելությունների արագության և աշխարհի բոլոր ցամաքային և ջրային տարածքները ընդգրկելու առանձնահատկության, համեմատաբար կարճ ժամանակահատվածում դարձել է աշխարհի, ինչպես նաև առանձին զարգացած երկրների տրանսպորտի կարևորագույն տեսակ:

Քաղաքակրթության զարգացման ներկա փուլում օդային տրանսպորտն առավելագույն չափով է համապատասխանում տնտեսական ու հասարակական կյանքի գործունեությանը: Օդային տրանսպորտը մեծ ներդրում ունի ժողովուրդների միջև շփումների¹ զարգացման, հասարակական կյանքի միջազգայնացման ու գլոբալացման գործում: Աստիճանաբար ընդլայնվում են օդային տրանսպորտի աշխատանքի մասշտաբն ու գործառնության ոլորտը: Եթե իր զարգացման նախնական փուլում օդային տրանսպորտն իրականացնում էր հիմնականում ուղևորների փոխադրում, ապա հետագայում դրան ավելացան նաև բեռների փոխադրման, գիտական ու հետազոտական աշխատանքների իրականացման, բնապահպանական (գլխավորապես մոնիթորինգային), հրդեհաշեջման, բարձր շինությունների մոնտաժման, ոստիկանական, սանիտարաբժշկական, փրկարարական և նման այլ գործառույթները: Ինքնաթիռն ու ուղղաթիռը (թեկուզ դանդաղորեն) դառնում են նաև անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ: Օդային տրանսպորտն այլ կերպ անվանվում է քաղաքացիական ավիացիա (ի տարբերություն ռազմական ավիացիայի):

Բեռների փոխադրման ոլորտում օդային տրանսպորտի հատվածը նեղ ու սահմանափակ է: Նրանով հիմնականում փոխադրում են ավիափոստ, շուտ փչացող ու շտապ փոխադրման կարիք ունեցող ամենաթանկարժեք բեռներ: Տնտեսապես ավելի շահավետ են մեծ հեռավորության վրա կատարվող բեռների (նաև ուղևորների) փոխադրումները: Ինքնաթիռի վառելիքի ծախսը առանձնապես մեծ է նրա վերելքի փուլում, որից հետո 10-11 կմ բարձրության վրա, նոսր օդային տարածքում, թռիչքի ծախսը հասնում է նվազագույնի: Այս պատճառով աճում են մեծ հեռավորությունների վրա կատարվող փոխադրումները և օդային հաղորդակցության ուղեգծերի ընդհանուր երկարությունը: Միայն 1960-1999 թթ. այն աճել է 3 անգամ (3 մլն կմ-ից հասել է մոտ 9 մլն կմ): Սակայն ինչպես նշել է Վասիլևսկին «օդային տրանսպորտի աշխարհագրության հիմքը ոչ թե հաղորդակցության ուղիներն են, այլ օդանավակայանների² ցանցը»¹:

¹ Ինչպես գործարար, այնպես էլ մշակութային, մասնավորապես զբոսաշրջության տեսակետներով:

² airport- օդ և կայան (հանգրվան) բառերից կազմված բառը հայերենում բարգձանվում է կամ բառացիորեն՝ «օդակայան», կամ էլ ավանդական ձևով «օդանավակայան»:

Աշխարհի օդանավակայանների թիվը հասել է մոտ 25 հազարի, սակայն դրանցից միայն շուրջ հազարն ունեն բարձր միջազգային կարգ: Առանձին օդանավակայաններ աչքի են ընկնում շատ մեծ թողունակությամբ 1 միավոր ժամանակում (օրինակ 1 ժամում, 1 օրում կամ 1 տարում) սպասարկած (ընդունած և ճանապարհած) ինքնաթիռների կամ ուղևորների թվով: Դրանց շարքում առանձնանում է 2իկագոյի ՕՅեյրա, Լոնդոնի Յիթրոու և այլ օդանավակայաններ: Աշխարհի 34 խոշորագույն օդանավակայանների գրեթե կեսը գտնվում է ԱՄՆ-ում, 8-ը՝ Եվրոպայում, իսկ մյուսները՝ Ճապոնիայում, Կանադայում, Սինգապուրում, Յոնկոնգում: Երբեմն խոշորագույն քաղաքներն ունենում են մեկից ավելի օդանավակայան (Մոսկվան՝ 5, Նյու-Յորքը՝ 3, Փարիզը, Լոնդոնը և Տոկիոն՝ 2-ական):

Աշխարհի բոլոր օդանավակայանների տարեկան սպասարկած ուղևորների քանակը 1999 թ. հասել էր 1 մլրդ 470 մլն-ի (երկրագնդի բնակչության 1/4-ին), ինչը 49 անգամ գերազանցում է 1950 թ. համապատասխան ցուցանիշը: Դրանց մեծամասնությունը (ավելի քան 70%-ը) ներքին, իսկ փոքրամասնությունը (մոտ 30%-ը) միջազգային ուղեթիղների ուղևորներն են: Այդ օդանավակայանների միջև իրականացվող ուղևորաշրջանառությունը 1999 թ. կազմում էր 2.6 տրլն ուղևոր.կմ:

Օդային տրանսպորտի տարածքային կազմակերպման մեջ մեծ են Գյուսիսային Ամերիկայի, Եվրոպայի և Ասիայի տեսակարար կշիռները (Հավելվածի 33 աղյուսակ): Աֆրիկան, որը բնակչության թվով գերազանցում է Եվրոպային, փոխադրված ուղևորների քանակով և ուղևորաշրջանառության ծավալով 1999 թ. 11-12 անգամ զիջում էր Եվրոպային:

Փոխադրված ուղևորների քանակով և ուղևորաշրջանառությամբ աշխարհի առաջատար երկիրը ԱՄՆ-ն է: Նրան զգալիորեն զիջում են երկրորդ և երրորդ տեղերն զբաղեցնող Ճապոնիան և Մեծ Բրիտանիան (Հավելվածի 34 աղյուսակ):

Ավիագծերի համաշխարհային ցանցի ուսումնասիրությունը թույլ է տալիս նկատել օդային փոխադրումների հետևյալ գլխավոր ուղղությունները.

1. Եվրոպայի և Գյուսիսային Ամերիկայի միջև,
2. Եվրոպայի և Հարավային Ամերիկայի միջև,
3. Եվրոպայի և Մերձավոր Արևելքի միջև,
4. Եվրոպայի և Աֆրիկայի միջև,
5. ԱՄՆ-ի և Արևելյան ու Հարավ-Արևելյան Ասիայի միջև,
6. ԱՄՆ-ի և Հարավային Ամերիկայի միջև,
7. ԱՄՆ-ի և Ավստրալիայի միջև:

Եվրոպայի և Գյուսիսային Ամերիկայի միջև ընկած ամենալարված ավիագծով ամեն տարի փոխադրվում է 30-35 մլն ուղևոր:

Քաղաքացիական ավիացիայի զարգացումն այժմ ընթանում է երկու հիմնական ուղղություններով, այն է՝ արագության (որի մասին արդեն նշվեց), և ուղևորա (բեռնա) տարողության հետագա աճի ուղղություններով:

¹ М. Розин, В. Покшишевский, М. Вольф, А. Василевский. Современная география мирового хозяйства. М., 1977.

Առաջին լայնակմայթ ինքնաթիռները, որոնք վերցնում են 300-400 ուղևոր և 15-20 տ բեռ, ստեղծվել են ԱՄՆ-ում («Բոինգ-747») և Արևմտյան Եվրոպայում (A-300 ատրոբուսը) 70-ական թթ.: 1980 թ.-ից ԽՍՀՄ-ում սկսեց շահագործվել 350 տեղանոց Իլ-86 ատրոբուսը:

Չարքեր ինքնաստուգման համար

1. Ինչո՞ւ է հիմնավորվում տրանսպորտը նյութական արտադրության ճյուղ համարելը:
2. Որո՞նք են տրանսպորտի ու կապի զարգացման միտումները գիտատեխնիկական առաջադիմության ազդեցությամբ:
3. Որո՞նք են տրանսպորտի զարգացման մակարդակը բնութագրող ցուցանիշները:
4. Բնութագրել երկաթուղային տրանսպորտի դերը տրանսպորտային համակարգում և դրա կրած փոփոխությունները:
5. Բնութագրել համաշխարհային ծովային տրանսպորտը և զարգացման միտումները:
6. Բնութագրել աշխարհի ծովային կարևոր ուղիները, նավահանգիստները, միջազգային ջրանցքներն ու նեղուցները:
7. Բացահայտել ներքին ջրային տրանսպորտի դերը, բնութագրել գետային ու լճային կարևոր ուղիները:
8. Բացահայտել ավտոմոբիլային տրանսպորտի դերը, արագ զարգացման պատճառները:
9. Բացահայտել խողովակաշարային տրանսպորտի տեխնիկատնտեսական առավելությունները, զարգացման միտումները: Բնութագրել մայրուղային կարևորագույն խողովակաշարերը:
10. Բացահայտել օդային տրանսպորտի դերը և առավելությունները: Բնութագրել օդային կարևորագույն գծերն ու օդանավայանները:

ԳԼՈՒԽ 9. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդկային հասարակության զարգացումը մշտապես ուղեկցվում է երկրների միջև միջպետական մակարդակով մշակութային, դիվանագիտական, հումանիտար, ռազմատեխնիկական, գիտական, տնտեսական և բազմաբնույթ այլ հարաբերությունների հաստատումով: Դրանցից առավել հիմն ու կարևորագույնը տնտեսական հարաբերություններն են, որոնք տնտեսական կյանքի միջազգայնացման, ԱՄԲ խորացման գործընթացների ժամանակակից փուլում դարձել են յուրաքանչյուր երկրի տնտեսական առաջընթացի անհրաժեշտ ու զխավոր պայմանը:

Ցանկացած, նույնիսկ նպաստավոր տնտեսաաշխարհագրական դիրք և բնական պայմաններ, բնական և աշխատանքային բավարար ռեսուրսներ ունեցող երկրի մեկուսացված տնտեսական զարգացումն անհեթեթություն է, տնտեսական ինքնակործանում:

Մեկ երկրի սահմաններում «փակ» տնտեսության ստեղծման, այսպես կոչված ավտարկիայի¹, քաղաքականությունը, հակառակ ակնկալվող տնտեսական բարգավաճմանը, հանգեցնում է տնտեսության լճացման կամ անկման:

Պատմությունից հայտնի է, որ Չինական մեծ պարիսպը կատարել է ոչ միայն երկիրն օտարերկրյա նվաճումից պաշտպանող, այլ նաև նրա տնտեսությունը արտաքին տնտեսական կյանքից, հատկապես դրա առաջադիմությունից անջրպետող գործառույթ, որի հետևանքով խիստ դանդաղել էր այդ երկրի տնտեսական զարգացումը: Դրա հետևանքով Չինաստանը XX դար մուտք գործեց որպես աշխարհի տնտեսապես առավել թույլ զարգացած երկիր:

Կապիտալիստական հասարակարգում ավտարկիայի քաղաքականությունն ավելի հաճախ դրսևորվում է առևտրատնտեսական փակ միավորումների ձևավորմամբ, դրանց անդամ երկրներ օտարերկրյա ապրանքների ներկրման սահմանափակմամբ, իսկ առանձին վերցրած մեկ երկրի մակարդակով, այն դրսևորվում է միայն պատերազմի պայմաններում՝ արվյալ երկրի ինքնաապահովմամբ: Դրա վառ օրինակն է Գերմանիայի քաղաքականությունը երկրորդ աշխարհամարտի ժամանակահատվածում:

Աշխարհի երկրների տնտեսական համընդհանուր զարգացմանը զուգընթաց մշտապես փոփոխվում են դրանց տնտեսական հարաբերությունների մասշտաբները, ձևերն ու աշխարհագրությունը:

9.1 Միջազգային առևտուրը

Տնտեսական հարաբերությունների առավել հին և վիճակագրական առումով վերլուծության հարմար ձևը **միջազգային առևտուրն** է երկրների միջև

¹ Ավտարկիա - հունարեն autarkeia -ինքնաբավարարում բառից:

իրականացվող ապրանքափոխանակությունը¹:

Երկրի արտահանության (էքսպորտի²) և ներկրման (իմպորտի) ընդհանուր ծավալների հարաբերակցությունը կազմում է առևտրական հաշվեկշիռը: Երկրները ծագում են ունենալ դրական առևտրական հաշվեկշիռ, այսինքն հասնել ներկրման նկատմամբ արտահանության գերազանցության առևտրի դրական սալդոյի: Առևտրական հաշվեկշռի դրական սալդոն, երկրի զարգացման մակարդակն արտահայտող կարևոր ցուցանիշներից է: Կարևոր է նաև տվյալ երկրի արտահանվող ապրանքների ու ծառայությունների և ՀՆԱ-ի ծավալների տոկոսային հարաբերությունը արտահանման քվոտան:

$$\text{Արտահանման քվոտա} = \frac{\text{Արտահանվող ապրանքների ու ծառայությունների արժեքը}}{\text{ՀՆԱ (համադրելի գներով)}} \times 100\%$$

Ամբողջ աշխարհի մասշտաբով արտահանման քվոտան արագորեն աճում է: 1975 թ. այն 12% էր, իսկ 1999թ. հասել էր 24%-ի և շարունակում է աճել:

Առանձին երկրների արտահանման քվոտայի ցուցանիշն արտահայտում է դրանց տնտեսության արտահանման ուղղվածությունը, որը պայմանավորված է ոչ միայն տվյալ արտադրանքի ծավալով, այլև բնակչության կենսամակարդակով ու ներքին սպառման շուկայի տարողունակությամբ, որոնք խոչընդոտում են արտահանության աճին: ԱՄՆ-ում այդ ցուցանիշը 11% է, Ճապոնիայում՝ 14%, Գերմանիայում՝ 33%, իսկ Սինգապուրում՝ 59%:

Որպես կանոն, բարձր զարգացած երկրների արտաքին առևտրի հաշվեկշռի սալդոն³ դրական է, սակայն համաշխարհային շուկայի իրադրության փոփոխությունների հետևանքով այն կարող է արագորեն և կտրուկ փոփոխվել: Օրինակ էներգետիկ ճգնաժամի սկզբնական փուլում (1973-1975 թթ.) նավթ ներկրող զարգացած երկրների առևտրական սալդոն դարձավ բացասական, իսկ արտահանողներին դրական:

Երկրի քաղաքական ու սոցիալ-տնտեսական փոփոխությունների արդյունքում փոխվում են նաև տարածաշրջանային խմբերի բաժինները: Համաշխարհային արտահանության մեջ զարգացած, նոր զարգացող և Արևելաեվրոպական երկրների


տեսակարար կշիռների փոփոխությունն արտահայտում է այդ երկրների մակրոտնտեսական փոփոխությունները:

Աշխարհի արտահանության տարբեր տարիների շրջանաձև դիագրամների համեմատությունից նկատվում է, որ Արևելյան Եվրոպայի երկրների մասնաբաժնի կտրուկ նվազումն ուղեկցվել է զարգացած երկրների մասնաբաժնի ժամանակավոր նվազումով, ապա դրա որոշ բարձրացումով, ինչպես նաև նոր զարգացող երկրների մասնաբաժնի ընդհանուր բարձրացումով:

Այս փոփոխությունների պատճառների սպառնիչ բացատրություն կարելի է ստանալ միայն դրանց ավելի ցածր տարածաշրջանային մակարդակով վերլուծության շնորհիվ:

Գծապատկեր 9.1

Տարածաշրջանների բաժինն աշխարհի ընդհանուր արտահանության մեջ (%-ով)



- Չարգացած երկրներ
- Նոր զարգացող երկրներ
- Արևելյան Եվրոպայի երկրներ

¹ Ապրանքափոխանակությունը մասամբ կատարվում է նաև առանց արժույթի, բայց չնայած դրան, առևտրի ընդհանուր ծավալում այն հաշվում են դրամական արտահայտությամբ:

² Արտահանության առանձնահատուկ տեսակն է կրկնարտահանությունը (ռեէքսպորտը) արտահանված ապրանքի կրկին արտահանությունը: Օրինակ Կուբայից արտահանված շաքարը խՍՀՄ-ը կրկին արտահանում էր Եվրոպայի սոցիալ-խստական երկրներ: Ճապոնիայից բերված ռադիոտեխնիկական սարքերը Միացյալ Արաբական Ամիրայությունները կրկին արտահանում են Հայաստանի Հանրապետություն և տարածաշրջանի այլ երկրներ:

³ Արտահանության և ներկրման տարբերությունը դրամական արտահայտությամբ:

Ջարգացած և նոր զարգացող երկրների տարածաշրջանային և տնտեսական խմբերի մասնաբաժինների փոփոխությունն աշխարհի արտահանության մեջ (fob)¹ (%)

	ԱՐՏԱՅԱՆՈՒԹՅՈՒՆԸ									
	1950	1960	1965	1970	1975	1980	1985	1990	1996	2000
Ջարգացած շուկայական տնտեսության երկրներ										
Ամերիկա	21.0	19.6	18.6	18.9	16.2	14.5	15.8	14.9	15.5	15.8
Եվրոպա	32.9	39.3	41.2	43.3	40.8	39.7	38.7	45.7	41.9	38.5
Հարավային Աֆրիկա (ՀԱՀ)	1.9	1.5	1.3	1.1	1.0	1.3	0.8	0.7	0.6	0.5
Ասիա	1.4	3.3	4.7	6.4	6.5	6.7	9.4	8.6	8.1	8.1
Օվկիանիա	3.5	2.2	2.1	1.9	1.6	1.4	1.4	1.4	1.4	1.2
Նոր զարգացող երկրներ և տարածքներ										
Ամերիկա	12.1	7.7	6.7	5.5	5.2	5.4	5.6	4.1	4.8	
Աֆրիկա	5.3	4.2	4.3	4.1	4.0	4.6	3.2	2.3	1.9	
Ասիա	15.2	11.5	9.8	8.2	15.3	18.4	15.8	16.9	21.8	
Եվրոպա և Օվկիանիա	0.4	0.5	0.7	0.7	0.6	0.6	0.6	0.4	0.3	
Նավթ արտահանող գլխավոր երկրներ	7.3	6.6	6.4	6.1	13.6	16.0	8.9	6.3	5.2	
Նոր զարգացող այլ երկրներ և տարածքներ	25.6	17.4	15.1	12.8	11.5	13.0	16.4	17.5	23.6	
Սնացյալ երկրներ	17.0	12.3	10.4	8.0	6.4	5.9	5.8	5.5	7.3	

Աղյուսակի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 1950-1996 թթ. ժամանակահատվածում համաշխարհային արտահանության աշխարհագրության մեջ տեղի են ունեցել խոշոր փոփոխություններ: Ջարգացած շուկայական տնտեսության տարածաշրջանային խմբերից Ամերիկայի, Հարավային Աֆրիկայի և Օվկիանիայի մասնաբաժինները նվազել են, իսկ Եվրոպայի և Ասիայի մասնաբաժինները, ընդհակառակը, աճել են, ընդ որում Ասիայինը շատ մեծ չափերով (գրեթե 6 անգամ):

Գրեթե նույն միտումներն են նկատվում նաև նոր զարգացող երկրների ու տարածքների արտահանության մասնաբաժինների փոփոխության բնագավառում:

¹ fob- free on board - անգլերեն՝ ազատ է նավի տախտակամածի վրա - ապրանքի արժեքը վաճառողի պարտավորությամբ այն նավի տախտակամած հասցնելու պահին:

Աշխարհում Ասիայի արտահանության մասնաբաժնի ընդհանուր աճի ֆոնի վրա նկատվում է նրա ենթատարածաշրջանների արտահանության մասնաբաժնի փոփոխության հակադիր միտումներ: Արևմտյան Ասիայի մասնաբաժինը 70-ական թվականներին սկսած էներգետիկ ճգնաժամի տարիներին, նավթի միջազգային շուկայական գնի 15-20 անգամ աճի հետևանքով կտրուկ աճեց (3.1-ից հասավ 10.4%-ի), իսկ հետագա տարիներին, նավթի գնի որոշ իջեցման հետևանքով, այդ մասնաբաժինը կրկին փոքրացավ:

Արևմտյան և Կենտրոնական Ասիայից բացի, մնացյալ Ասիայում, 1985 թ. հետո նկատվում է արտահանության մասնաբաժնի կայուն և զգալի աճ: Դա պայմանավորված է Հարավ-Արևելյան և Արևելյան Ասիայի երկրների տնտեսական զարգացման նոր կուրսով՝ ճապոնիայի հետ տնտեսական ինտեգրացիայով: ճապոնիայի բնական ու աշխատանքային ռեսուրսների անբավարարությունը, էկոլոգիական տեսակետից «անմաքուր» արդյունաբերական արտադրության չափազանց կենտրոնացման, աշխատուժի բարձր արժեքի և այլ պատճառներով աշխատատար ու զանգվածային որոշ արտադրություններ աստիճանաբար «գաղթեցին» ճապոնիայի հարևան երկրները: Օրինակ՝ Կորեայի Հանրապետությունը ճապոնիայի նավաշինական համալիրի մեջ ներգրավվելով, կարճ ժամանակահատվածում ծովային նավերի արտադրության և արտահանության ծավալով առաջ անցավ աշխարհի ավանդական նավաշինության շատ երկրներից և գրավեց երկրորդ տեղը:

ճապոնական ռադիոտեխնիկական արդյունաբերական համալիրի մեջ ներգրավվելով Թայլանդ, Մալայզիան, Կորեայի Հանրապետությունը, Սինգապուրն ու Թաիլանդը միասին, ներկայումս արտահանում են աշխարհում արտադրվող հեռուստացույցների գրեթե 40%-ը (զարգացող երկրների արտահանության 66.6%-ը):

Ներկայումս համաշխարհային արտահանության գծով առավել ծանրակշիռ տնտեսական խմբավորումներն են Ասիա-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցությունը, Եվրամիությունը և Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագիրը (աղյուսակ 9.2):

Տնտեսական խմբավորումների արտահանությունը 1950-1996թթ. (Մլն ԱՄՆ դոլար, fob¹)

Աշխարհը և երկրների խմբերը	1950	1960	1970	1980	1990	1996
Աշխարհը, ընդամենը այդ թվում	61893	129886	314614	20022400	3490909	5329657
Ջարգացած շուկայական տնտեսության երկրներ	37557	85598	224978	1285284	2489035	3593589

¹ Բացատրությունը տես նախորդ էջի տողատակում:

Նոր զարգացող երկրներ և տարածքներ	20393	31049	59335	586848	831486	1534800
Տարածաշրջանային տնտեսական խմբավորումներ						
Չարգացած երկրներ և միջտարածաշրջանային խմբավորումներ						
Ասիա-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցություն (APEC)	21661	41424	100749	616557	1325873	2335857
Եվրոմիություն (EU)	19022	48162	128439	753824	1496061	2103812
Ազատ առևտրի եվրոպական միավորում (EFTA)	1310	2825	7666	49112	99422	127051
Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագիր (NAFTA)	13545	26208	60808	308870	561932	922706
Ամերիկայի նոր զարգացող երկրներ և տարածքներ						
Լատինաամերիկյան ինտեգրացիոն միություն (LAIA)	5550	7283	12810	80962	126636	232186
Աֆրիկայի նոր զարգացող երկրներ և տարածքներ						
Հարավաֆրիկյան զարգացման համագործակցություն (SADC) ¹	1617	3193	5717	32137	34943	44538
Ասիայի նոր զարգացող երկրներ և տարածքներ						
Հարավ-արևելյան Ասիական երկրների ընկերակցություն (ASEAN)	3730	4592	6310	71881	143923	340083
Օոցի երկրների համագործակցություն (GCC)	699	2173	5148	161075	87800	115005
Բանգկոկի համաձայնագիր	171	2082	3795	27989	86724	170484

¹ ՀԱՀ-ը առանձնացվել է որպես զարգացած երկիր Ծանոթություն. աղյուսակում արտահայտված են միայն արտահանության համեմատաբար մեծ ծավալ ունեցող տնտեսական խմբավորումները:
256

Ապրանքային արտահանության կառուցվածքը: Համաշխարհային ապրանքային արտահանության ծավալի աննախադեպ մեծ աճը (1950-1996 թթ. 86 անգամ) ուղեկցվում է նաև արտահանվող ապրանքային արտադրանքի կառուցվածքի փոփոխությամբ: Նախկին զաղության երկրները, քաղաքական անկախության հետ միասին, աստիճանաբար ձեռք են բերում նաև տնտեսական որոշ անկախություն զարգացնելով ազգային տնտեսությունը՝ այդ նպատակով օգտագործելով իրենց հումքային ռեսուրսները:

Տնտեսական քաղաքականության այս կուրսի շնորհիվ նոր զարգացող երկրները ոչ միայն աշխատանքային ռեսուրսների համեմատաբար բարձր զբաղվածություն, այլ նաև լրացուցիչ ազգային եկամուտ են ապահովում այն պարզ պատճառով, որ միջազգային շուկայում պատրաստի ապրանքների վաճառքից ստացվում է մի քանի անգամ բարձր շահույթ, քան հումքի վաճառքից:

Բացի նշվածից, արտահանվող ապրանքային արտադրանքի կառուցվածքը փոփոխություն է կրում նաև ԱՄՔ խորացման ու ՉՏՀ ազդեցությամբ: ԱՄՔ խորացումն, ինչպես հայտնի է, արտահայտվում է ոչ միայն առարկայական (պատրաստի առարկաների արտադրության) մակարդակի բարձրացումով, այլ նաև հանգուցային (մեքենասարքավորումների ազդեցությամբ), դետալային ու արտադրության տեխնոլոգիական փուլային մասնագիտացումներով, արտադրության հումքա-նյութատարության խիստ կրճատումով¹:

Վերը նշված գործընթացների միագումարային արդյունքում նվազում է տնտեսության առաջնային հատվածի (սեկտորի) արտադրանքների հումքի, վառելիքի, պարենի և, ընդհակառակը, փոխարենը բարձրանում է երկրորդային հատվածի մշակող արդյունաբերության ճյուղերի, հատկապես բարձր տեխնոլոգիական, այսինքն գիտատար արտադրությունների արտադրանքի բաժինները: Այսպես, եթե 1950 թ. հումքի և պարենի բաժինը համաշխարհային ապրանքային արտադրանքի կառուցվածքում կազմում էր 55%, ապա 1990-ական թվականների սկզբին՝ շուրջ 25% (պատրաստի արտադրանքի բաժինը, բնականաբար 75%):

Որպես կանոն, բարձր զարգացած արդյունաբերականացված երկրների արտադրանքի արտահանության կառուցվածքում փոքր է հումքի և պարենի տեսակարար կշիռը և բնականաբար մեծ է պատրաստի արտադրանքի բաժինը: Բացառություն են կազմում հանքային և հողային մեծ ռեսուրսներ ունեցող որոշ երկրներ (օրինակ Կանադան և Ավստրալիան):

Յուրահատուկ խումբ են կազմում ԱՊՀ անդամ երկրները, այդ թվում և ՀՀ-ը, որոնց արտահանության ապրանքային կառուցվածքում խիստ նվազել է պատրաստի ապրանքների բաժինը:

9.2 Գիտատեխնիկական համագործակցությունը միջազգային տնտեսական հարաբերությունների նոր, հատուկ ձև է: Աշխարհի

¹ Տես մասնագիտացմանն ու գտա-ին վերաբերվող թեմաները:

պետությունների միջև գիտատեխնիկական կապերի կտրուկ ընդլայնումը համընկնում է ԳՏՀ ժամանակաշրջանին: Գիտատեխնիկական առաջադիմությունը ներկայումս ընթանում է այնպիսի արագ տեմպերով, որ ցանկացած, նույնիսկ ամենաբարձր զարգացած, երկրի տնտեսություն չի կարող երկար ժամանակ համաշխարհային տնտեսությանը համաքայլ զարգանալ առանց այլ երկրների հետ գիտատեխնիկական տեղեկատվության փոխանակման: Դեռ ավելին, տեղեկատվության համար հասանելիք վճարումից ու գիտահետազոտական ու նախագծային կոնստրուկտորական աշխատանքների վրա կատարվող ծախսերից խուսափելու, բայց տեխնիկայի վերջին նվաճումների վրա հիմնված բարձր արտադրողական, հետևաբար մրցունակ տնտեսություն ապահովելու նպատակով, որոշ խոշոր արտադրական միավորումներ դիմում են մրցակից ֆիրմաների գործունեությանը վերաբերող տեխնիկական բնույթի տեղեկություններ հայթայթելու ոչ լեգալ այնպիսի մեթոդի, ինչպիսին է այսպես կոչված արդյունաբերական լրտեսությունը:

Որոշ երկրներ աստիճանաբար մասնագիտանալով գիտահետազոտական ու նախագծային կոնստրուկտորական աշխատանքների բնագավառներում, դարձել են լիցենզիաների ու արտոնագրերի (պատենտների) խոշոր արտահանողներ:

Վերջին տասնամյակներում արտոնագրերը այդ երկրների տեխնիկական-արտադրական առաջադիմության շարժիչ հանդիսանալուց բացի, դարձել են նաև միջազգային փոխանակման առջ ու վաճառքի օբյեկտ ու արտոնագրեր արտահանող երկրների ազգային քյուջեի համալրման կարևոր աղբյուր:

Արտոնագրեր «ծնվում» հայտագրվում են աշխարհի գրեթե բոլոր պետություններում, սակայն դրանց մեծամասնությունը բաժին է ընկնում բարձր զարգացած երկրներին:

Աշխարհի արտոնագրերի տարածքային բաշխման աշխարհագրության վիճակը կարելի է արտահայտել տվյալ երկրի 1000 բնակչին ընկնող հայտագրված արտոնագրերի թվով: Օրինակ ԱՄՆ-ում այդ ցուցանիշը մոտ 1 է, Գերմանիայում մոտ 2, ճապոնիայում ավելի քան 3, մինչդեռ զարգացող երկրների մեծ մասում այդ ցուցանիշը շատ մոտ է 0-ի:

Սակայն արտոնագրերի ներդրման աշխարհագրությունը զգալիորեն տարբերվում է դրանց հայտագրման աշխարհագրությունից, արտոնագրերի միջազգային շուկայում դրանց վերաբաշխման հետևանքով: Արդյունաբերական երկրները սեփական արտոնագրերից բացի օգտագործում են նաև արտոնագրերի համաշխարհային շուկայից գնված պատենտները:

Նշվածով է բացատրվում այն փաստը, որ արդյունաբերականացված երկրների տնտեսության բոլոր բնագավառներում օգտագործվող արտոնագրերի թիվը զգալիորեն գերազանցում է այդ երկրների գրանտի արժանացած (սեփական) արտոնագրերի թվին (օրինակ ճապոնիայում 4 անգամ, Գերմանիայում 6 անգամ, իսկ ԱՄՆ-ում 10 անգամ):

Գրանտի արժանացած սեփական արտոնագրերի թվի փոքրության պատճառով նշված հարաբերությունն էլ ավելի մեծ է նոր զարգացող երկրներում: Օրինակ Իրանի տնտեսության մեջ 1995 թ. օգտագործվում էր 8500 արտոնագիր, 258

մինչդեռ դրանից ընդամենը 166-ն էին «սեփական արտադրության» արտոնագիր, որի հետևանքով առաջին թիվը երկրորդին գերազանցում է ավելի քան 50 անգամ:

Ստավոր դեռևս մեծ ներուժի շնորհիվ, Հայաստանի Հանրապետությունն ունի արտոնագրերի համաշխարհային շուկայում հաջողության հասնելու մեծ նախադրյալներ:

1996 թ. դրությամբ ՀՀ-ում հայտագրված էր 20430 արտոնագիր, որից գրանտի էր արժանացել ընդամենը 127-ը:

9.3 Ֆինանսավարկային հարաբերությունները միջազգային տնտեսական հարաբերությունների կարևոր ու դիմամիկ զարգացող ձև են: Դրանք տարբեր ուղիներով իրականացվող դրամական հոսքեր են երկրների միջև: Ամենատարածվածն է կապիտալի կարճաժամկետ կամ երկարաժամկետ տրամադրումը վարկերի ու փոխառությունների ձևով: Դրանց համաշխարհային ծավալը 1996 թ. հասել է 334 մլրդ դոլարի, իսկ աշխարհի երկրների արտասահմանյան ուղղակի դրամական ներդրումների ընդհանուր կուտակումային (կումուլյատիվ) արժեքն աճել է 18 անգամ, հասնելով 1.2 տրլն դոլարի: Կապիտալի համաշխարհային այդպիսի մեծ հոսքը ինչպես արտահանող, այնպես էլ ներմուծող երկրների տնտեսության զարգացմանը խթանող կարևորագույն գործոններից է:

Կապիտալ արտահանող խոշոր երկրները տարեկան ստանում են միլիարդների հասնող շահույթ, որի շնորհիվ վերացնում կամ նվազեցնում են արտաքին առևտրի պակասորդը (դեֆիցիտը), իսկ ներկրող երկրներն էլ այդ կապիտալի ներդրման շնորհիվ ընդլայնում են իրենց տնտեսական հզորությունը ստեղծելով արտադրական նոր կարողություններ:

Կապիտալի մեծ մասը (շուրջ 85%-ը) ներդրվում է տնտեսության այն ճյուղերում, որոնք ապահովում են ավելի արագ վերադարձ և համեմատաբար բարձր շահույթի նորմա:

Աշխարհի որոշ տարածաշրջանների ու երկրների արտասահմանյան ուղղակի ներդրումների ներհոսքի ու արտահոսքի մասնաբաժինները՝ 1970 և 1995 թթ. (%-ով)

Տարածաշրջաններ և երկրներ	Ներհոսք		Արտահոսք	
	1970	1995	1970	1995
Աշխարհը, ընդամենը	100.0	100.0	100.0	100.0
Զարգացած շուկայական տնտեսության երկրներ	80.4	63.9	99.8	85.0
Նոր զարգացող երկրներ և տարածքներ	19.6	31.8	0.2	14.7
Արևելյան Եվրոպայի երկրներ	...	4.3	...	0.3
Հյուսիսային Ամերիկա	18.8	21.0	58.3	25.0
ԱՄՆ	11.6	17.7	55.5	22.4
Եվրոպայի զարգացած շուկայական տնտեսության երկրներ	47.6	37.1	37.8	50.5
Ֆրանսիա	5.7	7.2	2.8	9.9
Մեծ Բրիտանիա	13.7	6.8	12.4	10.2
Գերմանիա	7.1	4.1	7.9	8.8
Նիդերլանդներ	5.8	3.5	12.4	10.2
Ասիայի զարգացած շուկայական երկրներ	1.3	0.6	2.6	7.2
Ճապոնիա	0.8	0.0	2.6	7.0
Ասիայի նոր զարգացող երկրներ և տարածքներ	-	-	0.0	13.8
Չինաստան	0.0	12.3	0.0	7.8
Կորեայի Հանրապետություն	0.6	0.7	0.0	1.4
Սինգապուր	0.9	2.9	0.0	1.4

Կապիտալի հոսքի ծավալն ու ուղղությունը պայմանավորված են համաշխարհային տնտեսության զարգացմամբ և արտահայտում են վերջինիս միտումները: Ինչպես ցույց է տալիս թիվ 9.3 աղյուսակի տվյալների վերլուծությունը, 1970-1995 թթ. ժամանակահատվածում զարգացած շուկայական տնտեսության երկրները դեռևս պահպանում են աշխարհի կապիտալի ինչպես արտահոսքի (արտահանության), այնպես էլ ներհոսքի (ներմուծման) մեջ ունեցած գերակշիռ բաժինը: Վերջին տասնամյակներում կապիտալի համաշխարհային ներմուծման ու արտահանության գլխավոր միտումը դրանց մեջ նոր զարգացող երկրների ու տարածքների մասնա-

բաժնի մեծացումն է, որն այդ երկրների տնտեսական զարգացման աշխուժացման արտահայտությունն է:

Շուկայական տնտեսության զարգացման ցիկլային բնույթով պայմանավորված վերջին տասնամյակներում տնտեսական աճի դրական միտումներ են նկատվում ԱՄՆ-ում: Զգալիորեն մեծացել է այդ երկրի «տնտեսական ձգողությունը» աճել է կապիտալի ներհոսքի և նվազել է կապիտալի արտահանության ծավալը, որն ուղեկցվում է այլ տարածաշրջանների Արևմտյան Եվրոպայի ու Ճապոնիայի կապիտալի միագումարային արտահոսքի մեծացմամբ (40,4%-ից հասել է 57,5%-ի):

Արևմտյան Եվրոպայի երկրներն իրենց կապիտալ ներդրումների 2/3-ը, իսկ Ճապոնիան՝ 1/3-ը տեղաբաշխում են ԱՄՆ-ում: Միաժամանակ նվազել է կապիտալ ներդրումների միագումարային ներհոսքը դեպի Արևմտյան Եվրոպայի երկրներ և Ճապոնիա (48,4%-ից նվազել է մինչև 37,1%-ի):

Զարգացող երկրներից կապիտալի արտահանության աշխարհագրության բնագավառում մեծ թռիչք են կատարել Չինաստանը, Կորեայի Հանրապետությունը և Սինգապուրը: Օրինակ՝ Չինաստանը մինչև 1985 թ. կապիտալ չի արտահանել և 1985-1996 թթ. ժամանակահատվածում դրա ծավալն ավելացել է շուրջ 28 անգամ: Չինաստանը կապիտալի որոշ ներդրում է կատարում նաև ՀՀ-ում:

Չինաստանը միաժամանակ ակտիվորեն ներգրավվում է արտասահմանյան կապիտալը: Այժմ այդ երկրում է տեղաբաշխված համաշխարհային կապիտալ ներդրումների ավելի քան 12%-ը:

Կապիտալի զգալի ներդրումներ կատարվում են նաև ՀՀ-ում, սակայն քաղաքական որոշ ցնցումներն ու ներդրումները պաշտպանող որոշակի օրենսդրության բացակայությունը հանդիսանում են այդ հոսքը կանխող գործոն:

Երկարատև ու կարճատև վարկերի, ինչպես նաև փոխառությունների զգալի մասն իրականացվում է Զարգացման ու վերակառուցման միջազգային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) մասնակցությամբ: Բացի այդ, գործնականում, արտասահմանյան ուղղակի կապիտալ ներդրումներ կատարում են ԱՎԿ-ները, որի հետևանքով հաճախ են նկատվում երկու երկրների կտրվածքով կապիտալի փոխադարձ ներդրումներ:

9.4 տարբեր տեսակի ծառայությունների փոխանակումը: Ավանդաբար այդ ծառայությունների գլխավոր տեսակը եղել են տրանսպորտային ծառայությունները: Մի քանի երկրներ մասնագիտացել են ծովային փոխադրումների մեջ, դրանց անվանում են «ծովային կառապաններ»: Ստեղծելով մեծ առևտրական նավատորմ՝ այնպիսի երկրները, ինչպիսիք են, օրինակ, Հունաստանն ու Նորվեգիան նավավարձությամբ (ֆրախտով) փոխադրումներից ստանում են մեծ եկամուտ:

Այլ տեսակների զարգացման հետևանքով ծառայությունների ընդհանուր ծավալի մեջ տրանսպորտային ծառայությունների մասնաբաժինն այժմ իջել է մինչև 1/4-ի: Տրանսպորտային բանուկ ուղիների վրա գտնվող երկրներում մեծ ծավալ են կազմում օտարերկրյա ծովային նավերի ու օդանավերի վառելիքով լիցքավորման ու նորոգման աշխատանքները:

Արագորեն աճում է նաև ապահովագրական, տեղեկատվության մշակման ու հաղորդման, գովազդի, տեխնիկական ու ինժեներական-նախագծային, տարբեր բնույթի խորհրդատվական և հաղորդակցության ծառայությունները, որոնց միասին բաժին է ընկնում ծառայությունների միագումարի կեսից ավելին:

Այնքանով, որ նման ծառայություններ իրականացվում են գրեթե բոլոր պետությունների միջև, ապա դժվար է դրանց աշխարհագրությունն այնպիսի որոշակիությամբ արտահայտել, ինչպես, օրինակ, զբոսաշրջությանն ու ֆինանսավարկային հարաբերություններին:

Կարելի է միարժեքորեն ընդգծել, որ այդ ծառայությունների մեծ մասը բաժին է ընկնում զարգացած երկրներին, իսկ նոր զարգացող երկրներից հատկապես առանձնանում են Հնդկաստանն ու Մեքսիկան:

9.5 Չանգվածային զբոսաշրջիկություն և հանգիստ (ռեկրեացիա)

Զբոսաշրջության էությունը:

Մարդկային հասարակության զարգացումն այնպես է ընթացել, որ միայն XX դարի երկրորդ կեսին են նպաստավոր պայմաններ ստեղծվել իրագործելու մարդկանց վաղեմի ձգտումը փոխել իրենց մշտական, ամենօրյա կենսական իրադրությունը, նոր տպավորություններ ձեռք բերել այլ երկրներին ծանոթանալով, գեղագիտորեն հարստանալ, ազատ ժամանակ հանգստանալով վերականգնել ուժերը: Որպես **հանգիստ** բառի հոմանիշ օգտագործվում է **ռեկրեացիա** տերմինը¹:

Չանգվածային զբոսաշրջությունը նոր, դինամիկ զարգացող գործունեություն է, որն անընդհատ փոփոխվում է՝ հարստանալով նոր տարրերով: Որպես **զբոսաշրջություն** բառի հոմանիշ օգտագործվում է **տուրիզմ** տերմինը²:

Պետք է նշել, որ սոցիալ-տնտեսական աշխարհագրությունը հանդես գրոսաշրջությանն ունի երկու մոտեցում. ա) որպես հանգստի ձև. բ) որպես տեղափոխության ձև:

Արտաքինից շատ պարզունակ թվացող «տուրիզմ» հասկացությունն իրականում անհամեմատ բարդ է ու խճճված, որի պատճառով տուրիստներին վերաբերվող տվյալներն ընկալվում են տարբեր իմաստներով: Այդ հասկացությունը սահմանելու առաջին փորձը կատարել են Ազգերի Լիգայի փորձագետները: Նրանց սահմանումով «տուրիստ» էին համարվում.

ա) այն անձինք, որոնք այցելում են իրենց ազգակիցներին կամ ճանապարհորդում են ժամանակավորապես բուժվելու համար.

բ) այլ երկրներում կազմակերպված գիտաժողովների ու խորհրդակցությունների մասնակիցները, մարզիկները, դիվանագետներն ու վարչական աշխատողները.

գ) առևտրի նպատակով ճանապարհորդողները.

դ) այն անձինք, որոնք ուղևորանավերով ճանապարհորդելիս օտարերկրյա նավահանգիստ-քաղաքում մնում են ավելի քան մեկ օր:

Կարելի է նկատել, որ սույն սահմանումն ամբողջական, հստակ ու համակողմանի չէր: Միաժամանակ պետք է հիշել, ինչպես արդեն նշվեց, որ զբոսաշրջությունը շարժում, արագ փոփոխվող գործունեություն է:

Մեր օրերում հանգստի կամ ճանաչողական նպատակներով այլ երկրում հայտնված զբոսաշրջիկը, երբեմն, հանգամանքների ազդեցությամբ, փոխում է իր մտադրությունը՝ զբաղվելով դրան վաստակելով (կամ էլ ընդհակառակը):

Այս և նման այլ հանգամանքները հաշվի առնելով 1963թ. Հոռնում կայացած զբոսաշրջության միջազգային գիտաժողովում որոշվեց գործածության մեջ դնել «այցելու» («visiteur»- ֆրանսերեն, «visitor» - անգլերեն) տերմինը: «Այցելու» է համարվում այն ճանապարհորդը, որը տվյալ շրջան է եկել որոշակի ժամանակով և չի զբաղվում մասնագիտական աշխատանքով:

Սակայն այս սահմանումը ևս զերծ չէ թերություններից: Այսպես, օրինակ, Չեխական Հանրապետության սահմանը 1996 թ. հատել և երկրում մեկ օրից ավել ժամանակ են անցկացրել 110 մլն այցելու, որից բառիս բուն իմաստով երկարատև զբոսաշրջության նպատակով (առնվազն մեկ շաբաթ ժամանակով) ժամանածների թիվն ընդամենը 17 մլն էր, իսկ Լեհաստանում այդ ցուցանիշները, համապատասխանաբար, եղել են 89 և 19 մլն մարդ:

Այսպիսով «զբոսաշրջություն» տերմինը լրիվ չի արտահայտում ժամանակակից զանգվածային զբոսաշրջությունը և, ընդհանուր առմամբ, այն ավելի նեղ հասկացություն է, քան «ռեկրեացիան»: Այս նկատառումով էլ որոշ գիտնականներ¹ առաջարկում են **զբոսաշրջության աշխարհագրությունն** անվանել **ռեկրեացիոն աշխարհագրություն**:

ա) Չանգվածային հանգստի զարգացման նախադրյալները և դրանց գնահատումը

Հանգիստը ոչ միայն սոցիալ-տնտեսական (հասարակական) աշխարհագրության, այլ նաև մի շարք գիտությունների, հատկապես տնտեսագիտության², սոցիոլոգիայի, հոգեբանության, բժշկության, ճարտարագիտության ուսումնասիրության օբյեկտ է:

Արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման արդյունքում փոփոխվում են զանգվածային հանգստի կազմակերպման նախադրյալներն ու ռեկրեացիոն շրջագայությունների պահանջարկը ձևավորվող պատճառները:

Այսպես, եթե նախկինում զբոսաշրջությունը գրեթե բացառապես պայմանավորված էր շրջակա միջավայրը փոփոխելու մարդկանց բնագոյային ձգտումով,

¹ Օրինակ Վ.Ս Պրեոբրաժենսկին ու Յու.Ա Վեդենինը:

² Տնտեսագիտության այս բաժինը կոչվում է «զբոսաշրջության տնտեսագիտություն»:

¹ անգլերեն recreation- հանգիստ, ուժերի վերականգնում, զվարճանք

² ֆրանսերեն tour-ճանապարհորդություն, որն ավարտվում է ելակետ վերադարձով

ապա ներկայումս դրան ավելացել են մի շարք նոր ազդակներ: Դրանցից են, օրինակ, աշխատանքի և կենցաղի պայմանների բարդացումը, աշխատանքի ինտենսիվացման ու ինտելեկտուալացման հետևանքով մարդկանց ներվային լարվածության բարձրացումը, խոշոր քաղաքային ագլոմերացիաներում մարդկանց ֆիզիկական ու հոգևոր ուժերի վերականգնման հնարավորությունների բացակայությունը:

Նման պայմաններում մարդու ֆիզիկական վիճակը բարելավում և օրգանիզմի վրա բարերար ազդեցություն է թողնում ակտիվ հանգիստը, քանի որ հանգստի շնորհիվ վերացվում են լարված աշխատանքի ժամանակ ու միապաղաղ կենցաղում մարդկանց մոտ առաջացած ստրեսներն ու հոգնածությունը:

Ձանգվածային զբոսաշրջության բուռն զարգացման կարևոր նախադրյալներից է բնակչության կենսամակարդակի բարձրացումը: Ներկայումս նախկինի համեմատ մեծացել է շրջագայության համար անհրաժեշտ ֆինանսական, ինչպես նաև տրանսպորտային միջոցներ ունեցող մարդկանց բաժինը, մարդկանց ազատ ժամանակի բյուջեն, հյուրանոցային տեղերի թիվը և այլն:

Ձանգվածային զբոսաշրջության զարգացման կարևորագույն նախադրյալը **ռեկրեացիոն ռեսուրսներն են՝ բնական ու տեխնածին այն գործընթացներն ու երևույթները, որոնց շնորհիվ բավարարվում են բնակչության պահանջմունքները և նորմալ գործում են տնտեսության այն ճյուղերը, որոնք մասնագիտացել են հանգստի ապրանքների ու ծառայությունների գծով:**

Այս առիթով նշենք, որ վերջին տասնամյակներում զգալիորեն բարդացել է հանգստի պահանջարկը (Պ) որոշող ցուցանիշների ֆունկցիոնալ կախվածությունը (Ֆ), որը սլովակ աշխարհագրագետ Կ.Իվանիչկան¹ արտահայտել է հետևյալ բանաձևով.

$$\text{Պ} = \text{Ֆ}(\text{Բ, ՈՒ, Դ, Ժ, Ա, Ռ}),$$

որտեղ՝ Բ-ն բնակչության թիվն է,

Ու-ն՝ ուրբանիզացվածության մակարդակը,

Դ-ն՝ դրամական կուտակումները,

Ժ-ն՝ ազատ ժամանակի մեծությունը,

Ա-ն՝ հանգստի ավանդույթները,

Ռ-ն՝ պետության ռեկրեացիոն քաղաքականությունը:

բ) Զբոսաշրջության զարգացման համար պայմանների գնահատումը:

Ամառային, ծմեռային և շուրջտարյա հանգստյան ու մարզական ավելի քան 120 գործունեության ձևերը գնահատվում են բալային համակարգով:

Հանգստի կազմակերպման տեսակետից առավել մեծ արժեք են ներկայացնում տաք ու արևոտ եղանակային պայմանները, ջրամբարները, մաքուր օդը, տաք

կլիմայով ծովափնյա գոտիները, տաք աղբյուրներով ամողջարանային կենտրոնները, լճերի ու ջրամբարների ափերը, մշտական ու կայուն ծյունածածկը, գեղատեսիլ, անտառապատ ռելիեֆը, ջրվեժները և այլն: Որպես տուրիստական օբյեկտներ բարձր են գնահատվում հնեաբանական արժեքները, հին ժամանակներից պահպանված տեխնիկան, հնագույն դղյակները, հին քաղաքների կենտրոնները, մենաստանները, ամրոցները, վանքերը, (ինչպես օրինակ, Գառնիի հեթանոսական տաճարը և Գեղարդի ժայռափոր վանքը): Զբոսաշրջիկների մեծ մասի ձգտման օբյեկտներն են նաև համաշխարհային ճանաչում ունեցող համերգասրահները, թատրոնները, օպերաները, (օրինակ՝ Նյու Յորքի «Կարնեգի հոլ» համերգասրահը, Փարիզի «Գրանդ օպերան», Միլանի «Լա Սկալա» օպերան, Մոսկվայի «Մեծ թատրոնը»):

Ինչ վերաբերում է գյուղական տարածքներին, ապա այստեղ զբոսաշրջության տեսակետից մեծ արժեք են ներկայացնում լիցենզավորված ռուսորդության ու ձկնորսության համար հատկացված տարածքները, ազգային այգիներն ու արգելավայրերը:

Եթե կարճատև հանգստի կազմակերպման համար կարևոր գործոնը հանգստացողի բնակավայրից հանգստի վայրի ունեցած հեռավորությունն է, ապա երկարատև հանգստի կազմակերպման կարևորագույն գործոնը հանգստյան օբյեկտի շրջակա միջավայրի հակադրություններն ու տարաշխարհիկությունն են:

գ) Զբոսաշրջության և ռեկրեացիայի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա

Ինտենսիվ օգտագործվելու հետևանքով ռեկրեացիոն ռեսուրսները ժամանակի ընթացքում քայքայվում ու կրճատվում են: Ուրբանիզացված տարածքներում զբոսաշրջային գոտիների որոշ տեղամասեր օտարվում են շինարարական նպատակներով օգտագործելու համար կամ էլ աղտոտվում են տարբեր տեսակի թափոններով, տրորվում ու վերանում է բուսականությունը, վերանում են նաև կենդանիների տեսակները: Երբեմն էլ դրանց փոխարեն առաջանում են նորերը¹: Մարմարից կառուցված պատմաճարտարապետական հուշարձանները (օրինակ՝ Աթենքի Ակրոպոլիսը) քայքայվում են այսպես կոչված թվային անձրևների հետևանքով: Ռեկրեացիոն ռեսուրսներն առավել մեծ չափով քայքայվում են միջավայրի վրա թույլատրվող ռեկրեացիոն ծանրաբեռնվածությունը² գերազանցելու (այցելուների չափազանց մեծ թվի) հետևանքով:

Զբոսաշրջության և հանգստի գոտիների էկոհամակարգի հավասարակշռությունը կարող է պահպանվել որոշակի սահմաններում: Այդ գոտիների լանդ-

¹ К. Иваничка. Социально-экономическая география. М., 1987.
264

¹ Օրինակ՝ Սևանա լճի ֆաունայից գրեթե վերացել է իշխան ձուկը, բայց դրա փոխարեն արագորեն բազմանում են հսկողության բացակայության պայմաններում լիճ ներմուծված նոր, «խորթ» տեսակները ծածան ձուկը և խեցգետինը:
² Ռեկրեացիոն տարածքի մարդածին ծանրաբեռնվածությունը որոշում են տարվա առավել «աշխույժ» ժամանակահատվածում 1հա տարածքի հաշվով 1 օրում այցելողների միջին թվով:

շաֆտի կայունության պահպանումը ենթադրում է դրա սահմաններում օպտիմալորեն զուգակցել երկու մարդու աշխատունակության վերականգնման ու բնության ինքնամաքման ու ինքնակարգավորման պահանջները:

դ) Զբոսաշրջության տնտեսական նշանակությունը

Աճի աննախադեպ բարձր տեմպերի շնորհիվ զբոսաշրջությունը XX դարի երկրորդ կեսում դարձել է համաշխարհային տնտեսության ոչ արտադրական ոլորտի կարևոր ճյուղ:

1950 թ. աշխարհում միջազգային զբոսաշրջիկների ընդհանուր թիվը 25 մլն էր. իսկ 1999 թ. այն հասավ 650 մլն-ի, այսինքն աճեց 26 անգամ: Ընդամենը, այդ աճի մեծ մասը եղել է վերջին երկու տասնամյակներում: Զբոսաշրջիկների թվի միջին տարեկան աճը 1991-1999 թթ. կազմել է մոտ 5%:

Նշված աճին զուգընթաց մեծացել է նաև զբոսաշրջությունից ստացվող եկամուտը, որն իր ծավալով ներկայումս համեմատելի է դարձել մեքենաշինությունից ու արտաքին առևտրից ստացվող եկամտի ծավալներին:

Զբոսաշրջության հարաբերական նշանակությունը (տեսակարար կշիռը) մեծ է առանձին, թույլ զարգացած երկրների տնտեսության կառուցվածքում (օրինակ Զնդկական ու Խաղաղ օվկիանոսների կղզային պետություններում), որտեղ այն երբեմն երկրի տնտեսության նույնիսկ առաջատար ճյուղն է:

Ինչ վերաբերում է բարձր զարգացած մեծ պետություններին, ապա զբոսաշրջության բաժինը այդ երկրների ԶՆԱ կառուցվածքում տատանվում է 2-4%-ի սահմաններում, չնայած այն բանին, որ զբոսաշրջությունից ստացվող եկամուտը (բացարձակ դրամական արտահայտությամբ) անհամեմատ մեծ է (հասնում է տասնյակ միլիարդավոր դոլարների):

Զբոսաշրջությունից ստացվող եկամտի ծավալի աճը, զբոսաշրջիկների թվի աճից բացի, պայմանավորված է նաև զբոսաշրջության սպասարկման որակի բարձրացումով, որի արդյունքում, բնականաբար, աճում է մեկ զբոսաշրջիկի հաշվով ստացվող եկամուտը: Այսպես, աշխարհի մասշտաբով այդ ցուցանիշը 1992-1999 թթ. ժամանակահատվածում 624-ից հասել է 700 ԱՄՆ դոլարի: Նշվածի շնորհիվ էլ ավելի է մեծանում զբոսաշրջության դերը առանձին երկրների ու, հատկապես, զանգվածային զբոսաշրջության տարածաշրջանների երկրների տնտեսության մեջ: Չանգվածային զբոսաշրջության սեզոնում մեծանում են այդ երկրների ու տարածաշրջանների բնակչության ընդհանուր գնողունակությունը, առևտրի, արտադրության ու շինարարության ծավալները, բարձրանում է բնակչության զբաղվածության մակարդակը, արտադրանքի որակն ու սպասարկման կուլտուրան, բարելավվում են տրանսպորտային հաղորդակցության հետ առնչվող այլ ծառայությունները:

Այլ կերպ ասած, զբոսաշրջությունը որևէ երկրի ու դրա տարածաշրջանի տնտեսական զարգացման վրա ունի այսպես կոչված մուլտիպլիկացիայի¹ էֆեկտ:

¹ Գիտնականների մոտավոր հաշվումներով, զբոսաշրջության ընդհանուր ծախսերի կառուցվածքում զբոսաշրջության ուղղակի ծախսերը (բնակվելու, տրանսպորտի) 266

ե) Զբոսաշրջության տարածական կազմակերպումը

Զբոսաշրջությունը որպես տնտեսության նոր և արագ զարգացող ճյուղ անհավասարաչափ է տեղաբաշխված աշխարհում: Դրա գլխավոր պատճառներից են այս ճյուղի զարգացման վաղեմությունը, աշխարհի տարբեր տարածաշրջանների բնակչության կենսամակարդակի տարբերությունները և ռեկրեացիոն ռեսուրսների անհավասարաչափ տեղաբաշխումը: Կարևոր դեր են կատարում նաև գովազդը, զբոսաշրջության օջախ-երկրի քաղաքական կայունությունը:

Միջազգային զբոսաշրջության ամենակարևոր գիծը դրանում Եվրոպայի¹ բնակչության ամենաբարձր կենսամակարդակ ունեցող աշխարհամասի գերակշիռ դերի պահպանումն է (թեկուզ Եվրոպայի տեսակարար կշիռը 1992-1999 թթ. 58.1%-ից նվազել է մինչև 56.5%-ի): Փոխարենը մեծացել է Ամերիկայի տեսակարար կշիռը:

Զբոսաշրջիկների թվով (նաև մասնաբաժնով) երկրորդն ու երրորդը Զյուսիսային Ամերիկան ու Ասիան են:

Սակայն, ինքնին հասկանալի է, որ զբոսաշրջիկների թվերը որպես տարածաշրջանի զբոսաշրջության զարգացման մակարդակ արտահայտող բնութագրական ցուցանիշ չեն կարող ծառայել: Որպես այդպիսի գործակից կարող է ծառայել տվյալ տարածաշրջան ժամանած զբոսաշրջիկների և տվյալ տարածաշրջանի բնակչության ընդհանուր թվերի հարաբերությունը:

Աշխարհում, միջին հաշվով¹, միջազգային զբոսաշրջիկ է 9 բնակչից մեկը, Եվրոպայում 2-ից մեկը, Զս. Ամերիկայում՝ 5-ից մեկը ու Օվկիանայում 3-ից մեկը (աղյուսակ 9.4):

Զբոսաշրջությունը դեռևս միջինից 3 անգամ թույլ է զարգացած Լատինական Ամերիկայում, Ասիայում ու Աֆրիկայում:

Զբոսաշրջության զարգացման մակարդակի գործակցի տատանումներն ավելի մեծ են երկրների կտրվածքով: Այսպես, օրինակ, Զնդկաստանում ու Չինաստանում միջազգային զբոսաշրջիկների թիվն այդ երկրների բնակչության թվին գիջում է 40-ից 90 անգամ, Զուլաստանում և Իտալիայում այդ թվերն իրար հավասար են, իսկ Ֆրանսիա և Իսպանիա ժամանած զբոսաշրջիկների թիվը նույնիսկ գերազանցում է այդ երկրների բնակչության թվին:

սնդրի և այլն) կազմում են շուրջ 80%, իսկ անուղղակի ծախսերը (լուսանկարչական ու մարզական ապրանքներ, նորածն հագուստ և այլն) 20%:

¹ Կտրագված թվերով:

Չբոսաշրջիկների թիվը, մասնաբաժինը և թվի հարաբերությունը ընդհանուր բնակչությանը (1999թ.)

Աղյուսակ 9.4

	Չբոսաշրջիկների թիվը (մլն)	Բաժինը աշխարհում (%)	Տարածաշրջանի Չբոսաշրջիկների թվի հարաբերությունը բնակչության ընդհանուր թվին
Աշխարհ	650	100.0 ¹	1:9
Աֆրիկա	31	4.8	1:23
Լատինական Ամերիկա	54	2.3	1:9
Հյուսիսային Ամերիկա	68	16.5	1:5
Ասիա	121	18.6	1:30
Եվրոպա	367	56.5	1:2
Օվկիանիա	9	1.4	1:3

Չետաքրքրական փաստ է, որ նման հաշվառման մեթոդի դեպքում աշխարհի «ռեկորդակիրը» պետք է համարվի Սան Մարինո պետությունը², որի սահմանները 1999թ. հատել են 3.1 մլն Չբոսաշրջիկներ, ներառյալ իտալացիներն ու Իտալիա ժամանած Չբոսաշրջիկները: Այս թիվը 11 անգամ գերազանցում է Սան Մարինոյի բնակչությանը:

Չբոսաշրջության տարածական կազմակերպման մյուս բնորոշ գիծը **տվյալ տարածաշրջանի միջազգային Չբոսաշրջիկների ընդհանուր թվի մեջ այդ տարածաշրջանի երկրների Չբոսաշրջիկների բաժնի գերակշռությունն է:**

Ընդամեն այդ բաժինն առավել մեծ է Եվրոպայում և Ամերիկայի երկրներում (80-90%), իսկ Ասիայի երկրներում այդ բաժինը համեմատաբար փոքր է (60-70%):

Աշխարհի տարածաշրջաններում տեղական Չբոսաշրջիկների բաժնից հետո համեմատաբար մեծ է Եվրոպայից եկած Չբոսաշրջիկների բաժինը:

ԳԼՈՒԽ 10 ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՅՈՒՄԸ, ԳԼՈՐԱԼԱՅՈՒՄԸ

Աշխատանքի միջազգային բաժանման անընդհատ գործընթացը ժամանակի ընթացքում փոփոխվում է, ձեռք է բերում նոր գծեր ու ավելի է խորանում: Այս գործընթացը հանգեցնում է տնտեսության (տնտեսական կյանքի) միջազգայնացման:

Տնտեսության միջազգայնացման առաջին միտումները նկատվել են դեռևս կապիտալիզմի զարգացման ցածր ազատ մրցակցության, առևտրի ազատության, հանաշխարհային շուկայի ձևավորման փուլում: XIX դարի վերջին, XX դարի սկզբին ազատ մրցակցության փուլին փոխարինեց կապիտալի և արտադրության գերիաճակենտրոնացման, խոշոր արտադրության էլ ավելի խոշորացման, տնտեսական հարաբերությունների միջազգայնացման, արտադրական մենատիրությունների ձևավորման փուլը: Վերջիններս աստիճանաբար դարձան կապիտալիստական երկրների տնտեսական զարգացման, ինչպես նաև քաղաքականության ուղղությունները որոշող վճռական ուժը: XX դարի վերջերին արտադրության և կապիտալի համակենտրոնացման գործընթացներն այնպիսի մեծ մասշտաբների են հասել, որ ընդգրկել են նաև ազգային սահմաններից դուրս գտնվող նորանոր տարածքներ: Ազգային տնտեսության առանձին արտադրություններ, բացառիկ նպաստավոր տնտեսական պայմաններում, հասնում են շատ մեծ ծավալների ու դուրս գալով երկրի սահմաններից, տարածվում աշխարհի տարբեր երկրներում, ստեղծելով ապրանքների արտադրության և իրացման զարգացած ցանց: Ազգային տնտեսության այսպիսի հսկա արտադրական միավորներն անվանվում են անդրազգային կորպորացիաներ (աակ):

Էժան աշխատուժի և հումքի, ցածր հարկերի ու այլ նպաստավոր հանգամանքների պայմաններում աշխարհի ամենատարբեր տարածաշրջաններում արտադրական ձեռնարկությունների շահեկան տեղաբաշխման շնորհիվ աակ-ները հասնում են արտադրության ընդհանուր ծախսերի նվազեցման:

Ստեղծվում է «աշխարհագրականորեն» առավել շահութաբեր արտադրության համակարգ: Օրինակ՝ ամերիկյան «Ֆորդ մոթորս» ավտոմոբիլային հսկա կոնցեռնը ԱՄՆ-ի սահմաններից դուրս՝ աշխարհի տարբեր մասերի բազմաթիվ երկրներում ունի շուրջ 8 տասնյակ գործարաններ¹, իսկ այսօր դժվար թե լինի մի երկիր, որտեղ չգործի Ամերիկյան «Պեպսիկո» ընկերության թեկուզ մեկ ձեռնարկություն: Տնտեսական կյանքի միջազգայնացման գործընթացը XX դարի վերջին տասնամյակներին ուղեկցվում է նոր երևույթով. ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մենատիրական կազմակերպությունները, կապիտալի հսկայամասշտաբ համակենտրոնացման շնորհիվ, հիմնական ավանդական արտադրության ոլորտից բացի

¹ Թվերը կլորացնելու հետևաքնով գումարը մի փոքր տարբերվում է 100-ից:
² Սան Մարինոն գտնվում է Իտալիայի տարածքում:
 268

¹ Դրանք մեծ մասամբ ԱՄՆ-ի գործարաններում արտադրված ավտոհանգույցներից ավտոհավաքման տեխնոլոգիական գործընթաց իրականացնող ձեռնարկություններ են:
 269

սկսել են իրենց ձեռքերում կենտրոնացնել նաև դրանց հետ կապ չունեցող արտադրություններ ու ծառայություններ: Օրինակ Իտալիայում ձևավորվել է «ԻՐԻ» մենատիրական խումբը, որը ավանդական մետաղածուլությունից բացի իր ձեռքերում է կենտրոնացնել նաև երկրի նավաշինական ձեռնարկություններն ու նավագնացային ընկերությունները: Ճապոնիայի արտադրության հսկա կոնցեռներն աստիճանաբար սկսել են զբաղվել նաև մատակարարման, ինչպես նաև իրացման բնագավառներով, որի արդյունքում ձևավորվել է «Կեյթեցու» անվանումն ստացած գերմիավորումը:

ԱՎԿ-ների ազդեցությունը համաշխարհային տնտեսության տեղաբաշխման վրա:

Ավկ-ների զարգացման գործընթացն ուղեկցվում է համաշխարհային տնտեսության տարածական մեծ տեղաշարժերով: Սեփական երկրում հանդիպելով արտադրության հետագա ընդլայնմանը խոչընդոտող անհաղթահարելի մեծ արգելքների, ասկ-ներն աստիճանաբար իրենց տնտեսական գործունեության ուղորդ փոխադրում են զարգացող երկրներ, որտեղ արտադրության տեղաբաշխման պայմանները դեռևս անհամեմատ նպաստավոր են, քան զարգացած երկրներում: Վերջիններում արտադրության հետագա ընդլայնման գլխավոր խոչընդոտը արտադրության խիստ համակենտրոնացման հետևանքով ստեղծված էկոլոգիական լարված իրադրությունն է: Այսպես համաշխարհային տնտեսության երեք կենտրոնների ԱՄՆ-ի, Արևմտյան Եվրոպայի ու Ճապոնիայի տեսակարար կշիռը աշխարհի բնակչության մեջ կազմում է մոտ 10%, արդյունաբերական համախառն արտադրանքի մեջ 70% և բնական միջավայր արտագատվող վնասակար նյութերի ծավալի մեջ ավելի քան 60%:

Չարգացած երկրներում էկոլոգիական ճգնաժամի հետևանքով աճում են բնական միջավայրի պահպանման ու վերականգնման վրա ասկ-ների կատարած ծախսերը, և հետևաբար, նվազում է նրանց շահույթը: Արտադրական գործունեության վրա էկոլոգիական հսկողության ուժեղացման պայմաններում ասկ-ների շրջակա միջավայրն աղտոտող արտադրական ձեռնարկությունները զարգացող երկրներում են տեղաբաշխվում առանց որևէ էկոլոգիական մաքրման համակարգերի, որի հետևանքով զարգացող երկրներում տեղաբաշխված արտադրական ձեռնարկությունները միջին հաշվով 1,5 անգամ շատ վնասակար նյութեր են արտազատում, քան զարգացած երկրների համանման ձեռնարկությունները: Այս հանգամանքը նկատի ունենալով ճապոնիայի արդյունաբերության նախարարությունը 1976թ. արգելել է երկրում նավթամշակման նոր ձեռնարկությունների կառուցումը, որի հետևանքով այդպիսի ձեռնարկությունները տեղաբաշխվել են Սինգապուր, Ջակարտա, Պորտ Դիբուն քաղաքներում:

Մասնավորապես Սինգապուրն, իր տարածքում տեղաբաշխված (հիմնականում օտարերկրյա ասկ-ներին պատկանող) նավթամշակման ձեռնարկությունների միազուլմարային կարողությամբ աշխարհում զիջում է միայն Ռոտերդամ (Նիդերլանդներ) և Գյուսթոն (ԱՄՆ) քաղաքներին:

Ավկ-ներին պատկանող սև ու գունավոր մետաղածուլության և հիմնական քիմիայի գործարանները տեղաբաշխված են Թաիլանդի ծովափնյա գոտում, Մալակկա թերակղզում, Ճավա, Սուլավեսի, Սումատրա և Ֆիլիպինյան կղզիներում, որոնք աշխատում են Ավստրալիայից ու Մերձավոր Արևելքից բերվող հումքով: Նույն կերպ Կարիբյան ծովի ավազանի երկրներում տեղաբաշխված են ամերիկյան ու կանադական ասկ-ների նավթամշակման, կավահողի¹ և մետաղական ալյումինի ծուլման խոշոր կարողություններ: Օրինակ Վիրջինյան կղզիներում կառուցված է տարեկան 36 մլն տ բերովի նավթի մշակման կարողությամբ գործարան (աշխարհում խոշորագույններից մեկը), մինչդեռ նշված երկրի բնակչությունը ընդամենը 100 հազար մարդ է:

Երրորդ կարևոր հանգամանքն այն է, որ զարգացած երկրների ասկ-ները մշակման նպատակով սեփական հումքը փոխադրում են զարգացող երկրներ: Առաջին հայացքից անբնական թվացող այս նոր միտումը ևս պայմանավորված է էկոլոգիական գործոնով: Օրինակ ֆրանսիական «Պեշիմե» ասկ-ը երկրում արդյունահանված բոքսիտը փոխադրում է հեռավոր Կամերունի Էդեա քաղաքի ալյումինի ծուլման գործարան, որտեղից մետաղական ալյումինը կրկին փոխադրվում է Ֆրանսիա: Ամերիկյան «Ասերկո» ասկ-ը, նույն գործելաձևով, մկնդեղի արտակարգ թունավոր արտադրության ձեռնարկությունը կառուցել է Մեքսիկայի տարածքում:

Նոր զարգացող երկրներում ասկ-ների, մասնաճյուղերի ու դուստր կազմակերպությունների թիվն արդեն հասնում է տասնյակ հազարների: 1990թ. դրանց 46%-ը տեղաբաշխված էին Աֆրիկայում (առանց Հարավաֆրիկյան Հանրապետության):

Որոշ նոր զարգացող երկրներում կան էլ դրանց առանձին շրջաններում արդեն առկա է էկոլոգիական նախաձգնաժամային իրադրություն: Արդեն գրանցվել են մի շարք էկոլոգիական աղետներ: Օրինակ Հնդկաստանի Բիոպալ քաղաքում «Յունիոն Բարբայո» ասկ-ի քիմիական գործարանում տեղի ունեցած արտակարգ մեծ պայթյունի հետևանքով գոհվեց 2.5 հազար մարդ, իսկ Բրազիլիայի Տոկանտինս գետի ավազանում «Դոու քեմիքլ» կոնցեռնի թունավոր թափոնների թաղման հետևանքով (1984 թ.) մահացավ 7 հազար մարդ:

Չարգացող երկրներում ասկ-ների տարածական ընդարձակման արդյունքում նման էկոլոգիական աղետների հավանականությունն արագորեն մեծանում է:

10.1 Տնտեսական ինտեգրացիա

Տնտեսական կյանքի միջազգայնացման նոր և բարձրագույն ձևը տնտեսական ինտեգրացիան է արտադրողական ուժերի զարգացման անխուսափելի գործընթացը:

¹ Ալյումինի կիսապատրաստուկ:

Տնտեսական ինտեգրացիան միատեսակ տնտեսական հարաբերություններով երկու կամ ավելի երկրների ազգային տնտեսությունների աստիճանաբար միավորումն է մեկ ընդհանուր տնտեսական համալիրի մեջ:

Տնտեսական ինտեգրացիայի գործընթացն իրականացվում է առաջին հերթին միմյանց հետ միավորված երկրների տարածքներում տնտեսական արգելքների վերացումով: Հայտնի է, որ յուրաքանչյուր երկիր իրագործում է ազգային տնտեսության շահերի պաշտպանության խնամակալության թույլ կամ ուժեղ արտահայտված քաղաքականություն: Սակայն միավորված (ինտեգրացված) երկրների տարածքներում առաջին հերթին ստեղծվում են ապրանքների, աշխատուժի և կապիտալի ազատ շարժման պայմաններ: Ինտեգրացիոն որոշ միավորումներում մտցվում է ընդհանուր արժույթ (օրինակ՝ Եվրամիությունում՝ Եվրոն): Նշվածից բացի, ինտեգրացված երկրները մշակում են միասնական, փոխհամաձայնեցված տնտեսական քաղաքականություն, որն ունի երկու ուղղվածություն. այն մի կողմից ուղղված է ինտեգրացված երկրների տնտեսական զարգացման արագացմանն ու տնտեսության արդյունավետության բարձրացմանը, իսկ մյուս կողմից՝ տնտեսական մրցակցության միջազգային մասշտաբի այլ կենտրոնների ու միավորումների դեմ: Օրինակ՝ ինտեգրացված երկրների շուկա այլ միավորումների ապրանքների ներկրումը սահմանափակելու նպատակով հաստատվում են բարձր մաքսեր, իսկ աշխարհի այլ տարածաշրջանների շուկաներից մրցակիցներին դուրս մղելու նպատակով իջեցնում են ապրանքների գները նույնիսկ ժամանակավորապես կրելով տնտեսական որոշ վնաս:

Սակայն, միասնական արտաքին տնտեսական քաղաքականության հետ միաժամանակ, տնտեսական ինտեգրացիայի մեջ մտած երկրների միջև առաջանում են տնտեսական շահերի բախումներ, որոնք հաճախ կրում են սուր բնույթ: Դրանք առաջանում են սովորաբար միատեսակ արտադրանք արտադրող երկրների միջև: Օրինակ՝ Ֆրանսիայի և Իտալիայի միջև մրցակցական լարվածություն գոյություն ունի խաղողի գինու իրացման հարցում:

Ֆրանսիան մինչև 1971 թ. առարկում էր ԵՏՀ-ին¹ Մեծ Բրիտանիայի անդամագրվելուն, վերջինիս դիտելով որպես հացահատիկի արտադրության գծով խոշոր մրցակից:

Տնտեսական ինտեգրացիոն միավորումներ ստեղծվել են կապիտալիստական զարգացած երկրների, զարգացող երկրների և սոցիալիստական երկրների խմբերում:

Սոցիալիստական երկրների առաջին տնտեսական միավորումը՝ «Տնտեսական փոխօգնության խորհուրդը» ստեղծվել է 1949 թ. և գոյատևել մինչև 1991 թ.. մեծ դեր կատարելով տնտեսապես թույլ զարգացած սոցիալիստական երկրների ազգային տնտեսության վերելքի գործում: Դրանցում կառուցվել են հարյուրավոր

խոշոր ու միջին մեծության արդյունաբերական ձեռնարկություններ, ջրատեխնիկական կառույցներ:

Աշխարհի առավել հին և գործող ինտեգրացիոն միավորումը Եվրամիությունն է (ԵՄ): Այն սկզբնապես (1957թ.) հիմնավերվեց որպես Եվրոպական տնտեսական համագործակցություն (ԵԵԿ), սակայն ավելի հայտնի է որպես Եվրոպական «Ընդհանուր շուկա»: Նրա հետ ասոցացված երկրների կարգավիճակով ներգրավված են տասնյակ նոր զարգացող երկրներ:

Եվրամիությունն այսօր էլ աշխարհի ամենախոշոր տնտեսական ինտեգրացիոն միավորումն է, չնայած, որ 1980-1997 թթ. ժամանակահատվածում աշխարհի մշակող արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ նրա տեսակարար կշիռը 34,8 %-ից նվազել է 29%-ի: Նշված երևույթը բացատրվում է ինտեգրացիոն այլ միավորումների ավելի դինամիկ զարգացումով :

Մշակող արդյունաբերության արտադրանքի աճը

Հայաստանի Հանրապետությունը, որը գտնվում է անցումային տնտեսության երկրներին բնորոշ տնտեսական ծանր կացության մեջ, այդ վիճակից դուրս գալու համար պետք է փորձի օգտագործել տնտեսական ինտեգրացիայի ընձեռած հնարավորությունները, զարգացման լրացուցիչ խթանը: Որպես ձևավորվող տնտեսական ինտեգրացիոն միավորում առայժմ կարող է ծառայել Աճկախ Պետությունների Համագործակցությունը, ժայռահեղ դեպքում դրա կազմի մեջ մտնող երկրների նեղ շրջանակը և առաջին հերթին Ռուսաստանը:

Շուկայական հարաբերությունների ըստ ամենայնի զարգացման, ժողովրդավարացման գործընթացների արդյունքում ապագայում հնարավոր կլինի նաև նրա ինտեգրացումն այլ, մասնավորապես զարգացած երկրների հետ:

10.2 Գլոբալացում

Տնտեսության միջազգայնացման գործընթացի արդյունքում 20-րդ դարի վերջում անհրաժեշտություն առաջացավ աշխարհագրական տեսակետների հիման վրա ու գիտականորեն բացահայտել մեր մոլորակն ու դրա հրատապ հիմնախնդիրները: Դա նշանակում է, որ աշխարհագրական ավանդական մտածողությունն աստիճանաբար վերափոխվում է գլոբալ աշխարհագրական մտածողության: Այն սկզբնապես ձևավորվեց կենսաբազմազանության, երկրագնդի կլիմայի փոփոխության, անապատացման և բնապահպանական այլ հիմնախնդիրների բնագավառում, սակայն շուտով այն ընդլայնվեց՝ տարածելով նաև հասարակական բնույթի այնպիսի բնագավառների վրա, ինչպիսիք են տնտեսությունը, քաղաքականությունը, տեխնոլոգիաները:

Գլոբալ աշխարհագրական մտածողության հիմքում մեզ շրջապատող աշխարհի ամբողջականության ըմբռումն է, որն իր հերթին որոշվում է շրջակա միջա-

¹ Ներկայումս Եվրամիություն:
272

վայրի հետ բարդ փոխազդեցության մեջ գտնվող մարդու և մարդկության կյանքի բոլոր ոլորտների միազգայնացումով:

Գլոբալ աշխարհագրական մտածողության կարևորությունն ու անհրաժեշտությունը պայմանավորված են մարդկության զարգացման արդի փուլում նրա առջև ծառայող տնտեսական, քաղաքական, ազգային, բնապահպանական և այլ մեծ մասամբ ճգնաժամային բնույթի հիմնախնդիրների զուգակցությամբ:

Այս հիմնախնդիրների լուծման ուղիների մշակումը մի շարք գիտությունների միավորման արդյունքում ձևավորվող **գլոբալիստիկայի** խնդիրն է: Գլոբալիստիկայի բաղադրիչներից է նրա ինքնուրույն գիտական ուղղությունը՝ **գլոբալ աշխարհագրությունը**, որն ուսումնասիրում է համամոլարակային գործընթացների ու երևույթների տարածական դրսևորումները: համաշխարհային զարգացման գլոբալացումը բարդ, բազմապլանային, ու բազմաշերտ գործընթաց է: Այն մեր մոլորակի բոլոր երկրներին ու բնակիչներին միավորող կենսակերպի համամոլորակային սկզբունքներ ձևավորող անխուսափելի գործընթաց է: Գլոբալացումը այդպիսի միավորմանը պետք է ուղղված լինի հանուն ժողովուրդների մշակույթների, քաղաքակրթությունների շփման ու փոխանակության:

Սակայն դեռևս հաստատ ու միասնական կարծիք չի ստեղծված գլոբալացման գործընթացի ավարտունության կամ շարունակական, ինչպես նաև մարդկությանը դրա տված «պտուղների» գնահատման հարցում: Ոմանք գլոբալացման պտուղները գնահատում են որպես բարիք, իսկ ոմանք էլ, ընդհակառակը՝ որպես աղետ: Գլոբալացման այդպիսի հակասական գործընթացի վեց հիմնական ուղղություններն են.

- ազատական ժողովրդավարության տարածումը ամբողջ մոլորակում
- տնտեսությունում շուկայական ուժերի ակտիվ, վճռական գործողությունը, տնտեսության արդյունավետության մշտական բարձրացումը
- տեղեկատվության միջոցների բնագավառում և համաշխարհային տնտեսության բազմակողմանի ինտերգրացմանը (տնտեսական գլոբալացումը)
- արտադրության և աշխատուժի շուկայի գիտատեխնիկական վերափոխումը
- տեխնոլոգիական արագ նորացումը
- հեղաշրջումը զանգվածային տեղեկատվության միջոցների բնագավառում և սպառողականության գաղափարախոսության թելադրանքը

Ֆարցեր ինքնաստուգման համար

1. Բացահայտեք միջազգային տնտեսական հարաբերությունների էությունը և հիմնավորեք դրանք, որպես երկրների տնտեսական առաջընթացի անհրաժեշտ ու գլխավոր պայման:

2. Միջազգային առևտրի տարածաշրջանային մասնաբաժինների ինչպիսի՞ փոփոխություններ են եղել վերջին տասնամյակում, և որո՞նք են դրանց պատճառները:

3. Բնութագրեք գիտատեխնիկական կապերը, որպես երկրների տեխնիկական առաջադիմության շարժիչ և միջազգային փոխանակման օբյեկտ: Նշեք տնտեսության մեջ արտոնագրերի ներդրման գլխավոր երկրները:

4. Բնութագրեք ֆինանսավարկային հարաբերությունները, որպես երկրների տնտեսական զարգացման կարևոր գործոն: Նշեք կապիտալի հոսքի գլխավոր ուղղություններն ու դրանց փոփոխությունները:

5. Որո՞նք են միջազգային այլ տեսակի ծառայությունների ձևերը, ինչպիսի՞ն է դրանց աշխարհագրությունը:

6. Բնութագրել միջազգային զբոսաշրջությունը որպես տնտեսության արագ զարգացող ժամանակակից ճյուղ: Բնութագրել զբոսաշրջության և հանգստի զարգացման նախադրյալները, մակարդակը, հիմնական արեալներն ու երկրները:

7. Որո՞նք են տնտեսության միջազգայնացման պայմաններն ու նախադրյալները:

8. Բացահայտեք անդրազգային կորպորացիաների էությունը և դրանց ազդեցությունը համաշխարհային տնտեսության տեղաբաշխման վրա:

9. Բացահայտեք տնտեսական ինտեգրացիայի էությունը և նշել դրա իրագործման ուղիները՝ եվրամիության օրինակով:

10 Ժամանակակից աշխարհի ճանաչման և վերափոխման գործում ո՞րն է գլոբալ աշխարհագրական մտածողության անհրաժեշտությունը:

11. Գլոբալացումն ի՞նչու է դիտվում որպես շատ բարդ և հակասական գործընթաց:

Նավթի արդյունահանման ծավալով աշխարհի առաջատար 10 երկիրը 1950-2000թթ. (մլն տ)

1950		1970		1990		2000	
ԱՄՆ	267	ԱՄՆ	475	ԽՍՀՄ	571	Սաուդյան Արաբիա	411
Վենեսուելա	80	ԽՍՀՄ	353	ԱՄՆ	366	Ռուսաստան	322
ԽՍՀՄ	38	Վենեսուելա	194	Սաուդյան Արաբիա	323	ԱՄՆ	288
Իրան	32	Իրան	191	Իրան	157	Իրան	183
Սաուդյան Արաբիա	27	Սաուդյան Արաբիա	188	Չինաստան	138	Վենեսուելա	164
Քուվեյթ	17	Լիբիա	160	Սեքսիկա	133	Չինաստան	163
Սեքսիկա	10	Քուվեյթ	151	Վենեսուելա	107	Սեքսիկա	160
Ինդոնեզիա	7	Իրաք	77	ՍԱԷ	102	Նորվեգիա	159
Իրաք	7	Կանադա	62	Իրաք	100	Մեծ Բրիտանիա	118
Ռումինիա	5	Նիգերիա	55	Մեծ Բրիտանիա	88	ՍԱԱ	105
Առաջատար 10 երկրի բաժինն աշխարհում, %							
		84.0		71.5		63.6	
94.2							

2000 Industrial Commodity Statistics Yearbook, UN, New York, 2003

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Աղյուսակ 1.

Աշխարհի մի քանի երկրների էներգետիկայի զարգացումը բնութագրող որոշ ցուցանիշները (1997թ.)

	(%) 'ձգը վրոհոր արտադրումն ուղղորդող -տեքնոլոգիայի զարգացումը (+) մրցակցային ուղղությամբ (-) մր -աստիճանի արժեքը վրոհվածը	+52 +778	-22 -36	36 12	224 395	57 70	17 70	61 108	12 5	79 48	60 -										
	(մոլան ղրղ) 'մեքսիկո վրոհ քոմիսսիոնի արժեքը ձգրարտադրողի ղրղ	2.5 6.6	3.6 3.3	4.6 0.7	- 1.3	0.6 1.6	0.3 1.8	2.7 0.7	0.9 0.4	10.6 6.4	7.2 -										
	(%) 'ձգը ուղղորդող տեքնոլոգիայի արտադրողի մրցակցային կարողությունը	0.5 10.1	3.6 -	16.2 -	- -	1.1 1.4	- -	3.4 0.9	21.2 93.0	0.4 1.0	0.3 -										
	(նի) 'իսթաբիլիտետի վրոհ 'իսթաբիլիտետի վրոհ հզոր մրցակցային ուղղությամբ ղրղ	7930 5501	8076 8566	5869 13689	18835 4906	4019 423	1529 476	1140 1777	479 287	4084 4224	4231 1684										
	(թ տի) 'իսթաբիլիտետի վրոհ հզոր մրցակցային ուղղությամբ ղրղ	17549 26214	13284 20387	16616 8647	12070 5492	5516 1438	2230 1696	1694 1512	482 22	8252 7693	6630 2383										
Երկրներ		Կանադա	Նորվեգիա	ԱՄՆ	Իսպանիա	Շվեդիա	Քուվեյթ	Քուվեյթ	Սաուդյան Արաբիա	Ռուսաստան	Վրաստան	Ադրբեյջան	Քալստան	Թուրքիա	Իրան	Չինաստան	Սեքսիկա	Նապոլի	Ֆրանսիա	Գերմանիա	Աշխարհը, ընդամենը

Բնական գազի արդյունահանման ծավալով աշխարհի առաջատար 10 երկիրը 1950-1999թթ. (մլրդ մ³)

1950		1970		1990		1999	
ԱՄՆ	178	ԱՄՆ	603	ԽՍՀՄ	759	Ռուսաստան	595
ԽՍՀՄ	5	ԽՍՀՄ	185	ԱՄՆ	512	ԱՄՆ	530
Ռումինիա	3	Կանադա	59	Կանադա	111	Կանադա	159
Կանադա	2	Նիդերլանդներ	32	Նիդերլանդներ	76	Նիդերլանդներ	78
Սեքսիկա	2	Ռումինիա	23	Մեծ Բրիտանիա	46	Մեծ Բրիտանիա	75
Վենեսուելա	1	Իտալիա	13	Ալժիր	40	Ինդոնեզիա	63
Ինդոնեզիա	0.8	ԳՖՀ	13	Ինդոնեզիա	30	Ալժիր	58
Արգենտինա	0.8	Իրան	12	Սաուդյան Արաբիա	30	Ռեգբեկստան	47
Իտալիա	0.5	Սեքսիկա	12	Նորվեգիա	28	Սաուդյան Արաբիա	40
Տրինիդադ և Տոբագո	0.5	Մեծ Բրիտանիա	11	Ռումինիա	27	Իրան	35
Առաջատար 10 երկրի բաժինն աշխարհում, %							
	100		94.7		80.5		76.2

Алисов Н. В., Хорев Б. С. Экономическая и социальная география (Общий обзор). М., 2001

Ածխի արդյունահանման ծավալով աշխարհի առաջատար 10 երկիրը 1950-2000թթ. (մլն տ)

1950		1970		1990		2000	
ԱՄՆ	505.3	ԱՄՆ	550.4	Չինաստան	1080.0	Չինաստան	998
Մեծ Բրիտանիա	219.5	ԽՍՀՄ	432.7	ԱՄՆ	863.0	ԱՄՆ	975
ԽՍՀՄ	185.0	Չինաստան	354.0	ԽՍՀՄ	474.0	Հնդկաստան	338
ԳՖՀ	149.0	Մեծ Բրիտանիա	147.1	Հնդկաստան	225.0	Ավստրալիա	306
Լեհաստան	78.0	Լեհաստան	140.1	ՀԱՀ	175.7	Ռուսաստան	241
Ֆրանսիա	50.8	ԳՖՀ	111.4	Ավստրալիա	159.0	ՀԱՀ	224
Չինաստան	42.9	Հնդկաստան	73.7	Լեհաստան	147.7	Լեհաստան	163
Ճապոնիա	38.5	ՀԱՀ	54.8	Մեծ Բրիտանիա	90.0	Ռկրահինա	81
Հնդկաստան	32.8	Ավստրալիա	45.2	ԳՖՀ	76.6	Ղազախստան	72
Բելգիա	27.3	Ճապոնիա	39.7	ԿժՂՀ	68.0	ԿժՂՀ	60
Առաջատար 10 երկրի բաժինն աշխարհում, %							
	92.6		91.0		93.5		78.0

Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալով աշխարհի առաջատար 10 երկիրը 1950-2000թթ. (մլրդ կվտ.ժ)

1950		1970		1990		2000	
ԱՄՆ	390	ԱՄՆ	1719	ԱՄՆ	3140	ԱՄՆ	3357
ԽՍՀՄ	91	ԽՍՀՄ	741	ԽՍՀՄ	1765	Չինաստան	1356
Մեծ Բրիտանիա	63	Ճապոնիա	361	Ճապոնիա	796	Ճապոնիա	941
Կանադա	55	Մեծ Բրիտանիա	249	Չինաստան	621	Ռուսաստան	830
Ճապոնիա	45	ԳՖՀ	243	Կանադա	520	Կանադա	543
ԳՖՀ	45	Կանադա	205	ԳՖՀ	437	Գերմանիա	506
Ֆրանսիա	33	Ֆրանսիա	147	Ֆրանսիա	419	Ֆրանսիա	506
Իտալիա	27	Իտալիա	117	Մեծ Բրիտանիա	318	Հնդկաստան	491
ԳԴՀ	20	Չինաստան	116	Հնդկաստան	280	Մեծ Բրիտանիա	348
Շվեդիա	18	ԳԴՀ	67	Բրազիլիա	246	Բրազիլիա	324
Առաջատար 10 երկրի բաժինն աշխարհում %							
	82.2		78.5		73.6		62.8

2001 Industrial Commodity Statistics Yearbook, UN, New York, 2003

Երկաթաքարի արդյունահանման ծավալով աշխարհի առաջատար 10 երկիրը 1950-2001թթ.*
(մլն տ երկաթի պարունակությամբ)

1950		1970		1990		2001	
ԱՄՆ	49	ԽՍՀՄ	106	Բրազիլիա	152*	Բրազիլիա	125
ԽՍՀՄ	23	ԱՄՆ	54	ԽՍՀՄ	135	Ավստրալիա	109
Ֆրանսիա	10	Կանադա	29	Ավստրալիա	112	Չինաստան	107
Շվեդիա	8	Ավստրալիա	29	Չինաստան	75	Հնդկաստան	54
Մեծ Բրիտանիա	4	Բրազիլիա	25	ԱՄՆ	56	Ռուսաստան	48
ԳՖՀ	3	Չինաստան	24	Հնդկաստան	54	Ուկրաինա	32
Հնդկաստան	2	Շվեդիա	20	Կանադա	36	ԱՄՆ	29
Կանադա	2	Հնդկաստան	20	ՀԱՀ	30	Կանադա	27
Չիլի	2	Ֆրանսիա	18	Վենեսուելա	20	ՀԱՀ	22
Ավստրալիա	1	Լիբերիա	16	Շվեդիա	20	Շվեդիա	13
Առաջատար 10 երկրի բաժինն աշխարհում							
	86.8		80.5		80.0		617479

* Ապրանքային հանքաքարը

2001 Industrial Commodity Statistics Yearbook, UN New York, 2003

Պողպատի ծուլման ծավալով աշխարհի առաջատար 10 երկիրը 1950-2001թթ. (մլն տ)

1950		1970		1990		2001	
ԱՄՆ	87.8	ԱՄՆ	119.3	ԽՍՀՄ	154.9	Չինաստան	152
ԽՍՀՄ	27.3	ԽՍՀՄ	115.9	Ճապոնիա	110.0	Ճապոնիա	102
Մեծ Բրիտանիա	16.6	Ճապոնիա	93.3	ԱՄՆ	88.9	ԱՄՆ	90
ԳՖՀ	14.0	ԳՖՀ	45.0	Չինաստան	66.3	Ռուսաստան	55
Ֆրանսիա	8.7	Մեծ Բրիտանիա	28.3	ԳՖՀ	38.4	Կորեայի Հան-րապետություն	44
Ճապոնիա	4.8	Ֆրանսիա	23.8	Իտալիա	25.5	Ուկրաինա	34
Բելգիա	3.8	Չինաստան	17.8	Կորեայի Հան-րապետություն	23.1	Բրազիլիա	27
Չեխոսլովակիա	3.1	Իտալիա	17.3	Բրազիլիա	20.6	Իտալիա	27
Կանադա	3.1	Բելգիա	12.6	Ֆրանսիա	19.0	Հնդկաստան	27
Լյուքսեմբուրգ	2.5	Լեհաստան	11.8	Մեծ Բրիտանիա	17.8	Ֆրանսիա	20
Առաջատար 10 երկրի բաժինն աշխարհում, %							
	90.8		81.1		73.3		77.0

2001 Industrial Commodity Statistics Yearbook, UN, New York, 2003

Առաջնային ալյումինի ծուլման ծավալով աշխարհի առաջատար 10 երկիրը 1950-2001թթ. (հազ. տ)

1950		1970		1990		2001	
ԱՄՆ	652	ԱՄՆ	3607	ԱՄՆ	4048	ԱՄՆ	5617
Կանադա	360	ԽՍՀՄ	1100	ԽՍՀՄ	2890	Չինաստան	3576
ԽՍՀՄ	193	Կանադա	963	Կանադա	1567	Ռուսաստան	3300
Ֆրանսիա	61	Ճապոնիա	733	Ավստրալիա	1234	Կանադա	2695
Նորվեգիա	45	Նորվեգիա	522	Բրազիլիա	931	Ավստրալիա	1788
Իտալիա	34	Ֆրանսիա	381	Չինաստան	854	Բրազիլիա	1361
Մեծ Բրիտանիա	30	ԳՖՀ	309	Նորվեգիա	845	Նորվեգիա	1292
ԳՖՀ	28	Հնդկաստան	161	ԳՖՀ	720	Ճապոնիա	1170
Ճապոնիա	25	Իտալիա	147	Վենեսուելա	590	Իտալիա	766
Շվեյցարիա	19	Չինաստան	130	Հնդկաստան	430	ՀԱՀ	663
Առաջատար 10 երկրի բաժինն աշխարհում, %							
	95.8		84.1		77.5		72.9

2001 Industrial Commodity Statistics Yearbook, UN, New York, 2003

Մեքենաչինության որոշ արտադրատեսակների արտադրությունն աշխարհում 1950-2001թթ.

Աղյուսակ 9

Մեքենաչինության ճյուղերի արտադրանքը	Միավոր	1950թ.							1960թ.							1970թ.							1980թ.							1990թ.							1995թ.							2001թ.													
		Ավտոմոբիլներ	մլն հատ	10.5	16.5	29.3	39.3	47.8	49.7	52.6	8.2	12.8	22.5	29.4	34.9	35.4	36.2	3.5	8.4	21.7	13.9	14.9	18.7	29.2	21.0	52.0	123.0	186.0	136.0	129.4	91.5	8.0	21.0	45.0	72.0	129.0	131.0	118.2	2.3	10.0	28.6	39.7	52.7	63.9	73.7	2.5	9.0	24.6	30.0	46.0	45.3	59.5	29.9	31.6
այդ թվում մարդատար	մլն հատ	8.2	12.8	22.5	29.4	34.9	35.4	36.2													
Ծովային առևտրական նավեր	մլն բր. հաշվ. տ.	3.5	8.4	21.7	13.9	14.9	18.7	29.2													
Ռադիոընդունիչներ	մլն հատ	21.0	52.0	123.0	186.0	136.0	129.4	91.5													
Ջեռուստացույցներ	մլն հատ	8.0	21.0	45.0	72.0	129.0	131.0	118.2													
Սառնարաններ	մլն հատ	2.3	10.0	28.6	39.7	52.7	63.9	73.7													
Լվացքի մեքենաներ	մլն հատ	2.5	9.0	24.6	30.0	46.0	45.3	59.5													
Փոշեկուլներ	մլն հատ	29.9	31.6	30.3	28.2													

2000 Industrial Commodity Statistics Yearbook, UN, New York, 2003

	1950		1970		1990		2000	
	ՄՍՆ	Մեծ Բրիտանիա	ՄՍՆ	Մեծ Բրիտանիա	ՄՍՆ	Մեծ Բրիտանիա	ՄՍՆ	Մեծ Բրիտանիա
Մեծ Բրիտանիա	8.0	0.8	8.2	5.3	13.5	9.8	10.8	9.8
Կանադա	0.4	0.4	3.8	3.8	5.2	5.2	5.0	5.0
ԽՍՀՄ	0.4	0.4	2.8	2.8	3.8	3.8	3.6	3.6
Ֆրանսիա	0.4	0.4	2.1	2.1	2.1	2.1	2.8	2.8
ԳՖՀ	0.3	0.3	1.9	1.9	2.1	2.1	2.4	2.4
Իտալիա	0.1	0.1	1.2	1.2	2.0	2.0	1.9	1.9
Ավստրիա	0.06	0.06	0.9	0.9	1.8	1.8	1.7	1.7
Ճապոնիա	0.03	0.03	0.5	0.5	1.6	1.6	1.4	1.4
Չեխոսլովակիա	0.03	0.03	0.5	0.5	1.3	1.3	1.1	1.1
Առաջատար 10 երկրի բաժինը աշխարհում, %	99.7	99.7	90.4	90.4	85.3	85.3	80.5	80.5

2000 Industrial Commodity Statistics Yearbook, UN, New York, 2003

Ծովային նավերի արտադրության ծավալով աշխարհի առաջատար 10 երկիրը 1950-2001թթ. (մլն բրուտտո հաշվարկային տ)

1950		1970		1990		2001	
Մեծ Բրիտանիա	1.3	Ճապոնիա	10.0	Ճապոնիա	6.6	Ճապոնիա	11.2
ԱՄՆ	0.4	Շվեդիա	1.5	Կորեայի Հան- րապետություն	3.3	Կորեայի Հան- րապետություն	4.4
Ճապոնիա	0.3	ԳՖՀ	1.4	ԳՖՀ	0.9	Գերմանիա	1.0
Շվեդիա	0.3	Մեծ Բրիտանիա	1.2	Թայվան (Չին. Հանր.)	0.6	Իտալիա	1.5
Նիդերլանդներ	0.2	Ֆրանսիա	1.0	Չինաստան	0.5	Լեհաստան	0.5
Ֆրանսիա	0.2	Իսպանիա	0.9	Հարավսլավիա	0.5	Չինաստան	0.4
ԳՖՀ	0.2	Նորվեգիա	0.7	Դանիա	0.4	Ֆինլանդիա	0.4
Դանիա	0.1	Իտալիա	0.6	Իսպանիա	0.4	Դանիա	0.4
Իտալիա	0.1	Դանիա	0.5	Իտալիա	0.4	Ֆրանսիա	0.3
Բելգիա	0.1	Նիդերլանդներ	0.5	Լեհաստան	0.2	Իսպանիա	0.2
Առաջատար 10 երկրի բաժինն աշխարհում %							
	95.1		84.3		92.6		94.7

2001 Industrial Commodity Statistics Yearbook, UN, New York, 2003

1999 Industrial Commodity Statistics Yearbook, UN, New York, 2001

Չինաստան	42.8
Կորեայի Հանրապետություն	12.8
ԱՄՆ	10.2
Նավայգիա	8.0
Ճապոնիա	6.6
Թուրքիա	5.8
Բրազիլիա	5.7
Լեհաստան	4.4
Հնդկաստան	2.5
Իտալիա	1.7
Բաժինը աշխարհում, %	

Հետևյալ աղյուսակում ներկայացված են աշխարհի առաջատար 10 երկիրը 1998թ. (մլն տ) հատ)

Սինթետիկ կաուչուկի արտադրության ծավալով աշխարհի առաջատար 10 երկիրը 1950-1999թթ. (մլն տ)

1950		1970		1990		1999	
ԱՄՆ	0.5	ԱՄՆ	2.2	ԽՍՀՄ	2.4	ԱՄՆ	2.4
ԽՍՀՄ	...	ԽՍՀՄ	...	ԱՄՆ	2.1	Ճապոնիա	1.6
Կանադա	0.06	Ճապոնիա	0.7	Ճապոնիա	1.4	Ռուսաստան	0.7
ԳԳՀ	0.04	ԳՖՀ	0.3	ԳՖՀ	0.5	Չինաստան	0.7
-		Մեծ Բրիտանիա	0.3	Ֆրանսիա	0.5	Կորեայի Հան- րապետություն	0.7
-		Ֆրանսիա	0.3	Չինաստան	0.3	Ֆրանսիա	0.6
-		Նիդերլանդներ	0.2	Իտալիա	0.3	Գերմանիա	0.5
-		Կանադա	0.2	Մեծ Բրիտանիա	0.3	Մեծ Բրիտանիա	0.4
-		Իտալիա	0.2	Բրազիլիա	0.3	Բրազիլիա	0.4
-		ԳԳՀ	0.1	Նիդերլանդներ	0.2	Բելգիա	0.3
Առաջատար 10 երկրի բաժինն աշխարհում %							
						84.6	82.7

1999 Industrial Commodity Statistics Yearbook, UN, New York, 2001

Հացահատիկի համախառն բերքի ծավալով աշխարհի առաջատար 10 երկիրը 1948-1999թթ. (մլն տ)

1948/49-1952/53		1969/71		1989/91		1999	
ԱՄՆ	136.5	ԱՄՆ	210.0	Չինաստան	389.0	Չինաստան	456.6
Չինաստան	90.9	Չինաստան	196.5	ԱՄՆ	292.1	ԱՄՆ	336.0
ԽՍՀՄ	77.9	ԽՍՀՄ	169.3	Հնդկաստան	195.5	Հնդկաստան	229.2
Հնդկաստան	38.7	Հնդկաստան	111.1	ԽՍՀՄ	184.4	Ֆրանսիա	61.4
Ճապոնիա	16.3	Կանադա	34.4	Ֆրանսիա	57.7	Ինդոնեզիա	58.7
Պակիստան	12.4	Ֆրանսիա	33.8	Կանադա	53.0	Ռուսաստան	53.8
Լեհաստան	11.6	Բրազիլիա	22.4	Ինդոնեզիա	51.3	Կանադա	53.8
Կանադա	11.1	Ինդոնեզիա	21.7	ԳՖՀ	37.9	Բրազիլիա	47.6
Իտալիա	11.1	Արգենտինա	20.2	Բրազիլիա	37.7	Գերմանիա	44.4
Ինդոնեզիա	10.9	ԳՖՀ	19.1	Թուրքիա	28.3	Արգենտինա	33.4
Առաջատար 10 երկրի բաժինն աշխարհում, %							
						61.4	66.7
						68.1	67.3
						66.7	66.7

1999 Industrial Commodity Statistics Yearbook, UN, New York, 2001

Եգիպտացորենի համախառն բերքի ծավալով աշխարհի առաջատար 10 երկիրը 1949-1995թթ. (մլն տ)

<i>Միջին հաշվով, տարեկան</i>							
1949/51		1969/71		1989/91		1993/95	
ԱՄՆ	79.4	ԱՄՆ	122.6	ԱՄՆ	194.2	ԱՄՆ	201.6
Չինաստան	9.2	Չինաստան	32.4	Չինաստան	91.8	Չինաստան	105.0
ԽՍՀՄ	6.6	Բրազիլիա	13.7	Բրազիլիա	23.8	Բրազիլիա	33.0
Բրազիլիա	6.1	ԽՍՀՄ	10.0	Մեքսիկա	13.3	Մեքսիկա	17.5
Հարավսլավիա	3.3	Մեքսիկա	9.0	Ֆրանսիա	11.9	Ֆրանսիա	13.5
Մեքսիկա	3.1	Արգենտինա	8.7	ԽՍՀՄ	11.7	Արգենտինա	10.9
ՀԱՀ	2.4	Հարավսլավիա	7.4	ՀԱՀ	9.6	Հնդկաստան	9.6
Ինդոնեզիա	2.3	Ֆրանսիա	7.4	Իսպանիա	9.3	ՀԱՀ	9.3
Իտալիա	2.3	Ռումինիա	7.4	Հարավսլավիա	9.2	Ռումինիա	9.1
Հնդկաստան	1.9	ՀԱՀ	6.7	Հնդկաստան	8.9	Իտալիա	7.9
Առաջատար 10 երկրի բաժինը աշխարհում, %							
82.9		79.5		79.7		81.5	

Алисов Н. В., Хорев Б. С. Экономическая и социальная география (Общий обзор). М., 2001

Յորենի համախառն բերքի ծավալով աշխարհի առաջատար 10 երկիրը 1949-1995թթ. (մլն տ)

1949/51		1969/71		1989/91		1993/95	
ԽՍՀՄ	31.3	ԽՍՀՄ	92.8	Չինաստան	95.0	Չինաստան	102.6
ԱՄՆ	28.6	ԱՄՆ	40.0	ԽՍՀՄ	87.0	ԱՄՆ	62.6
Չինաստան	21.0	Չինաստան	29.7	ԱՄՆ	61.2	Հնդկաստան	59.8
Կանադա	12.6	Հնդկաստան	20.9	Հնդկաստան	53.0	Ռուսաստան	35.2
Ֆրանսիա	7.6	Ֆրանսիա	14.1	Ֆրանսիա	33.2	Ֆրանսիա	30.2
Իտալիա	7.3	Կանադա	13.9	Կանադա	29.6	Կանադա	25.2
Հնդկաստան	6.2	Թուրքիա	11.4	Թուրքիա	18.9	Թուրքիա	18.8
Ավստրալիա	5.0	Իտալիա	9.8	ԳՖՀ	15.5	Ուկրաինա	17.3
Արգենտինա	4.3	Ավստրալիա	9.0	Պակիստան	14.4	Գերմանիա	16.7
Պակիստան	4.1	Պակիստան	6.8		14.1	Պակիստան	16.1
Առաջատար 10 երկրի բաժինը աշխարհում, %							
73.9		75.8		75.4		70.6	

Алисов Н. В., Хорев Б. С. Экономическая и социальная география (Общий обзор). М., 2001

Բրնձի համախառն բերքի ծավալով աշխարհի առաջատար 10 երկիրը 1949-1995թթ. (մլն տ)

1949/51		1969/71		1989/91		1993/95		
Չինաստան	48.3	Չինաստան	109.9	Չինաստան	186.7	Չինաստան	181.7	
Հնդկաստան	32.6	Հնդկաստան	62.9	Հնդկաստան	111.3	Հնդկաստան	121.0	
Պակիստան	12.2	Ինդոնեզիա	19.1	Ինդոնեզիա	44.9	Ինդոնեզիա	48.2	
Ճապոնիա	11.8	Բանգլադեշ*	16.5	Բանգլադեշ	27.0	Բանգլադեշ	25.7	
Ինդոնեզիա	9.2	Ճապոնիա	16.3	Թաիլանդ	19.4	Վիետնամ	23.4	
Թաիլանդ	6.9	Թաիլանդ	13.5	Վիետնամ	19.3	Թաիլանդ	20.2	
Բիրմա	5.3	Վիետնամ**	9.9	Սյանմա***	13.7	Սյանմա	18.4	
Բրազիլիա	3.1	Բիրմա	8.1	Ճապոնիա	12.7	Ճապոնիա	12.5	
Կորեայի Հան- րապետություն	2.9	Բրազիլիա	6.8	Ֆիլիպիններ	9.7	Բրազիլիա	10.6	
Ֆիլիպիններ	2.7	Կորեայի Հան- րապետություն	5.6	Բրազիլիա	9.3	Ֆիլիպիններ	10.3	
Առաջատար 10 երկրի բաժինն աշխարհում, %								
		88.6		86.6		87.5		87.8

* Նախորդ տարիներին կազմում էր Պակիստանի մասը
 ** Միավորում է Հյուսիսային և Հարավային Վիետնամները
 *** Մինչև 1989թ. Բիրմա

Алисов Н. В., Хорев Б. С. Экономическая и социальная география (Общий обзор). М., 2001

Բամբակի բերքի ծավալով աշխարհի առաջատար 10 երկիրը 1949-1999թթ. (մլն տ)

1949/51		1969/71		1989/91		1999		
ԽՍՀՄ	3.5	ԱՄՆ	2.2	Չինաստան	4.7	Չինաստան	4.3	
ԱՄՆ	3.0	Չինաստան	2.2	ԱՄՆ	3.3	ԱՄՆ	3.9	
Հնդկաստան	0.6	ԽՍՀՄ	2.1	ԽՍՀՄ	2.6	Հնդկաստան	2.3	
Չինաստան	0.5	Հնդկաստան	1.1	Պակիստան	1.8	Պակիստան	1.6	
Բրազիլիա	0.4	Բրազիլիա	0.6	Հնդկաստան	1.8	Ուզբեկստան	1.3	
Եգիպտոս	0.4	Պակիստան	0.6	Բրազիլիա	0.6	Թուրքիա	0.7	
Պակիստան	0.3	Եգիպտոս	0.5	Թուրքիա	0.6	Բրազիլիա	0.5	
Սեբսիկա	0.3	Թուրքիա	0.4	Ավստրալիա	0.3	Թուրքմենստան	0.4	
Արգենտինա	0.1	Սեբսիկա	0.4	Եգիպտոս	0.3	Հունաստան	0.4	
Թուրքիա	0.1	Սուդան	0.2	Արգենտինա	0.3	Ավստրալիա	0.3	
Առաջատար 10 երկրի բաժինն աշխարհում, %								
		94.8		85.2		87.2		90.0

Алисов Н. В., Хорев Б. С. Экономическая и социальная география (Общий обзор). М., 2001

Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով աշխարհի առաջատար 10 երկիրը 1950-1999թթ. (մլն գլուխ)

1950	1980	1995	1999
Հնդկաստան 133.8	Հնդկաստան 182.5	Հնդկաստան 194.7	Հնդկաստան 307.0
ԱՄՆ 82.0	ԽՍՀՄ 115.1	Բրազիլիա 165.5	Բրազիլիա 165.2
ԽՍՀՄ 58.1	ԱՄՆ 111.2	ԱՄՆ 102.8	Չինաստան 124.2
Բրազիլիա 52.7	Բրազիլիա 91.0	Չինաստան 100.8	ԱՄՆ 98.5
Չինաստան 48.1	Արգենտինա 55.8	Արգենտինա 53.5	Արգենտինա 55.0
Արգենտինա 45.0	Չինաստան 52.5	Ռուսաստան 39.7	Պակիստան 39.3
Պակիստան 24.3	Բանգլադեշ 33.0	Մեքսիկա 30.2	Եթովպիա 36.0
Եթովպիա 19.2	Մեքսիկա 31.1	Եթովպիա 29.8	Մեքսիկա 30.3
Ֆրանսիա 15.8	Եթովպիա 26.0	Ավստրալիա 26.2	Ռուսաստան 28.7
Կոլումբիա 15.5	Կոլումբիա 23.9	Կոլումբիա 26.0	Կոլումբիա 28.5
Առաջատար 10 երկրի բաժինն աշխարհում, %			
	67.0	60.1	58.2

Խոզերի գլխաքանակով աշխարհի առաջատար 10 երկիրը 1950-1999թթ. (մլն գլուխ)

1950	1980	1995	1999
Չինաստան 64.0	Չինաստան 325.1	Չինաստան 424.7	Չինաստան 429.1
ԱՄՆ 60.5	ԽՍՀՄ 73.9	ԱՄՆ 60.0	ԱՄՆ 62.2
Բրազիլիա 26.1	ԱՄՆ 67.4	Բրազիլիա 35.4	Բրազիլիա 27.4
ԽՍՀՄ 22.2	Բրազիլիա 36.5	ԳՖՀ 24.7	Գերմանիա 26.3
ԳՖՀ 11.9	ԳՖՀ 22.4	Ռուսաստան 22.6	Լեհաստան 22.0
Լեհաստան 9.4	Լեհաստան 21.3	Լեհաստան 20.4	Իսպանիա 21.7
Ֆրանսիա 6.8	Մեքսիկա 13.2	Իսպանիա 18.3	Ռուսաստան 16.4
Մեքսիկա 6.6	ԳԴՀ 12.1	Մեքսիկա 18.0	Ֆրանսիա 16.2
Իսպանիա 5.7	Ֆրանսիա 11.4	Ֆրանսիա 14.6	Մեքսիկա 13.9
ԳԴՀ 5.7	Ռումինիա 10.9	Նիդերլանդներ 14.1	Նիդերլանդներ 13.4
Առաջատար 10 երկրի բաժինն աշխարհում, %			
	72.3	74.5	72.6

1999 Industrial Commodity Statistics Yearbook, UN, New York, 2001

Ոչխարների գլխաքանակով աշխարհի առաջատար 10 երկիրը 1950-2000թթ. (մլն գլուխ)

1950	1980	1980	2002
Ավստրալիա 112.9	ԽՍՀՄ 143.6	Չինաստան 279.5	279.5
ԽՍՀՄ 77.6	Ավստրալիա 136.0	Հնդկաստան 180.9	180.9
Չինաստան 46.7	Չինաստան 102.6	Ավստրալիա 115.9	115.9
Հնդկաստան 35.8	Նոր Զելանդիա 68.8	Իրան 81.0	81.0
Նոր Զելանդիա 33.9	Թուրքիա 46.0	Սուդան 80.6	80.6
ՀԱՀ 31.4	Հնդկաստան 41.3	Պակիստան 71.5	71.5
ԱՄՆ 30.7	Իրան 33.8	Նոր Զելանդիա 46.0	46.0
Իսպանիա 30.0	Մեծ Բրիտանիա 32.4	Մեծ Բրիտանիա 42.3	42.3
Թուրքիա 23.1	Արգենտինա 32.0	Թուրքիա 32.0	32.0
Ուրուգվայ 22.6	Պակիստան 26.2	Եթովպիա 3708	3708
	60.3	59.3	55.1

1999 Industrial Commodity Statistics Yearbook, UN, New York, 2001
2000թ տվյալները ներառում են նաև այժերի գլխաքանակը: Statistical Yearbook, UN., New York, 2002

Չկան որսի ծավալով աշխարհի առաջատար 10 երկիրը 1998թ. (մլն տ)

Չինաստան	38.0
Ճապոնիա	6.0
Հնդկաստան	5.2
ԱՄՆ	5.2
Ռուսաստան	4.5
Ինդոնեզիա	4.4
Պերու	4.4
Չիլի	3.6
Թաիլանդ	3.5
Նորվեգիա	3.3
Բաժինն աշխարհում, %	68.5

Statistical Yearbook. Un. New York, 2001.

Մսի արտադրության ծավալով աշխարհի առաջատար 10 երկիրը 1949-2001թթ. (մլն տ)

1949/51		1969/71		1989/91		2001	
ԱՄՆ	9.9	ԱՄՆ	21.3	Չինաստան	30.3	Չինաստան	62.4
ԽՍՀՄ	4.5	Չինաստան	14.1	ԱՄՆ	28.8	ԱՄՆ	37.8
Ֆրանսիա	1.8	ԽՍՀՄ	12.4	ԽՍՀՄ	19.5	Բրազիլիա	15.2
ԳՖՀ	1.4	Ֆրանսիա	4.1	Բրազիլիա	7.4	Ֆրանսիա	6.5
Բրազիլիա	1.2	ԳՖՀ	3.8	ԳՖՀ	7.0	Գերմանիա	6.4
Արգենտինա	1.1	Արգենտինա	3.2	Ֆրանսիա	5.8	Հնդկաստան	5.6
Մեծ Բրիտանիա	1.1	Բրազիլիա	3.0	Իտալիա	3.9	Իսպանիա	5.4
Ավստրալիա	1.0	Մեծ Բրիտանիա	2.7	Հնդկաստան	3.7	Ռուսաստան	4.5
Կանադա	0.9	Իտալիա	2.5	Իսպանիա	3.5	Իտալիա	4.1
Հնդկաստան	0.7	Ավստրալիա	2.1	Արգենտինա	3.3	Արգենտինա	3.8
	71.7		66.4		65.5		63.5

1999 Industrial Commodity Statistics Yearbook, UN, New York, 2001

Տարածաշրջանների բաժինը չաքարի համաշխարհային արտադրության մեջ 1950-2001թթ.

Տարածաշրջաններ	1950	1990	2001
Եվրոպա	33.0	29.0	22.4
Ասիա	14.0	30.0	34.8
Հյուսիսային Ամերիկա	14.0	10.0	14.3
Հարավային Ամերիկա	34.0	24.0	18.0
Աֆրիկա	3.0	4.0	6.9
Օվկիանիա	2.0	3.0	3.5

Շաքարի արտադրության ծավալով աշխարհի առաջատար 10 երկիրը 1950-2001 թթ. (մլն տ)

	1950			1970			1990			2001		
	Կուրա	ԽՍՀՄ	Կուրա	ԽՍՀՄ	Կուրա	Կուրա	ԽՍՀՄ	Կուրա	ԽՍՀՄ	Կուրա	Կուրա	
ԱՄՆ	5.8	3.2	2.5	10.2	7.0	8.9	11.0	8.9	20.5	16.0		
ԽՍՀՄ	3.2	2.5	1.9	7.0	5.5	7.4	8.9	7.4	7.2	7.2		
Բրազիլիա	2.5	1.9	1.4	5.1	4.6	7.3	7.3	5.7	6.6	6.6		
Ֆրանսիա	1.4	1.2	1.2	4.6	3.7	5.4	5.4	5.4	6.5	5.4		
Հնդկաստան	1.2	1.2	1.0	3.7	2.8	4.3	5.4	4.3	5.4	4.2		
Չինաստան	1.2	1.0	1.0	2.8	2.5	3.3	4.3	3.3	4.2	4.2		
Չինաստան	1.0	1.0	0.8	2.5	2.4	3.3	3.3	3.3	4.2	4.2		
Ավստրալիա	1.0	0.8	0.8	2.4	2.1	3.1	3.3	3.1	4.1	4.1		
Լեհաստան	0.8			2.1			3.1		3.6	3.6		
Ֆիլիպիններ				62.7			53.8		65.0	65.0		

1999 Industrial Commodity Statistics Yearbook, UN, New York, 2001

Աշխարհի և առաջատար 10 երկրի մսի արտադրության կառուցվածքն ըստ հումքատեսակների, 2001թ.

Երկրներ		Տավարի*	Ոչխարի**	Խոզի	Թռչնի	Այլ կենդանիների	Ընդամենը
Չինաստան	հազ.տ	5509	2930	42976	12866	982	65263
	%	8.4	4.5	65.9	19.7	1.5	100.0
ԱՄՆ	հազ.տ	11983	103	8691	16813	221	37811
	%	31.6	0.3	23.0	44.5	0.6	100.0
Բրազիլիա	հազ.տ	6671	110	1968	695	23	15167
	%	44.0	0.7	13.0	42.2	0.1	100.0
Գերմանիա	հազ.տ	1304	46	4074	860	128	6412
	%	20.3	0.7	63.6	13.4	2.0	100.0
Ֆրանսիա	հազ.տ	1566	140	2315	2215	297	6533
	%	24.0	2.1	35.4	33.9	4.6	100.0
Իսպանիա	հազ.տ	642	254	2993	1349	130	5368
	%	12.0	4.7	55.8	25.1	2.4	100.0
Հնդկաստան	հազ.տ	2890	700	595	1251	140	5576
	%	51.8	12.6	10.7	22.4	2.5	100.0
Ռուսաստան	հազ.տ	1872	133	1498	884	64	4451
	%	42.0	3.0	33.7	19.9	1.4	100.0
Իտալիա	հազ.տ	1134	66	1510	1134	297	4141
	%	27.4	1.6	36.5	27.4	7.1	100.0
Արգենտինա	հազ.տ	2452	59	196	99	110	3810
	%	64.4	1.5	5.1	26.1	2.9	100.0
Աշխարհը, ընդամենը	հազ.տ	59330	11589	91499	71699	4585	238702
	%	24.9	4.9	38.3	30.0	1.9	100.0

2001 Industrial Commodity Statistics Yearbook, UN, New York, 2003

Աշխարհի ծովային նավատորմ ունեցող 35 առաջատար երկիր (2000թ. հունվարի 1-ի դրությամբ)

	Նավերի քանակը			Նավերի բեռնամբարձությունը (մլն տ)				
	Ազգային դրոշի ներքո	Օտար երկրի դրոշի ներքո	Ընդամենը	Ազգային դրոշի ներքո	Օտար երկրի դրոշի ներքո	Ընդամենը	Օտար երկրի դրոշի %-ով	Ընդհանուրի բաժինը աշխարհում, %
Հունաստան	752	2495	3247	40.7	92.7	133.4	69.5	18.2
Ճապոնիա	809	2093	2902	17.4	76.1	93.4	81.4	12.8
Նորվեգիա	905	737	1642	28.7	27.2	55.9	48.6	7.6
ԱՄՆ	502	926	1428	12.0	36.9	48.9	75.4	6.7
Չինաստան	1621	551	2172	22.3	17.2	39.5	43.5	5.4
Հունկոնգ (Չինաստան)	132	424	556	6.6	25.0	31.5	79.2	4.3
Գերմանիա	498	1445	1943	7.5	21.8	29.3	74.4	4.0
Կորեայի Հանրապետություն (Չինաստան)	163	346	509	7.6	12.1	19.7	61.4	2.7
Մեծ Բրիտանիա	405	454	859	7.2	11.9	19.0	62.3	2.6
Սինգապուր	459	277	736	11.6	7.2	18.8	38.3	2.6
Դանիա	418	297	715	7.2	8.9	16.1	55.3	2.2
Ռուսաստան	2142	348	2490	8.5	7.5	16.0	46.6	2.2
Շվեդիա	174	222	396	1.6	13.6	15.2	89.8	2.1
Իտալիա	489	142	631	8.8	4.8	13.6	35.5	1.9
Հնդկաստան	372	59	431	10.8	1.3	12.1	10.6	1.7
Սաուդյան Արաբիա	52	71	123	0.9	10.1	11.0	91.8	1.5
Թուրքիա	465	82	547	8.8	0.8	9.6	8.8	1.3
Բրազիլիա	168	23	191	6.1	2.8	8.9	31.5	1.2
Բելգիա	24	143	167	0.1	7.5	7.6	98.5	1.0
Մալայզիա	242	54	296	5.4	1.1	6.5	16.5	0.9
Իրան	152	2	154	6.0	0.08	6.1	1.3	0.8
Շվեյցարիա	13	203	216	0.7	5.4	6.1	88.2	0.8
Նիդերլանդներ	548	202	750	3.4	2.7	6.1	44.2	0.8

Ֆրանսիա	177	103	280	2.6	2.9	5.5	53.1	0.7
Ֆիլիպիններ	339	20	359	4.4	0.5	4.9	10.5	0.7
Ինդոնեզիա	489	108	597	3.2	1.3	4.5	29.0	0.6
Քուվեյթ	33	6	39	3.4	0.4	3.8	9.4	0.5
Իսպանիա	106	217	323	0.3	3.5	3.8	92.0	0.5
Ավստրալիա	58	28	86	2.1	1.1	3.2	34.8	0.4
Ուկրաինա	393	100	493	1.5	1.7	3.2	53.2	0.4
Կանադա	163	66	229	0.8	2.4	3.2	75.3	0.4
Մոնակո	-	122	122	-	3.0	3.0	100.0	0.4
Թաիլանդ	227	51	278	2.3	0.6	2.9	20.1	0.4
Ռումինիա	129	35	164	1.3	1.4	2.7	52.8	0.4
35 երկրի նավերը, ընդամենը	14074	12893	26967	258.7	431.2	690.0	62.5	94.2
բաժինն աշխարհում, %	52.2	47.8	100.0	37.5	62.5	100.0		
Աշխարհը, ընդամենը	16359	13985	30344	281.5	451.1	732.5		
%-ով	53.9	46.1	100.0	38.4	61.6	100.0		

Source: UNSTAD Secretariat on the Basis of Data Supplied by Lloyd's Maritime Information Services (London)

Աղյուսակ 28

Աշխարհի ծովային առևտրական նավատորմն ըստ գրանցման դրոշի, երկրների խմբերի ու նավերի տեսակների առ 1 հունվարի 2000թ. (դեղվեյթ)

	Ընդամենը նավատորմը	Նավթատար լցանավեր	Չոր բեռնաճանաչներ	Ընդհանուր բեռնատար նավեր	Կրկնեղանակա-տար նավեր	Այլ տեսակի նավեր
Բարձր զարգացած երկրներ	203	86	47	20	22	28
Նավերի բաց գրանցման երկրներ	385	142	152	39	25	26
Արևելյան Եվրոպա և նախկին ԽՍՀՄ	18	3	5	7	0.4	3
Ասիայի սոցիալիստական երկրներ	26	4	11	8	2	1
Ջարգացող երկրներ	154	46	55	28	12	13
Այլ երկրներ	13	2	6	3	2	0.6
Աշխարհը, ընդամենը	799	284	276	104	64	72

Աղյուսակ 29

Ծովային առևտրական նավատորմի բեռնամբարձությամբ աշխարհի առաջատար 10 երկիրը (մլն տ դեղվեյթ) ըստ գրանցման դրոշի

Երկրներ, տարածքներ	Բեռնամբարձությունը
Պանամա	159
Լիբերիա	85
Սալթա	47
Բահամներ	45
Հունաստան	43
Կիպրոս	37
Նորվեգիա	35
Սինգապուր	35
ԱՄՆ	26
Չինաստան	24
Առաջատար 10 երկիրը	536
Բաժինն աշխարհում	67.1

Source: Lloyds Maritime Information Services (London)

Աղյուսակ 30

Աշխարհի մի քանի երկրների ցերքին նավարկելի ջրային ուղիների երկարությունն ու տրանսպորտի բեռնաշրջանառությունը (առ 1.01.2000թ.)

Երկրներ	Նավարկելի ուղիների երկարությունը (կմ)	Ներքին ջրային տրանսպորտի բեռնաշրջանառությունը (մլն տ.կմ)
ԱՄՆ	41843	8639
Ավստրիա	351	430570
Բելգիա	1513	5449
Գերմանիա	6754	1560
Իտալիա	1477	173
Լեհաստան	3813	1028
Նիդերլանդներ	5046	40714
Ռուսաստան	84605	65643
Ուկրաինա	3000	5800
Ֆինլանդիա	6245	173500
Ֆրանսիա	5576	8478

Source: Annual Report of Transport Statistics for Europe and North America. UN. New York and Geneva, 2001

Աղյուսակ 31

Աշխարհի մի քանի երկրների երկաթուղային ցանցի խտությունը (կմ/1000 կմ²), 1999 թ.

Երկիր		Երկիր	
Սաուդյան Արաբիա	0.3	ԱՄՆ	16.8
Վենեսուելա	0.4	Հնդկաստան	19.3
Մալի	0.5	Ճապոնիա	53.6
Եթովպիա	0.6	Ֆրանսիա	57.5
Իրան	1.4	Սեծ Բրիտանիա	69.9
Ավստրալիա	4.6	Շվեյցարիա	70.3
Թուրքիա	11.2	Գերմանիա	105.1
Հայաստանի Հանրապետություն	28.3	Բելգիա	113.7

Երկաթուղային փոխադրումների ծավալով աշխարհի առաջատար 10 երկիրը 1999թ.

Ուղևորաշրջանառություն, մլն ուղևոր.կմ	Բեռնաշրջանառություն, մլն տ.կմ		
		ՄՄՆ	ՄՄՆ
Հնդկաստան	403.9	ՄՄՆ	2237.7
Ճապոնիա	391.1	Չինաստան	1231.2
Չինաստան	369.6	Ռուսաստան	1205.0
Ռուսաստան	141.0	Կանադա	308.5
Գերմանիա	73.6	Հնդկաստան	281.5
Ֆրանսիա	64.5	Ավստրալիա	127.2
Եգիպտոս	64.1	ՀԱՀ	102.8
Իտալիա	50.3	Ղազախստան	99.4
Ուկրաինա	47.6	Գերմանիա	71.5
Մեծ Բրիտանիա	38.3	Լեհաստան	55.5

Քաղաքացիական ավիացիայի ծառայությունից օգտված ուղևորների քանակով աշխարհի առաջատար 10 երկիրը 1995-1998թթ.

Երկիր	Ուղևորների քանակը (մլն)	
	1995	1998
ՄՄՆ	534	586
Ճապոնիա	92	102
Մեծ Բրիտանիա	60	62
Գերմանիա	35	49
Ֆրանսիա	36	44
Իսպանիա	26	32
Ավստրալիա	29	30
Իտալիա	24	28
Կորեայի Հանրապետություն	29	27
Կանադա	21	25


Աշխարհի քաղաքացիական ավիացիայի փոխադրումներն ըստ տարածաշրջանների, 1995-1998թթ.

Տարածաշրջաններ	Ավիացիայի ծառայությունից օգտված ուղևորներ (մլն)		Ուղևորաշրջանառություն (մլն ուղևոր.կմ)	
	1995	1998	1995	1998
Աշխարհը, ընդամենը	1116	1471	2248215	2627056
այդ թվում				
Աֆրիկա	27	29	49922	55736
Հյուսիսային Ամերիկա	578	641	937107	1086197
Հարավային Ամերիկա	49	64	72379	91204
Ասիա	319	337	556656	62807
Եվրոպա	289	356	539424	669007
Օվկիանիա	41	44	92726	103104

Statistic Yearbook, UN, New York, 2001.

Հողի մշակվող և ընդհանուր ռեզերվային տարածքները

Ձարգացող երկրների մշակվող և գյուղատնտեսական բույսերի մշակման համար պիտանի հողերը



Source: Dimensions of Need. An Atlas of Food and Agriculture Fao, Rome, 1995

ԵՐԿՐՆԵՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԿԱԶՄԸ ԵՎՐՈՊԱ

Բալթյան երկրներ

- 1. Էստոնիա
- 2. Լատվիա
- 3. Լիտվա

Ազատ առևտրի եվրոպական Միավորում (EFTA)

- 1. Իսլանդիա
- 2. Նորվեգիա
- 3. Շվեյցարիա

Եվրամիություն (EU)

- 1. Ավստրիա
- 2. Բելգիա
- 3. Գերմանիա
- 4. Պանիա
- 5. Էստոնիա
- 6. Իռլանդիա
- 7. Իտալիա
- 8. Իսպանիա
- 9. Լատվիա
- 10. Լեհաստան
- 11. Լիտվա
- 12. Լյուքսեմբուրգ
- 13. Կիպրոս
- 14. Հունաստան
- 15. Հունգարիա
- 16. Սալթա
- 17. Սեժ Բրիտանիա
- 18. Նիդերլանդներ
- 19. Չեխիա
- 20. Շվեդիա
- 21. Պորտուգալիա
- 22. Սլովակիա
- 23. Սլովենիա
- 24. Ֆինլանդիա
- 25. Ֆրանսիա

ԱՄԵՐԻԿԱ

- 1. Բոլիվիա
- 2. Էկվադոր
- 3. Կոլումբիա
- 4. Պերու
- 5. Վենեսուելա

Անդյան խումբ

Կենտրոնական Ամերիկայի ընդհանուր շուկա (CADM)

- 1. Գվատեմալա
- 2. Կոստա Ռիկա
- 3. Հոնդուրաս
- 4. Նիկարագուա
- 5. Սալվադոր

ԱՇԽԱՐՀԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարիբյան (CARICOM)

- | | |
|------------------------|--------------------------------|
| 1. Անտիգուա և Բարբուդա | 8. Մոնտսերատ |
| 2. Բահամներ | 9. Ճամայկա |
| 3. Բարբադոս | 10. Սենտ Լուսիա |
| 4. Բելիզ | 11. Սենտ Վինսենտ և Գրենադիններ |
| 5. Գայանա | 12. Սուրինամ |
| 6. Գրենադա | 13. Տրինիդադ և Տոբագո |
| 7. Դոմինիկա | |

Լատինաամերիկյան ինտեգրացիոն միություն (LAIA)

- | | |
|----------------------------|------------------------|
| 1. ԱՄՆ-ի Վիրգինյան կղզիներ | 2. Անտիգուա և Բարբուդա |
|----------------------------|------------------------|

Կենտրոնական Ամերիկայի ընդհանուր շուկա

- | | |
|--------------|----------------|
| 1. Արգենտինա | 7. Զիլի |
| 2. Բոլիվիա | 8. Պարագվայ |
| 3. Բրազիլիա | 9. Պերու |
| 4. Էկվադոր | 10. Վենեսուելա |
| 5. Կոլումբիա | 11. Ուրուգվայ |
| 6. Մեքսիկա | |

Հարավային Ամերիկայի ընդհանուր շուկա (MERCOSUR)

- | | |
|--------------|--------------|
| 1. Արգենտինա | 3. Պարագվայ |
| 2. Բրազիլիա | 4. Ուրուգվայ |

Արևելակարիբյան պետությունների կազմակերպություն (OECS)

1. Անտիգուա և Բարբուդա
2. Գրենադա
3. Դոմինիկա
4. Մոնտսերատ
5. Սենտ Լուսիա
6. Սենտ Կիտս և Նևիս
7. Սենտ Վինսենտ և Գրենադիններ

ԱՖՐԻԿԱ

Մեծ լճերի երկրների տնտեսական համագործակցություն (CEPGL)

1. Բուրունդի
2. Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն
3. Ռուանդա

Արևելյան և Հարավային Աֆրիկայի ընդհանուր շուկա (COMESA)

- | | |
|--|--|
| 4. Անգոլա | 14. Մավրիկիոս |
| 5. Բուրունդի | 15. Սուդանիկ |
| 6. Զամբիա | 16. Նամիբիա |
| 7. Զիմբաբվե | 17. Ռուանդա |
| 8. Էրիտրեա | 18. Սուրինամ |
| 9. Լեսոտո | 19. Սվազիլենդ |
| 10. Կոմորներ | 20. Սուդան |
| 11. Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն | 21. Տանզանիայի Սիադայի Հանրապետություն |
| 12. Մադագասկար | 22. Ուգանդա |
| 13. Մալավի | 23. Քենիա |

Կենտրոնական Աֆրիկյան պետությունների տնտեսական համագործակցություն (ECCAS)

- | | |
|-------------------------------------|--|
| 1. Բուրունդի | 6. Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն (Զաիր) |
| 2. Գաբոն | 7. Հասարակածային Գվինեա |
| 3. Կամերուն | 8. Զադ |
| 4. Կենտրոնաաֆրիկյան Հանրապետություն | 9. Ռուանդա |
| 5. Կոնգո | 10. Սան Տոմե և Պրինսիպի |

Արենտաաֆրիկյան պետությունների տնտեսական համագործակցություն (ECOWAS)

- | | |
|------------------|-----------------|
| 1. Բենին | 10. Գաբոն |
| 2. Բուրկինա Ֆասո | 11. Մալի |
| 3. Գամբիա | 12. Մավրիտանիա |
| 4. Գանա | 13. Նիգեր |
| 5. Գվենիեա | 14. Նիգերիա |
| 6. Գվենիա Բիսաու | 15. Սենեգալ |
| 7. Լիբերիա | 16. Սիերա Լեոնե |
| 8. Կապե Վերդե | 17. Տոգո |
| 9. Կոտդիվուար | |

Մանո գետի միություն (MRU)

- | | |
|------------|----------------|
| 1. Գվինեա | 3. Սիերա Լեոնե |
| 2. Լիբերիա | |

Կենտրոնաաֆրիկյան մաքսային և տնտեսական միություն (UDEAS)

- | | |
|--|-------------------------|
| 1. Գաբոն | 4. Կոնգո |
| 2. Կամերուն | 5. Հասարակածային Գվինեա |
| 3. Կենտրոնաաֆրիկյան
Հանրապետություն | 6. Չադ |

Արևմտաաֆրիկյան տնտեսական և դրամական միություն (UEMOA)

- | | |
|------------------|------------|
| 1. Բենին | 5. Նիգեր |
| 2. Բուրկինա Ֆասո | 6. Սենեգալ |
| 3. Կոտդիվուար | 7. Տոգո |
| 4. Մալի | |

Արաբական Մադրիդյան միություն (UMA)

- | | |
|-----------|---------------|
| 1. Ալժիր | 4. Մարոկկո |
| 2. Թունիս | 5. Մավրիտանիա |
| 3. Լիբիա | |
| 6. | |

Հարավաֆրիկյան Չարգացման Համագործակցություն (SADC)

- | | |
|-------------------------------------|---|
| 1. Անգոլա | 7. Մալավի |
| 2. Բոտսվանա | 8. Մոզամբիկ |
| 3. Զամբիա | 9. Նամիբիա |
| 4. Զիմբաբվե | 10. Սվազիլենդ |
| 5. Լեսոտո | 11. Տանզանիայի Միացյալ
Հանրապետություն |
| 6. Հարավաֆրիկյան
Հանրապետություն | |

ԱՍԻԱ

Հարավարևելյան Ասիական երկրների ընկերակցություն (ASEAN)

- | | |
|-----------------------|---------------|
| 1. Բրունեյ Դարուսալամ | 5. Սյաննամ |
| 2. Թաիլանդ | 6. Սինգապուր |
| 3. Ինդոնեզիա | 7. Վիետնամ |
| 4. Մալայզիա | 8. Ֆիլիպիններ |

Բանգկոկի Համաձայնագիր

- | | |
|--|-----------------------------|
| 9. Բանգլադեշ | 11. Հնդկաստան |
| 10. Լաոսի ժողովրդական
Դեմոկրատական
Հանրապետություն | 12. Կորեայի Հանրապետություն |
| | 13. Շրի Լանկա |

Տնտեսական համագործակցության կազմակերպություն (ECO)

- | | |
|---------------------------------------|----------------|
| 1. Ադրբեջան | 6. Ղազախստան |
| 2. Աֆղանստան | 7. Ղրղզստան |
| 3. Թուրքիա | 8. Պակիստան |
| 4. Թուրքմենստան | 9. Տաջիկստան |
| 5. Իրանի Իսլամական
Հանրապետություն | 10. Ուզբեկստան |

Ծոցի երկրների համագործակցություն (GCC)

- | | |
|-----------------------------------|-------------|
| 11. Բահրեյն | 14. Քաթար |
| 12. Միացիալ Արաբական
ամիրաթներ | 15. Բուվեյթ |
| 13. Սաուդյան Արաբիա | 16. Օման |

**Տարածաշրջանային համագործակցության Հարավասիական
Ընկերակցություն (SAARC)**

- | | |
|---------------|--------------|
| 17. Բանգլադեշ | 21. Նեպալ |
| 18. Բութան | 22. Շրիլանկա |
| 19. Հնդկաստան | 23. Պակիստան |
| 20. Մալդիվներ | |

Միջտարածաշրջանային խմբավորումներ

**Ասիա-Նաղաղովկանոսյան տնտեսական համագործակցություն
(APEC)**


- | | |
|---------------------------------------|-----------------------|
| 1. ԱՄՆ | 10. Ճապոնիա |
| 2. Ավստրալիա | 11. Մալայզիա |
| 3. Բրունեյ Դարուսալամ | 12. Մեքսիկա |
| 4. Թաիլանդ | 13. Նոր Զելանդիա |
| 5. Թայվան (Չինաստանի մարզ) | 14. Չիլի |
| 6. Ինդոնեզիա | 15. Չինաստան |
| 7. Կանադա | 16. Պապուա Նոր Գվինեա |
| 8. Կորեայի Հանրապետություն | 17. Սինգապուր |
| 9. Հոնկոնգ (Չինաստանի
տարածաշրջան) | 18. Ֆիլիպիններ |

Անկախ պետությունների համագործակցություն (CIS)


- | | |
|-----------------|-----------------------------------|
| 1. Ադրբեջան | 7. Մոլդովայի Հանրապետու-
թյուն |
| 2. Բելառուս | 8. Ռուսաստանի Դաշնություն |
| 3. Թուրքմենստան | 9. Վրաստան |
| 4. Հայաստան | 10. Տաջիկստան |
| 5. Ղազախստան | 11. Ուզբեկստան |
| 6. Ղրղզստան | 12. Ուկրաինա |

Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագիր (NAFTA)


- | | |
|-----------------------------------|-----------|
| 1. Ամերիկայի Միացյալ
Նահանգներ | 2. Կանադա |
|-----------------------------------|-----------|




ՀԵՌՈՒՄԱՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ 2000թ. (Տ)




ՄԱՐԿԱՏԱՐ ԱՎՏՈՄԵԲԵՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ 2000թ. (Տ)



ԱՆՅՈՒՄԻՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ 2000թ. (s)



ԴՈՂՊԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ 2000թ. (s)



Գրականություն

1. **Սելբուժյան Ս.** Ընդհանուր տնտեսական աշխարհագրություն Երևան 2004 թ
2. **Սելբուժյան Ս.,** Տնտեսական աշխարհագրություն, Երևան, 2001 թ.
3. **Վալեսյան Լ.** Աշխարհագրական գիտությունների մեթոդաբանական և տեսական հիմունքներ: Երևան, 2004թ
4. **Վալեսյան Լ.,** Հասարակական աշխարհագրության ներածություն, Երևան, 1999 թ.
5. **Սուրադյան Յ.,** Արտասահմանյան երկրների տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, հ. 1, Երևան, 1998 թ.
6. **Алаев Э.,** Социально-экономическая география. Понятийно-терминологический словарь, М., 1983 г.
7. **Баранский Н.,** Методика преподавания экономической географии., М., 1960 г.
8. **Вольф М., Дмитриевский Ю.,** География мирового сельского хозяйства. М., 1981 г.
9. **Дмитриевский Ю., Лавров С.,** Экономико-экологические проблемы капиталистических и развивающихся стран. Л., 1978 г.
10. **Иваничка К.,** Социально-экономическая география. М., 1987 г.
11. **Леш А.** Географическое размещение хозяйства (пер. с англ.), ИЛ, М., 1959 г.
12. **Липец Ю., Пуляркин В. А., Шлихтер С. Б.,** География мирового хозяйства, М., 1999г.
13. **Максаковский В. П.,** Географическая картина мира, в 3-х частях, 1998 г.
14. **Модели в географии.** Сборник статей под редакцией Ричарда Чорли и Питера Харгета. М., 1971 П.
15. **Народонаселение мира (1994-2003 годы)** Фонд ООН в области народонаселения, Нью-Йорк (1995-2003).
16. **Покшишевский В.,** География населения зарубежных стран. М., 1971 П.
17. **Покшишевский В.,** Население и география: Теорет. очерки., Изд-во "Мысль" М., 1978 г.
18. **Пуляркин В.,** Экономико-географические процессы в сельском хозяйстве развивающихся стран. М., 1976 г.
19. **Розин М., Покшишевский В., Вольф М., Василевский Л.** Современная география мирового хозяйства. М., 1977.
20. **Социально-экономическая география зарубежного мира,** Под. ред. **В. В. Вольского.** М., 1998.
21. **Харгет П.,** География: синтез современных знаний. М., 1979 г.
22. **Харгет П.,** Пространственный анализ в экономической географии. Перевод с английского. М., 1968 г.
23. **Хрущев А.,** География промышленности СССР. М., 1976 г.
24. **Alexander J. and Gibson A.,** Economic Geography. New Jersey, 1979.
25. **Annual Bulletin of transport Statistics for Europe and North America.** UN, New York and Geneva, 2001.
26. **An Urbanizing World.** UN Center for Human Settlement (Habitat). Oxford University Press. 1966.
27. **Demographic Yearbook.** UN. New York, 2001.
28. **2001 Industrial Commodity Statistics Yearbook,** UN, New York, 2003.
29. **(1994-1999) International Yearbook of Industrial Statistics,** New York. 1995-2000 years.
30. **Review of Maritime Transport 2000.** UN. New York and Geneva, 2000.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
Գլուխ 1	
Սոցիալ-տնտեսական աշխարհագրության առարկան, խնդիրները, հետազոտության մեթոդները	5
1.2 Արտադրողական ուժերի տեղաբաշխման օրինաչափությունները, սկզբունքներն ու գործոնները	13
1.3 Աշխարհի քաղաքական քարտեզը Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորումը և դրա ձևավորման փուլերը: Երկրների խմբավորումը	25
1.4 Աշխարհագրական դիրք	31
Գլուխ 2	
Բնական պայմաններ և բնական ռեսուրսներ	38
2.1 Բնական միջավայրը որպես հասարակության ներգործության օբյեկտ	38
2.2 Բնական պայմաններ և բնական ռեսուրսների տնտեսական գնահատումը	39
2.3 Տարածքի բնական (բնառեսուրսային) պոտենցիալը	42
2.4 Բնական ռեսուրսների դասակարգումը	43
2.5 Հասարակության և բնական միջավայրի փոխազդեցությունը, բնության օգտագործման (բնօգտագործման) հիմնահարցերը և ուղղությունները	45
2.6 Երկրորդային հունքային ռեսուրսների կրկնօգտագործումը՝ ուտիլացումը որպես բնական ռեսուրսների խնայողաբար օգտագործման միջոցառում	52
Գլուխ 3	
Աշխարհի բնակչությունը	57
3.1 Բնակչությունը և աշխարհագրությունը: Ընդհանուր մեթոդաբանական դրույթները	57
3.2 Աշխարհի բնակչության թվաքանակն ու դրա շարժը	58
3.3 Բնակչության արագ աճի հետևանքով առաջացած հիմնախնդիրները	62
3.4 Բնակչության տարիքային կառուցվածքը: Աշխատանքային ռեսուրսները Աշխարհի բնակչության ռասայական կազմը Աշխարհի բնակչության ազգային կազմը Աշխարհի բնակչության կրոնական կազմը Աշխարհի քաղաքակրթությունները	66 69 69 70 70
3.5 Բնակչության տարաբնակեցումը	73
3.6 Բնակչության գաղթերը (միգրացիաները) ընդհանուր դրույթներ	80
3.7 Ուրբանիզացիա: Ուրբանիզացիայի գործընթացի էությունը	86
3.8 Ուրբանիզացիայի միտումները	90

3.9 Ուրբանիզացիան, գիտատեխնիկական առաջադիմությունը և քաղաքների էկոլոգիայի հարցերը	96
Գլուխ 4	
Համաշխարհային տնտեսության աշխարհագրություն	100
4.1 Համաշխարհային տնտեսություն. ձևավորումն ու զարգացման միտումները	100
4.2 Համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքը	104
4.3 ՉՏՀ ազդեցությունը համաշխարհային տնտեսության աճի տեմպերի ու ճյուղային կառուցվածքի վրա	105
Գլուխ 5	
Աշխատանքի միջազգային բաժանումը և երկրների մասնագիտացումը	107
5.1 Աշխատանքի տարածքային բաժանումը և դրա ռացիոնալացումը	107
5.2 Երկրների տնտեսական մասնագիտացումը	109
5.3 Արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների դերը տնտեսության տեղաբաշխման գործում	111
5.4 ՉՏՀ ազդեցությունը համաշխարհային տնտեսության տեղաբաշխման վրա	112
5.5 Տեղաբաշխման «Կենտրոն-ծայրամաս» մոդելը	113
Գլուխ 6	
Աշխարհի արդյունաբերությունը	115
6.1 Արդյունաբերության և դրա ենթաճյուղերի դերն ու զարգացման միտումները	115
6.2 Արդյունաբերության տեղաբաշխման մոդելները	116
6.3 Արդյունաբերության տեղաբաշխման գործոնները	119
6.4 Արդյունաբերության ճյուղային կառուցվածքի փոփոխությունները	128
6.5 Վառելիքաէներգետիկ արդյունաբերություն	131
6.6 Վառելիքաէներգետիկական արդյունաբերության տեղաբաշխման փոփոխությունները	136
6.7 Էներգետիկայի զարգացման հեռանկարը	137
6.8 Վառելիքաէներգետիկ արդյունաբերության ճյուղերի զարգացումն ու տեղաբաշխումը ա/ նավթարդյունաբերություն բ/ գազարդյունաբերություն գ/ ածխարդյունաբերություն դ/ էլեկտրաէներգետիկան ե/ ՉՏՀ և էլեկտրաէներգետիկան զ/ էներգետիկան և շրջակա միջավայրի պահպանությունը	140 140 143 144 145 148 149
6.8 Մետալուրգիա ա/ սև մետալուրգիա բ/ գունավոր մետալուրգիա	151 151 154
6.9 Մեքենաշինություն	155

6.10 Քիմիական արդյունաբերություն	162
6.11 Անտառային և փայտամշակման արդյունաբերություն	166
6.12 Թեթև արդյունաբերություն	168
ա/ տեքստիլ արդյունաբերություն	169
6.13 Անճղի արդյունաբերություն	171
6.14 Արդյունաբերությունը և շրջակա միջավայրը	172

Գլուխ 7	
Աշխարհի գյուղատնտեսությունը	176
7.1 Գյուղատնտեսական արտադրության զարգացման ընդհանուր գծերը: Գյուղատնտեսության զարգացումն ու պարենային հիմնախնդիրը	176
7.2 Գյուղատնտեսական արտադրության զարգացման ուղղությունները	179
7.3 Գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխումը	183
7.4 Գյուղատնտեսական արտադրության զարգացման և տեղաբաշխման բնական պայմանների ու ռեսուրսների գնահատումը	183
7.5 Տնտեսական ու սոցիալական գործոնների ազդեցությունը գյուղատնտեսական արտադրության զարգացման ու տեղաբաշխման վրա	188
7.6 Գյուղատնտեսության ճյուղերի աշխարհագրություն	192
ա/ Հացահատիկային մշակաբույսերի աշխարհագրություն	193
բ/ արմատապալարապտուղային մշակաբույսեր	197
գ/ պտղաբուծություն	199
դ/ տեխնիկական մշակաբույսեր	204
ե/ տոնուսավորող մշակաբույսեր	209
7.7 Անասնապահություն	210
7.8 Ձկնորսություն, ձկնաբուծություն և այլ գործունեություններ	217

Գլուխ 8	
Տրանսպորտ	224
8.1 Տրանսպորտի դերը, զարգացման միտումները: Տրանսպորտային ցանցի խտությունը	224
8.2 Երկաթուղային տրանսպորտ	231
8.3 Համաշխարհային ծովային տրանսպորտը	233
ա/ աշխարհի նավահանգիստները	238
բ/ Միջազգային ծովային ջրանցքները և նեղուցները	240
8.4 Ներքին ջրային տրանսպորտ	241
8.5 Ավտոմոբիլային տրանսպորտ	243
8.6 Համաշխարհային խողովակաշարային տրանսպորտ	247
8.7 Օդային տրանսպորտ	248

Գլուխ 9 Միջազգային տնտեսական հարաբերություններ	251
9.1 Միջազգային առևտուրը	251
9.2 Գիտատեխնիկական համագործակցություն	257
9.3 Ֆինանսավարկային հարաբերություններ	259
9.4 Տարբեր տեսակի ծառայությունների փոխանակումը	261

9.5 Ձանգվածային զբոսաշրջություն և հանգիստ (ռեկրեացիա) Զբոսաշրջության էությունը	262
ա/ Ձանգվածային հանգստի զարգացման նախադրյալները և դրանց գնահատումը	263
բ/ Զբոսաշրջության զարգացման համար պայմանների գնահատումը	264
գ/ Զբոսաշրջության և ռեկրեացիայի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա	265
դ/ Զբոսաշրջության տնտեսական նշանակությունը	266
ե/ Զբոսաշրջության տարածական կազմակերպումը	267

Գլուխ 10 Տնտեսության միջազգայնացումը. գլոբալացումը	
10.1 Տնտեսական ինտեգրացիա	269
10.2 Գլոբալացում	271
Հավելվածներ	273
	275

ՄԱՐԳԱՐՅԱՆ Ռ. Գ., ՄԱՆԱՍՅԱՆ Մ. Գ.

**ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Ուսումնական ձեռնարկ
ՄԱՍ 1**

Խմբագիր՝ Ս. Ս. Արմաղանյան

Ստորագրված է տպագրության՝ 22.09.04 թ.:
Թուղթ՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:
Չափսը՝ 60x84 1/16: Տպաքանակ՝ 300:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան, 1

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Աբովյան, 52